9(47.925)1
Դ-52

ԴԻՒԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1778—1800

Յաւելուածներով եւ ծանօթութիւններով

Հրատարակեց

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. ՔԱՀ.

ՄԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՒ 4 ՎԻՄԱՏԻՊ ՎԱՒԵՐԱԳՐԵՐՈՎ

Իշխ. Բարիս Երկայնաբազուկ-Արղութեանցի ծախքով

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՈԼԻԳ.
1911

АРХИВЪ
Армянской исторіи

ТОМЪ IX

Патріархъ-Католикосъ

Іосифъ кн. Аргутинскій-Долгорукій

ЧАСТЬ I

1778—1800

съ приложеніями, примѣчаніями и литографированными копіями
съ историческихъ документовъ

ИЗДАЛЪ

ГЮТЪ АГАНЬЯНЦЪ
Протоіерей

ТИФЛИСЪ
Электропеч. Н. Аганьянъ, Полиц. 7.
1911

Архивъ Армянской Исторіи

Собраніе историческихъ документовъ

Издается съ 1893 года подъ редакціей прот. Гюта АГАНЬЯНЦА

Вышли

Книга I—II. Исторія происшествіи 1780—1834 г. и возникновенія Эчміадзинскаго Синода.

" III. Дневникъ Католикоса Семена ч. I. съ біографическимъ очеркомъ.

" IV. Католикосъ Гукасъ ч. I. 1780—1800 съ біогр. очеркомъ.

" V. Католикосъ Даніилъ 1800—1808.

" VI. Католикосъ Давидъ, ч. I. 1801—2.

" VII. Тоже, ч. II. 1803—4. съ историческимъ очеркомъ.

" VIII. Дневникъ Католикоса Семена ч. II. 1767—1776.

" IX. Католикосъ Іосифъ Аргутинскіи ч. I. 1778—1800.

Всѣ книги снабжены копіями рисунковъ и историчеекихъ документовъ съ примѣчаніями и приложеніями.

Готовы для печати

Книга X. Историки 16—18 вѣковъ.

" XI. Дневникъ Католикоса Симеона ч. III и послѣдняя.

" XII. Католикосъ Гукасъ ч. II.

" XIII. Тоже ч. III.

" XIV. Тоже ч. IV.

" XV. Іосифъ Аргутинскіи ч. II.

" XVI. Католикосъ Ефремъ ч. I.

" XVII. Мануэлъ Кюмюшханеци.

" XVIII. Мемуары 14—18 вѣковъ.

" XIX и XX — 19-й вѣкъ.

—

Каждый томъ будетъ заключать въ себѣ 500—700 столбцовъ данного формата.

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. Ք–ի

Աշխատութիւններ

1 Աղօթատետր ե. տպ. 1903. . . . —10

2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած). —15

3 » » բ. տ. գ. տպ. 1891. . —25

4 » » գ. ա. դ. տպ. . . —20

5 Տօմար և տօնացոյց Հայ. եկ. բ. տպ. 1894. —50

6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891. . . . . . . —10

7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . 2 —

8 Նոյն. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. . . . 7 —

9 Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899. . . . . . . 4 —

10 Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902. . . . . . . 4 —

11 Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904. . . . . . . 4 —

12 Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4 1909. . . . . . . 4 —

13 Նոյն. գիրք Ը. Սիմէօն կաթող. մ. II. 1767—1776. 1908. . . . . . 4 —

14 Նոյն գիրք Թ. Յովսէփ կաթող. մ. I . 1778-1800. 1911 . . . . 4 —

15 Կարգ սատուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով. է. տպ. 1911. . . . . . . —50

16 Հնից-Նորից, հնախօս. ուղևոր. պրակ Ա. 1900. —30

17 Պատի օրացոյց 1902 ժամանակագր. ԺԳ տ. —50

18 Նամակագիրք ր. տպ. 1910 . . . —60

19 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.— Առողջապահական խոհարարութիւն. . —15

20 Զաքար Ղարղաձեանցի կտակը . . . — 5

21 Եկէք մեր պարտքը կատարենք 1908 . . — 5

22 Աւետիս Ղուկասեան և նրա կտակը 1911 . —25

Թարգմանութիւններ

23 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . . --40

24 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) --40

25 Դօն Քիշօտ լամանչեցի, Մ. Սէրվ. 1878 (սպ.) —70

26 Գէորգ Ռօլլէստօն, 1879 (սպառ). . . —60

27 Երրորդ ոսկի, առակ. Լակիդէի բ. տպ. 1893. —10

28 Ռօբինզօն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութեան) (սպ.) . . . . —60

29 Չէստէրտօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպ). . . . . . 1 —

30 Ակտէտ. տ. Սիսօեվսկի. 1885. (սպառ.) . —50

31 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ) —20

32 Արծուի մտածմունքը. պրօֆ. Բողդան. 1892. — 5

33 Գիւղի սուրբը. Սվետտ. Չէխի, 1892. . —10

34 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . . 1 —

35 Դէպի Աթէնք, Հ. Սենկևիչի ր. տպ. 1901. —15

36 Մի կտոր հաց, Պօտապէնկօի ր. տպ. 1901. —10

37 Որսորդ, Օ. Շրայնէրի . . . . —10

38 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների. . —10

39 Կարա. Իրլանդական զրոյց 1904 . . — 5

40 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903 . . . . . —40

41 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէսը) . . . . . 1 —

42 Նոյն պրակ. Բ. գրքի ամբ. կէսը . . 1 60

43 Նոյն պրակ Գ. գրքի ամբողջ կէսը

44 Եղիշէ. Վարդանանց պատմութիւն 1910 . —60

Հրատարակութիւններ

45 Հայոց դիրը 1893 . . . . . 1 50

46 Ծուխ. 1893 . . . . . . —15

47 Ռանգաբէ, Էմաէ, վէպ . . . . —20

48 Ալբէր Այնօ, Քուրդի լեառն, 1894 . . —20

49 Ճաղարբէգեան Ց. Հայոց, լեզու" ա. տ. 1904. —30

50 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1805 . . —15

51 Սպիրի, Այծարած Մօնի 1885. . . —15

52 Բակ. (Բտրգէն եպս.) Կիլիկիա 1896. . —10

53 Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896. 1 50

54 Մելքիսեդեկ արք. Մուրատեան Պետրոս Շանշեան պատկերով. 1897 . . . —50

55 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904. —50

56—67 Լումայ, գրական հանդէս 1891—1901. իւր. գիրքը . . . . . 2 —

68—70 Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան. . . . . 6 —

71—72 Լումայ ամսագիր 1905—1906 իւր. տար. 8 —

73 Լումայ ամսագիր 1907 2 գիրք. . . 2 —

ԻՐ ԱԶՆԻՒ ԲԱՐԵԿԱՄ

Ն. Կ. Մ. Տ· ԿԱՄԵՐ-ԻՒՆԿԷՐ

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼ ԻՇԽԱՆ

ԲԱՐԻՍ ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ-ԱՐՂՈՒԹԵԱՆԻՆ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

և

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. Ք.

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Դիւան»-ի այս իններորդ հատորը նուիրուած է Արղութեանց Երկայնաբազուկ Յովսէփ արքեպիսկոպոսին, որ ընտրուելով ամենայն Հայոց կաթողիկոս և ուղևորուելով դէպի Էջմիածին հայրապետական օծումն ընդունելու, կանգ առաւ Թիֆլիս՝ վրաց արքային ե Թիֆլիզի Հայ հասարակութեան իր երախտագիտութիւնը յայտնելու իր ընտրութեանը եռանդուն կերպով աջակցելուն համար, ուր և անակնկալ հիւանդանալով՝ կնքեց իր մահկանացուն, առանց ժամանելու Մայր Աթոռը։

Շնորհիւ այն հանգամանքի, որ Յովսէփ արքեպիսկոպոսը Ռուսաստանի մայրաքաղաքներից երկար տարիներ շարունակ ղեկավարում էր ամբողջ ռուսահայոց գործերը, սերտ կապ պահպանելով ինչպէս Մայր Աթոռի, այնպէս էլ ռուսաց և վրաց արքունիքների հետ, նա ժամանակակից խիստ աչքի ընկնող դէմքերից մէկն էր ե Նրա անունը չափազանց յայտնի է հայ հասարակութեան։ Սերուած լինելով Սանահնի յայտնի Արղութեան տոհմից, որոնց տոհմաբանութիւնը աւանդութեամբ հասնում է մինչև Բագրատունեաց ժամանակը ծաղկող Զաքարէ և Իվանէ սպասալարները, նա փոքր ժամանակից մտաւ Էջմիածնի վանական ճեմարանը ուսանելու և նուիրելով իրան կուսակրօնութեան՝ իր բարձր ընդունակութիւններով գրաւեց Սիմէոն մեծ հայրապետի ուշադրութիւնը և ձեռնադրուելով եպիսկոպոս, ուղարկուեց հովուելու Ռուսաստանի և շրջակայ երկրների հայ ժողովուրդը։

Այդ օրից ահա բացւում է Յովսէփի առաջ գործունէութեան մի լայն ասպարէզ և նա իր եռանդի ամբողջ թափով բոլորանուէր անձնատուր եղաւ տարագրուած և դժբաղդ հայ ժողովրդի նիւթական, մտաւոր և բարոյական զարգացման և վերաշինութեան գործին, այդ նպատակի յաջողութեան համար գործ դնելով իր հովուական բարձր իշխանութիւնը ե իր ազդեցիկ դիրքը ռուս պետութեան առաջ։

Նրա կենսագրութիւնը, մեծ ե փոքր ծաւալով, գրել են մի քանի հայ գրագէտներ ե ուրեմն պիտի կարծել, թէ արդէն պատմութիւնն ամեն բան ասել վերջացրել է Նրա մասին և իր վերջնական եզրակացութիւնը դրել Նրա գործունէութեան վերաբերմամբ։

Այդպէս էր կարծւում, օրինակ, և Ղուկաս ու Դաւիթ կաթողիկոսների նկատմամբ, որոնց մեր կենսագրողները ներկայացրել էին մեզ մէկին իբրև խիստ ուսումնատեաց և պորտա-

բոյծ հովուապետ, իսկ միւսին էլ դաւաճան և ազգի միութիւնը խրամատող անձնաւորութիւն. այդպէս էր կարծւում մինչև այն ժամանակ, երբ մեզ յաջողուեց «Դիւան»-ների միջոցով հրատարակութեան տալ այդ կաթողիկոսների վերաբերեալ այն հազարաւոր վաւերագրերը, որոնք միանգամայն կերպարանափոխեցին տարածուած կարծիքները նրանց մասին և նրանք ներկայացան իբրև եկեղեցու և ազգի արժանաւոր գահակալներ, մանաւանդ սրանցից առաջինը։

Նոյնը պէտք է ասել և Յովսէփ Արղութեանի մասին։ Մինչև այժմ տակաւին հրատարակուած չեն ոչ նրա ընդարձակ յիշատակարանները, որոնց մի մասը միայն, զանազան վարիանտներով լոյս են տեսնում այս հատորի մէջ, ոչ նրա բազմաթիւ նամակներն ու գրութիւնները և ժամանակակից գործիչների գրագրութիւնները նրա մասին, որոնց մի մասը միայն յաջողեցաւ հրատարակել այս գրքում, և ոչ պետական արխիւներում նրա մասին գտնուած տեղեկութիւնները, որոնց ամբողջական հրատարակութիւնից յետոյ միայն կարելի է բազմակողմանի կերպով ուսումնասիրել և քննութեան ենթարկել այդ խոշոր մարդու ընդարձակ գործունէութիւնը։

Յովսէփ Արղութեանը, մեր կարծիքով, ամենամեծ դերն է կատարել իւր ժամանակ հայ ժողովրդի ազատագրութեան գործի համար, իր մերձաւոր ծանօթութեամբ ռուսական արքունիքի հետ, դրդելով պետութեան արագացնել իր մուտքը Կովկաս և հայ ազգն ազատել պարսկական լծի սարկութիւնից և ինքը եղաւ ռուսաց Կովկաս մտնելու ռահվիրաներից մինը։

Եթէ ճշմարիտ է, որ վերջին դարերում հայ ժողովուրդը ծանր կերպով հեծում էր մահմետական իշխանութեան բռնաւոր ճիրաններում, զրկուած կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւնից, որոնց գառնութիւնը անզօր էին մեղմացնել նոյն իսկ Էջմիածնի այնպիսի կարող և հսկայ աթոռակալներ, ինչպիսին էր Սիմէոն կաթողիկոսը, որ իր բողոքը պարսկական բռնակալութեան դէմ արտայայտեց ռուսական ինքնակալի անուան իր խմբագրած յայտնի «մաղթանքով», ապա ուրեմն պիտի ընդունենք, որ ամեն ջանք այդ բռնութիւնից հայ ժողովրդին ազատելու՝ մի իրական ազգասիրական գործ էր և այդ նպատակի համար տասնեակ տարիներ Ռուսիայի մայրաքաղաքներում դեգերող, ռուս պետական բարձր պաշտօնեաների դռները մաշող և հայ ազգի համար օգնութիւն հայցող Յովսէփ արքեպիսկոպոսն էլ այդ գաղափարի իրագործողներից մէկն էր, որի երկարամեայ ամբողջ գործունէութիւնը նուիրուած էր հայ ժողովրդի բարեկեցութեան, նրա մտաւոր և բարոյական կրթութեան և, որ ամենից գլխաւորն է, նրա ազատագրութեան պարսկական բազմադարեան ծառայութիւնից։

Այսօր մեր նպատակը չէ այստեղ գրել Արղութեանի կենսագրութիւնը, քանի որ, ինչպէս ասացինք, դեռ ևս տպագրուած չեն նրա մասին բոլոր վաւերագիրները. այդ մենք կանենք, երբ աւարտած լինենք մեր ներկայ գործը — տալ Արղութեանի բոլոր նամակներն ու յիշատակարանները «Դիւան»-ների մէջ ամբողջութեամբ։ Ցաւում ենք սակայն, սր այդ մեզ շուտով չէ յաջողուելու մի շարք արգելառիթ պատճառներով։

«Դիւան»-ի ներկայ գրքում մենք տալիս ենք այն բոլոր վաւերագրերը, ինչ որ մեր սեպհական դիւանում էր գտնւում և մասամբ էլ՝ ինչ որ տարիներ առաջ մենք ստացել էինք հանգ. գրագէտ հ. Մկրեան քահանայից։ Եւ այս ամենն էլ ընդարձակ ուսումնասիրութեան նիւթ են պարունակում Յովսէփ Արղութեանի զանազան ասպարէզներում ունեցած գործունէութեան վերաբերմամբ, որոնց մէջ առանձնապէս ուշադրութեան արժանի է նրա առաքելութիւնը Հնդկաստանի հայերի մէջ՝ հանգանակութիւն կատարելու ռուսահայերի մտաւոր վերածնութեան գործի համար, և որոնց մասին առաջին անգամն է այսպիսի մեծ չափով մանրամասնութիւններ հանդէս գալի գրականութեան մէջ։

Բացի այս ամենից, նա ունի դեռ ուրիշ երկհատոր ինքնագիր յիշատակարաններ էլ, որոնք երբեմն պատկանում էին հանգուցեալ Ա. Երիցեանին, իսկ այժմ սեպհականութիւն են Էջմիածնի մատենադարանին. սրանցից օգտուել չյաջողուեց մեզ մինչև այժմ. ապագայում այս յիշատակարանները պիտի կազմեն Յովսէփ կաթողիկոսին նուիրուած «Դիւան»-ի հետևեալ գրքերի նիւթը։

Դիւտ Աղանեանց ա. ք.

1778 – 1789

Ա. ԴԱՒԹԱՐ[1]

'Ի ՂՐԻՄՈՒ ԲԵՐԵԱԼ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԾԱՅԻՑՆ ԱՐԾԱԹԵՂԻՆԱՑ ԵՒ ՃՈՐԵՂԻՆԱՑ

Առաքեալ սրբոյ աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ եւ ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգին առաջնորդ եւ Նոր-Նախիջեւանայ հիմնադիր տեառն Յովսէփայ արք-եպիսկոպոսին Սանահնեցւոյ Արղութեանց: Աշակերտի հոգեւոյն սուրբ Հայրապետին ամենայն հայոց տեառն Սիմէոնի Երեւանցւոյ:

'Ի դիւրութիւն կառավարչացն և վայելողացն և 'ի յիշատակ ինքեան և ծնողաց իւրոց:

Յամի տեառն 1780 և 'ի հայոց թուականութեան ՌՄԻԹ. 'ի Նոր-Նախիջևան:

Յամի ծննդեան տեառն մերոյ և փրկչին՝ 1778, և հայոց ՌՄԻԷ թուին, և յամսեանն յօգոստոսի, 'ի Ղրիմ երկրում եղեալ բոլոր լուսաւորչական ազգն հայոց, հրամանաւ մեծ կայսերուհւոյն և ինքնակալուհւոյն ամենայն ռուսաց Եկատարինէ Ալեքսիովնին երկրորդի, ելին անտի 'ի չորս քաղաքաց, այսինքն՝ 'ի Կաֆայու, 'ի Բաղչեսարայու, 'ի Ղարասուլու, 'ի Գօզլովու և 'ի շրջակայ Ղասարայից և գիւղօրէից նոցին յետ մեծի յաղթութեան սուլթանին Օսմանցւոց, յորժամ զՂրիմ արձակեալ 'ի յիշխանութենէ նորին, և տուեալ 'ի խանն Թաթարաց ինքնագլուխ արար զնա: Բայց զազգն քրիստոնէից, հայոց և հոռոմոց, սեպհականեաց ռուսաց: Զօրս և 'ի ձեռն զօրավարին և ռուսաց ենարալ

պօռուճիկ Ալէքսէի Վասիլիչ Սուվօրովին հանեալ անտի՝ երբեր 'ի յերկիրս ռուսաց։ Մերային ազգին առաջնորդ գոլով յայնժամ պուրսայեցի Պետրոս վարդապետ ոմն։

Եւ 'ի սմին թուոջ եկին 'ի գաւառն Ազովու։

'Ի 1779 թուին փրկչի և 'ի յամսեանն յունվարի, վախճանեցաւ 'ի Սամար նոյն Առաջնորդ Պետրոս վարդապետն և անդ թաղեաւ։

Յամս երկու, վրանաւ պանդխտեցան ժողովուրդքն մեր 'ի Սամար և 'ի Կատաբինէսլաւ և 'ի շրջակայս նոցին. և վնասեցան բազում մարդիք պէս պէս նեղութեամբ՝ արևու և անձրևու և 'ի դողոց, և բազումք 'ի կսկծանաց մեռան. քահանայք և ժողովուրդք։ Առաւել ծերքն, յիշելով զծննդեան տեղիս իւրեանց զվանօրէյսն և զեկեղեցիսն։

Յայսմ ամի, մինչ մեք 'ի Հաշտերխանու ելեալ գնացաք 'ի Մօսկով, գնալ 'ի Սանկթպետերբուրխ վասն օծութեան չքնաղաշէն եկեղեցւոյն նորին, զոր կառուցեալ էին Ջուղայու դաշտցի Եղիազարեան Եղիազար ազնիւ Աղայի որդիքն, Ազնիւ Աղայ Յովհաննէսն, Աղայ Մինասն, և Աղայ Յովակիմն, անկաւ լուծ հովուութենէ նոցին, 'ի վերայ մեր։ Եկին առ մեզ և 'ի հասարակութենէ նոցին, անձինք երևելիք. որք էին կապիտան Պ. Յովհաննէսն Աբրահամեան Փառակեցի Պետրոսի որդի և մեր զանձապետ և վէքիլ պ. Մկրտիչն. մհի Դանիէլն և այլք։ Եւ յառաջ քան զսոսա, 'ի Ղրիմու երկու դէֆութաթ եւս էին առաքեալ Փառակեցի Իգնատիոսի որդի մհի Յարութիւն, որ անդէն վախճանեցաւ 'ի Պետրպօլք և Փառակեցի Տէր-Ոսկանի որդի Պ. Կարապետն։ Գնացեալ մեր 'ի Սանկթպետրպուրխ և գտեալ անդ մեր զշնորհս 'ի Կայսերական Մեծութենէն և 'ի պայծառափայլ իշխան Գրիգոր Ալէքսանդրէիչ Պօտեմկինէն, որ էր Տեղակալ մեծ թագուհւոյն, և խնամակալ ազգի մերում, զաղերս մատուցաք վերոյ իշխանօքն 'ի ձեռն Ազնիւ Աղայ Յովհաննէսին Եղիազարեանց, ընկալաք զկատարումն խնդրանաց մերոց՝ զամենաողորմածագունեղ հրովարտակ և զյատուկ տեղ և բնակութիւն, զտեղին այն, որ կոչեն Ռաստով Սբբոյն Դիմետրի, որ է 'ի վերայ գետոյն Դօնու և անուանեցաք զքաղաքն մեր Նախիջևան։

'Ի սմին ամի 1779 և 'ի նոյեմբերի 4։ Ձեռնարկեալ եղև հրովարտակն մեր՝ 'ի Կայսերական մեծութենէն, զոր առեալ իշխանացն այնոցիկ, գնացին 'ի հասարակութեանն մեր 'ի Կատարինեսլաւ և 'ի գաւառս նորին։

'Ի 1780 թուին փրկչի, հրովարտակն մեր և ամենայն ժողովուրդքն, եկին 'ի շնորհեցեալ տեղին, յունվարի ԺԴ։ Եւ սկսան այնուհետև զշինուածս շինել, և զկիրաւարանն որ կոչի Մագիստրատ հաստատեալ։

'Ի սմին թուոջ և 'ի փետրվարի ԺԸ յաւուր երեքշաբթի օծաք մեծաւ հանդիսիւ Սանկթպետրբուրխու եկեղեցին յանուն սուրբ Կուսին Կատարինէի. եկին ամենայն նախարարքն և յոյժ հաւանեցան ամենայն արարողութեանցն մերս սուրբ եկեղեցւոյ և բազում գայթակղութիւնք բարձան։ 'Ի նոյն աւուր ասացաք զքարոզ հայերէն զոր յառաջագոյն թարգմանեալ էին 'ի բարբառ Ռուսաց և տպեալ, որ 'ի ժամ ասութեան քարոզին բաժանեցին անդ եղեալ իշխանացն, և զմինն զոր գեղեցիկ կազմեալ էաք, ետուք վերոյ քնեազ Պօտեմկինին տալ Կայսերուհւոյն զոր յատուկ շնորհիւ իւրով ընկալեալ, զփոխարէնն 'ի ձեռն պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեմկինին՝ շնորհեալ էր մեզ զպնակէ և վխաչ պարանոցի, զարդարեալ ակամբք պատուականօք, յոյժ մեծագին։

'Ի սմին թուոջ մեծ կաթողիկոսն ամենայն հայոց Սիմէօն և ծայրագոյն պատրիարգն լուսանկար մօրն մերոյ սուրբ աթոռոյն Էջմիածնի, և յատուկ ծնողն իմ 'ի Քրիստոս գիր յորդորանաց գրէր մեզ, ելանել և գնալ առ տարագրեալ ազգն մեր և մխիթարել զնոսա։ Եւ գրէր նոցա մխիթարութիւն մեծ։

'Ի սմին թուոջ և 'ի մարտի 10. պայծառափայլ իշխանն Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեմկինն, հրամանաւ Կայսերական Մեծութեան Ռուսաց, գրեաց վասն առաջնոր-

ղութեան մերոյ բոլոր երկրին Ռուստաց ազգիս Հայոց, առ Ազօվու գաւառապետ Վասիլ Ալէքսէիչ Ջերթկովին· 'ի սմին թուոջս և 'ի մայիսի 9, գնացաք առ մեծ Կայսերուհին 'ի Ցարսկի Սելօյ և արժանաւորեցաք համբուրել զձեռն և խօսել ընդ նմա, ընդ ազնիւ Աղայ Յովհաննէսն։ Եւ 'ի յունիսի 4 առ ժառանգն նորին, մեծ իշխան Պաւլ Պետրովիչն գնացաք, որք սիրով ընկալան զմեզ և խօսեցան։

'Ի սմին թուոջս 'ի նոյեմբերի 4. մտաք մեք 'ի Նորաշէն քաղաքս Նախիջևան մեծաւ հանդիսիւ, զոր արկեալ են 'ի կազէթ ազգն ռուստաց, բոլոր հանդէսն եկեղեցական, զոր յառաջ մեր բերին։ 'Ի սմին թուոջ և 'ի յուլիսի ԻԶ 'ի տօնի վարդավառին հանգեալ էր 'ի Քրիստոս քրտնաջան մշակն և մեծ վաստակաւորն եկեղեցւոյն Քրիստոսի սուրբ հայրապետն Սիմէօն, ծնողն իմ հոգևոր, և սուգ մեծ թողեալ 'ի վերայ բոլոր եկեղեցեացն և ազգին հայոց։ Եւ 'ի սմին թուոջ և 'ի յօգոստոսի 8 ընտրեալ և օծեալ էին 'ի կաթողիկոսութիւն զԿարնեցի Ղուկաս սրբազան արք-եպիսկոպոսն համեստաբարոյ։ Յետին թուղթ օրհնութեան սուրբ Հայրապետին հանգուցելոյ և նորապսակի անդրանիկ օրհնութեան, յոյժ անագան հասին մեզ· և կսկիծ մեծ ունեցան հասարակ ժողովուրդքն 'ի վերայ մահուան երջանիկ հայրապետին, բայց 'ի յետին շունչն իւր, զյետին օրհնութիւնն իւր և շնորհաւորութիւն նորոգ քաղաքիս և հնգեքին գիւղօրէիցն գրեալ էր, հանդերձ պէս պէս խրատիւք և օրինակօք։ Ընդ նմին և զկիրս Հայաստան աշխարհին, որք 'ի յարշաւմանէ զօրացն վրաց կրեալ էին. և համարեա թէ՝ մեծ մասն երկրին գերեալք։

'Ի 1781 թուին և յամսեան յապրիլի, 'ի Նախիջևանայ քաղաքոջն նախապէս փայտեայ եկեղեցի մի շինեցաք, և 'ի զատկին, որ էր տօն սուրբ յարութեան Քրիստոսի և յապրիլի 4. օծաք զնա յանուն ամենօրհնեալ սուրբ Աստուածածնին և անուանեցաք զնա խնդրակատար սուրբ Աստուածածին. զի նախկին եկեղեցին աշխարհի, որ կառուցաք 'ի յԵդեսիայ, այսինքն 'ի Յուրհայ՝ 'ի Թադէոսի Առաքելոյ, էր յանուն սուրբ Աստուածածնին։

'Ի սոյն թուոջս և 'ի յապրիլի ԻԱ, մատուցաք 'ի սմին եկեղեցւոջ պատարագ, և օծաք զչորեսին հիմանց քարինսն քաղաքիս, յանուն չորից սրբոց Աւետարանչացն, և 'ի նմին օր մեռոնթափ արարաք. և մեծափառ հանդիսիւ և ամենայն ժողովրդովք զգեստաւորեալք ամենայն եկեղեցական պատրաստութեամբ, շրջապատեալ զբոլոր քաղաքաւն, եղաք զհիմունս քաղաքիս 'ի չորս կողմունս սորին՝ յորդաբուխ արտասուօք և բերկրալից ցնծութեամբ և թափօրիւ անդաստան արարեալ օրհնեցաք զհող և զջուր բնակութեանս մերոյ. խաչիւք, աւետարանօք և սրբոց մասամբքք, որք գոյին 'ի ձեռս բոլոր վարդապետացն և քահանայից. որ եղե 'ի մխիթարութիւն բազում, ամենայն սրտից տարակուսելոց. և մեք այսու գեղեցիկ արարողութեամբն կամէաք մոռացուցանել 'ի մտաց սոցին զեգիպտական սոխն և զսխտորն, որպէս երբեմն Մովսէս Իսրայելացւոցն 'ի սմին։

'Ի սմին թուոջ և 'ի մայիսի 2, օծաք և զսուրբ Համբարձում և սուրբ Նիկողոս եկեղեցւոյ հիմանց քարինսն և մեծափառ հանդիսիւ տարեալ 'ի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն, եղաք 'ի տեղիս իւրեանց. գոյին և բազում իշխանք ազգին Ռուստաց։

'Ի սմին ամի և 'ի յամսեանն մայիսի 9. հաստատեցաք 'ի Նախիջևան քաղաքոջս զհոգևոր դատարանս և եղաք 'ի նմա զբազում կանոնս 'ի շաւղաց նախնի հարցն մերոց 'ի կառավարութիւն նմին և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ 'ի փառս Աստուծոյ և 'ի պարծանս լուսաբուխ մօրն մերոյ և սուրբ աթոռոյն Էջմիածնի և կարգեցաք 'ի նմա հոգևոր դատաւորս, զմի վարդապետ և զերկու քահանայս. պահեսցէ տէր հաստատուն և տացէ առաւել պայծառութիւն։

'Ի մայիսի 28 ելաք 'ի Նախիջևանու և գնացաք 'ի Կատարինէսլաւ, ժողովրդեանն Նախիջևանու եղև բազում լալիւն և գոչումն և 'ի Կատարինէսլաւ 'ի յունիսի 6 երկրորդ կիւրակէին զկնի հոգւոյ գալստեանն արկաք զհիմն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն, մեծաւ ցնծութեամբ և փառօք, և 'ի նմին տեղւոջ արկաք զվրան և մատուցաք ըդպատարագ և ձեռնադրեցաք զՄարտիրոսն 'ի քահանայ. եկին գուբեռնաթն Վասիլ Ալէք-

սէին Չերթկով և ամենայն մեծամեծքն Ռուստաց։

՚Ի սոյն թուոջս և ՚ի յունիսի 12 ելեալ ՚ի Կատարինէսլաւ դէպի Մոսկով ՚ի ճանապարհին հանդիպեցաք ՚ի Բօլթաւ քաղաքն առ արք-եպիսկոպոսն Նիկիփոռ որ էր առաջնորդ Քերսոնու և Նոր Ռուսաց. իջաք ՚ի վրանսն, պահեաց զմեզ երկու օր և եցոյց զբազմադիմի մարդասիրութիւնս։ Եւ անտի գնացաք առ գռաֆ Պետր Ալէքսանդր Ռումենցով ֆրթմաշալն ՚ի գիւղն իւր Վիշինկայ, որում եղե յուրախութիւն յոյժ, իջոյց զմեզ ՚ի վրանի գեղեցկագունի, զոր ՚ի յՕսմանցւոցն էր գերեալ. պահեաց զմեզ չորս օր, և յամենայն աւուր՝ առաւօտ և երեկոյի, առ մեզ գայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ՚ի ճաշել։ Եւ շրջեցոյց զմեզ յամենայն ուրեք մեծագոյն պատուով. զգեստն մեր եպիսկոպոսն ետես, և հաւանեցաւ։ Եւ յետ բազում մարդասիրական պատւոյն, կամեցաւ առաքել ընդ մեզ ՚ի Քիով քաղաքն յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց, (որք են հիմն հաւատոյ ռուսաց բոլոր երկրին, զի նախապէս անտի են հաւատացեալ ՚ի Քրիստոս փրկիչն մեր)։

Եւ մեք ըստ բանի նորա յանձն առաք գնալ և տեսանել զսուրբ վայրսն։ Գրեաց գիր յանձնարարական առ սրբազան Գաբրիէլ մետրապօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն Զօսիմէ, և առ կամենդանտն Իվան Ստեփանիչ Կուկիսովն, ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել։

Յունիսի 24 օրն հինգշաբթի մտաք ՚ի Քիով, իջաք ՚ի տան վերոյ կամենդաթին, մերձ ՚ի Պէչէրսկի վանքն յորում Արքիմանդրիտն Զօսիմէ նստէր. իմացեալ սոյնոյ Արքիմանդրիտիս, իսկոյն եկն առ մեզ ՚ի տեսութիւն քանի Աբեղայիւք, և զմեզ առեալ տարաւ առ ինքն ՚ի վանք Պէչէրսկի սուրբ Աստուածածին կոչեցեալ, և շրջեցոյց ՚ի յեկեղեցին և ՚ի զգեստատունն։ Եկեղեցիքն էին յոյժ գեղեցիկք բոլոր նկարեալ պատկերօք տնօրինականօք ՚ի ներքին յորմէն սկըսեալ մինչև ցմիջակէտ կաթուղիկէին. ոսկէտուփ խաչկալիւք և արծաթեայ սեղանօք, և սեղանն զարդարեալ մեծամեծ ոսկեայ և արծաթեայ խաչիւք և պատկերօք։ Եւ ՚ի նմին եկեղեցւոջն գոյր բազում անօթ ոսկեղէն սկիհք քանդակելագործ, մարգարտեայ և ականակուռ սաղավարդք խաչիւք։ Պնակէք և խաչք պարանոցի բազում։ Բոլորն ոսկի և ականակուռ։ Շուրջառք դեղեցիկք և մարգարտեայք ելուզեալք ակամբք պատուականօք։

Յետ տեսութեան զգեստուցն, տարան զմեզ ՚ի Պէչէրսկի, այսինքն ՚ի ներքոյ գետնոյ շինեցեալ երկար շէնսն, որ է ՚ի ներքոյ վանիցն, յորում են ամենայն սուրբքն իւրեանց և նախնի հարքն և ՚ի Քրիստոս ծընողքն ՚ի մէջ դագաղի եղեալ առողջ իւրեանց հանդերձիւքն և զգեստիւք, թէ եպիսկոպոս է, թէ վարդապետ և թէ այլ աստիճանաւոր, թուով մինչ ԿԴ. որք առողջ են և անապական և զարմանալի տեսողաց. ՚ի նմին գետնափորի գոն և երեք եկեղեցիք, յոր զԱստուածային պատարագ մատուցանէին։

Եւ անտի ՚ի տպագրատունն տարան և յայլ ուրեք. եկեղեցեաց շէնքն և մանաւանդ մուտն վանիցն էր գեղեցիկ, ընդ սրբազան Արքիմանդրիտին Զօսիմէի, և ընդ հասարակ միաբանիցն բազմեցաք և ՚ի սեղան ՚ի ճաշել հասարակութեամբ, յետ սաղմոս ասելոյն, զմեզ հրաւիրեցին ՚ի յօրհնել. սկիզբն և վերջն ս ամէն։ Յետ հացին ամենեքեան մասնաւորեցան ՚ի նմանէ և ՚ի մէջ եկեղեցւոջն ՚ի վերայ սեղանոյն աթոռ դնէին միշտ որ ՚ի ժամ նստման նստցուս։ Բազմադիմի ցուցեալ մեզ զմարդասիրութիւն երանելի Արքիմանդրիտն, չորս անգամ ընդ նմա ճաշեցաք, և շնորհեաց մեզ զՌուսերէն բազում գրեանս, և զբազում թոշակս ճանապարհի հացք և ըմպելիք։ Եւ հանապազօր վեց ձիով կառեթն ՚ի դրունս մեր կայր, ընդ ուրսան հրամանաւ այսինքն կրօնաւոր քահանային որոյ անունն կոչիւր Օրիորդի կամ Գիօրկի, զոր մեզ վերակացու էին կարգեալ։ Երկու անգամ սրբազան Գաբրիէլ մետրապօլիտն հարկաւորեաց զմեզ ՚ի ճաշ ՚ի վանս սրբոյն Սօփիոյի և նա բազմադիմի պատիւս և սէրս եցոյց, և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զգանձ արամեանն ունելով ՚ի ձեռին, գովէր ՚ի մէջ հրապարակին, յորում էին հոգևորականքն և երևելի աշխարհականք թէ՝ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է հայոց

հաւատն, և այլ այսպիսի բանս համարձակօրէն և սա ընկալեալ զմեզ 'ի սեղանն սուրբ, և յետ արձակման սրբոյ պատարագին, զնշխարս տային մեզ և զգինի։ Եւ յելանելն մեր 'ի յեկեղեցւոյն խառն 'ի ճագանճ ամբոխն՝ անցեալ 'ի վերայ մեր, ամենքին աջ առեալ զօրհնութիւն խնդրէին։ Օր մի ես առ կամենգաթն ճաշեցաք. ընդ ամենայն վանօրայսն, 'ի Բարաթսկի մանաստէրն, յորում էր դպրոցն մեծաշէն, որոյ Արքիմանգրիտ և վարդապետ էր Կասիան։ 'Ի Պետրովսկի մանաստիրն, յորում էր կառավարիչ Երօնիա իգումէնն։ 'Ի Միխայլովսկի մանաստիրն, յորում գոյր սուրբ Վարվառեայ կուսի բոլոր մարմինն, 'ի միջակեաին 'ի մէջ դագաղի եդեալ և 'ի վերայ նորա ոսկէ տուպ խորան կանգնեալ չորիւք սեամբ, զորոյ ձեռանէն խաչալուայ արարաք մեք մերով ձեռամբ և քսեցաք խաչս մեր և ամենայն բազմութեան որ անդ։ Որոյ Արքիմանդրիտ է Տարասեա Պեչերսկի նամեսնիկ անունն էր։ 'Ի Վդուպօվսկի մանաստիրն, որոյ դրութիւն է յոյժ գեղեցիկ 'ի վերայ ձորոյ, Արքիմանդրիտն նորին՝ Մելքիսէթ, որ տեղապահ է միտրապօլաինն։ Նիկօլսկի մանաստիրն և կանանց երկու անապատսն և յայլ ուրեք։ Յունիսի 30 ելաք անտի կամենդաթի նաւակն պատրաստի կայր 'ի վերայ գետոյն մեծի, ընդ մեզ ուղևորել եկին, մեր վերակացու Եղօրի իդումէն. պլաց-մայեօր. Իվան Ֆետօրիչն և Յունաց Նիկոդիմոս արք-եպիսկոպոսն, որ բնակէր 'ի Վրդուպօվսկի մանաստիրն, որում շնորհեցաք մէկ արծաթագլուխ ղօնար գօտի։ Եւ Սվերսկու Կիւրեղ եպիսկոպոսն, որ բնակէր 'ի Միխայլօվսկի մանաստիրն, շնորհեաց մեզ մէկ ջուխտ սըմակար թեանոց ժամարարի. Սօփիայի քարոզչի անունն է Սամփսոն։ և Պէչէրսկու տպագրատան վերակացուի անունն է Ֆէօֆան։

'Ի սոյն թուոջս, գնացաք 'ի Մօսկով 'ի սեպտեմբերի 9. օծաք անդ կառուցեալ սուրբ խաչ եկեղեցին. որոյ հիմն՝ մեք էաք արկեալ, և անտի գնացաք 'ի Սանկտպետերպուրք յաղագս տառապանացն Նախիջևանու, եկին և կապիտան պարոն Յովհաննէսն և պ. Կարապետն տէֆութաթ. յանձնեցաք զնոսա պայծառափայլ քնեազին։

Մեք գնացաք 'ի Հաշտերխան հանդիպելով զանազան վշտակրութեանց 'ի ճանապարհին յաղագս խառնակութեան եղանակին գարնանայնոյ։ Օծաք և անդ կառուցեալ սուրբ Կատարինէ քարեայ եկեղեցին, և անտի զընացեալ 'ի Ղզլար և 'ի Մօզտօք և անդ օծեալ զեկեղեցիսն, դարձաք 'ի Նախիջևան։

'Ի 1783 թուին և 'ի յունվարի 19 աստէն ևս կրեցաք զբազումնեղութիւնս և 'ի ծննդեան մնացաք 'ի բացօթեայ տեղւոջ, յաղագս ցըրտութեան և ապականութեան յօդոցն։

'Ի սոյն թուոջս 'ի նոր կիւրակէն արկաք զհիմն սուրբ Գէորգի, և 'ի հոգեգալստեանն սուրբ Թորոսի։

'Ի սոյն թուոջս և 'ի յօգոստոսի 21 օծաք զսուրբ Համբարձում եկեղեցին։ Եւ 'ի սեպտեմբերի 10, օծաք զսուրբ Նիկողոս եկեղեցին։ Եւ 'ի սոյն 1783 թուին փրկչի և 'ի հայոց ՌՄԼԲ, սեպտեմբերի Թ ին արկաք զհիմն սուրբ Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյն, որոյ վերակացու կարգեցաք, Ղարասուևցի Փանոսի որդի պարոն Գասբարն, որ յոյժ հաւատարմութեամբ ծառայէր շինութեան տանցս և ջրհորին և այլոց բանից մերոց։

Գիր զոր ընդ հիմանն սուրբ Լուսաւորչի ամփոփեցաւ 'ի յիշատակ սեղանոյն ընդ մասանց.

Շնորհօք ամենազօրին Աստուծոյ հիմնացաւ սուրբ լուսաւորիչ եկեղեցիս յամի մարդեղութեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի 1783 թուին և 'ի հայոց ՌՄԼԲ թուին, սեպտեմբերի 9, 'ի տօնի երեք հարիւր տասնևութ հայրապետացն սուրբ ժողովոյն Նիկիու, որ 'ի բարեկենդան շաբաթ օրն սուրբ խաչի։ 'Ի թագաւորութեան մեծի Եկատարինէ երրորդ կայսերուհոյն ամենայն ռուստաց, որ զազգս մեր 'ի Ղրիմու հանեալ երեր 'ի թաթարաց, երեր 'իյերկիր ռուստաց, 'ի գաւառս Ազովու որ կոչի Ռաստով, յորում քաղաք շինեալ անուանեցաք Նախիջևան ըստ անուան քաղաքամօրս աշխարհի։ Եւ 'ի վեհագոյն ժառանգորդւոյն կայսերական բարձրութեանց՝ մեծ իշխան Պաւլ Պետրովիչին. և նորին զուգակից մեծ Գշխոյ Մարիա Ֆետոբովնին և զաւակաց նոցա մեծ իշխան Ալէքսանդր Պաւ-

լովիչին և Կոստանդին Պաւլովիչին և մեծ Դշխոյ Ալէքսանդր Պաւլովնային. և 'ի հայրապետութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի տեառն Ղուկաս սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց. ձեռամբ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ, ռուսաց երկրի հայոց առաջնորդ և նոր քաղաքիս Նախիջևանայ հիմնադիր, 'ի Քրիստոս հանգուցեալ Սիմէօն կաթողիկոսի աշակերտ և Սանահնեցի, երկայնաբազուկ Արղութեանց՝ Զումենց՝ իշխան Շիօշբեգի որդի Յովսէփ արք-եպիսկոպոս մեղապարտի՝ որ օծի ըզհիմունս քաղաքիս և եդի 'ի չորս կողմն սոյն քաղաքիս։ Եւ զհիմն սուրբ լուսաւորիչ եկեղեցւոյս եդի 'ի չորս անկիւն սորին, երեք երեք քար, յանուն Երկոտասան առաքելոցն Քրիստոսի, և 'ի ներքոյ սեղանոյն եդի զքարն օծեալ յանուն փրկչին։ Ընդ նմին եդի և զբազում մասունս սրբոց, բայց անյայտս։ Վասն զի 'ի գալն ժողովրդեան մերոյ, 'ի Ղրիմու 'ի Սամար և 'ի Կատարինէսլաւ բնակութիւնսն, անդ այրեցեալ էր բոլոր զգեստն և անօթն Ղարասու կոչեցեալ քաղաքին, ուստի արծաթեայ պահարանք սրբոց մասանց, հալեցեալք էին և նշխարք սրբոց մասանց մնացեալք ամբողջք, սակայն մեզ անյայտ։ Բարւոք համարեցաք աստ ամփոփելն։ Ընդ սմին օծաք և զհիմունս վանիցն, որ յանուն փրկչին և սուրբ խաչին։ Ապայն հանդիպօղքդ յիշեցէք զմեզ ծնօղօք մերովք։ Ընդ սմին արկաք և զհիմն փրկիչ վանիցն, զոր մեր յաջորդ Գանջեցի Սիմէօն վարդապետն իւրով կայիւքն էառ զտեղի նորա 'ի Մարտինէն Թորոսեան, յաղագս վայելչութեան տեղւոյն և ականակիտ յորդ աղբերացն՝ որք անդ բղխին։ Անդ ժողովեցաք և զամենայն անասունս մեր և կարգեցաք վերակացուս։

Յովսէփ արք-եպիսկոպոս

1786 յունիսի 21. 'ի սուրբ լուսաւորչու բարեկենդան կիւրակէին վերոյ փրկիչ և կամ սուրբ խաչ վանից հիմն արկի, և շինութեան սկիզբն առնել ետու. Աստուած հասուսցէ 'ի կատարումն, որ ահա դեգերիմ 'ի կատար հասուցանել։

'Ի 1789. և 'ի մայիսի 14 'ի Հաշտերխանու ելեալ գնացաք 'ի Նախիջևան. ընդյառաջ եկն մեզ 'ի Նախիջևանու հասարակութենէ Առափայել անուն ոմն, որ բոլոր հասարակութիւն խնդրեալ էին զմեզ, գնալ առ ինքեանս իբր՝ տասնամեայ ազատութիւն իւրեանց լցեալ, կասկած ունէին. զպարտս թագաւորին առնուլ զոր 'ի յսկզբան գալոյն նոցա տուեալ վասն կերակրոյ 'ի մէջ երից ամաց։

'Ի մայիսի 20 մեծափառ հանդիսիւ մտաք 'ի Նախիջևան. ամենեքին խնդրէին 'ի մէնջ յանձն առնուլ և գնալ 'ի մեծ բանակն առ պայծառափայլ գնեաղն խնամակալն ազգին մերոյ, որ յայնժամ կայր ընդդէմ Օսմանցւոցն և առեալ զՂաւղան, Ղաղիքերման և զայլս, շրջապատեալ էր զմեծ ամրոցն Բենդերու։

Յանձն առեալ մեր զխնդիր հասարակութեան Նախիջևանու 'ի յօգոստոսի 2 ելեալ 'ի Նախիջևանու ընդ երից դէֆութաթաց, այսինքն պարոն Մարտինին Շահինովին, Յակոբ Գենզալօղլուն և պրապօշնիկ Պօղոս Սպանդովին գնացաք։ Ժողովուրդքն մեր, որք ելեալք էին 'ի Ղրիմ, բերեալ էին ընդ ինքեանս զամենայն արծաթեղէն և զշօրեղէն անօթսն վանօրէից և եկեղեցեաց, զորս մեք մեծաւ տառապանօք և վշտօք 'ի բազում աւուրս աշխատեալ մերայնովքն, արկաք 'ի դաւթար անուամբ վանօրէիցն, եկեղեցեացն և որոց աշխատութեամբ բերեալ էին, և հազիւ թէ՝ շինեալ զգեստատուն տեղաւորեցաք 'ի նմա։ Եւ զայս տեֆթերս արարեալ պատմութեամբ, գրեցաք 'ի սմա զամենայն, որպէս զի մի ինչ կորիցէ և ապագայն գիտասցեն զորքանութիւն բերեցեալ անօթիցն և զմերս ջանք և տաժանելի վաստակս զի ապագայիցն ըղձալիք են, անցելոցն պատմութիւնք, զի երբ Աստուծով շինեսցեն զեկեղեցիսն, որոյ անուամբ որ կառուցանեն, նոյն եկեղեցեացն անօթն 'ի նմին եկեղեցին տացեն, որպէս մեք արարաք, սուրբ Համբարձմանն և սուրբ Նիկողայոսին և այլոց։ Իսկ աւելեալ (զեկեղեցիսն) զգեստքն և արծաթեղէն անօթքն և ոսկեղէն խաչքն դնելիք են 'ի սուրբ Լուսաւորիչ յաւագ եկեղեցին, ուր առաջնորդարանն է լինելոց։ Նմանապէս և ամենայն վանօրէից ա-

նօթմն։ Եւ զորս 'ի զգեստուցն հնացեալ գըտաք, շուրջառք, շապիք, վարագոյր, քիլիմք, խալիք և խալիչայք և այլք, խորհրդով դատաւորացն ետուք տառապեալ աղքատաց և տընանկաց։ Յառաջին ամին, որք մերկք էին և 'ի ցրտոյ մեռանէին. զի և նոքա Աստուծոյ են, և Աստուած առ այս ոչ երբէք բարկանայ, այլ հաճի և ընդունի։

Թիւն 1786 նոյեմբերի 22 օծաք սուրբ Թորոս եկեղեցին. և իւր անօթն Ղռիմու բերեալն, իւրն ետուք։

Թիւն 1787 դեկտեմբերի 5 օծաք զսուրբ Գէորգ եկեղեցին, և Ղռիմու բերեալ անօթն իւր, ետուք իւրեան։

Թիւն 1787. ողորմած թագուհին, ելեալ 'ի Սանկտ Պետերբուրղու և եկեալ 'ի Քիով և 'ի յԱզովի գուբեռն 'ի քաղաքն Քրմենչուկ և անտի՝ գնաց 'ի Ղռիմու, ընդ էմփերադորին, վասն տեսութեան տեղեացն Ղռիմու, 'ի դառնալն անտի 'ի Քրմենչուկ ընդ յառաջ ելաք մեք 'ի Քրմենչուկ ընդ մահտեսի պարոն Աստուածատուրին և տեսեալ մեր անդ զպայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինն, յարգմամբ ընկալեալ զմեզ, 'ի յունիսի 6 մետասան ժամուն տարաւ զմեզ առ թագուհին որոյ ձեռքն համբուրելայ արժանաւորեցաք և խօսելոյ ընդ մեծութեան նորին։ Յետ գնալոյ կայսերուհոյն պայծառափայլ գնեազն պահեաց զմեզ առ ինքն զի 'ի միասին 'ի Ղռիմ. գնասցուք. ըստ որում. մեք չէաք տեսեալ 'ի միջոցի անդ. զքանի խնդիրս էաք տուեալ նմա, վասն հասարակութեան մերոյ որ մեր տեղն, այսինքն փոքր էր. խոստացեալ էր շուրջ զքաղաքաւն և գիւղօրէիւքն մերովք մեզ շնորհել, նաև 'ի Կատարինէսլաւ եղեալ ազգն մեր 'ի Ղռիմ. առաքեալ և մեր տօնլուղն շնորհեալ, խոստանայր զբոլորն կատարել։ Ապա 'ի միջոցի աստ բացեալ եղև կռիւն ռուսաց. ինքն ոչ եւս կարաց գնալ 'ի Ղռիմ, այլ մեր չորս տարեկան ռոճիկն տուեալ և վասն ապագայն առնելոց եւ՝ հաստատեալ 'ի Ղռիմ. ստանալ յամէ յամ. յասլբանցկի սումէն, ապա իւրով յատուկ յանձնարարութեամբն, ուղևորեաց զմեզ 'ի Ղռիմ. առ պարոն գուբեռնաթոռ Մասիլ Վասիլիչ Կախօվսկին։ 'Ի սեպտեմբերի 28 ելեալ 'ի Կրմենչուկու՝ հոկտեմբերի Ղ մտաք 'ի Ղռիմ. և 'ի յԱղմէջիթ. ընկալեալ և անդ զպատիւ՝ ըստ հրամանի պայծառափայլ գնեազին, ուղևորեաց զմեզ, շըրջել յամենայն ուրեք. 'ի Ղարասու 'ի Քէֆէ, 'ի Ասկղռիմ. 'ի վանքն մեր սուրբ խաչ և 'ի Սուտախ. 'ի Բաղչիսարայ, 'ի Յախքար, որ է Սևաստապօլիս. ուր նաւքն կանգնեալ կան, և 'ի Գօզլով. տեսեալ մեր զամենայն՝ և կըրկին դարձեալ 'ի յԱզմէճիթ. նոյեմբերի 3 ելաք անտի։ զգալի եղև մեզ յոյժ, տեսանելն զաւերութիւն քաղաքացն և եկեղեցեացն և վանօրէիցն մերոց. լի տրտմութեամբ դարձաք անտի 'ի Նախիջևան, 'ի նոյեմբերի 24. քաղաքն ամենայն ընդ առաջ ելին դրօշակօքն արհեստաւորաց և ամենայն պատրաստութեամբ, և մեծաւ փառաւորութեամբ ընկալան զմեզ 'ի ներս, հանդերձ հոգևորական հանդիսիւ։

Թիւն 1788 փետրվարի 2. Ստամբօլցի Թագդէոս վարդապետն Մարուգեան, որ մեզ եկեալն էր յառաջ. գնա առաքեցի 'ի Պետրպօլք 'ի գնումն տպարանին- հանգուցեալ Երդալեան Գրիգոր Խօջամալովին որում. տուեալ ԺԻ հազար ռուպլի, գնեալ էր 'ի սակի մեր. որ էր, ինն տեսակ հայերէն գիր. և երկու տեսակ ռուսերէն, և բազում. պատկերք, 'ի գին որոց որքան ունէաք և կամ. ժողովել կարացի 'ի ժողովրդենէն, ետուք։ Մնացեալն վէքսիլ ետուք մեր Նախիջևանու մագիստրաթին Աղայ Յովհաննէսին, և նա հատուցեալ էր կնոջն Երդալով Գրիգորի Կատարինեայ Պետրովնին. որով անդ տըպեալ զԸնդհանրականն զկնի խաղացուցեալ անտի երեր 'ի Նախիջևան, և հաստատեցաք 'ի սուրբ Խաչ վանքն մեր, որոյ հաստատութիւնն 'ի տեառնէ եղիցի միշտ. Ամէն։

'Ի սոյն թուոջս և 'ի սոյն ամսոյ 6 մեք ելեալ 'ի Նախիջևանու գնացաք 'ի վերայ Կովկասու լերին, 'ի Մոզտօք։ 'ի Ղզլար և 'ի Հաշտերխան 'ի տեսութիւն վիճակիս։

Անտի զԱւետիս վարդապետն մեր և զԳրիգոր սարկաւագն ամենայն զգեստիւք սրբոյ Աթոռոյն առնոյն Աթոռն ուղևորեցաք և մեք երկար հիւանդութիւն կրեալ 'ի Հաշ-

տերխան, երից մեծամեծ հիւանդութեանց հանդիպեալ, մինչև ցայժմ ցնոյն ցաւսն կրեմ, ողորմելի կենօք։

’Ի 1788 թուին մինչ մեք ելանել կամէաք անտի ’ի Հաշտերխան և գնալ ’ի Նախիջևան, Ջուղայեցի Եղիազար Աղայի որդի, պօլկովնիկ գերաղնիւ Աղայ Յովհաննէսն ամենայն տամբն իւրով եկեալ ’ի Սարաֆայ գիւղն մերձ Հաշտերխանու, գնացաք և մեք անդ, և անտի ’ի միասին եկեալ, եղաք ’ի Հաշտերխան. ’ի նոյեմբերի 8 մնաց ’ի Հաշտերխան մինչև ’ի դեկտեմբերի 6 և գնաց անդէն ’ի Պետրպօլք։

1779 – 1782

Բ. ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ[3]

Յաղագս հանդիպեցելոցն մեզ յորժամ 'ի Հաշտարխանու ելեալ գնացաք 'ի Մոսկով 'ի պատճառս օծման եկեղեցւոյն Սանկթպետրբուրխու, զոր կառուցեալ էր Ջուղայեցի Եղիազարեանց Եղիազար Աղայի որդի ազնիւ Աղայ Յովհաննէսն:

3107

H 2434 III

Յամի փրկչին 1779, և 'ի հայոց ՌՄԻԸ թուականին, և 'ի յունվարի 17, ելեալ 'ի Հաշտարխանու գնացաք 'ի Մոսկով փետրվարի 7 և պատկերաւուրն հինգշաբաթ մեծի բարեկենդանին։ Եղիազար Աղայի որդի Ազնիւ Աղայ Յովակիմս գոլով 'ի սաստիկ հիւանդութեան, պատրաստեալ էին վասն մեր զտունս Բարղամեանց, առ որ օթեցաք. իսկ Աղայ Յովակիմս շնորհօք Տեառն կրկին զկեանս ընկալաւ, որով ուրախ եղաք։

'Ի փետրվարի 1 եկն ազնիւ Աղայ Յովհաննէսն 'ի Պետրպոլքու 'ի Մոսկով յաղագս հարկաւորութեան իւրոյ. վասնորոյ ամիսս ինչ յամեցուցանել եղև մեզ գնալ 'ի Սանկթպետրբուրխ։

'Ի սոյն ամսոյ 13 գնացաք առ սրբազան Պլատոն արքեպիսկոպոսն Մոսկովու ընդ ազնիւ Աղայ Մինասին, ուրախացեալ ընդ տեսութիւն մեր յարգանօք բազումս եցոյց։

Ցամսոյս 25 մէկ տարեկան քարոզ գիրք ռուսերէն և Աստուածաբանութիւն մի առաքեալ էր առ մեզ սրբազան Պլատոնն։

'Ի մարտ ամսոյ 10 կրկին գնացաք առ սրբազան Պլատոնն, բազում խօսակցութիւնս արար վասն հաւատոյ մերոյ և աւանդութեանց եկեղեցւոյ, և յաղագս զրպարտութեանցն յունաց առ մեզ, և վասն պէսպէս բաջաղմանց յունաց յաղագս պահոցն սրբոյն Սարգսի. զորս ամենայն լուծաք. և զտուեալ պատճառսն մեր ողջամիտ վարդապետութեամբ ընկալաւ։

Գնացաք և առ Ռաստովու Սամուէլ արքեպիսկոպոսն և նա ըստ քաղցր բարուց իւրոց ընկալաւ զմեզ սիրով. և զսէրս բազումս

եցոյց և տեղեկացաւ զհաւատոյն մերոյ։

Մարտ ամսոյ 16 ՚ի տօնի սուրբ Լուսաւորչին ժամ. արարաք ՚ի Մոսկով և բաղում ռուսք եկին։

Ցամսոյս 23 սրբազան Պլատօնն հրաւիրեաց զմեզ ՚ի ժողովարան մեծ եկեղեցին, զոր կոչեն Ուսպենսկի սօպօռ այսինքն Ննջման աւաղ եկեղեցի. զի կայսերուհին զգեստ էր առաքեալ ՚ի փոքր եկեղեցւոյն, մեծ հանդիսիւ և ամենայն ուխաիւք ՚ի մեծ եկեղեցին տանէին. գնացաք ընդ ազնիւ Աղայ Մինասին։

՚Ի սմին աւուր եկին առ մեզ ՚ի Ղռիմու ելեալ ժողովրդենէն արք երևելիք, կապիտան պարոն Յովհաննէսն Աբրահամեան, պարոն Մկրտիչն Պետրոսեան, պարոն Դանիէլն Իմքայարայեան և այլք և յառաջագոյն կային ՚ի Պետրպօլք ՚ի Ղռիմու առաքեալ մահտեսի Յարութիւն և մահտեսի Կարապետ. զի յետ մեծի յաղթութեանն ռուսքն զԹաթարսն ինքնագլուխ արարեալ, զքրիստոնեայսն եհան անտի զհայս և զհօռոմս ՚ե ձեռն ենարալ Ալէքսանդր Վասիլիչ Սուվորովի և բերին զնոսա ամենայն ախիւք իւրեանց ՚ի գուբէռն Ազովու և մինչ տեղ ոչ էր նշանակեալ վասն նոցա, ՚ի տառապանս կային, գրեթէ բազումք մեռան ՚ի գիւղօրայսն, ուր ցրուեալք էին. ապա իբր ՚ի տնօրինութենէ Աստուծոյ մեք ՚ի պատճառս օծման Սանկթպետրբուրխու եկեղեցւոյն մինչ գնայաք, գրեցաք նոցա ՚ի յԱզովու գուբեռն մխիթարութիւն. ապա եկին վերոյ երևելի արքն և հանդիպեցան մեզ ՚ի Մոսկով. մնացեալ մեր անդ ՚ի միասին գնացաք ՚ի Պետրպօլք, վասն բնակութիւն խնդրելոյ, որպէս զկնի դրելոց եմ. որ նոքա խնդրէին զԹաատովու բերթնատեղն, որ է ՚ի վերայ Դօն գետոյն՝ մերձ յԱզովու և չերքէզ Քիրմանու քաղաքին որպէս և խնդրեցի առաւելութեամբ ընկալայ հանդերձ պրվելեկոմն այսինքն՝ բաւականական հրովարտակաւ կայսերական, ուր զհարկ և զկացութիւն ամենայն ցեղ ժողովրդականաց յատկացուցեալ գոյ, ՚ի նմին հրովարտակով անուանեցաք զքաղաքն մեր Նախիջևան յանուն քաղաքամօրն աշխարհի հին Նախիջևանայ։[4]

Ցամսոյս 31, որ էր զատիկ տեառն նոյն սրբազան Պլատօնն հրաւիրեաց զմեզ գնալ ՚ի սօբօռն և անդ տեսանել զսուրբ պատարագն, և զհանդէսն մեծ, զի մեծ կայսերուհոյ զգեստն ՚ի նոյն օրն զգենլոց էր. գնացաք ընդ ազնուացն մերոց Աղայ Յովհաննէսին և Աղայ Մինասին. տարան զմեզ ՚ի սեղանն սուրբ և անտի տեսաք զբոլոր հանդէսն. յոյժս յարգեցին զմեզ ՚ի սեղանոյն ամենայն դասքն հոգևորաց, և բազմաց խոյթէր լեալ անիմաստ և գռեհիկ ժողովրդեանն մուտն մեր անդ. և զբաղում թուեալ նետս էին արձակեալ առ սրբազան Պլատօն արքեպիսկոպոսն վասն տանելոյն զմեզ ՚ի սեղանն, որպէս ինքն և այլք պատմեցին մեզ, զի միտք նոցա զհետ էր ընթացեալ առասպել և անխիղճ գրեցելոց, զրպարտութեանցն յունաց որ առ մեզ. անարժան վարկանէին դըտանել մեզ ՚ի սեղանի անդ։ Բայց, վառեալն Աստուածային հոգովն սրբազան արքեպիսկոպոսն քամահեալ զնոստի բաջաղմունս անիմաստից լայր ՚ի վերայ կուրութեան նոցա և ծիծաղէր զասացելովք նոցա. բայց զկնի այսր մինչ յաճախեցին բազմութիւնք ՚ի յեկեղեցիս մեր ՚ի ժամ. պատարագելոյն մերոյ նախարարք և իշխանք, վաճառականք և հասարակ ժողովուրդք, թուլացաւ աղաւաղել նոցա և մանաւանդ թէ՝ յառաջինն էր այս տեսութիւն նոցա հայոց եպիսկոպոս իւրով ձեռով գտանիլ ՚ի յեկեղեցիս իւրեանց։

Ապրիլի Թ ընդ ազնուացն մերոց, հրամանաւ սրբազան Պլատօնին գնացաք ՚ի սօբօր և տեսաք զամենայն անօթս նորին և պատրիարգացն իւրեանց. յորս էին յոյժ ոսկւոյ և արծաթոյ շինուածոց և մարգարտեայ հանդերձից ընդ ականց պատուականաց և բազմութիւն ձեռագիր գրեանց յունաց և ռուսաց։

Մայիսի ԺԸ գրով սրբազան Պլատօնին գնացաք ընդ Աղայ Յովակիմին ՚ի վանս տրօյիցի Սարգսի սքանչելագործին, յոյժ պատուադրութեամբ ընկալան զմեզ, որոյ տեղակալն էր հայր Պաւլ, զոր նամեստնիկ կոչեն. այր գեղեցկադէմ. և բարեսիրտ և յոյժ խոհեմ. երիտասարդ հասակաւ։ Տեսաք զամենայն անօթս և գանձս վանիցն, որ լի է ոսկով և արծաթով և պատուական գոհար քաբամբ մարգարտով և ոսկեճաճանչ և զառնաւուխտ դիպակօք և հանդերձիւք։ Զկնի որոյ տարան զմեզ ՚ի վարժարանն. սիւն պատուոյ

էին շինեալ անդ 'ի պատիւ մեր. և մինչ մըտաք 'ի ներս, երգեցին երգ ինչ և ապա ոմն աշակերտաց ել 'ի յամպիոնն և ասաց ողջունեստ ինչ 'ի դէմս մեր և զկրօնէ մերմէ յուղղափառութենէ և զայլ ինչ։ Յետ աւարտման եկն և աջ էառ. և Աղայ Յովակիմն յօժարեաց զնա ՌցԵՌ դիանով. և այլ տեղիս ես ըստ պատշաճին տալով. 'Ի նոյն օրն անդ ճաշեցաք. զկնի ճաշուն 'ի զանգակատունն ելաք, որ զարմանալի է տեսողաց գեղեցկութիւնն և շէնքն նորին։ Մէկ հայոց խաչ դոյր անդ. մէջն մասունք։ Մասունքն ոչ իմացաք ում զոլ. սակայն 'ի վերայ նորա գրեալ թիւն է այս ՌԿ և գրեալ ունէր յիշատակ այսպէս «Ես սարկաւագ վարդապետս Նորոգել լտու գխաչս գայս». Թարգմանեցին և ընդ խաչին պահեցին։ Մինչ ելանէաք նամեսանիկն իւրով կառէթիւն եկն ընդ մեզ մինչև 'ի յայգին իւրեանց և համբուրեալ զմիմեանս, յետ դարձաւ. և մեք գնացաք 'ի ֆապրիկն Աղայ Յովհաննիսի. յորս էին բազումք մերազնէից. քանի օր անդ զկեանս անցուցաք յոյժ բարեպէս զբօսնելով 'ի ջուրս և 'ի մայրիս։

Մայիսի ԻԶ օծաք զհիմանց քարինս Մօսկովու նորաշէն եկեղեցւոյն յոյժ հռչակաւ և մեծ հանդիսաւորութեամբ։

Յունիսի մուտն. 'ի տօնի սուրբ Լուսաւորչին ելն 'ի վիրապէն արկաք զհիմունս նորին մերով ձեռամբ ըստ օրինի. զի 'ի տեղւոջն այնմիկ զգեստաւորեցաք և իջաք 'ի հիմունս առ 'ի արկանել զքարինսն։ Նաև անտի ամենայն բազմութիւնքն եկին 'ի տուն աղայ Եղիազարի և ճաշեցին ոմանք. և անուն եկեղեցւոյն անուանակոչեցաւ սուրբ Խաչվերաց. զի յիշատակ հանգուցեալ աղայ Խաչիկին կանգնեցին, որ էր երրորդ որդի Եղիազար աղային։

Յունիսի Ը ընդ աղայ Յարութիւնին Իսախանեան գրով սրբազան Պլատօնին գնացաք 'ի Նոր Երուսաղէմ և խսաւին մանաստէրն. տեսաք և զամենայն զանձս սոցին։ Երուսաղէմ էր յոյժ արժանի տեսութեան վասն յարմարակերտ շինուածոցն։

Յուլիսի ԺԳ. կրկին գնացաք 'ի տրոյիցէն, զի Պլատօն արք-եպիսկոպոսն անդ էր. հրաժարական ողջոյնն ետուք. վասն մեր Պետրբօլքու սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսին յանձնարարութիւն գրեաց. ընդ մեզ էին Իւան Գրիգորիչ Սումպատովն և Աղայ Մինասն. 'ի նոյն օրն ընդ նմա ճաշեցաք։

Յուլիսի վերջն, ընդ ազնիւ Աղայ Յովհաննէսին 'ի Մօսկովու ելեալ գնացաք 'ի Սանկթպետերբուրխ բազում խնդութեամբ և 'ի յօգոստոսի Ե ժամանեցաք յաւուր շաբաթու. 'ի նոյն օր պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալեքսանդրովիչ Պօտեմկինն՝ լուեալ զգալուստ մեր, իսկոյն կոչեալ էր զմեզ։ Ընդ ազնիւ Աղայ Յովհաննիսին գնացաք 'ի կայսերական պալատն առ նա. բազում յարգանս ցուցեալ մեզ և սէր, խօսեցաւ ընդ մեզ մինչև երկու ժամս. վասն հաւատոյ, վասն կարգաց եկեղեցւոյ, վասն եկեղեցական զարդուց և զգեստից և վասն կեցութեան մերոյ. եցոյց մեզ զգեստս ինչ, զոր վասն նորակերտ եպիսկոպոսի ուրուք պատրաստեալ էին. խոստացաւ և վասն մեր ռոճիկ կարգել. հրամայեաց և 'ի վաղիւն գնալ 'ի յայլակերպութեան եկեղեցին, որ էր յամսոյ վեց և իւրեանց տօն այլակերպութեան, առ որ գնալոց էր և նորին կայսերական մեծութիւնն, զի Խերսոնու և Նովոռուսի եպիսկոպոսն Նիկիփօռ ձեռնադրէին։ Ի նոյն օրն Իրօֆիոս արքիմանդրիտ ոմն առաքեաց առ սրբազան եպիսկոպոսունս Նովգօրոդու և Պսկովսկու, որ զմեզ սիրով ընկալնուցուն. ըստ հրամանին պայծառափայլի ի նմին ժամու գնացաք առ Գաբրիէլ արքեպիսկոպոսն Պետրպօլքու, որ կարի մարդասիրութեամբ ընկալաւ։ Եւ 'ի լուսանալ առաւօտուն մինչ հանդէսն ամենայն պատրաստեցաւ և անձնապահ զունդն կանգնեցաւ 'ի դրան նոր այլակերպութեան եկեղեցւոյն վասն գալստեան Թագուհւոյն, ըստ հրամանի քնեազին մեք ընդ Աղայ Յովհաննէսին վաղ գնացեալ, գնդապետ Դօլստօն եկեալ աջ էառ և ափիցերք արկեալ առաջի մեր հասուցին զմեզ յեկեղեցին. եկն քնեազն աւագ քահանայիւն Անդրէիւ զմեզ 'ի սեղանն հրաւիրեցին. և քնեազն խնդրեաց յեպիսկոպոսացն զմեզ սիրով ընկալնուլ. աջ առեալ միմեանց ըստ օրինի նոցա. եկն Թագուհին և մեք ըստ հրամանի քնեազին ելեալ 'ի սեղանոյն 'ի յարքունական դուռն սեղանոյ երկրպագեցաք Թագուհւոյն և քնեազն պատմեաց զմէնջ։ Հանդէսն արարին և ձեռնադրութիւն

եպիսկոպոսին կատարեցին։ Թագուհին եկն 'ի սեղանն, մեզ գլուխ ետ ծիծաղելով և քնեազն ընդ նմա, նոյնպէս և մեք իւրն. անդ կալով և մեզ նայելով 'ի վերայ մեր խօսէր և քնեազն պատասխանէր։ Յետ արձակման պատարագին ընդ սրբազան եպիսկոպոսացն սինօթի 'ի տան Անդրիա աւագ քահանային ճաշեցաք և բազում խնդութեամբ լցաք մեք և ազգն մեր վասն յաջող հանդիպմանն մերոյ։

Յօգոստոսի ԻԲ ժամ. արարաք ըստ խնդրոյ պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեմկինին. եկն բազում նախարարօք. 'ի յեկեղեցւոջն ասացաք զպատշաճաւոր բանս ինչ։ Եւ զկնի ժամուն խընդրեցաք վասն Ղրիմոյ. եկեալ ժողովրդոցն զԱռաստով. զի գուբեռնաթ տեղոյ հակառակէր։ Եւ պայծառափայլ գնեազն իսկոյն շնորհեաց մեզ զԱռաստով. և յոյժ յամօթ եղե հակառակող գուբեռնաթն, թէպէտ շատ գնաց առ քնեազն իբր 'ի խափանել, սակայն ոչ կարողացաւ, զի մեք Իւան Պետրովիչ Գօրիչաւն ծանուցաք քնեազին նորին չկամութիւնն և քնեազն սաստեաց նմա։

'Ի սոյն ամսոջս սրբազան եպիսկոպոսունքն Գաբրիէլ և Ինօքենտի հրաւիրեցին զմեզ 'ի ճաշ յատուկ յատուկ. և բազում մարդասիրութիւնս ցուցին մեզ և մեծապէս սիրով յարգեցին։

Հոկտեմբերի Թ. Իւան Գրիգորիչ Զօրնիշովն 'ի ճաշ էր հրաւիրեալ զմեզ մեծաւ փափագմամբ։

Թւին 1780 յունվարի մուտն։

Իւան Պեարովիչ Գօրիչն եկն առ մեզ և յայտնեաց զգնալն իւրեանց 'ի վերայ պարսից առ 'ի տիրել զծովեզերեայ տեղիսն, հարցումն արար վասն պարսից երկրացն և որքան հեռաւորութեանցն քաղաքացն 'ի միմեանց և կարողութեանց նոցին և որքանութիւն զօրացն հայոց և տաճկաց սկսեալ 'ի Գարբանդու և 'ի Գիլանու մինչև ցԹարվէզ և 'ի յԵրևան և անտի մինչև ցՂարաբաղ և 'ի Շրուվան. և մեք որքան գիտէաք ասացաք և ինքն գրեաց ռուսերէն և տարաւ։

Յունվարի 2 եկեալ պօռօճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվօրովն եկն առ մեզ 'ի տեսութիւն. և մեր ազնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա 'ի վերայ նոյն նիւթոյն և 'ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս։ Էհարց և մանրամասնաբար զկացութենէ Սրբոյ Աթոռոյն մերոյ Էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ, որպէս թէ նորոգելոց իցեն 'ի մեզ իշխանութիւն ինչ. որև 'ի մէնջ ելեալ գնացեալ էր առ պայծառափայլ քնեազն Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտեմկինն և պատմեալ նմա զամենայն ասացեալսն մեր վասն քաղաքաց։

'Ի սոյն ամսոյ Գ. պայծառափայլ քընեազն խնդրեալ էր զմեզ ընդ ազնիւ Աղայ Յովհաննիսին Եղիազարեան. 'ի միասին գընացաք առ նա և բազում ինչ խօսեցաք վասն այցելութեան ազգին մերոյ և աշխարհին. և բազում ինչ Աղայ Յովհաննէսն պատմեաց. և հայերէն աշխարհացուցին զգաւառսն Հայաստանեայց և զերևելի քաղաքսն ցուցաք. և ինքն յետ բազում հարցաքննութեանցն զկացութենէ ազգին մերոյ և սրբոյ Աթոռոյն և զկաթուղիկոսէն. և մեր թախանձելն նորոգել 'ի մեզ զմասնաւոր տէրութիւն 'ի մեծն Հայաստան 'ի քաղաքն Երևան, պատասխանեաց թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարգն ձեր քանիօք իշխանեօք խնդիր ի գործ ածիցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այնու 'ի յօգնութիւն ձեզ եկեսցուք։ Էհարց և զարքայէն Վրաց և զայլ ինչ բազում. մեք և Աղայ Յովհաննէսն պատասխանեցաք բազում ինչ. և յոյս մեծ առեալ 'ի բանիցն նորին, խնդութեամբ ելաք և նոյն յուսովն մնամք այժմ ընկալնուլ զխոստացեալն 'ի ժամանակի իւրում։ Հրամայեաց և Աղայ Յովհաննէսին գրել 'ի Ջուղայ Էմին Աղային որ եկեսցէ. որ և գրեաց և զայն գիրն առաքեաց Հաշտարխանու գուբեռնաթին, որ նա յղեսցէ 'ի Ջուղայ առ նա, որ շուտով եկեսցէ։

'Ի սոյն ամսոյ ԺԳ. նոյն եկեալ պօռօճիկ Սուվօրովն զմեզ Աղայ Յովհաննիսիւն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց նաև որպիսութեանց մելիքացն մերոց, որք 'ի յԱրցախ յաշխարհին են, որ այժմ կոչի Ղարաբաղ և կամ Սղնախ. և մեք ասացաք զկարգն նոցին և զմիաբանութիւնն ընդ իրեարս. և զտարաձայնութիւնն և զպատճառն տիրելոյն նոցա 'ի

Փանախանէն և զպէսպէս վշտակրութիւնսն և ղտարաշխարհիկ լինելն նոցա. այսինքն Մելիք Աղամին և Մելիք Յովսէփին 'ի հայրենեացն և զվերստին դարձն Զարաբերթ. առաջինն Մելիք Ազամն կարողութեամբ հազար արանց պատերազմողաց։

Իգիրմիդօրգ երկրորդն. Մելիք Յովսէփին սոյն սարասի, ե սոյն երկուքս համաձայն 'ի յամենայն իրս և խորհրդականք և ըստ մեծի մասին յանձնիշխանք, թէպէտ են ընդ հնազանդութեամբ Շօշու խանին։

Դուզաղ երրորդն. Մելիք Եսային, ըստ կարողութեան վերոյ մելիքացն, սակայն կարի նեղեալ 'ի նախանձուէ Մելիք Շահնազարին։

Վարանդ չորրորդն. Մելիք Շահնազարըն, որ զօրացուցիչն է Տաճկաց և միաբան ընդ խանին. ունի կարողութիւն և սա հազար արանց պատերազմողաց։

Խաչէն հինգերորդն. Մելիք Միրզախանն և որդին. ունին սոքա կարողութիւն արանց պատերազմողաց մինչև հազար։

Մելիք Ալահվէրդին, որ է գաեհիկ և խղճաբարոյ. ունի կարողութիւն արանց պատերազմողաց մինչև ցհինգ հարիւր։ 'Ի սոյն Խաչէն է և Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից, որ Հանկթամուրն տարագրեաց զազգն Աղուանից. և հայք եկեալ բնակեցան 'ի նմին տեղւոջ և կաթողիկոսութիւնն անեաց մինչև ցայսօր։

Ասաէն պատմեցաք և զգլխաւոր իշխանութիւնն սրբազանից կաթողիկոսացն ամենայն հայոց, որք 'ի սուրբ Էջմիածին և նոքա գրեցին։ Պատմեաց Աղայ Յովհաննէսն և մեր ուղղաշոց միաբանութիւնն և զտէրութեան նորոգելն և ոչ ընչիւ կորուսանելն. նաև Դաւիթ Բէկի զօրանալն և արիութիւնն և յեա վախճանին խափանիլն։ Հարցին և զբարուցն արքային Հերակլայ և զկարօղութենէ նորին և զոր ինչ ասացաք գրեցին. որ վեց ազգաց զօրս գումարէ 'ի յօսից, թուշից, փշաւից, քստից, չէրքէզից և լակզեաց։ Են 'ի սոցանէ, որք հնազանդին նմա և են, որք 'ի վարձու կալնու. այլ և ունի 'ի տէրութեան իւրում բնակեալ հայ և տաճիկ. և 'ի նոցանէ ևս առնու զօրս։ Զայս ամենայն զոր աստ նշանեցաք 'ի յասելն Աղայ Յովհաննէսին նոքա ռուսերէն գրեցին։

Ծանուցաք և զարի արանցն Սիսիանու և Ղափանու, որք կարող են մինչև ցհազար անձն խանին տալ 'ի ժամ պատերազմի. որք թէպէտ էին յառաջ ընդ իշխանութեամբ Նախիջևանայ խանին, բայց այժմ են ընդ իշխանութեամբ Ղարաբաղու խանին. զայս ևս գրեցին։[6]

Փետրվարի վեց սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն եկն 'ի տեսութիւն մեզ. զկնի ճաշու ժամու հինգ ժամուն և մնաց առ մեզ մինչի Ժ. ժամն, և 'ի մէնջ գնացաք առ Աղայ Յովհաննէսն և անտի յեկեղեցին և մեք ընդ նմա. շրջեցաւ յամենայն տեղիսն և 'ի վերնայարկսն, թէպէտ դեռ ոչ էր ընկալեալ զօծումն, բայց մեք զարդարեալ էաք յաղագս նորա։ Յոյժ հաւանեալ գովեաց զյարմար կերտուած սուրբ եկեղեցւոյն մերոյ. և անտի ելեալ ողջունեցաք ընդ միմեանս և ապա գնաց 'ի մէնջ։

Սոյն ամսոյ 10 գնացաք 'ի կադէթի կօրփուսն, ուր տպէին ասութիւնն մեր. և անդ ընծայեցին մեզ՝ մէկ դիրք որոյ անունն էր սէր հայրենեաց, որ Բռուսի թագաւորի արարեալն է և զմեր անունն փոքրիկ գրով տպեալ մեզ ետուն. և քանի մի պատկեր ևս և նատիր շահի պատկերն։ Որոյ վերակացուն էր մեր Եփրեմ արքիմանդրիտի քվեր որդի Իքնատիէ Անտօնիչն։ Գործաւորացն ետուք ԻԲ դիան. պարոն Յարութիւն Դաւիթովն էր ընդ մեզ։

Սոյն ամսոյ 18 օծաք զեկեղեցին մեծաւ հանդիսաւորութեամբ յանուն սուրբ կուսին Կատարինէի. որում կցորդիւր և մեծ թագուհին. եկն պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պօտեմկինն և ամենայն նախարարքն և մեք գեղեցիկ արարողութեամբ հաճոյացուցաք զմիտս ամենից, որ բոլորեքեան հաւանեցան բարեզարդ արարողութեան մերոյս եկեղեցւոյն։ Քարոզ էաք պատրաստեալ և ռուսերէն թարգմանեալ. յորժամ մեք կանգնեցաք ասել զքարոզն հայկական, նոքա զթարգմանեալսն բաժանեցին իշխանացն ռուսաց մինչև հինգ հարիւր հատ։ Մատուցաք պայծառափայլ քնեազին և վասն ողորմած թագուհւոյն, որ յատկապէս էաք կազմեալ, նոյնպէս և վասն ժառանգոյն մեծ իշխան Պաւլ Պետրովիչին և մեծ դշխոյ Մարիա Ֆեօդրովնային, զորս Աղայ Յովհան-

Նիսի ձեռամբ մատուցաք 'ի տան վեզիր աղամ. գրաֆ Նիկիտայ Իւանիչ Պանինին, որք ընկալեալ յարգեալ էին։

Սոյն ամսոյ 25 ողորմածագունեղ Թագուհին շնորհեաց մեզ պնակէ մի ձեռամբ պայծառափայլ քնեազ Պօտեմկինին շնորհակալ կալով զքարոզութենէ մերմէ, զոր մատուցեալ էաք գովասանութեամբ։

Սոյն ամսոյ 28 քահանայ ձեռնադրեցաք զտէր Ստեփանն 'ի քահանայ ըստ խնդրոյ պայծառափայլ քնեազին. եկն բազում նախարարօք և դեսպանօքն եւրոպէացւոց. 'ի նոյն օր մեծաւ հանդիսաւորութեամբ արկաք զվերոյ դրեալ պնակէն 'ի պարանոց մեր, ասութիւն ինչ ասելով 'ի դէմս քնեազին շնորհակալութիւն վասն ցուցեալ շնորհացն կայսերուհւոյ միջնորդութեամբ իւրով։

Ապրիլի ամսոյ 25 սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն Նովւգորոդու և Պետրբորքու դիր գրեաց Սանկտ-Պետրբորքու բերթի սուրբ Պետրոս Պօղոս սօբօրի աւագ քահանային, որ եթէ գնամք 'ի տեսութիւն սօբօրին պատուով ընկալցի զմեզ. գնացաք քանիւք մերազնէիւք, որ էր օրն շաբաթ. երկու շլուպկայ էին [illegible] առաքեալ իւրաքանչիւր ԺԲ թիակակալովն. և իբրև մերձեցաք 'ի ցամաքն, ընդ յառաջ եկն մայեօռ մի, աջ առեալ խոնարհաբար անկաւ առաջի մեր. և իբրև մտաք 'ի դուռն բերթին պատշաճաւոր փոքրիկ գունդ մի վառեալ իւրեանց զընդապետաւն 'ի կարգի կանգնեալ էին ըստ օրինի իւրեանց պատիւ ետուն մեզ. և 'ի մերձիլն մեր 'ի դուռն սուրբ եկեղեցւոյն աւագ քահանայն ընդ ութն քահանայից ընդ յառաջ եղև և խոնարհեալ աջ էառ ինքն և որք ընդ նմա էին։ Մտաք 'ի յեկեղեցին երկրպագեցաք տաճարին և զբօսաք. համբուրեցաք և զգերեզմանս կայսերացն, որք էին 'ի ձախակողմն եկեղեցւոյն մերձ 'ի դասն. որք էին մեծն Պետրոս, Կատարինէ առաջինն, Աննա Իվանովն և Եղիսաբեթ Պետրովնայն. և ելաք 'ի սեղանն և անտի 'ի հանդերձատունն. տեսաք կահսն և զկարասին յորում գոյր մէկ մեծ դրշեայ աւետարան ոսկետուփ և քարամբ կազմեալ. և մէկ պատուական ոսկեայ սկիհ և ոսկրեայ պատկերք տէրունական քանդակեալք ձեռամբ մեծին Պետրոսի։ Ելեալ 'ի յեկեղեցւոյն տեսաք և զձեռակերտ նաւակն մեծին Պետրոսի և զամենայն գործիս նորին, և անտի հրաւիրեաց զմեզ կամենդանթն նորին՝ այսինքն բերթապանաց մեծաւորն ենարալ մայեօռ Անդրեայ Գաբրիէլիչ Զօրնիշովն, 'ի բնակութիւնն իւր և յոյժ յարգանօք ընկալաւ զմեզ ուտելեօք և բազում պատուադրական մարդասիրութիւնս եցոյց։ Ելեալ անտի եկաք նստեալ 'ի կուրն. նոյն մայեօռն և աւագ քահանայն եկին մինչև 'ի յեզրն ջրոյն մեծաւ ամբոխիւ, և 'ի յելանելն մեր 'ի դրանէ բերթին նոյն զինուորքն նոյնով բազմութեամբ կային և նոյն պատիւն ետուն. և 'ի նստելն մեր 'ի կուր աջ առեալ մայեօռն և աւագ քահանայն յետ դարձան և մեք օրհնելով զկայսերութիւնն եկաք 'ի տուն պարոն Մարգարին Մանուչարեան ընդ եղբօրն իւրոյ պարոն Փիլիպպոսին, որ էր ընդ մեզ համարընթաց և թարգմանիչ, որ և ըստ պատշաճին ետ վարձ վարողացն զկուրս։ Եկեղեցի էր երկայն և վեց սեամբ և տաճարն յոյժ գեղեցիկ և սեղանն յոյժ ընդարձակ. իսկ զանգակատունն յոյժ ահաւոր և բարձր 156 դազ ռուսաց այսինքն հալապի։

'Ի սոյն թուոջն և 'ի մայիսի 1 պայծառափայլ քնեազն խնդրեալ էր զմեզ 'ի Ցարսկի սելօ վասն մատուցանելոյ կայսերուհւոյն. ընդ Աղայ Յովհաննիսին և ընդ Իւան Պետրովիչ Գօբիչին գնացաք. շրջեցաք 'ի բուրաստանսն և տեսաք զզանազան մարմարոնեայ շինուածս արժանաւորս գովութեան. տունս բարձրաբերձ. արձանս և կամուրջս գեղեցիկս 'ի վերայ լճացն և ջրոցն, զորս փորեալ 'ի գետնոյն ծովացուցեալ են։ Եւ 'ի երեքին գնացաք 'ի տեսութիւն կայսերաժառանգ Պաւլ Պետրովիչին և մեծ դքշխոհի Մարիա Ֆեօդրովնին շինեալ տունքն տեսաք, որք հեռի 'ի Ցարսկի սելօէն Գ վերսաւ։ Եւ 'ի յամսոյս 3-ին 'ի յաշխարհամատբան կիւրակէին պայծառափայլ քնեազ 'ի 8 ժամուն տարաւ զմեզ 'ի բնակութիւն իւր, որ անդ ցուցցէ մեզ կայսերուհւոյն. սակայն կայսերուհին առաւել ողորմութիւն արարեալ մեզ, հրամայեալ էր 'ի պալատն արքունի տանիլ. եկն քնեազի քվեր որդի կաւալեր Սամուելովն և ասաց թէ հրամայեաց կայսերուհին առ ինքն գոլ. անկաւ առաջի մեր և մեք զկնի և ընդ մեզ Աղայ Յովհաննէսն

միայն. և գնացաք 'ի վերն յորում ժողովեալք էին բազում իշխանք. և մեր երախտաւոր քնեազն եկն առ մեզ ծիծաղելով թէ ահա կատարեցի խոստումս. և իսկոյն ել կայսերուհին, խոնարհեալ գլուխ ետուք և գնացաք ձեռքն համբուրել. առեալ համբուրեցաք և ինքն խոնարհեալ գլուխ ետ մեզ և մեք իւրն և կանգնեալ առաջի ասացաք զպատշաճաւոր բանս և աղայ Յովհաննէսն պատմեաց թագուհւոյն. և ապա մեր ասութիւնն զոր ռուսերէն թարգմանեալ ունէաք մատուցաք մերով ձեռամբ, զոր շնորհակալութեամբ ընկալաւ։ Յետ այսորիկ կանգնեցաք և ասացաք թէ յետ ընկալնլոյ զամենաբարձր հրովարտակն կայսերական մեծութեանդ Սիմէօն սրբազան պատրիարգն ամենայն հայոց չ'ունելով այլով իմիք պարտավճար լինել կայսերական մեծութեանդ սահմանեաց զաղօթս զայս և եղ 'ի յեկեղեցիս մեր որ յաւուրս շնորհալի տօնի քոյոյ մեծութեան փառաւորեսցեն զԱստուած և խնդրեսցեն զկեանս օծելոյդ իւրոյ. և ապա մատուցաք զսրբազանի արարեալ տօնախմբութեան տետրակն, զոր ընկալեալ էհարց զմէնջ և գլուխ ետ մեզ և մեք իւրն. զգրեանս ինքն առեալ եմուտ 'ի սենեակն իւր և զքնեազն կոչեաց առ ինքն 'ի ընթեռնուլ զգրեանս. և մեք ելեալ անտի եկաք 'ի Պետրպօլք յոյժ խնդութեամբ։

'Ի սոյն ամսոյ 8 դարձեալ գնացաք 'ի Ցարսկի սելօյ վասն հրաժարական ողջոյն տալոյ պայծառափայլ քնեազին, որ ելեալ գնամք. ասացեալ էր Իւան Պետրովիչ Գօրիչին և Աղայ Յովհաննիսին թէ մնասցէ մինչև ցդառնալն մեր առաւել բարի է լինելոց իւրն և կարելի է ոճիկն աւելցուք։

'Ի սոյն ամսոյ 5 ենարալ շէֆ և կապինէթի վերակացու Ադամ Վասիլիչ Ալսուփովն, որ բարեկամութիւն ունի ընդ մեր պարոն Մարգարին Մանուչարեան, ըստ խնդրոյ նորին զմեզ հրաւիրեալ էր 'ի տուն իւր վասն ճաշելոյ. որ և յոյժ յարգանօք ընկալաւ զմեզ որպէս ինքն նմանապէս և կինն իւր Մարիա Վասիլովնայն և դուստր Նատալիէն և որդիքն Աէրգէ Ադամիչն և Միտր Ադամիչն։

'Ի սոյն ամսոյ 9 օրն շաբաթ կայսերուհին ելեալ գնաց 'ի յիշխանութիւնս Լեհաց, որ այժմ է ընդ իշխանութեամբ իւրեանց. լսեցաք իմփերատօրն գալ պարտի անդ և թագաւորն Պռուսաց. և թէ զինչ խորհուրդ ունին ծածկապէս առնեն 'ի յինքեանս, այժմ 'ի մէնջ անյայտ է, թէպէտ մարդիկք զանազան դատողութիւնս առնեն, բայց մեծ իմն է երկուց կայսերացն շարժիլ 'ի տեղւոյջէ իւրեանց։

'Ի սոյն ամսոյ 13 'ի տանէ պարոն Մանուչարեանց ընդ պարոն Փիլիպպոսին գընացաք 'ի յաթմիրալթի կոլէկն. տեսաք զմեծամեծ նաւս, զորս կերտէին և զդատաստանատունս, և զմեծ չարխն զոր միով ձիով վարէին. և 'ի վերնակս նորին գոյին բազում չարխք և բանվորք, որք զնիւթս երկաթիս պատրաստէին վասն նաւուց։

'Ի սոյն ամսոյ 19 եղև մեծ հանդէս 'ի Պետրպօլք, վասն զի կայսերուհին նոր օրէնք ինչ սահմանեալ էր և իշխանութիւնն 'ի վերայ տեղակալաց էր բաժանեալ, որք անուանեն նամեստնիկ, որովք կառավարութիւնն առաւել դիւրին լինիցին վասն ազնուականաց, որք ունին զդաստակերտս և վասն վաճառականաց զի դիւրաւ լինիցի վասն նոցա իրաւունք. 'ի սոյն օր հրատարակեցաւ օրէնքս այս 'ի քաղաքոջս, սակս որոյ ամենայն զինուորական գունդն անձնապահական զոր դուարդի անուանեն և պատերազմականքըն զոր վօյեննի անուանեն 'ի յամառան պալատէն կայսերական զոր լէթնի սադ կոչեն անտի ըմբռնեալ մինչև 'ի սուրբ եկեղեցին կազանցկի կանգնեալ էին պատերազմական զինուք երկ երկ դասիւք և իւրաքանչիւրքն երկու սիրայիւք մինչև տեղակալն Պետրպօլքու որ էր ֆրթմաշալ Գալիցինն և գուբեռնաթն Միտր Վասիլիչ Վօլկոֆն եկեալ անցին 'ի մէջ այսինքն համաձայն ազնուօքն և հասարակ վաճառականօքն և գնացին 'ի Կազանու սուրբ Աստուածածնայ կոչեցեալ եկեղեցին վասն տեսանելոյ զպատարագ և երգումն առնելոյ մնալ հաստատութեամբ. և 'ի գնալն նոցա 'ի մէջ զօրացն զօրքն ամենայն ըստ օրինի իւրեանց փող հարին և իւրաքանչիւրքն չորք անգամ թֆանգ արձակեցին պատուելով զտեղակալն. տեսութեան արժանաւոր հանգիսիւ։ Եւ 'ի յերեկոյին քաղաքազարդար հանդէս արարեալ բազում ճրագս 'ի փողոցս և 'ի հրապարակս վառեցին և արձանս մեծամեծս խորհրդաւորս կանգնեալ և 'ի վերայ նոցա զխորհրդաւոր նկարս պատկերաց

արարեալն ե բոլորն ճրագիւ վառեալ կամարակապօք և բոլորակ ծաղկանիշ արուեստիւք, որ 'ի մէջ գիշերի զերկնային պայծառագոյն աստեղացն բերէին զնմանութիւն լուսափայլութիւնք նոցին։ Եւ մեր ազնիւ աղայ Յովհաննէսն Եղիազարեան վասն լինելոյ նորին 'ի կարգի ազնուականացն ռուսաց շինեալ էր յոյժ գեղեցիկ արձանս մեծամեծս մոմաշարիւք. 'ի յորս նկարեալ գոյին անուանք կայսերական մեծութեանն նմանապէս և ժառանգաւորացն նորին։ Հանդէսս այս անեաց աւուրս 9. և 'ի կատարմանն որ էր ամսոյս 28 սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն պարոն Մանիչարեան Փիլիպպոսիւն զմեզ հրաւիրեալ էր գնալ 'ի ղազանցկի կոչեցեալ սուրբ Աստուածածին եկեղեցին վասն տեսութեան հոգևոր հանդիսին, որ և ընդ պարոն Փիլիպպոսին գնացաք. ընկալան զմեզ ամենայն եպիսկոպոսունքն և ամենայն հոգևորականքն յոյժ յարգանօք. նաև սրբազան եպիսկոպոսն և ամենեքեան ըստ սովորութեան ռուսաց եկին 'ի համբոյր աջոյն մերոյ, որպէս և մեք իւրեանց և 'ի սեղանոջն կանգնեալ տեսաք զամենայն բարեվայելուչ հանդէսն, զքարոզն և զերգումն ընտրեալ դասաւորաց։

'Ի սոյն ամսոյ 25 ընդ Խօջամալ պարոն Յովհաննիսին գնացաք 'ի պալատն արքունի մերովք ուխտիւքն եկեղեցականօք. տեսաք զԵրմիտաժն, այսինքն զերկարաձիգ տունսն զայնոսիկ, յորս գոն բազմութիւն պատկերաց սրբոց և անսրբոց հնոց և նորոց, տեսաք և այլազգ բազում պատկերս և թռչունս կենդանիս և բազմազան նկարս քարանց պատուականաց՝ արժանաւոր տեսութեան. և անտի 'ի յեկեղեցին պալատի, որ էր յոյժ զարդարեալ և կայր անդ բազում սրբոց մասունս և զգեստս պատուականս եկեղեցականաց. և յայլ տունս տեսաք բազում գրեանս և այլ բազում ինչ. և պահապանացն պալատի և եկեղեցւոյն շահեաց դրամով պարոն Յովհաննէս Խօջամալոֆն։

'Ի սոյն ամսոյ 26 սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոսն շնորհեալ էր մեզ երկու քարոզ գիրք տարեկանաց. և իւր ասութեան տետրակն զոր յամսոյս 19-ին վասն նորոգ կարգադրութեան մեծ կայսերուհոյ։

'Ի սոյն ամսոյ 30 վէզիրազամ գրաֆ Նիկիտայ Իւանիչ Պանին հրաւիրեալ էր զմեզ 'ի ճաշ. գնացաք ընդ մեր ազնիւ աղայ Յովհաննիսին Եղիազարեան, առ որ էին բազմութիւն նախարարաց. ընդ որս էին և վիցկանցլար գրաֆ... և քնեազ Կուրակինն ընկալաւ զմեզ յոյժ յարգանօք և քաղցր սիրով. մեք որպէս 'ի ղիմաց մերոց՝ նմանապէս և 'ի դիմաց սրբազան վեհին ողջունեցաք զինքն և ցուցաք զմեզ երախտընկալ բարեբարութեան իւրոյ։ Զկնի աւարտման սեղանոյն խնդրեաց 'ի մէնջ զի ժամ արասցուք, որ եկեալ տեսցէ, զի 'ի ժամ օծմանն եկեղեցոյն մերոյ հիւանդ էր ինքն. և մեք յոյժ հաճութեամբ յանձն առաք առնել. և տղայ Յովհաննէսն զամենեսեան խնդրեաց 'ի ճաշ զկնի ժամուն։

Յունիսի 2 համբարձման երեքշաբաթ օրն ըստ խնդրոյ վեզիրազամ գրաֆ Պանինին վերոյ ժամ արարաք. եկն ինքն բազում նախարարօք և խուռն ամբոխիւ. մատուցաք զԱստուածային սուրբ պատարագ. թարգմանեալ խորհրդատետրն ունէր 'ի ձեռին և ընթեռնոյր. յոյժ հաւանեցաւ բոլոր արարողութեան մերոյ և գովեաց յոյժ. և կարի ջերմեռանդութեամբ շրջեցաւ 'ի սեղանն և հայեցաւ 'ի ճաշակումն մեր. մինչ սուրբ աւետարանն վերաբերեցաւ, բուրվառն տարան առ Պանին. եկն ընդ վիցկանցլարին և ընդ քնեազ Կուրակինին և համբուրեցին զսուրբ աւետարանն։ Զկնի արձակման պատարագին եկին և 'ի համբոյր սուրբ խաչին, որոց ետուք իւրաքանչիւրցն նշխար մի, զոր գոհութեամբ ընկալան։ Եւ մինչ եկաք 'ի տուն ազնիւ աղայ Յովհաննիսին 'ի ճաշել, կանգնեալ 'ի յատին որպէս ինքն նմանապէս և այլքն շնորհակալեցան զմէնջ և յոյժ յարգեալ գովեցին զհամեստ արարողութիւն սուրբ եկեղեցոյս մերոյ, և բազում հարց և փորձ արարին վասն ուղղափառ դաւանութեանս մերոյ։ Եւ մինչդեռ բազմեալ էին 'ի վերայ սեղանոյն առ մեզ հայեցեալ յոյժ հաւանէին դրութեան պատկերի մերոյ և մանաւանդ աչացս, որպէս ինքեանք նմանապէս և իշխանուհիքն՝ Մարիա Պավլովնէն և Մարիա Ստեփանովնէն կինն Տալիզինի։ Աղայ Յովհաննէսն ասաց նոցա թէ պատկեր սրբազանիս մերոյ նկարեն. և խնդրեցին բերել, որ և բերին. և ամենեքեան զբօսան 'ի յերեսս և 'ի նկարն, որ դեռ կիսատ էր և յոյժ հա-

ւանեյան նմանութեանն։ Մեք քնեազ Կուրակին խնդրեալ էաք, վասն տեսութեան նորին կայսերական բարձրութեան Պաւլ Պետրովիչին, որ զնա յոյժ սիրէր, իսկ գրաֆն պատասխանեաց թէ ես ասացեալ եմ նմա վասն հրամանոցդ և խնդրեալ է, որ յամսոյ 3-ին գնասցես 'ի տեսութիւն 'ի Ցարսկի սելոյ, զի վասն ամառան եղանակին անդ էր. և քնեազ Քուրակինին խնդրեաց, զի 'ի Ցարսկի սելոյ առ ինքն իջևանիցեմք։

Յունիսի 3 օրն հինգշաբաթ համբարձման Տեառն ընդ աղայ Յովհաննիսին գնացաք 'ի Ցարսկի սելոյ և 'ի տան Ալէքսանդր Վարլամիչ քնեազ Քուրակինին իջաք, ըստ խնդրոյ իւրոյ, իսկոյն ազդ արար կայսերաժառանգ Պաւլ Պետրովիչին և խնդրեաց զմեզ առ ինքն. գնացաք 'ի պալատն արքունի. եւ իւրով կենակցաւն Մարիա Ֆեոդրովնիւն ե մեք խոնարհեալ գլուխ ետուք իւրեանց ե իւրեանք մեզ և մեք գնացաք 'ի համբոյր ձեռաց նոցա վասն պատուոյ կայսերութեանն. յոյժ խոնարհութիւն ցուցին և ինքեանք։ Եւ մինչդեռ մեք ոչինչ էաք խօսեցեալ Պաւլ Պետրովիչն ասաց մեզ թէ՝ յոյժ ուրախ եմ, որ քո հրամանոցդ տեսի և ընդ քեզ ծանօթացայ, զսոյնս ասաց և մեծ դշխոհին և մեք զարժանաւոր պատասխանիս ետուք երանելով 'ի մէջ տարաբախտ ազգին հայոց, որ արժանի եղէ կալոյ առաջի երեսաց սոցին. և այլ այսպիսիս. եհարց զմէնջ ուր եմք եկեալ և երբ եմք գնալոց, խօսեցաւ 'ի վերայ լեզուացն և շախայս արար ընդ մեզ իբր դիտող լեզուայ ռուսաց ե ծածկող. և էհարց ռուսերէն բառիւ թէ գիտես. և ինքն ծիծաղելով ասաց թէ՝ ասա նիմնօշկայ. և յոյժ հուպ և կցեալ էր կանգնեալ ընդ մեզ. հրամայեաց և որդին բերել Ալէքսանդր Պաւլովիչն, որ տեսցուք. համբուրեցաք և զնորին փափկասուն ձեռսն և օրհնեցաք, և ծնողքն զերեխային ասացին կուպլումէնթ արա-այսինքն գլուխ տուր, որ և արար ըստ բանի նոցա, և մեք գլուխ ետուք և ելաք շաթիր նորին առաջի մեր անկանելով մինչև 'ի տուն քնեազ Քուրակինին և անդ ճաշեցաք։ Զկնի ճաշուն հրամայեալ էր վելիկ քնեազն շրջեցուցանել զմեզ 'ի պալատն ամենայն, որ և արարին. տեսաք զարժանիս տեսութեան. թէպէտ ամենայն ապարանն էր գեղեցիկ և ոսկեզօծ. սակայն 'ի մէջ նոցա յոյժ գեղեցիկ էր դարպասն քահրուպարեայ և տունն չինէզի որ բոլորն էր չէրնեզինաւ այսինքն ոխճապիկաւ. և մէկ տունն էր գրիթայաւ։ Մէկ մեծ և գեղեցիկ երկայն զարպաս և այլ տունք բազումք։ Եւ եկեղեցին բոլորն նկարեալ տնօրինական պատկերօք յոյժ գեղեցիկ և ախորժ. ետուք և սրբազան արարեալ տօնախմբութեան տետրակն, զոր ռուսերէն ունէաք. շնորհակալութեամբ ընկալաւ։

Յունիսի 1 Հոգեգալուստ. գնացաք պարոն Մարգարեանց հովանոցն և երեկոյին անդ ճաշեցաք զընթրիսն։

Յունիսի 5. գնացաք առ խոստովանահայրն, որ յոյժ յարգանօք և սիրով ընկալաւ զմեզ, որոյ անունն է Իւան Իւանիչ։

Յունիսի 9. գնացաք ամառան տունն և պարտէզն, որ շուրջ զնովաւ և տեսաք զբազում ինչ գեղեցիկ, մանաւանդ զարձանն մարմարոնեայ։

Յունիսի 9 ընդ պարոն Փիլիպպոսին Մանուչարեան գնացաք 'ի Նորաշէն եկեղեցին Իսակի, զոր սկիզբն են արարեալ 'ի 1767 ամին. հազիւ թէ չորրորդ մասէն մի մասն են շինեալ. լայն և քառանկիւնի ձևով և ահաւոր տեսլեամբ. արտաքուստ և 'ի ներքուստ մարմարոնեայ քարիւք և քանդակօք և բարձրաբերձ զանգակատամբ և լուսամտօք։ Տեսաք և զբազում մարմարոնեայ քարինս, զորս քանդակէին վասն սորա. տեսաք և զձև նորին, զոր փայտիւ կերտեալ են հնգեքին կաթուղիկէիւք և զամենայն ձևակերպութիւնսն և զպատկերաց նկարսն նշանեալ 'ի նմա։ Անդ էր և պղնձեայ ձուլածու արծիւն մի մեծ խոյացեալ 'ի վերայ լուսին նշանին Օսմանցւոց. և այլ բազում ինչ արժանի տեսութեան։ Տեսաք և Պետրոս մեծ կայսեր ձուլածու պատկերն պղնձեայ հեծեալ 'ի ձի. 'ի ներքոյ ոտից ձիոյն վիշապ մի մեծ պղնձեայ, կանգնեալ 'ի վերայ յոյժ մեծագոյն քարի լեառնացելոյ զոր 'ի հեռուստ են բերեալ մեքենայական արհեստիւ և բազում ծախիւք, որ հիացուցանէ զտեսօղս վասն մեծի ահագնութեան և հնարիցն ճարտարապետաց նորին, շուրջ որոյ կազմեն զերկաթեայ պարիսպ, որ 'ի դէպ ժամու բացցեն լինել տեսանելի ամենեցունց։

Յունիսի 10. գնացաք ընդ պարոն Փիլիպպոսին 'ի հովանոցն աղայ Յովհաննէսին և անտի ուր ղախճապիկս շինեն այսինքն ղչինեղէն անօթս ղանազան. տեսաք զբազում ոսկեզօծ անօթս մեծս և զփոքունս և զերկուսին մեծամեծ կարասաձև անօթն խփնով և ընկնով, 'ի վերայ որոյ պատկերսն երկուց կայսերացն Հռոմայ Յովսէփին և ռուստաց Եկատարինէ երկրորդին, զի հռոմայեցոց կայսրըն գալոց էր 'ի քաղաքս և մէկն նմա էին ընծայելոց, զի 'յոյժ գեղեցկայարմար շինէին, 'ի վերայ որոյ գոյր գունդն կայսերական 'ի գլուխ նոցա. և աստ մեր պարոն Փիլիպպոսն Մանուչարեան մէկ թուման ետ և վասն մեր մէկ ոսկետուփ չայի թաս էառ իւր սահանովն և խփնովն։

Յունիսի 11. ընդ պարոն Փիլիպպոսին գնացաք միաբանիւք մերովք 'ի կուզկամրն 2 'յորում են բազում և ազգի ազգի պատկերք մարդկանց, անասնոց, գազանաց, թռչնոց, սողնոց և այլ այսպիսեաց. խեղաթիւր ծնեալս արտաքոյ բնութեան սահմանի. երկ և եռագլուխ երեխայք՝ 'յորոց և բազումք են միաձեռն կամ բազմամատունք բազմաոտն և կամ այլ ինչ անդամ և մասն աւելեալ և կամ պակասեալ։ Են և զանազան ազգ զեռնոց և սողնոց և գազանաց անլուր 'ի մէնջ. նմանապէս և թռչնոց հզօրագունից զօրս արաղալի ապակով պահեն 'ի ցոյցս ամենայն տեսողաց և 'ի զարմացումն սքանչելի ստեղծագործութեանն Աստուծոյ։ Անդ է և մոմաշէն կենդանակերպ պատկեր մեծին Պետրոսի կայսերն առաջնոյ նստեալ 'ի վերայ աթոռոյ զգեցեալ զհանդերձս և զէն։ Անդ են և մեծամեծ գունդք և աշխարհացոյցք և գործիք նոցին։ Անդ են և գրեանք բազումք ամենայն ազգաց։ Անդ են և բազում տեսակք հրէշս։ Անդ են և բազում շէնք փայտեայ, ոսկրեայ և երկաթեայ, գրեալք 'ի զանազան ազգաց և թագաւորաց։ Անդ են և զանազան պատկերք կռոց սինէացւոց և չինացւոց։ Անդ են և զանազան հանդերձ զանազան ազգաց և վայրենի մարդկանց հանդերձ կերպարանօք նոցին։ Անդ են և զանազան ծաղկանց բոյսք, փայտք հողքոքպինք և այլք այսպիսիս հրաշս այսինքն ցուցանքաւոր մարմինս պէսպէս կենդանեաց. որպիսիք են 2 կուսկամրն, որ է բառ 'յունական այսինքն տեղի ցուցանքաւոր նիւթոց։

Յունիսի 20. գնացաք 'ի 'յակադէմին և տեսաք անդ զանազան պատկերս նկարեալս մարդկանց, անասնոց, գազանաց, սողնոց և թռչնոց և արու արձանս հողեղէնս նշանաւոր արանց և փիլիսոփայից. 'յորում գոյ վարժարան ընթերցման և համալսարան ամենայն արհեստից պատկերահանութեան, քանդակագործութեան, ժամացուցաշինութեան և այլ ամենից. 'յորում գոյ և տպագրութիւն և տեղիք աշակերտացն ընդ ամենայն բաժից իւրեանց այսինքն խահանցօք հացագործութեամբ և այլովք։ Ընծայեցին մեզ 2 պատկեր կայսերական և սուրբ Դէմիտրին Ռօստովսկոյ. և մեք ընծայողացն ետուք ԴՌ գիան. պարոն Յարութիւն Դաւիթօֆն էր ընդ մեզ։

Յունիսի 20. գնացաք ազնիւ Աղայ Յովհաննիսի հովանոցն և հանդիպեցաք վատաբախտութեան, զի ոտ մեր ճոմ անցաւ և անկաք 'յանկողին. 'յուլիսի 20-ին հազիւ առողջացեալ ելաք և գնացաք առ սրբազան Գաբրիէլ եպիսկոպոսն։

'յՕգոստոսի 26. ընդ Աղայ Յովհաննիսին գնացաք առ պայծառափայլ քնեազն և արձակումն խնդրեցաք գնալ 'ի վիճակն մեր. ետուք և զինդիր մի վասն Նախիջևանցոցն և խոստացաւ կատարել։

Սեպտեմբերի 1. գնացաք 'ի Պետրհով և Թ·անիբով. տեսաք զգեղեցիկ շատրուանսն և զանազան գեղեցիկ շէնսն և արձանս ամենայն տեսակ քարանց. մանաւանդ թէ գեղեցիկ պալատն Թ·անիբովու. ընդ մեզ էին պարոն Յարութիւն Դաւթեանն և Թիլֆիզեցի Տէր Ղազարեանց Շաքարօյի որդի պարոն Աղալօն, և Պապօյի որդի պարոն Նիկողոսն։

Սեպտեմբերի 11. գնացաք առ Պսկովսկու առաջնորդ և սինօթի գահակալ սրբազան Ինօքենդի արքեպիսկոպոսն. շատ մարդասիրութիւն եցոյց և խոստացաւ ապայն ես պահել, տալով մեզ միջնորդ սիրոյ փրկչին մեր. և շնորհեաց մէկ լաւ սաղմոս ռուսերէն. պարոն Փիլիպպոսն էր ընդ մեզ։

Սեպտեմբերի 15 օրն երեքշաբաթ ելաք 'ի Պետրբօլքու և բազում լալիւն եղև ժողովրդեանն մերոյ։

Սեպտեմբերի 19 եկաք 'ի Դերժօիլ քաղաքն վասն ոչ պատրաստ գոլոյն փոշտին

զբօսնուաք մերձ մանաստրին կուսանաց և մինչ ծանեան եպիսկոպոս գոլն մեր, ամենայն կուսանքն ե մայրապետն եկեալ առ մեզ խնդրեցին և տարան յեկեղեցին և 'ի խուցս իւրեանց. եկին բազմութիւն քաղաքին և յոյժ մարդասիրութիւն ցուցեալ առին զօրհնութիւն և յոյժ մեծարեցին զմեզ։

Սեպտեմբերի 20 եկաք 'ի Թուէր քաղաքն և 'ի քարոզից մերոց զմինն 'ի նշան սիրոյ առաքեցաք առ Արսէն եպիսկոպոսն նոցին, իսկ նա խնդրեալ էր մեզ ոչ գնալ մինչև ինքն 'ի պատարագէն ելցէ. ել և եկն առ մեզ և նստոյց 'ի կառքն իւր և ընդ ինքեան տարաւ 'ի մանաստիրն իւր 'ի ճաշ, ընդ մեզ էին ղալմուխ պարոն Պետրոսն, Թիֆլիզեցի պարոն Եսային և Աղայօն Տէր Ղազարեան. եցոյց մեզ բազում մարդասիրութիւն արժանի յիշատակի և կցեցաւ ընդ մեզ 'ի սէր, որում ետուք զխոստովանիմք և հաւատամքն մեր ռուսերէն և հայերէն, զոր եգիտ լցեալ ուղղափառութեամբ։

Սեպտեմբերի 22. հասաք 'ի Մոսկուա 'ի տան ազնիւ աղայ Յովակիմին իջևանեցաք մերայնովքն ամենեքումք։

Ենէրալ մայեօռ Նիկալօ Ֆեօդրովիչ Դաբասովին գնացաք ընդ աղայ Յովակիմին և ընդ Ներսէս Աղային, որոյ կինն մեռեալ էր և է ինքն գլաւնի մաքիստրաթեան պրէզինդէնտ. խոստացաւ մեզ սաղմոսի մեկնիչ տալ գրչեայ 1780 սեպտեմբերի 30։

Հոկտեմբերի 13. գնացաք 'ի տեսութիւն ֆրթմաշալ և նամէսնիկ քնեազ Դօրկօրուիլ Վասիլի Միխայէլիչին, որ կամէաք 'ի նոյն օրն ելանել 'ի Նախիջևան, իսկ նա վասն դոլոյն 'ի վաղեան օրն տօն ծննդեան Մարիա Ֆեօդօրոֆնին ոչ ետ մեզ թոյլ, այլ հրաւիրեաց զմեզ 'ի ճաշ. և վասն դոլոյն 'ի նոյն հրաւիրման օրն չորեքշաբաթ վասն մեր յատկապէս արծաթեայ ալֆիզով կերակուր հրամայեաց, պատրաստեալ էին անդ ամենայն հոգևորականքն և բոլոր նախարարքն, յոյժ պատուադրութիւն ցուցին մեզ բոլորքն և սրբազան եպիսկոպոսունքն։ Քնեազ Դօրկօրօֆն և քնեազ Ռէզնին, Նիկօլ... և գրաֆ Պանին և այլք. և 'ի վերայ սեղանոյն 'ի մէջ հրապարակին զմեզ յարգեցին վասն ախորժ տեսութեան և այլ բազում բանիւ մխիթարեցին։

Հոկտեմբերի 15 'ի Մոսկովու ելաք դէպ 'ի Նախիջևան և 17-ին հասաք 'ի Տուլ քաղաքն առ ազնիւ աղայ Մինասն ընկալեալ զմեզ եդ Ժ թուման ճանապարհին խարջի։ 22 եկաք 'ի Կուրսկ քաղաքն, նորին արքիմանդրիա Լաւրէնտին հրաւիրեալ տարաւ զմեզ 'ի վանքն իւր և պահեաց զմեզ 'ի ճաշ. բազում սէրս եցոյց թէ 'ի մէջ եկեղեցւոյն ի ժամ պատարագին և թէ 'ի տունս իւր. եդ ընդ մեզ և շաքար և այլ ինչ կերպիւ ըմպելի. և գրեաց գիր առ ֆրթմաշալ գրաֆ Ռումենցոֆն վասն մեր յանձնարարութիւն և այլ բանք։

Հոկտեմբերի 25. մտաք 'ի Խարքով քաղաքն և 'ի վաղուց հետէ ցանկացաք տեսանել զֆրթմաշալ գրաֆ Պետր Ալէքսանդրիչ Ռումէնցոֆն, որ զօրապետն էր ամենայն ռուստաց զօրացն. Եւ 'ի մեծ պատերազմին Օսմանցւոց արար զբազում յաղթութիւնս։ Թէպէտ յունիս և յուլիս յամսեանն մինչ դեռ մեք Պետրպօլք էաք եկեալ էր անդ, սակայն մեք յայնժամ վատաբախտութեան իմն հանդիպեալ, սակս ճում անցանելոյն ոտից մերոյ 'ի յանկողինս կայաք, որ մինչև յաւուրս քառասուն ոչ կարաց ելանել 'ի դուրս և կամ կանգնիլ 'ի յոտին. այսմ պատճառաց ոչ կարացաք տեսանել զնա և զկայսրն հռոմայեցւոց, որ եկեալն էր յայնժամ 'ի տեսութիւն ռուստաց երկրիս. ապա եկեալ մեր 'ի Խարքով քաղաքն, որ նամէսնիկութիւն նորա էր այսինքն տեղեկալութիւն, գնացաք 'ի տեսութիւն նորին. ընկալաւ զմեզ յարգանօք և պատուեաց յատկագոյն պատուօք. և ծանոյց մեզ և իւրն ցանկութիւն առ տեսութիւնն մեր թէ 'ի բազմաց լուեալ էի զքէն զգովութիւնս և ըղձայի տեսանել զքեզ. երկու գուսար ետ մեզ սպասաւորել 'ի ճանապարհս մեր. և ճանապարհի թօշակ ետ մեզ սալիւ միով. ողջ ոչխար, բազում կենդանի հաւք, բադք և օրդակք և մսրահաւք, և չորացեալ ապուխտ միսք, ըմպելիք և հաց և այլ բազում ինչ. յիրաւի որպէս լուեալ էաք, նոյնպէս և տեսաք։

Նոյեմբերի 2 եկաք 'ի հողն Նախիջևանայ և մտաք 'ի գիւղն, որ կոչի Նեսվիտայ, ուր ընդ յառաջ ելին մեզ բոլոր գիւղացիքն լալով և կոծով անկանէին առաջի մեր և ճիչս բարձեալ աղաղակաւ պատմէին զաղետս տա-

ռապանաց և աղքատութեան իւրեանց, որ և մորմոքէին զաղիս մեր։ Անտի եկաք 'ի միւս գիւղ որ կոչի Սալայ նմանապէս ե նոքա զնոյնս առնէին, անտի եկաք 'ի հովանոցն Մարտիրոս Աղայի, որ 10 վերսիւ հեռի էր 'ի քաղաքէն Նախիջևանայ, որոյ շինուածքն առեալ էր ե քանի սամր անդ բնակէր վասն ոչ գոլոյն տուն պատրաստ և բաւական 'ի քաղաքոջն. մնաց անդ մինչև յամսոյս 3 վասն պատրաստելոյն զհոգևոր հանդէսն. և յաւուրն չորրորդի պատկեր աւուրն չորեքշաբաթին և օրն յոյժ գեղեցիկ և լուսաւոր. ելեալ անտի յեզր քաղաքին վրան էին պատրաստեալ և ամենայն հոգևորական զարդիւքն անդ պատրաստեալ։ Եկին ամենայն մեծամեծքն ռուսաց և մեր բոլոր ժողովուրդքն և կամէնդաթն Սիմէօն Գրիգորիչ Գուրիօվն. զգեստաւորեցաք անդ բոլոր քահանայիւքն, ամպ հովանիւ և ամենայն հոգևոր պատրաստութեամբ մտաք 'ի բերդն և անդ թափօր արարեալ և անտի 'ի փոքր եկեղեցին բերդի մտաք ամենայն բազմութեամբն և յետ վճարման երգոյն եղաք բնաբան զբանն Քրիստոսի թէ՝ այժմ տրտմութիւն ունիք և տրտմութիւնն ձեր յուրախութիւն է փոխելոց։ Անդ էր տեսանել լալիւն, դոռիւն և գոչումն ծերոց և տղայոց և ամենայն հասակի, մորմոքէին վասն ամենայն նեղութեանցն ե անկանէին առ ոտս մեր. մխիթարէաք զամենեսեան և հաստատէաք զյոյսն նոցին. և առնէաք 'ի մէջ եկեղեցւոյն զբազում խնդրուածս վասն թագաւորին. և անտի ելեալ գնացաք 'ի տուն պարոն կամենդաթին վասն խնդրոյ նորա 'ի ճաշել զչալի. և անտի եկաք 'ի պատրաստեալ բնակութիւնն մեր։ Ամենայն հանդէսն մտանելոյն մերոյ 'ի նորաշէն քաղաքս 'ի Սանկթպետըրբուրխ և 'ի Մոսկով 'ի կազէթի տպեալ էին 'ի 1781 ամին և յունվարի 11։

Դեկտեմբերի 13· գնացաք 'ի չէրքէզ քիրման առ. դօնցկօյի յենարալ Ալէքսէի Իւանիչ Եալաւովսկին, որ ինքն ևս հրաւիրեալ էր և իջաք հօռօմ. Եագօր Վասիլիչ Մերջանովի տունն ընդ կապիտան պարոն Յովհաննիսին և ճաշեցաք 'ի տան յենարալին. յարգելով զմեզ զմասնաւոր խնդիրս մեր վասն հասարակութեանն Նախիջևանայ յանձն էառ կատարել. և հրաւիրեաց զմեզ գնալ 'ի սոբօռն իւրեանց, որ յոյժ զարդարեալ էր ոսկով և արծաթով, մարգարտօք և քարեղինօք և ամենայն զգեստիւք։

Յամի Տեառն 1781 և յունվարի 6 մեծաւ հանդիսիւ 'ի բերթէն Ռոստովու գնացաք 'ի Դօնի գետն և անդ կատարեցաք զկարգըն Ջրօրհնեաց։

Յամի Տեառն 1781 և յունվարի 13. ելեալ 'ի Նախիջեանայ գնացաք. 'ի Կատերինեսլաւ առ պարոն գուբէրնաթն Վասիլ Ալէքսէիչ Չերթքօվն. կարի պատուով ընկալաւ զմեզ, և զպէսպէս խնդիրս մեր վասն ժողովրդեանն կատարել խոստացաւ և զանկարելիսն գրեաց քնեազին. և զմեզ հրաւիրեաց ժամ առնել. արարաք։ Եւ աւուրս 14 պատուեաց զմեզ ամենայն մեծամեծօքն ռուսաց։ Մէկ կապուտ եաղուտ մեծ մատանի շնորհեցաք նմա, որ արժէր Ի՝ պօլ։

Փետրվարի 7 դարձաք 'ի Կատերինեսլաւու. ընկալաք զբազում թուղթս 'ի սուրբ Աթոռոյն. զմահն սուրբ հօրն իմոյ և տեառն Սիմէօն դերերջանիկ կաթուղիկոսին և 'ի բարեկենդանին մեծ տրտմութիւն եղև մեզ և ամենայն ժողովրդեանն։

Յապրիլի 4. 'ի Նախիջևան յաւուր սուրբ զատկին եկեղեցի մի փայտեղէն շինեալ էաք և օծաք յանուն սուրբ Աստուածածնին, որով փոքր ինչ մխիթարեալք եղեն ժողովուրդքն. յայսմ ամի կարի երկար և սաստիկ եղև ձըմեռն. վասն որոյ մեռան բազում անասունք՝ եզինք, կովք, ոչխարք և ձիք և բազումք 'ի մերայնոցն հասին յետին աղքատութեան. և աշնան ցանքն իսպառ ոչնչացաւ 'ի ցրտոյն։

Յապրիլի 21 'ի տօնի կայսերական մեծութեանն, Աստուածայինն պատարագ մատուցաք 'ի սուրբ Աստուածածին եկեղեցւոջն. բաշխեցաք զորբալոյս մեռոնն բազում օրհնութեամբ և օծաք զչորեսին քարինս հիմանց Նախիջևանայ քաղաքիս, յանուն չորից սրբոց Աւետարանչացն. և ամենայն զգեստուք ելեալ 'ի յեկեղեցւոյն կատարեցաք զտօն թագաւորին և ընթերցաք զկոնդակ լուսաւորեալ հոգի սուրբ հայրապետին Սիմէօնի տեառն իմոյ և ծնողի, որ գրեալ էր 'ի շնորհաւորութիւն քաղաքիս։ Եւ ամենայն բազմութեամբ շրջապատեալ զքաղաքաւս խաչիւք և աւետարանօք և սրբոց մասամբ յորդաբուխ արտասուօք և բերկրալից ցնծութեամբ օրհնե-

ցաք զչորս կողմն քաղաքիս և եղաք զհիմունս սորին 'ի չորս կողմն քաղաքիս այսորիկ, որ եղե ամենայն սրտից մխիթարութիւն և ցնծութիւն։

Մայիսի 1. ժամ արարաք և օծաք զերկու եկեղեցւոյ քարինս հիմանց սուրբ Համբարձմանն և սուրբ Նիկողոսին և մեծափառ հանդիսիւ և ժողովրդովք մերովք և ռուստաց տարեալ 'ի յԱստուածածին եկեղեցւոյն, եդաք 'ի նշանեալ տեղիսն սրբոյն Նիկողոսի։ Եւ 'ի մայիսի 7 նոյն հանդիսիւն եդաք զհիմունս սուրբ Համբարձում եկեղեցւոյն։

'Ի սոյն թուոջս և 'ի յունվարի 6. մեր մեծափառ մուտն 'ի քաղաքս Նախիջևան, 'ի Պետրբօլք և 'ի Մոսկով կազէթ էին արարեալ։

Ցամի Տեառն 1780 դեկտեմբերի 2. վասն մերոյ ռոճիկին կայսերական մեծութեան հրամանաւն քնեազն ձեռք էր եղեալ տալ մեզ վաթսուն թուման յամենայն ամի։

Ցամի Տեառն 1781 ե 'ի մայիսի 9 'ի վեց երրորդ կիւրակէին հաստատեցաք զհոգևոր դատարանն և զսահմանեալ կանոնս մեր 'ի սուրբ գրոց ընթերցաք 'ի սուրբ Աստուածածին եկեղեցւոջն 'ի յունկս ամենից քահանայից, դատաւորաց, իշխանաց և ամենայն հասարակաց, որք և ընկալան խնդութեամբ և 'ի ձայն ցնծութեան փառաւորեցին զԱստուած և զսուրբ Աթոռն Էջմիածին. և կարգեցաք դատաւորք զՍիմէոն վարդապետն և զտէր Յովհաննէսն և զտէր Ղազարն։ 'Ի նմին աւուր եղե բազում լալիւն 'ի մէջ եկեղեցւոջն։

'Ի մայիսի 28 ելաք 'ի Նախիջևանայ և եկաք 'ի Կատերինէսլաւ. ժողովրդեանն եղե բազում լալիւն և գոչումն։ Եւ 'ի Կատերինէսլաւ 'ի յունիսի 6 երրորդ կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն արկաք զհիմն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն մեծաւ ցնծութեամբ և փառօք. և 'ի նմին տեղւոջ արկաք զվրան և մատուցաք զպատարագ և ձեռնադրեցաք զՄարտիրոսն 'ի քահանայ։ — գուբէռնաթն. Վասիլ Ալէքսէիչ գուբէռնաթն և ամենայն մեծամեծքն ռուստաց։ Եւ սըր — ենարալ Մայեօռ Նիկօլ Ալէքսէիչն, որոյ սէրն յոյժ կցեցաւ ընդ մեզ, մինչ զի լալով բաժանեցաւ, որոյ և որդին էր մայեօռ անունն... Նիկօլիչ մի քան զմի լաւ գրաֆք։

Յունիսի 12 ելեալ 'ի Կատերինեսլաւու դէպ 'ի Մոսկով. և 'ի ճանապարհին հանդիպեցաք 'ի Բօլթաւ քաղաքն առ արքեպիսկոպոսն Նիկիփօռի, որ էր առաջնորդ Խերսոնու և Նոր ռուստաց իջաք 'ի վանսն. պահեաց զմեզ երկու օր և եցոյց զբազմադիմի մարդասիրութիւնս։ Եւ անտի գնացաք առ գրաֆ Պեար Ալէքսանդր Ռոմանցով Փրթմաշովն 'ի գիւղըն իւր Վինշիկայ, որում եղե ուրախութիւն յոյժ. իջոյց զմեզ 'ի վրանի գեղեցկագունի. զոր 'ի յօսմանցւոցն էր գերեալ. պահեաց զմեզ չորս օր և յամենայն աւուր առաւօտ և երեկոյի առ մեզ գայր և զմեզ առեալ տանէր առ ինքն 'ի ճաշել. և շրջեցոյց զմեզ յամենայն ուրեք մեծագոյն պատուով. զգովեստն մեր եպիսկոպոսական ետես և հաւանեցաւ. և յետ բազում մարդասիրական պատուոյն կամեցաւ առաքել զմեզ 'ի Քիով քաղաքն, յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց, որք են հիմն հաւատոյ ռուսաց բոլոր երկրին, զի նախապէս անտի են հաւատացեալ 'ի Քրիստոս փրկիչն մեր։ Եւ մեք ըստ բանի նորա յանձն առաք գնալ և տեսանել զսուրբ վայրսն։ Դրեաց գիր յանձնարարական առ սրբազան Գաբրիէլ մետրապօլիթն ծերունի, առ արքիմանդրիտն Զոսիմէ և առ կամենդաթն Իվան Ստեփանիչ Զուկիսոֆն ընկալնուլ զմեզ և պատիւ ցուցանել։

Յունիսի 24 օրն հինգշաբաթ մտաք 'ի Քիով. իջաք 'ի տան վերոյ կամէնթաթին մերձ 'ի Պէչէրսկ վանքն յորում արքիմանդրիան Զոսիմէ նստէր. իմացեալ սոյնոյ արքիմանդրիտիս իսկոյն եկն առ մեզ 'ի տեսութիւն քանի աբեղայիւք. և զմեզ առեալ տարաւ առ ինքն 'ի վանքն Պէչէրսկի սուրբ Աստուածածին կոչեցեալ և շրջեցոյց 'ի յեկեղեցին և 'ի զգեստատունն։ Եկեղեցիքն էին յոյժ գեղեցիկք բոլոր նկարեալ պատկերօք՝ տնօրինականօք 'ի ներքին յորմէն սկսեալ մինչև ցմիջակէտ կաթողիկէին, ոսկետուփ խաչկալիւք և արծաթեայ սեղանօք. և սեղանն զարդարեալ մեծամեծ ոսկեայ և արծաթեայ խաչիւք և պատկերօք և 'ի նմին եկեղեցւոջն գոյր բազում անօթ ոսկեղէն սկիհք քանդակագործ մարգարտեայ և ականակուռ սաղավարտք խաչիւք. պնակէք և խաչք պարանոցի բազում. բոլորն ոսկի և ականակուռ,

շուրջառք գեղեցիկք և մարգարտեայք յելուզեալք պատուականօք։ Ցետ տեսութեան զգեստուցն տարան զմեզ 'ի Պէչէրսկի, այսինքն 'ի ներքոյ գետնոյ շինեցեալ երկար շէնսն. որ է 'ի ներքոյ վանիցն, յորում են ամենայն սուրբքն իւրեանց և նախնի հարքն և 'ի Քրիստոս ծնողքն. 'ի մէջ դագաղի եդեալ առողջ իւրեանց հանդերձիւքն և զգեստիւք, թէ եպիսկոպոս, թէ վարդապետ և թէ այլ աստիճանաւոր. թուով մինչ 66. որք առողջք են և անապական և զարմանալի տեսողացս 'Ի նմին գետնափորի գոն և երեք եկեղեցիք, ուր զԱստուածայինն մատուցանեն պատարագ. և անտի 'ի տպագրատունն տարան և յայլ ուրեք։ Եկեղեցեաց շէնքն և մանաւանդ մուտն վանիցն էր գեղեցիկ. ընդ սրբազան արքիմանդրիտին Զոսիմէի և ընդ հասարակ միաբանիցն բազմեցաք և 'ի սեղան 'ի ճաշել հասարակութեամբ. յետ սաղմոսելոյն զմեզ հրաւիրեցին 'ի յօրհնել, սկիզբն և վերջն. և մի ոմն 'ի յամբիոնի ընթեռնոյր զճառ ինչ։ Արծաթեայ գեղեցկաշէն և յոյժ մեծ ըմպանակ ինչ գոյր 'ի մէջ սեղանոյն լի ջրով. յետ հացին ամենեքեան մասնաւորեցան 'ի նմանէ։ Եւ 'ի մէջ եկեղեցւոյն 'ի վերայ սեղանոյն աթոռ դնէին միշտ, որ 'ի ժամ նստման նստցուք. բազմադիմի ցուցեալ մեզ զմարդասիրութիւն երանելի արքիմանդրիտն. չորս անգամ ընդ նմա ճաշեցաք և շնորհեաց մեզ զռուսերէն բազում գրեանս, և զբազում թուղթս ճանապարհի ուտելեաց և ըմպելեաց և հանապազօր վեց ձիօք կառէթն 'ի դրան մեր կայր, ընդ ուրումն երամանաւ՝ այսինքն կրօնաւոր քահանայի, որոյ անունն կոչիւր Ղիօրղի կամ Գիօրկի, զոր մեզ վերակացու էին կարգեալ։ Երկու անգամ և սրբազան Գաբրիէլ մետրապօլիթն հրաւիրեաց 'ի ճաշ 'ի վանս սրբոյն Սօֆիանայի. և նա բազմադիմի պատիւս և սէրս եցոյց մեզ. և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր. որ զԴանձ Արամեանն ունելով 'ի ձեռին, գովէր 'ի մէջ հրապարակին. յորում էին հոգեորականքն և երևելի աշխարհականք թէ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է հայոց հաւատն. և այլ այսպիսի բանս համարձակօրէն. և սա ընկալեալ զմեզ 'ի սեղանն սուրբ, և յետ արձակման սուրբ պատարագին զնշխարս տային մեզ և զգինի։ Եւ յելանելն մեր 'ի յեկեղեցւոյն խառնիճաղանճ ամբոխն անկեալ 'ի վերայ մեր, ամենքեան աջ առեալ զօրհնութիւն խնդրէին։ Օր մի ևս առ կամենդաթն ճաշեցաք. եղաք մեք անդ աւուրս եօթն և շրջեցաք ընդ նմա յամենայն վանորայսն. 'ի բըրաթսկի մանաստէրն, յորում էր դպրոցն մեծաշէն, որոյ արքիմանդրիտ և վարժապետ էր Կասիան 'ի Պետրովսկի մանաստիրին, յորում էր կառավարիչ Երոնիա իգումէնն 'ի Միխայիլօվսկի մանաստիրն, յորում գոյր սուրբ Վարվառեայ կուսի բոլոր մարմինն 'ի միջակիտին 'ի մէջ դագաղի եդեալ և 'ի վերայ նորա ոսկետուփ խորան կանգնեալ չորիւք սեամբ, զորոյ ձեռանէն խաչալուայ արարաք մեք մերով ձեռամբ և քսեցաք 'ի յաչս մեր և ամենայն բազմութեանն, որ անդ. որոյ արքիմանդրիտ է Տարասեայ։ 'Ի Վզուպովսկի մանաստիրն, որոյ դրութիւնն է յոյժ գեղեցիկ 'ի վերայ ձորոյ, արքիմանդրիտն Նորին Մելքիսէթ, որ տեղապահ է մետրապօլտին Նիկօլսկի մանաստիրն. և կանանց երկու անապատսն և յայլ ուրէք։ Յունիսի 30 ելաք անտի կամէնդաթի նաւակն պատրաստի կայր 'ի վերայ գետոյն մեծի. ընդ մեզ ուղղևորել եկին մեր վերակացու Եղօրի իգումէն, պլաց մայեօռ Իւան Ֆեաօրիչն և յունաց Նիկոդիմոս արքեպիսկոպոսն, որ բնակէր 'ի Վզուպովսկի մանաստիրն, որում շնորհեցաք արծաթագլուխ զօնար գօտի. և Սուէրսկու Կիւրեղ եպիսկոպոսն, որ բնակէր 'ի Միխայլովսկի մանաստիրն շնորհեաց մեզ մէկ ջուխտ սրմայակար թ անոց ժամարարի։

Սոփիայի քարոզչի անունն է Սամփսոն և Պէչէրսկու տպագրատան վերակացուի անունն է Ֆէօփան. և Պէչէրսկի նամեսնիկի անունն է....։ 'Ի Քիովու դարձեալ գնացաք առ գրաֆ Ռումանցովն և զշնորհակալութիւնս մեր մատուցաք նմա և անտի դարձաք 'ի Մոսկով յուլիսի 12։

Թւին 1781 և սեպտեմբերի 9 պատրաստեալ ամենայն զարդարանքն 'ի Մոսկով կառուցեալ եկեղեցւոյն մերոյ 'ի մերոց ազնուականացն Եղիազար ազնիւ աղային և օրհնեալ զաւակաց իւրոց գերազնիւ աղայ Յովհաննիսին, ազնիւ աղայ մինասին, և ազնիւ աղայ Յովակիմին, որոյ և հոգաբարձութեամբն եղև կառուցեալ, ապեալ գրով հրաւիրեցին զբա-

զում իշխանս և զնամեստնիկն Մոսկովու քնեազ Վասիլ Միխայելիչ Դօլգօրուկն. քահանայք ռուսաց. պատրիք լատինացւոց և փաստօռք լօթրանաց. զգեստաւորեալ մեր 'ի յատեան եկեղեցւոյն հանդերձ քահանայիւք, կատարեցաք զկարգն և օծաք զեկեղեցին մեծափառ հանդիսիւ. ասացաք և քարոզ 'ի լեզուս մեր. զոր պատրաստեալ ունէաք։

Եւ 'ի սոյն ամսոյ ԺԱ. ին օծաք զաւազանն նոյն հանդիսիւն և 'ի սուրբ խաչ կիւրակէն յանդաստան ելաք շուրջ զեկեղեցեաւն. կատարեալ զամենայն պարտաւորութիւն մեր կամ եղև մեզ թէպէտ գնալ 'ի Հաշտարխան, բայց յաղագս ողորմելութեան Նախիջևանայ ժողովրդեանն, դարձեալ գնացաք 'ի Պետրպօլք առ պայծառափայլ քնեազն թերևս անգամ մի զվճիռ ընկալցուք բանից նոցին. մտաք 'ի Պետրպօլք նոյեմբերի Գ. գնացաք առ քնեազն ե ծանուցաք զամենայն ողորմելութիւն նոցա ե զբարեկարգելն մեր զքաղաքն. շնորհակալեցաւ 'ի ժամուն այնմիկ. և անտի գնացաք առ սրբազան եպիսկոպոսունս։ Եկին առ մեզ և 'ե Նախիջևանայ արք երկու զատաւոր կապիտան պարոն Յովհաննէսն Աբրահամեան, որ զարդարողն և վաստակաւորն էր Նախիջևանայ և խնամատարն նորին որբոցն և այրեացն և դերութաթ և պօռօճիկ մահտեսի պարոն Կարապետն Տէր-Ոսկանեան յաղագս քաղաքի հարկաւորութեանցն յանձնարարական գրով Ազովու գուբեռնաթին և նախախայծ արհեստիւն Նախիջևանու. զոր բերեալ էին ընդ ինքեանս վասն ընծայից։ Թալաթքն մօրթի սրմաբան արհեստ և զար եաղլուխք ընծայեցին քնեազին. գոհութեամբ ընկալաւ։

1782. Յետ այսորիկ տեսաք թէ յամեցումն լինէր բանիցն մերոց և վիճակի մերոյ բողոքն օրըստօրէ տառապեցուցանեն զմեզ դառնալ և մանաւանդ յափշտակութիւն Մոզդոկու սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն մերոյ, որ չարաճճիկ Գորգի ումն կամեցեալ էր ռուսանալ և զեկեղեցին զայն ես դարձուցանել, որոյ աղագաւ եպիսկոպոսն ռուսաց ե դուբեռնաթն վճիռ էին հաստատեալ հրամանաւ սինօթին ընկալնուլ. իսկ Մոզդոկու ժողովուրդքն ոչ էին տուեալ առանց մեզ. այլ ե զգիրս իւրեանց գրեալ էին մեզ։ Մեք գրեցաք Հաշտարխանու գուբեռնաթին, մինչ ոչ ինչ օգտեցաք 'ի նմանէ բողոք մեր արկաք առ սրբազնասուրբ սինօթի գահակալ Պետրպօլքու արքեպիսկոպոս Գաբրիէլն, նա յուսադրեալ մեզ, խօսեալ ընդ գահակցացն իւրոց. ե ընդ պայծառափայլ քնեազին մխիթարեալ յուսադրեալ մեզ, և առաքեալ առ քնեազն. քնեազն որպէս հարկն էր գրեաց սաստ և յանդիմանութիւն Հաշտարխանու գուբեռնաթին և եպիսկոպոսին 'ի բաց թողուլ զեկեղեցին մեր և մի՛ նեղել զմեզ, որ ընդդէմ է կայսերական մեծութեանն գթութեանն. զոր առեալ 'ի մարտի 3 ելեալ անտի եկաք 'ի Մոսկով. և զկնի երկուց աւուրց դիմեցաք 'ի Հաշտարխան բազում տառապանօք յաղագս սաստկութեան ճանապարհական ցրտութեան և ցխին, մինչ զի 'ի զատկին 'ի յանապատեան տեղիս մնացաք. և յապրիլի Գ հազիւ հասաք 'ի Հաշտարխան. ընդ առաջ ելին մեզ ամենայն բազմութիւն քաղաքին. ե 'ի տեսութիւն մեզ եկին պարոն գուբեռնաթն Ժուկով. և սրբազան եպիսկոպոսն Անտօնիէ և այլ մեծամեծքն։ Զգեստաւորեալ յԱստուածածին եկեղեցին գնացաք 'ի սուրբ Պետրոս և Պօղոս եկեղեցին մեր և անդ կատարեցաք զԱստուածային պատարագն։ Եւ յաւուրն երկրորդի մատուցաք պայծառափայլ քնեազի օրգն նախարարին և եպիսկոպոսին, որ յաղագս Մոզդոկու եկեղեցւոյն, և նոցա ընկալեալ հրաման գրեցին առ նոսա և առ մեզ. միամտութիւն որ եկեղեցին մնասցէ 'ի ձեռս մեր։ Յետ այսորիկ գոգոիչ Գօրկին և ընկերքն զղջացեալ 'ի յանկատար արարմանց իւրեանց, գիր մեղայական դրեցին մեզ և մեք ընկալաք զնոսա 'ի հաղորդութիւն եկեղեցւոյ։

Յայսմ թուոջ քանդել ետուք զկաթուղիկէն սուրբ Պետրոս և Պօղոս եկեղեցւոյն Հաշտարխանու, որ կարի ցած էր ե տգեղ տեսողաց. և նորապէս ճարտարապետական արհեստիւ և բարձրաբերձ շինուածովք և ԻԴ լուսամտօք, նորապէս շինել ետուք և բաւական ծախս արարաք, որ այժմ ամենայն տեսողաց է ցանկալի, յաղագս յարմար շինութեանն ե ներսային խորհրդաւոր նկարմանցն։

'Ի սոյն թուոջս ե 'ի սեպտեմբերի 15 մեծափառ հանդիսիւ օծաք 'ի Հաշտարխան կառուցեալ քարաշէն եկեղեցին յանուն սուրբ

կուսին Կատարինէ, զոր վասն հոգւոցննջեցելոց իւրոց շինեալ էր պօլկոմնիցայ Դարեջան Ղուզանովն։ Մեծ հանդիսիւ և զգեստաւորեալ գնացաք ամենայն բազմութեամբ ժողովրդեանն ընդ որս էին նախարարն և ամենայն իշխանքն ռուսաց։

'Ի սոյն թուոջս և 'ի հոկտեմբերի 23 զսահմանեալ օրինագրութիւնս մեր ընթերցաք 'ի սուրբ Աստուածածին եկեղեցին և հաստատեցաք զհոգևոր դատարանս. կարգեցաք յոջորդ և կառավարիչ դատարանին զընիկ սպասաւորն իմ Վարդան արժանապատիւ վարդապետն, և դատաւորք աստապատցի Տէր Յակոբն, Տէր Եղիազարն և օրհնածին որդին իմ զտէր Մինասն։ Կարգեցաք գործ կալ և զգերապատիւ պարոն Մկրտում Գալստեան Ջուղայեցի։

Գ. Սաւաս ինոստրանն կոլէգէն առաքեցեալ ռեսկրիպտին ի Կոստանդնուպոլիս առ Ստաթսկի սովէթնիկ Ստախիեվն, յունվարի 11 յամի, 1781·

Ըստ պատահման պատճառի յամին 1768, առաքեցեալ առ գուսս Մեր յԱրարատեան լերինս բնակեալ Հայոց Պատրիարք Սիմէօնէն. յատկապէս զվարդապետ ոմն հանդերձ խնդրանօք վասն շնորհելոյ նմա հասարակաբար ընդ ամենայն ազգսն Հայոց զԿայսերական նամակ շնորհաբաշխական (ղռամատի) վասն պահպանելոյ զայն ի Աթոռանիստ յեկեղեցւոջ իւրում ի տեղի արժանապատիւ յիշատակի վասն ապագայ ցեղին Կայսերութեան Մերոյ ողորմութեան առ ազգն Հայոց և իջեալ Մեր առ յայնպիսի խնդիր սոյն Հայոց քահանայապետին, հրամայեցաք ի նոյն ժամանակին զի ի կօլլեգէն ինոստրանիխ դել (դատաստանատուն այլասեռ ազգաց գործոց) տալ նմա զխընդրեցեալ նամակ շնորհաբաշխական առ յոր դոյր համանմանութիւն և օրինակ ի ժամանակսն Թագաւորութեանց աբժանաւորացն փառաց նախնեացն Մերոց Տեառն Պետրոսի առաջներորդ Կայսեր և Թագուհի Եկատարինա առաջներորդ Կայսրուհւոյն։

Եւ ըստ հրամանի Մերում տուեցեալ այնպիսի նամակ շնորհաբաշխական ընդհանրական բացատրութեամբք յորում պարփակի բարձրագունեղ բարեհաճութիւնն Մեր առ նա և առ ամենայն ժողովուրդս նորա և ի նմին յատկացուցեալ կանօնադրութիւնքն ի միոյ կողմանէ վասն բաւականութեան խնդրանացն պատրիարքին և ի միւսում կողմանէ վասն անդառնալի հարկաւոր դասակարգութեան և բարեկարգութեան, կառավարութիւնն և ըստ հայոց եկեղեցական աւանդութիւն և պաշտօնն Աստուածային ի կայսերական յերկրի Մերում բնակեալքն Հայոց դաւանութեամբ կայցեն և մնասցեն ըստ հոգևորականի արարողութեամբք և եկեղեցական կարգադրութեամբքն այնոքիւք ենգ վերատեսչութեան նոյն Պատրիարքին, նաև հոգևորական ամենայն անուամբք անձինս առաքեցեալ լինիցին ի նմանէ հանգերձ վկայական գրով զի առանց գրոյ նորին նոքա ընգունեցեալք ոչ կարեն լինել։

Դարձեալ ի միջոցի յայնմիկ ի տէրութեանս մերում գոյ այնպիսի պատկանաւոր կախումն ի պատրիարգէն հայոց զհոգևորական կառավարութիւնսն զոր ինչ վայել է առ հայոց օրէնքն նորապէս այլեւս նոյնն հաստատելով տուեցելոյն ի Մէնջ նոյեմբերի 11 երրորդին յամի 1779, Ամենաողորմածաբար Պրվելէդ (յատկօրինական գիր) ի Ղրիմու եղելոցն հայոց և ի Ազովու դաւառոջ բնակողացն։

Այլ որպէս ի ժամանակի առաքման շնորհեցեալ շնորհաբաշխական նամակին առ Պատրիարգն Հայոց, ընդ նմին և Ինոստրաննի Կօլեկէն Մերմէ պատշաճաւոր նախածտնուցումն ի Աստրախան ի Ղզլար և ի Կիեվ գրով առաքեցեալ է յաղագս ոչ թոյլ տալոյ ի սահմանական տեղեացն մտանել աստ հայոց կարգաւորք թարց գրոյ վկայութեան պատրիարգին. համեմատ պատրիարգին տուեցեալ այնքան հանդիսաբար յուսադրութեանցն։ Աստ ի Աթոռանիստ քաղաքոջ Մերում յառաջ քան զժամանակս ինչ եղեալ, եկեալն ի Աստրախանայ հայոց Արքեպիսկոպոսն Յովսէփ, իւր տուեալ խրնդրանաց գրովն ի ինոստրաննի Կոլլէգն մեր, անուամբ և հրամանաւ Պատրիարգին իւրոյ նորուսմս մատոյց զխնդիր, յաղագս հանգու-

նաբար արգելման հրամանի որպէս զի թարց պատրիարգական գրոյ վկայութեան զկարգաւորս հայոց ի տէրութիւնս Մեր զոչ ընդունելն. նախս զայլ միոք սահմանական տեղիսն հրամանաւ հանրատարած առնել, և զօրութեամբ Մերոյ շնորհեցեալ Պատրիարգին շնորհարաշխական նամակին ցուցանելոյ զողորմութեանց և Մերոյ Կայսերական առ նա բարեհաճութեան և խնամակալութեան խնդրեաց նոյն եպիսկոպոսն և զայս զի յանձնեցեալ լինիցին առաքեցեալքն ի հայոց Պատրիարգէն զառաջնորդսն հոգևոր անձանց ի ձեզ որպէս իշխանի Մեր..., և ի գուռն Օսմանցւոց նախարարի. որպէս զի ի կողմանէ ձերմէ ցուցանիցես օգնութիւն և պահպանութիւն այդր ի աթոռանիստ քաղաքիդ Թուրքաց յամենայն պատահմունս վասն նոցին հարկաւորութեան պատկանեալ։

Մեք ամենաողորմածարար քաղցրութեամբ հաճիմք առ սոյն Պատրիարքն հայոց նկատել երկարանալոյ խոնարհութեան նորա առ Կայսերական աթոռս Մեր, նոյնպէս և ոչ սակաւ առ ամենայն ազգ հայոց յաղագս քրիստոնէական հաւատոյ նոցին. այլև զի բազումք ի նոցանէ կատարելապէս բնակին ի Տէրութեան Մերում և մշտնջենական հպատակութեան Մերոյ, ցուցանելոյ գործս Կայսերական Մերոյ բարեհաճութեան և խնամածութեան, առ ընդ այն յարմարեալ ամենայն ողպխութեամբք. ըստ որում այսու կամեցաք տալ ձեզ ի գիտել. ոչ միայն վասն Հայոց Պատրիարքին ստացեալ ի վաղուց զնամակ շնորհարաշխական Կայսերական և ըստ այնու աբարեցելոց արգելմանց կարգաւորաց առ զոմանս տեղիս սահմանականս. այժմ նորապէս և ի յայլ տարածեալ տեղիսն այսինքն Ազովու և Նովօրոսիսկու գաւառսն ևս նոյնպիսի արգելումն ըստ նորութեան ներկայական էութեանց և ողպխութեանց իւրեանց առնիցեն. յաղագս որոյ ի հանդիպման այնպիսի պատահմանց և դուք ոչ պակաս օրինակս պարտիք ունիլ և առնել. քանզի առ յայնս են համահաւասարապէս բարձրագունեղ կամեցողութիւն Մեր. որպէս զի ուր և յորժամ և իցէ նախ յիշեցեալ սպասաւորութեան մերում կամ միջնորդութեամբ վաճառականութեան գործոց կատարեալ հպատակք մեր և ի Ցունացն ընդ Մեզ ուղղափառութեամբ եկեղեցւոց միութեամբ զոլոյն. որք պատահիցեն ենթ լծոյ թշնամանական տառապանացն Թուրքաց. և վերջապէս յորժամ լինիցի առ յայնս պարտաւոր մեղադրութեան յայնպիսի պատահմանն ըստ կանոնի և վարուց շարժողութեան՝ ի վերայ ձեր եդելոյ. ուրեմն ի յայնպիսի պատահմունս գործածիցես դու զբարեկարգ հետևողութիւնս ձեր վասն արդիւնաւորութեան առաքեցելոց հաւատարմացն ի Պատրիարգէն հայոց առ տեղի բնակութեան ձերոյ որպէս ընդ ժողովուրդս քրիստոնէական հաւատոյ և ցուցանիցես նոցա զքաղցրութիւն և ամենայն պատշաճաւոր և համեմատ այսու նշանակութեան օգնականութիւն...

Գ. Սաւաս ինօսրանցի կոլէգէն առաքեցեալ գրոյն առ Նորին Պայծառափայլութիւն քնեազ Գրիգորի Ալէքսանդրովիչ Պոտեմկինն յունվարի 11 յամի 1781.

Ըստ բարձրագունեղի իւրոհւոյ Կայսերական Մեծութեան կամեցողութեան, և ըստ խնդրոյ Արարատեան լերինս ընակօզի հայոց Պատրիարգին, տուեալ է նմա, 1768 ամին շնորհարաշխական նամակ Կայսերական. յորում հասարակաբար պարզաբանի յաղագս Բարձրագունեղի Կայսերական ողորմութեան առ սոյն Սրբազնագոյնն և առ ամենայն ազգս հայոց յատկապէս ի դիրս նորին նորածեալ բացայայտեցեալ է և զայն որքան է վասն բաւարարութեան կամեցողութեան նորա, այնքան ևս վասն անդառնալի հարկաւորական բարեկարգութեան Աստուածային պաշտամանց արարողութեանց, զորս ի տէրութեան վասն եղելոց աստ քրիստոնէից հայոց դաւանութեամբ. որպէս զի նոքա կայցեն և մնասցեն ըստ հոգևորականի արարողութեամբ և եկեղեցական աւանդութեամբ ենթ վերատեսչութեան և կառավարութեան նոյնոյ պատրիարգին նաև հոգևորական անձինք որպիսի անուամբ և իցեն, որք առաքեցեալք լինիցին ի նմանէ վկայական գրով նորին. սակայն թարց գրոյ նորին ի տէրութիւնս այս ոչ լինին ընդու-

նեցեալք։ Առ ի հետեւումն նոյնոյ հրամանին յայնմ ժամանակին ի Ինոստրաննիէ կօլլեկէն պատկանեցեալ ծանուցումն Աստրախան, Դղլար և ի Կիեվ գրով արարեցեալ է։

Եւ յառաջ քան զայս ժամանակս ինչ րսա պատահման գալստեան ի Աստրախանայ հայոց արք եպիսկոպոսն Յովսէփ, մատուցմամբ բացատրական խնդրանաց իւրոց առ Կօլլեկն ի մէջ այլոց բանից, գրէ թէ րստ ստանալոյ նորա հրամանի ի պատրիարգէն իւրմէ, յաղագս ծանուցանելոյ նոյնոյ հրամանաւ արգելմանցն նա ես ի յայլ սահմանական տեղիսն նոյն հրամանն տարածել։

Եւ քանզի հայոց հոգևոր կառավարութիւն ի տէրութեանս այս պատկանեալ կախին առ նշանակեցեալ Պատրիարքէն նաև նորապէս իւրոհւոյ Կայսերական Մեծութիւնն Ամենաողորմածաբար հաստատեալ է յամի 1779 Նոյեմբերի 14-երորդին շնորհելով զպրիվէլէգ (յատկօրինական գիր) եկելոցն ի Ղրիմու և բնակողացն ի գաւառին Ազօվու. իսկ զայս նորումս հայոց արքեպիսկոպոսէն խնդրեցեալ վասն արգելման ղհրաման րսա մեծի մասին պատկանիլ կարեն առ Նօվօրօսիսկի և առ Ազօվու Ղուպերնեաց (գաւառաց կամ կուսակալաց) կարգագրութեանցն յետ առաջնոյ արգելմանէն. արդ՝ ի նոցին եղեալ գործառնութիւնքն կախին ի գլխաւոր կառավարութենէ ձերին պայծառափայլութեան։ Վասն որոյ Կօլլէգն պարտաւոր համարեաց յաղագս յիշեալ արք եպիսկոպոսին մատուցեալ խնդրանացն ձերին պայծառափայլութեան բացայայտել. առ ի առնել զկրացումն յայսմ պատահման րստ տնօրէնութեան ձերոյ համեմատ նոյն գուբեռնեաց արարողութեանց կամ որպիսութեանց։



1786

Ե. Յովսէփ արքեպիսկոպոսի տուած հրահանգը Ստեփանոս քահանայ Տէր Յարութիւնեանին, երբ սրան ուղարկում էր Հնդկաստանի հայերի մօտ.

Ծանիր՝ սիրելի որդի Տէր Ստեփաննոս

1.

Յամենայն ուրեք ջանասցես զխարջս ըստ կարգի առնել, 'ի բաց փախչելով ի շռայլութենէ. և զնոյն խարջն՝ եթէ հնար ինչ է, աստի սկսեալ մինչև Աստուծով վերադառնալդ՝ գրեսցես։

2.

'Ի հասանիլդ 'ի Կոստանդնուպօլիս, յինէն Սրբազան Պատրիարք [8] վարդապետին յինէն կարօտիւ ողջոյն և աջոյն համբոյր մատո. և զմեր ամենայն որպէսն մանրամասնաբար ծանո։ Նմանապէս և մահտեսի Յարութիւն [9] Ամիրային և այլ երևելեացն՝ զմեզ հարցանողացն ամենայնից։

3.

Իսահակ վարդապետ [10] եղբօրն իմոյ ես, ողջունիւ ծանօ զորպէսն մեր և եղբօրն իւրոյ, և մեր հետևողութիւնն առ այն, և կամ օգնելն ըստ կարի մերում և այլոց գրելն և յանձնելն և մեր՝ առաւել ցաւ ունելն վասն յամենալոյ նորա։ Որպէս գիտակս թղթոցն նորին և մեր։

4.

Մահտեսի պարոն Գալստեանին, յինէն ողջոյն և խնդիր, որ զգրեցեալ խնդիրս մեր յանձն առցէ և մեր ամենայն պատահեալ բանիցն մուղայէթ լինիցի ի փառս Աստուծոյ։

5.

Իմ հարազատ և անդին բարեկամացն Պ. Գէորգին [11] և Պ. Աստուածապահին շնորհակալութիւն վասն սկւոյ ծածկոցին և հոգաթափին։ Որպէս գրած եմ իւրեանց, երկու սկւոյ ծածկոց ես շինել տամ սպիտակ և կանանչ. բայց փոքր ինչ մեծ քան զայս։

Յաղագս թագին և վակասին, որպէս և գրած եմ իւրեանց, դու ես որքան անդ իցես, հետևիս՝ յարմարաձև յօրինել տալ և փութացուցանել։ Ըստ սոսա թէպէտ հարկաւոր էր փորուրարն, եմիփորոնն, թևնոցն և գօտին, սակայն այժմ ոչ գոյ կարողութիւն բոլորն հոգալ։ Թագն ու վակասն այնքան խարջիւք լինիցի, որ բաց 'ի քարանց մերոց, արժեսցի հարիւր թուման, որ է հազար հինգ հարիւր սաղ ղուռուշ. փոքր ինչ աւել պակասն հոգս չէ։ Երբ գրեսցին ինձ սկսանելն, հոգս տեսից. եթէ մեր փողն եկեալ իցէ 'ի Հնդկաց, գրեցից մահտեսի պ. Գալստեանին յայդր տալ, իսկ եթէ ոչ, հասանիցի կամ աստի յղեցից, և կամ գրեցից Նուիրակին տալ։ Վասն այսմ անհոգս լինիցին։ Միայն լաւ շինեսցին։ Տիրացու Սարգսին ես ասասցես ողջունիւ, հետևիլ այսմ։ Վակասի և արտախուրակի ձևն քեզ ետու տալ նոցա։ Իսկ եթէ քան զայնս գեղեցիկ ձևս ունիցին, այն 'ի կամս իւրեանց թողում ապաստան։ Վակասն՝ Փրկիչն ԺԲ. Առաքելովք, մասնաւոր քարամբ և մարգարտով։ Արտախուրակքն ես մարգարտով, չորիւք աւետարանչօք և Աւետեօքն. կամ այլ յարմար նկարիւք։ Մեծութիւն թագի, Սահակ վարդապետի գլխով։

6.

Ի Բասրայ եղեալ արծաթն փութով ա-
ռաքեսցես Գ. Գէորգին և Աստուածապահին,
որ վասն իմ մէկ արծաթեայ՝ յարմարակերտ
դաւաղան շինել տան։ Առ այս նոյն և տի-
րացու Սարգսին գրած եմ։ Արծաթն եթէ
աւելի լինի, պահեսցեն մինչև ինձ յիմա-
ցումն տայցեն, և կամ սաղավարտ շինեսցեն։
Եթէ պակասեսցի, փողով առցեն։ Դաւա-
ղանն փիշապագլուխ եղիցի և ոսկեզրեալ,
ըստ բոլորին և կամ ըստ մասին որպէս և
պատշաճ տեսցեն։

7.

Քարինքն որ կնքած քեզ ետու տալ
պ. Գէորգին և Աստուածապահին, քեզ մօտ
րանալ տացես։ Եթէ քար պակասի պատշա-
ճաւոր քարինս առցեն։ Եւ երկու մեծ սէ-
լիան եթէ գտանիցի վասն արտախուրակին,
որպէս լուսահոգի Քութուրինն՝ շատ բարակ
լինի։

8.

Տիրացու Սարգիսին շատ խնդրեսցես
Թագի ձևն գեղեցիկ բերել որում գրած ե-
կեղեցւոյ յիշատակի քարինք վասն սուրբ
Գէորգայ և սուրբ Թորոսին դրեալ էր թէ
ումէք յանձնեա բերելն։ Գ. Յովհաննիսի
մարդկանցն յանձնեսցես։ Երկու սապանա-
քարիւ վասն Սարգիս և Խաչատուր Աղայիցն։

9.

Սուրբ Երուսաղէմայ արդիւնքն՝ սահ-
մանելոց եմ գանձապետ ընկալնուլ այսու-
հետև։ Ծանօ Տիրացու Սարգսին։

10.

Բրինձն ողջունիւ մատուցես, զի ես
չգրեցի Նոցա։ Շահմային ես ում պաշտաճ
տեսցես։

11.

Ս. Գրոց պատմութեանցն, մինն 'ի
Պօլիս տիրացու Մատթէոսին տացես։ Եւ մի
Բասրայ երիցն (երիցուն). ում գիր եմ դր-
րեալ. և 'ի Բաղդատի Նախիջևան 1786 յու-
նիսի Բ. պ. Ալէքսանին և աղայ Մարգարին։

12.

Երկու շապիկի եախայ ևս եմ գրած.
շինել պատկերօք և այլն յանձնեմ 'ի խոհե-
մութիւն քոյ և ծեամ վասն քո յաջողու-
թեանդ միշտ աղօթարար։

Յովսէփ Արքեպիսկոպոս

Գ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին

Սիրելի որդի տէր Ստեփան

Գոզլովու գրեալ գիրդ՝ որով գրես թէ՝
ի սոյն կէտ նաւ մտի, մեք ընկալաք յամ-
սոյս 10, և յայլոցէ իմացայ, որ չորս օրն՝
հասեալ էք 'ի Պօլիս։ Տացէ Տէր ճշմարիտ
լինիլ և յամենայն ուրեք յաջող ընթացս
ունիլ։ Վասն կորստեանն, որպէս յառաջ
գրած եմ, հոգս մի ունիցիս. բայց այսու-
հետև ի մնասուց զգուշ լինիցիս։

Կարապետ վարդապետն եկն 'ի Ղրիմու,
հինգ թումանի գիրն եցոյց։ Բարով գաս.
այն ոչ ինչ։ Պարոն Եսային մեր քանիցս
մեզ դրեալ է և առ քեզ՝ զբարաթս առաքեալ
Գորեցի Աբէլեանց Աբէլինն՝ առ իւր եղ-
բայր պարոն Դաւիթն՝ զորս ես առ քեզ
եմ ուղևորել. այժմ ի Թիլֆիզու և ի պ. Եսա-
յուն ևս կայր գրեր շատ, զորս առ մահ-
տեսի պարոն Գալուստեանն ուղևորեցի, եթէ
իցես՝ տալ քեզ, իսկ եթէ գնացեալ իցես
ուղևորել։

Դու գրեալ ես թէ՝ ի վերայ Զմիւռի
կամ Ջուղայու կոնդակ առաքեա, լուր սի-
րելի որդի, այժմ ոչ գոյ մեզ հարկադրու-
թիւն գրել ի Զմիւռին։ Իսկ ի Ջուղայ, գրե-
ցի առ Մկրտիչ վարդապետ առաջնորդն Նո-
ցա և առ Յակոբ եպիսկոպոսն։ Մին ի Հաշ-
տարխան առ պարոն Մկրտումն, առաքեցի
առաքել առ Նոսա. իսկ միւսն՝ սովաւ առ
քեզ առաքեմ, որ եթէ կամեսցիս ի վերայ
Ջուղայու գնալ և ճանապարհքն ընդարձա-
կութիւն տացեն քեզ, գնասցես և գնալդ է
բարւոք։ Պատճառն՝ որ ես 'ի յողորմելի Տէր
Յարութիւնէն գիր առի այժմ, որ 1784 թ.
և ի հոկտեմբերի 27-ին է գրեալ ի Սուրաթու
թէ՝ Տէր Զաքար չիք քահանայ ոմն՝ անըն-
դունելութիւն է ցուցեալ կոնդակին սրբա-
զան Վեհապետի. որպէս թէ Ջուղայու ա-
ռաջնորդէն ևս հարկաւորապէս պարտ էր
կոնդակ ունիլ. վասն որոյ գնացեալ է 'ի
Մատրաս որ անդէն յօգնութիւն գացէ ի
Շամիրամ Աղային, որ 'ի ճանապարհին վախ-
ճանեալ է։

Ուստի մեք նախահոգութիւն արա-
րեալ գրեցի Նոցա որ շուտով ի ընկալնուլ

զգիրս կոնդակ գրեալ առաքեսցեն ի Բասրայ առ. մահտեսի պարոն Խաչիկն և առ պարոն Յովհաննէսն Բէթղէհէմեան, որ նոքա տացեն քեզ և կամ. զկնի քո ուղեորեսցեն, եթէ գնացեալ իցես։ Գրեցի ես թէ ձեր բանն յամենայն ժամ. և յամենայն տարի մեզ հանդիպի, իսկ մերն՝ այս միտնգամն է հանդիպեալ ձեզ՝ պարտիք շուտով կատարել։ Եւ եթէ Տէր Ստեփանն եկեսցէ առ. ձեզ, որպէս գորգի ձեր ընկալնուլ. զի ես վստահացեալ 'ի սէր ձեր՝ յանուն վիճակի ձերոյ՝ կոնդակ ես ոչ եառ. այլ դուք եթէ կամիցիք, կարող էք յօղնութիւն առնել, եթէ ժողովուրդքն չլինիցին 'ի վրդովման։

Գրեցի և անցքն ժողովրդեանս այսմիկ համառօտապէս և զայս ևս թէ՝ զոր ինչ Տէր Ստեփանն ասիցէ զմէնջ, կարող էք հաւատալ որպէս ասացելոցն մերոց։ Վասն այսմ. ահա ի Բասրայ ևս գրեցի մահտեսի Խաչիկին և պարոն Յովհաննէսին։

'Ի Սուրաթու Սրապիոնենց պարոն Ստեփանն ևս էր գրեալ մեզ գիր. ահա նորին պատասխանն ևս գրեցի։

Ողորմելի Տէր Յարութիւն այժմ. ևս է գրեալ մեզ թէ՝ ի Բասրայ ԸՃ (800) ղուրուշ ետու աղա Ստեփանին առ. քեզ առաքել, և իմ. բոլոր խարջն աղա Ստեփանն քաշեալ 'ի նաւ եդ. զիս գնալ 'ի Հնդիկս։ Իսկ պարոն Յովհաննէսն Բեթղէհէմեան ԴՃ (400) ղուրուշ է առաքել 'ի Պօլիս, որ 'ի ձեռն Իսահակ վարդապետին հասեալ է մեզ։ Զայսմանէ խօսեսցիս ընդ նոսա և զզօրութիւնն բանին դրեսցես վասն միամտութեան մերոյ։ Կրցեվանցի պարոն Գաբրիէլն թէպէտ կամեցաւ այժմ. մեզ ԵՃ (հինգ հարիւր) թուման փող տալ, և գալ յայդր 'ի քէն ընկալնուլ, բայց մեք ոչ առաք յանձն՝ մինչ մեր որքան ըստանալն 'ի վիճակէդ անյայտ է։

Սրբազան վեհն այժմ. ևս գրեալ էր մեզ որպէս թէ՝ երկու մեծամեծ վիճակն վասն մեր մինչև ցայժմ. պահեալ ունի, որ եթէ գնալոցեմ, փութասցեմ։ Գրեցի առաքել անդ՝ զով և կամեսցի. զի ներկայս մեզ հրաման չկայ ելանել, մինչև տեսցուք որպէս լինի, որ սուրբ Աթոռն չվնասի։

Տեղւոյս վանքն շինեցաւ մինչև Ս. Խաչն՝ աւարտ է լինելոց։ Շատ գեղեցիկ է, Աստուած հաստատուն պահեսցէ։ Լուսաւորչու դրունքն ես շինեցան ընդ դպրատանն։ Եւ Մանուկն դպրապետ կացուցաւ։

Ահա Սրապիոնենց պարոն Ստեփանին որ 'ի Սուրաթ է, և այլոց՝ յանձնարարական գիր գրեցի վասն քոյ. թէպէտ նոցա հասցէն դրած եմ. բայց յինչ ազգատոհմէ գոլն չգիտեմ. և յոր քաղաք գոլն։ 'Ի պահարանին ի տեղիս իւրաքանչիւրոցն՝ նշանեսցես։ Եւ յայսմհետէ ում. անունն մեզ գրելոց իցես՝ նորին հօր և ազգատոհմի անուանսն ևս դրեսցես, և յոր քաղաք գոլն, որ ըստ հանդիպմանն՝ ըստ այնմ. նշանածով գնասցուք առ. նոսա զգիր։ Եւ եթէ 'ի Պօլիս իցես դեռ՝ վասն Թագին և այլ իրաց որ պատուիրեալ եմ. քեզ զորպէսն նոցին՝ մի ըստմիոջէ դրեսցես։

Եւ այսմհետէ՝ որպէս մահտեսի պարոն Գալուստեանին գրեցի, բարւոք է գիրն ձեր և կամ. այլոց՝ ի Թագանրովու փօշտն ձգել. յանուն նորին կամէնդաթ՝ պօլկովնիկ Իվան Պեարովիչ պարոն Գասպարովին, 15 օրն հասանելոց է առ. նա անվնաս, զի ես խօսեցեալ եմ. ընդ նմա։

Յանկանալով բարեյաջող ընթացիցդ՝ մնամ. միշա վասն քո. աղօթարար խոնարհ 1786 օգոստոսի 30 **Յովսէփ Արքեպիսկոպոս** ի Նախիջևան.

Մերքն զքեզ ողջունեն։ Ջուղայու վարդապետաց թուղթքն, ուրոյն եդի մահտեսի պարոն Գալուստեանի թղթումն, որ եթէ յայդր իցես քեզ տացէ, և եթէ ոչ՝ պարոն մահտեսի Խաչիկին առաքեսցէ։

Է. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Տ. Ստեփանին

Սիրեցեալ որդի Տէր Ստեփան

Յօգոստոսի ԺԷ.-էն գրեցեալ գիրդ, յամսոյս 11-ին ընկալեալ. լցայ անպատմելի խնդութեամբ. յաղագս յաջողութեան ճանապարհիդ, որ բարի պաշտպանութեամբն պարոն դեսպանի, միամտեալ հրովարտակօքն և դրով նորին յանձնարարութեանն, Աստուած ճանապարհ բարի շնորհեսցէ քեզ. երթ ի խաղաղութիւն. զի ամենայն նշանքն՝

բարի երևին. զի յունուարի 1, Շամիրամ ազայն գրեալ էր մեզ՝ զմահն Տէր Յարութիւնի [12] ե զնորին սպասաւոր Մկրտիչ աղայի գալն առ ինքն. ե մեր դրոց հասնելն ե իւր բաւականութեամբ ընկալնուլն, ե ցանկանալն լցուցանել զգրեցեալս մեր, ե սպասելն հաւատարմի որ 'ի ձեռն նորա հասուսցէ մեզ. զոր ինչ դրած եմք իւրն յուսով։ Այս գիր, ի վերայ Բրիտանիու էր առաքեալ մեզ։ Մեք այժմ երկու գրեցաք նմա պատասխան, մինն առաքեցաք ի վերայ Բրիտանիու, ի Մօսկով առաքելով, առ պ. Յակոբոսի եղբայր պ. Նիկողոսն Աղաբաբեան։ Իսկ միւսն, ընդ Թղթոյս ուղևորեմ հասանիլ քեզ. և կամ 'ի Բասրայ մահախսի պ. Խաչիկին և մեր հարազատ վէքիլ պ. Յովհաննէսին Բէթղէհէմեան շուտով հասուցանելնմա։ Հարցումն էր արարեալ թէ՝ ոչ գիտեմ, որ կողմամբ հասանի քեզ դիւրին, դիրս և առաքելի իրքն։ Ես ամենայն պարագայքն և քոյ որպէսն և գալոյդ պատճառն և այլն նմա այգու գրով ծանուցեալ եմ, հանդերձ ամենայն որպիսութեամբ երկրի մերոյ յիսկզբանէ մինչև ցարդ՝ որ հարցեալ է, որ յորժամ Աստուած տացէ զնա տեսանիցես և զգիրս կարդայցես, բոլորն քեզ ծանօթք են։ Դու ջանա յառաջ առ նա գնալ, որ գործդ յառաջասցի. զի Սրբազան Հայրապետի և մեր կոնդակքն առ նա են։ Աստուած իւր որդիքն օրհնեսցէ։ Գրեալ էր մեզ ղանուանս նոցա։ Վասն Ջուղայի առաջնորդին դրելոյս, 'ի յՕգոստոսին գրեցի քեզ։ Եսային գրեալ է թէ գնալոց եմ, գիրդ հաւատարմաւ յղեցից 'ի տունս ձեր, դու ուրախ սրտիւ գնասցես, վասն նոցա միամիտ լինելով։ Այարի և Բառաբանաց անունն էիր գրեալ, շնորհակալ եմք։ Վասն Թագին և գաւազանին յօրինման, ահա ես գրեցի տիրացու Սարդսին, Թիլդիղի [18] յօրինել, բոլորն արծաթ։ Զգիտեմ շուտ կարող են շինել, եթէ յամեցուցանելոց են։

Շնորհակալ եմ յամենայնիցն՝ որք զանուն մեր ե եթ լուեալ, սիրեն զմեզ, Աստուած զինքեանս սիրեսցէ։ Զգոյն գրեն ե 'ի Հնդկաց։ Նորաաիպ գրեանքն մեր եկեալ ասա, ուղևորելոց առ մահտեսի Գալստեանն ուղևորել առ քեզ, և ընդ նմա գրեցից, ում ինչ տալոց իցես։

Դժնդակ անգութ և անմարգասէր աբարքն... *) և ի ընդդէմ եղբօրն իմոյ Իսահակայ վարդապետին, սարսափեցոյց զբոլոր անձնս։ Եթէ գիտացից՝ որ Սահակ վարդապետն զհետ է իշխանութեան նորա, ես ինքնին քարակոծ առնէի զնա. բայց այս ախտ՝ հեռի է 'ի նմանէ։ Ուրեմն նա ինքնաշարժ ախտիւք ըմբռնեալ, 'ի զուր եդեալ ի վերայ ողորմելոյն զարատիս, առ ի դայթակղեցուցանել զողորմելի ամբոխն քաղաքիդ՝ ոչ ամօթ համարելով ինքեան և ոչ մեղք։ Ինչ և իցէ Աստուած դարձ պարգևեսցէ 'ի ծերութեան իւրում, որ դոյն ախտիւք չկործնչի։

Ուրեմն և մեզ էր առնելոց զայգ, եթէ յաջողեալ լինէր գալն մեր յայդր։ Զի երկիցս դրած էր մեզ սրբազան Վեհապետն թէ՝ փութացո զգալդ որ դու գնասցես և ապա Սահակ վարդապետն ելցէ։ Գիտես մեր ելն արգելումն, ուստի գրեցի. զի ում որ հաճի, առաքեսցէ այս նուագ։ Մեզ չեղև հնար ելման. Օրացուցն երբ առաքեմ, ես դեսպանին գրեցից զպատկանելին, որ շնչալ չկարիցէ և ոչ այրել որպէս յառաջ։ Այնպէս բան եմ առնելոց 'ի յառաքման Օրացուցին, որ բոլոր հարազատքն մեր 'ի ձայն ցնծութեան ուրախասցին և նա նկուն և ամօթ եղիցի առաջի հասարակութեան ազգի մերում։ Գրեանքն Մասեհին առաքեցից։ Զհարկաւորն՝ յամենայն տեղեաց գրեսցես յիմացս մեզ։ Զկնի գնալոյդ՝ քանիցս դրած եմք և պարոն Եսայու բարաթք Գօրեցւոյ առաքեալ։ Ու՛ Թուղթն մեր քեզ հասանիցէ, ամսաթուովն գրեսցես մեզ, որ դիտացեալ միամըտեսցուք։ Ահա սպասելով միշտ առողջ գալոցդ և բարք համբաւոյդ և յաջող գործոցդ

Մնամ միշտ վասն քո աղօթարար խոնարհ՝

Յովսէփ Արքեպիսկոպոս Հիւսիսականաց Հայոց.

ի Նախիջևան 1786 սեպտ. 15.

«Վանքն շատ գեղեցիկ շինեցաւ, բարով Լուսաւորիչն ևս շինեսցի։ Փութացիս մեզ զպտուղ աշխատութեանցդ կանխաժաման առնել որպէս և իցէ։ Գէորքն որ հաճեալ է գալն ուրախ եմ, եթէ գրեսցէ ինձ

*) Այս տեղը պատռուած լինելով՝ անընթեռնելի էր։

զհաճութիւն իւր, գրեցից դեսպանին՝ ուղևորել առիս պաշպօրթիւ։

Թալանթարեան պ. Վարդանի առաքեցեալ ղալամքար 1+ ղգեստն և Ի ղուռուշն, եկած է ի Մողդօկ։ Ի յընկալնուլս՝ գրեցից պ. Վարդանին, զու այսպէս ծանօ։

Պ. Մահտեսի Գալստեանն գրած էր թէ, ԴԾ (400) ղռուշ եսու Իսահակ վարդապետին, որ Բասրայու էին առաքեալ, ոչ գիտացաք այն 400 ղոշն է որ պ. Ասլանն է տուեալ, թէ այս ուրիշ է։ Եթէ այս լինի, պիտոյ էր որ ուշ գրէին ի մեզ, զի մեզ ԸԾ (800) ղոշ. պարտի հասանել, որպէս և Տէր Յարութիւնի այս վերջին գիրն ևս ցուցանէ թէ նուչուս և ամենայն խարջս Աղտ Ստեփանն քաշեաց. տեղւոյն՝ այսինքն Բասրայու ժողովուրդէն եղև ԸԾԽ (840) ղուրուշ. Խ (40) ղոշն աւելի առի. իսկ ԸԾ (800) ղոշն եսու աղայ Ստեփանին, յղել պ. Ասլանին հասուցանել քեզ։

Ես ԸԾ ղոշ. պարտ իմ ստանալ, բայց ԴԾ ղոշ. ստացեալ եմ Սահակ վարդապետի ձեռօքն ի պ. Ասլանէն, որպէս և սրբազան Հայրապետն գրէ. բայց այժմ պ. Գալստեանն գրած է թէ ԴԾ ղոշ եսու Սահակ վարդապետին, դու ոչինչ չես գրեալ։ Սահակ վարդապետն ևս ինձ չէ գրած ինչ. ես գրեցի պ. Գալստեանին. որ այս նոյն և մի ԴԾ (400) ղշն. է, ես գրած եմ պ. Ասլանին ինձ հասնիլն։ Իսկ եթէ այլ է, այսու լրանայ մեր ԸԾ (800) ղրշն և ես իւրն գրեցից զինչ առնելն։ Դու ի Բասրայու դրեսցես զայսմանէ։

Տէր Յարութիւնի թողեալ քսրոցն 1ւ և արծաթին ևս հետևիս, և ինձ գրես։

Ի Մաարաս տէր Յարութիւնի տղայի մօտ եղեալ ամենայն ինչքն Տէր Յարութիւնի, Շամիրամ ազնիւ աղայի դիտութեամբն դաւթար առնես. զոր ինչ մի անգամ թողեալ իցէ՝ վասն միամտութեան ընտանեաց իւրոց։

Ղըլարցի Յարութիւնի դրքաշիկն (*) եթէ ղտցես, որպէս ինքն խնդրած է. եթէ բան ինչ առցես այնպէս արասցես, զի ըէթսօյի 16 ոք է. որպէս և գիտես, որ խօսք չլինի։

Այս ևս մի լիցի ի քէն ծածկեալ, զի մինչ սուրբ Խաչն ի տեղի իւր եղաւ, ի նըմին գիշերի Խաչելեալն Փրկիչ, երկնային լուսով փառաւորեաց զնա. գիշերային յիննժամուն, մինչև առաւօտու երկու ժամն, որ մեր Կարապետ վարդապետն և այլք որք ի Վանքն էին, ամենեքեան էին արժանացեալ տեսանել։

Վասն տիրացու Գէորքին, ես գրեցից դեսպանին առաքել զնա առ մեզ։

(Ի վերայ նամակին այսպէս էր գրեալ)։

Ի Կոստանդինուպօլիս և կամ ի Բասրայ և կամ ուր և իցէ Թիֆլիզեցի հանգուցեալ Տէր Յարութիւնի որդի Տէր Ստեփան հանճարամիտ քահանային։—(Տէր Ստեփանի դրով) ի Մեծն Պօլիս հոկտ. 31. պատասխան գրեցաւ ի նոյեմբ. 1։

Ը. Յովսէփ արքեպիսկոպոսը տէր Ստեփաննին

Սիրեցեալ որդի տէր Ստեփան

Հանճարաշատ քահանայ

Երկոքին գիրդ յօգոստոսի 21-էն և 26 էն դրեցեալ ընդ պարոն Եղիային, ընդ գրեանցն և ընդ թամքին ստացայ մեծաւ շնորհակալութեամբ։ Եւ զամենայն գրեցեալսդ գիտացեալ, ահա որոց յաղագս թուղթս էիր խնդրեալ. գրեցի զշնորհակալութիւն մեր՝ վասն Սահակայ վարդապետին. և ըզգրեանս ևս առաքեցի ամենիցն. նոցա և յառաջին ծանօթացելոցն՝ որոց յաղագաւ ընդ քեզ թուղթ էաք դրեալ։ Կարող ես իմտնալ յանուանէ, ևս ոչ երկարեմ։ Եւ ըստ գրեցելոցդ կակուղ և օրինօք գրեցի ամենից։ Ես զարմանամ, որ այժմ վասն թաղին ոչինչ էիր գրեալ։ Ահա ես այժմ, ԲԾՂԴ (294) մսխալ սրմա արծաթ առաքեցի վասն գաւազանին՝ առ պարոն Մասեհն, տալ պարոն Գէորքին և Աստուածապահին։ Ընդորս և առաքեցի առնա՝ մէկ սնդուղով գրեանք, որ է ժամագիրք, Յիսուս որդի և Սուրբ Գրոց պատմութիւն. որոց ում դրեալ եմ տացէ, մնացեալն ՚ի ձեռն մահտեսի Գալստեանին, առաքեսցէ առ քեզ, որ է ՃԾ (100) Սուրբ դրոց պատմութիւն։ Ժ. հատ ժամագիրք։ Ի. հատ Յիսուս որդի։ Յորոց մէկ-մէկ հատ տացես մահտեսի պ. Խաչիկին, պ. Յովհաննէսին Բեթղեհէմեան և պ. Վարդանին Գալանթարեան, որպէս գրած եմ իւրեանց ևս. մնացեալն՝ ՚ի Հնդստան ըն-

ծայիսցես, որոց որ արժանի տացես. ազնիւ Շամիրամ աղային, Պետրոսի որդի Յարութիւն Աղային, Աղայ Մկրտումին և այլոց։ Եւ եթէ մնասցէ ինչ, ծախեսցես, որպէս պատշաճ տեսանես։ Օրացուցն, Տօնացուցն և Աստուածաղերս. 'ի մօտոյս գալոց է և 'ի նոցանէ ես՝ առաքելոց եմ առ քեզ։ Դեսպանին ահա շնորհակալութիւն գրեցի վասն քոյ, ընծայ առաքեցի. վեց հատ լաւ եաղլուղք և Բ. հաս Հաւատոյ խոստովանիմի տետրն, զոր հայերէն ընդ ռուսաց թարգմանութիւնն ապեալ են։ Խնդրեցի՝ որ ում հարկ է ասասցէ սասաիւ, չարգելեն ծախելն ասաէն առաքեալ գրեանքն և կամ այրել, և այլ բանք շատ։ Սահակ վարդապետին անցքն, բոլոր գիտացի։ Յառաջ գրեալ էի զպատասխանիս յառաջին թղթոցն քո, ընդնմին և Աբէլի և մեր Եսայու հարկաւոր թուղթքն, յուսամ ընկալեալ իցէք և զպատասխանիս մեր գրեալ։ Այժմոյս գրեցեալ թուղթդ առ պ. Եսային և 'ի ասունս ձեր, առաքեցի 'ի Հաշտարխան, պ. Եսային գնալոց է և տանելոց։ Յայնպէս տեղ եմք, որ ոչինչ համբաւ ոչ լսեմք 'ի սուրբ Աթոռոյն և 'ի Թիլֆիզու, այլ թէ լուեալն է, բոլորովին այլանդակ և խռովեցուցիչ մտաց։ Աստուած 'ի բարին եղերեսցէ։ Ահա դուք լաւ էք լուեալ քան զմեզ։

Նմանապէս և 'ի Հաշտարխանու և յայլ տեղեաց յոյժ անազան ընկալնում զգիր։ Յուսամ Աստուած որ յաջողեալ իցես զգնացս քոյ. սպասեմ գիր ընկալնուլ և միամտիլ։ Յամենայն կողմանց գրեսցես։ Շամիրամ[17] աղայի դրոցն պատասխանն որ դրեալ եմ, եթէ հասեալ իցէ 'ի Բասրայ առ մեր հարազատսն, մեզ ծանուցես։ Պըրվէլէկի[18] պատկերաց մեկնութիւնն ահա ընդ թղթոյս ուղևորեմ։ Վասն տան ձերոյ միամիտ մընասցես։ Ես այժմ 'ի Թագանռով էի. երկար չկարացի գրել։ Պարոն Յովհաննէս Գասպարովի կինն որ վախճանեցաւ, այժմ մեր միլիոնչի Գրիգոր աղայի դուստրն Մալալուշկին նշանեցաք. գնալոց է անդ պսակելոց և բերելոց 'ի Թագանռով։

Կարապետ վարդապետն, Գրիգորն, տիրացու Պետրոսն, մահտեսի Յովհաննէսն, պարոն Մկրտիչն և պարոն Աստուածատուրն ընդ պարոն Պօղոսին՝ զքեզ ողջունեն։

Դիւան Հայ. պատմ. Թ.

Եւ մնամ միշտ վասն քոյ յաջողութեանդ և առողջութեանդ աղօթարար՝

Յովսէփ Արքեպիսկոպոս

'ի Նախիջևան՝
1786 Հոկտեմբերի 10.

Յայսմ ամի բաւական շինութիւնս աբարի 'ի վանքն, ջաղացն ևս շինեցի։

Թ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Հաշտարխանի իՆՆ ընտրեալ պատուելի Հոգաբարձութեան

Առ Հաշտաբխանու ինն ընտրեալ պատուելի հոգաբարձութիւնդ Հովուական պարտաւորութիւն իմ ստիպէր զիս՝ երկար մընալ 'ի մէջ հասարակութեան Ձերոյ և զամենայն կամս Աստուծոյ Ձեզ յառաջադրել, ըստ այնմ գնալ Ձեր ըստ կոչման քրիստոնէական պարտականութեան ձերոյ, այլ մինչ ոչ յաջողեցաւ մեզ եկաւորել, և զբանս կենաց յաւիտենականաց խօսիլ 'ի յունկս հասարակութեան ձերոյ, դուք որպէս զմարդիկ, մոռացեալ զմերս աշխատասիրական անձնադիր հովուութիւնն և զհայրական գթով ընկալնուլն 'ի նսեմացուցիչ բանից ոմանց, ոչ միայն մխիթարիչք եղէք ինձ, այլ որպէս թէ տառապեցուցիք և զի մոռացայք զձերդ հնազանդական որդիսութիւն մոռացայք զիմս հայրութեան պատիւ, մոռացայք զիմս աշխատանք ոչ առ հասարակ ազգն և առ եկեղեցին Ձեր, ապա չէ զարմանք, նախ Փրկչի օրինակաւն, երկրորդ՝ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի, մեծին Ներսիսի և Սահակայ Պարթևի. զի միոյն զրպարտեցին թէ՝ բարկացօղ է և ոչ ընտրէ զարժանն սիրոյն, վասնորոյ աքսորեցին 'ի վիճակէն, Ներսէսի զրպարտեցին թէ զու յանդիմանօղ ես, իսկ մեծին Սահակայ զրպարտեցին թէ եկ կըցորդ լեր ընդ մեզ 'ի յանկումն Արշակայ թագաւորին և մինչ սոքա ոչ գտին ազգ մեր համաձայն կամաց իւրեանց, մինն մահու դեղով կորուսին և զմիւսն 'ի վիճակէն արտաքսեցին թէ չկամիմք լինել մեզ Առաջնորդ, սուրբքն համբերութեամբ տարան ժամանակաւոր փորձութեանցն, այլ համբերութիւն նոցա լցեալ ճշմարիտ վարձիւք,

եկեղեցին Աստուծոյ մինչև ցայսօր զնոսա իբրև զսուրբ նահատակս տօնէ, զսոսա ունելով ինձ օրինակ, ամենայն որ լուայ 'ի քաղաքիդ 'ի ձէնջ համբերութեամբ տարայ և ոչ զոք ի ձէնջ վիրաւորեցի, իսկ որք վիրաւորեալք են, ստութեամբ են լցեալք և զըրպարտանօք, որպէս և դիտէք սուրբ խղճիւ, զի ես ոչ եթէ ձեզ Առաջնորդ եմ. լեալ 'ի մէջ քսան և չորս տարւոյն, այլ և իբրև զծնող և կամ որպէս դայեակ մի՝ որ սնուցանէ զմանկունս, և վասն հոգևոր օրինաց ոչ ոք կարէ զմէնջ զանգատել, եթէ ոչ սըստութեամբ և զրպարտութեամբ, որպէս Աստուած գիտէ ես զայս ամենայն 'ի բաց թողում. և ոչ է տեղւոյս խօսիլ, այլ և ըստ ասից պարոն Մաաթէոսին, պարտէիք դուք ամենեքեան գալ առիս ի կէսօրին, որ ունէիք վասն այլոց և վասն այլ ամենայն հարկաւորութեանցն հասարակութեան քաղաքի Ձերոյ ընդ ձեզ խօսիլ, այլ դուք ոչ եկիք, վասնորոյ և հասարակութեան Ձերոյ խօսիլ հարկաւորութիւնքն մնային. ես զայն ամենայն հարկաւորութիւնոն որ վասն իմ է թողում, և զոր կամիք զայն արարէք, այսօր կենդանի եմ. և վաղն ոչ, վասնորոյ չունիմ. մարտնչիլ ընդ ումեք, որպէս կամք է ձեր արարէք, այլ զհոդի ձեր և զմահ 'յիշելով, մի՛ խառնիք 'ի հոգևոր բանս և զհասարակութեան պարզամտութիւնն պղտորէք, գիտացէք որ մահ կայ ամենեցուն, իսկ հոգևորացն գրեալ եմ. և սաստիկ պատուիրեալ մի՛ զոք գայթակղեցուցանել, այլ ընդ ամենեսին սիրով և համեստութեամբ վարիլ և զամենեսին շահել, որ եթէ նոքա ըստ այսմ. և որպէս կանոնն ուսուցանէ նոցա, այնպէս ոչ շարժիցին, գրեցէք առիս. բայց ճշմարտութեամբ և ոչ նախանձու հոգւով, գիտասջիք զի և Ձեր Տէր գոյ 'յերկինս, զի եթէ հասարակութեամբ եկեալ լինէիք, եթէ արժան էր կարգեալն զոք 'ի յաշխարհականաց անձանց 'ի հոգևոր կանցիստօրին մերոյ, 'ի հարկէ խօսեցեալ էի, որպէս ինքն պարոն Մատթէոսն խօսեցեալ էր ընդ իս, այլ դուք ոչ եկիք, և զայն մնաց անկատար, որոյ պատճառն դուք էք և ոչ ես։



1788

Ժ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի յերկիրն Ռուսաց առ մերազնեայցն Առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի չորից թղթոց նորին ընդ միջոցս միջոցս գրեցելոց. յաղագս զանազան իրաց եւ իրակութեանց

Յորմէ սիրով և օրհնութեամբ, Քրիստոսական սուրբ ողջունիւ, և նոյնաէջ սրբոյ Տեղւոյս շնորհիւն դիտասջիր սիրելի և հոգևոր որդի մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս, Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Ձի չորք Թուղթ քո՝ իւրաքանչիւրն երկահատուած, որք գրեցեալք էին 'ի սեպտեմբերի, Ժ. 'ի դեկտեմբերի, Ի. 'ի փետրվարի, Ի. և 'ի մարտի Ի. ժամանեցին առ մեզ 'ի նոյեմբերի ԺԵ. 'ի փետրւարի ԺԸ. 'ի մարտի ԺԷ. և յապրիլի ԺԸ։ Զորս և ընթերցեալ՝ իմացաք զգրեալսդ։ Բայց մեք 'ի հոկտեմբերի ամսոյ ելն զԹուղթ ղրեցաք առ քեզ, հանդերձ հարկաւոր փուսուլայիւ, և ընդ երից Թղթոց 'ի քէն խնդրեցելոց, և երկուց Ատենի ժամագրքաց և երկուց Յովսէփուից աստէն տպեցելոց յղեցաք 'ի Թիֆլիզ, անտի հասանիլ առ քեզ. որք 'ի վաղուց պարտին հասեալք լինիլ։ Սակայն զի ոչ ինչ գրես զայնցանէ, տարակուսիմք թէ զինչ իցեն եղեալք։ Իսկ յայնմհետէ ցարդ ձեռնհասութիւն ոչ եղև մեզ գրել ինչ սիրելւոյդ։ Այլ այժմ լուր զպատասխանիս գրեցելոցդ հարկաւորացն բանից։ Արդ՝ գրեալ էիր նախ զԹագուհւոյ ոչ ևս դալն 'ի Նախիջևան. այլ զիս ընդ առաջ ելանելն նմա, և զնամցայի կայսեր դեսպանն տեսանելդ, և զխօսիլդ ընդ նմա վասն Թղթոցն մերոց. և ապա զԹուղթսն յղելդ 'ի Պետրպօլք առ Մարդար և Փիլիպպոս Աղայսն և Տօքտօրն, Թարգմանել, և յղել, և այլն... և վերջապէս զքո կրրկին ևս Թուղթ գրելն առ նոյն կայսրն, և հանդերձ կայսերուհւոյ շնորհեալ հրովարտակօքն յղելն. զորս զամենայնսն իմացեալ շնորհակալեցաք. և թէ զԹրպլիսի վճար առնուցու բանն, 'ի հարկէ իմանալոց և դրելոց ես մեզ։ Ապա գրեալ էիր զպ. Ստեփանէն ծանուցեալ զոլ լրիւ զորպէսն մարտի դոցա ընդ նոսա, եղբօրն իւրոյ. յորմէ և մեք իմացաք. Աստուած զվախճանն 'ի բարին տարցէ. ողորմելով և մերաղնեայցն խղճալեաց ուր և իցեն։ Գիտացաք և զՆախիջևանու վանից շինմանն առնուլն զկատարումն ամենայն շինուածովքն, կաթողիկէն ևս որ անկատար է, այն ևս թերևս ցայժմ կատարեցաւ. որոյ վասն ուրախ եմք, և ասեմք բարեաւ վայելել զնա ազգին մերոյ օրհնեցելոյ, և յիշել զաշխատաւորդ նմին։ Բայց վասն Ամստէրգամու տպարանին որ զարձակման Թուղթ գրեալ էիր խնդրեալ, իմա առ այն. զի հոգելոյս Հայրապետն մեր որ արգել զայն ի բանեցուցանելոյ, 'ի մէջ այնր եղելութեանցն մեք էաք գոլով 'ի Զմիւռին, որ նոքա մեօք ազգեցին լուսահոգւոյն զգիրս տպագրել, և նա ոչ կամեցաւ բարեմտութեամբ թէ՝ աշխարհականքն զի՞նչ հոգացողութիւն պարտին առնել սրբագրութեան, այլ սխալանօք լցուցանելով զգրեանսն օտարացն ծաղր առնել տալոց են զմեօք, և նախատինս ածելոց ազգի մերում։ Վասնորոյ՝ խափանումն ետ կամաց նոցա։ Իսկ առ մեզ գրեաց ևս պատճառաբար, և մեք գրեցաք պ. Առաքելին. զի զգրոց հայր և մայրն 'ի սուրբ Աթոռս յղեսցեն, որովք աստ գրեանք տպեսցին 'ի յիշատակ նոցա։ Սակայն նոքա ոչ կամեցան. և մնաց գործարանն՝ խափան [19]։ Յետ մահուան Առաքելին ես գրեցի որդւոցն նորա Բարաղամին զմխիթարութիւն, և յիշե-

ցի զբանսն սրբազան Հայրապետին, սրում նա պատասխանի ևս ոչ արար։ Ա՞նա յայսքան ժամանակ այն տպարանն ոչ պիտոյացաւ։ Այժմ մինչ սուրբ Աթոռոյնս գոյ և 'ի տեղդ ևս քոյն հաստատեցաւ․ գոհութիւն Աստուծոյ, ի՞նչ հարկէ ընդդէմ երջանիկ Հայրապետին մերոյ առնել ինչ, մինչ ոչ ևս գոյ անգ դիտակ և հարազատ հոգածու այնմ գործառնութեան։ Մեզ ոչ վայել է, և ոչ իսկ անկանի ընթանալ արտաքոյ շաւղաց երանելւոյն մերոյ։ Զհանգուցեալ Պետրոս վարդապետի շաբաղրեալ գրեանսն ևս որ խնդրեալ էիր, յայնոսում վրիպմունք գոլով, ներհակ մերայնոցն նախնեաց վարդապետացն սրբազանից, հոգելոյս Հայրապետն մեր էառ զայնս 'ի նմանէ և հարկեաց նմա ուղղել զսխալանսն, զոր և նա յանձն էառ, բայց տկաւէին ոչ ձեռնարկեալ ի նոյնս, գնաց ի Պօլիս, և սրբազան Հայրապետն զգրեանսն պահեաց, և զգուշացոյց զմիաբանսն յանցանէ, մինչև սրբագրեսցին, որ թերևս և քեզ գրեալ իցէ։ Իսկ Պետրոս վարդապետն 'ի վերադառնալն 'ի սուրբ Աթոռս ի մեր ժամանակի, մեզ ևս խոստացաւ ուղղել զանյարմարսն, և խնդրէր տպեցուցանել, խոստանալով և զծախսն տալ ի գոյից իւրոց․ և մեք յանձն առաք 'ի տպել տալ․ բայց յայնժամ զԱտեննին և զՅովսէփոսն ունէաք 'ի ձեռին, առ որովք և Ղեզկեաց յարուցումն եղե, և վրդովեցաք երկիրս և մեք․ և յետ նոցա ինքն փոխեցաւ առ Տէր, և մատղրեալքն մեր նահանջեցան։ Բայց և յետ վախճանման լուսահոգւոյն, 'ի խցէն բաց 'ի քսրոյն՝ դրամ քան ՋԲԾ ղուռուշ աւելի ոչինչ ել։ Թէպէտ թամասուկք ելին Գ․ կամ ԳՌ․ ղուռուշի, ԲՌ․-ն 'ի Պօլիս 'ի վերայ Ագուլեցի տիրացու Գէորգին էր, որ վախճանեցաւ, և միւսքն 'ի վերայ այլոց․ սակայն՝ զայնս Մինաս վարդապետն մեր տարեալ 'ի Պօլիս՝ այժմ գրէ թէ՝ այնպէս տեղաւորեցեալք են, որ մի փարայ դուրս գալոյ ճար չկայ։ Իսկ գրեանքն որպէս հոգելոյս Հայրապետն մեր եղեալ է, դեռ այնպէս կան անձեռամերձ։ Եւ տպագրելն այնց ի սուրբ գահիս տպարանոջն քա՛ջ վայել է, մինչ նա ևս սորին աշխատաւոր միաբան էր․ եթէ Աստուած խաղաղ ժամանակ տացէ, սխալանացն ուղղագրիլ և աստէն տպագրիլն ի՞նչ անկարելի է, որ անպատճառ յայլ ուրեք յուղարկել լինիցի, ե ի ճոնապարհսն ևս թերևս փորձութեան հանդիպիցին։ Ուրեմն՝ մինչ ի սուրբ Աթոռ Մայրս մեր ամենեցուն տպարան դոյ, յանկարելեացն հաշուի է զայնպիսի հեղինակագիր անհատ գրեանսն հանել աստի, և ենթարկել ամենտկերպ խօսից և ասութեանց։ Ապաքէն՝ առատ խոհականութեան սիրելւոյդ իմոյ հարկ է, մի՛ ևս բնաւ առնել զայդ խընդիր։ Ցիշեալ էիր ղփոխիլն նախկին զօրապետին, որդոցն Սարդսի․ և ի տեղի նորա Սըրֆ՝ կաւալեր Պետր Գաբրիէլիչ Թէքէլինի, և Բլղադիր՝ Կաւալեր մեծ Իվան Պեարովիչ Գօրիչի առաքիլն, և առ նոսա զթուղթ դըրել էիր ասացեալ․ ընդ որ հաճեալ մեր և բարւոք համարեալ, դրելոց եմք առ նոսա զթուղթ, շնորհաւորելով զգալուստ իւրեանց։ Ծանեաք և զբարեդիպութիւն Պ․ Ատեփանին, զոր լիով գրեալ էիր, զվախճան որպիսութեան նորին ևս՝ լաւագէս եղերեսցէ Տէր։ ԶՃորայ գուռն ունողէն [20] և վասն Բագրատունւոյն [21] և մերայնոցն ողորմելեաց, զոր ինչ ազդեալ էիր, գիտացաք։ Նաև՝ Խտրդալեան տպագիր Գրիգորի զմահն իմացեալ տրտմեցաք, և ափսոսեցաք առ պակասումն այնպիսի պիտանի առն, ցաւելով և վասն անկատար լինելոյն ձերոյ առաջադրութեան սակս գործարանին․ սակայն և ևս որն բարի է, զայն յաջողեսցէ Տէր։ Ցաղագս Պօլսեցի տպագիր Պօղոսին և Մատթէոսին որ զբանս էիր դրեալ մեզ և Իսահակ վարդապետին, և զթուղթն նոցա ի ձեռն նորա էիր յղեալ, պատուիրեցաք նմա՝ որ զթուղթն յղեաց ի Պօլիս, դեռ պատասխանի չէ եկեալ․ տեսցուք թէ զի՞նչ գրեսցեն։ Իսկ յերկրորդ թզթոջդ ղեկուցեալ էիր զգնալդ ի Ղռիմ, և տեսանելդ զխանգարումն բազմաց եկեղեցեաց մերոց․ և զերկուց միայն շէն գոլն․ և զմտադրելդ ի շինեցուցանել զսուրբ Խաչ վանսն օգնութեամբ Ազնուոյն մերոյ Յովհաննէս աղային, ըստ որում տեղին նմա է շնորհեցեալ ի Պայծառափայլէն․ որոց ընդ տրտմելիսն տրտմեցաք հոգւով չափ, և ընդ ունիլդ զբարի ջանս առ շինութիւնս սուրբ Վանիցն և շրջակայիցն սրտաղիւր եղաք։ Գրեալ էիր և զառնուլդ զհրովարտակ բաշպօրթի, վասն անարգել լինելոյ քեզ, զի թէ

հարկն պահանջիցէ, կարիցես գալ ի Կովկասու յայսկոյս, և ոչ ոք ընդդիմադարձեսցի քեզ. ուրեմն՝ Նոր և կամք իցեն քեզ, ոչ է անհնարին գալդ ի սուրբ Աթոռս: Առ այս ես բարձան տարակուսանք մեր, և անհոգ եղաք. գոհութիւն Աստուծոյ՝ որ քաղցրացոյց զսիրա դոցա, շնորհել սիրելի որդւոյդ մերոյ զայդ ազատութիւն: Զկարապետէն սիրելի որդւոյն մերմէ շնորհակալութիւնս էիր արարեալ վասն աշխատելոյն բարւոքապէս, մեք ես սրտադիւր եղեալ օրհնեցաք զնա. զոր և ողջունեմք հանդերձ պօլսեցի Թադէոս վարդապետիւն, զորմէ ես թէպէտ յառաջ դրած էիր գալոց լինիլ յայսկոյս, առ ի դառնալ ի Պօլիս, սակայն յետոյ յղեալ ես ի Պետրպօլք վասն հարկաւորութեանցն հանդիպելոց: Ի նոյն Թադէոս վարդապետէն լուեալ քոյ զհարցումն Յովսէփայ կայսերն ցԱզովացին թէ կարող էք զեպիսկոպոս պահել, և նոցա զինչ պատասխանելն որ դրեալ էիր, գիտացաք: Եւ յաղագս յանուն սուրբ Գէորգեայ քարեայ եկեղեցւոյ աւարամանն, և օծանելոյդ զնա՝ ուրախացաք: Հազարացւոց ջրով յառնելն առ զօրս դոցա, և պարտիլն, և այլ որպէսն, և այլ տէրութեանց ես խռովութիւնքն զօրս ծանուցեալ էիր, յորոց և խղճճալի մերազնեայցն անչափ վնասք են դիպելոց, ոչ սակաւ տրտմեցաք. խաղաղութիւն Տեառն ժամանեսցէ: Առ Մահտեսի Գալստանն յղեալ պահարանաւ թուղթքդ հասին, և վաղ ուրեմն յղեցաք ի Պօլիս առ Մինաս վարդապետն մեր, տալ նմա, և վասն թագին և վակասին, ըստ գրեցելոյդ խօսիլ ընդ նմա, և ի տալն նորա, հաւատարմօք հասուցանել աստ ի ձեռս մեր, զի և մեք յղեցիմք առ քեզ: Զտէր Ստեփանէն այտի առաքեցելոյ ի Հնդիկս, որ հարցեալ էիր, չունիմք զնմանէ զհամբաւս ինչ. այլ մեք յանցեալ տարւոջն դրեալ եմք վասն նորա ըզյանձնարարութիւնս առ նուիրակն մեր, և առ Շամիր աղայն, որպէս և ի հոկտեմբերի ելն ազդեալ եմք քեզ ի միամտիլ: Յաղագս ի Ֆեապուլ գտանեցեալ քրիստոնէիցն, որ դրեալ էիր զկարգաւոր յղել, գիտես զի յայս կողմունքս աւելորդ և պատեհ քահանայք ոչ գոն. և այժմոյս յուղարկելն աստի դժուարին վասն ճանապարհաց յոյժ վտանգաւորելոյն, այլ դրելոց եմք ի Ջուղայ նորոգ առաջնորդ վարդապետին, հոգ տանիլ՝ որպէս կարելի իցէ:

Եկեսցուք ի բանս երրորդի թղթոյդ: Պ. Եսայեան յղեալ դրամոցդ և Գանետուրին, և արծուոյն աղագաւ որ գըրես, թէպէտ յիրաւի վասն Արծուոյն ի մոռացմանէ ոչ ունիմք դրեալ քեզ ինչ, սակայն՝ վասն գոնետուրին, և դրամոցն որքան մեզ հասանեալք, և որքան դեռ մնալոյն առ պ. Եսային, ծանուցեալ եմք քեզ ի հոկտեմբերի ելն, թէ՝ առ մեզ հասանելի դրամոյն զմեծ մասն հատոյց, և սակաւ ինչ մնաց ի վերայ իւր, և զՎարդան վարդապետինն ես հասուցեալ, մնաց նմա ես տալոյ 88 թուման, և այնր աղագաւ ես մեզ թամասուք ետ, կտրելով զբանն ի Վարդան վարդապետէն, ապա գնաց ի յԱխալցխայ վասն հին առնելեաց իւրոց. երբ գայցէ, և զմնացորդն ես հատուսցէ, յայնժամ զղապղ եմ տալոց նմա հասուցանել քեզ: Յայնժամ այսպէս եմք դրեալ քեզ: Բայց դու որ ի մէնջ զղապղ խնդրես, մեք որպէս թողեալ զԵսային՝ առ քեզ յղեսցուք զղավզն, մինչ նա աղաղակէ թէ՝ ես ԲՃ. թումանի ղապզն յատուկ ունիմ առ նա, զԱՃԾԱ թումանի և ԵՌ-դնի ղապզ ես ուրոյն եմ տուեալ, զձեր ղավզն ես պարտիմ առնուլ և նմա հասուցանել, որ զիմ ղապզերն յետս առնուցում: Ահա բանն այսպէս է. առ այս վրդովիլ ինչ չէ պիտոյ: Յայնմհետէ՝ խղճալի Եսային երկիցս գնաց յԱխալցխայ և դարձաւ, ոչ ինչ օգտեցեալ ի վճռոյն որ ընդ պարտատէրսն: Ապա գնաց ի Խօյ, և այժմ դարձեալ անտի գնաց ի Թիֆլիզ և վասն ախալցխացւոց վճռոյն, և խոստացաւ շուտով դառնալ անտի այսր, և զտալիսն մեր տալ, և ես զառ քեզ գրելի Ղավզն առնուլ, և յղել: Բայց ի կողմանէ արծուոյն ահա գրեմք, որ ամբողջապէս առ մեզ էհաս, և շնորհակալութիւն մեծ ունիմք զքէն, և օրհնեմք զտուօղսն. առ որս և զշնորհակալութեան թուղթ եմք դրելոց ի հարկէ: Ի կողմանէ Վարդան վարդապետին որ զկարծիս ինչ առնլով զոմանս անվայելուչ խօսս դրօշմեալ էիր, ընդ վայր էր. զի նա յառաջ քան զայս առաքեցեալ եղև ի գործ նուիրակութեան Յամթայ վիճակին. զոր դիտելով քոյ անհոգ լեր: Այլև

վասն ցաւոյն քեզ հանդիպելոյ ալամեցաք, թէև դու ի խղճէ քումմէ առաջնորդելով իբր յուրախութիւն մեզ էիր աղդեալ զանբարի դիպուածն. բայց գիտեա, զի մեք թէպէտ ի բազմաց բազում կերպիւք վշտանամք, սակայն ոչ և միում զվատ ինչ կամիմք, բաս որում հայր հասարակաց եմք կոչեցեալ. այլ մանաւանդ զբարիս խնդրեմք. այսպէս և առ սիրելի որդիդ մեր։ Ուրեմն զայդ ամենայն ինքնակարծ մածմունսդ ի բաց դիր։ Իսկ զի ի յետին թուղթդ ոչ էիր յիշեալ զայնմանէ ցաւոյ, ուրախացաք վերստին, համարելով թէ՝ բարձեալ իցէ ի քէն, զոր և իսպառ հեռի արասցէ Տէր, պահելով յառողջութեան զսիրելի որդիդ մեր։ Նաև՝ վասն նուիրակութեան և սրբալոյս Մեռոնի, զոր ինչ գրեալ էիր, առ այն զայս իմա. զի ոչ ապաքէն յառաջագոյն ի յառանձնական թղթոջդ զհրաժարիլ էիր ցուցեալ ի նուիրական գործոյն, գրելովդ թէ՝ անկարացեալ եմ, և ոչ կարեմ ինքնին շրջել, զյատուկ նուիրակ յղեա, և այլն։ Այնր աղագաւ և մեր տեսանելով թէ՝ վերադառնալդ ի սուրբ Աթոռս ոչ յաջողի, և յայդր ևս ոչ ունիս ձեռնհասութիւն առ կրկին աշխատութիւն նոյնոյ գործոյ՝ յակամայ կամս հաճեցաք զյատուկ նուիրակ առաքել. որպէս և ի հոկտեմբերի ելն ընդ թղթոյն մերոյ առանձնական փուսուլայիւ ծանուցաք քեզ թէ՝ զնուիրակ եմք պատրաստելոց, առ ի յղել, և այլն։ Իսկ այժմ զՄեռոն յղել խնդրես, որ է ներհակ առաջնոյ խնդրոյդ, և անպատեհ իմն, զի որպէս թէ զսրբալոյս Մեռոնն իբրև զհասարակ ինչ իրս ձեռաց ի ձեռս արկանելով աշխարհականաց, այնպէս պարտիմք յղել։ Այլ մեք որպէս յառաջ ի խնդրոյ քումմէ հարկեցեալ, խոստացաք, ըստ այնմ դրեցելոյ մերոյ առաջադրեալ ունիմք զՄեռոնն սուրբ ի ձեռն պատշաճաւոր նուիրակի յուղարկել. որ նա զնուիրակութեան գործն արասցէ, և դու սիրելիդ մեր ի յԱռաջնորդական հոգադ լիցիս։ Եւ նարդենիս թէպէտ դժուարին է, մինչ Ումանխանն լեզկի յորջացեալ է ի Շուշի, և ճանապարհքն ապականեալք են, և մեք ևս ի կասկածանաց անհանգիստ և հոգսալից կամք. սակայն՝ զպատրաստութիւն տեսեալ. յետ միջոցի միոյ մինչ խաղաղասցին ճանապարհքն, ուղևորեսցուք։ Ցիրաւի, թէպէտ արդեանց սրբոյ Աթոռոյս յետացումն և պակասութիւն լինի, որպէս և դու սրտացաւօրէն գրեալ էիր. սակայն ոչ թէ կորնչին, այլ առ օրհնեալ ժողովուրդն մեր մնան. հոգ չէ։ Այսպէս գիտելով միամիտ լեր։ Այլ և կրկին առ մհի Գալուստնն յղեալ պահարանաւ թուղթդ հանդերձ յԱմասիա և ի Թօխաթ հասանելի թղթովքն ժամանեցին, զորս և մեք յանցեալ աւուրսն յղեցաք ի տեղիս իւրեանց։ Ցաղագս անօրինակ դիպուածոց Նաշ քաղաքին՝ զոր զեկուցեալ էիր, մորմոքեցաք ի սիրտ և յոգի, Աստուծոյ այցելութիւն ժամանեսցէ առ մեբայինսն։ Իսկ ի Զորրորդ թղթոջդ աւետարանեալ էիր վասն ազատութիւն տալոյ Մեծի Կայսերուհւոյն, խղճալի մերազնեայցն ի նոր օրինադրութենէն, առ ի մնալ յառաջնում կարգին՝ որպէս էին. առ որ յոյժ ուրախացեալ գոհացաք զԱստուծոյ։ Եւ ի վերայ Հաշտարխանու, Ղզլարու և Մօզգօքու, այլ և ի վերայ Ղզլարու յատուկ և ի վերայ Նախիջևանու ևս յատուկ կոնդակս էիր խնդրեալ ըստ պատշաճի իրացն, ընդ որս և առ ոմանս տուօղս տրոց զշնորհակալութիւնս, և առ Պայծառափայլն, և առ ազնիւսն մեբազունս, զթուղթս առ հարկացն, հաճեցաք ի գրել, յորս և ձեռնարկեսցուք իսկ յառաջիկայ աւուրքս։ Այլ զամէնն ի միասին ընդ նորոգ նուիրակին եմք առաքելոց, որք ևս գիտութեամբ քով հասցին ի տեղիս իւրեանց և առ տեարսն։ Բայց ի խնդրեալ թղթոցդ զերիսն յառաջ յղեալ եմք. որոց մին էր ի Հաշտարխան առ Թիֆլիզեցի նոր Քէթխուդէնց Դաւթեան Յովհաննէսն, վասն եղբօր իւրոյ Գրիգորի դիազարդ շուրջառին. մինն ի Ղզլար առ Մհի Գրիգորն, վասն իւր կրտակ ԺԳ. թումանին, և հանգուցեալ որդոյն իւրոյ Սարգսի դիազարդ դեղին դիպայ շուրջառին. և մինն առ Յօհանջանն վասն արծաթեայ Աղաւնոյն։ Այլ այսքան ինչ գոյ. որ զայն թուղթն զոր ի վերայ Մհի Գրիգորին էիր խնդրեալ վասն ԺԳ. թուման կտակի իւրոյ և որգւոյն դիազարդին, այժմ զՄհի Գրիգորն հանգուցեալ գրելով, զայն թուղթ ի վերայ որդւոցն նորա պ. Յարութիւնին և պ. Յօհանին խնդրես, և զՄհի Գրիգորի կտակն զոր յայնժամ ԺԳ. թուման էիր գրեալ, այժմ Ժ. թուման գրես.

վասնորոյ տարակուսեցաք։Արդ՝ այն Թուղթքն մեր եթէ փորձանաց չիցեն դիպեալ, ի հարկէ հասեալ լինին առ քեզ մինչև ցարդ. ուրեմն ողոպէսն և զհարկաւորն երկուց զանազան դրեցելոցդ իմացս տացես մեզ, և եթէ առ որդիսն Մհի Գրիգորին կրկին Թուղթ գրել հարկ լինիցի, դրեսցուք։ Եւ եթէ Թուղթքն չիցեն հասեալք, զերիսն ես վերստին դրեսցուք։ Այսքան առ այս։ Բայց որ զքանիս առանց անուան Թուղթս ե՛ս էիր խնդրեալ, այնպիսի Թուղթ տալն ի վաղուց վերացեալ է, ըստ որում կասկածաւոր բան է, և մեք ես չունիմք արարեալ ընաւ։ Իսկ ի կողմանէ ԲՃԾ, Թուման փոլիցային մերոյ ի ձեռն Ղալգեան պ. Բաղդասարին արարեցելոյ ի վերայ քոյ, որ դրեալ էիր զԱՃԾըն տուեալ գոլ, և զԱՃԾ-ըն ես տալոց լինիլ, շնորհակալ եմք զսիրելի որդւոյդ մերմէ. զի արդարև յայս նեղ ժամանակիս գրեթէ օգնութիւն իմն ընծայեցեր սրբոյ Աթոռւոյս շնորհատու ծնողիս քոյ, որոյ վասն ի Քրիստոսէ վարձատրեսցին, և ի սրբոյ Իջման տեղւոյս նորին ես առցես զհատուցումն բարի։ Այլ որ սակս այնորիկ ես զզաւզ խընդրես, ահա (Թող զբարեագիրն որ ընդ նմա.) այն փոլիցագիրն զոր տուեալ էաք նմա, միանգամայն և զաւզ է. զոր ի տալդ զմնացեալ դրամսն, ի հարկէ առնելոց ես, և մեզ դրելոց. և մեք կրկին շնորհակալելոց եմք զսիրելւոյդ։ Ի Ղզլարու յոմանց դրեալ Թուղթն ի Սալմաստ առ ընտանին իւրեանց ունիմք առ մեզ. այժմ Սալմաստ ի վրդովման կայ վասն կողման իշխողացն ընդ միմեանս անկանելոյն. յետ աւուրց ի հանդարտիլն յղելոց եմք։ Եւ զոր խնդրեալ էիր, զի մինչ Մեռոն օրհնելոց իցեմք, վիճակայնոցդ իմացումն տայցեմք Զ. ամսով յառաջ, յայսմ ամի ոչ լինի. այլ Թէ ի գալ տարւոյ գարնանն լինելոց իցէ, յառաջնիկայ աշնանս ազգեցուք։ Այսքանս իբրու համառօտ պատասխանիք դրեցելոցդ։ Ապա զայս և՛ս ծանիր. զի յանցեալ տարիսն ի Նոր Նախիջևանու որ ուխտաւորք եկին, ոչ յաջողելով նոցա գնալ ի Մշու սուրբ Կարապետի վանսն յուխտ, երկուքն ի նոցանէ Մանուէլ՝ և տիրացու Մկրտիչ անուամբք, զտուրս ինչ ետուն յղել անդ, և յԱռաջնորդէն զԹուղթս բերել և յըղել առ ինքեանց։ Եւ մեք զդրամսն հասուցեալ՝ զԹուղթսն բերել ետուք. բայց Լեզկեաց յարուցումն և վրդովումն մեր վերաժամանեալ՝ Թուղթքն այնոքիկ անյայտացեալ էին ի մէջ այլ Թղթոց և մոռացեալ էաք. բայց այժմ յանկարծ դրեալ՝ ահա հանդերձ մերով օրհնութեան Թղթով պահարանեալ յղեցաք ընդ Թղթոյս ի ձեռս քո. վասնորոյ՝ գրեմ սիրելւոյդ. զի հասուսցես նոցա առ ի միամտիլ։ Եւ արդ՝ այսու յայտ է՝ Թէ յորմէ հետէ վրդովեալ է երկիրս, որքան են առաւելեալ ցաւք և զբաղմունք մեր։ Առ այն և ոչ կարեմք գոլ ձեռնհաս, զամենայն ինչ յիւրում ժամու առնել։ Որպէս և յերկար միջոցի, ոչ դիպեցաւ պատասխանի առնել Թղթոց քոց. ուրեմն՝ սիրելի որդիդ մեր զայսպիսի տաժանելի հոգս մեր գիտացեալ պատճառ յամեցման Թղթոյս, մի՛ զայլ և այլս մտածիցես. այլ ի դէպ ժամս զհարազատական և որպիսածանոյց Թուղթդ անպակաս արասցես, ոչ վերջանալով յորդիական սիրոյ և ի մտերմութենէ՝ որ առ ս. Աթոռս և առ մեզ։ Ողջ լեր ի Տէր. գրեցաւ ի ՌՄԼԷ. Թուոջս ի մայիսի Ա. ի Լուսակառոյց Աթոռս ս. Էջմիածին։

ԺԸ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին

Սիրեցեալ որդի տէր Ստեփան համեստազարդ քահանայ

Ուրախարար գիրդ Բռնդառուշէռու գրեցեալ ի փետրվարի 16, յամսոյս 12-ին ընկալայ, մեծաւ խնդութեամբ, զի բաց ի Հալապու գրեցեալ թղթոցդ, ի Բաղդատու և ի Բասրայու մինչև ցայժմ ի քէն և յայլոց թուղթ ոչ եմ տեսեալ, և ոչինչ գիտեմ զքէն, վասն այն ի մեծի տարակուսի կայի. այժմ միամտեալ փառս մատուցի Աստուծոյ, նախ վասն առողջութեանդ, երկրորդ յաջող հասանելոյդ. Յիսուս միածինն տացէ քեզ կեանս, զի առողջութեամբ լեալ յամենայն ուրեք յաջողութեամբ ելցես և զմեզ արժանացուսցէ տեսութեան քոյ. Նախիջևան քաղաքն ամենայն աղօթարար են վասն քոյ. և փափագանօք սպասեն գալստեանդ, յորմէ հետէ մարան սկսեալ են, ի մահտեսի Գալստեանէն և ի տիրացու Գրիգորէն գիր ոչ ունիմ, և զորպիսութիւն թագի և այլոց ոչ գիտեմ, թէպէտ մեք յամենայն ժամ գրեմք առ նոսա և ի ձեռս սրբազան Կաթողիկոսին առաքեմք, բայց ոչինչ պատասխան ոչ ունիմք, թագն ի զուր եղև վասն մեր, մինչ յամս երեք դեղերիմք, և կատարումն ոչ տեսանեմք, և չեմք տեսանելոց։ Շնորհակալ եմ որ ԴԾ. դուռուշն գտեալ ես. վասն արծաթին տէր Յարութիւնի ոչինչ ես գրեալ, կայր թէ ոչ։ Քալանթարեան պ. Վարդանին, ահա շնորհակալութիւն դրեցի վասն ԵԾ. դուռուշին, Աստուած զինքն օրհնէ միշտապէս հանդերձ եղբարբն, եղբարքն նորա և պ. Բալդամն ուր և գտցես, յինէն օրհնութիւն մատուցես։ Պ. Դուութբէգին ևս գրեցի գիր, որպէս և խնդրեալ էիր, ժամագիրք և աստուածադերս առաքեցի ի Ջուղայ առաքել առ նա։ Նոյնպէս գրեցի և պ. Յովհաննիսին Բէթղէհէմեան. ի նմանէ ևս ոչ ունիմ գիր։ Ջանասցես մեզ դրամ հասուցանել ի վերայ Բասրայու և կամ Ջուղայու առաքելով առ Յակոբ վարդապետն և կամ առ պ. Մկրտումի եղբայր պ. Կարապետն Գալըստեան, նազդ և կամ վէճ, եթէ Բարձրեալն յաջողեսցէ Ջաֆարխանին, տիրել պարսից, կարծեմ մեծ խաղաղութիւն լինիլ երկրին, որպէս յաւուրս Քերիմխանին, յայնժամ ի վերայ պարսից ձեռընտու է քեզ դալն և կամ ամանաթ առաքելն։ Պ. Եսային ի Թիֆլիզ է, վասն ձեր տանն միամիտ լինիս, զի լըցուցանէ զհրամայեալս մեր։ Նանինին գրեցի ի Մօսկով, որ զքեզ վէքիլ արասցէ. այժմ չեղև ի նոցանէ պատասխան ընկալնուլն, երբ ընկալնում ի վերայ Ջուղայու գրեցից քեզ, յուսամ որ կատարումն արասցէ։ Որպէս յառաջ դրած եմ, տպարանն մեք առաք 22, հազար երկու հարիւր թումանով, ԳՃՁ. թուման ետուք, ինն հարիւր թուման մնաց պարտք ի վերայ մեր, բաց ի յայլ ծախուցն, ես յուսով Հնդկաց օրհնեալ ժողովրդեանն մտի ի ներքոյ պարտուցս և ծանրութեանցս, տակաւին դեռ ի Սանկթպետերբուրղէ. Թադէոս վարդապետն ևս անդ գոլով, Ընդհանրականն տպեցաւ, ապա դեռ չէ եկեալ, ի գարնանն բաւական առաքեցից յայդ կողմունս։ Յուսով եմ որ սիրելի ազգն մեր ի սէր նորա խանդաղատեալ ի տեսանելն, բաւական քաղցրութիւն անտի ճաշակեսցեն, և գեղեցկութեամբ նորին զմայլեսցին, մանաւանդ ի վերայ թարգմանչաց պատկերացն որ ի նմա, թագաւորաց նշանն մեր, քանդակել ետու, իբրև զկնիք, և հանդերձ մեկնութեամբ Ընդհանրականին տեղաւորեցի, որոյ օրինակն առաքեցի առ քեզ, տեսեալ և ուրախացեալ, ցուցցես ամենայն մըտերմիցն մերոց. եթէ կեանս ունիցիմ, և ևս յառաջացուցանելոց եմ զբազում ազգաօգուտ բարիս, միայն թէ ինձ ձեռնտու լինիցին, թղթոյ քարխանայ ևս կարող եմ շինել ի վերայ աղբերցն վանքի. վանքն մեր աւարտեցաւ Աստուծով և յառաջի տարւոյս օծեալ լինելոց է։ Մնայ սուրբ Լուսաւորիչն և գալստեանդ սպասէ։ Նախիջևան շատ շէնքս է աւելացեալ, բոլորն քարեայ և գեղեցիկ, Ղռիմ այժմ որպէս թէ աւերակ է, Փափաջեցիք ի Նախիջևան եկին վասն մարտին. մարտն տակաւին կայ ի վերայ Օզուին, որպէս երևի մերձ է առնանիլ հանդերձ շրջակայիւքն. Աստուած վախճանն խաղաղութիւն շնորհեսցէ մեզ. մեծ փառս եղև և լինի, որ թղթոց երթևեկութիւնն մեր ի Պօլսոյ կարեցաւ։ Քանի մի բան էի խնդրեալ ի քէն ի Բասրայու առաքել. դեռ ի Բաղդատու և ի

Բասրայու գրեցեալ թուղթսդ ընկալեալ չեմ, և չգիտեմ իր ինչ առաքեալ ես թէ ոչ. զի ի թուղթդ ընաւ ի Բաղդատու և ի Բասրայու ոչինչ չէիր գրեալ, բաց ի Դժ. դուռուշէն և ի Քալանթարեանի տուելոցն. պատուիրեմ ի գրելդ գիր, միւս գիր ես որ գըրեալ իցես, նորին զօրութիւնն ես ի վերջին գիրդ դիցես. որ եթէ յառաջինն յուշ հասցէ մեզ, յետի հասեցելոյն և յառաջինն դիտասցուք. որպէս այժմ ահա կամ ի յերկմտութեան՝ վասն ի Բաղդատու և ի Բասրայու դրեցելոցդ թէ զինչ արդեօք իցես գըրեալ. Շէկաց հէնն, հանեալ եղե ի հայրենեաց մերոց, և չէ կարելի ի սոցանէ օգնական լինիլ նոցա յայսմհետէ։ Իսկ Բագրատունին այժմ հաշտեալ է ընդ իշխանին Տայոց որ լագզիքն մի ես յաճախեսցեն ի վերայ ինքեանց. այժմ նոքա խաղաղ են։ Արքայն կամի ի ներկայս գնալ ի վերայ Շուշու, թերևս մելիքքն մեր հաստատեսցէ ի տեղի իւրեանց, որ ահա ամ. և կէս է, ի Թիլֆիզ դեգերին, որդիքն Ադամայ և Յովսէփի իշխանացն։ Ո՛հ ցաւոյս. մեր ողորմելի Շիօշն ի յԱլգէտ ջրահեղձ է լեալ, և վասն մեր մեծ կսկիծ թողեալ։ Երևանցի պ. Ստեփաննն Տէր Սահակեան գեռ. առ մեծ իշխանն է, Շուէթքն ընդ սոցա կռիւ բացին, ապա բազում անգամ յաղթեցեալք նկուն եղեն նոքա և ոչընչացան։ Աղայ Յովհաննէսն Եղիազարեան ի Պետրբուրգու եկեալ աստ ամենայն տամբն, և մեք ի ճանապարհին հանդիպեալ նոցա. զմեզ առեալ բերին ի Հաշտարխան. ի դեկտեմբերին նոքա գնալոց են աստի ի Մօսկով, և մեք ի Նախիջևան։ Հաշտարխանցի Տէր Բաղդասարի յաղագս գրես, կենդանի է թէ մեռեալ. որոյ վասն մեք և ընտանիք նորա, միամտիլ կարասցուք։ Որպէս և իցէ հնարեսցես, յառաջիկայ տարւոյս յօգնութիւն հասանիլ մեզ, լինի թէ տպարանի պարտուցն զերծեալ մեզ մնասցէ բոլորովին, զի մինչ փողն ոչ տացուք. մեք միամտութիւն ոչ կարեմք ստանալ վասն նորա։ Եփրեմ վարդապետ քաղցրիկ եղբայր իմ, եթէ մերձ իցէ քեզ, յինէն փափագանօք ողջոյն մատո, սուրբ Աթոռն և մեր Մկրտիչ և Իսահակ վարդապետքն, Աստուծով լաւ են։ Նաև մէկ սանդղով գրեանք, որք էին 15 հատ աստուածաղերս, 30 հատ Յիսուս որդի, 10 հատ ժամագիրք, 50 հատ այբբենական տետր. և հինգ հատ հաւատով խոստովանիմ. թարգմանեալ հայերէն և ռուսերէն, առաքեցաք ի Ջուղայ պ. Մկրտումի եղբայր պ. Կարապետին Գալստեան, Բասրայունն և Բաղդատունն, իւր գրովն առաքել ցտեարսն, իսկ մնացեալ գրեանքն ուղղեսցել ի Սուրաթ, Թիֆլիզեցի հանգուցեալ Արապիոնեան Յովսէփի որդի պ. Ստեփաննին, յանձնել քեզ իւր ձեռօքն։ Այս թղթոյս մի օրինակն ի վերայ Ջուղայու եմ առաքեալ առ քեզ. ի հոկտեմբերին. այս ի վերայ Ինգլիզու ի թուղթս Շամիրամ Աղային, 'ի վերայ Պետրպօլքու։

Վեց հատ լաւ զարով ղալամքար եօրղան շինել տացես. միջակ շինել և ոչ շատ ձիգ. նմանապէս և այլ ճոթք զար ղալամքար. և եազլումէք։ Ամենայն տեղիս ուր և հանդիպիս՝ տեղւոյ քահանայիցն և ժողովրդեանն՝ ի մէնջ օրհնութիւն մատուցես։ Եւ յամենայն ժամ. վասն ձեր միշտ աղօթարար՝

Յովսէփ Արքեպիսկոպոս
առաջնորդ երկրի հայոց ազգին.

1788 նոյեմբերի 21
'ի Հաշտարխան.

ԺԲ. Թուղթ Ղուկաս Կաթողիկոսի ի Հաշտարխան առ Յովսէփ վրդ. փոխանակ չորից գրեալ թղթոց նորա. ի պատասխանի ոմանց բանիցն՝ որք հարկաւորք էին.

Յորմէ սիրով մեծաւ և օրհնութեամբ, քրիստոսական սուրբ ողջունիւ և սրբոյ իջման տեղւոյս նորին մշտածաւալ շնորհիւն ծանիր սիրելի և հոգևոր որդիդ մեր և հարազատ զաւակ ս. Աթոռոյս Յովսէփ աստուա-

ծաբան վարդապետ։ Զի 'ի մայիսի մուան մինչ թուղթ գրեցաք քեզ, և խոստացաք զնուիրակ առաքել յայդր ըստ յօժարութիւն ցուցանելոյդ, այնուհետև կամ եղև մեզ զպատրաստութիւն տեսանել։ Այլ ծանր հիւանդութիւն պատահեալ մեզ, և երկարեալ, ոչ յաջողեցաւ. զի յաղագս այնր ցաւոց, որովհետև տեղւոյս օդն ևս ծանր է յամառանն, յորդորեցեալ 'ի բազմաց գնացաք 'ի հեռակայ վանորայսն մեր, և 'ի Ղրխպուլախ, և 'ի Մասսեաց ոտն 'ի յաղբիւր սրբոյն Յակոբայ, և առ միջոց մի կացեալ յայնս տեղիս՝ ողորմութեամբն Աստուծոյ զառողջութիւն գտաք, և վերադարձաք. բայց 'ի վերադառնալն ևս նորակերպ դառնութիւն էր յառաջացեալ. զի զթիֆլիզեցի Ստեփաննոս անուն սևագլուխն մուլքանաճի էաք կարգեալ 'ի գեղջն և նա 'ի գալ ոմանց թուրքաց յայգիսն վասն խաղողազողութեան, քանի դրացօք գնացեալ էր առ 'ի վարել անտի. և 'ի պատահիլն միմեանց՝ թուրքաց մինն հարմամբ փայտի անկեալ էր։ Որոյ աղագաւ ոչ կարացաք շուտով զգլուխ թափել 'ի վշտալի հոգոց՝ եթէ ոչ յետ բազում նեղութեանց և վնասակրութեանց 'ի յերկրացւոցս՝ 'ի հանապազորդ նեղչաց մերոց։ Ապա՝ մինչ նոր ձեռնարկեցաք 'ի գրութիւնս թղթոցն 'ի քէն խնդրեցելոց՝, և 'իպատրաստութիւն նուիրակի, հասին առ մեզ քանիցս գրեցեալ թուղթք քո. որովք ծանուցեալ մեր թէ՝ զառաջին ոճն փոխեալ՝ ոչ յօժարիս ընդ նոր նուիրակ առաքել, թոյլատրեցաք առաջադրութեան և թղթագրութեան. և հետևաբար այլ զբաղանօք զբաղեալ՝ հասաք մինչև ցարդ։ Եւ այժմ ընկալաք զթուղթդ 'ի Հաշտարխանու գրեցեալ 'ի սեպտեմբերի ԻԲ, և հարկաւորեցաք 'ի գրել սիրելւոյդ զայս թուղթ՝ 'ի պատասխանի թղթոց քոց։ Արդ՝ 'ի թուղթսդ իբրև հաստատեալ էիր 'ի վերայ մեր՝ որպէս թէ մեք գրեալ իցեմք քեզ թէ եպիսկոպոս եմք յղելոց յայդր. և թէ՝ Սաղիմացւոցն եպիսկոպոսի բաշբօրթ իցեմք տուեալ. և Հաշտարխանցիք և՛ս այնպէս հասկացեալ՝ ըստ նոյն մտաց էին գրեալ զթուղթն իւրեանց համարձակօրէն։ Բայց սիրելիդ իմ, մեք ըստ քո խնդրոյն խոստացաք զօք նուիրակ յղել։ Եւ վասն Սաղիմայ նուիրակին՝ գրեցաք թէ պատրիարգն մեզ եպիսկոպոս էր գրեալ, և նոցա վէքիլ տիրացու Սարգիսն՝ վարդապետ էր յիշեալ. բայց մեք վարդապետի անուամբ բաշբօրթ և կոնդակ գրեցաք. և ո՛չ եպիսկոպոսի։ Ապա դու որպէս ես կարդացեալ զմեր գրածն՝ որ այնպէս է ազդեցեալ 'ի միտսդ, և Հաշտարխանցիք ևս ուստի՞ իմացան՝ որ այնպէս գրեն։ Այլ եթէ մեք եպիսկոպոսի բաշբօրթ էաք տուեալ և կոնդակ, թերևս յղեալ իցէին զնուիրակն յայդկոյս. բայց 'ի վաղուց դարձուցեալ են 'ի Պօլսոյ յետս, և ոչ գիտեմք յինչ միտս են։ Ուրեմն՝ ահա ընդ վայր կարծիք և գրութիւն է զոր արարեալ էք։ Եւ զքոյդ ցաւսն զոր յիշեալ էիր թէ դեռ ունիմ, այն ևս տրտմութիւն ետ սրտի մերոյ. փարատեսցէ Տէր զայնս 'ի սիրելի որդւոյդ, և կատարելապէս առողջութիւն պարգևեսցէ։ Ծանուցեալ էիր հասուցանել զթուղթսն մեր Տէր Ստեփանի ձեռամբն առ դեսպանն Եմփերատօրի, և զնորա պատասխանին առ մեզ յղեալ էիր հանդերձ առ քեզ գրեցելոյ թարգմանութեամբն. զորս տեսեալ փոքր մի միամտեցաք. այլ թէ 'ի կայսերէն զինչ պատասխանիք ելցեն, զայն ևս ազդեսցես։ Առ ոմանս վասն յիշատակատուութեան թուղթս էիր խնդրեալ, զորս 'ի ձեռնհաս ժամանակի գրեսցուք։ Այլ վասն Ղզլարցի հանդուցեալ Մահտեսի Գրիգորի կտակին, որ հարցեալ էաք, վասն ճրպէս գրելոյ թղթոյն՝ դու այլ իմն կերպիւ ես հասկացեալ՝ և թէ այլ ևս թուղթ է պիտոյ գրել առ որդիսն, թէ ոչ, չէիր ծանուցեալ։ Հաշտարխանցւոց թղթոյն այժմ պատասխանի ոչ գրեցաք, յորժամ զայլ խնդրեցեալ թուղթսըդ գրելոց իցեմք, յայնժամ և զայն գրեսցուք որպէս արժան է։ Յաղագս 'ի Պօլիս լինելի թագին, որ քանիցս թուղթս գրեցեր առ Մահտեսի Գալուստանն, յղեցաք 'ի ձեռն Մինաս վարդապետին, և նա հասուցեալ է նորա։ Բայց գրէ մեզ թէ՝ զթուղթսն ետու, և վասն թագին խօսեցայ. պատասխանեաց թէ թագի մարգարիտն գրեալ եմ 'ի Բաղդատու գալ, և ճանապարհքն լաւ չեն. և թէ՝ թղթոցն պատասխանի խնդրեցի, ասաց թէ՝ այժմ ես հարկաւոր բան չունիմ որ գրեմ։ Այսպէս էր գրեալ մեզ Մինաս վարդապետն, իսկ մեք զյետին թուղթդ ևս որ առ Մահտեսի Գալստանն, յղեցաք 'ի նոյեմբերի ԺԵ։ Տեսցուք թէ պատասխանի գրիցէ, յղեսցուք.

և թէ զինչ առնիցէ, ծանուսցուք։ Իսկ և 'ի 1783 թուոյն սկսեալ նուիրակութեան և առաջնորդութեան մտից և ելից հաշիւսն մինչև 'ի 1788 թիւս, որ գրեալ և յղեալ էիր՝ էհաս, թէև մեք չէաք խնդրեալ 'ի քէն զդաւթար, այլ դու բարեմտութեամբ արարեալ էիր, զոր առաք, և զհասուցեալսդ 'ի սուրբ Աթոռս առ մեզ՝ մեր ձեռաց դաւթարին համեմատ գտաք։ Եւ զոր գրես 'ի նոյն դաւթարոջն՝ թէ՝ 'ի 1783 թուին, առաջին նուիրակութեան բոլոր մտից և ելից հաշիւն յղեալ եմ 'ի սուրբ Աթոռն, յորում յայտնի է՝ որ յիմոց արդեանցն աւելի փող է անցած, և այլն։ 'Ի հարկէ մինչ մնացած է՝ վեր ես առնլոց, և ոչ թէ վնաս կրելոց. զի հարազատ որդի ես սրբոյ Աթոռոյս։ Բայց այն թէ յԱթոռն եմ յղեալ զդաւթարն, մեք ի քէն զդաւթար չեմք խնդրեալ և չեմք ընկալեալ։ Բայց 'ի 1783 թուին մինչ զԱւետիս վարդապետն 'ի սարկաւագութեան յղեալ էիր 'ի սուրբ Աթոռս և առ մեզ, ընդ նմա թուղթ էիր գրեալ, և նովաւ յղեալ դրամսըդ նշանակեալ. մանաւանդ 'ի կողմանէ Սագիմայ արդեանցն և սրբոյ Աթոռոյս արդեանցըն առ մեզ հասուցելոց զՂավզեր էիր խընդրեալ։ Իսկ դաւթարս ոչ գոյր ընդ նմա։ Այլ գրեալ էիր թէ՝ յորժամ զդաւթարն առցես, յայնժամ ես գիտելոց, յորում որպէս ըզեալուրն՝ նոյնպէս և զխարջն գրեալ ունիմք, ըստ շաւղաց յարգելի եղբօրն իմոյ Մինասայ վարդապետի։ Եւ նա Աւետիք վարդապետն ԲՃ թուման հասոյց մեզ. ԲՃ թուման ևս Եսային էր հասուցեալ. ՋՂ թուման, ԳՌ ՐՃԺ Դիան ևս ըստ խնդրոյ մերոյ յղեալ վէճիցդ գինն էր։ Ցորմէ ԺԵ թուման հանեալ՝ ետուք երից Վանորէիցն՝ սրբոց կուսանաց 'ի տեղի լուսահոգի Գրիգոր Աղայի կտակին և մնաց ՀԱ թուման ԳՌՐՃԺ դիան. որ վերոյ գրեալ երեք ղալամից ջամն եղև ԳՃՀԱ թուման, ԳՌՐՃԺ գիան։ Որոյ աղանէաւ և մեք զղավղ գրեալ ետուք Աւետիք վարդապետին՝ որ եբեր առ քեզ։ Այլ դաւթար խնդրել ոչ հարկաւորեցաւ մեզ յայնժամ. կարծելով թէ՝ յետ կատարելոյդ զկրկին գործդ՝ եկեսցես, և որ ինչ հաշիւք իցեն, յայնժամ տեսանիցեն։ Բայց զի այդպէս եղև, որ մընացեր, և այժմ առանց հարկեցման քեղէն, զնորանց գործոյդ զդաւթարն յղեալ ես, ուղղբեմ՝ զհնոյն ես նոյնպէս ողջամտութեամբ օր մի յառաջ յղեսցես, որ իբր թէ առաւել ես միամտութիւն լիցի։ Եւ զոր ինչ հասուցեալ ես, դեռ ևս 'ի մեր յատուկ դաւթարն չէ՛ գրեցեալ, համարելով թէ շուտով լինիցէր գալդ, այժմ զի յամեցար, զհինն ևս ընդ նոր արդեանցդ քարշեսցուք 'ի դաւթարն 'ի կարգս այլոցն, նշանակելով թէ՝ յառաջին նուիրակութեան այսքան ինչ առ լուսահոգին է հասուցեալ, և այսքան ինչ առ մեզ։ Այլ զայս և՛ս գիտասցես՝ զի հանգուցեալ Գրիգոր Աղայի կտակն որ վասն Խորվիրապի սրբոյ Վանիցն, Ե թուման, մոռացմամբ ոչ հանաք յայնժամ 'ի վերոյ յիշեալ դրամոցն, որովհետև դեռ չէաք հասուցեալ զայն՝ սրբոյ Վանիցն այնմիկ, և մնաց մինչև ցայսօր. վասնորոյ զայն Ե թումանն դու սիրելիդ պարտիս հասուցանել մեզ, և նշանակել ի դաւթարոջդ. զոր և մեք տացուք ի սուրբ վանսն Խորվիրապի, նոյնպէս և յանուն նորա յայդր հաստատեալ զանձանակաց արգիւնքն որ յայսքան ամս մնացեալ են, պահանջեսցես ի զանձապետացն և առնուցուս. և նշանակեալ ի դաւթարոջդ զորքանն՝ մեզ ևս գրեսցես, որ հասուսցուք յայն սուրբ Տունն վասն բազմակերպ պակասութեանցն հոգալոյ։ Այսքան առ այս շատ լիցի։ Ցետին թղթովդ՝ իմացաք զգալն նոր պօլկօվնիկ Ազնիւ Աղայ—Յովհաննէս սիրելւոյն մերոյ հանդերձ օրհնեալ տամբն ի Սարփթայ, և ի Հաշտարխան, և զհանդիպելն ձեր միմեանց, և զայլն. և ուրախացաք ընդ մօտիլն նորա յայսկոյս. իցէ թէ և ի սուրբ գահս եկեսցէ։ Ահա զթուղթ գրեցաք առ Ազնուութիւն նորին. շնորհաւորելով զպօլկօվնիկութիւն, և զգալուստն. և առ խնդիրն մեր՝ որ ի Նամցայի կայսերէն, յատկապէս խնդրեցաք, հոգ տանել։ զՈր և յղեցաք առ քեզ, տալ յինքն։ Եւ վասն Արծուոյն ի սուրբ Աթոռս և առ մեզ հասանելոյն, որ քանիցս խնդրեալ էիր զթուղթ միամտութեան գրել առ Ազնիւ պ. Մարդարն և առ պ.՛ Փիլիպպոսն, զայն ես գրեցաք և յղեցաք, զոր հասուսցես առ նոսա։ Եւ ի խնդրեալ թղթոցդ զորս վասն յիշատակաց են և տրոց, գրելոց եմք յայս աւուրքս և յղելոց։ Ընդ որս և ըստ խնդրոյդ զքսան Ատենի ժամագիրք և զքսան Յովսէփոս պատմագիրք

պատրաստեալ յղեսցուք։ Որպիսութիւն կողմանցս՝ ոչ վատ է և ոչ շատ լաւ, խնամօքն Աստուծոյ՝ կերպիւ մի կամք։ յԱշնանն զսըրբոյ Տաճարի ծաղկեցումն և պատկերանկարութիւնն աւարտեալ, զԹոփխաթանն արձակեցաք ի տուն իւր։ Իսկ զսեղանատունն ևս նորոգեալ, հաւասար լուսահոգւոյ նորոգեցելոյն, վերնայարկն զեռ կիսակատար մընացին, վասն անյաջողութեան. եթէ Տէր յաջողեցէ, յառաջիկայ տարւոջս կատարեսցի, և թերևս ձմռան սեղանատունն ևս մեծասցի ըստ երկարութեան որ յոյժ հարկաւոր է։ Արքայն Վրաց ընդ Տայոց Մովպեաին հաշտեալ, զզօրս յղեաց ի վերայ Գեանջայու և ընդդէմ Արցախու իշխողին. տեսցուք թէ՝ զ՞րպէս լինիցի։ Առ այժմ այլ ինչ հարկաւոր գրելիս չունիմք ի թղթի յայսմիկ, քան զոր գրեցաքս։ Միայն թէ զսէրդ հանդերձ հարազատութեամբ մի նուազեցուսցես. զորպիսածանոյց գիրդ ևս անպակաս առնելով. մանաւանդ զպատասխանի թղթոյս շուտով վերադարձուսցես։ Ողջ լեր։ Գրեցաւ ի ՌՄԼԷ. (1788) թուոջս, ի դեկտեմբերի ԺԶ. և ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

ԺԳ. Դարձեալ թուղթ առ նոյն Յովսէփ վարդապետն, վասն յղելոյն մեռոյ զխոստացեալ գրհանսն, եւ զթուղթ այն առ ոմանս, եւ զԱմասիացւոց գրեալ թուղթսն.

Յորմէ սիրով և օրհնութեամբ, և ողջունիւ սրբով գիտասջիր սիրելի և հոգևոր որդիդ մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ Աստուածիմաստ վարդապետ։ Զի յամսոյս ԺԶ զթուղթ մի առ քեզ, և զերկուս թուղթս առ պօլկոմնիկ Ազնիւ Յովհաննէս Աղային, և առ ազնիւ պ. Մարդարն և Փիլիպպոսն դրեալ՝ յղեցաք ի Թիֆլիզ առ Տէր Շմաւոնեան պ. Ստեփանն, հասուցանել առ քեզ։ Իսկ ի թղթոջ մերում յայնմիկ որ առ քեզ, խոստացաք ըստ խընդրոյդ զԱտենի ժամագիրքս և զՅովսէպոսի պատմագիրս յղել, ընդ օրհնութեան թղթոցն որք առ տուօղսն տրոց և յիշատակաց։ Ահա ըստ գրեցելոյն մերում՝ զքսան և երկու Ատենի ժամագիրք, և զքսան Պատմագիրք Յովսէպոսի մի հակ շինեալ յղեցաք, հանդերձ թղթովն շնորհակալութեան։ Եւ վասն գնոց գրեանցն գրեալ էիր ծանուցանել, ծախքն ի վերայ մեր ծանր են նստեալ, ըստ որում զամենայն պիտոյսն դժուարութեամբ առ ձեռն բերեմք, որպէս և դու գիտես. այլ ի տեղըս ԷԹ դիանի զատենին տամք, և ԳԹ դիանի զՅովսէփոս պատմագիրքն։ Իսկ ի տեղդ դու գիտես զորպէս տալն և առնուլն ըստ յաջողելոյն և ըստ դիպմանն։ Զ Խորհրդատետրըն ևս նորապէս տպագրեցաք, այլ զեռ ևս տետրքն ոչ են ցամաքեցեալ, առ այն և ոչ են կազմեցեալք տակաւին, վասն որոյ այժմ ոչ եղև յղել յայնմանէ։ Այլ և ի յԱմասիա հասանելի թուղթ մի էիր առաքեալ առ պ. Ստեփանն Տէր Շմաւոնեան, և նա առ մեզ էր յղեալ, զոր և մեք յղեցաք։ Բայց ի տեղւոյն քանի մի թուղթս էին յղեալ առ մեզ հասուցանել յայդր առ քեզ և առ ընտանիս իւրեանց, զորս և մեք ընդ այս թղթոյս յղեցաք. վասն որոյ գրեմք, զի շուտով հասուսցես առ տեարսն. ի կողմանէ պ. Եսայուն որ յառաջագոյն գրեցաք թէ զտալացուն մեր ըստ մեծի մասին ետ, և սակաւ ինչ մնաց տալի, և Վարդան պետին ևս ՋԸ թուման տալի մնացեալ, զբանն ի նմանէ էհատ, և մեզ թեմէսուկ ետ, և դարձաւ ի Թիֆլիզ, որ յետոյ հատուսցէ. բայց քանիցս գրէ թէ՝ զալոց եմք և հատուցանելոց, տեսցուք թէ որպէս լինիցի։ Իսկ արդ մինչ զայսքան գրեալ էաք, եհաս և յօգոստոսիդ գրեալ թուղթդ, և իմացաք զ՚ի նմա գրեցեալսն ևս։ Սակս անառակ Սարգիս թուակչւոյն որ զեկուցեալ էիր ըստ գրեցելոյն մերում ուղևորեալ զալ, էհաս նա յառաջ քան զայս ի տուն իւր առ ընտանիսն. բայց ըստ վատաշուեր բարուցն իւրոց, թուի թէ այլևս կորնչելոց է։ Բայց յաղագս յաջողութեանցն եղելոց Տէրունեան կայիցդ՝ ուրախացաք։ Աստուած միշտ ի յաջողութեան պահեսցէ։ Եւ առ Բուխարացի Յակոբ ոմն որ զօրհնութեան թուղթ էիր խնդրեալ, վասն հանգուցեալ եղբօրն իւրոյ տիրացու Կարապետին զդիւա-

զարդ սպիտակ զար ըշտօֆն շուրջառ կտրելոյն և տալոյն սրբոյ Գահիս, ահա զայն ևս գրեցաք և յղեցաք ընդ միւս թղթոյն։ Այժմոյս բաւ համարելով զայսքանս, մնամք պատասխանւոյն թղթոյ մերոյ յառաջ դրեցելոյ։ Այլ առ մահտեսի Գալուստանն դրեալ թղթոյդ աղագաւ, զոր գրեցաք քեզ թէ յղեալ եմք ի Պօլիս, և նայիմք ի Մինաս վարդապետէն դիր ընդունիլ և իմանալ ինչ, և քեզ ծանուցանել, տակաւին թուղթ ոչ առաք յայնմ օրէ մինչև ցարդ. բայց իցէ թէ ի մերձ աւուրս առնուցումք, և ազդ առնիցեմք քեզ զինչ լինիլն։ Զզօրացն պարոնին որք առ Գանձակաւն, այժմ համբաւեցին՝ որպէս թէ առեալ են զամրոցն, այլ դեռ ոչ է ստուգեցեալ։ Սակայն դու սիրելիդ մեր, մինչ մօտևոր ունիս զգերազնիւսն մեր զպօլկօֆնիկ պ. Յովհաննէս Աղայն և զՄինաս Աղայն, զորպիսին ճակատուց տէրութեան կայիցդ ընդ օտարասեռսն, լաւապէս իմացեալ ծանուսցես մեզ, յիւրաքանչիւր ժամանակի զորպիսայայտ թուղթդ ընդ որդիական սիրոյդ և մտերմութեանդ անպակաս առնելով։ Ողջ լեր 'ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԼԷ թուոջս, ի դեկտեմբերի ելն, և ի սուրբ Աթոռս էջմիածին։

Յատկագոյն սիրելեացն մերոց ազնուամեծարից, և հաւատարիմ որդւոցն սրբոյ Աթոռոյս, բարեպաշտից և մեծահաւատից, փառազարդից և շքեղապանծից, պ. պօլկօֆնիկ Ազնիւ Յովհաննէս Աղային, և բարեծնունդ Ազնիւ Աղայ Յարութիւնին, և Ազնիւ Մինաս Աղային, և համայն օրհնեալ ընտանեաց իւրեանց՝ մեծաւ սիրով և կարօտիւ ողջոյն և օրհնութիւն տամ։ Որոց ի թուղթսն թէպէտ ոչ եմք գրեալ, սակայն քեզ սիրելւոյդ գրեմ, զի ի գրեանցն մերոց յղեցելոց զերիս Յովսեպոս պատմագիրս ընծայեսցես նոցա իւրաքանչիւրոցն մէն մի. հանդերձ ողջունիւ ի մերս դիմաց. զորս վայելեսցեն բարեաւ. յիշելով զսուրբ Աթոռս և զմեզ։

ԺԴ. Թուղթ Ղուկաս Կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն որ ի յերկիրն ռուսաց, ի պատասխանի Բ. թղթոցն, գրեցելոց ի ՌՄԼԷ թուոյ նոյեմբերի 12. եւ ի դեկտեմբերի 22.

Յորմէ սիրով մեծաւ և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ սրբով, և հոգեզուարճ շնորհիւ Աստուածաէջ սրբոյ տեղւոյս, գիտասջիր սիրելի և հոգևոր որդիդ մեր՝ և հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս, Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Զի յանցեալ տարւոյ դեկտեմբերի ԺԶ. և ի նոյն ամսոյ ելն զթուղթս եմք գրեալ առ քեզ։ Ընդ առաջնոյն յղեալ եմք առ. նոր պօլկովնիկ ազնիւ Յովհաննէս Աղայն, և առ Ազնիւ պ. Մարդարն և Փիլիպպոսն՝ զթուղթս, և ընդ երկրորդին յղեալ եմք զայլ օրհնութեան թուղթսն՝ զորս վասն տրոց և յիշատակացն խնդրեալ էիր. հանդերձ Ա. հակ գրեամբք, որ են ԻԲ. Ատենի ժամագիրք և Ի. Յովսէպոսի պատմագիրք. և ի Թիֆլիզու ի Տէր Շմաւոնեան պ. Ստեփանէն գիր առեալ՝ իմացեալ եմք որ զթուղթսրն յղեալ է առ քեզ, և զգրեանսն ևս յղելոց է։ Բայց այժմ լսեմք թէ Ազնիւ Աղայ Յովհաննէսն վերադարձեալ է, և ոչ գիտեմք թէ արդեօք ի ձոլն նորա ի Հաշտարխան մեր թուղթն էհաս առ նա, թէ ոչ։ Ապա ի նոյեմբերի 12 և ի դեկտեմբերի 22 գրեալ թուղթքդ ժամանեցին առ մեզ, երկրորդն՝ ի փետրվար Բ. և առաջինն յոյժ անագան ի մարտի ԺԷ. և իմացաք զամենայն գրեալսդ։ Արդ՝ զՏէր Ստեփան ժողովարարէն որ գրեալ էիր թէ թուղթ իցէ գրեալ առ քեզ և ընդ այս կողմն յղեալ, մեք զայն թուղթն չեմք տեսեալ մինչև ցայսօր, և ոչ թէ զհամբաւ ինչ իմացեալ զնմանէ ի Պօլսոյ ի մեբայնոցն. եթէ այսուհետև հասցի, յղելոց եմք ի հարկէ։ Ծանուցեալ էիր զմերձ ի յաւարտ ածիլն տպագրութեան Ընդհանրականին[1-4]. եթէ լրացեալ իցէ և յղիցես ըստ խոստմանդ, և մեք շնորհակալ լինելոց եմք։ Եւ զոր խնդրեալ էիր զերկուս թուղթս օրհնութեան, միոյն առ ազնիւ պ. Փիլիպպոսն, և առ ազնիւ պ. Մակարն վասն տալոյն զՋուղայեցի Ստեփանի դուստր հանգուցեալ Զաքիպխանի կտակեալ երեսուն թումանն, և միւսն առ Աստապատցի հանգուցեալ Մատթէոսի կին Եղիսաբէթն վասն տալոյն զհոգեբաժին առն՝ վեց թուման. ահա դրեալ ընդ թղթոյս յղեցաք առ քեզ՝ հասուցանել նոցա ի միամտութիւն։ Զոմանց շինուածոց զկատարումն ևս որ զեկուցեալ էիր, ուրախացաք. յաջողեսցէ Տէր, զի ամենևին կատարունակեսցին։ Այլ և՝ գրեալ էիր զյաղթանակութիւն տէրութեան կայսերդ, և զոմանս տեղիս և զամուրս ընդ բռամբ ածելն. զոր իմացեալ՝ շնորհակալ եղաք ըզսիրելւոյդ. թէպէտ յայլևայլ տեղեաց և՛ս լսեմք, սակայն ո՛չ հաւաստի թուի։ Ուրեմն՝ և և՛ս դրեսցես յիւրաքանչիւր ժամանակի զառնելոյն դոցա՝ ի միամտութիւն մեզ։ Իսկ երկրորդ թղթովդ՝ ծանուցեալ էիր զԱւետիս վարդապետն ևս զորս ընդնմին, ուղևորելդ առ սուրբ գահս, և զայլ ինչ. բայց նոքա դեռ ոչ եկին։ Ե՛րբ և գայցեն, զընդ նոսա գրեալ թուղթդ ևս առնլոց եմք, և զամենայն իմանալիսն գիտելոց, և ըստ այնց առնելոց։ Եւ յաղագս նախադրեալ թղթոցդ առ մահտեսի Գալստանն և վասն թագին քո որ առ նա, ծանիր. Զի ի Մինաս վարդապետէն ի յունվարի ԻԶ. գրած թուղթ ընկալաք. որ վասն թղթոյն քո գրէ թէ՝ Յովսէփ վարդապետին մերոյ զթուղթն ետու մհտ. Գալստանին, որ է վասն թագին. պատասխանն ևս նոյնն է. և թագն չի-

նել տայ։ Բայց ասէ թէ՝ եթէ Ցովսէփ վարդապետի ասածն լինի, շատ թանգ պիտի նստի, և այլն։ Բայց և ըստ բանս երևեցուցանելոյ Գալստանին, գրէ թէ՝ վասն քաղաքիս ի մրրկի դոլոյն ի կողմանէ մարտին, և Սառակինոսաց կարի զգուշանալոյն, և զբազումս ոչինչ պատճառանօք փաստելոյն, կասկածին յընկալնուլն յայն կողմանց զթուղթս. և զի ոչ միայն ի նմանէ, այլ թերևս յայլոց և՛ս լինի թուղթք և նոքա անզգուշաբար բանս ինչ գրիցեն, վտանգ մեծ լինի. ըստ որում ժամանակս զփուշ բերէ, և ոչ զխաղող։ Եւ մեք պատշաճական վարկանիմք զգուշանալն նոցա և յահի լինելն. քանզի բաւական առիթ է տեղականացն զմիայն և եթ գիտելն թէ յայնինչ տեղւոջէ աստ առ այս ինչ մարդ թղթադրութիւն լինի. այնու զմեծ վնասս կարեն գործել. ըստ որում յոյժ վրդովեալ են. վասն որոյ և մերայինքն ևս այնչափ կասկածին, և ղոչ գրելն կամին։ Առ այս՝ բարւոք էր, որ զառ մհտ. Գալստանն գրեալ յետին թուղթդ ոչ էիր յղեալ այժմ. և գրեմ սիրելւոյդ՝ զի զկիրս որտից նոցա իմացեալ, առ ժամանակ մի որքան այս մարտի մրրրիկն գոյ, զգուշասցիս. զի մի՛ արասցէ Տէր, փորձութիւնն յաւուր միում պատահի։ Այսքան առ այս շատ է։ Եւ զկողմանցս գիտասցես, որ արքայն վրաց և Ֆաթալի խանն եկեալ ի Գեանջայ՝ ընդ ձեռամբ ածին զայն երկիր, և զիշխողն ևս հնազանդեցուցին, բայց վասն ոչ գոլոյ ռոճիկ զօրացն՝ դարձան յետս։ Մելիք Ապովն մի երկու հարիւր տուն յիւր էլլիկէն առ ձեռն երեր, սակայն Մելիք Մէճլումն ոչ բնաւ։ Եւ այսպէս առաջադրութիւնն նոցա դեռ ևս անկատար մնաց։ Այլ զյառնելն նոցա տեսեալ Երևանցւոց և սոքա զՆախիջևանու Աբասղուլի խանն որ յԻբրահիմէն էր կարգեցեալ, վարեցին անտի, և զարտաքսեալ Ջաֆարղուլի խանն նստուցին։ Ապա զօրք եկին ի Ղարաղաղու ի վերայ Նախիջևանու, սոքա գնացեալ նորապէս և զնոսա կոտորելով վարեցին, և զբազումս ձերբակալ արարին։ Այսպէս խառնակութիւն եղև յամենայն կողմանց. վախճանն Տեառն է գիտելի։ Այժմ զայլ ինչ ևս ոչ ունելով գրել, սպասեմք պատասխանւոյ առաջին թղթոյն մերոյ ի դեկտեմբերի ԺԶ. գրեցելոյ։ Եւ դու զորպիսածանոյց թուղթդ չպակասեցուցանելով ի մէնջ, ողջ լե՞ր ի Տէր։ Դրեցաւ ի՛ ՌՄԼԸ թուոջս և ի յապրիլի... 'ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԺԵ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Մոսկով առ ազնիւ Աղայ Մինասն Եղիազարեան, ի պատասխանի թղթոյն որ էր ջատազովութիւն վասն Ցովսէփ վարդապետին·

Ցորմէ ժամանեսցի թուղթ յատուկ սիրոյ՝ զուարճաբար սուրբ ողջունի և լիալիր օրհնութեան. հանդերձ զօրացուցիչ շնորհիւ Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ իսկապէս սիրելւոյդ իմոյ՝ հարազատ և բարեխոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս, քաջատոհմիկ բարեպաշտ և մեծահաւատ՝ խոհեմափայլ Ազնիւ Աղայ Մինասիդ։ Աստուածապահ տան քում և բնակութեան, և ամենայն քոյայնոցն՝ ընտանեաց և ազգականաց, սիրելեաց և բարեկամաց, ընչից և ստացուածոց և ամենայն ընդ օրհնեալ յարկաւ քով եղելոցն, խնդալ ի Տէր յարազուարճ բերկրանօք։

(Շնորհք.)

Եւ ընդ ամենառատ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի յատկականի սիրելւոյդ մերոյ ազնուոյ, և օգտակամ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Զի ի նախանցեալ 1788 թուոջ Փրկչին, և ի դեկտեմբերի 16 դրեցեալ սիրածիր և որպիսայայտ թուղթն քո ժամանեաց առ մեզ կարի անագան ի 1789 թուոյս Ցունիսի Ա... Զոր սիրով ընկալեալ ծանեաք զամենայն գրեալսդ. և գիտացեալ զողջունէ և զբարեկեցութենէ ձերմէ ուրախացաք. և յաղագս ճշմարիտ սիրոյդ և հարազատութեանդ որ առ սուրբ Աթոռս և առ մեզ, շնորհակալեալ օրհնեցաք զքեզ և զամենայն քոյայինսն. զորս Տէր օրհնեսցէ և զօրացուսցէ, պահեսցէ անփորձ ի չարէ, և ունիցի միշտ ի խնամս իւր։ Իսկ զգալուստն ձեր ի Հաշտարխան՝ յառաջագոյն լուեալ մեր զսիրոյ և զօրհնութեան և զշնորհաւորութեան թուղթ գրեցաք առ յատկեղ սիրելին մեր պերճապա-

տիւ ազնուազոյն Յովհաննէս աղայն և առ քեզ և առ որդին նորա. և յուսալով ես թէ իցէ թերևս գալ Ազնուացդ ի սուրբ Աթոռս, հրաւիրեցաք։ Բայց տակաւին ոչ ժամանեալ թղթոյն մերոյ անդ ի Հաշտարխան, վերադարձեալ էք անաի։ Արդարև ըղձալի էր ինձ զալն ձեր ի սուրբ գահս, և տեսանելն մեր զմիմեանս. բայց ահա ոչ եղև վասն անբախտութեան մերոյ. ողջ կացջիք և խաղաղութեամբ. եթէ գայք և եթէ չգայք, մեր սիրելի էք, և հաւատարիմ որդիք սրբոյ Աթոռոյս։ Նաև՝ դրեալ էիր զջատագովութիւնս զհոգևոր որդւոյն մերմէ Յովսէփ Աստուածիմաստ վարդապետէն, որ հաճոյ թուեցաւ մեզ. բայց որ նշանակեալ էիր թէ՝ իբրու եղբայրդ և՛ս իցէ զթուղթ գրեալ մեզ վասն այնց բանից, իմա առ այն որ մեք ի նմանէ թուղթ չեմք ընկալեալ այժմ. և ցանկամք սիրոյ և որպիսութեան գրոյ նորին։ Եւ դու օրհնեալդ զոր ինչ ծանուցեալ էիր, բարւոք է թէ այնպէս իցէ յիրաւի և մեզ ախորժելի. զի զի՞նչ քան զայս առաւել ուրախութիւն ինձ, եթէ լսիցեմ թէ որդեակք իմ ճշմարտութեամբ և բարեպէս գնան։ Արդ՝ ահա ի սէր ձեր մինչ դուք ըղհաճութիւն և հաւանութիւն էիք ցուցեալ, և մեք պատշաճ տեսեալ զսիրելի և զհոգևոր որդին մեր զՅովսէփ շնորհունակ վարդապետն դարձեալ վերստին կարգեցաք նուիրակ և առաջնորդ Աստուածախնամ վիճակացդ, առաքելով առ նա զսրբալոյս Մեռոն, առ ի բաշխել օրհնեալ ժողովրդեանցդ, հանդերձ հասարակական կոնդակաւ. ընդ որում և ի վերայ երկուց կայսերապերճ մայրաքաղաքացդ ժողովրդեանց ևս զյատուկ կոնդակ գրեցաք, որպէս տեսանելոց ես։ Եւ զայս սիրանիշ և օրհնաձիր թուղթ ևս առ ստոյգ սիրելիդ մեր դրեալ ի պատասխանի քոյն թղթոյ՝ խնդրեմ զանխարդախ սէրդ և զհարազատութիւնդ որդիական աննուազ և աճեցուն ունել առ սուրբ Աթոռ լուսաւոր Մայրս քո և առ հոգևոր հայրութիւնս մեր, և երբեմն սիրոյ թղթովդ ծանուցանել զբարեկեցութենէ ձերմէ ի մխիթարութիւն մեզ ի վերայ զանազան նեղսակրութեան մերոյ։ Որովք միշտ ընկալցիս զվարձս յԱստուծոյ, զշնորհս ի սրբոյ Աթոռոյս, և զօրհնութիւնս ի մէնջ. հարազատ կենակցին քո և հոգևոր դստեր մերոյ, Տէրամբ օրհնեցեալ բարեպաշտուհի և երկիւղազարդ Աննային Ներսիսեան և այլ ընտանեաց քոց ամենեցուն, ողջոյն և օրհնութիւն տամ։ Որովք հանդերձ ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԼԸ թըւոջս մերում, և ի յուլիսի, ի յերկնահանգէտ Աթոռս ս. Էջմիածին։

Գարձեալ՝ մեծաւ սիրով և օրհնութեամբ, և շնորհիւ աստուածաէջ սրբոյ Տեղւոյս՝ ողջոյն տամ ազնուամեծար եղբօրն քո և ստոյգ սիրելւոյն մերոյ՝ Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտ և իմաստախոհ Ազնիւ Աղայ Յովակիմին. զոր և յանձնեմ ի խնամս Տեառն, և ի պահպանութիւն կենսաձիր Խաչին սրբոյ յարաժամ։

ԺԶ. Ի Յովսէփայ արքեպիսկոպոսէ սիրով եւ Աստուածային օրհնութեամբ առ տ. Ստեփան.

Ծանի՛ր սիրեցեալ որդի Տէր Ստեփան համեստազարդ քահանայ. բաց ի Բանդառուշու դրեալ գրոյդ՝ այլ գիր ոչ ունիմ, այլ մեք քանիցս գրեալ ընդ Շամիրամ Ազնիւ Աղայի գրոյն՝ գրեալ և առաքեալ եմ առ քեզ։ Այժմ մեք. վասն հասարակաց հարկաւորութեանն Նախիջևանու, որոց տասն ամ ազատութեան լրացաւ *)... զանազան խնդրանօք եկի ի Կրմէնչուկ գնալ ի մեծ բանակն, առ պայծառափայլ քնեազն, որ այժմ է ընդդէմ Թուրքաց, պաշարեալ զԲէնդէր, իսկ զԱչակով, զՀօթին և զայլ բերդս. ի վաղուց սոքա ունին կալեալ մինչև ցՆաշ, և ես ինքս ընդ մեծ իշխանին ի յՆաշ եմք ձմերելոց։ Ի սոյն աւուրս մեծ Սէրէսկէրին ևս փախուցին, յայսկոյս Թօնայ գետոյն՝ տիրեցին ընդ Գերմանացւոյն, քիլի Իսմայէլ է առցեալ, որոց՝ փութապէս տիրելոց են։ Ի վերայ ծովու և ցամաքի, յաղթօղք են սոքա։ Որպէս ի վերայ Թուրքաց, նոյնպէս և 'ի վերայ Շուէթացն։

*) Թուղթը մաշուած է և չի կարդացւում։

Թուրքն՝ բազում արծաթ են պահանջել ի հայոց, ի հոռոմոց և ի հրէից, գրեթէ՝ զըոլոր եկեղեցիսն Կոստանդինուպօլսոյ՝ մերկացուցեալ են ի զարդուց, և սուդ զգեցուցեալ. մեծն Պօլիս՝ ոչ այսու միայն, այլ և ի սովու յոյժ տառապի, վերին այցելութեանն կարօտի։

Մեր ողորմելի մէլիքքն՝ փախուցեալք ի Շուշու խանէն Մէլիք Ապոֆն՝ քանի մի տամբ ի Գեանջայ նստի, իսկ Մելիք Մէջլումն՝ որպէս պանդուխտ՝ ի Թիֆլիդ դեգերի։

Վիրքն՝ հարուածեալք են ի լեզղեացն և են ի մէջ մեծի չքաւորութեան։ Ջերքն ամենեքեան Աստուծով առողջ են։ Աղնիւ պ. Սաեփաննն տէր Սահակեան Դաւթեանց՝ տակաւին դեռ աստ է, զքեզ ողջունէ։ Վանքն աւարա հասաւ։ Ապա դեռ չեմ օծեալ։

Տպարանն՝ դեռ չեմ բերեալ, վասն մընացեալ պարաուցն, հոգամք հատուցանել։ Ընդհանրականն՝ յուսամ ընկալեալ իցէք ի ձեռն Աղնիւ Շամիրամ Աղային։ Մեր գիժ Աւետիս արեղայն, առաքեցի ի սուրբ գահն ընդ զգեստուցն՝ հետ մեր Գրիգորին. Նա ծնաց անդ և զերծաք։ Մեր Գրիգորիւն առաքեալ էր վասն մեր՝ սրբազան Վեհապետըն, փիլոն, մատանի և խալիչայ։ Եւ նորոգեալ զնուիրակութիւնն և զառաջնորդութիւնն։ Կարապետ վարդապետն՝ ի վանքն նստի, քաղաքն ի բարեկարգութեան կայ, քոյ խնամի մահտեսի Աւետիկն՝ ի Ղռիմու սուրբ Խաչ վանքն է։ Ահա ներկայական ոըպիսութիւն կողմանցս՝ այս է։ Դու եթէ զգործդ աւարտեալ իցես, ի վերայ Ինգլիզու եկեսցես, նոյնպէս և եթէ յառաջ ինչ զըրկելոյ լինիս, ի վերայ Ինգլիզու ղրկես ի Պետրպօլք առ Աղնիւ բարեկամն մեր պ. Փիլիպպոսն Մանչարեան։ Փութացիր որդի՝ ինձ օգնութիւն հասնել, տպարանի պարտքն ղիզեալ է։ Գեղեցկութիւն տպարանին տեսանես, ըստ այնմ յորգորեա։ Եփրեմ վարդապետ սիրեցեալն իմ, եթէ իցէ յայդկոյս, յինէն կարօտիւ ողջոյն մատուսցես։ Եթէ ի պարսս խաղաղութիւն լինիցէր, դիւրին էր անտի գալն։

Ի Մօսկովու Նանինի վարիսն, իւրն հասեալ է, դու քոյ գործդ հոգա և օր մի յառաջ փութացիր առ մեզ և առ քոյայինսդ։ Մեր Բարսեղն՝ աստիճան սիրեաց, այժմ ափիցէր է։ Գրիգոր և Յովհաննէս սարկաւագունքն մեր, Բարսեղն և այլք, ղքեզ սիրով ողջունեն. և ես օրհնութիւն տամ տեղւոյդ ամենայն քահանայիցն, իշխանացըն և ամենայն ժողովրդեան և Մկրտչին Նախիջևանցւոյ։ Եւ ծնամ վասն քոյ միշտ աղօթարար՝

Յովսէփ Արքեպիսկոպոս՝
ռուսաց երկրի հայոց ազգին։

1789 սեպտեմբերի 24

ի Կրմէնչուկ։

Վրաց դեսպան՝ մերազնեայ քնևաղ Սուլխան Գիվաննն Թումանեան, աստ գոլով զքեզ ողջունէ։

Զայս ես ծանիր, ես այժմ գնամ ի յԵաշ եթէ հնար լինէր յանձնարարական գիր առնուիր վասն իմ ի դեսպանէ նորին. ես որպէս և իցէ տեսանելոց էի զՀայսերն Իմփերատօլ. հետևիս վասն այսմ. եթէ դիրն առնուս, առաքես շուտով ի Կրմէնչուկ պ. Ստեփանին, հասուցանել մեզ։

ԺԼ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին.

Սիրեցեալ որդի, տէր Ստեփան ա. քահանայ

Ցանցեալ 1789 թուոյ և յունվարի 15 գրեցեալ թուղթդ ի Մադրասու, ընդ թղթոյ պայծառ իշխան Շամիրամ Աղային, ի նոյն ամի դեկտեմբերի մուտն ընկալայ ես ի Մալդավանու քաղաքս Նաշ, որով ուրախութիւն յոլով ստացայ՝ նախ վասն առողջութեանդ, երկրորդ՝ յաջողութեան գործոյդ։ Գիտացի և զաուրս ողորմութեանն հասարակութեանն, և յատուկ անձանցն։ Որպէս գքէն, նոյնպէս և ի նոցանէ գոհունակ լեալ, առ հասարակ օրհնեցաք զձեզ, և զպտուղ սիրոյն մերոյ առ հասարակութեանն և առ յատուկ անձինս Մադրասու, զօրհնութիւն և զշնորհակալութիւն մեր գրեցաք, համեմատ խնդրանացդ։ Նոյնպէս և զյանձնարարական գրեանս գրեցաք յամենայն քաղաքս յատուկ անձանց, որպէս և գրեալ էիր, 5 թուղթ ևս աւելի թարց անուան, կնքոյ ծայրն բաց, անունն գրեալ տացես, որոց և հաճեսցիս։

Իսկ հասարակ կոնդակն, այնպէս գրեցաք, որ յամենայն քաղաքս առաքեսցես կարդալ ի ձեռն բարեկամաց, որ կարի հարկաւոր է թէ վասն որպիսութեան կողմանցըս, որք այժմ ներգործին, և թէ՝ վասն մերս տպարանին, դպրոցին, եկեղեցաշինութեանն և աղքատացն, զորոց ամենից լրապէս և մանրամասնաբար գրեցի. ի տեղեկութիւն ստոյգ գործոցն մերոց և ի սիրահարութիւն, առ սկսեալ գործս մեր, որ ահա յառաջանայ Տեառն յաջողութեամբ։ Յաթուն Հոփսիմէին և իւրոցն, գրեալ ահա ի թուղթըս քոյ եղի. պ. Մովսէսին Բարաղամեան և այլոցն՝ համեմատ գրոյդ գրեցի, յուսամ նոքա ամենեքեան՝ և դու որդիդ մեր՝ բաւականութիւն ունիցիք այժմոյս. գրեցելովքն մերովք և հասարակ կոնդակն՝ ընդ յատուկ յանձնարարական թղթոցն, կարծեմ մեծապէս յաջողեսցեն զգործս քոյ և քեզ առիթ լինիցին խօսելոյ։

Նախջևանու երևելեացն, ոչ ունէր հարկաւորութիւն ձեռք դնել ի թղթի իմում, նախ մեք՝ երկար միջոցաւ հեռի եմք այժմ ի նոցանէ, երկրորդ՝ անստեղի իմն է, նոքօք հաստատել զճշմարտութիւնս իմ, ըստ բանի Փրկչին, եթէ քեզ և ինձ ոչ հաւատան, սակայն գործոցս հաւատասցեն, որոյ զառհաւատչայն զգեղեցկատիպ Ընդհանրականն առաքել ետու յայդր՝ տեսանել, և ճանաչել զմեզ և զգրեցեալս մեր։ Եւ ամենայն ճշմարտութիւնն մեր՝ բացափայլի ի յայժմուս գրեալ հասարակ թուղթն մեր, որոյ վասն պատուիրեմ քեզ, որպէս և Շամիրամ Աղային գրեցի և խնդրեցի, որ եթէ իցես ի Մատրաս կամ ոչ, զայն հասարակ թուղթն ի ձեռն բարեկամաց փոխանցման, յամենայն քաղաքս առաքեսցէ կարդալ և զզօրութիւն բանին իմանալ։ Այնու մեծ բաւականութիւն մեզ շնորհէ։ Որպէս ի վեր անդր գրեցի, ես լի եմ շնորհակալութեամբ, Մատրասու բոլոր օրհնեալ հասարակութեան և յատուկ անձանց տրոցն, և Աստուած լի՛ արասցէ զնոսա ի յողորմութենէ իւրմէ։ Հաւանեալ եմ և նոցին բարեկարգութեանն, որ իմաստուն մրտօք, հանճարեալ են վասն զգուշութեան ապագային, որ զտուրս իւրեանց, ի ճանապարհի չլինիցի սերմանեալ ըստ առակաւոր բանի Փրկչին մերոյ, այլ ի յերկիր պարարտ և բեղմնաւոր՝ միշտ տալոյ զպտուղ շահականութեանն, որպէս նոցայն վասն մեր, նոյնպէս և մերն վասն նոցա։ Ուստի՝ և սահմանեալ են, զհասարակ տուրս ողորմութեան իւրեանց, ի սնտուկ Մատրասու որբոցն պահել վրադրօք՝ մինչև ի տասն ամս, տեսանել

դկաաարած գործոյն մերոյ և ապա զգումարն առաքել առ մեզ։

Ապա գիտասցեն բաբեկարգասէր օրհնեցեալքն այնոքիկ, որպէս և ինքեանք վրկայեն. եթէ այս ամենայն գործս, յորս ձեռնամխեալ եմք մեք, եթէ մեօք և ի ժամանակի մերում ոչ յաջողեսցի, զկնի մեր երկբայելի է. զի ոչ ոք է ի կարգակցացն մերոց ստանալոց՝ զայն պատիւ ազգի և հոգս նոցա բառնալոյ ի յուսն, զոր մեք ստացաք և բարձաք։ Վասն որոյ ես ցանկամ, որ եմս կենդանի, հաստատուն հիմամբ կառուցից և զպտուղ վաստակոց իմոց և աշխատանաց. ի յերկիր պարարատ սերմանեցից՝ բարւոք կարգադրութեամբ և օրինօք, որ զկնի մեր, ի թոշնամման յաջորդաց և կարգաւորաց՝ կեր չլինիցի և կամ ի վերայ աւազի չլինիցի հիմնեալ։ Ահա արդէն՝ զապաբանն առի. թէպէտ ՌԲԾ թուման, սակայն նրստաւ ի վերայ մեր, ԲՌ թուման։ Ցայսմանէ պարտք մնաց ի վերայ մեր՝ ՌԾԺ թուման, որ Թադդէոս վարդապետն մեր, թէմէսուկ է տուեալ, երաշխաւորութեամբ Ազնիւ Աղայ Յովհաննէսին Եղիազարեան. և զրով Մաղխասրաթին, որ յամյամէ՝ վերադրօքն հատուցանեմ կատարինէ Զաքարովնին, կընոջն Յալդար Գրիգորի. և տպարանն առեալ այժմ, եկեալ է ի Մօսկով, գալ ի Նախիջևան։ Մեք զտարեկան վերադիրսն ընդ գումարին հատուցանել պարտաւորիմք։ Եթէ Մատրաս քաղաքն, լինիցէր մեզ մերձ, որ ի յամենայն տարւոջ կարիցէր մեզ հասուցանել՝ զնոյն սահմանեալ շահն, էր յոյժ գովելի գործ և հարկաւոր՝ վասն սոյն յառաջադրութեանս, որպէս և ինքեանք խորհեցեալ են. ապա թղթոց մերոց երթևեկութիւնն առ միմեանս, երկու ամն հազիւ հասանի. շահն այն, որպէս կարէ մեզ փութով հասանիլ, որ յօդնութիւն մեզ լինիցի. որ պարտուցն այնմիկ շահն, վասն մեր, գլուխ չդարձցի. որպէս նոցա գրեցի և քեզ գրեմ. նոքա զնոյն հասարակութեան տուեալ գումարն, որ է՝ երեք հազար՝ մին հարիւր երեսուն և չորս ռուփի[5] և 30 տուկրայ, նոյն պայմանովն իւրեանց, ի վերայ Բրիտանիու առաքեսցեն, (եթէ մեզ ոչ հաւատան) ի ձեռս Ազնիւ Աղայ Յովհաննիսի Եղիազարեան, և կամ Ազնիւ պ. Մանիչաբենց, որ նոքա զայն գումարն՝ վասն անկորուստ մնալոյ, մուծցեն ի թագաւորական որրոց տունն, և յամ յամէ, միայն զշահ նորին՝ հատուսցեն անդ պարտուցն տպարանի, մինչև զերծանիլն և ապա հասուսցեն մեզ, իսկ գլուխն՝ մնասցէ ըստ պայմանին իւրեանց ի տունն այն, որպէս և կամին, որ մեզ և դիւրութիւն լինիցի։ Տպարանն հաստատեցաւ, դպրոցն ևս Տեառն ողորմութեամբ հաստատի, տպարանին և դպրոցին է վերակացու Թադդէոս վարդապետն ըստ Հայկազեան լեզուին, իսկ ռուստեվարին, այլ ոմն ռուս հանճարեղ. ոչ բաւական ծախս լինի վասն սոցա յայսմհետէ։ Թէ վասն այսց՝ և թէ՝ վասն աղքատացն և եկեղեցեացն Նախիջևանու, ի հասարակ կոնդակն մեր տեսցես, զի անդ գրեցաւ երկարապէս. աստ ոչ երկրորդեցաք։ Ցուսամ յԱստուած. թէպէտ ես մեռանիմ, բայց այսոքիկ գործք մեր, ընդ մեզ ոչ են մեռանելոց, այլ կենդանի լինելոց են վասն հասարակ ազգին մերոյ օրհնեցելոյ։

Այժմ եկեսցուք առ ներկայական որպիսութիւնս մեր։ Մեք թէպէտ յաղագս Նախիջևանու հասարակութեանն, բայց Տեառըն նախասահմանութեամբն, որ յաջողէ զամենայն յամենայնի, որպէս թէ՝ վասն անդորրութեան կողմանցս նեղեալ ազգին մերոյ՝ որք յայսկոյս մեծի գետոյն Թօնայի, եկեալ եղաք առ մեծ իշխանն և խնամակալըն ազգի մերոյ՝ առ պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալեքսանդրովիչ Պօտէմկինն, ի Քիշնով քաղաք Մալդավանու կամ Բօղդանու, յամսեանն հոգտեմբերի։ Ընկալաւ զմեզ մեծ յարգանօք. և խոստացաւ խնդրանացն մերոց առնել կատարումն, ի մխիթարութիւն Նախիջևանցոցն։

Գնաց ի վերայ Թուրքացն՝ որ ի Քովշան քաղաքն, կոտորմամբ սրոյ էառ զայն։ Գնաց ի վերայ Ախքիրմանու, զայն առանց պատերազմի էառ, զթուրքս վանեաց անտի և զքրիստոնեայսն՝ որք են հայք, հոռոմք և մալդավանք, էառ ի հպատակութիւն կայսերուհոյն։

Եւ ապա ի նոյեմբերի մուտն գնաց ի վերայ Բենդերու. նոյն ամսոյ 2. թարց արեան հեղման, յանձնատուր եղեն թուրքքն, որք էին 3 փաշայք և բազմութիւն զօրաց և բնակչաց, մինչև քառասուն հազար ան-

ձանց, ողորմելի հայք էին ի նմա ժողովեալք ի Թովշանու և ի Պիշնովու և ի նոյն Բէնդերու, մինչև ԱԾԾ տունս և վեց հարիւր անձինս։ Պայծառափայլ քնեազն՝ սուրհանդակաւ և գրով իւրով, զմեզ և զարհի եպիսկոպոսն իւրեանց Ամբրոսիէ, հրաւիրեաց ի մեծ բանակն, նոյնոյ ամսոյ 6. Նախապէս երկոքին եպիսկոպոսունքս գնացեալ մտաք ի բերթն և ի պալատն՝ ուր ինքն իջեանելոց էր, և զպատշաճաւոր պատրաստութիւնս տեսաք հանդիսից, զկնի որոյ՝ եկն ինքն մեծաւ յաղթանակութեամբ և բազմութեամբ զօրաց սուր ի ձեռս ամենից. մեք ընդ յառաջ ելեալ քրիստոնէական արարողութեամբ, ասացաք զպատշաճաւոր բանս, և ետուք զխաչն սուրբ համբուրել. ապա արձակեալ զբոլոր թօփսն, տիրեցին զօրքն մեր ամենայն պատրաստութեանցն Բէնդերու, ըզթուրքսն հանեալ, առանց վնասու արձակեցին զամենեսեան. գնալ ի յերկիր իւրեանց և զքրիստոնեայսն պահեցին։ Ի նոյն ամսոյ 8, գրեաց մեզ գիր, մեծ իշխանն՝ և զբոլոր ազգն հայոց՝ յանձնեաց մեզ, զորս այժմ տիրեալ էր, և շնորհեաց մեզ՝ զպատուական մէջիթ մի՝ փոխարկել եկեղեցի, և օծանել զայն, յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և պահապանին իւրոյ։ Ի նոյն ամսոյ 10 ի տօն հրեշտակապետացն, մեծափառ հանդիսիւ, օծաք զայն, և շնորհօք սուրբ հոգւոյն կենդանարարի՝ կանգնեցաք ի նմա զնշանն տէրունական և մատուցաք զանմահ Գառն Աստուծոյ։ Ահա զօրինակն թղթոյ մեծ իշխանին, առաքեցի առ քեզ վասն տեղեկութեան և ուրախութեան քոյ և ամենայն սիրելի ազգին մերոյ։ Ասացաք և զպատշաճաւոր քարոզս, առ այն պատկանեալ, մատուցաք քնեազին, և նա իւրով դրովն, առաքեաց Կայսերուհւոյն մեծի։ 2 եկեղեցի ևս ինքեանք օրհնեցին։ Վասն նորաօծ սուրբ Լուսաւորչուն, առաք յիշխանէն մեծէ, և զբազում դուքանս. գ. 1 բաղանիս քարեայ. 1 քարվանսարայ. գ. ղայֆախանայ և զմի մեծ տուն վասն մեր, որ էր Ենգիչար Աղասունն։ Շուրջ զեկեղեցաւն, առաք և զԱԾԾ տունս և զնեղեալ հայսն. բնակեցուցեալ ի նոսա, հանդստացուցաք և մխիթարեցաք ի վշտացն՝ զորս կրեալք էին։ Եւ յետ բարեկարգելոյ զնոսա, ընդ մեծի իշխանին, եկեալ ի յԵաշ աստ ձմերեմք, որ ի գարնանն՝ ի միասին գնամք Տեառն յաջողութեամբ ի Պիլի և ի յԻսմայէլ։ Գրեթէ յայսկոյս Թօնայու տիրեցին՝ երկոքին կայսերքն մեծ յաղթութեամբ. դոյն ինչ քաղաքք որք մնացեալք են, ի գարնանս առնելոց են։ Ոչ կարեմ և գրել քեզ լիով, զուրախութիւն մերազնէիցն և զյորդ սէրն նոցա որ առ մեզ. միմեանց աւետաբեր լինին վասըն մեր, և յամենայն կողմանց գան առ մեզ և առ ինքեանս հրաւիրեն գնալ. յերկուց կայսերաց իշխանութեան եղեալ հայքն։ Ալչովցւոց յաղագս որ երկու կաթուղիկոսունքն մեր՝ վաստակեցան, այժմ առանց աշխատանաց՝ մեզ վիճակեալք, ընդ Ռօմանու և ընդ Բօքռէշու և ընդ Փոքիշանու, որք են Հռոմայ կայսերն, եկեալ ամենեցն ի յԵաշ առաջէն գնալ առ ինքեանս, յամենայն ուստեքէ զանուն պատրիարքացն բարձեալ, զմերս անուն յիշատակեն։ Եւ ես յետ դրեցման թղթոյս, գնալոց եմ ի յայցելութիւն բոլորից, որք են յիշխանութիւնս Հռոմայ կայսերն և մերն։

Դեկտեմբերի 29. ի տօնի աւետարանչին քնեազն ընդ արհի եպիսկոպոսին իւրեանց և ընդ մեծամեծ նախարարացն, եկն ի պատարագն մեր. մեք ժամարարք և զբազում գեղեցիկ հանդէսս ցուցաք և զպատշաճաւոր քարոզս ասացաք, զուարճալի եղև ամենիցն զմերս արարողութիւն, էր գովութիւն ի յամենայն շրթունս նոցա. ուղղափառութիւն մեր և բարւոք կարգն եկեղեցւոյ, լի արարաք և ի կողմունս այս, առ կոյր Մալգավանցիսն, և զնախանձն՝ կուտեցաք ի գլուխս Ցունաց։

Ի ծննդեան՝ զդեստաւորեալ, որպէս գոյ սովորութիւն ի Թիֆլիզ, մեծափառ հանգիսիւ գնացաք առ պայծառափայլ քնեազն՝ զտունն օրհնել և շնորհաւորել. դու աստէն տես, զհիացումն ամենայն ազգաց և ուրախութիւնն մերազնէից, որք կորագլուխ և զուրկ են լեալ մինչև ցայժմ յայսպիսեաց հանդիսից։ Ահա այսքան են պարտաւորութիւնք իմ կատարելոյ, յաղագս մխիթարութեան և պարծանաց սիրեցեալ ազգին իմոյ, արարի, առնեմ և առնելոյ ոչ դադարիմ մինչև ցկէտ կոչմանս, սակաւին՝ ծառայ անպիտան եմ, զոր պարտն էր առնել, առնեմ։

Դեսպանն մեր՝ Եակօբ Իվանիչ Բուլղակովն, զոր Թուրքն, ի յետի դուլէն ընկալան, ի բազմանն պատերազմի, այժմ մինչ աղաչեն նոքա վասն հաշտութեան, սոքա բռամբ բերել ետուն զդեսպանն Բուլղակով և այժմ աստ է։ Կապտան փաշայն է վեզիրն. փուչ է բանն Թուրքաց եթէ այսմ ամի՝ հաշտութիւն, ոչ եղև՝ նոքա զրաղում գաւառս են կորուսանելոց։ Աստուած տացէ լինիլ հաշտութիւն որ ողորմելի ազգք մեր, զերծցին ի վշտացն, զոր ի նանիր կրեն։ Կայսրն Հռոմայ՝ որպէս զԲելրղաթ՝ նոյնպէս և զայլ կողմունս նորին, արիւնհեղութեամբ էառ։ Մեր Կայսերուհին և նա, միախոհ են յոյժ։ Վիրքն՝ ըստ ինքեանց՝ ի միջակ խաղաղութեան են. մէլիքքն մեր՝ նոյնպէս են խղճալի, որպէս յառաջ գրեալ եմ։ Այժմ հոգամ վասն նոցա, եթէ Տէր ի կատար հասուսցէ՝ Երևանու խանն և Բայազիտու փաշայն զմիմեանս կոտորեն, ս. Աթոռն վասն այսմ վշտացեալ, այլովք ի խաղաղութեան կայ։

Ի քէն ես գիր ոչ եմ տեսեալ, ոչ փայեկաւն Շամիրամ աղայի, ոչ ի Բասրայու և ոչ ի Բաղդատու և ոչ գիտեմ առաքեցեալ փողի հասանիլն մահասեսի Գալստեանին։ Պատճառն՝ որ այժմ նոքա երկնչին յայսկոյսէ գիր ընկալնուլն և մեք գդրինս մեր կարճեալ, ոչ կամիմք առիթ երկիւղի տալ նոցա։ Թաղն ես այնպէս կայ մնացեալ և ոչինչ գիտեմ, այլ թէ՝ բաւական փող առաքեալ եմ վասն այնմ՝ յայս նեղ միջոցիս, յորում վասն ամենայնի մաշիմ, մանաւանդ թէ տպարանն՝ ցեց եղև ոսկերցս և մաշիչ կենացս. և չգիտեմ երբ զերծանիլն ի պարտուցս. զի դու գիտես զբարս իմ, որ առելի է ինձ՝ ծանրաբեռնիլն պարաւք։ Զօրութիւն իմ հատաւ, յոյս օգնութեանս եղեալ եմ, նախ յԱստուած և երկրորդ յօրհնեալ ժողովուրդն հնդկաց. և ի ճանապարհս քոյ հայիմ։ Զգիտեմ ի խռովարեր միջոցիս, յոր կողմն ելանել կարես։ Ի վերայ Բասրայու կրեալ ես և տեսեալ։ Պարսքն ես վրդովեալք են որպէս և գիտես։ Եթէ ի վերայ Բրիտանիու եկեսցես և կամ առաքեսցես, թէպէտ թանգ նստի մեզ, բայց շուտով լինի և առանց վտանգի։ Ես ցանկամ, ի ժամանակի իմում ստանալ և ի գործ ածել, զի կեանք մեր իբրև սուբհանգակք են. վասն այսմ հոգս տարցես, եթէ և ես մնալոց իցես։ Իսկ այն որ գրես, որ վասն քոյ ոչինչ պահանջեսցեր, որպէս թէ՝ վասն մեր ես գնացեալ և ոչ վասն քոյ, այդ բարւոք ես արարեալ և գովելի է գործդ այդ և ընդունելի մեզ և ժողովրդեանն. զի ըստ բանի կենարարին խնդրեցէք նախ զարքայութիւնն և զայլն, և այլն յաւելցի ձեզ ասէ. զի Հայրն երկնաւոր գիտէ թէ՝ պիտոյ է ձեզ զայն ամենայն։ Ըստ այսմ իմա և քոյդ։ Միայն թէ՝ Տէր յաջողեսցէ քեզ բարով՝ մեզ հասանիլ և գործոց մերոց տալ կատարումն և զընտանիսդ ուրախացուցանել գալստեամբ քով։ Պարոն Եսային ի Թիֆլիզ է և անյաջող։ Դաւիթ Նազարովն, ի Մօսկով հանդերձ ի տան Աննայ Լազրովին, նա պահէր զնա, շատ պարտք մնաց. գրեցի նոցա։ Ցայդպիսեացն քեզ խէր չկայ. Աստուած տացէ քեզ և գործոյդ յաջողութիւն։ Լաւ ղալամքարք, և եօրղանք, եաղլուղ, ղալամքարք զարով և անզար, և ապրուշումէ, բաւական առցես, և այլ ինչ մեզ վայել։

Վասն Բէնդէրու նորաօծ սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն, որ յառաջ էր մէջիթ, վարագուր և սեղանի ծածկոց շինել տացես բարեպաշտից ոմանց. զի մեծ փոխարկութիւնս այս, կարծեմ ցանկալի է ամենից, և բազումք յօժարին ընծայաբեր լինել վասն այժմուս՝ սքանչելի անուանն և փոխարկութեանն։

Այժմ ընդիս են. մեր Գրիգորն՝ զոր միջոցիս՝ ըստ պատուոյ քնեազին, ձեռնադրելոց եմ յարեղայ. Ծատուրեան տիրացու Յովհաննէսն սարկաւագ և միւս սարկաւագք Խաչատուրն և Զէրքէզ Յովհաննէսն. և ժԳ. ամեայ՝ փոքրիկ Պետրոս սարկաւագն՝ աստապատցի Տէր Յակոբի որդի և այլ դպիրք. Փիլիպպոս, Աբէլ և Յակոբ, որք զքեզ սիրով ողջունեն և գալստեանդ փափագին։ Պետրոսն՝ վասն այն ի մանկութեանն ձեռնադրեցի, որ հանգոյն Յովհաննիսին աշխարհ չսիրեսցէ և զաշխատանս կորուսցէ։ Աւետիկ արեղայի առաքելն ի ս. Աթոռն, յառաջ եմ դրեալ քեզ։

Երկու ամ յառաջ, ի վերայ Զուղայու, բաւական ժամագիրք և Յիսուս որդի առաքեցի առաքել ի Սուրաթ առ պ. Ստեփանն Սրապիոնեանց՝ ընդ որս և թուղթք բա-

զումք, չգիտեմ. հասանիլն։ Միշտ գրեմ. քեզ՝ զարմանամ. որ դու գրես, որ յինէն թուղթ չունիս. առ Շամիրամ.ադոյն առաքեմ.միշտ. որոյ թղթոց պատասխանն միշտ ընկալնում։ Հոփփսիմէ Խաթունի դիրն, որպէս և գրես, տացես իւրն, և եթէ հեռաւոր տեղ իցես, գրովդ տռաքեսցես։ Պ. Մովսէսի գիրն՝ ըստ կամացդ է. և ինքն նովաւ բաւականութիւն ունելոց է։

Զայս գիտասցես, ի սոյն կէտ հասեալ թղթոյս, այսօր ի սոյն կիտողջս պայծառափայլ քնեազն, ընկալաւ ի Թագուհւոյն, բոլիանդ պսակ ի վերայ շլապկտյին ի գլուխ իւր, ըստ օրինի յաղթանակաց, որ ընդ իւրեանց արհի եպիսկոպոսին, դնացեալ ի յեկեղեցին իւրեանց, օրհնեալ զպսակն մեծաւ հանգիսիւ, եդաք ի գլուխ նորա։ Վասն նոյն արքեպիսկոպոսին իւրեանց և վասն իմ, առաքեալ էր Թագուհին, նմա խաչ բոլիանթով, և վասն իմ. խաչ և մատանի բոլիանթէ, այսինքն՝ ալմազէ, յաղագս քարոզութեանն իմոյ, որ ի վերայ օծման Բէնգէրու ս. Լուսաւորչին որ էր յառաջ մէջիթ։ Ուրախացեալ քոյ, ուրախացուսցես զամենայն հայկազուն ազգս մեր, զի մեծ արար մեզ Տէր ողորմութիւնն իւր։ Յաջողեսցէ Բարձրեալն յամենայն ուրեք, թարց արեան հեղման աւարտել զյառաջակայ պատերազմ, որպէս ի Բէնգէր. մեր փոքրիկ ազգն որք աստ կան, արտասուալից ցնծութեամբ մատուցանեն Աստուծոյ գգոհութիւն, որ զբերկրալի զաւուրս զայսոսիկ տեսանեն։

Մնամ. վասն քոյ միշտ աղօթարար

խոնարհ՝ Յովսէփ Արքեպիսկոպոս ռուսատաց երկրի՝ հայոց ազգին և այցելու Բաղարապիու և Մալդավանու որք են ենթ երկուց Կայսերացն։

1790. յունվարի 22

'Ի յԵաշ։

ԺԲ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի 'ի Հաշտարխան առ Յովսէփ վարդապետն, վասն այս երկրացի ծերունի Առաքելին Մայիլեան, որ յայն երկրոջն առ ոմանս զառնլիս ինչ ունէր:

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ, և նոյնաէջ սրբոյ տեղւոյս մշտածաւալ շնորհիւն ծանիր սիրելի և հոգևոր ուղիղ մեր՝ և ծոցածին զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Զի յաղագս սոյն երկրացի ծերունի Առաքելին Մայիլեան, որ յառաջագոյն դրեցաք զօրապետ Պաւլ Սարդէիչ Պոտէմկինին՝ և քեզ, առ 'ի արձակել երկրէդ, և նա զխրնդիր մեր ընկալեալ էր հոդացողութեամբ քով, և արձակեալ զնա հանդերձ ընտանեօքն, ահա եկեալ հասին նոքա յերկիրն այս և 'ի սուրբ Աթոռս, որոյ աղագաւ շնորհակալութիւն ունիմք զսիրելւոյդ։ Բայց Առաքել այրս այս խղճալի յայդմ. երկրոջ ուրեք ուրեք առ ոմանս զառնլիս ունի, զորս 'ի գալն ոչ կարելով առ ձեռն բերել իբրու դադարկ էր եկեալ, վասնորոյ այժմ. վերադարձաւ յայդկոյս առ. 'ի առնուլ զառնլիսն։ Ուստի՝ գրեմ. սիրելւոյդ՝ զի 'որ աշխատեալ ես յաղագս դորա և պատճառ եղեալ ազատեցմանն իւր և իւրայնոցն 'ի բազմաժամանակեայ պանդխտութենէն, և տեսութեան հայրենեացն՝ որ ըստ իւրեանց վարկմանն որպէս թէ մեծ երջանկութիւն է, այժմ. կրկին ևս հոգ տարցիս վասն առնլեացն դորին, և պարտապանքն դորա ուր և իցեն, գրեսցես այնց տեղեաց դատաւորացն մերայնոց, զի խնամատարութեամբ օժանդակեսցեն դմա 'ի պահանջելն զպարտս իւր 'ի պարտապանացն, և թէ անիրաւաբար պատճառանօք պարտապանքն զլրկել կամիցին զդա, ծանուսցեն Գումբեռնաթին տեղւոյն, և որով կերպիւ և իցէ, զխղճալւոյդ պարտսն հատուցանել տացեն, որով և գա վերագարձեալ կարիցէ դարման տանել ինքեան և ընտանեացն 'ի յաղքատ վայրոջս, որ արդարև լրումն լինելոց է աշխատութեանդ 'ի նոցա մասին, և մեծ վարձք կայանալոց են քեզ և մեզ 'ի յերկինս, որոյ աղագաւ և մեք մեծապէս շնորհակալ լինելոց եմք զբարեմիտ որդւոյդ

մերմէ սիրեցելոյ։ 'Ի ներկայումս զայլ ինչ հարկաւոր բանս ոչ ունէաք ղրկոյ՝ զի յառաջ քան զայս երիցս Թուղթ եմք գրեալ, և զամենայն ինչ որ 'ի դէպ է եկեալ, ծանուցեալ եմք։ Այժմ այս միայն զայս հարկաւորեցաւ գրել, որում հոգ ածել և կատարումն տալդ արժան է։ Ո՛ղջ լեր 'ի Տէր, և պահպանեցեալ շնորհիւ և ողորմութեամբ նորին։ Գրեցաւ 'ի ՌՄԼԹ Թուոջս մերում, ե 'ի յԱպրիլի ամսոյ ԺԻ, 'ի լուսակառոյց Աթոռս Սուրբ Էջմիածին։

ԺԹ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Ռուսաց երկրի Առաջնորդ եւ Նուիրակ Յովսէփի վարդապետն 'ի պատասխանի երից թղթոց նորին, 'ի թ. Փրկչին **1788**, նոյեմբեր 1, 'ի 22, եւ 'ի **1790**, յունուարի 22, գրեցելոց վասն զանազան իրաց եւ որպիսութեանց եւ խնդրոց:

Յորմէ սիրով մեծաւ և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, ե պահպանողական շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս նորին՝ գիտասջի՛ր սիրելի և հոգևոր որդիդ մեր՝ և սրբոյ Աթոռոյս ծոցածին և հարազատ զաւակ Յովսէփ Աստուածարան վարդապետ։ Զի 'ի սկզբան այսր ամի 'ի յունուարի Դ, գրեցաք առ քեզ Թուղթ, որոյ զպատասխանին ոչ եղև տակաւին առնուլ մեր յերկարաձիգ միջոցիս։ Բայց ընկալաք զերիս Թուղթսն քո զգրեցեալսն յանցեալ ամի նոյեմբերի 'ի 1, և 'ի 22 և 'ի սոյն տարւոյս յունուարի 'ի 22, որովք և իմացեալ զԱստուածայաջող եղելութեանցն կողմանցդ՝ սրտադիւր եղաք։ Եւ կամէաք ոչ անագանել զանդրադարձսն, սակայն յարտաքուստ մարտք և 'ի ներքուստ արհաւիրք անպակաս յաջորդեալք հետզհետէ կասեցուցին մինչև ցարդ։ Եւ այսոքիկ այժմ ոչ յայլոց՝ եթէ ոչ 'ի տիրողաց մերոց խստաց բարբարոսաց որք բարուք էր եթէ յայնցանէ հեթանոսաց իցէին, որք բնութեամբ զօրինացն գործեն ըստ Առաքելոյն բանի, զգացուցմամբ խղճի մտացն։ Այլ արտուղեալք յամենայնէ ճանապարհէ բարւոյ և յառաջեալք 'ի չար անդր՝ ամենայնիւ վրգովեն զխաղաղութիւնն, Թշուառանան ինքեանք և տառապեցուցանեն զմեզ։ Որպէս ծառքն, նոյնպէս և պտուղք իւրեանց՝ մի՛թէ 'ի տատասկէ քաղի Թուզ, և 'ի փշոյ խաղո՞ղ։ Ո՛չ երկարել կամելով զանախորժալուր գործոց սոցա համառօտիւք անցցուք զամենավնաս արարողութեամբք սոցա ե վնասակրութեամբք և վշտիւք մերովք։ Յապրիլ ամսոյն հետէ ցարդ ոչ եղև երկրիս և մեզ անդորրութիւն տեսանել. ընկալեալ զվայրն Մարգարէին զոր տայ քաղաքին ունողի զմանուկ իշխան։ Քանզի ունելով սորա իբր զառնլիս 'ի Խօյու խանէն՝ յոչ տալն նորան, ժողովեալ զբազմութիւն զօրաց յեղակարծ գնաց 'ի վերայ նորա. ե նա անպատրաստ գտանեցեալ՝ խոնարհեցաւ, և կատարեաց զանցեալսն, ե զեղբայրն ետ պատանդ. զոր առեալ սա երեր, և դարձեալ արձակեաց. ապա նոքա եկին 'ի վերայ սորա հանդերձ Նախջուանու խանիւն. որոց զգալուստն մինչ լուաւ սա, գնաց 'ի Նախջուան, և անտի երկուցեալ դարձաւ և բանակեցաւ մօտ 'ի բերդն. ե 'ի ժամանել նոցա առ ինքն՝ մարտեաւ, բայց պարտեցաւ և եմուտ 'ի բերդն։ Իսկ նոքա 'ի քանիս աւուրս բանակեալ 'ի Նորագաւիթ գիւղի անգաստանսն, ապա հրակիզելով զգիւղորայսն եկին և ընդ ներքին կողմն սրբոյ Աթոռոյս անցին, և գնացին աւերադործութեամբք 'ի տեղիս իւրեանց։ Բայց զգիւղս մեր ոչ հրկէզ արարին, և ոչ էր կամ նոցա վնաս տալ սրբոյ Աթոռոյս, սակայն անսանձ զօրքն զլծկան տաւարսն մեր և զմասն մի յանդէոց՝ և զգիւղի անդեայսն ամենայն աւտաքոյ պարսպին գտեալ յաւարի առին, հանդերձ այլ վնասագործութեամբք։ Զկնի այնորիկ՝ խելօք իշխօղն երկրիս վերստին զօր ժողովեալ 'ի Շարուր՝ դարձեալ կամի գնալ Նախիջևան որպէս թէ առնուլ զվրէժ վնասուց նոցա։ Որովք անցիւք և արարմամբք ամենավշտակիր երկիրս 'ի տատանման կայ։ Եւ մերս տաժանելի կիրք՝ անգրելիք։ Յաղագս որոց ոչ ունելով զապահովութիւն անձին և զհանգստութիւն մտաց՝ արգելեալ եղաք 'ի գրութեանց հարկաւորաց

Իսկ այժմ հազիւ ժամ գահալ, ահա գրեմք զայս Թուղթ ոչ Թողլով զսիրելիդ առանց պատասխանւոյ։ Արդ գրեալ էիր զգնալդ 'ի բանակն մեծ առ պայծառափայլ Բնէազն, և զխնդիրն հասարակութեան Նոր Նախիջեւանցւոց' մատուցանելդ նմա, բայց զկատարումն' յետոյ լինել ցուցանելով. մինչ պատերազմն վճարեսցի։ Եւ ծանուցեալ էիր զառնուլն վեհ իշխանին զՇաշ և զԱքերման, զԴուրնասար, զԹիշնով և զայլս։ նաև զԲէնդէր, և կայսերն Մեծի՝ զԲէլղրաթ և զՈւլահ, և զայլ տեղիս։ Եւս և զշնորհելն Պայծառափայլին՝ մերայնոցդ զմզկիթն 'ի լինել յեկեղեցի, և զքո օծանելն զնա յանուն սրբոյ Լուսաւորչին և բարւոք շարժմամբ և արարողութեամբ հաճեցուցանելդ զիշխանն մեծ, և 'ի գերամբարձ կայսերուհւոյն զպարգեւս ընդունելն նոցա և քո, և դասծելդ և զբարեկարգելդ զմերայնեայսն որք 'ի կողմանսդ, և զայս եղելութիւնս և զորպիսութիւնս զուարճալիս։ Որովք արդարև' զգեցաք զուրախութիւն 'ի վերայ անմխիթար տրտմութեանս զոր ունիմք վասն տառապանաց կողմանցս. և փառս վերառաքեցաք գոհութեամբ ամենաբարեբարին Աստուծոյ՝ պարգևողին զյաջողութիւն հաւատացեալ Տէրանց, և նոքօք խնամողին զազդ մեր։ Եւ լիաբերան օրհնութեամբ օրհնեցաք զբարեացապարա և զգերփառունակ զիշխանն Պայծառափայլ զխնամակալն ազգի մերոյ, և եւ օրհնեցաք զսիրելի և զհոգևոր որդիդ մեր՝ որ դուն գործեալ ջանաս և հնարես զբարեդիպութիւն և զմխիթարութիւն բազմավշտակիր մերազնէիցդ, յորում Տէր տացէ կարողութիւն և զօրութիւն 'ի բարօրութեան և յառաջդիմութեան պահելով խաղաղակեաց և արգասաւոր՝ բարեօք։ Խնդրեալ էիր ապա գրել զԹուղԹս առ Կայսրն Գերմանացւոց և առ Պայծառափայլ վեհ իշխանն և առ Ամբրոսիէ եպիսկոպոսն, և առ Սչովայու ազնիւ Աղաճայ Ցովհաննէսն։ Բայց և գրեալ էիր Թէ հազարացիքն զհաշտութենէ խօսին, և սոքա հաճին, և այլն. և Թէ՝ 'ի գնալս 'ի Սչովայ, գալոց են և այլ տեղեաց մերայինքն անդ, և խորհրդակցելոց եմք վասն խնդրոյ մերոյ 'ի Կայսերէն. զորմէ յետոյ գրեցից։ Ապա մեք ոչ եմք անյօժար 'ի գրել զայնս ԹուղԹս, սակայն նկատելի է առ վախճան ձեռնարկութեանց դոցա, Թէ հաշտելոց են, և յառեցելոցն դարձուցանելոց, Թէ՝ զայլս ևս տեղիս առնլոց են, և զայլ կերպ ցուցանելոց։ Ուրեմն՝ վասն զանազան կարծեաց պատշաճ վարկաք փոքր մի ևս մնալ, մինչև նշան կատարման իրաց դոցին երեւեսցի, ըստ այնմ որ դրեալ ես Թէ՝ զԹիլի և զԻսմայիլ ևս առնելոց են՝ որ Դանուբայ այս կողմն բոլորապէս իւրեանց լինիցի, ապա հաշտելոց են։ Եւ սիրելիդ ըստ խոստմանդ յետ դարձիդ 'ի Սչովայու զպատշաճատեսութիւն խորհրդակցութեան ձերոյ և զայլ ևս որպիսութիւնս գրեալ ծանուսցես մեզ, և յայնժամ լաւապէս տեղեկացեալ մեր Թէ ուր լինի սահման բաժնի դոցա և ի՞նչ աեղիք են լինելոց 'ի տէրունի վիճակ մեզ, ըստ այնմ գրեսցուք զԹուղԹսն զորս խնդրեալ ես։ Խնդրեալ էիր և զկոնդակս դրել 'ի վերայ Նորաստաց տէրունեացն ժողովրդոց իբր վասն նուիրակութեան, բայց և դարձեալ ծանուցեալ էիր զխղճութիւն նոցա ի պատճառս տառապակրութեանցն որ յառաջնոց իշխողացն, և զաղքատութիւնսն։ Ապա՝ տակաւին նոր ոգի առեալ նոցա, ոչ է յուսալի ի նոցունց զիրս, այլ մնասցեն առ ժամանակ մի և տեղաւորեսցին և վայելեսցեն զնորագիւտ խաղաղութիւնն։ Ցետոյ ի հարկէ դրելոց եմք զուրախակցութիւն և զայլ ինչ որք ի դէպ են և լինիցին։ Բայց առ հանգուցեալ Խանփէրի խանումի որդիսն աղայ Աւետիքն և աղայ Սիմօնն, որ զմխիԹարուԹեան Թուղթ էիր խնդրեալ, ահա դրեալ յղեցաք։ Ի կողմանէ նուիրակութեանն Հաշտարխանու և կողմանցն գրես Թէ յամենայ՝ և այլն, սիրելիդ իմ. յիրաւի այդոքիկ հարկաւորք ե", յորս աշխատիս, բայց այն ևս ոչ է անփոյթ առնելի, զի այս կողմունքս ընդ որս և Վրաստան, ի յետին խղճութեան են, և Օսմանցւոց երկիրն ի սաստիկ վրդովման, այժմ օգնութիւն սրբոյ ԱԹոռոյս յայդրուստ պարտի լինիլ. իսկ եԹէ առ գործն դորին ևս Թոյլատրել լինիցի, այլ ուստի՞ է յուսալի օգնութիւն գտանել։ Ուրեմն որքան կարելի է, փուԹասցիս և առ հոգացումն գործոյ այդմ վիճակի։ Վասն Թագին քոյ զոր ինչ Մինաս վարդապետն լուեալ ի մհտ. Գալըստանէն ծանուցեալ էր մեզ, և մեք յառաջ դրեալ եմք քեզ, յայնմհետէ ցարդ ոչ ևս ունիմք զտեղեկութիւն, և Թէ առ մեզ եկեսցէ,

անյապաղ յղելոց եմք առ քեզ։ Եւ վասն Աւետիք վարդապետին զոր ինչ գրեալ էիր իմացար։ Եւ զսիահին իւրն տեսեալ՝ կոչեցաք զնա առ մեզ և պահանջեցաք զնշանակեալոն ի նմին, զշուրջառն որ ըստ գրելոյդ նշանաց էր, առաք, իսկ յայլ մանրամասնեայ իրացն, զորն խարճեալ ասաց՝ և զորն այո, և ոչ. որոց աղագաւ դիր մի ես գրեցոյց առ քեզ, զոր Իսահակ և Ղունկիանոս վարդապետքն կնքեցին, և յղեցաք, տեսանելոց ես։ Ի գալոյն հետէ մինչև ցարդ Լ թուման ես ի մէնջ է իբր փոխ առեալ առ ի խարճել, որովհետև իւր դրամն առ ինքն չէ, և դեռ ոչ բաւականանայ, ընդ այնպիսւոյն զլուխ դնելն ոչ է բարեվերջ, որ ոչ է ընարեալ զօգուտն և զվնաս անձին իւրոյ, հայցեմք թէ իցէ զի ի համեստութեան կողմն շրջիցի. ապա թէ ոչ, շահ չունի և այլն։ Իսկ զգրչեայ գիրքն ի տանէն իւրեանց բերեալ՝ տուեալ էր ի Ներսս. զոր ըստ խնդրոյդ ահա յղեցաք ի Թիֆլիզ առ տէր Ղազարն՝ հասուցանել առ քեզ։ Յառաջ գրեցեալ թղթով մերով, զկարմիր և զկանանչ գուզէթ և զոնէսուր՝ և զմինալու զութիս եմք խնդրեալ ի սիրելւոյդ յուսամք թէ այն թուղթն ժամանեալ իցէ քեզ, և հ. գացեալ իցես զայնս, և թէ ոչ, գրեսցես ի Հաշտարխան շուտով առնուլ և յղել. զի ի պահանջողացն զերծանիլ ոչ կարեմք։ Այլ ես Պօլսեցի Սահակ տղայի Ծ ղուռուշն էհաս մեզ, որպէս և յառաջ քան զայս գրեալ է քեզ Իսահակ վարդապետն մեր. վասնորոյ գրեմք ահա, զի զփոխանակն 5 ղուռուշին այնորիկ՝ վերընկալցիս յայդր յարդեանց սրբոյ Աթոռոյս։ Եւ զհարազատական թուղթդ մի պակասեցուսցես, գրելով զհարկաւոր որպիսութեանց, մանաւանդ զպատերազմէն՝ զի ի հագարացւոց կալուածոյն ոչ ոք կարէ դրել մեզ զայնցանէ կասկածելով ի նոցունց՝ որք տկար գոլով ոչ կամին զհռչակ հարկանելն տկարութեան իւրեանց։ Ապա քեզ սիրելւոյդ է հարկ գրելն մեզ զինչ ես տեղիս առնուլն դոցա և ցոր վայր հասանիլն, և յինչ միտս գոլն՝ որքան և դիտես, զի իմացեալ ըստ այնմ խոկասցուք առ գրելիսն մեր և առ այլ ինչ առնելիս. և շնորհակալութեամբ օրհնեսցուք զհարազատ սիրելիդ մեր։ Ո՛ղջ լեր ի Տէր։ Ողջոյն և օրհնութիւն տամ հոգևոր որդւոյն մերոյ և քոյ տիրացու Գրիգոր շնորհունակ սարկաւագին, և միւս համեստազարդ սարկաւագացն, և այլոց ամենեցուն որք առ քեզ են, որք հանդերձ քև եղիցին յանձնեցեալք ի խնամս Տեառն։

Գրեցաւ ի ՌՄԼԹ թուոջս, և ի հոկտեմբերի ..ի Լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

Ի. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Իսրայէլ կաթողիկոսն Աղուանից ի պատասխանի թղթոյն զոր գրեալ վասն ոմանց խնդրոց. եւ խնդիր, զի յղեսցէ զպատմագիրքն Աղուանից՝ վասն տպագրութեան.

Յորմէ սիրով և կարօտիւ՝ քրիստոսականաւ սուրբ ողջունիւ, և նոյնաէջ սրբոյ տեղւոյս շնորհիւն՝ ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Տեառնդ Իսրայէլի սրբազան կաթուղիկոսիդ Տանդ Աղուանից։ Զի թուղթ քո ի յունիսի ամրողջն գրեցեալ՝ էհաս առ մեզ ի յօգոստոսի ամսեանն. զոր ընթերցեալ ծանեաք նախապէս զնեղսակրութիւնսդ ի պատճառս վրդովմանց երկրիդ և սղութեան. և տրտմեցաք։ Իսկ մեր ես նեղութիւնն ոչ է պակաս։ Թերևս լսես զորպիսութեանց երկրիս՝ և կողմանցս որք ոչ են ի կատարեալ խաղաղութեան. մանաւանդ յայսմ յամի զօրաժողով և հեծելաշարժութիւն շատ եղև, և ոչ սակաւ խռովեցաւ երկիրս, և սուրբ Աթոռս և մեք ես ոչ սակաւ ծանրութիւնս կրեցաք. թող զմշտակայ նեղսակրութիւնսն և զհոգսն. այլ ոչ ինչ ունիմք առնել, բայց թէ փառս մատուցանել Բարձրելոյն Աստուծոյ, և ինմանէ զխաղաղութիւն խնդրել։ Որ և ողորմեալ ըստ մեծի ողորմութեան իւրում բարձցէ զխռովութիւնս ի յերկրացս վրդովելոց. և խաղաղացուսցէ զկեանս բնակչացն և մանաւանդ տառապեալ ազգիս մերոյ։ Ապա գրեալ էիր՝ որ-

պէս թէ ի Հաշտարխան առ հանգուցեալ Ղևոնդի որդիսն գանձանակադրամ գոյ. գրիցեմք Յովսէփ վարդապետին առ ձեռն բերել և յղել։ Եւ մեք խորհէաք ըստ խնդրոյդ դրել. բայց յայս աւուրքս թուղթ առաք ի նմանէ. որ գրեալ էր թէ ի Նոր Նախիջեան եմ, և աստի գնալոց եմ ի Պետրպօլք վասն պարտուց քաղաքացւոցս զոր առեալ են, և չունին կարողութիւն հատուցանելոյ այժմոյս՝ և այլն։ Եւ մինչ զայս իմացաք, անդէպ վարկաք զգրելն. գիտելով որ ի հեռուստ անձեռնհաս լինի հոգ տանել, և գրութիւնն մեր ներկայապէս ի գերես անցանէ։ Այլ յետ միջոցի մինչ դարձցի նա անտի ի Հաշտարխան, յայնժամ դրեսցուք նմա, հետեւիլ, որ իցէ թէ առ ձեռն գայցէ գրամն։ Նաև՝ ծանուցեալ էիր թէ առ շամախեցի մահտեսի Յարութիւնն Բ. խաչք և քանի գրեանք դոն. և խնդրեալ էիր վասն այնց ևս նմա գրել, զի հասուսցէ քեզ։ Այգ՝ այնքան ինչ խնդիր չէ, սակայն յայնժամ հարկաւորիւր մեր գրելն՝ որ նոքա խորդ լինիցէին առ քեզ, և անհպատակ. բայց մեք կոնդակ եմք գրեալ վասն քո առ նոսա, և նոքա ոչ են անծանօթ քեզ։ Ապա վասն փոքու ինչ իրաց մեր բան գրելն առ նոսա այլ իմն երևի։ Թերևս դեռ դու չիցես խնդրեալ ի նմանէ. կամ թէ ի նմա դիտումն մի գոյ։ Պատշաճ է, որ սիրելիդ նախ գրեալ խնդրեսցես յորդորմամբ առ ի տալ, եթէ չտայցէ, ի հարկէ պատասխանի մի դրելոց է առ քեզ. յայնժամ զայն թուղթն նորա յղեա առ մեզ, և մեք տեսեալ ըստ այնմ գրեսցուք առ նա զթուղթ, որ տացէ։ Դարձեալ զայս ծանիր, զի Հնդկաց Մատրասու պ. Շահամիր Աղայն խնդրեալ է ի մէնջ զԱղուանից պատմագիրքն տպագրել, և գրեալ է թէ՝ Իսրայէլ կաթողիկոսն խոստացեալ է ինձ զմինն յղել ի ս. Աթոռոդ. զայն ընկալ, և այլն։ Ի հարկէ խոստացեալ ես նմա, որ նա այսպէս դրէ։ Արդ՝ մինն դոյ ի սուրբ Աթոռոջս, բայց միւսն տպելն կասկածելի է. քանի օրինակք պարտին ի միասին լինիլ, որ համեմատեսցուք միմեանց և դոխալանոն իմացեալ՝ ուղիղն տպագրեսցուք։ Վասնորոյ՝ գրեմ սիրելի եղբօրդ, որ որպէս խոստացեալ ես Շահամիր Աղային՝ զայն Աղուանից պատմագիրքն հաւատարիմ մարդոյ ձեռօք յուղարկեսցես առ մեզ, որ տպագրութեան ձեռնտու լիցի։ Եթէ բարեաւ տպագրեսցի, քեզ ևս բաժին եմք յղելոց ի տպեցելոյն։ Իսկ թէ առ քեզ չգտանիցի, յայլ մօտ և իցէ, խնդրեալ առնուցուս և յղեսցես. կամ թէ մեզ ծանուսցես՝ որ մեք ի նմանէ խնդրեսցուք և բերել տացուք։ Ահա հանգուցեալ Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Սարգիս վարդապետին և՛ս դրեցաք որ եթէ առ ինքն դտանիցի յայն պատմագրքէն, զայն ևս յղեսցէ. որովհետև քանի օրինակք են պիտոյ որպէս ի վերոյ ասացաք։ Այսպէս գիտացեալ առ այժմ ըզսէրդ և զհարազատութիւնդ հանդերձ որպիսածանոյց դրովդ անպակաս արասցես ի մէնջ. ըստ որում և մեք կամք ի յանխարդախ սէր եղբայրութեան առ քեզ։ Ո՛ղջ լեր։ Գրեցաւ ի ՌՄԼԸ թուոջս, և ի սեպտ. ելն, ի լուսակառոյց Աթոռս ս. Էջմիածին։

Երկրորդ օրինակ է գրութեանս, զի զառաջինն ի վերոյ ցուցեալ ժամանակին յղեցաք ի Գեանջայ՝ անտի հասանիլ առ քեզ, բայց վասն խռովութեանցն արգելեցեալ էր անդ. զոր մինչ իմացաք, թէպէտ կրկին հարկ դրեցաք անդ զի յուղարկեսցեն առ քեզ, սակայն՝ թուի թէ ոչ էհաս, որովհետև յայսքան երկար միջոցի զպատասխանի ոչ ընկալաք։ Վասնորոյ այժմ կրկին դրեցաք զայս և յղեցաք առ Տաթևու առաջնորդ Յովակիմ վարդապետն զի նա հասուսցէ առ քեզ։ Կրկին ողջ լեր։ Գրեցաւ ի ՌՄԼԹ թուոջս, և ի նոյեմբեր ամսոյս։

1791

ԻԲ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին

Ի սրտէ սիրեցեալ որդի տէր Ստեփան արժ. ա. քահանայ.

Ի 1790 թուին և ի հոգտեմբերի 5, ի Բէնդէրու գրեցի քեզ զպատասխանիս թըղթոցն քոց ուրախալեաց. և ընդ հասարակութեան թղթոյն, առաքեցի առ Շամիրամ Աղայն, հասուցանել քեզ ուր և իցես. յուսամ ընկալեալ և միամաեալ իցես և ամենայն գրութիւնք մեր, ըստ կամացդ իցես գտեալ։

Յետ այնորիկ ընկալայ՝ կրկին թուղթըդ՝ որ էր յառաջին մտացն ըստ բոլորին. ղոհ եմ յոյժ. ի յաշխատանացդ և ի մաացդ ծննդոց, որ զամենայն ինչ պարզապէս նըկարեցեր յառաջի աչաց իմոց և ամենից բարուցն և կացութեանցն՝ տեղեակ արարեր զիս, այնպէս՝ որպէս թէ այժմ զամենեսեան տեսեալ գիտեմ։

Ուրախ եմ ի վերայ այնմ առաւել, որ ամենիցն հաճոյ ես գտանեցեալ, որպէս վայել է կարգիդ. և իմս առ քեզ, յատուկ պատուիրին և ցանկութեան։ Ուրախ եմ և ի վերայ այնմ, որ աւետեալ էիր, որպէս թէ՝ զկնի այսմ զատկիս, ելանելոց ես. ո՜հ թէ՝ բտցօք աչօք տեսանիցէի զքեզ. և զաշխատանս քոյ, կարգաւորիցէի, ըստ յուսոյ և ցանկութեան. բարեպաշտ նուիրողացն, որ մեք ի խղճահարութեանց և նոքա ի մտատանջ կարծեացն զերծանիցէին, և մեք թերես ի կենդանութեան մերում, զպտուղ աշխատանաց մերոց՝ տեսեալ, փառաւորիցէաք զՍտուած, որ կարտցաք աշխատիլ վասն ազգին մերոյ. որպէս զի հաւատարմացի առ մեզ բան Տեառն թէ՝ ես եդի զձեզ, զի դուք երթիցէք և պտղաբեր լինիջիք, և պտուղն ձեր կացցէ։ Բոլոր հասարակութեանն երկրիդ ի հոգտեմբերին և այժմ գրեցի կողմանցս ամենայն որպէսն, նոյնպէս և ապալանինն։ Սոյնպէս և առ ոմանս։ Ցատկապէս առ բարերարսն մեր, Աղնիւ աղայ Օհանջան Յակոբ Գերակեանն և առ պ. Սա. Աղաբաբեանն. որոյ վասն ահա ողեն սաղմոս և ժամագիրք, զինն ըստ մասին գրեալ է եղրօրն աալ. զի մարգարիտ է առաքել ծախել. լաւ գնով ծախեց։

Զոր ինչ ուխտեալ ես բոլոր Հնդկաց ժողովրդեանն մերոյ և աղա յՕհանջանին. Աստուծոյ ողորմութեամբն, բոլորից լրումն տեսանելոց ես դու և նոքա։ Դեկտեմբերի ԺԱ-ին, Իսմայէլ քաղաքն ռուսաքն առին՝ մեծ արիւնհեղութեամբ, մերազնեացն մերկացուցին ի բոլոր կայից՝ ի սաստիկ պաշարմանն, որք էին տունք ԳՃԻԲ. իսկ անձինք ՌԷՃ. գնացեալ սփոփեցաք և ըստ կարեաց մերոց հաց և հանդերձ առեալ, բաժանեցաք նոցա. նոյնպէս ի վիճակացն օգնութիւն խնդրեալ, կարեկից եղեն ամենեքեան, հացիւ և հնոտի հանդերձիւք. և ըղգերիսն նոցա բոլորովին ազատեցաք. երկար և սարսափելի է գրելն զամենայն անցս Իսմայէլու. զի ի մէջ հինգ ժամու առին զքաղաքն. ԼԲՌ. թուրք ի սուր քաշեցին. Մնացեալսն գերեցին և զքաղաքն աւառ առին. ըստ այսմ իմացիր զանցս մեր ազգի. որք ի մէջ նոցա էին. այնքան եղև որ ի պատիւ երեսաց իմոց, ոչ ի սուր մաշեցան և ոչ ի գերութիւն անկան. այլ Լ. անձինք որք դերի անկան, զնոսա ես ազատեցի։ Եւ Լ. որբ տղայ ի սոցանէ առեալ, առաքեցի ի Նախիջեւան. ի կողմանէ աղայ Յօհանջան Յակոբ Գերաքեանին, լինիլ հիմն դպրոցի նորին. և ես եմ առնելոց, որք լինիցին Ծ. անձինք. յիշատակ նմա ի յերկու դպրոցին։ Թիֆլիզեցի Տէր Պետրոսն է վարժապետ նոցա։ Յետ այսքան տառապանացն և նեղութեանցըն, զորս կրեցի ի Քիլի և Իսմայէլ ի ձըմռան ժամանակին, ապա մեծ իշխանն կամեցաւ գալ առ թագուհին ի Պետրպօլք. ես ես ընդ նմա եկի ի յՃաշու հիւանդ անձամբ, վասն անդառնալի հարկաւորութեան

տառապեալ ազգի մերոյ· Նախ՝ շնորհելոյ զպարտս Նախիջևանցւոցն, որ է ԻԴՌԺ թուման։ Երկրորդ՝ և ես տալ նոցա աւելի գետին, երրորդ՝ տալ պրիվելէկ ամենայն ազգին հայոց՝ հանգոյն Նախիջևանցւոցն։ Չորրորդ՝ այս նոր առեալ ողորմելի ժողովրդեանն Քիլու Իսմայէլու, և այլոց, այցելութիւն առնել ողորմութեամբ։ Մեծ իշխանն յոյս տայ կատարել· եթէ կատարեսցաւ, երջանիկ լինելոց է ազգ մեր՝ ի յերկրի աստ։

Յայսմ ամի, ձեր տունն զրկեալ եմ Ծ· բաճաղլու ոսկի, որ է այժմ ԻՑ (°) թուման, և ես առաքեցից· հոգս չառնես վասն նոցա· ամենեքեան առողջ են· եղբօրս գրեալ եմ խնամարկել։

Եսային շատ դառնութեան միջի է· և Դաւիթբէգն ի Բասրայ վախճանեալ է։ Ուրմելի և այլ փողն, զոր գրես, Նանին, աստ ստացաւ. ի յԸնկլիզի կանթօռէն շատ շուտ և դիւրութեամբ, և մնացեալն ես ստանալոց է· նոյնպէս և միւսքն ասեն թէ՝ այս հեշտ է և շուտով աստի պիտի ստանամք։ Քեզ Աստուած առողջութիւն տացէ· ոչինչ իր՝ քեզ պակասելոց չէ, եթէ ողջ մնասցուք։

Այլ է թէ՝ դու ես փութայ՝ ի Մատրաս աղայ Շամիրին տալ փողդ, որ նա շուտով մեզ հասուսցէ· որպէս վասն իւր գրեանցն հասոյց· վասն այսմ, մեր հարազատ վէքիլ պ· աղնիւ Փիլիպպոս Մանիչարեանն՝ նմա դրեալ է ինչ դրկելն, որ տեղս շահ լինի· հետ քեզ փող չտանես, այլ ի վերայ Ինգլիզու բարաթ տաս· այժմ բարաթն մեծ շահ ունի մեզ· վասն աւելման կուրսին։

Չգիտեմ թէ՝ ի վերայ Բասրայու, դու երբ իցես գալոց· եթէ ի վերայ Ինգլիզու գայիր, բարւոք լինէր և շուտ· օգուտն քոյ՝ դու գիտես· և Աստուած քեզ յաջողեսցէ որ կողմն և կամիցիս։ Միայն ջանք արա, մեզ փող հասուցանել· զօրութիւնս հատաւ։ Քանի մի գիրք տպեցաւ· պատարագի աղօթքն ես ռեռծան· այժմ սաղմոս և ժամագիրքն տպեն Ստեփան Աղաբարի։ Յետ այնորիկ Շամիրամ աղայի Որոգայթ փառաց գիրքն· Հայելի Աստուածաշունչ և Թելամաքն զոր իտալիացւոց և ի ֆռանգսիզաց թարգմանել ետուք իզմիրցի պ· Մարգարին Զաքարեան։ Աղէքսանդր պատմագիրքն ես պ· Յարութիւնն է թարգմանել· ապարանն ի Նախիջևան է Թադէոս վարդապետեան անդ է· ես աստի անդ գնացից և ի կարգ եդից զամենայն· Յօհանջան տղայի յիշատակարանն աստ ի վերայ մռամառ քարի գրել ետու· առաքեալ ի Նախիջևան գնել դպրատան ճակատին· իւրն ես դրեցի։

Ժամէ ժամ սպասեմ ուրախաբար զրոյդ որ խաղաղութեամբ և արդիւնաւորութեամբ աւարտեալ իցես զհալկաթայ և զայլ քաղաքս, որ լուեալ ըստ միամտութեան մերոյ՝ ուրախասցուք։

Պատկերքս պատրաստ է որպէս և դրեալ ես, գեղով նկարեալ· յետ այսորիկ առաքեցից յամենայնն քաղաքս։ Ժուռիկենց պ· Գասպարին յորդորեա, զխոստացեալն ի կատար հասուցանել վասն բառարանացն· նոյնպէս և Խօջամինասենց Աղնիւ աղայ Յովհաննէսին յորդորեսցես, յիշատակ ինչ ստանալ ի տպարանիս և կամ ի դպրոցիս մերոյ։ Թադէոս վարդապետն ի վանքն է վերակացու գոլով տպարանին· Կարապետ վարդապետն եկեալ էր ի յՆոր, վասն տեսութեան մերոյ՝ թողի անդ ի վերայ իմայէլացւոցն, խնամել զնոսա մինչև մեր յետ դառնալն աստի· առ նա են այժմ հացակերք, ԽԾ անձինք։ Առ մեզ են· մեր Նորընծայ Տէր Գրիգոր աբեղայն, Յովհաննէս և Խաչատուր սարկաւագունքն, Փիլիպպոս և Աբէլ դպիրքն և մեր Բարսեղն, որք ամենեքեան զքեզ սիրով ողջունեն· ուր և իցես, անդ եղեալ սրբանուէր քահանայիցն և օրհնեալ ժողովրդեանն ամենից օրհնութիւն տամ· յանձնելով զքեզ ի շնորհն Աստուծոյ, մնամ վասն քոյ միշտ աղօթարար՝

Յովսէփ Արքեպիսկոպոս
ռուսաց երկրի հայոց ազգին.

1791 ապրիլ 4
’ի Պետրպօլք·

Աղայ Յօհանջանին, Նախիջևանայ հասարակութիւնն, շնորհակալութիւն էր գրեալ։ Էմին տղայն մեզ թղթեր էր գրեալ, պատասխան նորին ես դրեցաք, ընդ սոյն թղթոյս. I հասարակ կոնդակ գրեցաք յամենայն քաղաքս· 3 դիր ի Սուրաթ՝ Գերաքեանին, աղայ Մկրտչին և Ստեփան Աղաբաբին և ի Մատրաս, աղայ Շամիրին։

ԻԲ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Ռուսաց երկրի մերայնոցն նուիրակ եւ առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի քանեաց թղթոցն գրեցելոց ի Յասու եւ ի Բէնդէրու հանդերձ մխիթարութեամբ վասն մահուան եղբօրն, եւ երկրիս եւ մեր որպիսութեամբք.

Յորմէ Քրիստոսածիր սուրբ ողջունիւ և նոյնապատուէր սիրով, հոգևոր օրհնութեամբ, և զօրացուցիչ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոյդ մերում հարազատ և աշխատասէր զաւակիդ սրբոյ Աթոռոյս Յովսէփայ Աստուածաբան և յոգնահանճար վարդապետիդ: Զի յանցեալ ամի հոկտեմբերի ամսոյ թուղթ եմք գրեալ առ քեզ ի պատասխանի վաղագոյն գրեցելոց թղթոցն քոց, որոց զպատասխանին՝ դեռ չեմք առաքեալ: Բայց յայնմհետէ ընկալեալ եմք ի քէն զթուղթս գրեցեալս ի նոյն 1790 թուոյ մայիսի 5, յուլ. 20. սեպտ. 8 և 14. հոկտ. 5. և սոյն 1791 թւոյս յունվ. 20: Որք թէպէտ յիւրաքանչիւր ժամանակի հասին, այլ պատասխանագրութիւն նոցա ի մէնջ յամեցաւ ցայս կէտ արտաքոյ կամաց մերոց պատճառաւ անձեռնհասութեան. նախ՝ զի ի դառնութենէ ժամանակիս բազմութիւնք խուժանաց յամենայն կողմանց այնպէս խռնին զմեօք, մինչև չտալ մեզ բանալ զաչս և երկրորդ նորատեսակ վիշտք և ցաւք յանտիրութենէ ալէկոծեալ երկրիս այնքան նեղեն զմեզ, մինչև ոչ գտանել մեզ զմիջոց ողի առնելոյ: Եւ ի վերայ այսոցիկ, որովհետև քանեաց նուիրակութեան գործն աւարտեցեալ էր վաղապէս, և ոչ յաջողելով մեզ ի ժամանակին նուիրակս առաքել, երկարեալ էր միջոցն, հարկ եղև մեզ յայսմ ամի ևս ոչ յետաձգել. վասն որոյ հազիւ հազ առաքեցաք ի նոյն վիճակսն զնուիրակս. ընդ որս և զհոգևոր որդին մեր Իսահակ շնորհապերճ վարդապետն յղեցաք ի Զմիւռին: Ապա այսու ամենայնիւ հոգօք զբաղեալ յամեցաք մինչև ցայժմ ի գրութենէ առ սիրելիդ: Որ քանիցս իսկ ձեռն արկաք, և ոչ յաջողեցաւ. որպէս ի մայիսի ԻԲ մինչ ըստ խնդրոյն քո զտէր Ստեփանի տղայն յղէաք սատի ի Թիֆլիզ, կամեցաք յայնժամ գրել զդարձուածս թղթոցդ, բայց այլ իրք ծանրացուցիչք վերաժամանեալք կասեցուցին. վասն որոյ զհամառօտ իմն թուղթք միայն կարացաք գրել ընդ նմա խոստանալով թէ պատասխանիս թղթոցդ յետոյ գրելոց եմք: Զկնի այնորիկ ի յուլիսի ամսեան ԺԵ, լուաք զբօթ մահուան հարազատի եղբօրն քոյ և սիրելւոյն մերոյ խղճալի պարոն Բէժանին, որ արդարև գառն տրտմութիւն եղև մեզ. և հոգևոր որդւոյդ մերում ևս ի հարկէ լինի սուգ և տխրութիւն. վասն որոյ ի բաց արկեալ մեր զայլ ամենայն հոգս, այժմ փոյթ կալաք գրել առ սիրելութիւն քո զայս թուղթ, առաւելապէս վասն մխիթարելոյ զքեզ ի տրտմութենէդ: Քանզի որպէս գիտեմք զթուլասրտութիւն քո առ այնպիսի պատահմունս, գուցէ թէ անդր քան զչափն կսկծիցես և տրտմիցես. բայց զի՞նչ օգուտ ի չափազանց մորմոքելոյ և տրտմելոյ, և մինչ գործ Աստուծոյ է՝ զինչ ունիմք ասել առ այն. ո՛չ ապաքէն և մեք ընդ այն ճանապարհն գնալոց եմք: Այն ևս ի մեր բախտէն է որ սիրելիքն և պիտանիքն մեր պսակին, և մնացելոցն կսկիծ և տխրութիւն ածեն: Ի սուրբ Աթոռոյս ևս Փիլիպպոս և գործակալ Գալուստ վարդապետքն որք իբր ծերք էին և մեզ ձեռնտուք, նորապէս փոխեցան առ Տէր. մնացաք յոյժ անմխիթար ի կողմանէ մարդոյ: Այլ ո՞ կարէ կալ հակառակ արարչին. կամք նորա եղիցի օրհնեալ: Ուրեմն՝ և դու սիրելի և հոգևոր որդիդ մեր մտածելով զանցաւորութիւն աշխարհիս, և զճանապարհորդութիւն ամենեցուն յաստեացըս, մի ընդ երկարեսցես զսուգ և զտրտմութիւնդ յորմէ ոչ ինչ օգտիս բաց ի սրտամաշութենէ. գոհացիր զԱստուծոյ, և մխիթարեաց ճշմարիտ յուսովն երկնաւորաւ: Եւ որ մխիթարիչն է ամենայնի Հոգին սուրբ Աստուած՝ մխիթարեսցէ զքեզ և զամենայն յետամնացսն լուսահոգի պարոն Բէժանին, փարատեսցէ զտրտմութիւնս ի սրտից ձերոց, և տացէ զուրախութիւնս մեծագոյնս. և որ փոխեացն զնա ի յանցաւոր կենացս՝ արժանացուսցէ երանական կենացն, հանդուցանելով յարքայութեան իւրում կատարելոց ընդ հոգիս արդարոցն: Եկեսցուք այժմ ի գրեալորդ, առնել նոցա զպատասխանիս: Արդ՝ նա-

խաղէս ծանուցեալ էիր զգնալդ հանդիսաւո-
րութեամբ ի Փօթիշան և ի Սըչովայ, և բա-
րեկարգելդ զնոյն անդեաց և զայլոց մերա-
յինս. և զՅովսէփ կայսեր զինչ խօսելն սր-
չովացին, վասն խնդրոյն մերոյ, և զինչ
պատասխանի առնուլն, և որպէս յուսադրելն,
և զկնի մեռանելն. և զքո ի Ռօման քաղաքի
կատարելն վասն նորա զկարգ հանգստեան,
և զքարոզ ասելն, (որոյ և զօրինակն յղեալ
էիր, և անսեալ հաւանեցաք.) և զեղբօր նո-
րին Լէօպօլայ յաջորդելն զաթոռ նորա, և
զորպիսութիւնս ինչ զպատերազմէն։ Զորո
զամենայնսն իմացեալ, ընդ ուրախալիսն ու-
րախացաք, շնորհակալութեամբ օրհնեցաք
զքեզ վասն աշխատասիրաբար մխիթարելոյդ
և շահելոյդ զմերազնեայս. և ընդ տրտմելի
վախճան բարեմիտ կայսեր տրտմեցաք։ Ո-
ղորմածն Աստուած քաղցրացուսցէ զսիրտ
նորոգ յաջորդողին, ունել զնոյն օրինակ խը-
նամս առ մերսն։ Իմացաք և զգրեալդ վա-
սըն նուիրակութեան գործոյն։ Առ որ որպէս
յառաջին թղթոջն գրեալ եմք, այժմ ևս գը-
րեմք չպակասացուցանել զփոյթդ յայնմանէ։
Ապա յիշեալ էիր զխնդիրդ վասն կոնդակաց
նուիրակութեան և առաջնորդութեան կող-
մանցդ. այնր աղագաւ ևս յառաջ գրեցաք
սիրելւոյդ թէ համբերելի է մինչև յերևել նը-
շան կատարածի պատերազմին։ Ահա յառա-
ջին գրելոյդ հետէ ցարդ զքանիս ևս տեղիս
նոր առին, և մինչ պարզումն ոչ է վերջա-
ցեալ, զայլս ևս առնուն. և չէ յայտնի թէ՝
զմերսն յիւրաքանչիւն տեղիս են թողլոց, թէ
յայլուր են ընակեցուցանելոց. երբ վճարի-
ցի պարզումն, և հաստատեսցի ուր և որպի-
սաբար կալն ժողովրդոց մերոց, յայնժամ
և մեք ըստ այնմ եմք առնելոց զհոգսն։
Այժմ բարւոք է առ միջոց մի մնալն և նա-
յելն. իսկ ի հոգևոր կառավարութենէ ահա
չկարեն ինչ պակասութիւն. զի սիրելի որ-
դիդ մեր ըստ գրեցելոյդ առնես դոցա բա-
ւականութիւն։ Եւ զթուղթսն զորս խնդրեալ
էիր առ բազումս, որովհետև կոնդակքն չը-
լինին այժմ, այնք ևս չունին յարմարու-
թիւն, մանաւանդ և մեզ ոչ գոյ ձեռնհա-
սութիւն վասն տաժանելի հոգոց մերոց և
վրդովմանց ի պատճառս յառնելոյ նորոգ
բռնակալի (զորմէ յետոյ գրեսցուք.)։ Այլ
ըստ չափու ձեռնհասութեան մերոյ գրեցաք
զթուղթս առ Սըչովայու ազնիւ աղայայ
Յովհաննէսն և որդւոյն, և յատկապէս ևս
առ ազնիւ աղայայ Նիկօլն ըստ նշանակեալ
մտացդ. և առ աւագոն տրոց, ի միամտու-
թիւն նոցա և քեզ. որք են Թ թուղթք։
Իսկ և իմացեալ քո զյափշտակութիւն սըր-
բոյն Թօմայի Աստքելոյ վանիցն՝ ցաւելով
վասն նորա և Երնջակու սուրբ Կարապետի
վանիցն, զարդիւնս ինչ նոցա սեպհի արտ-
րեալ յղեալ էիր, զի հասուսցուք Առաջ-
նորդոցն յօգնութիւն. գիտասցես, զի յան-
ցելում ամին Թովմա վարդապետն դիմեալ
առ սուրբ Աթոռս, եղիտ զհարկաւոր պի-
տոյս սրբոյ վանիցն. և ապա ի դալ սեպհ-
ւոյն գրեալ եմք նոցա վասն արդեանցն,
և զեւ պատասխան չեմք առեալ. զի նոքա
չեն յանդորրու. լսեմք թէ յառաջիկայ աշ-
նանս գալոց են, եթէ գայցեն, զդրամսն
տալոց եմք, և թուղթ առնելոց, և քեզ գրե-
լոց եմք։ Եւ ըստ խնդրոյն մերոյ՝ որ գրեալ
էիր թէ՝ զգունէտուրն և գօղէթ յղեսցի, և
գրեցի ի Հաշտարխան պարոն Մկրտումին.
Բ թուլում սինճաւ քիւրք յղել, զթուղթոն
ևս հոգալոց եմ, ծանիր առ այն. զի զու
ԳՃԾԷ դադ գունէտուր, և ԾԸ դադ գօղէթ
էիր յղեալ հանդերձ սեպհւով և հաշւով
գնոցն, որ յառաջ էհաս, և զգինն անսեալ
գրեցաք ի դաւթարոջ։ Ապա պարոն Մկըր-
տումն ԲՃԾԲ դադ, Գ չարէք գօղէթ, և մէկ
թուլում սինջաֆ էր յղեալ, որ ի մայիսին
էհաս. բայց ոչ թուղթ էր գրեալ մեզ, և ոչ
զորքանն գնոց է ծանուցեալ։ Վասնորոյ
այժմ մեք թուղթ գրեցաք նմա, առ ծա-
նուցանել մեզ զգինն յղեցելոյն, զի գրես-
ցուք ի դաւթարոջ, և ընդ փակէթի թղթոցս
յղեցաք ի ձեռն նորա, զի և զայս թուղթքս
առ քեզ հասուսցէ։ Արդ՝ թէպէտ Բ թուլում
սինջաւ էիր գրեալ, բայց մին է յղեալն, և
յիրաւի լաւն է. զմինալու զութիսն ևս
զորս խոստացեալ էիր յղել, չգիտեմ որպէս
եղեն։ Այլ վասն առ մեզ հասելոցն գունէ-
տուրից և գօղէթիցն, և սինջաֆին, շնորհա-
կալութիւն ունիմք զսիրելի որդւոյդ որում
Տէր տացէ կարողութիւն և զօրութիւն. յու-
սամք թէ՝ և զթուղթսն հոգացեալ և յղե-
ցեալ իցես։ Նախիջևանցւոց խնդիրն զոր
ընկալեալ է սպայծառափայլն, և ուրախու-
թեամբ վերադարձուցեալ զեկեալսն, ընդ

այն և ցնծայաք յոյժ. յաջողեսցէ Աստուած անթերի կատարել զխոստումն. և զինքն աճեցուն ճոխութեամբ և գերագոյն պայծառութեամբ պահեսցէ ի պարագայց ամս, ի խնամածութիւն ազգի մերում։ Զեկուցեալ էիր և զոմանց Աստուածայաջող յաղթութեանց զօրաց բարերախտ կայսերուհւոյն առ Շուէթսն և առ Հագարացիս, որ ցնծութիւն եղև ոչ սակաւ. Տէրն աջրանց ի յաջողութեան պահեսցէ զդոսա։ Շահամիր աղայի զթուղթսն զոր յղեալ էիր, ընկալաք, և զպատասխանին գրեալ եմք։ Եւ վասն թայփն և վակասին որ ի Պօլիս՝ իմացեալ ես զվաղագոյն գրեալսն մեր. յետոյ ես գրեցաք. բայց այժմ Մինաս վարդապետն եկեալ ի մեծէն Պօլսոյ՝ ի շրջակայսն է, և չէ ձեռնհաս խօսել ընդ Ըալսաանին՝ այլ ըստ գրեցելոյդ ցուցանի թէ մերձ է յաւարտումն. ապա թէ յղիցեն առ մեզ, և մեք անյապաղ յղելոց եմք առ քեզ։ Իսկ վասն ոմանց պատկերաց սրբոյ Տաճարին զոր դրեալ էիր զչափն յղել, զի նկարել տացես, բարւոք է միտքդ, սակայն պակասութիւն ոչ գոյ պատկերաց ի սուրբ տաճարին, զի թէ յորմոց, և թէ խոռչկալաց երեսքն ամենայն լի են պատկերօք և ծաղկօք։ Իսկ եթէ զայլ իմն դիտաւորութիւն ունիս, զայն ես ծանուսցես։ Եւ սակս իրաց Աւետիք վարդապետին զոր յիշեալ էիր, զայնցանէ յառաջ գրեալ եմք քեզ. իսկ աստէն զայս իմա զնմանէ. զի որովհետև նա զդրամն տուեալ էր Դաւթի ումեմն՝ որ է ի Գիլան, որոյ ժամանակն էր մինչ ի մայիս ամիսն, վասնորոյ ի մտանելն մեր ի սոյն տարի՝ միջնորդս արկեալ թախանձանօք խնդրեաց արձակել զինքն, զի ի ժամանակին հասեալ տանուցու զդրամսն և գայցէ։ Եւ մեք յետ բազում աղերս արկանելոյն դիջաք ի խնդիրն. զդատարկ ուղևորիլն ես ոչ լաւ համարելով տուաք զկոնդակ ի վերայ Շուշու՝ Շամախու և կողմանցն վասն գանձանակացն սրբոյ Աթոռոյս և ի վերայ Գիլանու, և այնու յուղարկեցաք ի փետրվարին, որ ի պայմանեալ ժամանակին հասցի անդ, և առցէ զդրամն իւր, և զարդիւնսն սրբոյ Աթոռոյս ես ժողովեալ, դարձցի. և ի գնալն աւանդեցաք զբաւական պատուէրս և խրատս, վասն համեստաբար կենցաղավարելոյ։ Եւ ի կողմանէ Գիլանու ժողովրդեանն ասացաք, որ եթէ քահանայի պակասութիւն ունիցին, գրեսցէ մեզ, զի աստի զքահանայ առաքեսցուք վասն նոցա. յորմէ տակաւին զիր չեմք առեալ։ Իսկ յետին թղթովդ ծանուցեալ էիր զառմանէն Քիլու և Իսմայիլու, և զանհնարին աղէտից մերայնոցն տառապելոց. ընդ որ յոյժ տրտմեալ կսկծեցաք ոգւով չափ, և որպէս թէ մոռացեալ զայլ ամենայն ցաւս մեր, ստացաք զայն մեծագոյն ցաւ անձին մերոյ՝ և մաշիչ կենաց մերոց։ Ո՜հ ցաւոյս. զի պատահեցաք վշտալի ժամանակի, յորում հովիւս ի նեղութեան, և հօտքն ի հարուածս. ուստի՞ է գտանել զմխիթարութիւն. փառք Աստուծոյ՝ զի՞նչ ունիմք առնել. եթէ ոչ դարձեալ ի նմանէ զողորմութիւն հայցել, և ես նոյն բարձրեալ բարերարն արասցէ ողորմութիւն և այցելութիւն։ Բայց ի վերայ աղիողորմ հեծեծանաց մերոց՝ ոչ սակաւ սրտագիտութիւն եղև մեզ այն՝ որ սիրելի որդիդ մեր ըստ կարեաց քոց և ըստ յաջողելոյն զարմանեալ և խնամեալ ես զողորմելիսն. իցէ թէ ըստ ջանից քոց և ըստ խոստման Պայծառափայլին ի գթաշատ Տիրուհւոյն յատկապէս իմն խնամարկութիւն լինիցի նոցա։ Արդարև այժմ հարկ էր մեզ մխիթարութիւն գրել առ նոսա. սակայն՝ զի գրեալ էիր թէ ի գարնանն ածելոց են զնոսա ի ներս. երկբայեցաք առ ո՞ւր լինիլն նոցա և յո՞րպիսի կացութեան, և կերպ գրելեաց մերոց թերևս անյարմար լինիցէր որպիսութեան նոցա. վասնորոյ թողաք այժմ, զի յուսով եմք յառաջիկայս գիր ընդունիլ ի սիրելւոյդ և գիտել զուրանօր և զորպէսաբար կացութենէ նոցա. յայնժամ ըստ այնմ արասցուք զգրութիւն մեր։ Եւ զորպիսութեանց մերոց այսպէս գիտասցես. զի ի վերայ զանազան տաժանմանց մերոց նոր իմն ես մրրիկ զարթեաւ ի վերայ կողմանցս. զի Մահմատ խանի որդի Ներքինի աղայ Մահմատ Հասանխանի որդի Ներքինի աղայ Մահմատ խանն ի յԱսպահանու մինչև ցԹարուէզ տիրեալ, և Թարվիզու քիւրտ բռնակալն փախուցեալ ի Շուշի, այժմ յայնկոյս Խօյու բանակեալ ծանր զօրու իբր Զ. հազարաւ, հրաւիրէ առ ինքն զիշխօղսն կողմանցս. յորոց Խօյուն և Ղարատաղուն և Նախչուանուն և այլք գնա-

ցեալ են. իսկ տեղւոյս իշխօղն զեղբայրն և զախունդն յղեալ ընծայիւք և կասկածելով վասն իւր, զարմըախս նրկրիս ժողովէ ի բերդն և ամրանալոյ պատրաստութիւն տեսանէ. որով նոր ևս վրդովի նրկիրս և միտ֊համուռնեղութիւնս միանգամայն և ի տագնապս տարակուսանաց կան, և մեր կիրք արտաքինք և ներքինք՝ առաւել քան զամենեցուն, և անտանելի, ապաստան կամք միայն ի յողորմութիւն Քրիստոսի, պահպանել զսուրբ Աթոռս և զմեզ ի բազմակասկած փոթորկէ յայսմանէ։ Զայսքան ինչ գիտացեալ այժմ, զսէրդ և զհարազատութիւնդ՝ հանդերձ որպիսածանոյց թղթովդ անպակաս առնելով ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽ և յօգոստոսի մուտն, ի լուսակառոյց Աթոռս սուրբ Էջմիածին։

ԻԳ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին.

Սիրելի որդի տէր Ստեփան

Վաղուց է ի քէն գիր չունիմ. յայսմ թուոջս և ի յունվարի 18 գրեցեալ թուղթ ընկալայ ի յազնիւ Շահամիր Աղայէն. ապա ի քէն ոչ զոյր գիր ի նմա, վասն այսմ կամ ի տարակուսութեան. ևս մշտապէս սպասեմ, գիր և համբաւ ընկալնուլ ի քէն՝ և միամըտիլ, վասն յաջողութեան զործոյդ։

Ի յիշատակ Հնդկաց ժողովրդեանն՝ գԱղօթամատոյց [6] գիրքն տպեցուցաք. և ութսուն հատ առաքեցաք Շահամիր Աղային, տարածել յամենայն ուրեք, յառաջին պըտուղ նուիրացն իւրեանց. ի Մատրաս և ի Սուրաթ հասարակ կոնդակ ևս դրեցաք. նոյնպէս և յատուկ գիր, օգնութիւն արարողացն, որոց զանուանս գիտէաք, յուսամ որ հաճոյ երեեսցի յաչս նոցին. զգիրքս այս, և բազումք սիրահարեցին, ստանալ յիշատակ ինքեանց, վասն պայծառութեան ազդի և մշտնջենապէս յիշելոյ զինքեանս, և անմահ մնալոյ զանուանս իւրեանց ի տպի անռ։

Զարմանամ ի վերայ խոհեմութեան քոյ, որ ոչ ևս նկատեալ թուրքաց և պարսից յերկրի վրդովմունքն և ճանապարհաց խառնակութիւնքն, և զսուրբ ժողովրդեանն շըրջեցուցեալ ընդ քեզ, որպէս ոչ դիտես, որ յայսմ միջոցի փող պահելն առ քեզ, վտանգ է, և կամ ուրեք տանիլն ընդ քեզ, յայսմհետէ չունիս հրաման ի մէնջ փող շրջեցուցանել ընդ քեզ, այլ որքան օգնութիւն գանալ ևս ի բարեպաշտ անձանց, և կամ այսուհետև գտանիցես, զամենայնն յանձնեսցես հարազատ վէքիլին մերոյ Ազնիւ Շահմիր Աղայ Սուլթանում Շամիրամեանին, եթէ մերձ իցես, իսկ եթէ ի հեռի տեղ իցես, և ևս ուղեորեսցիս առ նա. փութով հասուցանել մեզ, որ մեք զոյգն ինչ թեթեւասցուք ի պարտուց, և զգործս մեր յառաջասցուք արդեամբն այնմիկ։ Քանզի տապակիմ չքաւորութեամբ և սկսուածքն մեր անկատար մնան, զօրութիւն ոչ է մնացեալ ի յիս, որ թարց օգնականութեան Հնդկաց ժողովրդեանն կտրողանայցեմ կառավարել զմեծագործութիւնս այս և ի կատար ածել։ Ներ չորս և կամ հինգ ամսոյն կարելի է որ ստանամք, զսուրբ բարեպաշտ ժողովրդոցն հնդկաց, ի ձեռն Ազնիւ Աղայ Շամիրին։

Իսկ եկեղեցական յիշատակիքն և կամ ընծայքն, զորս յանուն մեր նուիրեալ են օրհնեալ ժողովուրդքն, առ քեզ պահիցես զամենայն թարց դրամոց։

Քոյայինքն ամենեքեան, առողջութեամբ են, միամիտ լեր վասն նոցա, յիսուն ոսկի, որ է քսան թուման առաքեցի ի տունն ձեր, ընկալեալ են ամբողջ։

Զ. (80) հատ աղօթամատոյցն է, ԻԸ. (28) հատ Ողբն էջմիածնայ [7] և քանի մի հատ Հեղ Սաղմոս և տետր։ Ի Մատրաս և ի Սուրաթ ով ոք ողորմութիւն է տուեալ քեզ, զորոց անունս դրեալ ևս մեզ, նոցա մէկ մէկ հատ ընծայեցի. Իսկ Շամիրամ Աղային և Աղայ Յօհանջան Գերակեանին 10..10 առաքեցի։ 6 հատ մեծ պատկերքն իմ առաքեցի ըստ խնդրոյդ 1 հատ Շամիրին 1 հատ Աղայ Մկրտիչ Էմնիազին, և Ա. հատ ի Կալկաթայ Պետրոսի որդի Աղայ Յարութիւնին։ Իսկ մնացեալ պատկերքն և դրեանքն հասուցանել քեզ, եթէ դեռ ի յերկ֊

ըի յայտը լիցիս որ դու արժանաւոր անձանց մատուցես. իսկ եթէ դու գնացեալ լիցես ինքն Շամիրամ Աղայն որպէս և կամիցի և ում պատշաճաւոր տեսցէ հեռաւոր քաղաքացն նոցա հասուսցէ։ Իմ փոքրիկ երկու պատկերք ես առաքեցի շատ գեղեցիկ և մեծագին, մինն Շամիրին, միւսն Յօհանջան 'ներակետնին. Շամիրամին առաքեցի ե քննազի փոքրիկ պատկերն։

Մահն Խաչիկ Առաքելի միջարեկ աբար գիս. զի յոյո մեծ ունէր ի նմանէ ըստ գրեցելոցն ձերոց. Աստուած զհոգի նորա լուսաւորեսցէ, և գյիշատակիս իւր սփոփեալ երկար կենօք պահեսցէ. թերևս նոքա լցուսցեն զկամս նորա։

Վիրքն այժմ ի խաղաղութեան են, բայց շատ աղքատք, սուրբ Աթոռն նոյնպէս։

Ռուսքն յաղթեցին Թուրքաց. Եւրոպիու թագաւորքն թէպէտ կամեցան նմա օգնել, չկարացին, այժմ հաշտութիւն խօսին. մեք որ վասն հասարակաց բանին եկեալ էաք ի Պետրօպօլք՝ մեծ իշխանն յետ դարձաւ ի յեաշ, մեք ևս ընդ նմա դասնամք, և ի ձմռանն վերստին գալոց եմք աստ։

Պարոն Ստեփան Աղաբարի Սաղմոսն և Ժամագիրքն տպելն չկարացին հասուցանել որ սովաւ առաքէի, ինձ դրամ հասո, որ տառապիմ յոյժ։

Ուր և իցես քահանայից և ժողովրդեան օրհնութիւն տացես յինէն, նորընծայ Տէր Գրիգորն, Յովհաննէս Սարկաւագն և այլք, զքեզ սիրով ողջունեն և մեք փափաքելով առողջութեանդ, յաջողութեանդ և դալստեանդ,

Մնամ աղօթարար խոնարհ՝

Յովսէփ Արքեպիսկոպոս
Ռուսաց երկրի Հայոց։

1791 յօղոստոսի 3.
ի Պետրպօլք։

Որպէս յառաջ գրեալ էի քեզ 'ի Պետրպօլք մեզ վէքիլ է հարազատ սիրելին իմ ազնիւ Պարոն Փիլիպպոս Մանուչարեանն. զամենայն թուղթս՝ Աղայ Շամիրն՝ ի ձեռս նորա առաքէ. դու ևս ամենեցուն ծանուցանես, որ ով գիր ունիցի առ մեզ և կամ դրամ կամիցի առաքել վասն տպման ե կամ վասն դպրոցին, Շամիրամ Աղայի դիտաւթեամբն նմա հասուսցեն։ Նարեկացւոյ պատկերն -[8], քանդակել ետու. այժմ բոլոր Աստուածաշնչի պատկերն տամ քանդակել։ Եւ այլն.

Մնամ կրկին աղօթարար վասն քոյ՝
Յովսէփ Արքեպիսկոպոս

Տէր Բազդասարն հարկիւ ըերցես, որպէս և հրաման ունիս, ընտանիքն խեղճ են։

1792

ԻԳ. Թուղթ առ ռուսաց երկրի նուիրակ եւ Առաջնորդ Յովսէփ վարդապետն ի համառօտ պատասխանի թղթոյն ի Մոսկովու ի 1791 թուին Փրկչի, օգոստոսի 18 գրեցելոյ. եւ ազդարարութիւն մահուան Վարդան վարդապետին ի յԱմիդ. եւ արձակիլոյ սպասաւորի նորին Աբրահամ վարդապետին ի Հաշտարխան ի տեսութիւն ծնողացն.

Յանցելում ամին՝ թող զի մայիսի ԻԲ. ընդ Տէր Ստեփանի որդւոյն գրեալ համառօտ թուղթն, գրեցաք ի յօգոստոսի մուտն երկարօրէն թուղթ մի ի մխիթարութիւն ի կողմանէ հոգելոյս եղբօրն քո, և ի պատասխանի քանեաց թղթոցն քոց. զոր և հանդերձ ինն թղթովք՝ զորս խնդրեալ էիր առ Աչովայու ազնիւ աղաչայ Յովհաննէս Քփրենց և առ որդիսն, և առ այլս յայլուր, յղեցաք ի Հաշտարխան առ գործակալ պարոն Մկրտումն, դրելով և նմա զի հասուցէ առ սիրելիդ։ Իսկ յայսմ ամի ի մարտի ԻԹ ընկալաք զթուղթ քո յանցելոյ ամի օգոստոսի 18 ի Մոսկովու գրեցեալ, և ծանեաք զոր ինչ ծանուցեալ էիր։ Բայց ընդ սակաւ մի բերկրութեան որ վասն ուրախալի պատմութեանց ինչ Տէրութեան կայիցդ, ստացաք զառաւել տրտմութիւն և զցաւ սրտի ընդ ղառնաղէտ տարաժամ մահն միայնակ որդւոյն Ազնիւ Յովհաննէս Աղային, և վասն վախճանի կենաց Քփրեանց Ազնիւ Աղաչայ Յովհաննիսին։ Որպէս խնդրեալ էիր հարկաւոր գիտացաք գրել զմխիթարութիւնս առ ազնիւ Յովհաննէս աղայն, և ազնուուհի ամուսինն, և առ հանգուցեալ Աղաչայ Յովհաննէսի որդիսն, և առ երկուս ոմանս վասըն նուիրացն, յորս և ձեռնարկեցաք իսկ ի գրել, բայց վասն յոգնապատիկ զբաղանաց, այն թուղթք ոչ հասին ընդ այնմ թղթոյ ուղեորիլ, մինչ կարաւան ելանէր դէպ ի Թիֆլիզ, և թղթաբերս հարկաւորիւր ընդ նոսա ուղեորիլ։ Վասնորոյ զայս համառօտ թուղթ այժմ հասուցաք կարաւանին։ Իսկ զայն թղթոց [illegible]ացեալսն, և զքոյդ թղթոյ լիալիր պատասխանին յառաջիկայ աւուրքս գրեալ յղեսցուք։ Այլ արդ՝ այսու թղթով զայս իմա. զի որպէս կանխաւ գրեալ ունիմք քեզ, զՎարդան վարդապետն առաքեալ եղաք ի նուիրակութիւն Տիգրանակերտու։ Բայց խղճալին զշրջակայ թեմսն և զՏիգրանակերտու մեծ եկեղեցւոյ զգործ նուիրակութեան կատարեալ, և ի փոքր եկեղեցին ես ձեռնարկեալ, ապա օրհասին մահու վերաժամանելով վախճանեալ էր բարի մահուամբ, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ։ Իսկ լուսահոգին ի հիւանդութեան կոչեցեալ էր զիշխանսն քաղաքին և զղանձապահսն մեր, և կտակեալ էր նոցա՝ յետ մահուան իւրոյ զսակաւ թերին գործոյն յանձնել օրհնաձիր որդւոյն իւրոյ Աբրահամ վարդապետին, և յետ վերճարմանն՝ ուղևորել առ սուրբ Աթոռս, և գրել մեզ, զի քանի եղանակաւ շահեսցուք, և հրաման տացուք գալ ի Հաշտարխան ի տեսութիւն ծնողացն և դառնալ ի սուրբ Աթոռս ի միաբանութիւն սմին։ Եւ օրհնեալ իշխանքն յանձն առեալ զամենայն կտակսն՝ յետ մահուանն զամենայն կայսն պահպանեալ էին՝ ի ձեռնութենէ այլազգեացն, և զթերին գործոյն՝ Աբրահամ վարդապետին վճարեցուցեալ էին, և ապա ամենայն արդեամբքըն և կայիւքն ուղևորեալ էին առ սուրբ Աթոռս. և զամենայն կտակսն լուսահոգւոյն վկայութեամբ գրեալ էին մեզ։ Եւ որպէս կտակն էր, այնպէս արարաք, շահելով զԱբրահամ շնորհունակ վարդապետն՝ որքան արժանն էր, և հրաման ետուք հանդերձ բաշպօրթիւ, զի եկեալ ի Հաշտարխան տեսանիցէ զծնօղսն և զընտանիսն և դառնայցէ ըստ ժամադրութեանն։ Ընդ նմին ի դէպ համարեցաք և զայս թուղթ առ սիրելիդ գրել,

նախ՝ զի գիտասցես զորպէսն իրացն զորին, և երկրորդ՝ զի եթէ ի Հաշտարխան պատահիցես, ժիրով և խնամարկութեամբ շահեսցես, և խաղաղութեամբ վերադարձուսցես առ սուրբ Աթոռս։ Այսքան առ այս շատ լիցի։ Զայլ որպէսն սրբոյ Աթոռոյս և մեր՝ և զկասկածակրութիւն ի շարժմանէ լեզկեաց, և զայլ ես որ ինչ հաքկաւորիցի, միւս թղթովն ազդարարասցուք։ Ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի ՌՄԽԱ թուոջս, ի յԱպրիլի ԺԲ. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ԻԵ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն ի լիագոյն պատասխանի թղթոյն նորա յամի Փրկչին 1791, յօգոստոսի 18 գրեցելոյ վասն իրաց եւ իրակութեանց ոմանց.

Յամսոյս Ապրիլի ԺԲ, և օգոստոսի մուան թուղթ մի գրեալ առ քեզ ընդ հանգուցեալ Վարդան վարդապետի սպասաւոր Աբրահամ ուշիմամիտ վարդապետին յիշեցաք ի նմին զյանցեալ ամսոյ մայիսի ԺԲ, և օգ. մուան թուղթս գրելն մեր առ քեզ, և ծանուցաք զհասանիլն առ մեզ թղթոյն քո ի նոյն օգոստոսի ԺԸ գրեցելոյ ի Մոսկովու։ Եւ զի նեղ էր ժամանակն, միայն վասն թղթաբերին գրեցաք ինչ։ Այլ զլիագոյն պատասխանիս գրուածոցդ և զայլ ինչ խոստացաք յետ աւուրց գրել. զորս ահա գրեմք։ Արդ՝ ծանուցեալ էիր զգնալդ ի Պետրպօլք և հանդիպիլդ դառնաղէտ սգոյ Ազնիւ աղայ Յովհաննէսին և իւրայնոցն վասն տարաժամ մահուան միայնակ որդւոյն իւրեանց Աղայ Յարութիւնին. որ արդարև մեզ ևս եղև մեծ կսկիծ։ Վասնորոյ ըստ խնդրոյդ ահա զթուղթս մխիթարութեան գրեցաք առ ազնիւ Աղայ Յովհաննէսն և առ կենակիցն յատուկ յատուկ զորս Աստուած մխիթարեսցէ։ Եւ վասն գռնէտուրին և գոզէթին և ննջաֆ քրքոցն գրեալ էիր թէ վաղ եմ առաքեալ։ Յիրաւի վաղապէս հասեալ են, որպէս առաջին թղթովն ազդարարեալ եմք քեզ շնորհակալութեամբ. սակայն մնջափն մէկ թուլում էր. չիմացաք թէ՝ պարոն Մկրտումն վասն է՞ր զերկուս չէր յղեալ։ Իսկ մինալու ղութւոյն աղագաւ որ գրես թէ ոչ գտանին այժմ, ապա՝ զինչ եմք առնելոց. յանդուգն առօզքըն[29] որք ի վաղուց սովորեալ են առնուլ, այլ ևս պահանջեն։ Ուրեմն՝ վերստին գրեմք սիրելւոյդ, զի հարկաւորապէս փոյթ կալեալ թէ ի մօտուստ և թէ ի հեռուստ առ ձեռն բերեալ յղեսցես, որոյ աղագաւ շնորհակալ լինելոց եմք։ Գրեալ էիր զցաւակրութեանցդ ի Պետրպօլք և զվերստին առողջանալւոյդ։ Տրտմութիւն է մեզ հիւանդանալդ. իսկ ընդ Աստուծով առողջութիւն գտանելդ ուրախացաք։ Պահեսցէ Տէր առողջ և անփորձ յամենայն վտանգից զսիրելիդ ի զօրութեան և ի կարողութեան առ իւրահաճոյ առաջադրեալ իրս քո։ Ծանուցեալ էիր զեւրոպացւոց տէրութեանց ոմանց յառնելն ի վերայ Աստուածադօր տէրութեան ռուսաց, և նկուն լինիլն. ապա զհաշտութիւն խօսիլն ընդ մէջ մեծի կայսերուհւոյն և այլազգեացն, և վանելն զօրաց դոցա զզօրութիւն եպարքոսին և տիրելն մեծի բանակին նոցա, և զգերութիւնսն, և զայլն։ Աղա առ ի խնդրոյ եւրոպացւոցն՝ զհաճիլն հզօր թագուհւոյն ի հաշտութիւն, և առ այն զպայմանս առաջադրելն, և զպայծառափայլն յղելն առ ի խօսիլ վասն հաստատութեան այնոցիկ, և այլն։ Զորս իմացեալ մեր՝ թէպէտ և ընդ նեղսակրութիւնս մերայնոցն ցաւիմք, բայց վասն յամենայնի յաղթօղ երևելոյն դոցա ի պարծանըս սրբոյ խաչին Քրիստոսի ուրախ եղաք, և հայցեմք միշտ ի հզօրեղութեան պահել զգաւազան կայսերութեան դոցա ընդդէմ հակառակորդաց։ Թէպէտ սիրելիդ չէիր դրեալ զկատարմանէ ինչ հաշտութեան, սակայն աստ հանդիպօղքն ի Հազարացւոց երկրէն՝ թէ մերայինք, և թէ այլազգիք՝ ասեն թէ՝ հաշտութիւն եղև. բայց զդաշանցն հաւաստի ինչ ոչ խօսին, և մեք յերկրայս մնամք մինչև ի քէն գրով իմասցուք զկատարեալ ստուգութիւն իրացն։ Նաև զպայծառափայլէն զրօթալի լուր իմն հնչեն բազմիցս. զոր համարիմք թէ հազարացիքն առ նախանձու և ի քաջալերութիւն ազգի իւրեանց իցեն յօրինեալ ստութեամբ։ Բայց և տարակուսիմք յոյժ. վասն որոյ՝ գրեմք սիրելւոյդ, զի

զնորին որպէսն ծանուցես մեզ ի միամտութիւն։ Տացէ Աստուած՝ զի սուտ լինիցի հրաչակ ննգաւորացն. և անդորրութիւն ընծայեսցի մտաց մերոց։ Գիտացաք և զհանգերձիլդ գնալ ի Նոր Նախիջևան. և անտի ի յՇաշ. և զսիրելի որդին քո և մեր դԳրիգոր շնորհունակ վարդապետն [130] ի Նախիջևանու յղել ի Հաշտարխան վասն նուիրակական գործոյն սրբոյ Աթոռոյս, և առ զոյսարաստի եղեալ արգիւնսն յանձնել նմա՝ հասուցանել ի սուրբ Աթոռս։ Բարւոք ես խորհեալ, և շնորհակալ եմք։ Թէպէտ յայլ և յայլ հոգս կաս, բայց որպէս և յառաջ դրեալ եմք, առ այն գործ ես զփոյթդ մի պակասեցուցես. քանզի վասն դառնութեանց յետին ժամանակիս նուազեալ են մուտք սրբոյ Աթոռոյս և ելքն առաւելեալք յոյժ։ Ուստի՝ սակս խարջելեաց ոչ սակաւ տաղնապ գոյ մեզ։ Ուրեմն՝ ըստ հարազատութեանդ ջանալ պարտիս յարդեանց այտի օգնութիւն հասուցանել մեզ։ Ֆռանսիոյ թագաւորութեան շփոթումն, և Փափին իշխանութեան նշկահիլն ես յայտնի եղև մեզ։ Իսկ նոքա թէ առժամանակ մի խռովին, յետոյ խաղաղանալ կարեն, բայց Հայաստան աշխարհիս և ազգի մերում՝ յԱստուծոյ խաղաղութիւն ծագեսցի։ Գրեալ էիր և զողորմած կայսերուհւոյ ցաւակցիլն Ազնիւ Յովհաննէս աղային առ մահըն որդւոյն, և շնորհելն զընդարձակ գերեզմանատեղի ազգին մերոյ. և հրամայելն նմա զեկեղեցի շինել, և այլն։ Որով ստացաք զդիւրութիւն սրտի. զոր և յիշեցաք ի Թղթոջ ազնիւ աղայ Յովհաննէսին։ Եւ զի ընդ ազնուուհի կենակցին տուեալ էին սրբոյ Աթոռոյս զԱԾ պաճախլու ոսկիս, առ այն շնորհակալութիւն գրեցաք ի Թուղթս երկաքանչիւրցն ևս։ Նաև առ Ջուղայեցի ծերունի Յովհաննէս վարդապետն վասն Ժ. Թուման հոգեբաժնի և յիշատակացն, և առ Աննայ Իւանովնէն վասն Ժ. Թուման հոգեբաժնի առնն, գրեցաք զԹուղթս միամտութեան։ Աչմլայու Քփրենց աղաչայ Յովհաննէսի վախճանիլն ևս տրտմութիւն եղև մեզ. մանաւանդ առ այն՝ զի տակաւին ոչ էր հասեալ նմա Թուղթն մեր, զոր յանցելում ամին գրեալ եմք։ Ապա այժմ որդւոցն մխիթարութիւն գրեցաք, Տէր Ստեփանի զորդին յանցեալ Թուոյ մայիսի ԺԲ յղեցաք աստ. որոյ վասն Թէպէտ Ժ. Թուման էիր դրեալ տալ, այլ ԺԱ. Թուման ետուք Յօհանջանի տղայոցն, որովհետև մինն ի նոցունց առեալ զաղայն հասոյց ի Թիֆլիզ առ Տէր Ղազարըն. և դարձաւ։ Բայց այժմ լուաք թէ դեռ ևս տղայն ի Թիֆլիզ է, և չեն ուղարկեալ։ Վասնորոյ քանի աւուրբք յառաջ ընդ Աբրահամ վարդապետին գրեցաք Տէր Ղազարին հարկիւ, զի շուտով ուղևորեսցէ զաղայն, և Աբրահամ վարդապետին ևս ասացաք, զի թերևս ընդ ինքեան առցէ ի Հաշտարխան։ Նոյնպէս և վասն դրքոյն ես զոր վաղ ուրեմն եմք յղեալ, գրեցաք Տէր Ղազարին, զի թէ դեռ չիցէ յուղարկեալ՝ փոյթ ընդ փոյթ յղեսցէ։ Գիտասջիր և զայս. զի քանի ամօք յառաջ Պարոն Եսայուն վասն ԱՃԾՍ Թուման ԵՌ-դեանին ղաւղ էաք տուեալ, բայց ի դրամոցն մնացեալ դոյր ի վերայ իւրն. որոյ աղագաւ թամասուկ էր տուեալ մեզ։ Ութսուն Թուման ևս Վարդան վարդապետին տալոյ մնացեալ ի դրամոց նորին, և թամասուկ տուեալ նմա որ մինչ գնայր ի Նուիրակ Ամգայ, զայն թամասուկն ետ մեզ առնուլ զդրամսն ի պարոն Եսայէն։ Այժմ որպէս և իցէր՝ զհաշիւն անսաք. մնաց Ի. Թուման տալոյ, և վասն այնր թամասուկ ետ։ Իսկ զորպէսութեանց կողմանցս և երկրիս այսպէս իմա. յանցեալն գրեցաք քեզ զգալն Աղայ Մահմատ խանին ի Թարուէզ. և կոչելն առ ինքն զիշխօղսն երկրացս. յորոց շատքն գնացին, և մերն և այլք հեռաւորք զընծայս յղեցին, և հպատակութիւն ցուցին, բաց ի Շուշւոյ Իբրահիմ խանէն, Եւ Աղայ Մահմատ խանն զմեր խանի եղբայրն և դախունան որք գնացեալ էին առ ինքն՝ խիլայիւք դարձոյց, և զպարգևս և ռոզամս յղեաց սմա. և զայլոց երկրաց իշխանսն ևս պարգևատրեալ դարձոյց, այլ պատանդս էառ ի նոցունց. և յաշնանն դարձ արար ի Թէհրան, ժամադիր լինելով նոցա, ի գարնանս կրկին գալ յայսկոյս։ Իսկ յետ դարձման նորա, Իբրահիմ խանն զԿովկասային վիրազն քանեօք հազարօք ածեալ առ ինքն, հանդերձ իւր զօրօքն ի միասին յեղակարծ յարեան ի վերայ Նախչուանու, աւերեցին զքաղաքն և պաշարեցին զբերդն մինչև ի ԺՁ. աւուրս։ Իշխօղն տեղւոյն, թէպէտ յոյժ նեղեալ, բայց ընդդիմակացեալ՝

ու եւ ղրերդն, մինչեւ տեղւոյս եւ Խօյայ իշխօղքն միաբանեալ զօրօք իւրեանց գնացին հասին յօգնութիւն նմա, եւ յաւուր տօնի սրբոյն Յակովբայ Հայրապետին, մատուցեալ ընդ թշնամեացն ի յատուկ խնամոցն Աստուծոյ վանեցին զզօրութիւն լէզկեացն, կոտորելով ի նոցունց դքանի հարիւրս. այլքն ընդ Իբրահիմ խանի զօրացն խուսեալ դարձան ի Շուշի։ Կատաղի լէզկիքն ձմեռեալ անդէն յայնմ երկրի, այժմոյս լսեմք թէ ժողովին ի մի վայր, յարձակել յայս կոյս եւ յայլուր յասպատակութիւն, եւ կամ դառնալ ի տեղիս իւրեանց։ Ինչ եւ իցէ՝ յորչափ եւ գազանքն այնք յորջացեալ կան անդէն, այս կողմանցըս ապահովութիւն ոչ գոյ, եւ մեր կասկածըն՝ առաւել։ Ամենազօրն Աստուած ցրեսցէ զզօրութիւն նոցին եւ զվնասակար խորհուրդսն. եւ անդորրութիւն շնորհեսցէ բազմավշտակիր երկրացս եւ խղճալի մերայնոցն, եւ մանաւանդ սրբոյ Աթոռոյս։ Եւ դու սիրելիդ հաստատուն կալով ի սէրդ եւ ի մտերմութիւնդ, եւ զորպէսածանոյց դիրդ անպակաս առնելով, ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԱ, եւ յԱպրիլի 17, ի սուրբ Էջմիածին։

ԻԶ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Մատրաս առ Շահամիր աղային, ի պատասխանի թղթոյն նորա գրեցելոյ ի թուոջ Փրկչին 1789, ի նոյեմբ. 1. եւ շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն.

Յորմէ ճշմարիտ սիրով եւ կարօտիւ, հոգւոյ օրհնութեամբ եւ պահպանողական շնորհիւ Քրիստոսաէջ սրբոյ Տեղւոյս՝ տացի ողջոյն խաղաղարար՝ ազնուազունի սիրելւոյդ մերոյ եւ օգտախոհ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Աստուածասէր եւ նուիրմք զօրացեալ պերճապատիւ եւ շքեղաշուք պ. Շահամիր Աղայիդ։ Որում եւ գիտութիւն լիցի։ Զի յամի Փրկչին 1789 ի սեպտեմբերի 11. եւ ի 1791 ի մայիսի 13, թուղթս եմք գրեալ առ ազնուութիւն քո որոց եւ զյետինն յղեալ եմք ձեռամբ ի Հերակլ Արքայէն յայսկոյս առաքեցեալ պ. Կարապետին, եւ յուսամք թէ յիւրաքանչիւր ժամանակին հասեալք իցեն։ Ապա ի թուականի Փրկչին 1789 ի նոյեմբերի 1 գրեալ թուղթդ՝ եհաս առ մեզ յայսմ ամի մարտ ամսոյն, որով գիտացեալ նախ զողջունէ քումմէ ուրախ եղաք։ Իսկ վաղագոյն քան զայն հասին առ մեզ սիրանիշ ընծայքն քո ամբողջ ծրարաւն, ձեռամբ Թիֆլիզեցի պ. Յարութիւնի ուրումն. որք էին 4 թօփ ներկեալ կտաւ, 2 թօփ մատրփակ, 2 թօփ եզերքն ղալամքեար, 2 թօփ կապոյտ մահրամայք, 2 թօփ եաւշան ղալամքեար։

Զորս սիրով ընկալեալ շնորհակալ եղաք զբարեպաշտ սիրելւոյդ. ամենահարուստ պարգեւաձիրն լի արասցէ զամենայն պէտս քո, օրհնեսցէ եւ զօրասցուսցէ, փրկեսցէ ի վտանգից, եւ պահեսցէ ի խաղաղութեան եւ ի բարեյաջողութեան։ Բայց զի անագանեցաւ թուղթս, պատճառն է, նախ խուժանն զանազան զբաղմանց հանապազօր կուտեալ ի վերայ մեր. եւ երկրորդ ակնկալութիւնն մեր գալստեան Նուիրակ Եփրեմ վարդապետին առ այն՝ զի գրես թէ՝ ունիմ ինչ բերանով ասելոյ նմա. որ եկեալ յայդր պատմեսցէ։ Եւ որովհետեւ զգործն աւարտեալ է՝ եւ ժամանակն աւելապէս երկարեալ, դիտէաք նմա՝ որ զասացեալսն քո իմանայաք ի նմանէ եւ ըստ այնմ առնէաք զգրութիւն մեր առ սիրելիդ։ Այլ այժմ թուղթ ընկալաք ի նմանէ ի Մուչլիբանդարու յանցեալ տարւոյ նոյեմբերի ամսեանն գրեցեալ, եւ ծանեաք թէ նա ոչ ժամանէ առաջադրութեանն մերոյ։ Վասնորոյ փոյթ կալաք գրել զայս թուղթ։ Եւ նախ զայս ասասցուք, զի նուիրակն համառօտիւ գրեալ էր մեզ զշփոթմանէն տեղւոյդ մերազնեայցն, եւ զքոյդ վրդովման, ընդ որ ոչ սակաւ տրտմութիւն եղեւ մեզ։ Այլ զի ի կրկին գալն իւր առ ձեզ ի խաղաղութիւն է համոզեալ, եւ խաղաղացեալ էք առ հասարակ, ընդ այն սրտադիւր եղաք։ Հոգին սուրբ Աստուած որ ի խաղաղասէրս հանգչի, անհետ արասցէ ի ձէնջ զխռովութիւնն, եւ արմատացուցեալ զխաղաղութիւնն ի ձեզ, այնու բարեկեցիկ պահեսցէ զձեզ, զի եւ մեք բարի համբաւով ձեր զուարճասիրա լիցուք։ Եկեսցուք այսուհետեւ ի պատասխանագրութիւն բանիցդ գրեցելոց։

Նախապէս գրեալ էիր թէ՝ Կոստանդնուպոլիս կամ մատնեցեալ իցէ կայսերացն, կամ թէ խաղաղութիւն եղեալ է ընդ մէջ նոցա և Սուլտանին։ Ցիրաւի՝ ընդ Ալամանոն վաղագոյն հաշտութիւն եղև, և ընդ Ռուսորն նոր խաղաղութեան ձայնն հնչէ. և դաշնադրութիւն են սկսեալ առնել, կատարումն տակաւին ոչ է յայտնի։ Իսկ վարկանելով սիրելւոյդ՝ թէ ամենայն իրքն ըստ քոյդ հաւատալոյ իցեն գլխաւորեալ, առ այն գրեալ էիր արկանել զհիմն արժանաւոր շինութեան առ բաղում օգտութիւնս. որպէս ի Կայսերուհոյն Ռուսաց, նոյնպէս և ի կայսերէն Ալամանաց ստանալ զնոմոս՝ ընդ հրամանաւ ունելոյ զկառավարութիւն կարգաւորաց ազգի մերոյ, և այլն։ Եւ զՅովսէփ արք եպիսկոպոսէն գանգատանաց ոչ ախորժել լսել ումեք և թողուլ յառաջնորդութեան Նոր Նախչուանու, և առ ամենեսեան մերայինսն գթած և ներող լինել։ Առ որս ծանիր, զի յառաջագոյն մինչ Ալամանք նոր առին զՄիչով ուր են ի մերայնոց ժողովուրդք, և ոչ թողուին ի կարգաւորաց մերոց մտանել անդ, թուղթ գրեցաք առ կայսրն Յովսէփ և առ դեսպանն նորին որ ի Պետրպօլք, և յղեցաք առ Յովսէփ արք եպիսկոպոսն և առ Ազնիւ աղայ Յովհաննէսն, հասուցանել ի ձեռն դեսպանին զթուղթ կայսերն առ նա։ Ցորում էր խնդիր մեր, շնորհել զհրովարտակ համամիտ Ռուսաց կայսերուհւոյ շնորհեցելոյն։ Որոց աղագաւ դեսպանն և Յովսէփ վարդապետն գրեցին մեզ թէ հասուցեալ իցեն առ կայսրն և նա խոստացեալ է կատարել զխնդիր մեր զկնի թեթևանալոյ ի խուժանաց պատերազմին։ Բայց վախճանեցաւ, և բանն մնաց անկատար։ Այլ մեք իսպառ ոչ եմք վերջացեալ յայնմանէ փութոյ, զնոյն հայցուած յիշեցուցանել եղբօր նորա նորոգ թագաւորելոյն Լէօպօլայ։ Տեսցուք թէ զիարդ յաջողեսցի։ Եւ առ հոգևոր որդին մեր Յովսէփ Աստուածիմաստ վարդապետն ըսէր և զխնամարկութիւն ունելով վասն բարեջանութեանն, չունիմք յօժարիլ ունկնդնելոյ բողոքման զնմանէ թէ լինիցի, այլ օժանդակեմք նմա ըստ պատշաճողութեանն, և երթևեկն թղթոց անպակաս լինի ի մէջ մեր. առ այս մի ինչ հոգ լիցի սիրելւոյդ։ Երկրորդ՝ գրեալ էիր զամենայն թուղթս ժառանգութեանց սրբոյ Աթոռոյս՝ վերանորոգել տալ ձեռնադրութեամբ իշխողին երկրիս, և այլն. բարեմտութեամբ է վոյթ քո, բայց ի յայն յուսաւորութենէ թէ՝ մերձ իցէ խանգարել պետութեանց օտարասեռիցն։ Եւ սակայն նոքա կան այժմ յիշխանութեան իւրեանց, որպէս յերեկն և յեռանդն, և ոչ գոյ գեռ ևս նշան դրդուեցման ինչ։ Այլ մինչ նկատեցեմք զայնպիսի նշան, ի հարկէ մեք առաւել ևս հոգամք վասն նշանակելոցդ, և անդր իսկ քան զցուցեալսդ։ Երրորդ՝ գրեալ էիր թէ՝ զԿիլիկիոյ Թէոդորոս կաթուղիկոսէն և զԱղուանից Յովհաննէս կաթուղիկոսէն լուաք թէ վախճանեալ են, իսկոյն զառաջնորդս յղեա, և այլն։ Յովհաննէս կաթուղիկոսն թէպէտ վախճանեցաւ, բայց իբոն գոյր ընդ նմա համաժամանակ. որոյ վասն ամենայն երկրայինքն բազմակնքով աղերսեցին, և բուռն իշխօղն ևս խնդրեաց՝ շնորհել նմա վարել զկաթուղիկոսութիւն տանն Աղուանից, վասնորոյ և մեք ետուք։ Իսկ Թէոդորոսն Կիլիկիոյ կենդանի է։ Եւ Աղթամարուն առաջինն մեռաւ. և այլ ոմն օծաւ, և նա հրաժարեալ, զայլ ոմն եդին, նա ևս մեռեալ, զմիւս ոմն կացուցին. թէպէտ և ջանացաք խափանել, սակայն բազմիցս գրեցին և աղերսեցին յամառեալ ի սովորութեան իւրեանց։ Զի ոչ ինչ փոյթ է նորա ընտրել զօգտաւորն, այլ զհետ սովորութեան ընթանան։ Առ այս յոլով ցաւակրութիւն գոյ առ մեզ, և շատ գրելիք, բայց զինչ օգուտ, վասնորոյ լռելն է բարւոք։ Չորրորդ՝ վասն առ Սուլխան դիւանն գրեալ թղթոյդ խնդրեալ էիր յուղարկել ի Թիֆլիզ, և զպատասխանին յուղարկել, Սուլխան դիւանն ի վաղուց առաքեցեալ գոլով յերկիրն Ռուսաց, զթուղթն քո յուղարկեցաք ի Թիֆլիզ առ եղբայրն նորա Մանուչար Դիւանն, հասուցանել առ եղբայրն, և նա թուղթ գրեալ առ մեզ զպատասխանին թղթոյ քո եղեալ էր ի մէջ նորա, և խնդրեալ էր ի մէնջ, հասուցանել առ պ. Կարապետն և մեք վաղուրեմն յղեցաք ի Վան առ Ջուղայեցի տէր Յովհաննէսեան տիրացու Սահփաննոսն ի վերայ Բաղդադու, յղել առ նոյն պ. Կարապետն որ հասուսցէ առ քեզ, յուսամ ըստ ժամանակին ժամանեալ իցէ ազնոււոյդ։ Պատմեմ ապա զան-

ցից և զօրպիտութեանց երկրիս և կողմանցս։ Յանցելում ամի ներքինի Աղայ Մահմադ խանն աւերեալ բոլոր Արաղաստանայ բազմամբոխ զօրօք եկեալ ի Դավրէժ հնազանդեցոյց զամենայն իշխօղոն երկրացս, բաց ի յԱրցախու Իբրահիմէն։ Եւ մինչ դարձ արար նա ի Դավրիժու, Իբրահիմն համարձակեալ զԿովկասային վիրագ Ուման խանն հած առ ինքն, և ամէնայն զօրօք իւրեանց աւելի քան զի հազարաւ յեղակարծ յարձակեցան ի վերայ Նախչուանու, զքաղաքն աւերեցին, և զբերդն պաշարեցին. և մինչ ի նեղ էին արկեալ սանուլ, Երեանայ և Խօյայ իշխօղքն միաբան ամենայն զօրօք իւրեանց գնացեալ պատերազմեցան՝ հարին զբաղումս ի զօրաց թշնամեացն, և զայլսն վանեցին անտի. որք փախստեամբ դարձան ի Շուշի. Իբրահիմն զլազկիսն պահեաց առ իւր ի ձմռան. զի կտրիցէ զչարիս ինչ հասուցանել կողմանցս. այլ խափանեցաւ խորհուրդ նոցա. և վիրագն ամենայն մնացորդօքն դարձաւ ի Կովկաս և ապահովութիւն եղև կողմանցս և սրբոյ Աթոռոյս։ Այժմ զյիշեալ Աղայ Մահմադ խանէն համբաւեն թէ՝ և զՇիրազ առեալ է, և կրկին գալոց է յայս կողմս, և ի յԱրդաւիլ զսուր կապեալ թագաւորելոց է։ Աստուած խաղաղութիւն շնորհեսցէ, և զբազմավշտակիր ազգ մեր ազատեսցէ ի վտանգից։ Ո՛ղջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի փրկչին 1792 յօգոստոսի ԺԶ ի բարձրագահ Աթոռս սուրբ Էջմիածին։

Փուսուլայ։

Գիտասջիր և զայս ազնիւ սիրելիդ իմ, զի զոր գրեալ էիր թէ զմի նորատիպ գիրք իցես յղեալ առ մեզ անուանեալ Որոգայթ փառաց, թուեցաւ մեզ թէ՝ նշաւակ կոչեցեալ գրքուկն իցէ, զոր քանի ամօք յառաջ ընկալեալ եմք և ազնուոյդ ևս միամտութիւն գրեալ, բայց թէ այլ ուրիշ գիրք իցէ Որոգայթ փառացն, տակաւին առ մեզ չէ հասեալ։ Եւ զի ի կարծիս էաք ի կողմանէ սորին, վասն այն ի թղթոջն ոչ յիշատակեցաք։ Այսպէս գիտացեալ՝ ողջ լեր Տէրամբ։

—

ԻԷ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Հաշտարխանու եւ կողմանցն առաջնորդ եւ նուիրակ Յովսէփ վարդապետն, յանձնարարութիւն վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին.

Յորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, և պահպանողական շնորհիւ սրբոյ Իջմանտեղւոյս նորին գիտասջիր սիրելի և հոգևոր որդի մեր՝ հարազատ զաւակ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Զի ի ՌՄԼԶ թուոջն՝ սրբոյ Երուսաղէմի պատրիարգ սիրելի եղբայրն մեր Յովակիմ Աստուածիմաստ վարդապետն զԿարբեցի Կարապետ վարդապետն նուիրակ պատրաստեալ օրհնեցելոյ երկրիդ և յղեալ ի Կոստանդնուպօլիս, վասնորոյ թէ ինքն՝ և թէ այլ ոմանք պատուաւոր անձինք ի մեծէն Պօլսոյ խնդիր էին գրեալ մեզ յորդորական զկոնդակ և զբաշբօրթ յղել վասն նորա՝ հանդերձ յանձնարարական թղթով ի վերայ քոյ։ Զորս և մեք գրեալ յղեցաք։ Բայց մարտ մեծ ընդ մէջ երկուց տէրութեանցն սկսեալ, ոչ ևս կարաց գալ նա յայգկոյս. այլ դարձ արար ի սուրբ Երուսաղէմ. և մինչև ցայժմ նուիրակութիւն նոցին նահանջեցաւ ի վիճակէ այտի։ Իսկ նարդենիս՝ մինչ հաշտութեան և խաղաղութեան ձայն հնչեցաւ ցերկրացդ, Յովակիմ պատրիարգն զայլ ոմն Կարապետ վարդապետ, ի միաբանից իւրոց այր խոհեմ և համեստ նուիրակ կարգեալ Աստուածախնամ երկրիդ, և առաքեալ ի մեծն Պօլիս, վերստին գրեալ և խնդրեալ էր ի մէնջ զկոնդակ գրել ի վերայ երկրիդ և զբաշբօրթ ի վերայ կամէնդաթացն. և զթուղթ յանձնարարութեան ի վերայ քոյ։ Իսկ մեք զյառաջագոյն գրեալ կոնդակն բաւական համարելով՝ նոր ոչ գրեցաք. այլ զբաշբօրթն ի նորոյ գրեցաք. ընդ որում և զայս թուղթ առ սիրելիդ գրելով պատուիրեմք, զի ի գալ ժամանելն յայդր յիշեալ Կարապետ խոհեմամիտ վարդապետին՝ մեծաւ սիրով ընկալցիս և ի սէր ունիցիս միշտ յամենայնի մխիթարելով և շահելով, և առ գործոյն ձեռնտու և օժանդակ լիցիս ի սրտէ, յորդորելով

զՔրիստոսասէր օրհնեալ ժողովուրդսն ի յառաջ տուրս։ Քանզի յայտնի է ահա, զի քանի տարիք անցին՝ յորս ոչ եկն անտի նուիրակ յայդր. և ոչ էհաս նոցա օգնութիւն այտի. ապա այժմոյս եկելոյն օգնելդ յոյժ հարկաւոր է, և ջանասցես արդիւնաւոր առնել զգործն, ի պատիւ և յօգտութիւն Քրիստոսակոխ սուրբ Տեղեացն տնօրինականաց՝ և մանաւանդ սրբոց Յակովբեանց Առաքելոց հրաշազարդ աթոռոյն։ Եւ ի կողմանէ պատուոյն՝ որպէս յառաջագոյն եկելոցն եղեալ է ըստ վաղվաղականն սովորութեան, նոյնպէս և դիւրին լիցի. զի այնու և քոյդ պատիւն և ես առաւելանի՝ քան թէ նուաղի։ Ուրեմն՝ որպէս վայելուչն է բարի անուան քո և համբաւոյ, այնպէս խոհեմաբար և բարեմտօրէն ջանասիրեսցես, զի ըստ զրեցելոյս մերոյ մարդասիրեալ շահիցի առաքեցելդ, և զործն իւր լաւապէս յառաջանայցէ, որով օգտիցի սուրբ տունն այն յայսպիսում բարեպատ ժամանակի, և Պատրիարգ վարդապետ եղբայրն մեր սրտաղիւր և շնորհակալ լիցի. և փոխճանաբար դու ես վարձատրիցիս յԱստուծոյ և վայելեսցես զշնորհ և զօրհնութիւն Տեառնաշրջիկ ցանկալի սրբոց վայրացն և սրբոց Առաքելոցն Յակոբեանց։ Ո՛ղջ լեր ի Տէր, յանձնեցեալ ի նախախնամական բարերարութիւն նորին։

Գրեցաւ յամի Փրկչին 1792 և ի թուականիս մերում ՌՄԽԱ. յօգոստոսի.. ի լուսակառոյց Աթոռս ամենայն Հայոց՝ սուրբ Էջմիածին։

ԻԸ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի յերկիրն ռուսաց առ մերայնոց նուիրակ եւ Առաջնորդ Յովսէփ վարդապետն ի պատասխանի թղթոյ նորա յամի Փրկչին 1791, եւ ի նոյ. 27 գրեցելոյ։

Յանցեալ 1791 թուոջ Փրկչին ի նոյ. 27 գրեցեալ թուղթ քո էհաս առ մեզ ի սոյն թուոյս օգոստոսի Թ. և իմացաք զգրեալսդ ամենայն։ Իսկ մեք յապրիլի 17 թուղթ եմք գրեալ առ քեզ ի պատասխանի թղթոյն քո յօգոստոսի 18 գրեցելոյ՝ և հանդերձ մխիթարական թղթովք առ ազնիւ Աղայ Յովհաննէսն և առ Քփրեանց հանգուցեալ Աղաչայ Յովհաննէսի որդիսն, և այլ ես թղթովք առ այլս, յղեալ եմք. որք ի ժամանակին հասանելոց են առ քեզ։ Այժմ նոր թղթոյդ գրուածոցն արասցուք զպատասխանիս։ Ծանուցեալ էիր զխափան առնուլն ի նոր Նախիջևան կատարելի առաջադրութեանցդ, ի պատճառս ընկալնլոյդ անդէն զբօթ մահուան ի Տէր հանգուցեալ եղբօրն քո, և սգաւորելոյդ. որոյ աղագաւ թէպէտ և յառաջագոյն գրեալ եմք սիրելւոյդ զմխիթարական բանս. այլ այժմ ես յիմանալ մեր զցաւագին մորմոքումն սրտիդ՝ կսկծակից եղեալ քեզ, ասեմք՝ Հոգին սուրբ Աստուած մխիթարիչ լիցի սիրելւոյդ, և հանգուսցէ զհոգի նորա ի անզուոջ լուսոյ և հանգստեան։ Գրեալ էիր և զպայծառափայլ քնէազի փոխիլն յաստեացս կենաց, և զսուգ մեծ թողուլն երկրիդ և մանաւանդ մերայնոցդ վասն պսակելոյ ընդ ինքեան և խնամոցն, և զայլ որպիսութիւնսն։ Զայնմանէ մեք ի վաղուց լւէաք, բայց ոչ հաւատայաք, դիտելով ըղհաւաստութիւն ի քէն իմանալ. որպէս և թղթովս մերով նշանակեալ եմք քեզ։ Եւ մինչ ահա գրութեամբ քով ստուգեցաք, տրտմութիւն մեծ եղև մեզ, և սակս տարաբախտութեան մեր և ազգին մերոյ վարկաք զայնպիսի պատուական և խնամառատ անձին բառնիլն ի մէնջ յայսպիսում ժամանակի, այլ զինչ ունիմք ասել, փառք և գոհութիւն ստեղծողին. եղիցին կամք նորա օրհնեալ, որ և ըստ խնամակալութեան և բարելաւութեանց նորա առ ազդ մեր, բարե-

բարեսցէ ի հոգի նորին։ Ծանուցեալ էիր ես ղհագարացւոց ոմանց երեելեաց բազում անձամբք գալն ի բանակն վասն խորհրդոյ հաշտութեան, և պայծառափայլին հանդուցելոյ ի կենդանութեան հրաման հանելն վասն մերայնոցն ի զանազան քաղաքացն առեցելոց՝ ժողովեալ աանիլ յայնկոյս Թուալայու. առ ի նոր քաղաք շինել անդէն և յեաոյ՝ մեծի կայսերուհւոյն առաքելն զպայծառ գրաֆ Աղէքսանդր Անդրէիչ Բէզբորոկին վասն ի գլուխ աանելոյ զհաշտութիւն. և նորա յարդմամբ ընդունիլն զքեզ, և զօդաաւոր խնդիրս քո ի գիր հանել առաքելն առ ողորմած կայսերուհին. և թէ նոր շինելի քաղաքն՝ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին է անուանելոց. և այլն։ Զայսոսիկ ամենայն իմացեալ ընդ ներկայական նեղսակրութիւն մերայնոցն արամեալ ցաւեցաք. բայց յուսով ապագայ անդորրութեան և բարօրութեան, որպէս նշանակեալ էիր, ուրախ լինիմք. տացէ Աստուած ըստ ակնկալութեան քո և մեր յաջողիլ խղճալեացն։ Եւ զոր խնդրեալ էին առ յիշեալ պայծառ գրաֆն Թուղթ գրել, բարւոք է, բայց ըստ ցուցանելոյդ թերեւս ցարդ ուղեւորեալ իցէք դէպ ի Պետերպօլք և տակաւին չեն վճարեցեալ առաջադրութիւնքն.բարեաւ մինչ կատարիցին,յայնժամ պատականագոյն լինի շնորհակալելն և յանձնարարութիւնն։ Ի կողմանէ մարաին գրեալ էիր թէ՝ զբազում պահանջմունս առնեն, զորս թէ հագարացիքն յանձն չառնուցուն, պաբզումն նորոգելոց է։ Բայց յայս կողմունքս հռչակի թէ՝ հաշտութիւն եղեալ է, և զներքին իրաց ոչ ոք է անդեակ ասել ինչ, մնամք դարձեալ ի քոյդ ազդեցմանէ իմանալ զստոյգն։ Գրեալ ես ես որպէս թէ՝ հարկաւոր էր մեզ առ նոր կայսր Նամսայի՝ երկրորդ Լէօպօլն շնորհակալութիւն գրել՝ և խնդիր վասն Սչովայու. Ո՞չ ապաքէն յառաջնում առ Յովսէփ կայսրն գրեցաք խնդիր և աղերս **, ըստ որում և առ դեսպանն, և առ ազնիւ աղայ Յովհաննէսն և առ քեզ ես գրեցաք վասն այնմ բանի. բայց ոչ ինչ արդիւնացաւ փոյթն մեր և պարզ բան ինչ ես ոչ իմացաք։ Այժմ ես ունիմք զնոյն յօժարութիւն դրելոյ. սակայն և նոցին հաշտութիւն զդոցունց կախեալ գոլով՝ ոչ է կատարեալ. մինչ կատարիցի, տեսցուք թէ որպէս յաջոդիցի առնել։ Այլ առ Քփրենց ազնիւ աղաչայ Յովհաննէսն և որդիսն հասարակապէս՝ և առ աւագ որդի Նիկօլն յատկապէս ես. յառաջագոյն Թուղթս եմք դրեալ. և զկնի ես որ զմահն աղաչայ Յովհաննէսին դրեալ էիր, առ որդիսն մխիթարութիւն գրեցաք։ Իսկ կոնդակ առ հասարակութիւնն՝ յետոյ լինելոց է. զի յարդեանս ըստ ցուցանելոյդ չունի այնքան ինչ հարկաւորութիւն. մինչ դու հաւատարիմ սիրելիդ մեր մերձ գոլով ինքնին իսկ շահեցող և մխիթարիչ ես նոցա։ Գիտացաք և զառաքելդ զԳրիգոր խոհեմամիտ վարդապետ որգեակն քո և մեր ի Հաշտարխան և ի կողմունս վասն գործոյ նուիրակութեան. և զյանձնելգ նմա զարդիւնս ինչ, ընդ այլ արդեանց ուղեոբել առ սուրբ Աթոռս, որ նա ինքն ես աստ առ մերսն զԹուղթ գրեալ՝ ծանուցեալ էր զգալն իւր անդ, և զորպէսութեանց ինչ գործոյն. և խոստացեալ էր ըստ պատուիրմանդ՝ հաւատարմաւ յղել մեզ զայս արդիւնս. որոյ վասն շնորհակալ եմք. և երբ հասցէ, միամտութիւն եմք դրելոց սիրելւոյդ։ Դարձեալ՝ միւս հատուածոֆս թղթոյ ծանուցեալ էիր զՍչովայու աղաչայ Գրիգորի գալն առ քեզ և զինչ խօսիլն. վասն թղթագրութեան որ զմէնջ թօհմաթ է արարեալ. դեռ ես զթուղթսն մեր չէին ընկալեալ. այլ յուսամ թէ յետոյ ընկալեալ իցեն և սրտագիւր եղեալ։ Բայց վասրն առ կայսրն բան դրելոյ ի վերդ պատասխանի եղե։ Եւ յաղագս ոմանց տեղեաց որ ասացեալ է իբրև յառաջն լինիլ թեմ սուրբ Օգսէնտի վանացն. յիրաւի և մեք յառաջմէ գիտեմք թէ զայն խնդիր ունին նոքա։ Այլ հայեսցուք կատարածի իրացն, յայնժամ ըստ բերման ժամանակին հոգս իմն տեսցուք։ Իսկ առ վաբեցեալ ժողովուրդսն խղճալիս յայսմ միջոցի թուղթ չգրելոյ աղագաւ որ գրես, յառաջագոյն դրեցեր մինչ յիւրաքանչիւր տեղիս էին դեռ ես. մեք նկատելով թէ տակաւին ոչ երեւի նշան հաստատուն կերպի կացութեան նոցա, գրեցաք քեզ թէ՝ տեսցուք զի՛արդ լինիցի վախճանաքար։ Նարդենի թէպէտ և գրես թէ ժողովեալք են ՚ի Դուբասար, և այլն, սակայն դեռ անկատար են իրք քաղաքաշինութեան և այլ լինելութեանց։ Բարեաւ մինչ կատարիցին այնոքիկ, և ծանուցես մեզ զորպիսութիւն հաստատուն կա-

ցուԹեան նոցա, յայնժամ 'ի հարկէ գրեսցուք։ Այլ և վասն աղայ Մահմատխանի յառաջշարժուԹեան որ ցաւակցեալ էիր մեզ, և զորպէսն ծանուցանել խնդրեալ. առաջին ԹղԹովս մերով գրեալ եմք քեզ զգալն նորա մինչև 'ի Թարվէզ և վերադառնալն, և զայլ անցսն կողմանցս։ Այժմ լսեմք 'ի բազմաց Թէ՝ նա զՇիրազ ևս առեալ է, և զբազում հազար. տունս վարեալ անտի 'ի Թէհրան, և զայլ զարհուրելի արարողուԹիւնս. այլ դեռ յայս կոյս շարժելոյ համբաւ չկայ. Աստուած 'ի բարին եզրեսցէ զամենայն ինչ. այց առնելով խղճալի ազգի մերոյ և սրբոյ ԱԹոռոյս։ Կովկասային Վիրազն ևս որ եկեալ էր յօգնուԹիւն Արցախու իշխողին, ոչ ինչ գտեալ ըստ ախորժակին՝ դարձ արար 'ի տեղի իւր յամսեանն մայիսի, յարգեանս արտաքուստ Թշնամեաց ապահով է երկիրս և մեք, Թէ և 'ի ներքնոցն ոչ լինի անդորրուԹիւն. գոհուԹիւն Ամենախնամին Աստուծոյ, յապայն ևս նմա յանձն եղիցուք։ Գիտասջիր և զայս զի սրբոյ Երուսաղէմի պատրիարգ Յովակիմ վարդապետն քանի ամօք յառաջ զԿարբեցի Կարապետ եպիսկոպոսն յղեալ էր 'ի մեծն Պօլիս գալ յերկիրդ յայդ 'ի նուիրակուԹիւն, և մեզ գրեալ էր վասն նորա բաշպօրԹ և կոնդակ՝ և՝ 'ի վերայ քո յանձնարարական Թուղթ յղել։ Իսկ մեք Կարապետ վարդապետի անուամբ յղեցաք զԹուղԹսն։ Այլ զի պարզուԹն մեծ սկսաւ, ոչ ևս կարելով նմա գալ յայդկոյս, վերադարձեալ էր 'ի Սաղիմ։ Այժմ զայլ ոմն Կարապետ վարդապետ և ոչ եպիսկոպոս յղեալ 'ի Պօլիս, նոր ևս խնդրեալ էր 'ի մէնջ զայն յիշեալ Թուղթսն կրկին գրել և յղել։ Իսկ մեք զկոնդակ ոչ գրեցաք. զառաջինն բաւական համարելով, այլ միայն զբաշբօրԹ, և 'ի վերայ քո զյանձնարարական Թուղթ գրեալ յղեցաք յամսոյս ԺԶ. և գրեցաք նոցին վէքիլ տիրացու Սարգսին. զգուշացուցանել զԿարապետ վարդապետն համեստուԹեամբ և սիրով վարիլ առ քեզ, և խաղաղուԹեամբ կալ առ ժողովուրդսն. (Թէև Յովակիմ պատրիարգն 'ի ԹղԹի իւրում զբազում գովուԹիւնս էր ստորոգեալ զնմանէ։) Ապա և քեզ սիրեցելոյդ գրեմ, զի մինչ եկեսցէ նա յայդր և առ քեզ, ըստ գրուածոցն 'ի յանձնարարական ԹղԹին մերում սիրով ընկալցիս, և որպէս առաջինն եկելոցն անտի յայդր՝ պատիւ ցուցանել տացես 'ի սէր սրբոց Տնօրինական տեղեացն Քրիստոսի Տեառն մերոյ. զի եԹէ բան և ասուԹիւն ինչ վիճական իցէ ի նոսա առ մեզ, հատցի, և յայնմ մասին ևս բարեհամբաւիցիս։ Այսչափ առ այս շատ լիցի վսեմախոհ մտացդ։ Այլև յառաջագոյն որ ի Բովշանու զգանձարանադրամսն սրբոյն Թովմայի Առաքելոյ վանացն և զքանիս ևս զխոստումս և զհոգերաժինս յանուն նորա ի յոմանց առեալ էիր, և զքանիս խոստումս ևս՝ յանուն Երնջակու սրբոյ Կարապետի վանացն ընկալեալ էիր, և զսխտհին առ մեզ յղեալ, որոց ջամն էր ԺԳ Թուման, առ. ԹՃԴՆ, զի հասուցանիցեմք նոյն վանորէիցն. ահա հասուցեալ առ առաջնորդսն նոցին առ Թովմաս և Կարապետ վարդապետսն, ի նոցունց զշնորհակալուԹեան Թուղթս առեալ առ տուողսն գրոցն. ընդ գրոյս եղաք, որք են Թուով ինն. զորս հասուցես առ նոսա ի միամտուԹիւն։ Եւ ի սիրոյ և ի հարազատուԹենէ աննուազ Թնալով և դորպէսայայա դիրդ չպակասեցուցանելով. ողջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Փրկչին 1792 և ի սեպտեմբերի Բ. ի սուրբ ԱԹոռս Էջմիածին ։

ԻԹ. Ռուս ազնուականութեան որոշումը Յովսէփ արքեպիսկոպոսին անդամ ընդունելու իրանց մէջ.

Ընդ Բարձրագունեղ հովանաւորուԹեան Ամենալուսափայլի՝ Հզօրագունի՝ Մեծի Թագուհւոյ Եկատարինէի Երկրորդի, Կայսերուհւոյ և Ինքնակալուհւոյ ամենայն Ռուսաց և այլոց, և այլոց, և այլոց։

Ընդհանուր ազատուԹեամբ հասարակուԹիւնն տնարարուԹեան, որ, հետևի խրախուսելով՝ յաղագս աւաւելացուցման հողագործուԹեան և տնարարուԹեան՝ 'ի Ռուսաստան, միաբանուԹեամբ իւրով ընտրեաց ընկերակից և անդամ ինքեան՝ զՍրբազնուԹիւնն Յովսեփայ Իշխանազնեայ ԱրղուԹեանց Երկայնաբազուկ Արք Եպիսկոպոսին Հայոց. որ և զօրուԹեամբ սորին՝ ճանաչէ զնա՝ ին-

քեան մասնակից՝ ՚ի յաշխատանս իւր. ըստ ամենայնի վասն հասարակութեանս անդամոց կարգադրեցելոց և յայմհետէ կարգադրելի իբաւանց, և մանաւանդականութեանց՝

Պրեզիդենտ Գրաֆ Անհալտ: *Անդրէի Նարտով գէխստվիտելնի սատասկի Սովէտնիկ. Դանիէլ մարկի Կավալեր, Եկոնոմու հասարակութեան կայսերական Անդամ, և*

Կնիք

անփոփոխ Սեկրետար, և զանազան հասարակութեանց՝ յատկացեալ անդամ.

Իվան Ալբրեխտ Էյլեր, *Նադվորնի Սովետնիկ, և Օրդենի սրբոյն Վլադիմիրի Կաւալեր, անդամ և անփոփոխ Սեկրատար:*

Սանկտ Պետերբուրգ
Սեպտ. 11. 1792

Լ. Ռուս ազնուականութեան թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին նոյն մտքով.

Ընդ Բարձրագունեղ հովանաւորութեան Իւրուհւոյ Կայսերական Մեծութեան, ՚ի հասարակութենէ ընդհանուր ազատաբար Տնարարութեան. Նորին Սրբազնութեան Յովսէփայ Իշխանազնեայ Արղութեանց՝ Արք Եպիսկոպոսին Հայոց:

Կայսերական ազատ տնարարութեան հասարակութիւնն՝ ստացեալ գծանօթութիւն յարմարութեանց ձերոց՝ ՚ի պարապմունս գովելի տնարարութեան, և ունելոյ գրաւական գիտութիւն՝ առ սոյն մասնս պատկանեցեալ, վասնորոյ ցանկացեալ ընդունիլ զձեզ ՚ի մասնակցութիւն՝ արդիւնարար աշխատանաց իւրոց, միաբանութեամբ ընտրեաց և յատկացոյց զձեզ՝ ինքեան անդամ, և թուակից: Ուստի՝ և ընդ սմին շնորհէ առ Սրբազնութիւն ձեր՝ զԴիպլօմ. այսինքն՝ թուղթ արտօնութեան ՚ի նշան մեծացուցման՝ յատկական արժանաւորութեանց՝ ձրից ձերոց: Հասարակութիւնն մեր՝ յուսով խրախուսէ, զի դուք բարեհաճոյանայցէք յայմհետէ գործակից լինիլ այնց գովելի և փառաւոր կամեցողութեանց, որոց սակս սահմանեալ է սոյն հասարակութիւն:

Պրեզիդենտ Գրաֆ Անհալտ:
Անդրէի Նարտով:
Իվան Ալբրեխտ Էյլեր:

Սանկտ Պետերբուրգ
Սեպտեմբերի 18. 1792

ԼԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը գրաֆ Անհալտին.

Պայծառափայլ Գրաֆ:

Եւ բոլոր դերանուանի ազատ անտեսական հասարակութեան անդամք:

Մատուցանեմ ձեզ զգերզգալի զգացումն և գխոնարհագոյն շնորհակալութիւնս, վասն պատուոյն՝ զոր դուք ինձ առնել հաճեցայք. արժանաւորելով զիս՝ լինիլ անդամ՝ սոյնոյ դերանուանի հասարակութեան, որոց վաստակոց և հետեողութեանցն՝ կապակցեալ են ամենայն անտեսութիւնք՝ օրհնեալ Ռուսաստանեայց: Ես՝ յատկագոյն պատիւ ինձ համարիմ զայս: Եւ ամենայն ամենապատիւ սոյն ժողովոյս՝ կատարելապէս իմով մտերմութեամբ կեամ

Խոնարհ Յովսէփ Արք Եպիսկոպոս *Ռուսաց երկրի եղեալ ամենայն ազգիս հայոց. ծնեալ Քնեազ Դոլգորուկով Արղութեան:*

ԼԲ. Գեներալ Վասիլ Պոպովի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Իմ ողորմած Տէր.
Սրբազնագոյն Արք եպիսկոպոս,

Ես ունեցայ զբարեբախտութիւն ծանուցանելոյ Իւրոյ Կայսերական մեծութեան, յընձեռելն ձեզ՝ ամենողորմածաբար շնորհեցեալ զրուլիանթէ Խաչն կրել 'ի ճակատ վեղարի, և զՄանթին, զկենդանի զգացմանէ շնորհակալութեան և բարերնկալման, որովք ընկալայք դուք զայնս նշանս՝ Արքայական ողորմութեանն. և զամենահպատակ խնդրոյն, զի հաճեսցի թոյլ տալ ձեզ անկանիլ առաջի գարշապարացն Արքունականաց։ Ամենաողորմածագունեղ Թագուհին սոոր իջեալ 'ի խնդիր ձեր բարեհաճեաց. զի Սրբազնութիւն ձեր՝ առաջի կացուցեալ լինիցի Իւրոյ մեծութեանն՝ վաղեան աւուրն, առ պալատական եկեղեցւոյն՝ առ բարձրագոյն անցսն Իւրոյ մեծութեանն։ Այր սակս հարկաւորի ձեզ գալ վաղն 'ի պալատն, յառաւօտեան տասներորդ ժամուն։ Ես ձերոյ Սրբազնութեանն զայս ծանուցանելով ունիմ պատիւ, ընդ յատուկ վերապատուութեան և հպատակութեան

Մնամ ձերոյ Սրբազնութեան Ողորմած Տեառն իմոյ խոնարհ ծառայ **Վասիլ Պոպով։**

Սանկտ Պետերբուրգ
Մարտի 26, 1793։

ԼԳ. Գրաֆ Ռումեանցովի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Սրբազնագունեղ Յովսէփ Արք Եպիսկոպոս՝
իմ յատկեղ բարերար.

Ժամանակցութիւն ընաւից՝ որ 'ի ձեզ յաջողելոց, ընկալնում յատուկ բաւականութեամբ։

Բարեհռչակ համբաւոյն ձերոյ ծառայութեան ազդեցութիւն համաբեցայ զցուցումն Իւրուհւոյ Կայսերական Մեծութեան պարգևաց, շնորհելով ձեզ յատկապէս զնշան Վեղարի և Մանթի. սովաւ շնորհաւորելով Սրբազնութեան ձերում՝ խնդրեմ 'ի ձէնջ լինիլ միամիտ՝ վասն յատուկ յարգանացս, և մտերիմ հպատակութեանս. որով մնամ հանապազ

Սրբազնութեան ձերում ամենախոնարհ ծառայ **Գրաֆ Ռումեանցով Դոնայսկի**

ԼԴ. Կոնդակ Յովսէփ արքեպիսկոպոսի ի վերայ հասարակութեանն զինեցաք ի Մոսկով յաղագս Ղրիմու Ս. Խաչ վանից պայծառութեան.

Ողորմութեամբն Աստուծոյ Յովսէփ արքեպիսկոպոս, Ռուսաց երկրի ամենայն հայոց ազգին Առաջնորդ, ծայրագոյն Նուիրակ ս. Էջմիածնի, և հիմնադիր Նոր Նախիջեան և Գրիգորուպօլ քաղաքացն հայոց։ Ցորմէ սիրով սուրբ Հոգւոյն՝ քրիստոսա-

կան ողջունի և Աստուածային բազմապատիկ օրհնութեանն ծանուցումն լիցի օրհնեալ ժողովրդականացդ դասուց, որք կայք բնտկեալ ի Տիրապահ քաղաքդ՝ ի Մոսկով, սրբանուէր քահանայից, գերապատիւ ազնուականաց, քրիստոսաղօր և մեծահաւատ իշխանաց և առհասարակ մեծաց և փոքերց արանց և կանանց խնդալ ի Տէր յարագուարթ բերկրանօք, Ամէն։ Զկնի զօրացուցիչ առաքելական օրհնութեանս և հայրականի յորդառուս սիրոյս, կամիմ ըղձանօք և կարօտակէզ աենչիւ ծանուցանել զընդարձակութիւն սքային իմոյ՝ դէպ առ սիրելի և հարազատ որգիսդ իմ։ Նւ որքան առիս տեսանեմ զսոյն ընդարձակութիւն Հայրականի սիրոյս, այնքանիցս յիշեմ և զձեր պարկեշտ սէրն՝ որ առ Հայրս ձեր, որք կայք դրեալ և ներարպեալ անջնջելի մոռացմամբ՝ ի միտս՝ ի սիրտս և ի հոգիս իմ. յիշեմ նաև զգովելի հնազանդութիւն ձեր, զորդիական երկիւղն, ի բարլին յառաջադրեցմանս՝ զյօժարակամ լուրն, առ աստուածակամ ակնարկութիւնն իմ՝ կամովին պատրաստական ծառայութիւն, զհոգեսիրութիւնն, և վասն բարեաց գործոց՝ նախանձաւոր միմեանց՝ լինելն, և ի վերայ այսր ամենայնի՝ զպատրաստի ունելն զունկն ձեր՝ ի լուր բանի բերանոյ, հոգեոր հօրս ձերոյ. ուստի տեսանելով իմ զայսոսիկ անխոնջ ջանացողութեամբ և անդադար ճանապարհորդական վշտակրութեամբ ոչ տամ հանգիստ երբէք զոնեայ ժամ մի ցաւակիր անձինս, այլ զառողջութիւն և զխաղաղ կեցութիւն իմ կորուսեալ զմարմնական գոյս իմ և զարդիւնս վատնեալ, և զկեանքս ընդ նոսա մաշեալ՝ տիւ և գիշեր աշխատեալ չարչարիմ, զի ի ձեզ համբարեցից՝ ոչ միայն զերկնային հրեշտակական պարկեշտ վարուց լրումն, այլև՝ ամենայն մասանց բարելաւութիւն առաքինական կենաց կատարումն։ Հոգամ, ոչ զձեր հոգիսդ միայն՝ (մատուցանելով զաղօթս և զջերմեռանդութիւնս ձեր՝ անկարօտին Աստուծոյ, և իջուցանելով զառատ ողորմութիւն և զանզղջանալի շնորհն Աստուծոյ ի վերայ քաղցր և ախորժ որդոցդ իմոց հպատակաց). այլև՝ զսրբութեամբ սնեալ, և զպարկեշտութեամբ կրթեալ զմարմինս ձեր, զի լիցի արժանի տաճար՝ Աստուծոյն յաւիտենականի։ Ուստի և զմարմնական զԱստուածապարգև զգոյսդ ձեր ես՝ ի բարին կիրառեցման կերպի ուսմունս՝ պարապեցուցանելն և բարեկարգելն ոչ դանդաղիմ. զի առաջի Աստուծոյ գտայց հայր հաւատարիմ հնազանդ որդւոցդ իմոց. զանձելով զամենայն բարիս և պաաճառաւ...բարութիւն՝ ձեր սիրելեացդ. ըստորում ըստ հրաշալւոյն Պօղոսի հարկ ի վերայ կայ հարց՝ գանձել զբարիս՝ որդւոց։ Զանք մեծ է հօրս ձերոյ, և ոչ պակաս ցաւք սրտի իմոյ, մինչև զհոգեծին որգիսդ իմ, կամ մեծամեծացն այնոցիկ սրբոց կատարելութեանցն հաւասարս կացուցից առաջի Աստուծոյ, և կամ հաղորդս փառաց նոցին արարից։ Զի եթէ հաղորդքն չարչարանացն Քրիստոսի, և փառացն լինին հաղորդք. ուրեմն՝ և մասնակցողքն նախանձաւորութեան սիրով և ուրախ սրտիւ, պայծառութիւն շինութեան, և վերանորոգութեան տաճարացն Աստուծոյ և սրբոց նորին, և փառացն լինին հաղորդք։ Վասնորոյ և սքանչելի Պօղոս՝ յորդորէ զսիրելի որդիսն իւր՝ յասելն՝ ի պէտս սրբոց հաղորդեցարուք զի գիտէ, թէ՝ միջնորդութեամբ ժամանակաւորի այնր հաղորդութեան, անժամանակ յաւիտենիւ պսակաւորեցման սրբոցն Աստուծոյ՝ լինին և ինքեանք հաղորդք։ Ուստի և ես հոգևոր հայրս և ծնողս ձեր, (որ համարձակիմ առաջի Աստուծոյ վասն սիրելի որդւոցդ իմոց վկայել թէ՝ թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հայրս, զի ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն՝ ես ծնայ զձեզ) հոգւով չափ ըղձացեալ՝ երկնէի միշտ ի միտս իմ խորհելով զշինութիւն, զպայծառութիւն և զվերանորոգութիւն սրբոց վանօրէից. վասնորոյ՝ ի Նախիջևան յետ ամենայն բարեկարգութեանց կառուցի իմով արդեամբ զչքնաղաշէն վանս յանուն սուրբ Խաչին և զարդարեցի զնա զգեստուք և արծաթեղէն անօթիւք և յաղագս այնմ ոչ զոք յորդորեցի օգնական ինձ լինել և ձեռն կարկառել, չկամելով տալ զձանձրութիւն հարազատ որդւոցդ իմոց. զկնի սոյնպէս ամենայն կերպ պայծառացուցանելոյն՝ լցուցի անդ զդասս պաշտօնէից ի հաստատութիւն նմին, որք կան այժմ և աղօթեն յաղագս ձեր։ Այլ այն՝ որ յաջողէ ի մեզ զկամիլն և զառնելն, տնօրինեաց ի միտս Հօրս

ձերոյ այց ելանել և ի խնդիր պարտուց աղաաեցման և վերանորոգութիւն Սանահնու սուրբ Աստուածածնայ գերահրաշ Վանիցն մեր։ Վասնորոյ գրով իմով կոչեալ զաէր Առաքել սրբասուն քահանայն ի Թիֆլիզու որ ի Սանահին ծնեալ՝ սնեալ և վարժեալ էր եաու նմա զկարգ և զաստիճան ծայրագոյն իշխանութեան և կարգեցի Առաջնորդ նոյն Սանահնու սուրբ Աստուածածնի վանիցն, որ ի սբրոյն Գրիգորէ Լուսաւորչին մերմէ է հիմնեցեալ. ի յԱշոտայ արքայէն Բագրատունւոյ և ի մեծ Թագուհւոյ նորին Անոյշն կոչեցելոյ՝ հաստատեալ, և յետ ժամանակաց ի մեծագործ Նախնեաց իմոց՝ ի Զաքարիայ ամիր սպասալարէն Հայոց և Վրաց, և ի յորդւոց նորին գերաչքանչ արհեստիւ գեղազարդեալ։ Որոց և պատուական դամբարանքն անդ տեսանին մինչև ցայսօր։ Արդ՝ ընդ ժամանակս ժամանակս՝ անհաւատարիմ. ոմանք՝ ոչ այնքան ի պայծառութիւն և ի շէնութիւն սրբոյ վանիցն աշխատեցան, որքան յոյնհոգութիւն թմրեալ մնալով՝ զսուրբ ուխտին պայծառութեան խրթնացուցին. և ոմանք առաւել ևս յաճախեալ ի չարութեան՝ զսուրբ անօթսն զսպասսն՝ զզգեստսն՝ զկահս և զկաբասիս սրբոյ ուխտին, զպահպանեալսն ի յեօթն հարիւր ամաց ի վեր համարձակեցան ծածուկ ի գրաւ դնել, և այնպէս զչքնաղ զարդուք զարդարեալ զսուրբ վանքն՝ մերկ և կողոպուտ յամենից վայելչութեանց կացուցին։ Այր սակս ցաւէի միշտ և հոգայի խնամ. տանել այսր դիպուածոյ, մինչև յաջողեցաւ ժամանակն յաստուծոյ, որ տէր և առաջնորդ այնր. սուրբ ուխտի, կարգեցի զՏէր Առաքել Աստուածիմաստ վարդապետն և յանձնեցի զսուրբ վանքն հանդերձ իւր բովանդակ Թեմիւ և վիճակաւն նմա, որ կայ այժմ. ի Հաշտարխան քաղաքս և ժողովէ զհողևոր պտուղս և զօգնութիւնս ի յօրհնեալ ժողովրդոց։ Որոյ աղաղաւ ևս՝ ոչինչ գրեմ. ձեզ և պահանջեմ, այլ թողում. ի կամս և ի յօժարութիւնս հոգևոր որդւոցդ իմոց մտածել զաղքատութիւն Սանահնու սուրբ վանիցն և ըստ այնմ. կամաւ մասնակցել։ Զկնի ամենայնի կամեցայ և զհրաշաչքնաղաշէն ս. Խաչ վանքն Ղրիմու վերանորոգել, և յառաջին պայծառազարդութիւնն հասուցանել և արդարև՝ դրախտ Աստուծոյ, և ամենայն բարեօք զարդարեալ, ձևն հրաշակերտ, գրութիւնն բարեյարմար, տեսողաց ախորժ և բաղձալի. տեղն վայելուչ, օդն պարզ անխառն, ջուրն կենդանարար, բիւրատեսակ տնկօք և բազմակերպ ծառօք և ծաղկամբք գեղազարդեալ. ցաւ էր ինձ հօրս ձերոյ և անպատմելի կսկիծ թողուլն զնա այնպէս քայքայեալ և անմարդաբնակ. ուստի՝. ապաւինեալ իմ. յաստուած և ի ձերդ բարեպաշտութիւն ձեռն. ի գործ արկի շինել, և զամենայն պակասութիւնսն հոգալ, որև նորոգել ետու զխախտեալ տեղիսն, շինեցուցի անդ զառաջնորդարանն, զխուցս և զտունս յաղագս միաբանից և ուխտաւորաց, կացուցի անդ վանահայրս, զարդարեցի միաբանիւք, վասն նորա զբաւական գետինս առի մայրիւք բարեհամ. ջուրբք և պտղատու ծառովք։ Եւ որչափ կարելի էր ի Նախիջևանու և յայլ տեղեաց զշուրջառս զեկեղեցւոյ անօթս, զարծաթեղէնս և զայլ այսպիսի զզգեստս ժողովեալ առաքեցի վասն նորա. ի Հաշտարխանու ևս մասնաւորապէս ժողովեալ եմ. թէ հին և թէ նոր. բայց այսու ոչ զարդարի նա. զի ամենայն կերպիւ կայ ի մէջ աղքատութեան ՍԾ Թուման եմ. խարջեալ ի վերայ վանիցն դեռ ոչինչ երևի ի միջի. որչափ է զօրութիւն իմ, զի կաբացից միայնակ զվանս շինել և ինքն զարդարել, եթէ հարազատ որդիքդ իմ չլինիցիք իմոյ տկարութեան օգնական և ինձ գործակից, ուստի այսու օրհնութեան թղթով յորդորեմ. և աղաչեմ. զամենեսեանդ զմեծսդ և զփոքունսդ զարսրդ և զկանայսդ օղնական տկարութեանս և աղքատութեանս լինել և զարդիւնաւոր զառատ ողորմութիւնս տալ. և լինել պատճառ շինութեան և պայծառութեան անզարդ և խրթնացեալ սուրբ Խաչ վանիցն Ղրիմու. ուրեմն զոր ինչ բղխեն ի քաղցր սրտից ձերոց զայն պարտիք յօժարութեամբ և ուրախ սրտիւ տալ, զշուրջառս, զուրարս, ըղշապիկս, ըղփորուրարս, զթևնոցս, զսաղաւարտս, զվակասս, զսեղանի ծածկոցս, զվարագոյրս, զպատկերս, զբուրվառս, զքշոցս, և զայլ զեկեղեցական անօթս, թէ արծաթեղէնս և թէ ճոթեղէնս, որք իւրաքանչիւրքն հարկաւորք են և պիտանի խղճալի և աղքատ

սուրբ տանն այնմիկ, ուստի՝ յաղագս այսմ կացուցանեմ այդր սուրբ Խաչ վանքին Ղրիմու վէքիլ և վերակացու ղՔալանթար ազնիւ պարոն Պետրոսն որ նա ժողովեսցէ զհոգևոր պտուղս ձեր և զողորմութիւնս մեզ հասուսցէ։ Արդ ի վախճանի բանիս զայս ասեմ հարազատ որդւոցդ իմոց. զի որպէս մինչև ցայժմ յամենայնի առաւելեալ էք հաւատով բանիւ գործով և ամենայն փութով, և որպէս սէրն իմ հայրական առաւել իցէ առ ձեզ, քան զամենայն ոք, նոյնպէս և կամիմ և ըղձամ զի և յայսմ շնորհի հաղորդակցութիւնն առաւել քան զամենայն ոք՝ լինիցիք, մանաւանդ թէ՝ վանքն այն յատկապէս ձեր է, ոչ իմ. զի եթէ առ այլս գթած էք և ողորմած ամենայն տեսակ բարեացպաշտութեամբ, որչափ ևս առաւել առ հոգևոր հայրս ձեր։ Քանզի ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ։ Այլ այն որ առատն է ողորմութեամբ և պարզեօք՝ տացէ զիւրն առատ ողորմութիւն և գթութիւն ձեզ սիրելի որդւոցդ իմոց։

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի լիցի յամենայն բանս և գործս ձեր օգնական և զօրավիգն ամէն։

1795, յունվարի 4։

ի Հաշտարխան.



ԼԻ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Ռուսէթ առ Նուիրակ եւ առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի թղթոց նորա ի 1792 թուոջ Փրկչին· ի յուլիսի 5 ի նոյեմբ. 20 եւ ի դեկտ. 7 գրեցելոց·

Յորմէ ուրով ճշմարտիւ և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ, և գերազօր շնորհիւ սրբոյ Իջման տեղւոյս նորին՝ ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր՝ հարազատ և աշխատասէր զաւակ որբոյ Աթոռոյս՝ Յովսէփ Աստուածաբան վարդապետ։ Զի յանցելում ամին թող զի յապրիլի 17 գրեալ թուղթն մեր առ քեզ, զոր ընդ ազնիւ Աղայ Յովհաննէսի և կենակցի մըխիթարական թղթոցն և այլոց յուղարկեալ էաք որք ի հարկէ հասեալք են, ի սեպտ. 2. ևս գրեալ եմք առ քեզ զթուղթ, և հանդերձ այլ թղթովք յղեալ որք և գուցէ ցարդ հասեալք իցեն առ քեզ։ Յետ յղելոյ մեր զայնս մինչև ցայժմ հասին առ մեզ թուղթք քո գրեցեալք ի յուլիսի 5. ի նոյ. 20 և ի դեկտ. 7. որոց վերջնոյ ժամանելն եղև յամսոյս ԺԴ. և իմացաք զամենայն գրեալսդ։ Յառաջնում թղթոջդ որ ի Գրիգորուպօլուէ, ծանուցեալ էիր զվաղագոյն գրեալ թղթոցըն մերոց հասանիլն առ քեզ. և ի պատճառս տկարութեան և զբաղմանցդ՝ համառօտիւ աղդեալ էիր զմեծին Պօլսոյ շփոթիցն ի վերայ ընդհանրականին, և զայլ ինչ իրաց, թողլով զլիագոյնսն յետոյ գրել։ Ապա երկրորդ թղթովդ գրեալ էիր զաշխատիլդ ի շինութիւն նորոյ քաղաքին Գրիգորուպօլուէ, զորոյ հիմնարկութեան հանդէսն և զայլ պարագայից թէութիւնսն երկարապէս ի նորատիպ տետրակէն ծանեաք, և ուրախ եղաք գոհանալով զԱստուծոյ հանրածաւալ խնամոցն։ Այլ զի ընդ ուրախական համբաւոցն գրեալ էիր զգառնագէտ դիպմունս վախճանման խղճալի Փիլիպպոս սարկաւագին, և յոգնաթախիծ տրտմութեան սրտի քոյ, մեք ևս արամեալ ցաւեցաք։ Բայց զի՞նչ գոյ ասել առ կամիլն և առնելն Արարչին. կամք նորա եղիցի օրհնեալ. որ և լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն, և զքեզ երկնաձիր մըխիթարութեամբըն մխիթարեսցէ և ողջ պահեսցէ։ Ծանեաք և զգնալդ ի Նախիջևան՝ յօծանել զսուրբ վանքն գեղեցկաշէն, և զհանդերձիլդ գնալ Պետրպօլք, և զայլ իրսն. առ որս ասեմք եղիցի յաջողութիւն և շահեկանութիւն առնելեացդ գործոց։ Իսկ որ զթուղթըս գրել խնդրես ի կողմունսդ առ մերսն և առ խնամածու իշխօղս նոցին, յիրաւի և մեք հարկաւոր գիտեմք զդրելն որպէս ի յառաջ ես եմք նշանակեալ. սակայն՝ մինչ պատերազմին ոչ լինի վերջաւորութիւն, և ամենայն իրքն որպէս թէ ի կախ կան, տակաւին այժմ ոչ գոյ մեզ առնել զդիպաւոր ոճս ինչ բանագրութեան առ նոսա։ Այլ մինչ Աստուծով ի բարեկողմն եղևրեսցին բանք դոցին, որով և բարձցի տարակոյս կեղակարծութեանց, յայնժմ պատշաճեալ ժամանակի դրելոց եմք զամենայն հարկաւոր գրելիս առ որս և պատկանք են։ Զհազարացուոցն պայմանդրժութիւն առ հզօր տէրութիւն բարեբաստ թագուհւոյն, և զխռանսգայն ազգի կատաղութիւն և զպևտութեան նոցին խանգարումն, և զմիւս թագաւորաց և մանաւանդ ամենափառաւոր կայսերուհւոյն ի վրէժխնդրութիւն յառնելն՝ զորս երկարապէս գրեալ էիր, գիտացաք, և շնորհակալ եղաք զսիրելոյ որդւոյդ յաղագս անձնաձիր իրազեկ առնելոյդ զմեզ այդպիսեաց գիտելեաց։ Ծանուցեալ էիր լիապէս ես զՊօլսոյն տեսչի խոչընդակութիւնն առ յղեցումն անդ գրեանցն նորատըպից, և վերջապէս իբրև զպարտեցեալ հետևիլն խոհեմ խորհրդականաց, և բարւոք վերջաւորիլն իրին. զորս թէպէտ ինքն և կամ այլք ընաւ չեն դրեալ մեզ, սակայն ի նորումս յեկողաց ոմանց ուխտաւորաց զհամեմատս քոյդ գրութեանցն լուաք։ Եւ զի՞նչ ասեմք, ահա թէ յինքենէ և թէ մանաւանդ չարախոհ անձանց դրդեցեալ՝ յայնպիսի յանշահ հետեւմանց ոչ հրաժարի. թէպէտ և չօգտի ինչ. ապաքէն Տէր տացէ զգաստութիւն։ Իսկ այլով կցորդաւ թուղթս որ գրեալ էիր զողորմած կայսերուհւոյն ձրիաբար շնորհելն Գրիգորուպօլուէ դ ԻՌ թուման առ ի շինել այնու եկեղեցեաց և Առաջնորդարանի, տանց և խանութից, և այլ շինելեաց հարկաւորաց. ուրախութիւն մեծ եղև մեզ և ամենեցունս։ Աստուած երկար կեանս պարգևեսցէ առատաբաշխ մեծութեան նորին,

և հաստատութիւն շնորհեսցէ ձեռնարկութեանցն։ Ի Հնդկաց եկեալ թուղթն ևս զոր յղեալ էիր, ընկալաք, բայց ընդ կորուստ տէր Ստեփանի յղեալ փօլիցային ոչ սակաւ ցաւեցաք։ Այլ ղնփրեմ պետէն որ դրեալ էիր թէ ընդ հակառակս իցէ վարեցեալ ընդ քահանային, գրեթէ՝ նորա ոչ զաջոյն և ոչ զձախոյն չունիմք լաւ իմն տեղեկութիւն։ Որ ի յերիս ամս Բ գիր է գրեալ մեզ, և այն ոչ հարուստ ծանուցմամբք։ Ի հերուն հետէ գրեն մեզ ի Բաղդատու և ի Բասրայու թէ գայ և գայ. այլ գալոյն նշան ոչ կայ դեռ ևս։ Յղեալ էիր ի նոր տպարանէդ ելելոց գրեանց Ծ հատ վիպասանութիւն, Ծ հատ աղօթամատոյց, Ծ հատ տետրակ Դուոլն ողորմութեան. և Ծ հատ օրացոյց սոյնոյ տարւոյս. որք հասին առ մեզ ի Թիֆլիզու, և բաժանեցաք համայն կարգաւորաց սրբոյ Աթոռոյս յիւրաքանչիւր տեսական զմէն մի. լիցիս միամիտ։ Բայց սակս օրացուցին զայս ինչ ունիմք ասել սիրելւոյդ զի մինչ հոգելոյս Հայրապետն մեր յօրինեաց և ապագրեաց աստ զնոր տօնացոյցն, Պօլսեցիք զօրացոյցս իւրեանց համեմատեալ նմա, նշանակէին ի դրան օրացուցին թէ՝ ըստ օրինակի ի սուրբ Էջմիածին տպեցեալ տօնացուցին, զոր յետոյ խափանեցին, և այլն։ Այլ այժմ ի ձեր տպագրեալ օրացոյցսըն գնի թէ հրամանաւ սրբոյ Էջմիածնի այս անուն հայրապետին։ Ի տարեկան անցական օրացոյցսն զի՞նչ հարկ է գնել այս. յորմէ և ոմանք թէ զի՞նչ խօսիցին, զայն ևս կարես իմանալ։ Ուրեմն՝ գրեմ սիրելւոյդ՝ որ զգուշացուցցես զապագրիչսն, ոչ ևս ղընել զայն թէ հրամանաւ և այլն։ Բայց զայն և եթ թէ ըստ օրինակի ի սուրբ Էջմիածին տպագրեցեալ տօնացուցին, և բաւ է։ Եւ ևս, քան զայս ի նորատիպ գրեանցդ՝ հարկաւորագոյն է սրբոյ Տանս՝ ժամագիրքն. զի հինքն սպառեալ են, և զնորս ի ապագրելոց աշխարհականացն Պօլսոյ ոչ ախորժիմք բերել տալ. այլ գրեմք հոգևոր որդւոյդ զի ի քո տպեցուցելոցն՝ Ծ, կամ գոնէ Լ. հատ անյապաղ յղեսցես ի պէտս դպրատան տղայոցն և այլոց ընթեռնլոյ։ Երրորդ թըղթովդ գրեալ էիր զգոլ հասանիլն առ քեզ Լմայ անապատի ժողովարար Ներսէս վարդապետի ուրուեմն՝ որպէս և իցէ հնարիւք, և զքո արգելուլն ի գործոյ, և խնդրեալ էիր կոնդակ յղել վասն նորա, և այլն։ Առ որ ծանիր. զի յորմէհետէ մեք կոչեցեալ եմք յայս կոչումն, երիցս և չորիցս այն անապատացն կոնդակս եմք տուեալ, երբեմն երկուցն ի միասին, և երբեմն յատուկ յատուկ, զորն ընդհանրական, և զորն մասնաւորապէս։ Եւ ծերունի Յակոբ վարդապետն յանցեալ ամին վասն զառամական անկարութեանն հրաժարեալ ի վանահայրութենէն, համակամութեամբ միաբանիցն և Վանայ իշխանացն զիւր հրազ Միքայէլ վարդապետն ընտրեալ փոխանակ իւր, մահսարօք յղեալ էին առ մեզ, և խնդրեալ հաստատել հայր նոյն Լմայ Անապատին, և դարձեալ զժողովրդեան կոնդակս շնորհել զորս և մեք անթերի կատարեցաք, սակայն ըստ կարգի և չափաւոր իրօք ոչ բաւականացեալ զանխտրաբար յանչափսն ձգտին, զորմէ և յամենևին չեն ինչ ազդեալ մեզ՝ ո՛չ գրով և ոչ բանիւ։ Ուստի չէր արժան արդ ողորմիլն. սակայն՝ գրեթէ վասն քոյդ բանի զիջեալ առ նոսա ի գութ՝ ահա զժողովրդեան կոնդակ մի գրեալ ի վերայ Հաշտարխանու, Նախիջևանու, Ղզլարու և Մօզդոքու, յղեցաք ընդ թղթոյս առ քեզ, զոր տացես ժողովարարին այնմիկ, որով շուտ վճարեալ զգործն՝ վերադարձցի։ Գամք այսուհետև խօսիլ յաղագս հոգևոր որդւոյն քոյ և մերոյ՝ Գրիգոր վարդապետին, և վասն արդեանց և իբաց ի քէն և ի նմանէ յղեցելոց։ Արդ՝ գրեալ էիր թէ՝ զրաբի համբաւս լսեմ զնըմանէ առ արդիւնաւորութիւն գործոյն, և առ սիրով վարեցումն ընդ ժողովրդեանն, և թէ պատուիրեալ եմ նմա գրել զորպէսութեանց իւրոց յայտը, և այլն։ Յիրաւի և մեք սրտադիւր եմք համբաւով նորին, և երբեմն գրէ մերայնոցն զորպէսութեանց իւրոց և գործոյն։ Յառաջագոյն որ սիրելիդ դրեալ էիր թէ զՅովհաննէս աղայի և այլոց զտուրսն յանձնեցի նմա, և զնախչուանուն ևս ընդ նմա յղելոց եմ, որ ի Հաշտարխանու հասուցէ ի սուրբ Աթոռդ, ինքն ևս գրեալ էիր թէ՝ բանիւ վարդապետիս ի Նախչուանու գործակալ պարոն Մկրտչէն ստացեալ եմ ԵՃԾ հատ բաճկլու ոսկիս, և Ժ ևս յինքենէ վասն հանգուցեալ որդւոյն ժէկն ԳՌԸԾ դնվ. որ այսպէս յղելս

սրբոյ Աթոռոյդ վնաս է. այլ օգտակար համարիմ որ մէկն ԴԹ գնով հաշուեալ բաբաթ տայք ի վերայ իմ. այնպէս հատուցից, և այլն։ Իսկ մեք զհաւատարիմ ոք չճանաչելով յայս կողմունքս՝ որում բարաթ տայք, գրեցաք Նմա, զոսկիսն յղել, որ թէ վնաս ինչ ևս իցէ սրբոյ Տանս, սակայն շուտով հասցէ ի յօգնութիւն պակասութեանց ի կողմանէ խարճելեաց։ Գեռ պատասխանի չեղև. և դրամն ես ոչ էհաս։ Պարոն Մկրտումն ևս որ յառաջագոյն բանիւքով ի Հաշտարխանու գողէթ և Ա. թուլում սնջաֆ էր յղեալ, թարց թղթոյ, գրեցաք Նմա զգինսն Նշանակել, զոր և ,քեզ ծանուցեալ եմք կանխաւ, այնմ ևս տակաւին զպատասխանի չառաք։ Այլ յանցելում ամին ի փետրվարի 27, Գրիգոր վարդապետն մի սնդուկով դոնէտուր և ղողէթ և աթլազ էր յղեալ մեզ հանդերձ սիայով չափուցն և գնոցն, ընդ որս էին և Պետրպօլքու Ջուղայեցի ծերունի Ցովհաննէս վարդապետի նուիրեալ իմտաշ դիպայ շուրջառն, և փորուրարն. և վակասն. և Բ թուլում սնջաֆ յինքենէ ընծայ վասն մեր. և Ե. հատ ընդհանրական գիրք յանուն սպասուց մերոց։ Ա օզմա թուղթ և Զ հօխայ զմուռ ի Տէր Ստեփանէն ընծայեալն մեզ։ Եւ վասն յիշեալ ճոթիցն գրեալ էր՝ որպէս թէ ի քէն իցէ յանձնեցեալ ինքեան յղել աստ. բայց դու ի թուղթս քո յանուանէ ոչ էիր յիշեալ զայսցանէ։ Ոչ իմանամք թէ որպիսի ինչ է այս։ Սիրելիդ մեր, լաւ գիտես՝ որ յայսքան ժամանակ մեք այտի երբէք աթլաս չեմք խնդրեալ. զի յԻզմիրու և կամ ի Կարնոյ լաւն և էժանն գնեմք միշտ, իսկ այսոքիկ ցածագոյնքն են և ծանրագինք, և աւելորդ իսկ։ Աթլասքն Բ. ցեղք են. զմի ցեղն Վէնէտիկոյ գրէ ի սիահւոջն, որ իբր թէ լաւն է, բայց գին դնէ տեղւոյդ Ա. ղազին ԲՌԵԾ. դն, ոմանց կտորիցն ևս ԲՌ դն. որք թանկ են յոյժ։ Զմիւս ցեղն՝ սուրմայի ֆռանկի աթլազ կոչէ, որ իբրև թաւթայ է, և գին դնէ Ա. ղազին ԱՌԵԾ դն. որ ոչ արժէ։ Իցէր թէ՝ գոնէ արատաւորք ևս չլինէին. այլ թէ՝ աթլասքն և թէ ղողէթքն ըստ մեծի մասին լաքեալիք են և բծաւորք՝ անպիտանացեալք. զորս համարիմք թէ յասպատակաւորաց իցեն առեցեալք և կամ ի մնացուածոց խանութից. որք վասն լաքիալի գոլոյն՝ այլազգեաց ոչ տրին, և մեզ ևս չվայելեն։ Եթէ ընդէ՞ր իցէ արդեօք յղեալ զայնոսիկ, չգիտեմք. գոնէ ճանապարհի ծախուցն ևս պարտէր խնայել։ Ի սիահին ոմանց չափուցն և գնոցն ես սխալմունք գոյին. զորս գրեալ՝ դարձուցաք առ ինքն, որ հասու լիցի։ Իսկ կտորքն թէպէտ վասն երկարութեան ճանապարհին դարձուցանել ոչ լինի, սակայն՝ աստ ևս մեզ ի պիտանութիւն ոչ հարկաւորի։ Ապաքէն սիրելւոյդ զգուշացուցանել արժան է՝ Գրիգոր վարդապետին, և այլոց ևս, որ միւսանգամ զայնպիսի անշահ իրքս՝ թարց մեր խնդրոյն ոչ յղեսցեն։ Որպէս ահա մեք ևս զգուշութիւն գրեցաք Նմա։ Եւ յերկարելս մի դժուար ինչ թուիցի սիրելի որդւոյդ. քանզի ի հարկէ դու ևս չկամիս զվնասն սրբոյ դահիս. այլ առ օգուտն վաստակիս, ապա այսպիսի իրք որ ի վաճառականաց խարդախութենէ լինին միշտ, առ այս զգոյշ լինիլ պարտ է, զի մի ընդ վայր վնասիցիմք։ Մանաւանդ ի Ներկայս այս կտորք չէին ինչ հարկաւորք սրբոյ Տանս. զի չափաւորապէս գոն։ Այլ յոյժ հարկաւոր են այժմ մինալու ղութիքն զոր ի վաղուց գրեալ եմք սիրելւոյդ, և դու խոստացար հոգալ, բայց տակաւին ոչ յղեցեր. եթէ կարելի է առ ձեռն բերելն, հոգ տարեալ յղեսցես։ Զորպիսութեանց սրբոյ Գահիս և մեր թողում յետոյ գրել, մինչ երկարեցաւ թուղթս։ Ողջ լեր ի Տէր, մնալով աննուազ ի սիրոյդ։ Ողջունեալքն ի քէն եպիսկոպոսքն սրբոյ Գահիս՝ սիրով ողջունեն զքեզ։ Եւ մեք օրհնութեամբ ողջոյն տամք մտերիմ սպասաւորաց քոց՝ խոհեմամիտ վարդապետաց և այլոց աստիճանաւորաց, նաև համայնոց առ քեզ գտանելոց, որք հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի խնամս Տեառն։ Ի ՌՄԽԲ թուոջս, և յապրիլի Իէ։

1794

ԼԶ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին.

Արժանապատիւ տէր Ստեփան ա. քահանայ.

Ո՛չ գիտեմ, զի՞ եղև քեզ, որ ըստ խոստման քոյ յանցեալ տարին պարտ էիր գալ, մինչև ցարդ ուր գոլդ ոչ գիտեմ և որ կողմամբ գալդ. վասն որոյ Թէպէտ պատահի երբեմն ի վերայ Մադրասու, Կալկաթու և Բասրայու գրեալ գիր առ ոմանս. սակայն ընդ նոսա լիով գիր ոչ ունիմք առ քեզ. այլ Թէ ի հասարակ Թուղթսն ընթեռնուլ ապաստան առնեմ զքեզ, եթէ անդ հանդիպիս։

Գաքայու, Սէյտապատու և այլոց Թուղթսն, զորս յանցեալ ամին առաքեալ էիր, նոցա պատասխանն գրեցաք յիւրաքանչիւրոցն և քաղաքացն և ի ձեռն մահտ. Գալստեանին և պ. Վարդան Քալանթարին, առաքեցաւ նոցա, եթէ տեսեալ իցես յուսամ հասանիս։

Պարոն Նիկողոսի տետրակն տպեցաւ վերջարանական պատմութեամբ որպէս և տեսանես, զի ուղևորեցաք անձ ըստ բաւականին։

Տպեցաւ և յանուն պարոն Մարտիրոսին համառօտ Բառարան մի տաճկական և հայկական վասն երեխայից։ Ամենայն ինչ լինելոց է որպէս և խոստացեալ ես նոցա, սակայն քո ղալստեանդ սպասեմք մեծաւ ցանկութեամբ, և ի Տեառնէ հայցէի արժանացուցանել զմեզ տեսութեան միմեանց։

Աղայ Յօհանջան Գիրաքեանի և Աղայ Յովհաննէս Խօջամինասենց տուրքն՝ հասաւ մեզ՝ պարոն Մովսէս Խաչիկէն, յայսմ ամի քսան Թուման ևս ուղևորեցի ի տուն ձեր, նոքա առողջութեամբ են, միայն Թէ եղբայրդ ի Հաշտարխան եկեալ, առանց մեր գիտութեան ամուսնացեալ է. իսկ քոյդ նշանեալ աղջիկն այժմ ի Ղուիմ գոլով կայ այնպէս։

Վասն դղրդմանց Եւբօպիու, այժմ բարուք է մեզ բան ունիլն ընդ Հնդկացն ի վերայ Բասրայու, սակս որոյ Ալ. Քալանթարեան Աղայ Վարդանն և զԿիրակոսն Սարդսեան, որ է վէքիլ մեր մահտեսի Գալստեանին, կարգեցի մեզ վէքիլ և հոգածու բանից մերոց, որ եթէ ի կողմունսդ հանդիպիս, կարես կարգել զամենայն ինչ որ առ բարին։

Ի Պօլիս մեզ կատարեալ վէքիլ է մահտեսի Գալստեանն, եթէ հանդիպիս անդ՝ ընդ նմա խորհիս զամենայն հարկաւորութիւնսն՝ որ վասն Հնդկաց, որպէս և գիտես զարժանն։

Յաղագս գրեանց ծախելոյն և այլ գործոց, տիրացու մահտեսի Մանուկն է. գիտութեամբ սրբազան Պատրիարգին և իշխանացն, ևս Շնորհ Մկրտիչ Ամիրային մերս յատկացեալ բարեկամին։

Պարոն Մարտիրոսին պ. Նիկողոսին և պ. Կարապետին այժմ կարես դրել զհարկաւորսն և յորդորել լցուցանել զխոստմունս իւրեանց։

Ես կարգաւորեցի զնոր քաղաքն Գրիգորիուպօլ, և եկի ի Ղուիմ, զսուրբ Խաչ վանքն նորոգեցի, և միաբան կացուցի և ջանամ աճել յառաջին պայծառութեանն. զԿաֆայու ռասկի Ղուիմու կէսն՝ առի յաղագս Հայոց ազգին. որք յաճախեն աստ յայսմհետէ, հանդերձ ծովի եզերօքն. սակս մաղազայից, խանութաց և խանից։ Այժմ ի վանքն նըստեալ զայսոսիկ հոգամ, յետ կատարմանն

գնացից ի Նախիջևան և ի Հաշտարխան ձմեռել անդ։

Կարապետ վարդապետն զգործն դեսպանութեան որ ի Պօլիս, բարւոք վճարեալ դարձաւ առ մեզ, և այժմ. առ մեզ գոլով ընդ Աբրահամ. վարդապետին, զքեզ կարօտիւ ե սիրով ողջունեն ընդ միաբանիցն վանիցս։

Կաֆայ լինելոց է մեծ մխիթարութիւն ազգիս մերոյ. եթէ գտանիցին անդ մեծամեծ վաճառականք, որք ինքեանք կարող իցեն զնաւս շինել, ե կամ. առնուլ և ի ծովն ձգել։ Գիտես դու թէ որքան ունի յարմարութիւն վաճառականութեան։ Մեր քնեազ Բարսեղն ի Պետրպօլք է առ մեծն քնեազ Դաթօն՝ ի Մօսկով ուսմանց հետևի։ Վիրքն որպէս թէ ի խաղաղութեան կան, հանդերձ կարծեօք սպասս ունին ի պարսից և ի թուրքաց... Զորպիսութենէ Եւրօպիու ոչ գրեմ. ինչ, զի յամենայն երկիր հնչէ զգոռ նոցա։ Պօլկն յամենայնի կիսեցին ընդ թագաւորին իւրեանց, այժմ. զկնի նոցա ամբսաամբութեանն նոցա, կամին բառնալ զթագաւորութիւն նոցա, ուստի մեծ կոտրվածք են ի նոսա։ Օրհնեալ (օրինակ՞) քեզ. զԱրշակունեաց թագաւորութիւնն մեր, որ նախ մասն հատին, և ապա զբոլորն բարձեալ ի մէջ իւրեանց բաժանեցին։

Ուստի վաճառականութիւնն յամենայն ուրեք անկեալ է ի կողմանս, և ամենայն ինչ թանգ. զի դրամ. ոչ գտանի, և մեք պարապեալ ի ծախս յայսպիսի միջոցի, յուսալով յԱստուած և ի յատուկ շնորհս բարեպաշտից միջնորդութեամբ իմս հարազատիդ։

Այն դրամ. Գիրաքեանի հատուցաւ բոլոր պարտուցս որ ի Պետրօպօլք և ի Մօսկով, այժմ. ես ցաւագար անձամբ և անդադար աշխատութեամբ հետևիմ. օգտութեան և պայծառութեան Ազգին, որքան և կարեմ. և եմ. կենդանի. զի այս ամենայն եթէ ես թողում. կորնչելոց է յազգէ մերմէ, ուստի՝ հոգիս ոչ թողու զիս հանդարտ նստել, և զպայծառութիւն ազգիս՝ թողուլ ի բաց։

Թելեմաքն տպեցաւ ի յիշատակ Գիրաքեանին ՃԾ (150) հատ առաքեցաւ ի Կալկաթայ առաքել նոցա. երկու Նարեկաչափ է։

Ցուցամ. ի մօտոյս զքեզ տեսանել որքան կենդանի եմ, խնայեա քեզ, մեզ և ընտանեացդ ե բաւականացիր այդքան պանդխտութեամբն ե աշխատութեամբն, զի մեք բաւական եմք քոյդ բարի հիմնարկութեամբն և այդ լինելոց է քեզ յիշատակ յաւիտենական. եկ, զկարդադրութիւնն հոգասցուք ի կենդանութեան մերում։

Այլ ե զօրհնութիւն Տեառն առաքեմ. առ քեզ, ե նստամ. փափագող տեսութեան քում,

խոնարհ՝ Յովսէփ Արքեպիսկոպոս՝

Հիւսիսոյ ե հիմնադիր Նոր Նախիջևանու և Գրիգորիուպօլու քաղաքացն հայոց։

1794 յօգոստոսի 1-ն.
ի ս. Խաչ վանքն մեր
որ ի Ղւիմ։

Ուր ե հանդիպիս սրբանուէր քահանայիցն ե բարեպաշտ ժողովրդոցն՝ զօրհնութիւն Տեառն մատուցես յինէն։

Ափսոսալի եղև մահն ի Բաղդատ եղեալ Աղայ Մարգարին Խարգալեան, զի մեծ սէր և փափագ ունէր գալոյ և արդիւնաւորելոյ զՏպարանն, և երեք հազար զոշ. խոստացեալ էր, ում. որ գրեմ. տալ նմա, և մէկ վարդապետական գիրք տպել յանուն իւր. գրեցի հասուցանել մհտ. Գալստեանին, սակայն մինչև էր հասեալ գիրս, նա ի կենացս փոխեալ էր, յետոյ գրեցի հոգաբարձուացն նորա և զգրի սաւատն առաքեցի գիտել։

1795

ԼԷ. Տ. Ստեփան քահանայի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Սրբազնազունեղ և գերապայծառ Արքեպիսկոպոսի Ռուսաց երկրի հայոցն՝

Իմ ողորմածազունեղ Տեառն սրբոյ աջոյն՝ ջերմեռանդական խոնարհութեան համբոյր։

Եւ զկնի, ի Նորին Սրբազնութենէն կացուցեալ՝ հաւատարիմ գործակալն բարեծնունդ ազնիւ պարոն Փիլիպպոս Աստուածատուր Մանուչարեան։

Իմ ախորժ սիրելի բարեկամի ողջոյն Յիսուսեան։

Ի վերն յիշատակեալ Սրբազան Տեառնդ իմում գրեալ ունիմ զորպէսն մեր, յանցեալ ամի Յունուար 11։ և Ովդան 10։ թէ՝ որքան տառապանս կրեցի 'ի Մօսէս Խաչիկ առաքեալէն՝ մինչ ցձեռս բերել զՍուրաթու պարոնայց օգնութեան դրամն. ԻԷՌ. (27000) յի արկաթին։ Յետ ստանալոյն իմ զնոյն դրամըն հանդերձ իւր անցեալ ժամանակաց մուդաթոմն[82], սակս մեծի խռովութեան ամենայն յերօպացւոցն, որ ի կողմանէ Ֆրանգիսաց, ըրթեւկութիւն և նաւագնացութիւն ծովային, ընդ նմին և վաճառականութիւն՝ յոյժ նուազեալ էր։ (որպէս և այժմ ես իսպառ խափանեալ գոգցես)։ Վասնորոյ՝ աստէն առ յերօպ բարաթ առնուլն և. զրամ տալն ֆնաս բերէր շատ։ Ուստի և վասն այս՝ անպատշաճ համարեցի բարաթով տալն։ Այլ օգուտ տեսի Ըստամպօլու խարճ խըիթ պատրաստել, և զայն ապահով արարեալ ի ֆնասուց ծովային և այլոց, բարձեալ յերկուս նաւս, բերել 'ի Կոստանդինուպօլիս և վաճառել, և փոխանակ բարաթով ֆնաս կրելոյն, ֆի հարիւրին՝ քսան և հինգ վերադիր շահոյն մատուցանել սրբազան Տեառն իմում։ Որ և յաջողմամբն Աստուծոյ այսպիսի հիման վերայ, ամենայն ի ձեռս իմ եկեալ դրամովքն, այսինքն թէ Նոր Նախիջեւանու անուամբն էր, և թէ այլոց սանադով յինք առեալս, և թէ իմ առանձինն, սկսեցի ճերմակեղէն և ապրշմեղէն խըիդս պատրաստել։ Եւ յաւուր յորում ձեռնամուխ եղէ յայս գործ, գրով հաստատեցի ի վերայ իմ զի ամենայն դրամոցն Նոր Նախիջեւանու, ֆի հարիւրին քսան և հինգ շահ տալ 'ի հասանիլն իմ յՍտամպօլ ըստ օբինի աւագապարտուց։

Եւ մինչ զայս սկսեալ պատրաստէի, և մերձեցեալ էր ժամանակն նաւելոյ, Մօսէս Խաչիկն՝ թուղթ իւր ցուցանէր ինձ իբր գրեալ ի յիշեալ պարոն Փիլիպպոս Աստուածատուրէն. որպէս թէ յիշեալ Սուրաթու դրամըն ըստաց է ի Պետերբուրգ, ի Դէվիթ Ըսկաթ, և կումպանոցն։ Որով՝ զինուորեցաւ Մօսէս Խաչիկն և Ջանաց՝ աստ տուեալ դրամն որ ինձ և իւր վաղխն, կրկին յետս յինք առնուլ։ Վասն զի ասէր թէ յերօպ ձեր օրդնին ահա ըստացեալ է յիշեալ դրամն։ Ես զայս տեսանելով, կարի ի մեծ տարակուսանըս մտի, քանզի աւելի քան ԹՌ 000 (9000) վաշխ եմ գտեալ աստ սակս Սուրաթու դրամոցն, և դուք յայդր ոչինչ ընաւ։ Որ եթէ յանձս առուի աստ կրկին յետ յիւրն տալն զյիշեալ դրամն, պարտականի և վաշխըն ես յետս տալ, ուստի և առ այս վարանէի։ Եւ նա յիշեալ ուդոմն զօրացեալ խեղղէր զիս և պահանջէբ, և տեղիս ամենայն պարոնայքն ես ակն առեալ սմա օգնական լինէին բանիցն սորա, և իբր իրաւունս տեսեալ՝ ասէին պարտիս յետս տալ աստ գտեալ

զամենայն դրամն, Ես յուսացեալ յԱստուած՝ արիարար ներհակեցայ. և հրաւիրեցի զնա յօրէնս դատաստանի. և այնու ազատել զիս՝ ոչ ես դարձուցի աստ առու գյիշեալ դրամն, Ուստի և պարտաւորեցին զիս գրել առ ձեզ՝ յիշեալ ձեր ըստացեալ դրամն կրկին յետ վճարել նոցա՝ յորոց և ըստացեալ էք, իւր անցեալ ժամանակաց ֆի հարիւրին հինգ մուդաթի խսէպոմն[88]. որ և գրեցի և եառու յիւըրն, և մատոյց ձեզ։

Եւ ոչ այսու շատացեալ յետ այնր պահանջեաց յինէն՝ և զերաշխաւորս որ եթէ յայդր յետոյ չիցէք դարձուցեալ, իմ երաշխաւորն եղիցի հատուցօղն յիշեալ գրամոցն և իւր մուդաթին։ Ուստի՝ և զամենայն ի ձեռս իմ եղեալ կայքն, այսինքն, պատրաստեալ խրիդն, որ եթէ Նոր Նախիջևանու անուամբ արդեամբն էր, թէ իմ անձնական արդեամբն, և թէ յայլոց՝ վաշխիւք առեալ գրամովքն, զամենայն յանձնեցի աստ պարոն Սարգիս Տէր Յօհաննէսին. զի սա այսու միամտեալ երաշխաւոր կացցէ և ազատիցեմ զիս 'ի վնասուցն։ որև աս յիշեալ բարեպաշտ պարոնն երաշխաւոր կալով ինձ, զամենայն կայսն իմ էառ ի յինքն և ընդ այս դաշնաւորեցաք գրով առ միմեանս, այսպէս։ Այսինքն, իմ ամենայն խրիդն սա յերկուս բաժանեալ, յերկուս նաւս բարձեալ առաքեսցէ յերօպ առ իւր օրգնին, նա՝ տիրեսցէ և պահեսցէ առ իւր մինչև յիշեալ դրամոց և իւր վաշխից, ընդ նմին և 'ի վերայ յիշեալ խոդին եկեալ խարջն հատուցանելն։ Որ և յետ յիշեալ խրիդն 'ի ձեռն սորա օրգնուն մտանելոյն, մինչի վեց ամիս ևս ժամանակ ունիցիմք. կամ ըստ շնորհաբաշխութեան, ութն ամիս ժամանակ ունիցիմք, յիւր ժամանակոյն յիշեալ դրամն և այլն հատուցու քեզ խրիդն տիրեսցուք։ Եթէ մինչ ցպայմանեալ ժամանակն չկարողասցուք հատուցանել, յայնժամ յիշեալ խրիդն վաճառեսցէ սորա օրդնին և իւր պահանջմունքն տիրեսցէ։

Արդ՝ ի վերա այսր պայմանի, զամենայն խրիդն իմ երկուս բաժանեցի. 20։ հակն, օրուս բարձի Կրօն պրինսէս Մարիայ նաւումն, ընդ կառավարութեամբ Գրօբէր նաւապետին, որ ելանելոց է անխափան ամսոյս 25։ Այս նաւս է նշանաւ և պաշտպօրտիւ Տինամարքի տէրութեան. և մինչ Տինամարքն ոչ խառնի 'ի պատերազմունս. վասն որոյ յարմար տեսաք սոցին նշանաւ նաւուք առաքել զբեռինս իմ։ Յիշեալ հակներն նշանաւորեալ եմ այս մարքովն, I S B որ և զամենայն ծովային և պատերազմական վնասն բարձեալ և ապահով արարեալ առաքեցաւ յիշեալ հակներն ի Կօպնհակ առ. յիշեալ պարոն Սարգսի օրգնի պարոն Դան ղզֆիլտ, պարոն Մայերս և Կումպանուն իւրեանց, զի նոքա տիրեսցեն 'ի կողմանէ յիշեալ պարոն Սարգիս տէր Յօհաննէսին, և ի կողմանէ Դէվիթ Ըսկաթ և կումպանուն։ Ի վնասուց հրոյ ապահով արարեալ լաւ գօգամուս[84] սլահեսցեն մինչի գնալն իմ և յիշեալ ղրամն հատուցանելն։ Ուրեմն, այժմ յայտնելով ձեղ զորպէսն, աղաչեմ զի ըստ ամենայնի զգուշ կացջիք իմ գնալոյն անդ՝ և կամ ութն ամիս ժամանակն լրանալոյն, որ եթէ յիւր ժամանակին չկարողացայց ներկայանալ, փութասջիք զյիշեալ դրամն և զայլ պահանջմունս որ ինչ և յայտնեսցի ձեզ՝ հատուցանել, և զյիշեալ խրիդն, համեմատ թասվլին[85] զոր առաքելոց եմ տիրել, և առաքել ի մեծն Պօլիս և համեմատութեամբ Բարլամին զոր առաքելոց եմ, վաճառել։

Ես վասն իմ տկարութեանս չկարողացայ այս նաւումս գալն, քանզի ի դեկտեմբեր ամսոյն սկսեալ մինչև ցայսօր, յանկողինս մաշէի ընդ ձեռամբ երկուց ճարտար բժշկաց Եւրօպացւոց։ Այսօր միայն հազիւ կարողացեալ հարկիւ ելի արտաքս սակս զբեռինս բառնալոյ ի նաւն։ Ողորմութեամբն Աստուծոյ՝ եթէ առողջութիւն գտից՝ միւս նաւովն, մինչ ցվերջ զամս, որ է ապրիլ ամիսն, ելանելոց եմ աստէն գնալ առ Կօպընհակ, բերել ընդ իս և զմնացեալն։

Հակների որպխութիւն և խրդի բարլամէն[86], և կամ ի վերայ խրգին պատահեալ խարճի խսեպն պատրաստեալ առաքելոց եմ ձեզ այլ նաւուք, զի եթէ ինձ պատահեսցի վտանգ ինչ մահու, և կամ յամենալ ուրեք ի ճանապարհի հիւանդութեամբ և կամ ի ձախ ինչ պատահմանց, յայնժամ մերձ 'ի լրանալ վեց ամսոցն, և կամ ութն ամսոցն, նախ քան զանցանել դաշնաւորեալ ժամանակին, տիրեսջիք զամենայն խրիդն իմ և առաքեսջիք ի մեծն Պօլիս. և աստէն՝

իմ առ ձեզ առաքեալ զբարլամէն, խարջերի խսէպն ճոթանքոց զանազանութիւն և յատկութիւն ձեզ առաջնորդ ունելով՝ կարողասջիք օրինաւոր գնով վաճառել զի վնաս ինչ չդոյասցի խրդին, և ի ներքոյ ծանրութեան պարաուց մասնեցայց ես՝ և կամ ընտանիքն իմ, փոխանակ շահուցն։ Քանզի առանց բարլամայ և կամ խարջից խըսէպին և կամ իրաց զանազանութիւն և յատկութիւն դիտելն, եթէ վաճառեսցի ինչ, վնաս ունելոց է խրիդն։

Ահա յայտնեցի ձեզ ի Մօսէս Խաչիկէն կրեալ նեղութիւն իմ. ուրեմն այժմ մնայ ինձ յիշեալ խրդի վաճառելն և մէպլաղն[87] շահիւք ի ձեռս բերելն և պարզերեսութեամբ ներկայանալն առաջի Սրբազան Տեառն իմ։ Վասնորոյ աղաչեմ, երկայնամիտ և զգուշ լինիլ սահմանեալ ժամանակի լրմանն և իմ ներկայանալոյն. այսինքն մի զպայմանեալ ժամանակն թողուլ անցանել և անվճար մրնալ պարտուցն։ և մի նախ քան զլրանալ ժամանակին վաղվաղկոտութեամբ վնաս ինչ կրել. այլ սպասել իմ գնալոյն, և կամ ժամանակի լրմանն ըստ պայմանին. և յայնժամ ըստ ժամանակին հոգալ և դրամն տալ ըստ չափու պահանջմանց հաշւոյն. զոր ցուցանելոց եմ ես միւս նաւովն. և զորս յիշեալ պարոնի օրդնիքն յայտնելոց են ի կողմանէ Կօպնհակ պատահեալ խարջին և կամ հրոյ շողուրանսին[88] և այլն։ Եւ այսպէս զյիշեալ ամենայն խրիդն իմ տիրել. ի Կօպնհակ և կամ յայլ ուրեք չվաճառել յերօպումն, զի վնաս է բերելոց, այլ առաքել ի մեծն Պօլիս, և հաւատարիմ մարդով վաճառել տալ, ձեր դրամն տիրել հանդերձ աւագապարտուց շահիւքն, որքան ես հաշիւն բերելոց է։ Եւ այլոց տալիքս ես տալ և իմ ձեռադրեալ պարտագիրսն յինք առնուլ։ Եւ յետ այնր. եթէ մնասցէ ինչ, իմ ընտանեացն յանձնել, և կամ որպէս իմ կտակն ցուցանիցէ այնպէս առնել։ Ուրեմն, տեսէք զի այս իմ նեղութիւնս կրելն և այսքան յամենալն և ի հիւանդութիւնս մաշիլն վասն շահուց Նոր Նախիջեանու եղև, վասնորոյ և դուք հարկիւ պարտական էք այնպէս բերել զձև գործոյն, զի յիշեալ խրիդն ի ներքոյ ծանրութեան չանկցի և ես վնաս կրեցից։

Ես ի սաստիկ տկարութենէս մաշեալ եմ, և երկբայ եմ կենդանի ժամանելն իմ առ ձեզ։

Բազում ինչ ունիմ հարկաւոր յայտնելոյ, այլ ոչ դրելոյ. մանաւանդ զի ոչ կարողանամ գրելն, և այլոց ոչ կարեմ յայտնել. վասն որոյ՝ թողում։ Եթէ կենդանի ժամանեցից յայդր. բազում շահաւէտութիւնս ունիք տեսանել, իսկ եթէ մեռանիլ հասանիցի, տուք փառս կամացն Աստուծոյ։

Այժմ ոչ կարեմ քան զայս աւելի դրել ինչ, քանզի նուաղիմ։ (Մի համարեսցէ Տէր զայս ի մեղս, Մօսէս Խաչիկին)։ Իսկ մինչ այնպէս առողջութիւն գտից, ոչ դանցառից զհարկաւորն գրել ձեզ որքան և կարելի է։

Կրկին վասն յիշեալ խրդին և դաշանցն գրեմ, որպէս վերն յայտնեալ եմ. ըստ զօրութեան դաշանցն մեր առ միմեանս, ոչ կարեն ձեզ խստել և պահանջել ի ձէնջ զյիշեալ դրամն, նախ քան զժամանակն։ Ուրեմն մի զուցէ նախ քան զժամանակն անցանելն ձեռնամուխ լինիցիք առանց բարլամայ և խսէպ գտանել վաճառել ինչ ի խրդէն, զի եթէ առանց բարլամայ-գտանել վաճառիցէք ինչ, գիտեմ զի վնաս է գոյանալոց։ Վասնորոյ՝ ասեմ յառաջագոյն զի ի յայնս պատահեալ վնասն ձեզ է վերաբերելոց. ես մասնակցութիւն չեմ ունելոց։ Ուստի և պատահեալ վնասն դուք հատուցանելոց էք յետոյ եթէ առանց բարլամի վաճառիցէք և կամ յերօպումն վաճառիցէք։ Քանզի մինչ այս ծանրութիւն ի պատճառս շահուցն ձեր պատահեցաւ և ոչ իմ, ուրեմն պարտիք խնայել ինձ և դուք։

Պարոն Յօհանջան Յակոբն ցանկայ զիս կրկին տեսանել, բայց ոչ եղև կարելի. գրով բազում խօսակցութիւն արարի և յաւել այլևս խոստումն ինչ ԸՌ 000 յի (8000)։ Գրեցի առաքել ի Բասրայ առ պարոն Մաղաքիայ Սարգիսն և առ պարոն Սարգիս Կիրակոսն, որք են արք բարիք և անկասկածելի. մանաւանդ՝ մինչ երկուք իցեն և երկուցն անուամբ առաքեսցես, ոչինչ վտանգ կարէ պատահիլ։ Եւ անդ զնոսա երկոսեանն կամիմ կարգել տալ մեզ վէքիլ։ Եւ յայդր եղեալ արծաթեղէնն մեր ես առաքեսցես առ նոսա ի Բասրայ։ Հաւանութիւն էր տուեալ բանից իմ, և գրեալ էր թէ ԱՌԸԾ (1800) ելգուզ ոսկի կուղարկեմ, հանդերձ արծա-

թեղինոջն և իմ պատկերոջն։ Իսկ այժմ դըրեալ էր թէ՝ վասն յայսմ ամի շատ ծնաս կրելն իմ ի վաճառականութիւնն Չինացւոց, ոչ կարողացայ ԸՌ 000 յին (8000) առաքել․ այլ գրեցի ի Բասրայ ԴՌ յի (4000) ղուրուշ տալ յիշեալ քոյ օրդնոցն առաքել առ սրբազանն։ Ցայնմանէ ԱՌ 000 (1000) ղուրուշն սրբազանին յատուկ ժամուց և ընծայ իբր շնորհակալութիւն սակս սուրբ մասն և խաչըն շնորհելոյն ինձ և ԳՌ 000(3000—) ղրուշն կրկին վասն դպրատանցն։ և յիշեալ ԳՌ 000 (4000) ղրուշի խտուրն[89] ԱԾ (100) քանի ղուռուշ ես իմ արդեանց խաչպիցն կայ սուրաթու որ նիսիայ մնացեալ էր։ Որ ջամիայ ԳՌԱԾ (4100) քանի ղըռուշ։ և գրեալ էր ինձ թէ Բասրուց գիր գտայ որ ըստացեալ են, և գրեալ են թէ քանի օրումըս կուղարկենք փոլիցով։

Աստ Կալկաթայ ես, յետ քանի աւուրց յիշեալ պարոն Սարգիս տէր Յօհանիսին մատուցանելոց եմ սուրբ մասն և ոսկեայ ականակուռ խաչն և պատկերն ձեր, հանդերձ օրհնութեան թղթովդ և այլն․ ցանկամ տեսանել և օրհնութիւնս ըստանալ և մնամ սրբազան Տեառն իմ՝

խոնարհ ծառայ և որդի՝

Սեփաննոս Իհնյ. տէր Յարութիւնեան.

1795 Մարտի ամսոյ 20։

Ի Կալկաթայ։

Վասն երկիւղի հանդիպման նաւուց թըշնամեաց, ի նաւն Տինամաքքի ոդջունագիր ինչ ոչ առնուն․ վասնորոյ թուղթս այս Ինգլիզի նաւում առաքեցի ի Բրիտանիայ զի անտի մատուցանիցի ձեզ։

ԼԸ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Սրբազնազունեդ տեառն Յովսէփայ Արհի եպիսկոպոսին ռուսաց յերկրի եղեալ Հայոցն՝ եւ ազգասէր առաջնորդի եւ հիմնադրի Նոր Նախիջեւան եւ Գրիգորիպօլ քաղաքացն

Իմ ողորմածադունեդ և գերապայծառ Տեառն Սրբոյ աջոյն ջերմեռանդական և խոնարհութեան համբոյր։

Մեծ եղե օրս այս ինձ, ուստի և բերկրեալ զուարճանամ յընկալնուլն իմ զօրհնութեան գրուածսն ձեր առ ինձ, որ են 1793. սեպտեմբեր, 15. 'ի Գրիգորիպօլ։—1794. յօգոստոսի 10։ 'ի սուրբ Խաչ վանքն 'ի Ղռիմ։ և 1794, յունվար 1։ դարձեալ 'ի Գրիգորիպօլ։—Յորում գբեցեալ բանքն և ախորժակ լուրն առողջութեան Սրբազան և պատուական անձինդ։ Ընդնմին, յաջողումն ձեր 'ի շինութիւնս ազգաօգուտս։ Զխաղաղութիւնն և զսէրն ընդ սրբազան պատրիարգն Պօլսոյ և իշխանս նորին։ Եւ և՛ս զկէսն Կաֆայ քաղաքի և զհին Ղռիմոյ ըստանալդ, եղեն ցաւագնեալ անձինս բժշկութիւն։ Վասնորոյ օրհնեալ է մարդասիրութիւն պարգեողին՝ զՍրբազնութիւն ձեր, յազգիս մեր, և Նա ինքն՝ դարձեալ շնորհեսցէ զձեզ՝ մերազնեացն, 'ի բազում ժամանակս։

Ահա երեք տարի եղև զի 'ի Սրբազնութենէդ թուղթ չունէի ընկալեալ, և այժմ ընկալայ այսօր երեք թուղթն 'ի միասին։ Զորս 'ի Բասրայու առաքեալ էին 'ի Բումբայի, և անտի՝ մեզ առաքեցաւ։ Զգիտեմ թէ՝ զիարդ են յերկար ժամանակ 'ի Բասրայ պահել։

Առ. պարոն Կարապետ՝ Ծատուրն, առ. պարոն Նիկողոս Յարութիւնն և առ. պարոն Մարտիրոս Տէր Ստեփաննն, և առ. միւսսն, դեռ. ոչինչ գիր չեմ տեսեալ և չէ եկեալ, նոյնպէս տետրակն պարոն Նիկողայոսի, կամ բառարանն, և կամ Թելամաքօյ գիրքն, չէ եկեալ և նոր լսեմ․ չգիտեմ թէ զիմրդ, և ուր պահեն 'ի բանտի։

Իմ աստ յամեցմանն տրտմիս, և ընդ այն մեղադրես, այլ հաւատայ զի չեմ մեղադրելի։ Մօսէս Խաչիկի արարքն ինձ շղթայ եղև և մաշեաց գիս առանց կապանաց երկաթի։ Զինչ առնիցէի, և կամ ինչ այլ հնար կայր

շուտով ելանելոյ։ Այժմ կայր հնար, եթէ զանցառութեամբ թողուի ըստ կամացն սորա և ելանէի ասաի։ Գիտասցես բստուգիւ, զի եթէ ես ասաէն ելանիցէի, յայդր ոչ լինէր հատուցումն դրամոցն. քանզի միաք սորա այլ իմն էր։ Իմ ասա մնալս և ստիպումն էր որ պարտաւորեաց սմա գրել յայգր և փութով հատուցանել։ Մինչ զի և ոչ այն ստիպմամբս բաւականացայ, այլ 'ի նեղ աբկեալ, ասա ըստացայ գյիշեալ դրամն հանդերձ իւր հարիւրին ժօ։ վաշխիւքն։

Օրումս թուղթ գտայ 'ի Սուրաթու, որպէս թէ՝ աղայ Յօհանջան Յակօբն մարտ վերջումն ելանելոց է յեգիպտոս, և անտի 'ի սուրբ յերուսաղէմ, և թէ յիրաւի իցէ, ունայն է՝ լինելոց գնալն իմ 'ի Սուրաթ։ Տեսից թէ՝ որպէս լինի վախճանն, որպէս և իցէ յայսմ ամի հարկիւ ելանել պարտիմ աստէն, և 'ի ձմռանս յերօշ և կամ 'ի Բասըրայ կամ Հալապ հասանիլ։

Վասն թագին գրեալն ձեր՝ տրտմեցոյց զիս, և զիարդ է պատահեալ, և կամ արդեօք չկայ ինչ հնար չափաւորելոյ, որ այդպէս ափսոսաս։

Յանցեալ ամի գրեալ կոնդակն, և քաղաքաց պլէնն, և Պօտէմկինի մահուան, և քաղաքի հիմնարկութեան պատմութիւնն տպեալ եկն ինձ 'ի Մատրասու, և բաժանեցի ուրախութեամբ։ Եւ ինձ գիր չլինելն տրտմէի յոյժ, և զպատճառն անգիտանայի։ Այլ այժմ յայտնի եղև, և կարծեմ՝ զի Սուրաթու պարոնաց դրամն չըստանալդ կարծէիր թէ ես իցեմ. և մինչ ըստացար, միամտեալ յայնժամ, օրհնութեան թղթով յիշեցեր զիս հազիւ։ Բայց՝ Տէր քննէ զսիրտս և զերիկամունս, և նա հատուսցէ ինձ վարձս ըստ մտերիմ և արդարութեան վաստակոց իմոց. առ որ ճգնիմ, և յորմէ իսկ ակն ունիմ գըտանել։ Ե՛ւ միայն զայս խնդրեմ 'ի Տեառնէ՝ Աստուծոյ, այսինքն ողորմելով ողորմեսցի Տէր ազգին մեր՝ և ըստ նմանութեան ձեր զմի ոմն ազգասէր եպիսկոպոս և հովիւ եւս շնորհեսցէ ազգիս մեր, և նա լաւ քան զիս հաւատարիմ գտանելով գուցէ թէ մեծամեծս ինչ գտցէ յազգէն։

Ինչ և իցէ, ես ոչ այլոյ ինչ փափագիմ, եթէ ոչ, հասանիլ առ Սրբազնութիւն ձեր՝ բանիւ զամենայն հարկաւորն լիովին պատմել, և շահաւէտութեան ճանապարհն յայտնել, և այնուհետև դադարիլ յանկեան ուրեք՝ ուրախանալով 'ի վերայ մեծամեծ յաջողութեան գործոցն և աշխարհաշինութեանդ և այլն. Յամ Սրբազան Տեառնդ իմ՝

Խոնարհ ծառայ և որդի

Ստեփաննոս քահանայ Տէր Յարութեան

1795 ապրիլ 1.

ի Կալկաթայ։

Ամենայն միաբանութեանն ձերում՝ խոնարհութիւն մատուցանեմ։

ԼԹ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը պ. Ստեփանին եւ պ. Փիլիպպոսին.

Գերազնիւ պարոն Ստեփան, և ազնիւ պարոն Փիլիպպոս։

Իմ տառապանքն ինձ ոչ է բաւական, տեսէք այժմ զինչ լսէք. ես ըղկեանս իմ տուալ եմ ի զոհ վասն ծառայութեան թագուհւոյն յաղագս դիւրութեան ազգին իմոյ, որպէս և նորին մայրական խնամօքն յուսադրեալ եմք ամենայն ազգաւ, և զնոյնն յամենայնուրեք հռչակեմք գրով. և ամենայն ոք՝ փափագի գալ յերկիրս այս, և առանց նեղութեան բնակիլ. հայրն լինել հայր որդւոց առանց երկիւղի բռնաւորաց. և տեարքըն՝ տեարք ծառայից. սակայն 'ի Հաշտարխան այս ամենայն ընդդէմ ելանէ կայսերական ողորմութեան և մեր յուսոյն։ Որդիք անհնազանդք ծնողաց՝ թերակատարք, ի բարկանայրն հարց, գնան և մկրտին. և եպիսկոպոսն տեղւոյս՝ իսկոյն ընկալնու որպէս ընկալաւ 11 տարեկան մէկ անճար աղքատի որդի որոյ հօր արտասուալի դիրն՝ ահա ուղարկեմ ձեզ թէպէտ առաքեցի առ եպիսկոպոսն, բայց ոչ կամեցաւ լսել։ Մեր Թորոս Այվազովի 14 տարեկան եղբայրն բարկացեալ ի վերայ մօրն՝

գնաց ռուսացաւ և նա ընկալաւ. մայրն մընաց լալով՝ զրկեալ ի յորդւոյն, որդին այլոց ծառայէ, իսկ ծնօղն որ սնուցեալ է, ի ծերութեան հասակին՝ զրկեալ է ի յորդիական ծառայութենէն։ Պարաաճարք և փախստականք գնան ե նոքա ընկալնուն։ Դոյ ի մեծէն Պետրոսէ ուկազ 1716 յունիսի 14։ Եւս 1717 նոյեմբերի 2։ ըստ խնդրոյ Պետրոս աւագ քահանայի, որ առանց հարցման չընկալնուն և չմկրտեն, սատ՝ այսմ հրամանի ունկնդիր ոչ գոյ. ասեն թէ, տարեկան երեխայ որ գայ մեք պարտական եմք ընկալնուլ. իմ խընդիրն այս է յեպիսկոպոսէն թէ կատարեալ հասակի անձինք յորժամ գան առ քեզ նախ սպրաւկ արա յամենայն գատաստանսն որպէս օրէնքն է, և ապա ընկալ, իսկ անկատարքն յետ դարձո. զի նոքա հաւատ ոչ ճանաչեն. մի զրկեր զծնօղս նոցա ի վայելմանէ որդւոց. վասն այսմ սաստիկ բարկանայ, որպէս սակս Իսրաէլ դի Աստուածատուրի որդին ինձ խնդիրք ետ, և մեք մեր խնդրովն առ եպիսկոպոսն առաքեցաք, որոյ կօպիէն առաքեցի առ ձեզ վասըն վերահասութեան, իսկ նա ոչ եթէ կամեցաւ մեզ բաւականութիւն տալ, այլ բարկացաւ ևս թէ՝ որպէս համարձակի հայոց արքեպիսկոպոսն նումրայիւ ինձ գիր գրել և հանդերձեալ մեծ հալածանս յարուցանել թէ զի՞որդ համարձակիք զանգակ այնքան հարկանել և կամ համարձակ կատարել զօրէնս ձեր։ Ես ոչ գիտեմ ում հնազանդիմ. կայսերական ողորմութեան ազատութեանն, եթէ բռնութեան սորին. միթէ Թուրքի երկրումն մեր զաւակն խլեն, և առանց պատճառի ի հաւատոյն հանեն, ոչ ապաքէն վասն այն դան և ժողովին ազգ մեր յերկիրս այս, որ յայսպիսի բռնութեանց փրկին. գիտեմ հաւաստի՝ որ նա սուտսուտ գրելոց է տեղդ իւր բարեկամացն. բարւօք, որ դուք նախահոգացեալ, կարդայք իմ գիրն, որ առ նա. և ապա՝ երկու թուղթ գրեցի. մինն սրբազան միտրապօլտին, և միւսն Ալէքսէյ Իվանիչ Մուսին Փուշկին յոյժ համառօտ, որ դուք ամենայն անցանքն ծանուցանելոց էք, ապա բարւոք է որ զանկակի աղագաւ գրեցեալ գիրն ևս տայք սրբազան միտրապօլտին, գիրն կարդալ, և գիտել, և զմեզ ի զրպարտութենէ սորա ազատել. ես տանջիմ վասն թագաւորութեանս և սոցա կարգաւորքն այսպէս առնեն խղճալի ազգին մերոյ. զի՞նչ արասցուք. ու՞ր փախիցուք. և ուստի գտցուք օգնութիւն։ Պիտոյ էր սմա, գոնեայ նկատել 'ի ներկայ ողպխութիւնս այս և լռել։ Դարբանդս առնելոյ լուրն յառաջ ինձ եկն. որպէս ամենեցուն նոյնպէս և նմա աւետիս դրեցի. գիրս ոչ ընկալաւ. ի հաց հրաւիրեցի ընդ զուրրէրնայինքն և ընդ այլ իշխանացն տեղւոյս, ոչ եկն։ Ահա յուսադրութեան պըտուղն երկրիս, որ երեսօք գրեմ ումեք թէ՝ եկէք և զհանգստութիւն վայելեցէք. ես ճանապարհորդ եմ, և ծառայօղ թագաւորութեան հրամանին, և սոքա յայսպիսի բռնութիւն կան, ոչ ուքազի լսեն, և ոչ հրովարտակի, ոչ արդարութեան ունկն դնեն և ոչ ճշմարտութեան. ի Հնդիկս եղեալ տէր Ստեփաննեանի բէգօվլաթ եղբայրն ռուսացեալ է թէ յեղբօրէս փող է եկեալ, ինձ չեն տալիս, նորա կինն և փոքրիկ որդին զողեալ կան յանկեան, որ բռնութեամբ չռուսացուցանեն։ Դուք ևս ազգ էք հայոց, օգնեցէք մեր ազգին, և ուր հարկն է ծանուցէք ենարալ պրգօրոր սինօթի Ալէքսէյ Իվանիչ Մուսին Փուշկին որ բարեկամ է. ապա է նա այր բանական և խելօք, վասն զանգակացն սա որ գրեալ էր առ նա, նա պատասխանեալ էր թէ լռեա, քոյ բանն չէ, եթէ նմա լաւ հասկացնէք, և իմ գիրն որ գրեալ եմ սոյն եպիսկոպոսին, տայք նմա կարդալ, նա կարէ գրել սմա, չառնել ընդդէմ օքինի բան։ Կատարեալ այր՝ յորժամ կամեսցի ռուսանալ, զինչ կարեմք առնել, այլ մեր խնդիրն է, վասն անարգ անձանցն սպրավկ առնել, որպէս յառաջ, իսկ անկատարքն չընկալնուլ, որ մնասցէ ի մէջ որդւոցն հնազանդութիւն առ ծնօղս, և ծնողացն խրատ առ որդիս, նոյնպէս և տեարց և ծառայից, պարտատիրաց և պարտապանաց։ Մեծն Պետրոս սաստիկ հրաման ունի առ այս թէ՝ առանց հայոց քահանայից և արքիմանդրիտ Մինասին՝ զոք ի հաւատ չընկալնուն, չմկրտեն, և անարգ բան չասեն. սոքա պրվելէկ խնդրեն, լաւ է, որ վասն իւրեանց հաւատոյն հաստատութեան խնդրեն։ Բարւօք լինի, զանկակի աղագաւ գրեալ գիրն, բանայք կարդայք, որ ընդդէմ բան չլինի, և զոր հարկաւորն է զապիսկ շինէք և տայք։ Ես զսոյն եպիսկոպոս յամենայն հանդիպման յանդիմ և պատուեմ. այժմ ոչ

թէ ի վերայ նորա խռովութիւն խնդրեմ այլ խաղաղութիւն, զի սա ասէ, եթէ տարեկան երեխայ յինէն խնդրէ, ես պարտ եմ ընդունել և միշտ սինօթին գրել, զոր ինչ սինօթն հաճեսցի հրամայել նմա զանկատարսն՝ ի հաւատս չընկալնուլ, այս իմ և հասարակութեան խնդիրն։

Մայիսի 20 1795.

Ի Հաշտարխան.

Խ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տէր Ստեփանին.

Սիրեցեալ կարօտեալ որդի տէր Ստեփան Աւագ քահանայ.

Գիտեմ ի բազում ամացհետէ յինէն թուղթ ոչ ընկալար, թէպէտ ես գրեալ եմ, սակայն 'ի Բասրայու և՛ ի Եւրօպիու յետ են դարձուցեալ, որպէս և պարոն Վարգան Քալանթարեանն քանիցս դարձոյց առ մեզ զգիր քոյ, որպէս թէ՝ ի վերայ Եւրօպիու իցես գալոց այսպէս և նոքա։

Եւս՝ զմեզ մաշեցեր յայս երեք ամս գրելով թէ՝ յառաջիկայ Զատկիս ելանելոց եմ, որպէս և այժմ գրես։ Եթէ երկար մնալդ գիտիցէի, այլ հանգամայնք ունէի գրելոյ, այլ այժմ սպասեմ գալստեանդ։

Յանցեալ թուոյ 1794 յունվարի 30 ի Կալկաթու գրեալ թուղթդ՝ ի վերայ Բասրայու պարոն Վարգանի գրովն ընկալայ. այժմ ի սոյն թուոջս յուլիսի 1, ի նոր քաղաքս Գրիգորիուպօլ, մինչ նոր էաք դարձեալ 'ի Հաշտարխանու. զի եօթն ամաց հետէ ոչ էաք գնացեալ անդ, յանցեալ ամին գնացաք վասն այցելութեան, այլ տակաւին չև էաք առեալ զկարօտութիւն մեր ի միմեանց. անդէն զտաք զողորմութիւն Կայսերուհւոյն վասն Գրիգորիուպօլու քաղաքին և ժողովրդեան. յետս դարձուցին զմեզ. ուր կամին և զքաղաքս շինեմ. որպէս դրելոց եմ յետոյ։ Զայսմանէ և յառաջ գրեալ եմ առ քեզ և առ հասարակութիւնն Հնդկաց 'ի Պետրո-Բօլգու և աստի ի վերայ Բասրայու։ Ընդ որս՝ և ոձև քաղաքին տպմամբ առաքեալ առ Ձեզ։

Այլ այժմ պատասխանեցից գրոյդ. Մովսէս Խաչիկի տուեալ գրամն մեր բարերար պայծառ իշխան աղայ Յովհաննջան Գիրաքեանի յանցեալ 1794 և յունվարի մուտն ի Պետրօպօլգ. առ ազնիւ պարոն Փիլիպպոսն Մանիչարեան և ի նմանէ առ մեզ, որպէս և գրեցի ի նոյն թուոյ մարտի 15 առ նոսա և առ քեզ։ Զկնի ընկալնլոյ զգիր ի Մովսէս Խաչիկէն յանուն պարոն Փիլիպպոսին, ես պատասխանեցի վասն մուղաթին թէ մեք ես աստ՝ մուգաթով ունիմք և այլ բանքշատ։ Ինչ և իցէ կրկին առնուլդ սխալանք է, բայց յուսամ ի հանճարեղութիւն քոյ, որ այնպէս իցես արարեալ, զի սրտնեղութիւն և վիրաւորութիւն ոչ ծնանիցի. այլ ամենից սիրոյն ելցէս այդի։ Բարերարն մեր Յօհանջան Աղայն ես զնոյն բողոքն գրէ զնմանէ, որպէս և դու։ Մովսէս Խաչիկն խոստացեալ էր ի գիրս պարոն Փիլիպպոսի գրել մեզ զբազում բանս, սակայն մինչև ցարդ ոչ ունի առ մեզ գիր։ Արդարև նա գրած է լեալ ի Լօնդօն նոյն չափն մեզ հասուցանել. սակայն իւրեանց այնքան տեղն կայ չէ եղեալ և նոյն կնպնին " վախճանեալ էր. յետոյ գրեաց և ետուն. այլ թէ՝ մէկ դատարկ կարծիք էր, միայն թէ մուտաթն չկայր, չգիտեմ ծրպէս յետ դարձուցեր, կարծեմ այդ եղև թակարթ ոտից քոց, որ այսքան յամեցար. միայն վերջն խաղաղութեամբ իցէ, որպէս և ցանկամ, այն է ինձ ըղձալի։

Յանցեալ յամին ես ընկալայ ի քէն զգիր պարոն Վարգանի գրովն և գիտացի զորպէսն Գաքայու Մուչլի Բէնտերու և Սէյաապատու. հասարակութեան նոցա և յատուկ անձանց՝ որոց նշանեալ էիր, ըստ նոյն յատկութեան գրեցի իւրաքանչիւրոցն, որոց վասըն պարոն Վարգանն գրեալ է, որ առաքեալ է նոցա ես տետրակն Հողեշահ. տպեսցուք 'ի յիշատակ պարոն Ստեփանին, և զփոքրիկ Բառարան՝ յիշատակ պարոն Մարտիրոսին Տէր Ստեփանեան, որոց վերջարանութեանցն կարես գիտել, որոց ամենայնից բաւական առաքեցի առ պարոն Վարգանն՝ առաքել նոցա։ Սոյն պարոն Վարգան Քալանթարն և Սարգիս Կիրակոս բանակատարն մեր Գալուստեանի կարգեցի մեզ վէքիլ 'ի

Հնդկաստան, որ մեր ամենայն բանն՝ նոցա ձեռօքն լինի։

Աղայ Յօհանջան բարերարն մեր՝ նորապէս առաքեալ էր մեզ ի վերայ Բասրայու, մեր Սարգիս Կիրակոսի և պարոն Մաղաքիայի ձեռամբն առ մահտեսի պարոն Գալուստեանն 4110 (չորս հազար հարիւր տասն) ղրուշ Օսմանցւոց և մէկ բողչայ " զգեստ, որոց և սիահին " դոյլ ի նմա և դու յառաջագոյն դրեալ էիր մեզ ցնոցանէ, դրամն եհաս մահտեսի Գալուստեանն և զգեստն դեռ ոչ. ես ընխադրն " գրեցի և Գրիգորիուպօլու քաղաքի շնորհեցեալ նոր կնքովն և երրովն " կընքեցի և առաքեցի առ պարոն մահտեսի Գալուստեանն առաքել առ վերոյիշեալ անձինսն, առաքել առ բարերարն մեր։ Եւ ես ինքս յատուկ թուղթ գրեցի նմա շնորհակալութեան և հաստատութեան. զի օրհնեալն այն, գրեալ էր թէ՝ «սատանայ պատերազմի ընդ իս ի ծերութեանս որպէս ընդ Յօբայ. զի սարմայիցս" պակասեցաւ այսքան. թէպէտ գերեզման տանելոց չեմ, այլ վասն Ձեր ամբարէի. այլ կուին Ֆրանկսիզաց զնասեցին զմեզ, եթէ ոչ աւելի կամք ունէի» և այլ բանք շատ և տրտունջ զՄովսէս Խաչիկեն և խղճալ քեզ։

Ինչ և իցէ ես գրեցի նմա զոր հարկն էր. Քրիստոս օրհնեսցէ զհաւատս, զյոյս և զսէր իւր, զաւուրքն իւր և զինքն տուողն և զօրհնեալ կենակիցն իւր, պահեսցէ Տէր ընդ երկայն աւուրս վասն մխիթարութեան հասարակ ազգին։

Արդարև ծանուցի յառաջապէս ողորմած Թագուհւոյն զգործ նորա. ամենեքեան զարմացան։ Հրաման խնդրեցի ի Թագուհւոյն զի հրովարտակ շնորհեսցէ, Հաշտարխանու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ շուրջն լինել մեզ, որ սոյն բարերարի մերոյ արդար արդեամբն ի յերկրի աստ՝ ապարան և դպրոց հաստատեսցի։ " Եղև որպէս և կամեցաք. մինչև ցբերդի պատն՝ մեր եղև. այժմ վերակացութեամբ մեր Գրիգոր վարդապետին, պարոն Մկրտում Գալուստեանին և պարոն Յովսէփ Թումանովին, շինի անդ մեծ շէնքս, ներսն քարվանսէրայ և գուրսն խանութք, դպրոցք և ապարան, բոլորն ՃԻ (120) հատ. գեղեցիկ տեսլեամբն և յաւիտենական յիշատակ, որոց ձևն յետ այսորիկ առաքեցից։ Յայսմ ամի Մանէիջի տանիցն սկսեալ եթէ իմտի ունիցիս, Քաչալ Թաթոսի քարեայ տունն, անդ հասուցանեն, զի զայն ամենայն մեք փողով առաք. ի ներքոյ ամենեցուն մազազայք են, Նախիջևանու շէնքսն արդիւնաբերք չեն։

Ի Հաշտարխան գոյ այժմ՝ ի տան մերում վերակացութեամբ Գրիգոր վարդապետին, փոքրիկ դպրոց երեք լեզուաւ. Հայերէն. Ռուսաբէրէն և Լաթիներէն, ութ երախայք են. ապա զբազումս զմայլեցուցանեն, երբ երեք լեզուօքն ի մէջ եկեղեցւոյն խօսին։ Ձայոմանէ երկար ունէի դրելոյ, սակայն չունիմ ժամանակ ներեսցես։

Աղայ Յօհանջան Գիրաքեանի խաչ տալըդ գիտեմք, դու և տէր Զաքարն նոցա դրեալ էիք։ Պարոն Մատթէոսինն ես բարւոք առնես, նոյնպէս և պարոն Սարգսին և պարոն Մարտիրոսին. այլ ինչ օգուտ որդի. որքան և աշխատեցար մեզ բաւական է, և ես կամին նոքա զկնի քոյ գալըս առաքել. դու փութացո զգալուստ քոյ, զի զոր ինչ և բերցես հաճոյ է մեզ. Մնացեալն ես քոյ աշխատանք է և բարի սերմն, ով և աշխատի և հնձէ, անունն քոյ է։

Զորս մարմարեայ արձանաց յիշատակարանի ոտանաւորն ահա առաքեմ առ քեզ գիտել։ Փութայ գալ. Նուիրակունք երկու ամ մնան յայդր, իսկ դու ահա եօթն (է) ամն անցաւ, խղճա քոյոցն, ամենեքեան առողջ են, զի մեր Զաքարն ի զատկիս առ մեզ էր յետ դարձուցի. եղբայրդ միայն եկեալ ի Հաշտարխան թարց գիտութեան Գրիգոր վարդապետին պսակեցեալ է խելագարապէս. որդիդ Աստուծով լաւ է, որպէս և Զաքարն ասէր, նոյնպէս և մերքն։

Հնդկաց բամբակէ եազլուղք շատ բերցես, զանազան տեսակ տեսակ գունով լաւ գինք ունի աստ։ Եթէ լաւ փիրուզայք գըտանիցես իստակն լինի։ Զամենայն դրամդ եթէ մարգարտի տացես, ոչ սխալիս, զի յամենայն ժամ ունի զգին իւր։ Սուբաթու պարոն Ստեփան Աղաբաբովն միշտ առաքէ առ իւր եղբայրսն, մեծ վաստակ արարին նու ա։

Գրիգորիուպօլ քաղաքի ողորմութիւնն է այս։

Նախ՝ աւադ եկեղեցի Անուանակրի Թա-

դուհւոյն, Սրբոյն Կատարինէ։ Երկրորդ՝ երկու հասարակ եկեղեցիք, մէկ վանք յանուն Սուրբ Լուսաւորչին։ Դպրոց արքունուստ և Արքեպիսկոպոսարան. բոլորի դրամն եղև՝ ԵՌԵԾ (5500) թումանս։ Երրորդ՝ քաղաքի տունքն հազար, համայն քարեայ. ԴԾ (400) խանութք, մաղխտրաթ, բաղանիս, ղայֆէխանայ, շատրուան, այսինքն ջուր ի հեռուստ ածել ի քաղաքս. դրամ սոցա տասն երկու հազար թուման։ Երրորդ աղքատացն օգնութեան և վաճառականացն ձեռնտուութեան ԷՌԵԾ. (7500)թուման և տասն և հինգ տարի յամենայն տեսակ խարճից ազատութիւն։

Չորրորդ՝ ազատութիւն ի փօստօյէ և ի տալոյ զպատերազմական զինուորս։ Յատուկ կնիք՝ դծագրեալ ձեռամբ Թագուհոյն, ուր են նշանքն Հայոց Թագաւորաց. որ է մեծ պարծանք ի մէջ աշխարհի։ Ազնուութիւն ով ոք ունիցի զվկայութիւն, որ նոր իմն է և չքնաղ, և այլ տեսակ տեսակ ողորմութիւն անլուր ազգաց և յաւիտեանց։ Շինութիւնն ամենայն յանձնեցեալ է մեզ, ուստի՝ զամենայն գործս մեր ի բաց թողեալ, աստ գեգերիմք գոհանալով յ'Աստուծոյ որ ի ձեռն նուաստութեան մերոյ՝ զմեծամեծս ներ էած ի յազգս մեր։ Այլ թէպէտ յաղքատութեան մաշիմք, բայց ըստ Պօղոսի զբազումս մեծացուցանեմք։ Ամենայն ազգաւ փառք տուէք Աստուծոյ, զայս ամենայն մարթ է քեզ ի վերջաբանութեան Թելեմաքին տեսանել, զորոց (150) հատ պարոն Փիլիպպոսն առաքեալ է ընդ Խորհրդատետրին յիշատակ պանծալի անուան Գիրաքեանին։

Ուր և հանդիպիս քահանայից և ժողովրդեան, օրհնութիւն տացես. մերքն զքեզ ողջունեն։ Կարապետ վարդապետն ի Նախիջեւան, Թադէոս վարդապետն ի տպարանն և Գրիգոր վարդապետն Հաշտարխան. չէրքէզ Յովհաննէս վարդապետն պատրաստ ի տեղի քոյ։

Վասն քոյ աղօթարար

Յովսէփ Արքեպիսկոպոս

1795 Յուլիսի 25
'ի Գրիգորիուպօլ։

ԽԸ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ Արքեպիսկոպոսին.

Իմ ողորմած և բարերար պայծառափայլ Տեառնդ սրբոյ աջոյն՝ խոնարհական և սիրոյ համբոյր մատուցի։

Իմ առ Սրբազնութիւնդ գրեալ վերջին թուղթն, յապրիլ ամսոյ յերրորդէն է։ Թէ ի նոյնն (որոյ օրինակն և թղթովս մատուցանեմ) և թէ յառաջ քան զայն բազում թղթով յայտնեալ եմ զամենայն որպէսն իմ։ Եւ յուսով եմ զի մինչև ցայժմ մատուցեալ եղիցի ձեզ և տեղեկացեալ իցէք ամենայն իրացըն և անցիցն։ Որպէս ի նոյն թուղթմն աղաչեալ եմ վասն ի Կօպնհակ առաքեալ խրդին իմ հոգ տանելոյ փութով և պարտքն հատուցանելոյն, այժմ ևս զնոյնն և առաւել քանզնոյնն աղաչեմ. զի ըստ ամենայնի հետևողութեամբ հոգ տանիցէք յիւրում ժամանակին պարտքն հատուցանել և պատուիրել ի Կօպնհակ, զամենայն խրիդն առաքել ի մեծն Պօլիս, զի Աստուծով ի ժամանելն իմ անդ՝ պատրաստ գտից և վաճառեցից փութով, և մի պատահեսցի ինձ անդ յամենալ և սպասել գալոյ խրդին։

Ի մտանելս իմ աստ Հնդիկս ըստ պատուիրանի Տեառնդ իմ մինչ արգելայ յերկիրըն Չինաց գնալն, վասն որոյ՝ առ անդ եղեալսն գրով ծանօթացայ. յորոց և նուէրս գտեալ եմ իսկ։ Որպէս և յիւրում ժամանակին ի Մատրասու յայտնեալ եմ յորոց ինչ զտանելս և կամ քանի անձինք և զով ոք լինիլն և ծանօթութիւնս նոցա։ Առ որս և յամենայն տարւոջ չեմ պակասեալ գրելոյ զթուղթս և ծանուցանելոյ զուրախարարս։ Յորոց միջի մինն էր Մատթէոս Յովհաննէսըն. առ որ յամի Տեառն 1792 մատուցի զ'ի ձէնջ առաքեալ ոսկեայ ականակուռ խաչն սուրբ մասամբ, հանդերձ օրհնութեան թղթովդ։ Եւ մինչ ի նոյն ամի զպատասխանն չընկալայ, ի միւսում ամին մատուցի և զ'ի ձէնջ առաքեալ դեղանկար պատկերն։ Որոյ պատասխանն ևս թէպէտ յատուկ թղթով ոչ ըստացայ, այլ գրեալ էր աստ առ պարոն Սարգիս Տէր Յօհաննէսն զհասանելն ընծա-

յիցն և տալ զխոնարհական ողջոյնն իւր ինձ և տալ ԲՌ 000 յի, (2000) մինչև ինքն յետոյ ի պարապութիւն գտանելն դրեկոց է զպատասխանիս Թղթոցն իմ։ Յետ զայս լուրս առնլոյն իմ, մինչ չեւ էր անցեալ ամիս մի՝ լուր եկն զնմանէ թէ վախճանեալ է ի Գանթօմ։

Եւ մինչ դիտէի ես զմեծ հարստութիւն նորին, և զի մինչ չէր ամուսնացեալ ընաւ, բայց ունելով ի հարճէ Օ որդի մի (Թ.) իննամեայ Յօհաննէս անուամբ. և ինքն էր մերձ (Կ.) վաթսունամեայ. ուստի և առ նա զգրուածսն իմ մտածելով, յուսով էի, այսինքն, ասէի ի միտի իմ թէ՝ եթէ յանկարծ մահուամբ չիցէ վախճանեալ, ի հարստութենէ իւրմէ հարկիւ մասնաւորելոց է մեզ. վասնորոյ՝ և սպասէի գալստեան նաւուցն, զի կըտակի նորին որպիսութեան տեղեկացայց, ապա ելից աստի։ Յորում միջոցի եհաս նաւ ինչ, և ի նմա եկն ոմն Յարութիւն Աղամ անուամբ երիտասարդ (որ յառաջն սարմայայ ունէր ի հանգուցեալ Մատթէոսէն և եկեալ էր աստ, և ընծայքն սորին ձեռամբն էի առաքեալ առ հանգուցեալն)։ Յորմէ՝ ոչ միայն զուղիղ լուրն առի, այլև զօրինակ կտակի նորին, որ բերեալ էր ընդ իւր. Աստուած այնպիսի զգացողութիւն ետ ինձ, զի նախ քան զհոչակիլն կտակի բանիցն, զօրինակն առի, գրել տալով և զվկայութիւնն իւր ի նմա և հաստատելով զուղիղ օրինակ լինիլըն, և նորին ձեռագիրն ճանաչելն և զթաղումն տեսանելն։ Զոր մինչ լուան ոմանք ազգատեացք, նախատեալ էին զնա վասն օրինակ կտակին տալոյն ինձ։

Եւ մինչ տեղեկացայ կտակի զօրութեան, որ իւր ամենայն հարստութիւնն Ե (5) մասն էր արարեալ. Գ. (3) մասն հարճին և որդւոյն Ա. (1) մասն քուէր աղջկանն. և Ա. (1) Էջմիածնին, Յերուսաղէմին, Նոր Նախիջեւանու և Ջուղու վանքին։ Այսինքն, ի հնգից մասանց մինն ի չորս մասունս բաժանեսցի ի վերայ վերն յիշատակեալ տեղեացն։ Որ պատուիրեալ է զի կտակատարքն ամենայն գրամն դիցեն Ինգլիզի Կումպանու մօտ մուղաթի, մայայ գրամն միշտ մնասցէ Կումպանու մօտ և մուղաթն յիւրաքանչիւր տարւոջ ընտասցին։

Յետ զայս ի ձեռս բերելոյս, մինչ տեղեկացայ թէ՝ հանգուցելոյ ամենայն հարստութեանն Փորթուքալաց տէրութիւն այսինքն Մաքաու դուվէռնամէնթն տիրեալ է, և ոչ է թոյլ տուեալ կտակակատարացն մերձիլ ի գործս կտակակատարութեան, քանզի՝ ի Մաքաւ քաղաքի անդ ուր հանգուցեալն բնակէր բարբարոսաբար կառավարութիւն ունին. և ասեն թէ՝ գուցէ թէ ոչ ես տացեն ումեք ինչ ի կայիցն և կամ եթէ տացեն, գուցէ պահիցեն զամենայն կայսն առանց մուղաթի մինչև ի 21 տարւոյ հասակ հասանելն որդւոյն, և ապա յայնժամ տացեն նմա զմասն ինչ, ընդ նմին և այլոցըն սակաւ ինչ։ Այս յետին լուրն ծանր եղև ինձ յոյժ. վասնորոյ՝ մինչ դիտէի զմեծ հարուստ գոլն հանգուցելոյն, որ ասեն 20 լաք ռուփու կայք ունի. և գիտէի նորին աստ վաճառականութիւն ունիլն, ի ծածուկ հետախուզ եղէ թերևս աստ առ ոք գտից ինչ յստացուածոց նորին, որ և քննելով տեղեկացայ ի պարոն Սարդսէն՝ որ առ իւր ունէր մուղաթի մերձ ԾՌ 000 (50000) և ի ցուցելով խօսակցութենէս պատրեալ ասաց. այս ես յորժամ տեղեկացեին, անխափան տանելոց են, որպէս անդ զաեալն ամենայն տիրեալ են, այս ես յինէն յինք կառունս՝ Բայց՝ առ ի փրկել զանձն իմ յապագայ ի պահանջելն իսկոյն կը տանիմ դատաստանատանըն վեր կը դնեմ, դատաստանատունն ում կամենայ նորա տայ։

Յետ իմ զայս ամենայն հաւաստելոյս, ի ծածուկ պատրաստութիւն տեսի, կտակն թարգմանել ետու, դատաստանատան առաջին և ընտիր ճարտասանն և օրէնսգէտն ինձ փաստաբան վարձեցի և արզի գրեալ թարգմանել ետու, ընդ նմին և զամենայն անցսն Մաքաւցոց առ հանգուցելոյ կայքն գրով ետու յատեան դատաստանին և ըստ օրինացն Անգլիացւոց յայտնեցի իմ իրաւունս ունիլն աստ զհանգուցելոյ կայսն տիրելոյ, ցուցանելով զիս ժառանգորդ նորին կայիցն, և բարեկամ և ընծայս առաքօղ առ նա՝ և զնուէրս ընդունող ի նմանէ. Թարգմանել ետուն զկոնդակն և զվաքլագիրն իմ. և զՏէր Գաւիթ Տէր Փիլիպպոս Ղայթմաղեանն վկայ հաստատեցի իմ վէքիլ լինելոյս Նոր Նախիջեւանու, և անդամ լինելոյս նոյն եկեղեցւոյ, և ձեր իշխան լինիլն և հիմնարկօղ գոլն նոյն

քաղաքի։ Որ և ի յայս գործ մեծ մխիթարութիւն գտայ ի Տէր Դաւիթէն։ Որ և դատաւորացն քննեալ զօրէաւոր լինելն խնդրոյս, հաճեցան կտակակատարութիւն տալ ինձ։ Եւ մինչ հռչակեցին որպէս օրէն է, և յայնմ հետէ մինչ ժամանակ ունի տալոյն ԺԲ (12) օր. յորս եթէ ներհակօղ ոչ յառաջ կացցէ ինձ, յայնժամ կարգեսցեն զիս կտակակատար ե ժողովօղ կայից հանգուցելոյն։ Եւ մինչ մետասան օրն էանց. պարոն Սարգիս իմացաւ, և յազգահութենէն յաղթեալ ներհակութեան Թուղթ ետ ի դատաստանատունն, ասելով թէ՝ ե ես բարեկամ եմ հանգուցելոյն և մանաւանդ աստ բնակիչ, ե հարուստ, վասնորոյ ինձ առաւել յարմար է կտակակատարութիւն դտանելս։ Առ այս՝ դատաւորքն Գ (3 օր), յիւրաքանչիւր աւուրսն չորք ժամ պարապէին զերկու կողմանց դրուածսն լսէին ե քննէին և երկուց կողմանց ճարտասանքն առ միմեանս վիճեալ խօսէին յատենի դատաւորացն և բազմութեան, ուր յիշատակիւր ի ճարտասանէն իմմէ զամենայն դրով տուեալն իմ. այսինքն, զշնորհս Կայսերուհւոյն առ ժողովուրդսն մեր, զհիմնագրելն ի ձէնջ զքաղաքն ե զպրատունսն և այլն։ Որ ե յետ երից աւուրցն, շնորհիւ Տեառն՝ յաղթեաց ճարտասանն իմ նորա ճարտասանին, ե դատաւորքն հանեալ ետուն ինձ իրաւունս. ե դատաստանատան մեծ կնքով կտակակատարութեան գիր գրեալ իմ յանուն անցեալ օրն ետուն ինձ. և հրաման գտի ժողովել զամենայն զոր գտից աստ ի կայից հանգուցելոյն. և զնոյնն կումպանու մօտ մուղաթի դնել սանաղով. և սանաղն յաւանդ թողուլ ի դատաստանատունն և մուղաթն, ես և կամ իմ օրգնին " տիրել յիւրաքանչիւր տարւոջ վասն Նոր Նախիջեանու։ Որ և գտեալ եղև աստ առ պարոն Սարգսին և առ այլս, Ծ.Ռ 000 (50000) ի. զորս յետ քանի աւուրց ժողովեալ տալոց եմ Կումպանուն ըստ պատուիրանի կտակին և ըստ հրամանի դատաստանին։ Վասնորոյ՝ ասեմ, ուրախ եմ ես՝ զի ի ձէնջ հաստատեալ բարեկարգութիւնքն ընդ մեծամեծ աթոռոցն յիշատակին ի կտակոջ, և քարոզին յատենի հզօր Տէրութեան։ Ուստի և յուսամ զի առ այս մտերմաբար աշխատանըս իմ հաճեալ յաղօթս ձեր յիշեսջիք զհիւանդագին անձս իմ. որ ի սոյն գործս աշխատելն իմ քրտնելով, և յանձրևոյ Թացեալ լինելոյս կրկնեաց զհիւանդութիւնս. և յանկողին անկայ մերձ Բ. (2) ամիս։ Եւ այժմ ԺԵ. (15) օր է առողջութիւն եմ գտեալ Աստուծով։

Եւ մինչ ներկայ եղանակն անձրևային է, չէ կարելի ճանապարհ ելանել ումեք. Աստուծով ի հոգտեմբերի վերջն ելանելոց եմ առ Սուրաթ. և մինչի մեծ պահքն թերևս կարիցեմ ի Բասրայ հասանիլ։ Վասն այսմ անցիցն և յաջողութեանս ոմանք ի Նախանձ անկան, մանաւանդ Ս. Էջմիածնի յԵրուսաղէմայ, և Ջուղու վէքիլքն, մինչ իւրեանք ևս ներկայ գոլով և վէքիլ. և ոչ կարողացան մտածել տանել զայս, և ես արարի։ Վասն որոյ և ատեն։ Քանզի՝ ես որ աստ յառաջացայ և զայս տիրեցի, ի Փասուց աղատ, նոքա պարտական են ի հեռաւոր տեղիցս աշխատիլ և ընդ այնպիսի բռնաւոր Տէրութեան խօսիլ և աղաչել։ Եւ այն Աստուած գիտէ թէ քանի տարի պարտին աշխատիլ, որ ապա թէ կարողանան ինչ ի ձեռս բերել, եթէ և այն կարիցեն։

Բազում մինչ ունիմ գրել վասն այս վասն ապագայ հարկաւորութեան. բայց՝ յանկարծ ժամու ելփակէթինաւն՝ չկարողացայ հասուցանել։ Եւս կտակի օրինակն դատաստանատանն լինելով, ժամանակ չունէի օրինակն բերել տալ և մատուցանել. զայն ևս, և կամ այլ հարկաւորսն յայլում ժամու ունիմ գրել, ներկայ այսքանիւք խնդրեմ բաւականանալ։

—Ի Բթաւիայ, պարոն Մանուկ Յակոբջանն, այր խոհական և տեղեակ գրոց, յոյժ քաղաքավարի և մանաւանդ ազգասէր որ եղբայր է ի Հաշտարխան բնակեալ պարոն Զաքարիայ Յակոբջանին և ամուսնացեալ անդ։ Նոյնպէս և պարոն Վարգան Գասպարն հոգեկից ընկեր և եղբայր նորա անդ. համեմատ և կամ գուցէ և առաւել քան զնա ազգասէր. և գեռ չէ ամուսնացեալ. ի սոցանէ ընկալեալ եմ զնուէրս ինչ. բայց՝ մինչ աղայ Շամբին ընկերք են և ընդ իշխանութեամբ նորա, երկնչին ի նմանէ ; այժմ մեծ օգնութիւնս առնել և առաւել երևիլ քան զնա. բայց խոստացեալ են երևելի յիշատակս ըստանալ. և սոքա կամք ունին ելանել աստէն և գալ բնակիլ յայդր. առ սոսա ես Թուղթ

եմ մատուցեալ ի դիմաց ձեր և դրեալ են ինձ թէ՝ առանց արժանաւոր ընծայի չըհամարձակեցաք պատասխանն դրել. Հարկ է առ սոսա յատուկ յատուկ թուղթս դրել. բայց՝ աղայ Շամրի ձեռն չուղարկել, այլ աստ սա պարոն Ներսէս Ցօհաննէսն առաքել որ սա հասուցէ նոցա։ 'Ի սոցանէ մեծ ակնկալութիւն պարտիս ունիլ. քանզի առաւել քան զամենայն սոքա ազգասիրութիւն ցուցաննեն։

Եւս դոյր 'ի Բթաւիայ ոմն Աղեքսանդր անուն Համադանցի, 'ի դաւանութիւն Վալանդիզաց մտեալ և եղեալ խորհրդարանի նոցին անդամ վասն իւր մեծի խոհեմութեան. առ նա ես մինչ ծանօթութիւն ստացայ. առ յիշեալ երեք պարոնայսն միշտ գրով յորդորող եմ գտեալ. և մինչ յանցեալ ամին յայտնեալ էի նոցա զԱղեքսանդր Մակեդոնացւոյ գիրքն տպելն. երեքեանն ես օգնութիւն էին արարեալ, որոց արարեալ օգնութիւն գուցէ լինի ԲՌ 000 (20000) և ցանկացեալ էին ի նոյն գիրք տպեցմանն ծախել. այժմ նոյն Աղէքսանդր վախճանեալ է, բայց հարկ է յիշատակել։ Արդ մինչ Վարդան Գասպարն երկիւդ կրէ 'ի Շամիրէն, թէ մի գուցէ լսելով զյառաջանալն իւր ի գործս երևելիս, վասնորոյ և ի նախանձ մտեալ փնասիցէ յընկերութեան, խնդրեալ էր յինէն ոչ յիշատակել զտուրս իւր. և կամ զապագայ կամս իւր, մինչև արձակութիւն գտցէ յընկերութենէն և պարոն Մանուկն արձակեալ է յընկերութենէն, բայց՝ և նա այլ ինչ բերէ պատճառս։ Վասն որոյ՝ այս պատշաճ համարիմ զի հասարակաբար Բթաւիու պարոնայք Աղլբէգի, Մանուկի, և Վարգանի անուանքն յիշատակեսցես իբրև ազգասէր և օգնութիւն առնօղ։ Զի այսպիսի հասարակ յիշատակելովն նոքա ուրախանալոց են, և ոչ միոյն փնաս չէ լինելոց. բայց՝ մի գուցէ զապագայ խոստումն սոցին յայտնեսցես ի տպեալ գրեանսն, քանզի որպէս յայտնեցի, երկիւղ կայ փնասու։

Սոքա յոյժ փափագին լսել զյառաջանալն ձեր, ես մինչ աստ եմ, միշտ ծանուսեալ եմ. այսուհետև դուք յայդրէն ծանուցէք և ի տպեալ գրեանց, և թէ կարևոր է պատկերն ձեր իւրաքանչիւրոցն յատուկ շնորհեցէք ի կորուստ չէ գնալոց, ի սոցանէ առաւել մխիթարութիւն ունիք գտանել քան ի մեծէն սոցին։ Տէր Մարտիրոս ոմն քահանայ ունին սոքա առ իւրեանս, որ է յոյժ պարզամիտ և առատաձեռն. առ նա ևս օրհնութեան թուղթ և տպեալ ինչ գիրք շնորհեսցէք, շահ ունիք և միշտ յորդորող է լինելոց։

Պարոն Մանուկի կինն, տիկին Թեկղի, բարեսէր և քաղաքավարի։ Որ էր յառաջ հարսն Շամրի, այսինքն կին Եղիազար որդւոյն և այժմ ամուսնացեալ ընդ Մանուկին, զնա ևս ազնուաբար յիշատակեսցես ի թուղթըն ձեր և այլն ըստ Սրբազնութեանդ

Խոնարհ ծառայ և որդի

Ստեփաննոս Բնոյ Տէր Յարութիւնեան

1795 Օգոստոսի ԻԸ (28)
ի Կալկաթայ.

Տէր Դաւիթ տէր Փիլիպպոսն ի վաղուց ելանելոց է ընդ ծով գնալ ի Բումբայի և անտի ի Բասրայ գնալ ի Թիֆլիզ. եթէ պատահեսցի գալ յայդր, քերականութիւն զաս ասել յարմար է ի դպրատան ուրեք, մինչև լաւն գացուք։

ԽԲ. Ի Յովսէփ արքեպիսկոպոսէ առ Քնեազ Սոլոմոնն ի Թիֆլիզ.

Յուլիսի գրած գիրն քոյ ընկալայ յամսոյս 6 և տեղեկացայ ամենայն դրեցելոցդ։ Զարմանամ ես յոյժ ի յիմաստութիւն Արքային մերոյ, որ պատրաստեալ է զաներն իւր առաքել ի Պարսիկս, և աստ մինչև ցայսօր ոչ եթէ զաներն, այլ մէկ ծառայ ևս ոչ առաքեաց և որպէս օրէնն էր ոչ ծանոյց մեծի կայսերն զվախճան հօրն իւրոյ և իւր յաջորդելն զաթոռ նորա, ոչ այս միայն մէկ օրինաւոր և ըստ կարգի գիր ոչ գրեաց մինչև ցայսօր, ոչ առ թագաւորն, ոչ առ լուսափայլ քնէազն և ոչ առ դեսպանն իւր։ Զգիտեմ որպիսի՞ անրաղտութիւն է այգ երկրիդ տիրեալ ոչ իմ այնքան աշխատանքն և գրածն ազգեաց իւրեանց և ոչ այգքան տառապանքն ամենայն և երկիւղն զորս կըրէք և ոչ պարոնի որդի Դաւիթի աստ գալն և մեծամեծ խօսիլն և այդր լռելն, ճւր է

իւր խոստմունքն, որ մեր շուտով գալ։ Իսկ ողորմած կայսրն մեր՝ սպասէ դոցա մարգոյն ե կամ դարձին առաջի որդի Գեօրկուն, որ եթէ կամին մտանել ենթ հովանաւորութեամբն իւրոյ՝ յայնժամ ցուցցէ զիւր ողորմութիւն մեծ, որ ահա ունի պատրաստեալ, աւելի քան զոր ինքեանք կամէին, թագ, ծիրանի, թուր, կավալէր, աստղ ե այլն ամենայն իւրն և ժառանգին ես եղբարցն. զօրքն ես պատրաստ է։ [48] Վասն ձեր՝ վերստին ե այնց տեղեացն կամի տիրել, ուր մեք շրջեցաք։ Կըռտածի ժառանգին ծանոյց որ զնոսա մերն գիտասցէ և լռեսցի։ Աւելի ինչ առնէ չգիտեմ մինչև խոնարհեցաւ և ինքն գրեաց առ Արքայն, առ ժառանգն և առ ձևս. ողորմութիւն Տեառն ընդ ձեզ է մի երկնչիք. մեր լուսաւորազունեղ արքայորդի Դաւիթն, որ ինչ իւր բանն չէ այն է գրեալ Լաշկարովին ե մեզ՝ վասն դեսպանին իւրեանց։ Միթէ չգիտէ, որ իւր խօսքն ե գիրն առանց Արքայի գրոյն ոչ անցնի ե ոչ կարեն ցուցանել։ Եւ կամ իբրե դուրիէլ շինեցին դոյն էլչին, որ գրէ. ինչ և իցէ յուսամ որ այլ իմն առաքեալ իցեն զոք կամ Աւալի որդի Գէօրկին, իւրեանց էլ չին ես կայ տարակուսեալ զի վասն նորա մինչև ցայսօր ի դուան ոչինչ են գրեալ ըստ օրինի, այլ հատ ե կտոր թղթեր անկանօն և անպատշաճ թագաւորի։ Այս ամենայն ծանուսցես Արքային և արքայորդւոյն. ես իմ պարտուցս զերծայ, այժմ ինքեանք գիտանցեն։ Լաշկարովին որ գեղ են բաշխեալ, նորին Արքայի գիրն ոչ է ըստ օրինի երկրիդ. պէտք է ըստ կարգին միգել [49] գրէ որպէս սովորութիւն է այդ թագաւորութեան, իւր անունն, թագուհոյն իւրոյ ժառանգին ե այլոց՝ ես դիվանաց, վեզիրաց ե վեքիլաց, որպէս այժմ նոյնպէս և ապագային, որպէս ինքն նոյնպէս ե յետագայ թագաւորքն շնորհեալ են Լաշկարովին ե իւր ժառանգացն յետամիտ են և այլն, և ամենեքեանքն ձեռք դնեն և այնպէս ղրկեն, որ ցուցցէ ուր հարկն է, միայն արքայի անունն է ի նմա որ ընդդէմ է երկրիդ կանօնին և սովորութեանն այսպէս գրելն, միայն ռուստաց կայսերացն է սովորութիւն։ Ցաղագս մեր խանգարեալ գիւղօրէից գիտասցես, որ ես ոչ փէշքաշ ե ոչ քրթամ տալոյ ֆիքր չունիմ, այժմ և ամօթ է ինձ և դոցա, որովհետև ոչ են տուեալ, այլ իւր հայրն իւր գրով ղազան գումրէթ և զօղ գումրէթ ինձ է տուեալ թէ՝ յորժամ ռուստաց զօրքն մտան և այլն. այլ Ղօրղանի որդին զօրեղ էր հրաման նորա ոչընչացոյց, որպէս ինքն արքայն գիտէ։ Եթէ հայեսցին դոքա յիմ սէրն առ հայրենին իմ և աշխատանքն վասն հաստատութեան թագաւորութեան իւրեանց և պայծառութեան, ի միտ ածցեն և ինձ ցուցցեն զայն շնորհ, ոչ եթէ փեշքաշ, այլ իմ անձն և իմ հայոց ազգն մատուցանելոց եմ դոցա.. իբրև զզոհ և տեսանելոց են յայնժամ իմ շնորհակալութիւնն արդեամբ և բանիւ, որպէս խօսեցեալ եմ ընդ արքայորդի Դաւիթին եթէ ոչ է մոռացեալ զայնս, զի իմ կամքն է կակղեցուցանել գդոսա և կոչել ոչ միայն թագաւոր Վրաց, այլ և Հայոց։ [50] Այժմ ինքեանք գիտասցեն և իւրեանց նոմոսն մինչև ցաստ թարգմանեալ ցուցցես Արքայական բարձրութեան և ժառանգի նորա, որ բոլիանթ աստղի տէր լինելոց է։ Եւ ասա նմա իմ գրով և անգիր պատուէրքն չմոռանայ։ Մելիքների բանն կախեալ կայ ի դոցանէ և Աստուծով լաւ են լինելոց, ասա նոցին ընտանեացն լինել միամիտ։ Ես այժմ ոչինչ չունիմ կարողութիւն թէև բազմիցս լայք, ըստ որում պարտք շատ ունիմ և յօրեցօր շատանայ և եթէ ունիցիմ ձեր գրելն չեմ ուզիլ, այլ գիտեմ պակասութիւն ձեր և հարկաւորութիւն։ Ակն ունիմ ի մօտոյս Հնդկաց ապրանքն ընկալնուլ, յայնժամ ամենայն ինչ ըստ կարգի լինի համբերեցէք, հազարապետն մի թողուք ի ձեռաց՝ որպէս գրած եմ, այ խելօք հետևեցէք ձեռք բերել։ Տէր Դաւիթն առ մեզ է ե սպասէ գալոյ Հնդկաց ապրանքացն, զձեզ ողջունէ։ Տէր Ստեփանի որդին բերել տայք, որպէս խնդրած եմ ի Դիվան պարոն Աւետիկէն։ Եւ Եսայու մօտի փողն առնուք, որովհետե ոչ կատարեաց զխնդիրն իմ։ Քնեազ Գարսեվանն և կնիքնեն (?) զձեզ ողջունեն, տարակուսած մնացած են։ Փեսայ պարոն Մարտիրոսն զձեզ ողջունէ, Աստուծով լինի թէ՝ շուտով ուղևորեմք զի ամենեքեանքն երկրիդ խաղաղութեան սպասեն։ Ախլցխայու լեզղու համար գրեցին ուր որ հարկն էր դուրս առնել, միամիտ լինի, այլ շտապեցէք մարդ ղրկել. բարեկամաց ամենից և մերայնոցն օրհնութիւն։

Սեպտեմբերի 7

ԽԳ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Իմ ողորմած և բարերար պայծառափայլ Տեառն սրբոյ աջոյն խոնարհական համբոյր։

Իմ աս սրբազնութիւնդ դրեալ վերջին թուղթն, օգոստոսի ԻԸ (28)-էն է. որոյ երկրորդն և երրորդն, ի նոյեմբերի ամսոյն մատուցեալ եմ փակէթի նաւում, հանդերձ ի Կօպնհակ առաքեալ խրդի գնւող լսդրոմն։ Ջորս յառաջ քան զթղթոյս հասանելն, յուսամ ընկալեալ իցէք։ Բայց և այժմ ես վասն առաւել միամտութեան. երրորդն և չորրորդն մատուցանեմ ընդ թղթոյս, յորմէ՝ կարող էք տեղեկանալ խրդի տեղիս առքն. և ի վերայ այնմ եղեալ ծախքն մինչև Կօպնհակ։

Որպէս յամենայն թուղթսն իմ աղաչեալ եմ, այժմ ես զնոյնն աղաչեմ. այսինքն յիւրում ժամանակին պարտքն հատուցանել և զխրիդն ազատել ի վտանգէն. և պատուէր գրել ի Կօպնհակ. առաքել զխրիդն ի Մեծն Պօլիս. զի Աստուծով ի ժամանելն իմ անդ, պատրաստ գտից և վաճառեցից։ Եւ եթէ ես յիւրում ժամանակին ոչ կարացից ժամանել, գոնէ օրգնին ձեր վաճառեսցէ արժանաւոր գնով։ Քանզի աստ տեղեկացեալ եմ որ ի Մեծն Պօլիս թանկագին վաճառի հնգկաց ճոթեղէնն։

Յառաջ քան զայս որպէս և յայտնեալ եմ, ի Ձին բնակեալ պարոն Մատթէոս Յօհաննիսի կտակոյն գրեալ Նոր Նախիջևանու խոստման կողմանէ՝ տեղս առ պ. Սարգիս Տէր Յօհաննէսն եղեալ ութսուն հազար ռուփին գտանելոյ հրաման ստացայ ի դատաստանին։ Բայց սա՝ յագահութենէն յաղթեալ, դեռ ևս ներհակի և ոչ տայ։ Վասն որոյ՝ կրկին պարտաւոր եղէ խղճմտանաց օրէնքումն գանգատել։ Այժմ Բ. ամիս (2 ամիս) է գանգատեալ եմ. յուսով եմ մինչ ցՄնունդն փողն տիրել և մինչ ցվերջն յունվարի ելանել աստէն ի Բասրայ, և անտի՝ աջին ուղտի մանգիլով գալ Հալար և Ստամպօլ։

Յուսով եմ որ պ. Մասեհ Մարտիրոսի կողմանէ գրածս տեղեկացեալ իցէք և կատարումն տուեալ խնդրանացն, որ յոյժ հարկաւոր և օգուտ է մեզ։ Կրկին խնդրում եմ, զի եթէ յապաղեալ իցէք զխնդիրն, ի հասանելն թղթոյս՝ զառաջին գրեալ թուղթսն իմ որ վասն նորա ընթեռնուլ և տեղեկանալ զորպէսն խնդրանաց, և կատարումն տալ։ Ուստի ասեմ, զի եթէ կատարումն տալն ոչ պատահեսցի ի զանցառութենէ, վնաս ունի գալ մեզ։

Ես ի հոգտեմբեր ամսոյն գնացի ի Դաքայ. և պ. Մարտիրոս Տէր Ստեփանին, և իւր եղբօր Թոռն Յարութիւն Միքայէլին, ի ձէնջ օրհնութեան թուղթ և սուրբ մասն և Բ. ոսկեայ ականակուռ խաչն մատուցի։ Եւ խօսեցայ զհարկաւորն առանձին ընդ Մարտիրոսին։

Թուղթքն ձեր որ առ պ. Կարապետ Ծատուրն և առ պ. Նիկողոս Յարութիւն և առ յիշեալ պ. Մարտիրոսն ունէիք առաքեալ ի վերայ Բասրայու, աստ ի Կալկաթայ գետոյն նաւն ընկղմեցաւ և թուղթքն կորեան։ Վասնորոյ հարկ է նորոգ գրել առ որս գրեալ էիք։ Իսկ առ պարոն Մարտիրոս Տէր Ստեփանն սպասել և գիր չգրել մինչ ցգալն իմ։

Ունիմ բազում ինչ խօսիլ, այլ ոչ գրով։ Ա՜խ թէ ազատիցէի ի դժոխոցս, որ ահա մաշեցան ոսկերքս, և ոչ ևս տեսանի յիս կերպարան առողջութեան։

Ընդ սրբազնութեան ձեր եղելոցն, ամենեցուն առ հասարակ խոնարհութիւնս մատուցանեմ, և այլն։

Սրբազնութեան Ձերում՝
Մնամ խոնարհ ծառայ և որդի՝

Ստեփանոս քհ. Տէր Յարութիւնեան

1795 դեկտեմբերի 20
Ի Կալկաթայ.

Մինչ ցօրս, վէճն իմ որ ընդ Սարգիս տէր Յովհաննիսին էր, դեռ չէ վերջացեալ, և երկնչիմ թէ՝ գուցէ մինչ զատիկն ևս չըվերջասցի։ Քանզի 'ի Ջինու նորոգ թուղթ գտաք, որ տեղն եղեալ ամենայն կայքն Մաթէոսի Ֆօրթուքեղներն տիրեալ են կամին կտակն աւրել։ Վասնորոյ որպէս ես, նոյնպէս և սա ամենայն ջանիւք աշխատի յիշեալ դրամն չտալ. զոր՝ եթէ թողից ի ձեռն սորին

անկանիլ. մեք զուրկ եմք մնալոց ըստ ամենայնի։ Քանզի տեղս ուժ և վէքիլ թողից, չեն կարող սմայ ներհտկիլ. և սա կամի և ջանայ ի կողմանէ Մաթէոսի քուէր աղջկան վաքլութիւն զտանել որ այս դրամն չտայ, և յետոյ մեր բաժնին համար ասէ գնացէք Ջին գտէք։ Վասն այսպիսի ծանր վտանգն ե այլն զորս ոչ կարեմ գրել, պարտաւորեալ ջանամ զայս փողն տիրել։

Արդ՝ որովհետև իմ տեղիցս ելանելն այսպէս ծանրացաւ. վասնորոյ յերկուց չարեաց փոքրագոյնն ընտրելովս, լաւ համարեցի աստ յամենալս և այս փողն տիրելն, քան թէ զայս ի կորուստ տալն և աճապարելն յՍտամպօլ վասն խրիդն իմ ձեռօք վաճառիլն։

Ուրեմն պարտիք ե դուք գոնէ ներկայ այս պատահմամբն ճանաչել զմտերմաբար ծառայելն իմ. զի ահա անձնական շահն իմ չյիշեմ վասն ազգի օգտին։ Ուստի ես յուսով եմ զի և դուք ոչ էք պակասելոց զօգուտն իմ առնելոյն։ Որև զառաջինն ներկայ այս խնդրեմ, զի յՍտամպօլ այնպիսի անձինք կարգիցէք վերահասու և վաճառօղ խրղին, որ հաւատարմաբար շարժելով՝ շահաբեր ցուցցեն զխրիդն որ եթէ հաւատարմաբար վաճառիցի, անխափան երկու լաք ռուփի պէտքայ գոյանայ ազատ յամենայն խարջից և ի կրեալ մուղաթիցն և վնասուցն։ Որ եթէ յայսքանից պակաս գոյասցի, յայտնապէս անհաւատարմութիւն է լինելոց։ Վասնորոյ լաւ է մին տարի ես պահել անծախ և մուղաթն կրել, քան թէ կորուսանել զմեծ շահն, որ յիմ ձեռօք վաճառելովն լինելոց է։

Յ..ա զայսքանս յայտնելոյն, այժմ թողում ձեր ընտրողութեան, քանզի յուսով եմ որ դուք զօգուտն գիտէք առնել։

Յետ այսորիկ, խնդրեմ փութանակի, ըստ ձեր պատուիրանին և ի սմա եղեալ փոքրիկ թուղթն առաքել ի Մեծն Պօլիս ձեր վաքլին, և գրել ի Մեծն Պօլիս ըստ իմ գրելոյն, որպէս տեսանի։ Զի զայնպիսիսն, և ոչ կարէ վաճառել քանզի ոչ գիտէ զգինն և ոչ ճանաչէ զարժողութիւն իրին։ Եւ մանաւանդ ոչ են իրքն այնոքիկ ըՍտամպօլու խարջ։ Եւ չէ գնացեալ անդ երբէք այսպիսի ճորթունք։

1796 յունվարի վերջ
ի Կալկաթայ.

1796

ԽԴ. Տէր Ստեփան քահանայի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոս Արղությանին *

Տեղեկացայ թէ կամիք զոմն առաքել աստ։ Ասեմ ձեզ առ այս, թէպէտ ինձ օգուտ լինի այլոց գալովն աստ, քանզի զկնի իմ եկողքն միայն՝ յայտնելոց են զաշխատանս իմ, և դուք յայնժամ կարէք զանազանել։ Բայց կամ պարտիք յիւրաքանչիւր տարեկան խարջի կողմանէ ԲՌ յի աստ պատրաստել վասն նորա և կամ սպասել մինչև իմ դալն։ Քանզի երկնչիմ թէ գուցէ զկնի իմ եկօղն զամենայն սերմանեալն իմ արմատախիլ առնիցէ, և չգիտիցէ ընդ ում զինչ խօսիլն և զինչ առնելն։

Իսկ եթէ առաքեալ իցէք, բարւոք կառնէք յետս կոչելն, եթէ ոչ լուիցէք, յետոյ կը տեսանէք վնասն, ես անպարտ եղէց. չկարծէք թէ տեղիս պարոնայքն քսականու բերանն բաց դրած ունին պատրաստ ի բաժանել. զայն ես եմ գիտակ, և Աստուած կվկայէ թէ՝ ամեն մի ռուփի հանելումն ինչ եմ գործածել։ Վասնորոյ հարկ է սպասել մինչ ցգալն իմ, և յայնժամ եթէ հարկիւ կամիցիք առաքել զոմն, ցուցից ձեզ թէ զով և կամ յոր ճանապարհաւ և զօրութեամբ պարտիք առաքել, որ շահաբեր իցէ և կամ վնաս չգոյասցի։ Իսկ եթէ պարոն Վարգանի գրածին հետևիք, կարծեմ նա պարզ մտօք իցէ գրեալ առանց երկաբատեսութեան, քանզի և ոչ է եկեալ ի կողմունս այս, վասնորոյ և չունի տեղեկութիւն կացութենէ սոցա։

Մաթէոս Յովհաննէսի վախճանիլն ի Չինու յերկիրն, և կտակաւ մեզ ընդ ժառանգացն իւր մասն գրելն, և Մաքսուու Տէրութեան կառավարիչքն զկտակն ստելն և կայքն տիրելն և կտակակատարացն երկնչիլն և չկարողանալ խօսիլն, յառաջագոյն գրեալ եմ։ Աստ գտանեցեալ կայքն մինչ երկիւղ ունէր տանել, վասնորոյ ես դատաստանատանն յայտնեցի աստ անցքն Մաքսուցուց ե տեղիս կայքն. ընդ նմին և կըտակի օրինակն։ Եւ վասն իմ բաժին ունելըս խնդրեցի կարողութիւն շնորհել և զկըտակն հաստատել, զի այնու աստ եղեալն տիրեցից և չը թողից տանել. և մանաւանդ եթէ անդ առ նոսա եղեալ կտակն ստեսցեն, այս հաստատեսցի, և այսու կարողասցուք զկայսն նորա փրկել։ Սարգիս Տէր Յօհաննէսն յաղթեցաւ յազահութենէ և ներհակութիւն էարկ ի դատաստանին, ստելով զբանս իմ. դատաւորքն քննեցին և տեղեկացան յագահութենէ լինիլն, ինձ ետուն իրաւունս, և հրամայեցին դրամս տալ ինձ, 1795 օգոստոսի սկիզբն։ Սարգիսն վերստին յանդգնեալ ոչ ետ, պարտաւորեցայ յայտնել, յայնժամ Սարգիսն՝ այլ դատաստանատան բողոքեաց։ Անդ ես սուտ հանին զնա և զդրամս առին, 1796 մարտ 20։ Եւ մինչ դրամըն առին, ի յերրորդ դատաստանատանն յայտնեաց և վերստին գտանելն ջանայր. անդ ևս ստեցին և մեծ կնիքով և գրով հաստատեցին զիս կտակակատար. և կտակն ևս հաստատել ետու, և մի գիր ևս առ Մաքսուցուց կառավարիչսն գրել ետու ի դիմաց դատաւորացն. 1796 նոյեմբեր 1։

Ցայսքան ժամանակս ի՜ զուր տեղ չարչաբեաց զիս Սարգիսն այլ ի ճշմարտութենէն

---

*) *Իսկականի մէջ պակասում էր այս գրութեան թէ սկիզբը և թէ վերջը։*

յաղթեցաւ։ Դատաւորքն կոչեցին զիս յատենին և երդմնեցուցին հաւատարմաբար աշխատիլ և ժողովել զամենայն կայսն Մաթոսի։ Եւ ըստ կտակի պատուիրանին դնել Կոմպանու մօտ մուզաթի, և յետ վեց ամսէն և յետ մին տարէն, երկու անգամ խսէպ տալ դատաստանատանն։ Ուստի և յայժմ պատճառէ յայժմ ամի արգելաւ գալս, և ամսոց եմ աստ մինչև 1797 Նոյեմբեր 1։ զի մինչև յայնժամ համ խսէպն կտամ և համ կը տեսից թէ Մաքուցիք զինչ պատասխան տան, որ ապա վասն այն ևս յերօպումն հոգասցուք։ Եւ աստ ներկայ ժողովեալ կայքն մերձ 90000 հազար ռուփի է, որ Կումպանու մօտ մուզաթի իմ գրել, և սանագանին ամանաթ պահեմ տուեալ դատաստանատանն։

Ահա այսպէս ես ըստ ամենայնի աշխատիմ վասն օգտին ձեր. մաշելով զկեանս իմ յօտարութեան, և զընտանիսն իմ մինչ ցգերութիւն. և դուք փոխանակ սփոփանացըն անուանաբեկ առնէք զիս։ Զգիտեմ թէ՝ որպիսի խղճմտանք են այդ. և ի՞նչ իրաւունըս ունիք։ Եթէ ես երեք տարի աստ չարչարիլս յանձս չառնուի, դուք որպէս կարէիք ստանալ զդրամն, եթէ ես հնարս չգործէի, և այդ դրամն ոչ տայր տուօղն։ Եւ յետ տալոյն Մատրասու նման կլինէր, յայնժամ զինչ ունէիք ասել։—Դարձեալ եթէ ես աստ չմնայի, և կամ յետ ամսոյս, իմ հանդըստեանն հետևէի, արդեօք Մասեհի տունն ի՞ւ ունէիք ժառանգել։ Մաթոսի մեծ հարստութենէն ո՞ տայր ձեզ ժառանգութիւն։ Եւ եթէ ներկայ ես չյառաջանայի ի դատաստան, ո՞վ էր հաստատելոց կտակն. քանզի կտակի հեղինակն ի ձեռս Մաքուցոցն է. և մինչ նոքա կամին կլանել զմեծ հարստութիւն և մինչ կտակակատարքն ստորագրեալք են նոցա, և Տէրութիւն բարբարոս, ո՞վ կարէր խօսիլ և կտակն պահանջել և կայքն հանել։

Ցիրաւի ես մեծապէս եմ մեղանչել իմ ընտանեացն, որ զձեզ շահելն առաւել եմ հաճեալ քանզնոցա այց առնելն և փրկելն ի գերութենէն. վասնորոյ նոքա ունին իրաւունս նզովել զիս իբրև անգութ բարբարոս, և ոչ թէ դուք։

Ուստի ձեր այսպէս իզուր դատապարտելովն զիս մեծապէս մեղանչէք. բայց մրտածեցէք զի և ձեզ տէր գոյ յերկինս. մանաւանդ մաածեցէք զի այսպէս մտերմաբար աշխատիլն իմ վասն ձեր՝ ոչ է հարկիւ և պարտաւորութեամբ, կամ ծառայական երկիւղիւ, այլ ինքնակամ սիրով որպէս հարք վասն որդւոց աշխատին ժողովել։ Քանզի ոչ ոք Եպիսկոպոս կարէ օրինօք պարտաւորել զոմն քահանայ գնալ ի գործ աւուր միոյ ճանապարհ, ուր թէ տարեկան ճանապարհ և յայսքան ժամանակ։ Մանաւանդ զիս՝ որ ոչ էի ի վիճակի ձեր։ Եւս, յիշեցէք զարտասուս արկանելն ձեր և աղաչելն, և իմ ի պատւոյ, Սրբազնութենէդ պատկառեալ ակամայ կամօք գալն իմ աստ, և ոչ թէ իշխանաբար հրամայելովդ։ Այժմ զայս ինձ հատուցումն։

Գրեալ էիք թէ անխելք բան է արարեալ։ Ասացէք արդեօք զինչ եմ արարեալ անխելք։ Ութսուն հազար ռուփու տեղիս զին խըրիդ եմ աղարկել, և սակս այնր քառասուն հազար տալիք եմ դրել, որ եթէ դուք չըկարողանայք, խրդի շահիցն միայն հատուցումն կլինէր։ Եթէ մին օտարականի գրէի, նա ես յանձն կառնոյր։ Իսկ եթէ ես գիտենայի աստ յամենալս, կարող էի դրել վաճառել անդ և տալ, եթէ մտածէի թէ դուք զգուեալ ունէիք առ այն։

Բայց ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ յայտնէք թէ շահն յօժարիք զտանել իմով ձեռամբ. և այն ըստ ամենայնի ինքն ինքեան եկեալ իբրև կամաւոր պատարագ և ոչ թէ աշխատութեամբն իմ։ Իսկ յորժամ նեղութիւն և կամ ներհակ պատահմունք գայցէ, զայն՝ որպէս թէ ըստ ամենայնի յինէն լինի։ Բարէ՛, բարէ՛, երախտագիտութեան ձեր։ Եթէ ձեր երախտիքն որ առ ազգն մեր ունիք, և առնիք, և առնէք դեռ ևս, այդպէս գիտասցեն, յիրաւի զի ոչ են լինելոց պակաս քան զանբանըս։

Ահա այժմ ևս դեռ համեստութիւն ոչ թողու զիս զտրիտուրն առնել, որ եթէ յաղթեալ իցէ ի կարճատեսութենէ, հարկ էր ինձ թողուլ զամենայն աստ և ջրել, և գալ յիմ ընտանեացն օգնութիւն. բայց մինչ երդուեալ եմ, և մանաւանդ երաշխաւորս եմ տուեալ յատենին, չկամեցայ զերաշխաւորսն իմ մատնել ի վտանգս յապազայ. զի և նոքա յետոյ զձեզ նեղեսցեն իրաւամբ։ Վասն-

որոյ համբերութեամբ ճալս յայս ամի ևս յանձն առի, զի անձն իմ ասա վասն ձեր օգտին չարչարիցի, և յապագայ պտուղն դուք վայելիցէք. միայն այսպիսի նախատինքն թողուցուք ինձ մասն։

Ես դարձեալ՝ իմ յայս գործ ձեռնամըխիլս, ոչ միայն զկայսն Մաթոսի փրկելն է եղեալ, այլ և այն՝ զի ամենայն տեսօղքն ուսցին գրել մեզ մասն, տեսանելով մտերմաբար հետևողութիւն մեր թողեալ կայիցն։ Որպէս և իսկ զկնի այսօրիկ, ըստացայ գլիշեալ տունն։

Գրեցին մեզ և այլք ոմանք ի կտակոչն իւրեանց մեզ մասն, որոց մինն եկն յայդ կողմունս։ Որ է Խօջայ Մինասի գուստըր Կատարինէն, թոռն Խօջայ Մինասեան աղայ Էլիազի, և կին հանգուցեալ Խօջամալ Սափար Կումպանովին։ Իմով յորդորմամբն եկն յայդ կողմունս. այժմ Բասրայ է։ Սպասէր իմ գնալոյն, գուցէ ի գալ աշնանն յԵրուսաղէմ գնասցէ և անտի ի Նոր Նախիջևան։ Զկնի ելանելոյն իւր աստէն՝ այրն նորա Խօջամալն եկեալ ի Զինու ի Մատրաս և անդ վախճանեցաւ, զամենայն կայսն իւր կնոջն է թողեալ կտակաւ և Նախիջևանու ևս ինչ անօթ և զգեստ։ Ցայդրէն յարմար թղթով շահեցէք, և բարեկամացն ևս յանձնարարութիւն գրեցէք վասն նորա. զոր լըւեալ հաստատուն պահեսցէ դսերմանիսն։ Այլ ի թուղթսն ձեր որ առ նա գրիցէք, մի ինչ ցուցցէք պահանջել ի նմանէ ըստ սովորութեան մեր կարգաւորացն. քանզի ժըլատ է յոյժ, երկերուք զի մի փախնուցու։

Խօճամալ Սափարինն, Զին մինչի քսան և հինգ հազար ռուփի ունի որպէս 'ի կորուստ. և զայս ինքն Կատարինէ տիկինն տեղեակ է և ցաւի. վասն այս յուսադրեցի ասելով չհոգալ. 'ի գալ անխել Ստեփաննոսին 'ի Կալկաթու՝ վասն զանթօմ եղեալ դրամոցն հոգալն և հանելն մեզ դիւրին է, միամիտ լեր վասն այնր. միայն յուսա 'ի Տէր և զանձն քոյ 'ի զգուշութեան պահեա ըստ կամացն Աստուծոյ, որպէս մինչև ցայժմ պահեալ ես պարկեշտութեամբ, որպէս և գրեալ էր զբարեպաշտութենէ քումմէ մեր անխելն։

Ցիշեալ Կատարինէի եղբայր Աղայ Էլիազի որդի հանճարեղ աղայ Մուրադն անցեալ դեկտեմբեր վերջն վախճանեցաւ աստ ԼԳ. (33) տարւոյ հասակաւ անդաւակ և մեծ կըսկիծ եթող ծնողացն և բազմաց. քանզի յոյժ իմաստուն ոմ̃ էր և ինձ մեծ բարեկամ։ յայնժամ Կատարինէն աստ էր, յետ քանի աւուրն նաւ նստաւ։ Առ յիշեալ աղայ Էլիազ Մինասան։ Եւ առ ամուսինն իւր խաթունն և առ ԺԲ (12) ամեայ պատանեակ որդի սոցին Յովանջանն և առ Խաչխաթուն հարսն, այսինքն կինն հանգուցելոյն օրհնութեան և մխիթարական թուղթ գրեսցես։ Ունին և սոքա դստերք, Մատլինէ խաթուն, Նանաջան խաթուն, և Բէգում խաթուն։ Երեքեանն ևս ամուսնացեալք։ Եւ սոքա ևս, են ժլատ. միայն շահեցողական թուղթ գրիցէք. զայլն ես հոգալոց եմ։

Առ տեղս իմ տեղակալ և վաքիլ զորս թողլոց եմ զկնի իմ, այսինքն առ պարոն Ներսէս Յոհաննէսն։ Եւ առ պարոն Գիոնիսիոս Հայրապետն օրհնութեան գիր գրեսցես։ Սիրահար բարեկամք են և խելօք։

Նմանապէս և վասն պարոն Մասեհ Մարտիրոսին. (որ յԱնգլիացւոց Մարտին Մասեհ կոչի.) որ յառաջագոյն գրեալ եմ ձեզ, զնոյն յանձնարարական գիրն փութացուցէք։

Հարկ է և վասն մեր տեղս վաքլացն ևս յանձնարարական թուղթ առաքել տալ, յորում ժամանակի և կարողանայք։ Քանզի յատենի դատաւորացն և քաղաքապետացն զանուննն և զգործն ձեր հռչակեցաւ։ Եւ ողորմածութիւն կայսերուհւոյն առ ազգս մեր պատմեցաւ. վասնորոյ հարկ է այնպիսի թուղթ ինչ գալ վասն մեր վէքլացն. զի այնու՝ աստ մեր վաքիլքն ծանօթասցին մեծամեծացն քաղաքիս. և նոքա ծանիցեն զսոսա մեզ բանակատարք։ Եւ ապագայ եթէ մեզ գործ ինչ պատահեսցի, երկիւղ ունիցին զրկօղքն, և մի ևս համարձակեսցին ներհակիլ և վնասել։

Ես, առ Բթաւու պարոնայսն, այսինքն առ պարոն Մանուկ Յակոբջանն, և առ պարոն Վարդան Գասպարն, որոց յառաջ քան զայս ես ի ձէնջ թուղթ եմ մատուցեալ. և ըստ ներկայ յաջողելոյն զօգնութիւնս գտեալ։ Որոց զորպէսն յայլ թուղթսն գրեալ եմ ձեզ։ Ուստի և դուք՝ յիշելով զառաջին ողջոյնագիրն ձեր, հարկ է գրել և այժմ թուղթս։ Քանզի ունին սոքա միտք և զայլ երևելի յիշատակս թողուլ։ Եւ առ ձեզ թուղթ չգրելն

յայտնեալ էին ինձ թէ՝ պատկառիմք դատարկ թուղթ մատուցանելն, սպասեմք յաջողութեան զի ընծայիւք հանդերձ մատուսցուք։

Խօջայ Մինասեանց աղայ Էմնիւղէն Ե՜. (500) յի եմ գտեալ 'ի Սէյտարաղու, և այժմ նա ունի միտք վասն զօքանչին իւրոյ նոր վախճանեալ Ովսաննային տալ ինչ յիշատակ գիրք ապելոյ. առ սա ես գիր օրհնութեան գրելն հարկ է։ Սա է թոռն աղայ Էմնիւղի, և որդի աղայ Ցօնաննէսին։ Ունի եղբայր մի՝ նա աղայ Աբրահամ մեծ քան զինքն, յորմէ՝ ոչինչ եմ գտեալ զօգնութիւն, և չունիմ յոյս։ Զունին սոքա որդիք, ամուլք են։

Սէյաարազու պարոն Նիկողոս Ցարութիւնեանի անուամբ ապեալ աեարակն եկեալ է աստ. և զեռ չեմ աիրեալ։ Ցետ քանի աւուրց գալոց է և ինքն աստ տալոց եմ յիւրըն։ Առ այս պարոնն, և առ պարոն Կարապետ Ծատուրն և առ միւս պարոնայսն Սէյգարազու հարկ է գրել գիր նորոգ, քանզի յառաջին գրեալսն ձեր որ առ Սէյդաբաղու, առ Դաքու, և առ Կալկաթու պարոնայսն գրեալ էիք, այն ամենայն 'ի գետոջն ընկղմեցաւ նախ քան մտանելն աստ։

Դաքու պարոն Մարտիրոս աէր Ստեփանին և իւր եղբօր թոռն Ցարութիւն Միքայէլին մատուցի 'ի ձէնջ օրհնութեան թուղթըն և երկու խաչն մասամբ. իսկ գրեանքն և պատկերն այժմ մատուցանելոց եմ, գիտասցես։ Եթէ գրեսցես և առ սոսա, միայն օրհնութիւն տալով և զիմ տուեալն յիշելով եզերեսցես մինչի իմ առ ձեզ հասանիլն։

'Ի Կօպնհակ առաքեալ ապրանացէն լուր չգիտեմ. արդեօք անդ վաճառեցաւ թէ 'ի մեծն Պօլիս հասուցիք. զորս՝ եթէ ի Պօլիս իցէք հասուցեալ, մերձ Ի. լաք ռուփի կգոյանայ։ Աւաղ որ այս Մաթոսի կայից կողոպտելն՝ ի Մաքաւցւոցն՝ ինձ խոչնդակ եղև և տանս քանդման պատճառ. զի ոչ կարողացայ զանց առնելն յայնժամ, և ոչ այժմ կարողանամ թողուլն։

Աղաչեմ գրել առ բանակատարսն ձեր՝ ուր և ունիք, չափն իւրեանց ճանաչել ի գրելն ինձ զթուղթս. քանզի ես եթէ զբանս ձեր դժուարաւ տանիմ, զնոցայն իսպառ չեմ կարող տանել, ես այլ նուիրակաց նման գաղած պահած ոչ ինչ չունիմ որ յումեքէ երկիւղ կրեցից. և ես հասարակ եկողաց նման չեմ աշխատեալ, որ եթէ միւսանգամ նա լսեցից յումեքէ ծանր...

1796

մարտ 20.

ԽԵ. Կարգադրութիւն Թիֆլիզի Հայ եկեղեցիների արդեանց մասին

Եղիցի այսպէս։ Ցովսէփ Արքեպիսկոպոս ռուստաց երկրի եղեալ ամենայն ազգին Հայոց։

Ըստ ընթացից հոլովման շրջանին ժամանակաց, պատահեալ մեր 'ի կողմն ձախողակի, և 'ի յարդար իրաւանցն Աստուծոյ դատեալ խրատապատժեցաք ըստ յանցանաց մերոց, որ 'ի ՌՄԽԵ թուոջս և 'ի սեպտեմբերի ամսոյ ԺԳ, Պարսից իշխող չէզոք Աղամահմադ խանն եկն և տիրեաց զվայելուչ քաղաքս մեր Թիֆլիզ։ Որում և հասոյց զմեծ վնաս և զաղէտ տագնապի, անխնայաբար կոտորելով զբնակիչս, զորս և զբազումս գերի առնելով, հանդերձ այրեցմամբ շինուածոց ու յափշտակմամբ յոլով դանձուց և փարթամութեանց, մինչ զի՝ հասանելով մեր 'ի յետին չքաւորութիւնն, և առհասարակ փարթամք և անինչք ի կողմն մեծագոյն թշուառութեան և աղքատութեան փոխեցաք։ Սմին սարասի՝ և եկեղեցիք մեր զրկեալք ի կահուց և ի կարասեաց, անկան ի պայծառազարդութենէ և աղաւաղեալք անշքացան, որ ի վայելչականէն զրկեալք՝ զէթ հարկաւորին անգամ ոչ ձեռնահաս լինէին։ Սակս որոյ՝ համակամ հաւանութեամբ քաղաքիս մերոյ իշխանաց, եկեղեցականաց, և աշխարհականաց, և յատկապէս Բէթղահէմ եկեղեցւոյս քահանայականաց դասուց և ժողովրդոց, ի շինութիւն և ի պայծառազարդութիւն սրբոյ եկեղեցոյս մերոյ, այսպէս ընբռն և պատշաճ վարկեալ, զի ոբովհետև չունիմք մեք զարաջինն մեր կարողութիւն որպէս երէկն և եռանդն, հոգատարութեամբ լնուլ զհարկաւոր պիտոյսն սրբոյ եկեղեցւոյս, վասնորոյ՝ կար-

գեցաք սրբոյ եկեղեցւոյս զմասն բաժնի յամենայնէ հասիցն և մաիցն, իբրև զմի ընիկ քահանայ տալով զբաժին ի ժամէ, եթէ ի տէրունական աւուրց՝ և եթէ ի հասարակաց, զի որ ինչ եկեղեցւոյն բաժին անկցի զայն։ համայն քահանայք եկեղեցւոյս՝ պարտին կարգաւ առնել զժամն, հասարակէ՝ յերից մասանց զմի մասն առնելով ինքեանց վարձ, և ի տէրունականէ ի հինգ մասնէ զմի մասըն, զմնացեալն տալով եկեղեցւոյն, որոյ հոգաբարձու, կառավար և երից փոխան կարգեցաք զպարոն Զօրաբ Միրեմանեանն որ զամենայն հասսն սրբոյ եկեղեցւոյս, թէ կարգեալ ժամուցս այս, թէ զանձանակ, թէ կնքոյ և պսակի լուսագրամ, թէ ձիթադրամ և մումագրամ որ հաւաքի ի զատկի և ի Ջրօրհնեացս, թէ խանութից քերայք, թէ գերեզմանահախք, և թէ այլ ինչ որ յանուն եկեղեցւոյ ժողովին արդիւնք, զամենայն համայնդամայն պարտին յանձնել ի վեր յիշեալ պարոն Զօրաբին առանց ումեք ներհակելոյ և ձեռնամուխ լինելոյ, որ և նոյն պարոն Զօրաբն զայնս ամենայն ինքեան յանձնեցեալ զարդիւնսն, պարտի հաւատարիմ պահպանութեամբ պահել, և ի հարկաւոր պակասութիւնս եկեղեցւոյ ծախել, կարգաւոր հաշուագրութեամբ։ Այսպէս և այսու օրինիւ և համակամութեամբ խմբեալ բազմութեանցս, զսոյն սահմանադրութիւնս գրեցի, վասն որոյ և ես համաձայնեալ ընդ նոսին, հաճեալ ձեռագրեմ, Նուաստ տէր Դաւիթ տէր Յօհանեան։ Տթ։

—

Հաւլաբարու եկեղեցւոյ սրբոյն Գէորգայ անարժան աւելածու տէր Աբրահամ սոյն բարի կարգագրութեանս համաձայնեալ և վկայ գոլով կնքեմ։

—

Կարգադրութեան գրոյս վկայ գոլով կնքեցի կաթողիկէ եկեղեցւոյ Աւագ քահանայն տէր Առաքել։

—

ქ. ამ̃ გარიგების დამსწრე და მოწამე ვარ ერთობით დეკანოზების და ქეთხუდების ნდომით და თან ხმობით

ქ. ამ უფლის განწესების თანახმა ვარ მე ბეგთაბეგოე მდივან მოლარესთ ხუცესი ყარანის ძე სოლომან: სოლომან

—

Զայս վերոգրեցելոյս ասլն տեսի և այս օրինակս հանգոյն գծագրեցի ես տէր Յօհան տէր Դաւթեանս։

ԽԶ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին.

Սրբազնագունեդ Տեառն իմոյ սրբոյ աջոյն խոնարհական համբոյր մատուցի.

1795 նոյեմբեր 1. և յուլիսի 25. և սեպտեմբեր 12։ Ի Գրիգորիպօլ դրեալ թուղթքն։ Եւս, և 1796 յունիս 26-ին առ պարոն Վարդան Սարգիսն դրեալ թղթոյ օրինակն, ի Ռասրայու բսաացայ. երեքն ի նոյեմբեր ամսոյն, և յետին բօթալի թուղթն ի դեկտեմբերին։

Զամենայն գրեալսն ձեր և մանաւանդ՝ զյինէն վատահամբաւութեան հռչակ արկանելն ի հեռաւոր յերկիրս, գիտացի և գոհացայ զԱստուծոյ՝ զի այսպէս տնօրինեաց ինձ հատուցումն ի ձէնջ։ Զայս ամենայն պահպանել ունիմ ի յիշատակութիւնս՝ առ յապայ ինձ ի պէտս։ Վասնորոյ և այժմ զհարկաւոր և լիովին պատասխանիսն ամենայն դրելոցն ձեր չկամիմ, զի մի արդէն անզգամ երեւեցիմ, գուցէ թէ պարզ մտօք և կամ ի զբաղանաց յաղթեալ լինելոյդ իցէք դրեալ։ Մանաւանդ եթէ մինչև ցայժմ մահու չափ ճգունքն իմ ոչ ինչ ազդեցին ձեզ, և ոչ գրութիւնքն կարեն ազդել ինձ ձեզ և կամ այլոց առ ի յարդար առնել զիս։ Վասնորոյ թողում արդար դատողութեան Աստուծոյ։ Եթէ իրաւամբ այսպէս մըշարնջենական արձանացուցանէք նախատինս ի վերայ իմ, թերևս այդոքիկ կամ թեթևացուցանէ զպատիժն հոգևորական հատուցմանն, և կամ իսպառ բառնայ։ Իսկ եթէ ի զուր դատապարտէք և ձեզ Տէր գոյ

յերկինս։ Այլ իմ ներկայ պատասխանին համառօտեալ այս լինիցի։ Այսինքն։

Ցառաքելն ձեզ զիս յայս կողմունս, զօրինակն՝ ինձ տուեալ զօրութեան և պատճառացն, կամ պտղաբեր սերմանցն, յայտնի է, տեսէք յօրինակաց գիրկսն ձեր։ Ցետ այսորիկ, բարեկամին ձեր Շամիր Սուլթանու մի օգնութիւն տեսէք, որում և յանձնեալ էիք. և քննեցէք թէ՝ նորա այնպիսի սկսուածովքն ինչ օգնութիւն ունէիք գտանել։ Որ պատճառ եղև ինձ յամենայն քաղաքս եօթն ամսով նստիլ և հազիւ թէ ապա արգիլնաւորիլ։ Եւ այն ևս թէ՝ որպիսի հնարիւք և աշխատութեամբ, քաջ գիտէք։

Ցիրաւի մեծ են գործք ձեր և բազում են աշխատանքն վասն ազգին մեր, բայց՝ դուք իշխանարար և հրամայելով առնէք զամենայն, և օգնական ունիք ձեզ հիւսիսային հզօրն և իւր ամենայն իշխանքն։ Եւ ոչ թէ նման ինձ ի սլանդխաութեան և միայնակ լինելով՝ բնակեալ լինելով ի մէջ խառնիճաղանճից և տգիտաց չարչարիք։ Մին տարի Շամրին ծառայեցի առի բերել զհարսն, զի թերևս այնու շահելոմն սկսուածքն փոխարկեցից։ Եւ այն մինչ չեղև, եկի աստ երեք տարի սպասելով մնացի լռութեամբ զի գոնէ սիրով սաանայի զդրամն Սուրաթու ի Մօսէս Խաչիկէն. և ոչ այս օգտեաց. մինչև յակամայ ստացայ։ Եւ կարծէ՞ք թէ յայդր ձեզ վճարելն կամաւոր էր. բարի է այդպէս կարծեմ. ունիք իրաւունս, եթէ ես զանձս արածող կլինէի և կթողուի այնպէս ըստ իւր կամացն, և կր գայի առ ձեզ՝ յայնժամ յայտնի կը լինէր թէ ինչ կգտանէիք, բայց մինչ տեսաւ որ ոչ հեռանամ. և միշտ բողոքեմ առ Ցօհանջանն, անճարացեալ աստ հատուցումն արար։ Քանզի մինչ յԵրօպումն փող չունէր և ջուղապ էր գտեալ ի նոցանէ թէ չեն հատուցանելոց. վասն որոյ աստ ընդունեաց բիմուդաթ հատուցանելն որ ակտմայ մուդաթոմն առի։ Եւ յետ իմ աստ գրտանելոյն, զկնի ութն ամսոյն ապա լուր եկն որ յայդր հատուցեալ են։

Եւ դուք որ սրտմտիք թէ՝ ընդէ՞ր ոչ դարձուցիք։ Ասացէք ինձ թէ՝ արդեօք, ես՝ որով պարտէի միամտիլ թէ ճշմարտապէս հատուցումն է եղեալ, որովհետև դեռ ի ձէնջ թուղթ և ուսիգ չկայր։ Իսկ եթէ Մանուչարենի ուսիգն ասէք, ես՝ ե՞րբ ունէի տեսեալ և ծանօթացեալ Մանուչարենի ձեռագրոյն, որ հաւատ ընծայիցէի թէ ճշմարիտ ուսիգ է։ Մանաւանդ մինչ տեղեակ եմ սորա խաբէական գրութեան և հաստատութիւն ևս առ այս, ունիմ ի ձեռին իմ և տեսանելոց էք Աստուծով եթէ ողջ եկից, և յայնժամ ապա գիտելոց էք թէ ծրքան հարամ գրիչ ունի։

Դարձեալ եթէ ուսիգն ևս ընդունիցէի ճշմարիտ լինիլ. որ խելքով պէտքայ ես տեղս փողն յետ գարձուցանէի։ Քանզի եթէ աստ ես փողն յետ գարձուցանէի, յայնժամ ես հաւաստապէս դիտէի որ նա մուզաթն ևս յետ էր պահանջելոց օրինօք. որպէս և առ այս դատաստանատան դպիրն ինձ ազդեալ էր։ Քանզի և զիմ ընդունիլն, և աստ չաեալ դրամն յետ տալն յիւր ձեռին յենարան էր առնելոց, և մուդաթն յինէն յետ առնլոց։ Ցիրաւի մեղանչեալ եմ որ մեծ մէպլաղ փողն յետ չեմ տուեալ։ Ցետ այնորիկ, ինչ եմ մեղանչել որ գրեալ եմ ձեզ տեղդ յետ հատուցանել, հարկիւ պարտականի կամ տեղս գտածս յետ տալ, և կամ այս օրինաւոր գտած համարելով, և տեղդ ձեզ տուեալն ապօրինաւոր համարելով, վասն որոյ և աստ յետ չր դարձուցանելով. յայդր ձեզ գրել յետ դարձուցանել, զի իմ աստ գտեալն ինձ մնասցէ, և մուդաթն չկորնչէր։ Թողում զայն վնասն որ ապրանքն պէտքայ յետ ծախվէր և վնաս լինէր։

Մանաւանդ՝ իմ գրելոմն թէ տեղդ հատուցանէք ինչ վնաս կայր, որովհետև իմ դաշինն ընդ սորա այս էր, որ եթէ Սրբազանն յետ չհատուցանէ, ութն ամիս ևս ապրանք հասանելէն յետ ժամանակ լինիցի, և յայնժամ ևս եթէ չհատուցանիցի, ապա ապրանքն վաճառիցի և փողն հատուցանիցի։ Ցայսմանէ՝ ձեզ ինչ վնաս եղև որ այդպէս վաաահամբաւէք զինէն։

Այսու յայտնապէս ծանուցանէք ինձ թէ՝ փոխարէն աշխատանացն իմ չարիք ունիմ ժառանգել. բայց յաղթօղ է ճշմարտութիւն և բարի առնէ տէր բարեաց։

Նմանապէս և հակադարձն ևս։ Մեծապէս եմ մեղանչել որ իմ ընտանիքս սպանանելով՝ յամեցուցեալ եմ զելանելն իմ աս-

տէն վասն օգտին ձեր. որպէս ահա իմ յամենալովս արդիւնաւորիլն ձեր և քանդիլն իմ յայանի եղև, ընդ Նմին և վարձուց հատուցումն իմ ի ձէնջ, Եթէ ասացից միանդամայն թէ Աստուած արասցէ դաա ընդ աշխատանս իմ և ընդ գիաելն ձեր, խնայեմ. քանզի լաւ է ինձ չարչարիլն, քան թէ պակասիլն կենաց ձերոց։ Ըստ այնմ զի աւուր մի կեանքն ձեր՝ ազգին մեր բազում օգուաս գործէ. և մեռանիլն իմ ոչ ինչ վնաս ունի ումեք տալ, եթէ ոչ, միայն ընտանեացն իմոց ողորմելեացն։ Ինչ և իցէ, մեծ եղեն ինձ վէրքն 'ի ձէնջ և անբժշկելի։ Այլ տակաւին որպէս մինչև ցայսօր, նոյնպէս և յայսմհետէ մինչ ցյելանելն իմ աստէն պակասելոց չեմ յաշխատանաց։ զորս և բարին համարիմ, առնելոց եմ. ինձ փոքր փոյթայ եթէ ումանք անհաւանք զասնիցին։ Ո՛չ դուք և ոչ այլք, ոչ կորէք լիովին իմ վարձն հատուցանել, այլ Աստուած է հատուցանօղն։

Բանս ինչ, տանելոց չեմ. քանզի՝ իմ սիրտս մաշեալ է և Նեղ, ոչ ևս կարողանամ ընդունել զարհամարանս թարց իրաւանց։ Նոքա անտեղեակ են իմ աշխատանացն, բայց դուք մինչ տեղեակ էք և ոչ յայտնէք նոցա, վստահանամ ի մեծարանելս։

Ս·ոկայն՝ ես մինչ գիտեմ զաշխատանս իմ և վստահ եմ ի մտերմաբար գործն իմ, ընդ Նմին, և զարմացօղ վկայք ունիմ առ գործն իմ՝ տեղիս ականատես բազմութիւնքըն, ոչ թողում ումեք մեծարանելոյ ի վերայ իմ։

Յաշխարհէ հրաժարեալ և աշխարհուրաց կրօնաւոր Նուիրակաց՝ սանդուղն ե քուկնել տեսնուն, և իմն էլ։ Որ ես աշխարհի գոլովս՝ իբրև ընչատեաց եմ վարեալ զիս աստ, ե այնու եմ առաւել յորդորեալ 'ի սէր ազգին ղժողովուրդսն։

Որպէս դուք առ ինձ գրեալ թուղթն արհամարհանաց, բաց ունէիք եղեալ և առաքեալ ի մեծն Պօլիս և Բասրայ, առի ուսուցանել նոցա արհամարհել զիս, այնպէս եթէ ես ևս զայս թուղթն իմ բաց առաքիցէի ի ձեռս նոցա, արդարութիւն էր։ Բայց՝ ոչ եմ անզգամ և յիմար. ճանաչեմ զձեզ հայր և փրկիչ հայոց ազգիս, վասնորոյ և մօռանամ զկսկծեցուցանելն ձեր զիս։ Ուստի յուսամ զայս ոչ միայն բաւական համարիցէք, այլև բժշկելն զիս ջանայցէք որպէս և իսկ պարտական էք։

'Ի Դաքայ պարոն Դրիգոր Պետրոսն ուխտուներեք ամեայ գոլով ամուսնացաւ. վասն կառավարելոյ զծերութիւն իւր, բայց յոյժ գլեալ է և անկեալ։ Եւ կինն այն Խանդադայ անուամբ է յոյժ առաքինի և անորդի։ Ալէթ աղասին որ ԲՌ (2000) յի էր գրեալ ձեռն դատարկ ունի. այն՝ միայն գրելն էր։ Յուսով յաջողութեան գրեաց, բայց օր աւուր նուազի։

Անցեալ տարուոջն տէր Դաւիթ տէր Փիլիպպոսի ձեռամբ և այլ նաւով ի վերայ Բասրայու գիր եմ գրեալ ձեզ, ևս ի Բասրայ և ի մեծն Պօլիս մեր վաքլացն։ Եւ գրեանց հասանելն չգրեն։ Իսկ տէր Դաւիթն գրէ ի Բուշեռու թէ գրեանքն առաքեցի ի Բասրայ։ Զգիտեմ զորպէս լինելն։

Աղաչեմ ի Կօպնհակու տեղեկանալ թէ խրիդն ինչ են արարեալ, եթէ ի Կօպնհակ իցեն վաճառեալ իւրեանց պարտքի չափովս պէտքայ վաճառէին, և մնացորդ խրիդն պէտքայ յանձնէին ձեզ. կամ դուք հրաման գրէիք որ առաքէին յՍտամպօլ որ վաճառվէր. ձերն դուք վերառէիք և այլոցն որ պարտքովայ, պարտքն տայիք։ Կօպնհակ մեր զաշնի ներհակ բան չէին կարօղ առնել, իսկ եթէ արարեալ իցեն և վնասեալ, չգիտեմ։ Ինչ ժամանակ նոյն խրգի փողն գտանէք, պարտիք տէր Դաւիթի փողն տալ։ Խեղճ ողորմելուն ես կլինի էս փորձութիւնիցն պատահիլ, վասնորոյ գուցէ մեծ հարկաւորութիւն ունենայ փողի. հարկաւորայ օգնելն և իւր փողն տալ։ Քանզի և դա յամենայն ժամանակի օգնական կայր աստ ինձ, և ինքն արդարութեան հետևօղ քահանայ էր։

Իմ ողորմելի ընտանիքն արդեօք ներկայ ինչ տեղ են ժողովեալ չգիտեմ։ Ինչ տեղ ժողովիլն և մնալն եթէ ձեզ հարցանիցեն, ուր դուք հրամայիցէք մնալն, անդ կացցեն մինչև հասից։ Իսկ եթէ իւրեանք հաճիցին վերստին Թիֆլիզ բնակիլ, իւրեանց կամքն, այս մին տարին ևս սպասցեն, մինչև հասից։ Ի՞նչ կարեմ առնել, էն բանում եմ կապուած, որ արձակիլն կարևոր չէ։ Վասն իմ հայրենի աշխարհին և ողջոյն ազգի ազատութեան, ի տանէ իմմէ երեք անձինք զոհ մատչիլն ոչ եմ տրտնջօղ. այլ զոհութիւն

տամ արարչին։ առանց մեծ աւերածի և սրածութեան եթէ ոչ մատնեցաւ յսկզբանն ի ձեռս թշնամեացն, այժմ փրկիլն ես ոչ է հնար առանց աւերման լինիլ. վասն որոյ պարտիմ գոհութեամբ ընդունել։ Իմ ազգիս մանկունքն միննոյն իմ որդիքն են. ոչ ինչ զանազանութիւն չկայ առ ինձ, որպէս կամացն տեառն հաճոյ է. նոյնն օրհնեալ՝ և եղիցի։

Ցաւել յայսմանէ. ողջունեմ զնոսա որք ընդ քեւ են և հնամ սրբազնութեան ձերում

խոնարհ ծառայ՝

Սեփաննոս Քինյ Տէր Յարութիւնեան

1796 դեկաեմբեր 25
Ի Կալկաթայ։

Պարոն Վարդան Սարգսի առ ինձ դիրն կարդացի վերստին, մին յերեսն լի էր վրդովական և խռովութեան բանիւք, և այնպէս ցուցանէր որպէս թէ դուք իցէք գրեալ առ ինքն՝ վասն իմ, ես այսպիսի բանիցն իսկապէս հաւատ չմատուցի. բայց եթէ ստոյգ է բանքն սորին, կտեսնուք որ անվայելուչ կը լինի. ինձ ոչինչ մին վնաս չէ լինելոց յայնմանէ, և ձեզ ոչինչ շահ, այլ դուցէ թէ վնաս արդեանց, քանզի լսողքն զայն, և տեսողքն զիս, կարծեմ որ չհաճին։ Այլ զայս ոչ գրեմ ձեզ իբր արգելմունք և խնդիրք չառնել զայն, քաւ լիցի, այլ եթէ ստոյգ է պարոնի դրեալն և դուք յայդ կարծիս էք մտեալ առ ինձ, ամենևին մի արգելուք. որքան և կարող էք հետևեցէք և ճմլեցէք։ Ճշմարտութիւն միշտ յաղթող է։

Եթէ հայոց ազգն իւրեանց վաստակաւոր զօրավարաց աշխատանքն և վարձն էս կերպ կը հատուցանեն այսուհետև, ուրեմն քան Ղուիմ շատ կանուխ կզարդարեն իւրեանց աշխարհն տէրութեամբ։ Ցիրաւի ավսոս իմ աշխատանք և կեանք որ ունայն եմ վատնել։ Այլ ճշմարտութիւնն յաղթօղ է։

ԽԷ. Հերակլ արքայի հրովարտակը Հանգստարան մեծ եկեղեցու համար.

Բարձր Սրբազան
Տէր Յովսէփ Արքեպիսկոպոս
Երկայնաբազուկ Արղութեան

Ապա՛ մեր դատաւորքն, քաղաքի մէլիք Դարչին եւ չորս Հաղբատայ ժողովուրդք քէթխուդայք, ընդ ձեզ վերահասու արասջիք լաւապէս քննելով ճշմարիտ իրաւունք տասջիք, յունիսի 17 յամին 1797. Հաղբատայ առաջնորդն ես թէպէտ եւ իցէր, որովհետեւ Ձեր բարձր Սրբազնութիւնն աստ հրամայիւր յայնժամ եւս հարկ էր որ վերահասու լինէիք [Կնիք Հերակլ Արքայի]

Աստուած բախտաւոր թագաւորի ախտն տացէ բերթի մեծ եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Առաքելին։ Ողորմած թագաւոր, ունելոց էք ի մտի զի սոյն եկեղեցիս յոլով ժամանակս, հեթանոսքն ունէին բռնադատեալ և գերի էր ի ձեռս նոցին, Աստուած զօրացուցանէ զթագաւորութիւն ձեր, դուք զերծուցիք ի գերութենէ։ Ըստ որում սոյն եկեղեցիս, ոչ ժողովուրդ ունէր և ոչ թէ յուստեքէ եկամուտ ունէր, Զաքարիայ վարդապետն, բարձրագոյն հրամանաւ, սոյն եկեղեցւոյ պարսպի վերայ, երեսն զէպ ի մէյդանն շինեաց զդուքանս որ նոցին զքիրայսն, սոյն գերի անկեալ եկեղեցւոյն պիտոյասցի ի յիշատակ հոգւոյն իւրոյ։ Տէր տացէ ձեզ երկար կեանս, և զնա յարքայութիւն ժառանգեցուսցէ, սոյն եկեղեցւոյ շինութեանն ձեռն էարկ, դուքանաց զքիրայս, և յինքենէ ես ծախս առնէր եկեղեցւոյ վերայ, ժամանակ ոչ էանց, ձեր ախտին փոխանակեցաւ։ Յետ նորին, Թաղօյի որդի Մկրտումն ի վէքիլութեանն իւրոյ, ի պարսպին սոյն եկեղեցւոյ և ի կարգին սոյն դուքանաց, զայլ զդուքանս շինեաց Հաղբատայ եկամտիցն, և նա ես ձեր ախտին փոխանակեցաւ։ Յետ այնորիկ ովք որք Առաջնորդք կարգեցան, պատճառ զայս արարին թէ Հաղբատայ դրամիւ է շինեալ ասէ։ Թաղօյի որդւոյ շինեալ դուքաններու քիրայն. և Զաքարիայ վարդապետի շինեալ դուքաններու քիրան ես նոքա ստացան, որ մի շահի սոյն դերի անկեալ և քայքայեալ եկեղեցւոյ վերայ չեն դործ ածեալ. յայնմհետէ սոյն եկեղեցւոյն իւր մլքի քիրայն չէ հասեալ։ Ողորմած թագաւոր, ձեր բարեբախտ աչքն տեսեալ է զի սոյն եկեղեցւոյն ինչպէս էին վշտացուցեալ հեթանոսքն. զպարիսպն քակեալ էին մինչև ցպատուհանսն ի խոպանս և ի յաղբս էր. և ի յերդս եկեղեցւոյն կանայքն Զահրայ կը մանէին, և ի կողմն եկեղեցւոյն մեծ և բարձր գոյր աղբանոց դիզացեալ, և եկեղեցւոյ գլուխն ևս այնպէս հնացեալ էր որ բազում անգամ անձրևն ի ժամասացութենէ և ի պատարագէ խափանէր մեզ։ Ես անարժան քահանայս, բարձրագոյն հրամանաւ և ողորմութեամբ և Թումանի որդւոց, յարգելի դատաւորաց կամօք և յօժանդակութեամբ ձեռն արկի, մեծ աղբանոցն բարձի և ի՝ գետն արկեցուցի, և եկեղեցւոյ վերայ կողմնեալ խոպանն ևս բարձեցուցի պարսպապատեցի բռամբ և

քարիւ, շրջապատեցուցի զպարիսպ, եկեղեցւոյ զմբէթն ևս ետու շինել որ ամենեցուն է գիտելի, հնոց ժամանակաց համբաւ ոչ գոյ. այսքան պատճառանօք ի վերայ եկեղեցւոյ պարտ եղաւ և ի մեծ վշտակրութիւնս եմ։

Ողորմած Թագաւոր, այսքան շինութեանց և ծախուց վերայ, Հաղբատայ առաջնորդքն մի շահւոյ ոչինչ են օգնեալ, այլ փոխանակ օգնութեան, սոյն գերի անկեալ եկեղեցւոյ մլքէրու զեկամուտսն ևս ոչ տան Թոյլ։ Աստուած ոչ խափանեսցէ ի Հաղբատոյն քաղաքն, Քարթլն. Կախէթն և գղազախն, որոց եկամուտն նորա է, սոյն խըղճալի եկեղեցւոյն ընդէ՞ր ոչ խղճան, խընդրեմք ի ձէնջ զի Մէլիքին հրովարտակաւ հրամայէք որ դատաւորաց, քաղաքացւոց վերահասութեամբ հարցանիցեն և իրաւամբ, սոյն ձեր զերծուցեալ եկեղեցւոյ, ձեր ողորմութիւնն, իւր զմուլքն Թոյլ տան ինքեան, որ սոյն եկեղեցին, պարտուց վճարել և իւր պակասութիւնն լցուցանել կարողասցի ի փառս Աստուծոյ և ի ձեր յօրհնութիւնս հաստատեսցի, և ով ոք որ լինիմք ի սոյն յեկեղեցւոջն, միշտ և հանապազ ձեր բարեբախտ անուան օրհնողք և յիշատակօղք լիցուք։ Յունիսի 1. յամին 1797։

Սոյն հրովարտակս, մեր հանգստարան մեծ եկեղեցւոյ հրովարտակն է, կնիազ Մանուչար Թումանեան։

ԽԲ. Թուղթ Ղուկաս Կաթողիկոսի առ վէզիրն Կայսերն Ռուսաց՝ Քնէազ Ալէքսանդր Անդրէիչ Բէզպորոտկին. յիշատակութիւն երախտեաց առաջին Վէզիրին. եւ յորդորումն ինքեան ի նոյն: Ծանուցումն ղդառնաղէտ անցիցն կողմանցս. եւ զտրտմութենէն իւր որ վասն մահուան Կատարինէ Կայսրուհւոյն, եւ զհետեւաբար ուրախութենէն որ վասն յաջորդելոյ նոր Կայսերն. եւ յաղագս թուղթ գրելոյն առ նա, որոյ սակս եւ խնդիր. զի մատուսցէ եւ զնամակ ողորմութեան ընկալցի ի նոր կայսերէն եւ առ ազգն մեր եւ առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոսն խնամս ունիցի, եւ այլն.

Յորմէ ժամանեսցէ Թուղթ ճշմարիտ սիրոյ՝ և սրտակէզ կարօտոյ՝ և խաղաղարար ողջունի, հանդերձ ամենառատ օրհնութեամբ Ամենասրբոյ Երրորդութեանն, և հոգեպարար շնորհօք և զօրութեամբք փրկական խաչին Քրիստոսի, և Նորին կողամուխ սուրբ Գեղարդեանն, և սրբոյ իջման տեղւոյս Նորին, և Աստուածաշօշափ Աջոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ և հրաշագործ Գամբարանաց Սրբուհեաց Կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց, առ Գերապայծառութիւն բարձրապատիւ սիրելւոյդ մերոյ՝ հոգւոյս ցանկալւոյ, և ընտրելագոյն բարեկամիդ սրբոյ Աթոռոյս և տիրաբար խնամարկողիդ ազգի մերոյ ընդ հովանեաւ ձերով եղելոց, յԱստուածպետական տեսչութենէն զօրացելոյ և արժանավայելուչ փառօք ճոխացելոյ՝ Նախարարիդ Առաջնոյ՝ և օգոստափառ ինքնակալ Մեծի Կայսեր Պաւլ Պետրովիչի առաջագահ և հաւատարիմ Գործակալիդ, Քրիստոսասէր և բարեպաշտ՝ Լուսաւորագունեղ Քնէազ Ալէքսանդր Անդրէիչ Բէզպօբօտկուդ։ Եւ բնաւից Քոյայնոց հարազատաց։ Որոց լիցի ի Տէր խնդալ անեզրական ցնծութեամբ։

Եւ ընդ շնորհաղեզուն օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի գեբայրըրգութեան ձերում։ Զի Թէպէտ մինչև ցարդ

ոչ է հանդիպեալ երթևեկութեան թղթոց 'ի
միջի մերում, և յատկապէս ծանօթութեան
առ միմեանս, սակայն ամենեցուն հաւատա-
ցելոցս մի գոլով Տէր և գլուխ կենսատու
փրկիչն մեր Քրիստոս, և ընդ հարկիւ պա-
տուիրանի եղեալ մեր սիրել զմիմեանս սիրով
սերտիւ, հաստատեմք վկայութեամբ մտաց՝
եթէ ըստ Աստուածասիրութեան ձերում ու-
նիք և առ մեզ զսէր ճշմարիտ, և զանբռնա-
դատ յօժարութիւն գթալոյ և բարերարելոյ։
Նա զի և ոչ է անգիտելի 'ի յոգնագէտ իմաս-
տութենէ ձերմէ զմշտնջենական փառացն
արժանաւոր Ինքնակալ Կայսերաց օրհնեցելոյ
ազգիդ Ռուսաց զմեծաղոյն խնամ և շնորհ
ունիլ առ ազգս Հայոց և առ մեզ. մանաւանդ
և զերանելի բարեյիշատակ Կայսրուհւոյն
Եկատարինեայ զամենաշքեղ հրովարտակ ո-
ղորմութեան շնորհելն նախընթաց Պատրիար-
գին սրբոյ Աթոռոյս Տեառն Սիմէօնի սրբա-
զան Կաթուղիկոսին. ես և նախնթացիցն քոց
Կայսերականդ դրան առաջագահ Գործակա-
լացն և մեծամեծաց սիրանիշ թղթովք ծա-
նօթանալն նմա և մեզ՝ որպէս հոգելոյս Գրաֆ
Նիկիտա Իւանիչ Պանինին, և այլոց նոյն-
պիսեաց, առ որս և մեք ունիմք գրեալ
զթուղթս սիրոյ և յարգանաց, և պատասխա-
նիս մխիթարութեան ընկալեալ 'ի յոմանց։
Արդ՝ զնոյն շնորհ մարդասիրութեան և 'ի
ձերմէ գերապայծառութենէ ընդունել յուսա-
լով՝ մատչիմք յայս դրութիւն առաջի առ-
նելով մեծութեան ձերում զանցիցն մերոց
աղէտալեաց, և խնդրելով զգեղս սփոփանաց
'ի դիւրութիւն յոգնատարժան կրից մերոց։
Քանզի յայտնի է վսեմութեան ձերում զըր-
կեալ գոլն մեր 'ի մարﬓաւոր Տէրութենէ, և
մատնիլն անօրէն տիրողաց անողորմից՝ որք
կեղեքեն զկեանս մեր խստութեամբ և հարս-
տահարութեամբ, և յաղագս իւրեանց ևս ան-
գլխութեան և դժնէութեան, անկեալ զմի-
մեամբք միշտ իբրև զծով ծփին՝ ըստ մար-
գարէութեանն, 'ի վնասս աշխարհի. յորոց և
չէ ակնունելի բարի ինչ, որպէս չէ հնար
փշոցն խաղող բերել, և տատասկին թուզ,
և ոչ աղտաղտին տեղւոյն ջուր քաղցր առ-
նել, ըստ Տէրունի և Առաքելական բանիցն։
Իսկ մինչ սովորական կրիւքն մերովք տա-
ժանէաք, վասն մեղաց մերոց յարեաւ այլ
իﬓ բռնաւոր չարագոյն քան զամենեսեան

իբրև զղաւազան բարկութեան տանս արե-
ւելեան, աղարտիչ և կողոպտիչ՝ դերօղ և սպա-
նօղ։ Ցորմէ առ ազդ մեր որ յայսկոյս, և առ
սուրբ Աթոռս և առ մեզ 'ի չորս ամս եթէ
որքան վնասք և տառապանք ժամանեցին,
գրելն ոչ պարունակի աստ, այլ ի հարկէ
լուեալ էք զամենայնն։ Ես յայնոսիկ վիշտս
'ւ հեծութիւնս կալով մինչ սպասէաք յայզմ
կուսէ ստանալ զդիւր իﬓ, առ տարաբախ-
տութեան մերոյ՝ գուժեաց ի լսելիս մեր
բօթ վճարման կենաց ամենաբարեպաշտուհի
մօրն ողորմութեան՝ գերերջանիկ Կայսե-
րուհւոյն Եկատարինեայ։ Որով բազմապատ-
կեցան ցաւք և հեծութիւնք մեր, և լի եղաք
տրտմութեամբ և սգով։ Բայց հետևաբար
արագ ընդ արագ լսելով զբերկրալի աւետիս
արժանաժառանգ Գահակալութեան Կայսե-
րազն որդւոյ Նորին Քրիստոսապսակեալ
բարձր օգոստափառ Մեծի Կայսեր Պաւլ Պետ-
րովիչի, փարատեցաւ ի մէնջ տրտմութիւնն,
և ուրախացեալ ցնծութեամբ մեծաւ գոհացաք
զՏեառնէն տէրանց զտնօրինողէն կարգաց
համայն տէրութեանց։ Ապա ընկալեալ
զթուղթս ի սիրելի որդւոյն մերմէ Ցովսե-
փայ Արքեպիսկոպոսէն, որ է վերատեսուչ
մերազնէիցն յԱստուածախնամ երկրոջդ եղե-
լոց և ծանուցեալ զմեծիմաստ կառավարու-
թենէ Աստուածարեալ Նորապսակ Մեծի Կայ-
սեր Պաւլ Պետրովիչի և զգերազանց խնա-
մարկութենէն առ մերազգուն ժողովուրդսն,
ընդ նմին իմացեալ և զձերոյ Աստուածա-
սիրութեան ողորմած և բարերար լինիլն առ
նոսա՝ յոյժ և յոյժ շնորհակալ եղաք։ Ուստի՝
առաջի Միածնաէջ սրբոյ Տեղւոյս աղօթե-
ցաք և աղօթեմք միշտ վասն երկարութեան
անդին կենաց առատախնամ և ողորմածա-
գունեղ Ինքնակալ Մեծի Կայսեր Պաւլ Պետ-
րովիչի և Գերապանծ պսակակցի Նորին
ամենաբարեպաշտուհի Թագազնեայ Կայսե-
րուհւոյն և Կայսերազուն Որդւոց Նո-
րին Թագաժառանդից Ալէքսանդր Պաւլո-
վիչին և Կոստանդին Պաւլովիչին, և այլ
ամենայն ժառանգորդաց Կայսերութեանն։
Զորս ամենաթագաւորն Աստուած ընդ եր-
կայն աւուրս արասցէ, և զամենափառաւոր
Տէրութիւն իւրեանց միշտ բարձր և անար-
կու պահեսցէ առ ամենեսեան, և առաւել ևս
տարածեսցէ ընդ ծագս տիեզերաց՝ ի պար-

ծանս ամենեցուն մեր հաւատացելոց։ Իսկ և յաղագս զերամեծար և քաղցրասիրտ բարեկամիդ և ազգի մերոյ խնամածուիդ ես հայցեցաք և հայցեմք յԱստուծոյ միշտ զպարգես բարութեան։ Որ և զկեանս երկար շնորհելով լի արասցէ զքեզ իմաստութեամբ և հանճարով, և առաջի բարձրագահ Կայսերական Աթոռոյն ես քան զես յառաջադէմ և երևելի առնելով գերազանց պատուով և փառօք ճոխացուսցէ։ Եւ արդ քանզի պատեհագոյն էր մեզ այժմ գրել զշնորհաւորութիւն ի սպաս Աստուածարեալ Նորապսակ Մեծի Կայսեր Պաւլ Պետրովիչի միանգամայն և ժամ էր բաղխելոյ զդուռն ողորմութեան Նորին, վասնորոյ ահա գրեցաք զթուղթ աղերսանաց և շնորհաւորութեան, և առաքեցաք ի ձեռն Յովսէփ Արքեպիսկոպոսին մատչիլ առ լուսափայլութիւն ձեր։ Եւ այսու դրով խոնարհաբար խնդրեմ յԱստուածասիրութենէ Ձերմէ, Նախ՝ զի զգթութիւն և զբարերարութիւն ձեր առաւել ևս առատացուցանիցէք ի վերայ ազգիդ մերոյ ընդ հովանեաւ այդր Աստուածահաստատ Տէրութեան բնակեցելոց, և մանաւանդ ի Դարբանդու եկեալ խղճալի ժողովրդեանն, և ի վերայ հոգևոր այցելուիդ դոցին Յովսեփայ արքեպիսկոպոսիդ՝ որով և կատարի պատուէրն Առաքելական թէ՝ ունիցիք զգութ առ ընտանիս հաւատոց։ Եւ երկրորդ՝ զթուղթն աղաչանաց մերոց մատուցեալ առ հանդիսավեհութիւն Կայսերական պարգևաձիր Աթոռոյն, միջնորդ և բարեխօս լիջիք, զի որպէս բարեյիշատակ երանելի Կայսերուհին շնորհեալ էր նախանցեալ պատրիարգին մերոյ նոյնպէս և դորին Կայսերական Մեծութիւնն ամենաողորմածաբար մեզ շնորհեսցէ զհրովարտակ ողորմութեան։ Եւ երրորդ՝ եթէ կամք իցեն բարձրապատուութեանդ՝ սիրայայտ և յուսադրական յատուկ գրով մխիթարեցէք զվշտաւորութիւնս մեր։ Արդ մինչ մարդասիրութեամբ խոնարհեալ ի բարձրութենէդ լսօղ լիցիս աղաչանացս մերոց, ամենակատարն Աստուած զՁերին ամենայն խնդրուածսն լուիցէ և կատարեսցէ։ Որ և կացցես ողջ 'ի Տէր և պահպանեցեալ միշտ օգնականութեամբ Նորին, ի հրճուանս մեր. Ամէն։ Գրեցաւ յԱմի Տեառն 1797, և ի յուլիս... ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին. որ ի դաշտս Արարատեան։

(Ձեռագիր սրբազանին ի ներքոյ գրեալ)։ Քրիստոսի փրկչին ծառայ և վասն Գերապայծառութեան Ձերոյ զբարիս հայցող խոնարհ Ղուկաս կաթողիկոս ամենայն հայոց ձեռամբ իմով գրեցի զայսչափս առ ի ստուգութիւն ամենայն վերոգրելոցն։

ԽԹ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Հաշտարխանու եւ կողմանցն առաջնորդ Յովսէփ Արքեպիսկոպոսն, ընդ թղթոց Կայսերն եւ վէզիրին եւ այլոց։

Յորմէ ճշմարիտ սիրով և հոգևոր օրհնութեամբ, Քրիստոսաձիր ողջունիւ, և առատածաւալ շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Նորին՝ ծանիր սիրելիդ մեր ի տէր՝ հարազատ և օգտաջան որդի սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ գերահանճար Արքեպիսկոպոս։ Զի յառաջ քան զայս վերջին թուղթն քո ի Թիֆլիզու՝ ձեռամբ Ութրութին և Շաքրօյին մինչ էհաս առ մեզ, գրեցաք զպատասխանի նորին ի յունիսի 30 և ընդ նոսա ուղևորեցաք, յորմէ ունէիր իմանալ զդժնդակ սարտարի մերժիլն յերկրէս, և զկացութիւնն մեր։ Եւ վասն խնդրելոցդ թղթոց խոստացաք գրել և յուղարկել, բայց զբաղմունքն ևս ոչ երբէք թեթևական առ ի մէնջ, այլ ինչ և իցէ հանդերձ այլ հոգօքն հոգացաք գրել զթուղթ մի առ օգոստափառ Կայսրն, զթուղթ մի առ վէզիր քնեազ Ալէքսանդր Անդրէիչ Բէզպօրօտկին, զերկուս թուղթս առ Պլատոն և Գաբրիէլ արքեպիսկոպոսն, զթուղթ մի առ ազնիւ աղայ Յովհաննէսն, և զթուղթ մի առ ազնիւ պ. Մարդարն և Փիլիպպոսն Մանչարեանց։ Ի թղթոջ Կայսերն գրեալ եմք առ պահանջելոյ բանին կարգի զամբաստանութիւն զբարբարոս տիրողացն մերոց, և զաղօթսն եկեղեցւոյս մերոյ, վասն իւրեանց արժան խոստովանեալ, իբրև յատ-

կապէս խնամածուաց ազգի մերոյ։ Զկնի՝ վասն Մօրն մահուան տրտմակցութիւն և վասն իւրն յաջորդութեան ցնծութիւն և շնորհաւորութիւն։ Եւ ապա զերկուս խնդիրս առաջագրեցաք. նախ՝ առաւելապէս ունիլ զխնամսն ի վերայ ազգի մերոյ ընդ գաւառանաւ իւրով եղելոցն, և երկրորդ՝ զի որպէս հողելոյս կայսերուհին շնորհեաց զնամակ ողորմութեան Տեառն Սիմէոնի Սրբազան Կաթողիկոսին, նոյնպէս և ինքն մեզ շնորհեսցէ։ Ի թղթոջ վէզիրին ևս ըստ այսմ մտաց, բայց յատկապէս և վասն ի Դարբանդու նոր անցեալ մերայնոցն խնդրեցաք զխնամարկութիւն, և վասն խնդրոցն մերոց որ առ կայսրն՝ հոգատարութիւն և կատարումն։ Իսկ եպիսկոպոսացն միայն զկիրս մերոց ծանուցումն, և վասն քո յանձնարարութիւն։ Եւ առ աղայ Յովհաննէսն՝ երկարապէս, օժանդակ լինիլ քեզ առ խնդիրսն մեր թէ վասն հրովարտակին և թէ վասն Դարբանդու ժողովրդեան։ Վասնորոյ և քեզ սիրելւոյդ գրեմք, զի ամենայն ջանիւ հոգ տարեալ առ դռանն կայսեր՝ ընկալցիս զհրովարտակն ողորմութեան՝ համեմատ առ Քրիստոս փոխեցեալ կայսերուհւոյ հրովարտակին շնորհեցելոյ սրբազան հայրապետին մերոյ ի Տէր հանգուցելոյ, և վասն ժողովրդոցն մերոց և Դարբանդու Նոր եկելոցն զոր ինչ ողորմութիւնս առնիցէ, ծանուսցէ մեզ լիապէս։ Եւ զի գրեալ էիր թէ՝ թագուհին ևս ընդ թագաւորին ի միասին են օծեցեալք, պատշաճ վարկաք ի յօրհնութիւնսն զնա ևս ընդ նմա յիշել. բայց վասն անուանն տարակուսեցաք։ Զի թէ և գրեալ իցես մեզ յառաջ, սակայն զոմանս թուղթս քո ի գալ չարաճճիկ սարդարին ի վտանգէ կասկածելով պատառեցաք, և յայլ ուստեքէ չունէաք հաւաստել, ապա այլով ծաղկատիպ նշանաւ անորոշ գրեցաք թէ՝ Թագազնեայ կայսերուհւոյն, և տեղի ինչ ևս թողաք, եթէ հարկաւոր գիտասցես, կարես գրեցուցանել զանունն ի ներքոյ, և թէ զգրեցեալքն բաւական համարեսցիս, ի յընտրութիւնս քո է ապաստան։ Դարձեալ և տարակուսեցաք թէ զթուղթն զիմըրգ յղիցեմք, զի թէ ծալէաք, աղճատիւր ի ճանապարհին. վասնորոյ՝ վայելուչ համարեալ զթուղթն կայսեր գալարեալ ի մէջ զուպուրի եղաք, և զայլսն բաց կնքեալ՝ այնպէս յղեցաք, զի տեսցես և թարգմանեցուցեալ՝ այնպէս մատուսցես, և կամ թէ՝ ըստ այլ պաաշաճաւորութեան արասցես, որք հաճելի երևեսցին։ Ըստ նշանակելոյդ՝ դրելոց էաք այժմ, և զկոնդակ ի վերայ մերայնոց երկրիդ առ հասարակ՝ ծանուցանելով զկիրս մերոց, և միամտեցուցանել վասն ազատութեան սրբոյ գահիս ի վերջին վտանգից, ևս և զկոնդակ յուսադրութեան ի վերայ տարագրեցեալ ժողովրդեանն ի Դարբանդու, և առ այլ ոմանս յատուկ անձինս ըստ հարկին, սակայն՝ թող զի քանի տեղեաց փայեկ դալն և պաշարեցուցանելն զմեզ այլ և այլ թզթագրութեամբք. ահա ուխտաւորք ևս եկին յՕսմանցւոց երկրէն, և խպառ զքաղեցուցին զմեզ՝ որ եթէ կամիցէաք զամենայնն լրացուցանել, ամիս մի ևս յերկարէր, վասնորոյ աճապարեալ, զայսքանս յղեցաք շուտով, զի չև ևս գնացեալ քո ի դուռն՝ հասցի առ քեզ, զայլսն ևս յետոյ գրեցուցեալ յղելոց եմք։ Եւ զի առաջին թղթովն մերով դրեցաք քեզ վասն Դարբանդու Նոր անցեալ ժողովրդոցն՝ ծանուցանել մեզ թէ՝ յո՞ր և յո՞ր տեղեաց իցեն, իցէ թէ դրեալ իցես՝ և շուտով հասանիցի առ մեզ, և ըստ այնմ տեղեկաբար ասասցուք զգրութիւն մեր։ Զի յայն կողմանցն և ի Շուշւոյ ևս եկօղ չգոյ դեռ ևս, զի որք փախստեամբ գան, ի ճանապարհին կոգոպտեալք լինին։ Տեղւոյս իշխօղն որ գնացեալ ի Թէհրան արդելաւ հանդերձ եղբարբքն, տակաւին անդ են, և Խօյու իշխօղքն ևս. երկբայքս անտէրունչ, Մակուայ սուլթանն որ առ Ներքինի կորստականն կայր ընդ երկար, և խան կոչեցեալ ի նմանէ՝ զերկիրս տարեկան կտրուածքով առեալ էր՝ գալ նստիլ, և զհարկն հասուցանել. յետ կործանման Ներքինւոյն եկն տիրօղ երկրիս, իսկ երևելիքն երկրիս որք ժողովեցեալ են ի բերդն, ոչ ընկալան զնա, ոմանք սրտիւ և ոմանք կեղծիւք։ Եւ նա գնացեալ ի գաւառն իւր զօրաժողով լինի գալ ի վերայ Երեւանու. յերկուց կողմանց ևս դրեալ են առ պետն Վրաց, և թուի թէ նորա կողմն հզօր է, և Արքայն թէ որո՞ց պարտի անսալ, չգիտեմք։ Վասնորոյ երկիրս այլևս ի վրդովմանց չէ ապահով։ Ցաղագս Խօյու ևս ասեն թէ զքա-

ղաքն գաաարկեալ ի հարստութենէն՝ ընակիչքն իբրև ի վերայ փշոյ նստեալ կան յերկիւղէ Սագըղ խանին. և Սագըղ խանն ունի զճանապարհն Արաղստանու, որոյ եղբայրն ես ի Թարվէզ նստեալ կայ։ Ինքն Աստուած բարերարն այս բանաւորացն օգտագիտութիւն տացէ. զի ողորմելի աշխարհս այս սակաւ մի անդորրասցի։ Ըստ խնդրելոյդ և խոստման մերոյ ահա Ի հատոր անկազմ շարականս յղեցաք ի Թիֆլիզ հասանիլ առ քեզ։ Ո՛չ միայն ի Թիֆլիզու, այլ և ի Պօլսոյ լսեմք զկատաղիլ տիրասպանիցն ի վերայ հռոմէական տէրութեանն, և ունիլ զգիտումն ի սահմանս կողմանդ, ուստի և յոյժ ցաւիմք, Տէր ցրուսցէ զխորհուրդս նոցա՝ և փրկեսցէ զերկիրդ յապականարար թունից նոցին։ Ապաքէն զտեղւոյդ և զնոցին որպէսն գրեսցես մեզ ի դիտել։ Յառաջ քան զալեկոծութիւն կողմանցս՝ որ զՆՏայ անապատի ժողովարար Ներսէս վարդապետն իրօք իւրովք յուղարկեալ էիր աստ, էհաս. ընկալաք զինքն և հասու եղաք զաւթարացն և կայիցն. և պահեցաք ի սուրբ Աթոռոջս մինչև յամիսս ութ և այլ աւելի. զոր իմացեալ Անապատականացն և Վանայ իշխանացն մահսարօք խնդրեցին զնա և զինչսն, և մեք յիրաց անտի չափաւոր բաժին հանել ետուք իւրն ըստ Թախանձանաց իւրոց, և զայլն ամենայն գնաղգն և զվէճն կնքեալ անպակաս հանդերձ ինքեամբ յղեցաք յանապատն. և յանապատականաց անտի և ի Վանցւոց Թուղթս ընկալաք վասն հասանելոյն։ Իսկ զի մրրիկն հետևապէս յարեաւ ի վերայ մեր, և ճանապարհքն փակեցան, ցարդ չկարացաք ինչ գրել զայնմանէ. այժմ գրեմք, զի միամիտ լիցիս։ Նաև Աւետիք վարդապետն՝ զոր յուղարկեցաք ի գործ՝ իբր զի զիւր կայսն ևս առ ձեռն բերցէ, և գործակատար երևելով սրբոյ Աթոռոյս՝ արժանապէս հանդիպեսցի բարւոյ անուան և պատուոյ, նա մինչև ցայժմ քառապատիկ յամելով՝ գիր ևս ոչ գրէ. զորոյ ոչ զփոյթն իմանամք, և ոչ զդիտումն։ Ցանցելում ամին գրեալ էիր ի Շամախւոյ թէ առ իս է, և վասն անքննաբար տուեալ դրամոցն հետևիմք հանել, և այլն։ Այժմ լսեմք թէ՝ նա յայնժամ ի սակաւ աւուրս է կացեալ առ քեզ, և դարձեալ մեկնեցեալ է. չգիտեմք թէ ուր է։ Եթէ գիտես ինչ զնմանէ և զի՞նչ առնելոյն, շուտով գրեսցես մեզ. շնորհակալ լինելոց եմք։ Ողջ լեր։

Ի յուլիս 20.

Ցետ աւարտման թղթոյս, ի յանկարծ ուղևորելն, նոր ևս շաղագրով բան գրեցաւ. վասն թղթոյս յամելոյն ի քանի աւուրս ևս թէ ի պատճառս ուխտաւորաց դժուարաւ ճանապարհելոյն, և թէ զկնի Պարոնի որդւոյն գալոյն աստ, և մեր հանդերձեալ գոլոյն ի վաղիւն գնալ յներևան ի տեսութիւն Հասանխանին որ նոր նստեալ էր ի բերդն, և այլն։

Ի յուլիսի 31.

Ծ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Պետրպօլ առ ազնիւ Աղայ Յովհաննէսն Եղիազարեան, վասն անցիցն կողմանցս եւ կրից մերոց, եւ վասն թուղթ գրելոյն մեր առ նոր կայսրն ի շնորհաւորութիւն. եւ վասն Յովսէփ վարդապետին որ զնայր անդ ի դուռն. եւս եւ յաղագս ի Դարբանդու նոր գնացեալ ժողովրդեանն յանձնարարութիւն, զի ընդ Յովսէփ վարդապետին հոգ տարեալ առաւել եւս ի գութ շարժեսցեն առ նոսա զկայսրն, եւ զգործակալսն.

Ցորմէ ժամանեսցէ Թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ առատածաւալ շնորհօք Միածնաէջ սրբոյ տեղւոյս և համայն հրաշագործ սրբութեանցն որք աստ, ի վերայ իսկապէս սիրելւոյդ մերոյ՝ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս Քրիստոսիւ զօրացեալ բարեծնունդ և բարեպաշտ ճոխապատիւ և փառազարդ պայծառ իշխան

պարոն Գօլկոֆիւկ Ազնիւ Աղայ Յովհաննէսիդ և օրհնեալ տան քում և ամենեցուն որք քո են, ի Տէր խնդալ։

Շնորհք։

Եւ ընդ Աստուածային օրհնութեան սիրառաք նամակիս ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում. Զի երկարագոյն ժամանակ եղև յորում կարօտ մնացաք սիրոյ Թղթոյդ՝ որով սանայաք զմխիթարութիւն ինչ։ Մեզ ևս չյաջողեցաւ գրել. որոյ պատճառն յայտնի իսկ է խոհականութեանդ։ Զի քանի ամք եղեն յորմէ հետէ անօրէն և կատաղի բռնաւորին Ներքինւոյ վնասագործութիւնն ազդեաց ի կողմունքն։ Մինչդեռ ոչ էր եկեալ, ի սպառնալեաց նորին, և յապստամբութենէ Թարմատար և անկատար իշխողին երկրիս քանիցս վրդովեալ վնասեցաւ երկիրս և պակասեցաւ, մեք կրկնապատիկ վնասակրութեամբ և վարանմամբ տաժանեցաք։ Եւ յորժամ եկն դառնաթոյն շնչովն յայսկոյս, ի 1795 Թուոյն մինչև ցսոյն տարւոյս յունիս ամիսն գրեթէ շաբաթէ ի շաբաթ և յամսոյ ի յամիս չկարացաք երբէք Թարց մեծամեծ վնասուց և հոգեմաշ կրից մնալ թէ ի նորայնոց և թէ ի տղրկահանգոյն երկբտկանացս։ Իսկ զյանդուգն աշխարհաւերութիւն նորա և զյափշտակութիւնսն, զգերեվարութիւնսն և զսպանութիւնսն որպէս իցէ հնար մեզ ի սակաւատարած թղթի յայսմիկ պարագրել, այլ ի հարկէ փոքր ի շատէ լուեալ էք։ Եւ համառօտիւս զերկարագոյնն կարէք իմանալ ձերով առատ խոհեմութեամբն։ Բայց ամենաողորմն Աստուած որ ոչ իսպառ տնտես առնէ զարարածս իւր, ի վերջին վարանման ամենայն ումեք՝ և ես ի գութ շարժեալ առ մնացորդսն՝ յանկարծակալ ժամու եբարձ զչարն ի միջոյ, և մեք յետ բազմաց վնասուց և վշտաց՝ զերծաք ի մահաշունչ բերանոյ վիշապին և ի ձեռանէ ժանտաժուտ և չքանալի եղբօր նորին, որ յերիցս անգամ աստանօր գալն ևս գառնացոյց զմեզ. Տէր տացէ նմա հասանիլ վիճակի եղբօրն իւրոյ. և պահպանեսցէ ողորմութեամբ իւրով զսուրբ գահս՝ որպէս և պահեաց ի պարծանս օրհնեցելոյ ազգիդ մերոյ։ Այլ արդ՝ մինչ վարանէաք ի տագնապս տարակուսանաց յահէ չարութեանց բռնաւորին ի դեկտեմբերի վերջին աւուրսն և յուսայաք յայդմ կողմանէ օգնութիւն ինչ ստանալոյ, լուաք զփոփումն ի կենաց աստի երջանկափառ ամենահանդէս մեծի կայսերուհւոյն, և այն առաւել վշտացոյց զմեզ քան զայլ ամենայն պատահարսն մեր։ Սակայն հետևաբար փութով էհաս և աւետաւոր համբաւն յաջորդելոյ ղգահն կայսերական Աստուածընտիր ամենաօգոստափառ Մեծի Կայսերն Պաւլ Պետրովիչի, որով մխիթարեցեալ և ուրախացեալ գոհացաք զԱստուծոյ։ Ապա յետ կործանման բռնաւորին կողմանցս, մինչ սիրելին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն ի դառնալն ի Թիֆլիզու յայդկոյս գրեալ էր մեզ թէ դիմելոց է ի կայսերականդ դուռն, և մեք պատկան գիտելով ահա գրեցաք զԹուղԹ շնորհաւորութեան և աղերսանաց առ Նորին կայսերական գերամեծ բարձրագահութիւնն. և առ վէզիրն նորա Քնէազ Ալէքսանդր Անդրէիչ Բեզբորոդկին, և յղեցաք ի ձեռն Յովսէփ Գերզգօն արքեպիսկոպոսին բերել հասուցանել ի մայրաքաղաքդ։ Վասնորոյ գրեմք ազնուութեան քում, զի ի գալն Նորա յայդր՝ դարձեալ մեծաւ սիրով և յարգանօք ընկալցիս, որպէս և յառաջինն նուաղն. և ի մատուցանելն զԹուղԹսն մեր զոր ինչ խօսելին իցէ, օժանդակելով նմա ի միասին խօսեսջիք, և խնդրեսջիք յողորմածութենէ Նորին կայսերական մեծութեան՝ շնորհել մեզ զհրովարտակ ողորմութեան. որպէս և հոգելոյս երանելի Մեծ կայսերուհին շնորհեալ է Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսին։ Նաև վասն ի Դարբանդու նոր եկեալ ժողովրդեանն մերոյ ևս որչափ կար ձեր է հոգ տարջիք և ջանասցիք զողորմութիւն զտանել։ Զի իմացաք որ Քրիստոսապսակեալ ինքնակալ Մեծ կայսրն Պաւլ Պետրովիչ յինքենէ իսկ քաղցրացեալ առ նոսա՝ խոստացեալ է առաւելապէս բարեբարել նոցա։ Վասնորոյ սրտադիւր եղեալ մեր հանապազ աղաչեմք զԱստուած վասն կենաց և յաջողութեան Նորին Մեծի Կայսերն Պաւլ Պետրովիչի և երջանկափառ պսակակցի նորին Թագազնեայ Կայսերուհւոյն և կայսերազուն Թագաժառանգ զաւակաց Ալէքսանդր Պաւլովիչին և Կոստանդին Պավլովիչին, և այլ ժառանգորդաց

կայսերութեանն։ Որոց Տէր Աստուած տացէ զերկարութիւն կենաց և զգերազանցութիւն փառաց, օրհնելով զՏէրութիւն իւրեանց և տարածելով ընդ ծագս աշխարհի և միշտ բարձր և ահարկու պահելով ի վերայ հակառակամարտից և մանաւանդ թշնամեաց Խաչին Քրիստոսի, և զքաղցրագոյն խնամս նոցա աննուազ պահեսցէ ի վերայ ազգի մերոյ և յատկապէս ի վերայ ազնուագոյն սիրելւոյդ։ Արդ՝ թէպէտ և վաղագոյն երբեմն գրեալ էիր թէ՝ պատճառաւ տկարութեան իրիք անձեռնհաս եմ ի թուղթ գրել, առ որ աւելի իմն է ստիպելս, սակայն՝ այժմուս յետ հոգ տանելոյդ գրեցելոցս՝ եթէ զպատասխանի թղթոյս ես գրեսցես ծանուցանելով զբարեկեցիկ ողջութենէ քումմէ և զյաջողութենէ բանիցդ, ի մխիթարութիւն բազմավարան սրտի մերոյ, առաւել ես շնորհակալ լինելոց եմք զբարեպաշտ սիրելւոյդ։ Զոր ամենազօր ձեռն Քրիստոսի զօրացուսցէ միշտ և ի խնամս իւր պահեսցէ հանդերձ ամենայն քոյայնովդ, փրկելով ի փորձութեանց, և բնաւից իրաց ձերոց զյաջողուածս բարիս տալով։ Զերկարագոյնսն պատմութեան անցից մերոց՝ և ներկայապէս կացութեան սրբոյ Աթոռոյս և կողմանցս թողումք ի սիրելւոյն մերմէ ի Յովսէփայ Աստուածիմաստ արքեպիսկոպոսէն իմանալ։ Ո՛ղջ լեր ի Տէր փառազուարճ կենօք, Ամէն. գրեցաւ յամի Փրկչին 1797. և ի յուլիսի... Ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Ողջոյն և օրհնութիւն տամք հոգևոր դստեր մերոյ սիրեցելոյ ի Քրիստոս՝ բարեպաշտուհի կենակցին քոյ՝ Տէրամբ օրհնեցեալ երկիւղազարդ և զգաստամիտ ազնուուհի Կատարինէ խաթուն Իվանովնին, և ամենայն քոյայնոց մերձաւորաց՝ ազգայնոց բարեկամաց և սիրելեաց, որք հանդերձ քև լիցին յանձնեցեալք ի խնամս մարդասիրին Աստուծոյ։

ԾԱ. Թուղթ Նարին եւս ի Պետրպօլէ առ Մանուչարեանց ազնիւ պ. Մարգարն, ըստ մտաց վերնոյ թղթոյդ, յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին

Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ՝ ողջունի և օրհնութեան, հանդերձ մեծազօր շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ բարեպաշտ սիրելեացդ մերոց և հարազատ որդւոցդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասիրաց և նովիմբ զօրացելոց՝ ազնուազարմից և խոհականաց, Ազնիւ պ. Մարգարիդ և ազնիւ պ. Փիլիպպոսիդ։ Եւ ամենեցուն որք ձեր են, ի Տէր խնդալ։ (Շնորհք).

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ գիտասջիք իսկապէս սիրելիք մեր. զի ի քանիս ամս գոլով մեր յանհնարին նեղութիւնս և ի բազմապատիկ վնասս հանդերձ ամենայն երկրաւս և ազգաւ մերով՝ ի յարուցման մարդադէմ գազանին Ներքինւոյ, չկարացաք թուղթ գրել առ սիրելութիւն ձեր, դուք օրհնեալքդ ևս որք Աստուծով յապահովութեան կայք, իբրու ի մոռացման եղեալ զմեզ չգրեցիք զգիր ինչ առ ի սփոփանս թախծեալ սրտի մերումն։ Բայց մեք անմոռաց ունելով զհաւատաբիմ որդիսդ սրբոյ գահիս՝ բազմիցս յիշատակեմք օրհնաբանութեամբ, որք և ի Տեառնէ Աստուծոյ լիջիք յիշեալք և օրհնեալք հանդերձ ամենայն ձերայնովքն։ Իսկ ի դառնաղէտ տագնապակրութիւնսն մեր, մինչ յայդմ կողմանէ ակնունէաք ստանալ զմխիթարութիւն ինչ, հակառակ յուսոյն մերոյ զբօթ մահուան երջանկափառ Մեծի Կայսերուհւոյն լուեալ տրտմեցաք և ցաւեցաք հոգւով չափ։ Այլ հետևաբար լսելով և դեբարժանապէս ղահակալութիւն Աստուածակացոյց ինքնակալ Մեծի Կայսեր Պաւլ Պետրովիչի մխիթարեցաք և ուրախացեալ փառս ետուք։ Այնուհետև յառաւել ևս ամբարտաւանիլ և ի կատաղիլ աշխարհաւեր բռնաւորին, առաւելաւ և մեր ցաւն և տարակուսութիւնն և գրեթէ ի վերջինն վարեցաք վարանումն։ Բայց ողորմութիւն բարերարին կանխաւ ժամանեալ ի վերայ արարածոց իւրոց, չարամահ սատակեցաւ աշխար-

հաւեր անօրէնն և բարձաւ չարն ի միջոյ, յորոյ ի չարաչար խորհրդոցն զերծան մեծագործքն ազգիս մերոյ, և մեր յետ անհուն վնասուց և վշտաց պահեցեալ եղաք սուրբ Աթոռովս ի յետին վտանգից։ Ապա սիրելին մեր Յովսէփ արքեպիսկոպոսն որ եկեալ էր մինչև ցԹիֆլիզ, և դարձ առնէր անտի յայդկոյս՝ գրեալ էր մեզ որ դիմելոց է ի կայսերական դուռն։ Եւ մեք կարևոր դիտացեալ ահա զշնորհաւորութեան և աղերսանաց թուղթ գրեցաք առ Նորին կայսերական Մեծութիւնն, և առաքեցաք ի ձեռն Յովսէփ արքեպիսկոպոսին՝ բերել ընդ ինքեան և մատուցանել ի սպաս կայսերական հանդիսավեհութեան։ Վայելուչ համարեցաք զայս սիրոյ և օրհնութեան թուղթ ես առ ազնիւ սիրելիսդ մեր գրելն ի յազդումն զկրից մերոց, և ի հայցումն ողջունի ձերոյ, և ի յարծարծումն սիրոյ։ Որով և խնդրեմք, զի զսիրելին մեր Յովսէփ վսեմամիտ արքեպիսկոպոսն որպէս յառաջին նուագսն ընկալեալ էիք, նոյնպէս և ի այժմոյս գալն մեծաւ սիրով և յարգանօք ընկալջիք, և զոր ինչ հոգալիս ունի յայդր եթէ ի կողմանէ մեր և իւրն, և եթէ ի կողմանէ օրհնեալ մերազնեայց՝ և թէ մանաւանդ յաղագս ի Դարբանդու նոր եկեալ ժողովրդեանն, բարեպաշտաբար ձեռնտու և օգնական լիջիք որչափ և կարողութիւն ձեր զօրէ, ոյր սակս ունիք ստանալ զմեծ վարձս յԱստուծոյ. և կացուցանելոց էք զմեզ շնորհակալս և օրհնաբանս ձեզ։ Եւ սիրանիշ գրով ձերով կամեսջիք ըստ օրինի ճշմարիտ բարեկամութեան ցուցակցել մեզ և մխիթարել ի վերայ բազմաժամանակեայ նեղութեանցն և վնասուցն մերոց։ Եւ զայլ երկարապէսն անցից մերոց և կողմանցս, և ներկայապէս կացութեան մերոյ ի Յովսէփ գերազգօն արքեպիսկոպոսէս կարէք իմանալ։ Ողջ լերուք ի Տէր։ Գրեցաւ յամի Տեառն 1797, և ի յուլիսի ամսոյ... ի սուրբ Աթոռս Էջմիածին։

1798

ԺԲ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին.

Արժանապատիւ տէր Ստեփաննոս քահանայ Սիրեցեալ որդի.

Զարմանամ ի վերայ ամենայն գործոց քոց՝ զորս սկսեալ էիր և զորս սկսեալ ես։ Զարմանամ, վասն զի՝ ոմամբք բարի սկսուածովք քովք ոչ միայն ուրախացուցեր զմեզ, այլև՝ ձգեցեր ի մեծամեծ յառաջադրութիւնս, որով սկսաք շինել զզանազան շինուածս և առնել զբազում խոստմունս ազգին՝ ըստ գրութեանց ձերոց։ Ոչ անընտրաբար սկսանելով զշինութիւն աշտանակին, Թարց ծախուցն Թուման, այլ նախ զքաւականութիւն դրամոյն՝ տեսանելով և հաշուելով, որք կաբողք են զամենայն բարի յառաջագրութիւն իմ ի կատար հասուցանել. և ես յաւելացուցանել անտի զմասն և տալ ի հաստատուն պահպանութիւնս վասն մշտնջենական կառավարութեան շինուածոցն, տպարանին և դպրոցին։ Այլ յայսմանէ վրիպեցայ և սխալեալ խաբեցայ և ի զուր հաւատ ընծայեցի գրութեանդ. վասն այն՝ որ ահա մեաասան ամ է զքեզ առաքեալ եմ, մետասան ղեան՝ ի յօժարակամ տրոցն՝ օրհնեցելոցն բարեպաշտից՝ յորոց ընկալեալ ես զողորմութիւն, ոչ առաքեցեր։ Ի մխիթարութիւն մատուցանողին և ի յօգնութիւն իմոյ յառաջադրութեանն, ի նպատակ որոց՝ զքեզ առաքեալ էի։ Ուստի ոչ եթէ ի քէն՝ գաի ինչ, այլ որ ի քսան ամս ունէի ինչ. զայն ես վատնեցի, Թերևս ի քէն գտից յօգնութիւն, այլ ոչ գտի ի քէն ինչ, եթէ ոչ ամօթ, ծանրութիւն և զզուանք։ Զի ըստ ամենայնի ընդդէմ գնացեր իմոյ հրամանին և քոյոյ նպատակին և գործոյն, զի ուր ինչ ստացար՝ պարտէիր անտի առ մեզ առաքել ի ձեռն տուողացն, զի դու ի նոցանէ և ի մէնջ շնորհակալութիւն ընկալնուցուիր. այլ զնոսա և զմեզ անգոհունակ արար զքեն մինչև ցարդ, վասն այն՝ բարի վախճանաւ սկսար, կամիս չարաչար վերջացուցանել և անուն վատ թողուլ ի մէջ ջերմեռանդ և բարի ժողովրդեանդ, և մանաւանդ՝ ընդդէմ պատուոյ և պարտաւորութեան կարգի քոյ։

Երկրորդ՝ զարմանամ ի վերայ սկսելոցդ՝ Նախ ի վերայ վաճառականութեան գործոյդ՝ զոր անպատշաճ է քոյդ աստիճանի, զի ի յընկալման կարգիդ՝ հրաժարեալ ես անտի. զի գիտես զառակն գռեհկական որ նախնի պառաւունքն ևս են անիծեալ. բօշի չարուանն և կարգաւորաց վաճառականութիւնն, վասն անյարմարութեան գործոցն։ Երրորդ՝ զարմանամ ի վերայ երեք գործոցդ ոչ ես միայն այլև ամենայն լոողք և արք՝ որք հմուտք են բնական կառավարութեան, որ լինի ի մէջ հօր և որդւոյ, տեառն և ծառայի, վեքիլի և տեառն և կամ առաքչի նորին. վասն զի՝ սխալեալ ես ընդդէմ ամենայն օրինաց, որ ես ի Մօսէս Խաչիկէն ստացեալ եմ Աղայ Յօհանջան և Աղայ Յովհաննէս Խօջամինասենց տուրքն և ռեխա առաքեալ, և առ որ նպատակ նոքա առաքեալ են զայն ողորմութիւն. ի յայնս գործածեալ. իսկ դու՝ ապօրինաւորութեամբ և աշխարհական բռնութեամբ կրկին առեալ ես ի նմանէ և ազահական մտօք յանդգնութեամբ մեզ գրեալ յետ դարձուցանել վերադրօքն։ Կարծեմ որ եթէ բարի խղճիւ դատես, դու ես զարմանաս ի վերայ յանդգնութեան քոյ վասն երեք պատճառի, Նախ՝ որ

իմ յանուն ստացեալ տուրքն ի բարեպաշտից առանց վնասու ընկալեալ եմ և ի գործ եդեալ. երկրորդ եթէ այլ ինչ մասն մեծաղոյն ի ժողովքէդ առաքեալ իցէիր, կարելի՞ էր համարձակէիր դրել անտի յետ դարձուցանել վասն յօղաւի մերոյ. երրորդ պարտէիր գիտել թէ՝ ես ունիմ այնքան կարողութիւն ի վիճակէս, զի ունեցելոյս եղեր դու ցրուիչ և կորուսիչ, որ այժմ ի ներքոյ պարտուց տքամ. Ուրեմն յանդգնութիւն էր ձեզ՝ հրամայել հրամայողիս քո և առաքչիս, և փոխանակ շահաւետութեանց լինել մեզ առիթ մեծի վնասուց։

Դարձեալ զարմանամ, զի ապրանքն զգուր արարեալ ի Ստամպօլ առաքես. և ինձ գրես թէ ԻԲՌ (22000) ռուփի եթէ շուտով ոչ հասուսցես ի Կոպնհակ նոքա ծախեն զայն, և մեզ լինի վնաս։

Այդ պարտ էր քեզ՝ յառաջագոյն խօսիլ ընդ իս և կամ ըստ վերոյգրելոյս՝ գիտել զկարողութիւն իմ։ Քոյ գրեցեալն է՝ մօտ հինգ հազար թուման աւելի, զորս աստի անդ առաքիցէի. ո՞ տայր ինձ նոյն չափն, և եթէ այնքան ունէի, զի՞ էր ինձ մուրալ ի դրունս ողորմածաց և զամօթի հարկանիլ։ Եւս եթէ ապրանքն իցէր խորիդ տեղւոյս, կարելի էր ի մերոյ կանթօռէ վերադրօք ստանալ, այլ թէ ի Կոստանդինուպօլ էր գնալոյ, ես յումմէ՞ պարտ էի ընկալնուլ, և նոքա մինչև ցծախսն նորին որպէ՞ս համբերէին և կամ վերադիրն որքան լինէր։ Ապա ադահութիւնն մթացուցեալ զմիտսդ՝ ոչ թողեալ քեզ՝ նախ դայսոսիկ մտածել և ապա ձեռնամուխ լինել, այլ ի շահն միայն դիտելով սոսկ մտածմամբ, առանց ընտրութեան ես արարեալ, վասնորոյ մինչ ի մէնջ ոչ եղև հատուցանել և ոչ իսկ էր կարելի, ուստի նոքա յիրաւամբ ծախեալ են և իւրեանց պարտքն ընկալեալ. որպէս ահա գիր նոցա որք են Կոպնակ առաքեմ ընդ գրոյս, գիտելի։ Եւ վասն մնացելոցն գրեցի յԸնգլլ·գ, տեսցուք զինչ պատասխան անտի ստացայց։

Քան զայս զարմացք և կատարեալ տղայոց օյին և խաղ և մեծ մտաթափութիւն։ Զի դու քանիցս դրեալ ես մեզ թէ՝ ահա ի սոյն գարնանն և կամ աշնանն ելանելոց եմք. վասնորոյ և մեք, հաւատ ընծայելով գրեցելոցդ՝ ոչ թէ՝ գիր ոչ գրէաք քեզ, այլ և, ուր և դրեցի՝ յետ դարձուցին ի Բասրայու դրելով թէ՝ ի վերայ Եւրոպիու գայ, ի յԵւրոպիու թէ՝ ի վերայ Բասրայու, վասն որոյ ոչ գիրս քեզ հասաւ և ոչ թէ՝ ըստ ամենայն իրաւանց ե արդարութեան ի վերայ քոյ բարաթ արարի. սպասելով թէ՝ դու ինքդ եկեսցես և քոյ աշխատանքնդ՝ ինքնին մատուսցես մեզ, և մեր քայքայեալ սկսուածքն, քև նորոգեսցուք և ի յաշխատանացդ զմերս պարտք տացուք։ Այլ դու այսու ոչ շատացեալ, մեզ գրէիր թէ՝ Տէր Դաւիթն Տէր Փիլիպպոսեան դալոց է և մեր որպիսութիւնն պատմելոց քեզ. և այլ ինչ ոչ գրէիր վասն նորա։ Եւ նա ի Բաղդատու և ի յայլ տեղեաց քանի գիր է դրեալ մեզ՝ ի 1796 յամին և ի յօգոստոսին, ոչ ինչ է յիշեալ զթաքուն և զապօրինաւոր բարաթուցն իւրոց՝ իսկ ի սոյն դեկտեմբերիս, յանկարծ եկեալ ի Հաշտարխան, երկու բարաթ է հանեալ ի քէն ի վերայ մեր՝ երկու հազար ոսկւոյ, որ վերադրօքն լինի, երկու հազար եօթն հարիւր ոսկի, և լրբաբար գրեալ է մեզ թէ՝ հրամայեսցես շուտով հատուցանել մեզ և այլ ճառատանք. ահա անկարծ և անակնունելի հանդիպմունք և զարշելի յառաջադրութիւն և համարձակութիւն քոյ և լրբին, վասն զի ըստ վերոյ յիշեցելոյս, դու կամ վստահանալ պարտ էիր ի յառս քեցեալ արդիւնս քո և կամ գիտել պարտ էիր զկարողութիւն իմ ապա համարձակիլ ի վերայ իմ բարաթ տալ. և նա լիրբն՝ պարտ էր գիտել և ոչ տալ քեզ, որ դու իմ վէքիլ ես և ոչ աղայ. ո՞ իցես և ո՞ լուաւ որ վէքիլն ի վերայ աղային այսքան մեծամեծ բարաթ առնէ, մինչ աղայի բոլոր ինչքն է ի ձեռին իւրում, որ մինչ ոչ մայէն է հասուցեալ առ նա և ոչ շահն. ուստի դրեցի ի Հաշտարխան արտաքսել զնա, որպէս զմի ի խելագար յանզուգն լրբաց։ Վենետիկու ոսկի՝ յերեսս երկրին Ռուսաց ոչ գտանի, այլ ո՞ւր թողեալ է գնացեալ անտի ժողովեսցէ։ Եւ եթէ ոչ էր խաբեբայ և կեղծաւոր, վասն է՞ր ի Բաղդատու ոչ գրեաց մեզ, որ իմ պատասխանն անդ ստանայր, որ մերձ էր քեզ, որ զոնեա դրով ընդ քեզ խօսէր և եթէ տուեալ

էր քեզ ինչ. ի քէն ստանայր։ Ապա յայա է թէ խաբերայ էս։ Եւ ես զարմանք, որպէս լսեմ այլոց թղթոց յամենայն քաղաքաց ե ես ի թղթոց քոց, որ ի զուր դաւի մտեալ ընդ պարոն Սարգիս տէր Յովհաննիսեանին, զոր յառաջ յոյժ գովէիր և մեզ վէքիլ կարգել խոստանայիր և պարգեօք փառաւորել. այժմ զայնպիսի արժանաւոր այր՝ ի զատաստան ես մատնեալ յաղագս խոստմանց ի Ջին հանգուցեալ Մատթէոսին. ահա տես որդի՝ այդ մեր չէ գործ՝ զժողովուրդսն մատնել օտար ազգաց՝ ըստ խրատու առաքելոյն եղբայր եղբօր դատի և այն ի մէջ անհաւատից, զարմանայ առաքեալն. դատաւորքն թէպէտ քրիստոնեայք են, այլ այլասեռ են և անտեղեակ մերս ազգի կացութեան. վասն որոյ ոչ պարտիմք տալ նոցա պատճառ ճանաչել զմեզ կռուասէրս վասն զօշաքաղութեան որ չէ արժան, այլ զրկիլ ե պատիւ ազգին պահպանել, զի ես փողով ոչ առաքեցի զքեզ ի յերկիրդ՝ այլ մերկ՝ զոր ինչ նոքա հաւատով և սիրով տան, դու պարտիս իբրև զնուէր եկեղեցւոյ ընկալնուլ, որպէս զպտուղ հաւատոյ։ Իսկ յորոց կարծիս ունիս ադահելոյ՝ որպէս զպարոն Սարգսին վասն Մատթէոսին, ոչ եթէ յաշխարհական դատաստան մատնել, այլ ազգային յիրաւանց և բարի խղճմտանաւոր անձանց տալ քննել, որպէս ուսուցանէ քեզ Պօղոս։ Իսկ նոքա ստուգութեան բանին վերահասու լինելով տային քեզ բաւականութիւն որպէս քրիստոնեայ դատաւորք ի մէջ եղբայրութեան և ազգակցութեան ձերոյ։ Իսկ եթէ նոքա երեսպաշտութիւն առնէին ի մէջ յիրաւանց և անիրաւութեամբ զկողմն նորա պահէին ե զարդարութիւն խղճի կորուսանէին, յայնժամ և դու՝ ոչ ունէիր զյիրաւունս՝ կրկին ի դատ մտանելոյ՝ զի նոքա մինչ զբարի խիղճն կոբուսին վասն զքեզ զրկելոյ և զնա արդարացուցանելոյ, դու ես քոյ գրամն պարտէիր կորուսանել. զի նոցա հոգին անմահ է և անկորուստ, իսկ քոյդ գրամ կորստական և ապականելի ե անցաւոր։ Այլ եթէ դու բարի մտօք՝ որպէս ճշմարիտ աշակերտ Տեառն խոյս տուեալ ի խռովութենէ ի շփոթմանէ ե ի գայթակղութենէ, կարծեմ զի ե նոքա ոչ կորուսանէին զհոգիս իւրեանց և ոչ պակսեցուցանէին զխղճմտանս իւրեանց՝ ի վերայ արդար դատողութեան։ Բայց այժմ քոյդ ըսկսուածովքն երևի՝ ոչ քեզ է միացեալ պարկեշտութիւնն կարգի և ոչ նոցա միայ՝ հակառակն նորին։

Բայց ես քեզ գրեմ. ոչ են կամք իմ ի դոսա. այլ եթէ ի Քրիստոս հանգուցեալ Մատթէոսն մեզ խոստացեալ է ինչ ի վաստակոցն իւրոց՝ այն սակս է, զի յիշատակ նորա անմահ մնասցէ ի տպարանի մերում և ի դպրոցի և ի մէջ ազգին, ուրեմն որք զորկանօք կամիցին հատանել զանդարձս նորին, նոքա միան պարտական նորին աշխատանացն և ընդհանուր ազգի պայծառութեանցն որոյ վասն են խոստմունք բարեպաշտին։ Ուրեմն՝ զոր մեզ վէքիլ կարգէիր, պարտէիր նմա յանձնել ընդ երևելի իշխանաց քաղաքիդ և համոզմամբ խնդրել ի պարոն Սարգսէն չզրկել զհոգի նորա և զմեզ ի մ'ր մասնէն. ես ոչ կարծեմ, որ Պարոն Սարգիսն, ագահէր ինչ 'ի կայից հանգուցելոյն և ի մեր մասէն, որ է մասն ամենայն ազգին Հայոց։ Եւ եթէ նա ընդդէմ այսմ առնէր, մեզ ոչ ինչ էր փոյթ. հանգուցեալն իւր վարձն յամինատես աչացն Աստուծոյ ընկալնուլ ըստ քրիստոնէական հաւատոյն մերոյ. և մեք ընդ նմա՝ վասն համբերութեան մերոյ և տանելոյ զրկանացն։ Ուստի ըստ այսմ մասին լաւ է ինձ պատառ մի հեշտութեամբ, քան զբազումս անիրաւութեամբ ե լի երկւանօք։

Եւ եթէ տակաւին կաս ի խռովութեան, ոչ է հաճոյ ինձ. այլ ըստ վերոյ գրեցելոյս յանձնեա յԱստուած և ի բարի հաւատացեալս նորին ե զքեզ թօթափեալ ի խռովութեանց և ի գայթակղութեանց, փութա գալ առ մեզ։ Նոյնպէս և Աբդլմասեհի տունն, եթէ յօժարութեամբ ընծայեալ է և կամ ընծայէ, բարի է, և եթէ աստի գրութեան կարօտի, ես ոչ կարեմ և ոչ է իմ գործ ի դրունս տէրութեան գեգերել յաղագս անձնական օգտի, ուստի և առնա գրեցի զօրհութիւն և զշնորհակալութիւն, և ոչ եթէ զքոյդ դրութեանն. զի՞ է խաբէութեամբ կողոպտել զնոսա. մինչ նոքա հաւատով մատուցանեն մեզ՝ իբրև ընծայ Աստուծոյ։ Տեսի զթուղթն՝ որ է իմ ձեռնար-

կութեանն, այլ քոյ գիրն և իմ անուամբ հնարեալ կնիքն ի վերայ նորա զոր գրեալ ես առ Մովսէսն Առաքելեան իբր առաքեալ եմք առ նա զպատկեր մեր և զնշանն սուրբ։ Երբ գրեցեր և ետուր զգիր ապա զիա՞րդ ոչ ետուր ի նմա զխոստացեալ ընծայսն, միթէ խաբե՞լ կամեցար. և կամ մինչ ես առաքեցի, զիա՞րդ կարես դու արգելուլ, միթէ նոքա չե՞ն իմացեալ, որ դու կամեցեալ ես այնու զխաբէութիւն քո ցուցանել, որպէս տեսանեմք զգիրս նոցա, որք գրեալ են առ ազնիւ պարոն Փիլիպպոսն, և այժմ 'ի ձեռս իմ է։ Եթէ միւս թուղթքն իմ ես յայսպիսիս ես պիտոյացուցեալ, վատ ես արարեալ խղճի քոյ և պատուոյ իմոյ։

Գրեցեր թէ՝ այս ոռ այսքան ինչ էր և այլ ոռ այսքան, և այսքան ես խոստմունք զոյ, որպէս Նիկողոսինն որոյ յանուն գրքուկն ես տպեցաք, Մարտիրոսինն և Ծատուրեան Կարապետինն՝ որ այժմ հինգ գրով մեզ ծանուցանես թէ՝ ես տեսանելով զանյարմար զործս Տէր Ստեփանին, յորմէ բռնեցեալ ութ հազար ռուպի գրեալ էի և վեց հարիւր տուեալ. յայսմհետէ տալոյ չեմ։ Եթէ միւս կտակողքն ես սմա հետեւին տես դու՝ ոչ միայն զկորուստ աշխատանացդ՝ այլև ամօթն մեր։ Եւ այս յառաջացաւ վասն երից պատճառաց. Նախ երկար ձգալովդ ի վիճակի յայդր՝ որ երեք անգամ նուիրակ Աթոռոյ փոխեցան։ Երկրորդ՝ զկնի բազմաց նկատելով, զսակաւսն ես կորուսանես, և երրորդ՝ ի դատ մտանելովդ՝ զհոգիս ամենեցուն վիրաւորես։ Ահա դահալ տեսանէիր զպարոն Սարգսի ԴՌ (4000) ռուրին պարոն Գրիգորի հինգհազարն, պարոն Կարապետի ութհազարն եթէ՝ դու ի դատ չմտանէիր և շուտով առ մեզ գայիր, նախ ձեռնտու լինէիր մեզ՝ ի յամենայն սկսուածս մեր և ես այսպէս ողորմելի ոչ լինէի և պարտատէր. երկրորդ՝ տեսանելով զմեծ վաստակս քոյ և զբարի սերմունսդ՝ ի բարի ագարակս Լուսաւորչական, համարձակէի և զայլ ոք առաքել ի տեղի քոյ՝ որ զբարի սերմանելս ի քէն, նա հնձէր. միթէ մեք յաւիտենական եմք, որ դու կամիս այնքան ձգալ, որ զամենայն կտակեալսն ընկալնուս. թերևս դու մեռանիս, ում համարես պատճառ մահու քոյ, այլ քոյ յանգուգն ձգտումն։

Երկու իր՝ պարտ էին զքեզ փութացուցանել առ մեզ. նախ մեր յոյսն՝ որով սկսեալ էաք զրաղում ինչ առնել, որպէս ի Նախիջևան զվանքն որ շինեցի բազում ծախիւք՝ քոյ յուսովն, կառուցի ի նմա զյոլով խուցս, սեղանատունս, տպագրատունս, դպրոցս, գրքատունս, կազմարարութեան տունս և զայլս և լցի զնա միաբանիւք մինչև վեշտասան անձանց, սպասելով թէ՝ ըստ գրութեան քոյ՝ շուտով գալոց ես և ամենայն ինչ ըստ կարգի հաստատութիւն առնելոց է, այլ տեսի մինչ երկարես և նոր ի դատ ես մտեալ, թուլացայ ի զօրութենէ և թուլացան ամենայն սկսեալս. զի իմս վիճակի արդիւնք, ոչ էր բաւական կառավարել զայս մեծագոյն մարմին, մինչև զապարանն ի Հաշտարխան խաղացուցանել և անդ թագաւորական երկու հազար թուման պարտք ընկալնուլ և զսուրբ Աստուածածնայ շուրջ եղեալ տունսն առնուլ մինչև ի բերթն և անդ զմեծամեծս շինուածս առնել, յաղագս օգնութեան տպարանին. բայց այս ես կիսատ. զի բոլոր շինուածքն մինչև հինգ հազար թուման լինի, իսկ այսքանս պարտք ընկալնուլն չէր կարելի, վասն որոյ կարօտի քոյդ գալստեան և օգնութեան։ Եւ մինչ ի մետասան ամս՝ յաւուրս իմոյ կենդանութեան ոչ եկիր և ոչ յօգնութիւն առաքեցեր մեզ ի տրոցն օրհնեալ ժողովրդեան զոր յանուն մեր ցուցեալ են. այլ ինչ օգուտ ինձ յետ մահուս զալն քոյ՝ որ ոչ զիս յարուցանել կարէ քոյդ բերեալ գանձն և ոչ իմոյ յառաջադրութեանս օգնել։ Այլ Ձայ վասն քոյ՝ յաւիտենական խիղճ. ամօթ և դատապարտութիւն և ժողովրդեան գայթակղութիւն և փոշիմանութիւն ողորմութեանն իւրեանց։

Երկրորդ՝ պալտէիր մասածել, զոնևա զընտանիս քոյ և մանաւանդ մինչ լուար զաւերիլն մերոյ աշխարհին և զգերութիւն բնակչաց նորին. զամենայն հարկաւորութիւնս քոյ և զկնի նոցա փութալ. փրկութիւնն նոցա և կենդանութիւնն լաւ համարեալ քեզ, քան զամենայն գանձ Հնդկաց աշխարհին։ Այսու ես զանց արարեր՝ որպէս անգութ. ես չգիտեմ յի՞նչ միտս ես, որ ոչ

վասն իմ եղեր և ոչ վասն ընտանեացդ խղճալեաց. որք ոչ են և նոքա դեղեութիւն ինձ, այլ մեծ ծանրութիւն և մեծ ծախս արարեալ եմ ի վերայ նոցա թէ յառաջ քան զաւերութիւն աշխարհին մերոյ և թէ զկնի ազատելով զկինդ ի գերութենէ և բերելով ի Մօզդօկ, ուր այժմ ՚բնակի ի տուն Տէր Առաքել ղործակալին մերոյ։ Եւ յաղագս որդւոյդ՝ առաքեցի ընդ մեր պարոն Եսայի Աուլրաշեանին, ԵՃ (500) ալթմիշլուգ պարտիւք, տակաւին ոչ է դարձեալ առ մեզ և որդիդ՝ ի Թարվիզ առ Համազանցի մահտեսի Յովհաննէսն է. նա ես ոչ կամի տալ մինչ քոյ գալուստն թերևս աւելի ընկալցի. իսկ ողորմելի մայրն՝ զրկեալ յերկուց զաւակաց իւրոց՝ մղկտեալ տոչորի, որքան զու անգթութեամբ փողի հետևելով և ոչ փրկութեան նոցա։ Իսկ դուստրն քոյ՝ ի Ֆտոռաքաղէ, խնդրեալ եմ ի պարոն Մկրտում Գալսաեանէն, հրամայել Քոքպիկացն իւրոց հետեել և առնուլ. վասն նորա ես վաթսուն թուման խնդրեն։ Ահա զայսոսիկ ամենայն կերպարանէ առաջի աչաց քոց՝ զքոյդ արարք, զմերս կացութիւն և ընտանեացդ թշուառութիւն և մտիր ի ներքս խղճի քոյ թէ՝ արդեօք քոյդ արարեցեալքն են առն բարւոյ և կատարելոյ գործ. և անդէն հնազանդիլ իմոյ հրամանի և գրութեան, զամենայն թերի մնացեալ գործս քոյ յանձնեա վէքիլացն մերոց յամենայն ուրեք, ի բաց թողլով և զամենայն զաւիսդ զղուականս և զգայթակղեցուցիչս և եկ առ մեզ և առ ընտանիսն քոյ՝ զի որքան ինչ ժողովեալ ես, մեք նովաւ բաւական եմք. եթէ զսիրտս ժողովրդեանն բերցես ընդ քեզ։ Մինչև չեմ վերջացեալ ի կենցաղոյս, որ մեք մեր յառաջադրութեանն տամք կատարումն բարի վախճանաւ, և դու տեսանելով զյաջողութիւն վաստակոցն քոց, ուրախ աբասցես զխիղճ քոյ և վարձատրեսցիս այնու յԱստուծոյ և ի հօրէս քումմէ և փառաւորեսցիս ի ժողովրդենէ, որպէս բազմաշխատ մշակ։ Եւ թէպէտ արք բարիք, խնդրեն յինէն զոք առաքել ի տեղի քոյ՝ սակայն մեք երկայնամտութեամբ սպասեմք քոյոյ գալըստեան. զի զպտուղ նոցա ընկալեալ և զամենայն ինչ ստուգապէս գիտացեալ. և ապա եթէ իցէ արժան առաքել ոք, յայնժամ քոյդ գիտութեամբ առաքեսցուք և ոչ անկատար բանիւն։

Եւս զոր ինչ առ քեզ ի պատրաստի ունիցիս, պարտիս ուր և իցես՝ անդ տալ ի կանթօռ կամպանեաց հասուցանել աստ ի Պետրպօլք առ մեր հարազատ վէքիլ ազնիւ պարոն Փիլիպպոսն Մանուչարեան և կամ ի Մօսկով առ պարոն Աւետիքն Գալըստեան. և դու ի վերայ Բասրայու փութասցիս առ մեզ և առ ընտանիսն քոյ։

Մովսէս Խաչիկին և Սարգիս Տէր-Յովհաննէսին ես գրեցի՝ որպէս պատշաճն էր։ Կոնդակաւ ևս դրելոց եմ յամենայն ուրեք, որ եթէ յանուն մեր զոյ ինչ ի կտակս ուրուք և կամ կամաւոր խոստմունս վասն տպարանին և այլոց՝ ուր և կարգեալ իցես գործակալ, նոցա յանձնեսցեն, և նոքա գիտութեամբ երևելեացն իւրեանց՝ ուղևորեսցեն առ մեզ ի վերայ Բասրայու և կամ Պետրպօլքու ի ձեռն գործակալացն մերոց։ Դու ևս այսմ հետևելով ըստ այսմ արասցես՝ գրով և բանիւ։

Այս գիր ի Բասրայ առաքեցի ի ձեռն պարոն Վարդան Քալանթարեանին, երեսորին՝ ի մարտին ի վերայ Եւրոպիու ունիս ստանալ։

Գրեցի Կարապետ Ծատուրին զպատասխանիս թղթոցն իւրոց՝ և ի կամս իւր թողի, տալն և չտալն. զի մեք յիրաւունս ոչ ունիմք ի վերայ կամաւոր տրոց նորա. մինչ առ ինքն է՝ իւրով իշխանութեամբ է։

Մահտեսի Գալստեանն յանցեալ յօգոստոսին վախճանեալ է և ի տեղի նորա իւրն բանակատար, իւր աներ որդի պարոն Անդրէաս Մինասեանն է. է այր պատուական և բարի և նորին բանիցն կատարող, այլ եթէ Կորպնակայ բանն աւարտ եղիցի և ապրանքն մեզ հասանելի լինի, առաքեցից ի Ստամպօլ առ Շնորհք Մկրտիչ ամիրայն Ամիրջանեան։

Ի Լօնտօն Դաւիթ Շկօլ և Կամպանում պարտիմք մեք գիր ստանալ։ Աւաղ աշխատանաց քոց, որ զքեզ, զմեզ և զժողովուրդսն ձգեցեր ի խորին մտածութիւնս. և փոխանակ քաղցր բանին, զմեզ զինուորեցուցեր ընդդէմ միմեանց, վասն մամոնայի։ Եթէ այս գիր ևս ոչ ազդեաց քեզ, թողում

յայնժամ դատել քեզ ի քրիստոնէական խըղճէ քումմէ։

Համառօտ լուր վասն որպիսութեան երկրի մերոյ զամենայն անցս զալստեանն Կատածին [61] ի յաշխարհն մեր ի 1796 ե ի յունիսի 20 տպեալ առաքեցի ի կողմունսդ. ես զմեր գնալն ընդ զօրացն՝ վասն օգնութեան քրիստոնէից, մինչ ամենայն ինչ յաջողութեամբ յառաջ ընթանայր. ի նոյեմբերի 5, վախճանեցաւ մեծ մայրն մեր և զլուր մահուն՝ ի Գանիա լուաք, և անդ ազատեալ զբազում գերիս ե զդուստր Թագւորին մերոյ, և զԹագն Ղազար կաթողիկոսի ընդ մասնաւոր զգեստուց սրբոյ Աթոռոյն. գնացի ի Թիֆլիզ և տեսի զաւերութիւն նորա և լացի։ Գնացի և ի Սանահին և ի Հախբատ և տեսեալ մորմոքեցայ, գտի զբազում գրեանս ի Ցաջառանց այրն մեր [62] և զայլ գրեանս ի գերութեանց թափեցի։

Նորապսակն մեծ հրամայեց զօրացն յետ դառնալ, զի չկամեցաւ պատերազմունել ընդ ումեք. մեք ընդ զօրացն դարձաք և Վիրքն մնացին ի յողորմելութեան։ Կատածն պատրաստուեցաւ վերստին գալ ի Շուշի իւրոց ծառայիցն խողխողեցաւ ի յունիսի 6. Վիրքն և աշխարհ ամենայն թէպէտ զերծան ի նմանէ, այլ մասնաւոր բռնաւորքն զօրացեալ յամենայն ուրեք զնեղութիւնս հասուցանեն, իսկ սրբոյ Աթոռոյն ես առաւել։ Ազգն մեր որք ի Ղարաբաղ և ի Գանձայ էին ի սովու և ի գերութեան վերջացան և տեղիք նոցա, ամայի եղեն։ Մելիք Ջիմշիդն եկն ի Ռուսս, Մելիք Աբովն երեք հարիւր տամբ ի Շամքօր։ Արքայն ի մահիճս մահու Աթոռն նորա Դաւիթ աստ եէներալ. մեք ի տեսութիւն եկեալ թագաւորին ընկալաւ զմեզ ողորմութեամբ։ Մերքն ամենեքեան զքեզ ողջունեն և ես զօրհնութիւն իմ առաքելով առ քեզ,

Մնամ վասն քո աղօթարար՝
Յովսէփ Արքեպիսկոպոս

1798 յունվարի
ի Սանթբեդըրպուրղ.

Խնայեա մեզ և քո ընտանեացն Տէր Ստեփան, և փութացիր առ մեզ և զերծ զիս ի յայս տառապանաց ի ներքոյ որոց անկեալ կամ քոյդ յուսով, թերևս ի կատար հասուցուք ի կենդանութեան մերում։

ԾԳ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տէր Ստեփանին.

Արժանապատիւ աւագ քահ. տէր Ստեփաննոս.

Սիրեցեալ որդի մեր.

Յառաջ քան զայս քանի թղթովք թէ ի վերայ Եւրոպիայու և թէ ի վերայ Բասրայու զամենայն դառապելի զորպէսն մեր և զքոյոցն ես և որպէս ի Կոպնհակ առաքեցեալ ապրանացդ, դրեալ եմ մի ըստ միոջէ, յուսամ ընկալեալ տեղեկացեալ իցես։

Այժմ ըստ որում քեռորդին իմ ազնիւ Սիմոն Մաղաթոֆն գայր ի կողմունսդ, և ակն ունէի սմա զքեզ տեսանել. ոչ զանց արարի այսու թղթով, զհայրական օրհնութիւն իմ յիշել։ Յորմէ և զամենայն անցից մերոց ունիս լիովին տեղեկանալ, ըստ որում է ինքն գիր կենդանի, և ծանօթ բանիցն, զոր և խնամեսցես որպէս քոյ ընտանի, և քոյ որդի։

Օր աւուր սպասելով բարի լրոյ գալստեանդ.

Մնամ վասն քոյ աղօթարար
Յովսէփ Արքեպիսկոպոս

1898 մայիսի 16
Ի Սանկթպետրբուրղ.

ԾԳ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին.

Արժանապատիւ տէր Ստեփան աւ. քահանայ

Բազմաշխատ որդի մեր.

1796 դեկտեմբերի 25 գրեցեալ երկոքին Թուղթքն քոյ ես ընկալեալ եմ և գիտացեալ զդառնալի կացութիւնն քոյ. զպատասխանիս նոցին և զայլ ամենայն որպէսն մեր, զկամս և զպատուէր գրեալ քեզ, յայսմ թուոջն, յունվարի 15, յապրիլի մուան, մայիսի 15, յուլիսի մուտն և այս գիր. զորս ամենայն ի վերայ Բասրայու պարոն Վարդան Քալանթարեանի ձեռամբն քեզ պարտի հասանիլ։ Ընդ որս և առ զոմանս բարեկամս, առ Մարաին Մասէն. առ պարոն Ներսէսն և Դիօնիսիոսն, առ պարոն Սարգիսն և առ մեր տուն շինող և ազգի ճրագ Մովսէս Խաչիկն և առ այլս բազումս, յորոց ունիս տեղեկանալ։ Հաւասար գիտեմ, ի վերայ ոմանց ճշմարիտ գրեցելոցն մերոց, նեղանալոց ես. բայց եթէ ճշմարտութեամբ դատեսցես, ոչ երբէք նեղանաս, զի ես ունիմ առիթ նեղանալոյ։ Պատճառն՝ յուսով քոյ՝ զբազում գործս սկսայ առնել, և ի վախճանի մնացի ամօթով։

Ապրանքն անկատար դաշամբ առաքեալ ես ի Կորպնակ, և չես պայմանեալ, որ եթէ առաջնորդն և իւր վէքիլն ԽԲ (42) ռուփին չտան, երբ ըստ պայմանին ծախէք, մնացեալ ապրանքն ի Պօլիս ղրկէք, այս չէք արարեալ, վասն որոյ և նոքա թէպէտ տասնապատիկ իւրեանց ծախսն ընկալեալ են, այլ մնացելոցն յաղագաւ հրամանի սպասեն պարոն Սարգսին և մեր տուն շինող Մովսէս Խաչիկին։ Եւս նոցա մօտ գրաւական ունիս, 5 հակն և 2 սնդուղն պարտ էր որ նոքա այն 7 կտորն նախ ծախէին. եթէ ոչ լինէր բաւական իւրեանց պարտքին, ապա թէ զայլ հակներս բանային։

Իսկ նոքա 33 հակն և սնտուղն ընդդէմ պայմանի ձերոյ և սովորութեան բարի վաճառականաց, բոլորն են բացեալ, ոչ եթէ այնքան են ծախեալ որքան իւրեանց պարտքն է, այլ կրկին անգամ և այնքան աւելի խարճ են եդեալ, որ չէ կարելի տանիլն. թէպէտ հաշիւն ամենայն առ մեզ են առաքել Դաւիթ Ըշդօթ և Կանպանին. և դանդաքերս մտքեր. և կամպանին սակայն Ինկլիզերէն է շուտ ոչ լինի թարգմանել, որ կարիցէի քեզ առաքել։

Տէր Դաւիթն ես եկեալ ի Մոսկով, գրեցի գալ. բարի է եկեսցէ, որ ապրանքն չեն տալ մեզ, ուստի՞ պարտիմ տալ պարտքն սորա։ Որպէս երևի ի բանէն, մեք ես պարտիմք առ Կայսրն բողոքել ի վերայ կանպանից արարմանցն. տե՞ս թէ ո՞ւր հասանի հաշիւն. այժմ երեք հազար ոսկի է. մնացեալ ապրանքն եթէ ձեռ գայ, այն ես նորա պարտքն լցուցանէ. ո՞ւր է բազմադիմի աշխատանքն քոյ վասն իմ և վասն գերեցեալ ընտանեացդ, որք ոչ սակաւ են մեր տրտմութիւն։

Տես, եթէ դու իսկ երբ շատացեալ ըստ պատուիրանիս փօլիցով մեզ հասուցանէիր և կամ սակաւ սակաւ ի Բասրայ առաքէիր, ո՞չ լինէր մեզ այս անտանելի վնաս և ամօթս, որ բազում աշխատեցաք և կալաք ոչ ինչ. այլ միայն զզուր աշխատանս, զհոգս և զգրութիւնս։ Ո՞չ ծնանէր վասն մեր Մովսէս Խաչիկն ի մօրէ իւրմէ պահօղ չեղև ըստ Կայենի, այլ սպանօղ, ինքն դիան մի ոչ ետ. ոչ միայն ԺԲ (12) ամեայ զվաստակս քոյ և մեր վատնելոյ եղև պատճառ, այլև որք զխոստմունս ունէին, զնոսա ես փոշիման արար՝ որպէս Կարապետ Ծատուրեանն թունաւորեալ ի նմանէ թունաւորեաց և զնիկողոսն և զՄաքտիրոսն տէր Ստեփանեան, որք գրեալ են մեզ թէ այն ամենայն գրեցեալն տէր Ստեփանի առ քեզ, ես մեր գիրն սուտ է, զի նա դաւասէր է և այլն ամենայն։

Ահա տե՛ս թէ պարոն Սարգսի հետ դաւա առնելով ոչ ևթէ աշխատեալդ կորուսեր, այլ և զայնս՝ զորս ապագայն էիր պատրաստեալ վասն մեր. որքան նոքա յառաջ ջերմէին ի յանուն քոյ, այնքան այժմ հակառակն են, այլ այս ամենայն իժական թոյնն է Մովսէս Խաչիկի. Աստուած հատուսցէ իւրն։

Գիրաքեանն ես ի նմանէ այրեալ գնաց։ Որպէս և իցէ ընդ պարոն Սարգսին սի-

րով աւարտեալ բանն՝ յանձնեա իւր քրիստոնէական խղճմտանացն և մեր գործակալացն և դու եկ, ի յաղատումն մնացեալ ապրանացն և ի յօղնութիւն մեզ և խեղճ ընտանեացդ. զոր ինչ մնասցէ, մեք նոքօք րաւական եմք և շնորհակալ գքոյդ աշխատանացն և ջանիցն։

Յաղագս Մարտին Մասեհի տանն, ահա ի Թագաւորական ինօստրան Կոլեկիցն գիր առի ի վերայ խորհրդարանին Լօնդոնու և կառավարիչ մեծ նախարարին, գրել յայդր ում պատկանի, վասն հաստատութեան կտակի նորին։ Ահա զնոյն գրոյ ֆրանցուսերէն օրինակն ընդ հայերէն թարգմանութեան, մինն առ քեզ ուղևորեմ այսու և մինն առ պարոն Արդլմըսեհն դըրով պարոն Ներսէսին և պարոն Դիօնիսիոսին, կարծեմ հաւանիս, և եթէ տակաւին ի Կալկաթայ իցես, օգնելոց է քեզ ի յայն բանս, որ զարշ Մովսէսն զքէն չարարանեալ էր յառաջի իշխանացն նոցին։

Այժմ գիտելոց են նոքա զյառաջադըրութիւն մեր և զքոյդ փոխանորդ գոլն մեր։ Զոր արժանն է վասն այդմ եթէ այդր ես, հոգալոց ես ուր և պատկանի։

Որդւոյդ յաղագաւ Ծ (50) թուման ետու մեր պարոն Եսայուն և առաքեցի բերել. իսկ նա տակաւին ոչինչ գրէ, վասնորոյ ըստ ազեաց կիզման ողորմելի մօրն նորա, գրեցի ի Թիլֆիզ, Դիւան պարոն Աւետիքին յատուկ մարդ առաքել և քանի մի հարիւր ղըշ աւելի տալ և բերել։

Շուշանն ի Ֆարապատ է, յառաջ վաթսուն թումանով տային. այժմ հարիւր խնդրեն. գրեցի չխնայել, տալ և ազատել. որ ողորմելի մայրն նոցա միամտեսցի, որ այժմ ի Մօզդոկ տէր Առաքելի տանն է։

Թիլֆիզու որպէս յառաջ եմ գրեալ քեզ վասն զաւակացդ լեր միամիտ, բերից թէև խաչերս ծախեմ, այլ քեզ հարկ էր գոնէ սոցա գինն հասուցանէիր ինձ. այլ յուսամ, ըստ քոյդ դրելոյն՝ որ ի Նոյեմբերի, ելեալ իցես։ Այլ ոչ հաւատամ, զի բազում անգամ գրեցիր և ոչ եկիր։

Ուր և պատահեսցես յինէն օրհնութիւն քահանայից և ժողովրդեան. յաղագս Շահմիրի մահուն, գրեցի զմխիթարականս առ իւրսն, և վասն ի պահեստի եդեալ գրամոցն, որ ահա լրացաւ ժամանակն։ Զոր ինչ ևս ունիցիս ի վերայ Բասրայու առաքեսցես քսուր և փող։

Վասն քոյ միշտ աղօթարար
և փափաղող դալստեանդ՝
Յովսէփ Արքեպիսկոպոս

1798 յուլիսի 15
ի Սանկթպետրբուրգ.

ԾԵ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն ի պատասխանի երից թղթոց նորա ի Ղըզլարու, ի Հաշտարխանու եւ ի Պետրպօլսու գրեցելոց. եւ ազդարարութիւն թէ պատրաստեմք զնուիրակն։

Յորմէ սիրով և օրհնութեամբ և Քրիստոսաձիր ողջունիւ, և սրբոյ Իջման տեղւոյս նորին շնորհիւ ծանուցումն լիցի սիրելւոյդ մերում և հարազատ որդւոյդ սըրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ վայելչապատիւ արքեպիսկոպոսիդ։ Զի յետ թղթոյն մերոյ յանցեալ ամի յուլիսի վերջն գրեցելոյ՝ ոչ ևս եղև մեզ ձեռնհասութիւն զայլ ինչ թուղթ գրել քեզ, կամ այլում ումեք յայդկոյս։ Զի թէ այլ ևս զինչ նեղութիւնք և աշխատութիւնք և գլխացաւութիւնք հասին մեզ ի փոփոխութեանց իշխողաց երկրիս, և ի սովեալ աւազակ երկրացւոցս, մանաւանդ ի նոր շահի և ի նորին տնազորոյն զօրապետի գալոյն մինչև զՄօյ, և դարձեալ շփոթմամբ դառնալոյն և զմիմեամբք անցանելոյն, (յորոց մնաս առ ամենեսեան, իսկ օգուտ և ոչ մի). չկամիմ երկարել։ Քանզի յայս քանիս ամս ի զօր աշխատեցաք զայսպիսի զրկանս և զաւերս անզգամաց մրելով ի թուղթս, և օգնութիւն չունիմք յերկրածնաց, ապա ամենակալն Աստուած որ տեսանէ զամենայն, և կարէ առնել զոր ինչ և կամի, նա հոգասցէ յայց ելանել հանապազաբար վշտանկելոցս։ Իսկ ի սիրելւոյդ ի

Ղզլարու և ի Հաշտարխանու դրեալքդ յառաջագոյն հասեալ, ի Պետրպօլքու ի մայիսի 20, դրեալ թուղթդ ևս յօգոստոսի վերջն էհաս։ Եւ զի ծանուցեալ էիր զբարձրագահ և ողորմածագոյն Մեծի Կայսեր ընդունելն զթուղթն մեր՝ և զողորմութեան հրովարտակ շնորհելն հանդերձ պարգեօք, մխիթարեցեալ ուրախացաք և գոհացաք զԱստուծոյ, և աղօթեմք միշտ վասն հասարակաշահ կենաց գերախնամ և օգոստափառ Մեծի Կայսերն և մեծամեծացն։ Եւ զքէն և զազնուական պայծառ իշխան Աղայ Յովհաննէսէն ևս շնորհակալ եմք յաղագս հոգատարութեան ձերոյ, զորս տէր զօրացուսցէ։ Բայց զոր գրեալ ես թէ ի մարտին թուղթ եմ գրեալ. և ծանուցեալ զայս, և զօրինակս հրովարտակացն կայսերականաց, և զանուանս նորայնոցն յղեալ եմ, այնք մեզ չեն հասեալ։

Ապա որ գրես թէ՝ կրկին ընդ այս թղթոյս յգեցի, դիտասցես. զի թուղթն քո որ քոյդ պահարանով և կնքով պարտիւր մեզ հասանիլ, թարց պահարանի մերկ եղեալ էին ի թղթոջ մեր Թադէոս վարդապետին և այնպէս յուղարկեալ, որ չե ևս հասեալ առ մեզ, զլուր իրացն բազմապատիկ աղճատանօք ի ցոփ մարդկանց լսէաք։ Ընդ նմա դոյր մի միայն օրինակն առ դեսպանն Պօլսոյ գրեցեալ հրովարտակին. (որոյ յոյսն և երկիւղն ևս կշռելի է առ անդանօր եղեալ մերազունսն, եթէ բանն ի վեր ելցէ առ ազարտծինսն). բայց օրինակք միւսոյ նամոսին որ ըստ խնդրոյն մերոյ, կամ վէզիրի առ մեզ գրեալ պատասխանւոյն, կամ նշանակութիւնք անուանցն կայսերազանց ոչ գոյր, յայտ է թէ ի Վիրս բացեալ են ըզպահարան թղթոյդ և զայնոսիկ յայլս տարածեալ և կորուսեալ։ Արդ՝ քանզի գրեալ ես թէ՝ զիսկսն ընդունելոյ ոչ է սպասելի, այլ փութով շնորհակալութեան թուղթսն առաքելի, թէպէտև մեք յօժար էաք հոգալոյ և յուղարկելոյ, բայց ոչ զիսկսն տեսաք և ոչ զօրինակսն, մինչ ապաքէն դու սիրելիդ ես ծանուցեալ զնոցին նըբազննին և հետախոյզ լինելն բանից, ապա անտեղեկարար հարևանցօրէն զիարդ լինի բանս գրել առ նոսա և տալ զտեղի կարծեաց։ Իսկ զի նուիրակ էիր խնդրեալ յատկապէս վասն գործոյ նուիրակութեանն, և մեք հաճեցաք, և մինչև ցարդ ձեռնհասութիւն չունեւոմ յաղագս ազդի ազգի նեղութեանց, և հոգոց, այժմ կամիմք պատրաստել, ընդ որում դրեւոց եմք զթուղթսն զորս խընդրեալ էիր առ Հաշտարխանու գուբէռնաթօրն և առ արքեպիսկոպոսն, և առ Իւան Գուգօվիչ զօրապետն, շնորհակալութիւն վասն սիրոյն իւրեանց առ քեզ, և խնամոցն սը առ մեբայինսդ, և յանձնարարութիւն կրկին, և վասն նուիրակին ևս յիշումն։ Ընդ որս և առ Ազնիւ աղայ Յովհաննէսն, ևս առ եղբարսն նորա և առ այլս ոմանս, և առ պ. Մկրտումն, և կոնդակք առ Նոր Նախչուանցիսն և Ղզլարցիսն, և առ ի Դարբանդու եկեալ ժողովուրդն ըստ նշանակեալ խնդրոցդ։ Այլ և զրանի թուղթսն զորս խնդրեալ ես ի վերայ ոմանց ի Ղզլար վասն հոգեբաժնից և յիշատակաց, և առ Բաքուայ գանձապետն մեր վասն ազատեալ անգլուխ գաւազանին։ Զայսոսիկ և զայլ այսպիսի թուղթս երբ ի գլուխ բերցուք, ընդ նուիրակին առաքելոց եմք, որ թէ ի Հաշտարխան, կամ ի մերձակայսն գտանիցէ զքեզ, ի միասին հասուսջիք զթուղթսն յիւրաքանչիւր տեղիս, և զթարգմանելիսն թարգմանել տաջիք, և այնպէս մատուսջիք։ Բայց աստուածապսակեալ Մեծի Կայսեր և վէզիրի և այլ խորհրդական իշխանաց թուղթքն հարևանցօրէն գրել ոչ լինելով, մեան մինչև ի յղելն քո օրինակս թղթոցն և պարգևացն։ Եւ յաղագս այսորիկ այժմոյս գրեցաք զայս թուղթ առ սիրելիդ մեր, զի նախագէտ լինիցիս զգալոյ նուիրակին, մանաւանդ դիտելով թէ յուղարկեալ օրինակքդ կայսերական նամակին և այլոց՝ մեզ չեն հասեալ, փութասցիս նորապէս յուղարկել զգուշութեամբ ըստ ուղիղ թարգմանութեանցն, այլ և զանուանս կայսերուհւոյն և կայսերազանցն, թէ որպէս վայելուչք իցեն գրել, նաև զօրինակս պնակին և կտոբիցն ևս նկարեցուցեալ ի թղթի ըստ ամենայն հանգամանացն՝ յղեսցես, զի տեսանելով զբանսն նամակացն և զորպիսութիւնս իրացն՝ տեղեկարար գբեսցուք զարժանի շնորհակալութիւնսն, զի անպախարակելի և ուղիղ լիցին բանքն մեր։ Այլ և գրեսցես ի Վիրս՝

առ որս առաքես զԹուղԹսդ, չբանալ ղպահարանս Թղթոցն մերոց, յորմէ յառաջանան վնասք արեան չափք. այլ անբաց և զգուշութեամբ և հաւատարիմ մարդովք յղեսցեն առ մեզ, զի կասկածանքն ոչ են պակասեալ աստ և ի կողմունքս։ Այսքան առ այս բաւ է աստանօր, և զայլն որ յաղագս յիշեալ իբացն զգուշութեամբ հասուցանելոյ, ընդ նուիրակին դրելոց եմք։ ԶԳաղղիացւոցն զօրանալոյ ի Յունաստանէ և'ս հնչի, և ես Թէ՝ Եգիպտոսի ես տիրեալ իցեն. որով և Գազեստինացիք կարի իմն վրդովեալք լսին, և արքայանիստն աղարացւոց խռովեալ։ Այլ զաղանդոյ նոցա՝ կամ զքաղաքական ծիսիցն ոչինչ ստուգիւ լսեմք յումեքէ. եԹէ յայդր գոյ հաւաստի ինչ զայնցանէ, խընդրեմք ազդ առնել։ Այլ և Աւետիք վարդապետն ահա աւելի քան զեօԹն տարի եղև որ գնաց ի ժողովումն գանձանակադրամիցն և ի նուիրակուԹիւն Գիլանայ, և վասն վրդովմանցն կողմանցս եկեալ է ի Հաշտարխան, չդիտեմք յինչ բանի է և յոր դիտման։ Արդ՝ եԹէ գանձանակադրամքն ամենայն, և եԹէ Գիլանու նուիրակուԹեան և առաջնորդական հասոյԹքն, և Թէ օգնուԹենական և այլ ամենայն արդիւնքն յանուն սրբոյ ԱԹոռոյս առ ինքն է, որ ոչ դրամ մի է հասուցեալ, և ոչ գիր ինչ գրեալ մեզ. հարկիւ գրեմք սիրելւոյդ զի վերահասու լիցիս բանից և դիտման դորին, և հարկեսցես ղորպիսուԹիւնն իւր դրել մեզ. և խելամուտ արասցես զարդիւնսն առնուլ և զառնալ ի սուրբ ԱԹոռս, զի Թէ յայս պակասուԹեանցս ժամանակի՝ ոչ հոգայցէ յօգնուԹիւն հասանիլ սրբոյ Տանս, այլ յորում ժամանակի է պիտոյանալոց, կամ Թէ մինչ յԹրր պարտի արտաքոյ աստանդական տատանիլ, ոչ բարւոք առնէ զոր առնէ։ Ուրեմն՝ բաւական համարեսցի զյամելն, և փուԹասցի գալ։ Այսքան ևս առ այս շատ լիցի։ Զայլ ինչ գրելիս յետոյ Թողլով, այժմ աւարտ տամք գրուԹեանս։ Ո'ղջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի Տեառն 1798. և ի հոկտեմբերի 18, ի սուրբ ԱԹոռս Էջմիածին։

ծ.Զ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Տ. Ստեփանին.

Արժանապատիւ տէր Ստեփաննոս աւ. քահանայ Սիրնցեալ որդի մեր.

Յետին գիրն քո առ մեզ՝ է գրեցեալ, ի քէն ի Կալկաթայ 1796 ամին, և ի դեկտեմբերի 25, մինն ի վերայ Բասրայու, և մինն ի վերայ Եւրոպիու, ի Կոպընհակու Գանդցֆէլդ և Կամպանւոյն, ստացւոյ ի մարտի 5, և ի յօգոստոսին, պատասխան սոցա՝ ի վերայ Բասրայու դրեալ եմ քեզ. բաց ի առաջին գրեցելոյս առ քեզ ես ունիմ աստի գրեալ, ի վերայ Բասրայու առ քեզ, և առ զանազան անձինս, ոմանց որոց զու ես դրեալ, իսկ այլոց ոմանց՝ որոց մեք գրեալ, ի յանցեալ դեկտեմբերին, յունվարին, յայսմ ամի՝ մարտին, ապրիլին, յունիսին, յուլիսին, յօգոստոսին և սեպտեմբերին, և վերջին գիրն ևս, ի յայսմ նոյեմբերի մէկին, ի յորս զոն բազում բանք և որպէսուԹիւնք, զոմանս առ պարոն Վարզանն, և զոմանս առ նա, և առ պարոն ՅարուԹիւն Սահակ Աղաջանենց. ի միասին առաքեալ եմ նոցա, և խնդրեալ՝ հարազատուԹեամբ քեզ առաքել, ըստ որում զտի գիր ի միոյ բարեկամէ, որ քո գիրն կալեալ, առ որ դրեալ և ունիս, և վասն այսմ ոչ երկարեմ, այլ տամ քեզ համառօտ ծանօԹուԹիւն՝ վասն ամենից։

Ունիս զու՝ ի սոյն յանցեալ մարտի 8-ըն դրեալ առ պարոն ԴաւիԹ ՇկօԹ և Կամպանին, ևս առ պարոն Գանդցֆէլդ և Կամպանին, որ եԹէ մեք՝ կամ գործակալն մեր, ոչ իցեմք ստացեալ զմնացորդս ապրանացն այնոսիկ, յայնպիսի հանդիպմանն՝ առաքեսցեն ի Պօլիս՝ առ մահտեսի Գալըստեանն, որոյ հայերէն Թղթովն՝ ամենայնի տան մեզ ծանօԹուԹիւն, ահա նոցա Թըղթոյ ԹարգմանուԹիւնն՝ ուղևորեմ առ քեզ, գիտել, որ Թարց քոյ գրուԹեանն, Թէև հաւուցեալ իցէաք Մովսէս Խաչիկի գրամն, և այլ առաքեցեալ պարտքն քոյ, այլ ապրանքըն տակաւին մնայր առ նոսա՝ ըստ դաշնադրուԹեան քոյ մինչև ցայժմ, որպէս գիր նոցա յայտ առնէ, ևս ի 1795 Թուէն,

և յունիսի 6-էն գրեալսդ առ Նոսա, թէ այս ապրանք մնասցէ առ ձեզ, մինչև իմ գալն, կամ գրելն՝ առ ձեզ. ուրեմն մի լինիր մեղադիր մեզ, որ մեք զպարտս ոչ հատուցաք, զի ի պարտուցն այնմիկ վճարման. մեծ վնաս ունէր յառաջանալ մեզ, և զմնացորդս ես, եթէ Նոքա ոչ տան, որպէս ընկալնուցուք զի ահա 14 ամիս է, որ մեք տանջիմք, իսկ Նոքա ըստ կարգի վաճառականաց, ըստ օրինի պատասխանէին մեզ. որ թարց գրոյ քոյ, ոչ կարեն տալ մեզ։

Բայց մինչ Տէր-Դաւիթն եկն, Նեղեալ ի գերեաց իւրոց, իւր տուեցեալն խնդրէր, և մէկ ոչ էաք տէր առաքեցեալ ապրանացն այն, ըստ դաշնագրութեան քոյ, բացասէաք նմա, այլ նա ստիպեալ ի յաղքատութենէ իւրմէ, ոչ իւիք անսայր իրաւանց, մինչև հարկադրեալ եղաք, ըստ ամենայն իրաւանց և ըստ զօրութեան զանազան թղթոցդ առ մեզ գրեցելոց, բողոքել առ Թագաւորական ինօսարաննի կալէգն, դրել ի Լօնդօն՝ ուժ հարկ իցէ ծանուցանել կամպանեացն, որ մեք տէր եմք այնմ ապրանաց՝ ըստ զօրութեան թղթոյն քոյ և սանաթացն տուեցելոցն ի քէն Տէր Դաւթին։

Բայց մինչ տակաւին զպատասխան Կալէգին ոչ ստացեալ մեք, գիր քոյ վաղվաղեալ է առ Նոսա, յայնժամ և Նոքա՝ զմեզ տէր ճանաչելով, ահա արձակեալ են, որպէս տեսանես ի գիրս Նոցա, և մեք վաղվաղելով պատասխանել ձեզ՝ և միամտեցուցանել, ի յընկալնուլս՝ Տէր Դաւթի բաւականութիւն տալով, ջանացից որ եթէ հնար իցէ՝ զմնացորդս ապրանաց՝ առաքել ի Պօլիս, առ պարոն Անդրէաս Մինասն, որ է աներձագ մահտեսի Գալստեանին, որ յանցեալ ամին վախճանեալ է, բայց աներձագն է բանակատար Նորին և մեր, լաւ բանական անձն է, որ նա ըստ պատուիրի քում յառաջին և յետին թղթոցդ՝ հետևեսցի վաճառել. ապրանաց աստ բերելն է շահաւէտ, յայսմ խառնակ միջոցի, յաղագս ահի Ֆռանսուզացն, և յաղագս մաքսին հոգալոյ ունիմ, զոր յետոյ գրեցից, յորժամ ստացայց և կամ կարելի է տեղս ծախել։

Տացէ Տէր՝ որ ընդ պարոն Սարգսին՝ կատարեալ հաշտութիւն իցես արարեալ, զի զանազան բանս գրեն մեզ, և զհոգիս զառնացուցանեն. ես ի տեսանելն զգիր պարոն Սարգսին, առ ոմանս գրեցեալս վասն քոյ, առ որ մեք ըստ կարգի պատասխանեցաք։ Աբգլմսեհի տան յաղագաւ, կալէգն գրեաց ի Լօնդօն, դրել ի Կալկաթայ Կօրտին՝ պահել հաստատուն զկտակեալս Նորին, որոյ ֆռանկսզերէն և հայերէնն առաքեալ եմ առ քեզ և առ Նա. այժմ ես ուղեորեմ զիտել և միամտիլ, յուսալով յԱստուած՝ և հաւատալով գրութեան քում, ոչ ես երկարեմ ինչ զմէնջ, և զգործոց քոյ, տացէ Տէր որ՝ յաջող եկեսցես, զամենայն ինչ ընդ միմեանս խօսեսցուք։ Ես չունիմ զոք առաքելոյ ի Հնդիկս, առանց քեզ, որպէս և դու լուեալ ես, և վիրաւորեալ գրես մեզ։

Թինաթինն առողջութեամբ ի Մօզդօկ է, յաղագս Աստուածատուրին, քանիցս փող եմ առաքեալ ի Թարվէզ, որ ազատեն և բերեն, այլ մահտեսի Ցովհաննէսն, ոչ տայ. մեր Եսայուն՝ հինգ հարիւր ալթմիշլուգ ետու և առաքեցի, և նա ունայն դարձաւ, գրեալ եմ Սրբազան Կաթողիկոսին, որ մի անգամ զոր ինչ խնդրէ Նա՝ աւելի քան զհարիւր թուման տայ, ազատէ և մեզ զարկէ. սպասեմ այսմ պատասխանւոյ։ Շուշանն ի Ֆահրապատ է. յառաջ վաթսուն թուման խնդրէին, այժմ հարիւր խնդրեն, վասն այսմ ես երեք չորս անձանց հաւատարմութիւն եմ տուեալ առնուլ և առաքել. ես փող ոչ խնայեմ վասն Նոցա, ապա զինչ արարից, որ խառնակութիւնք երկրին ոչ թուլատրեն յառաջանալ բանից։ Արքայն վախճանեցաւ. այժմ Դեօրկին թագաւոր է. երկիրն աւեր և քօչաքօչ վասն ժանտախտին։ Մերայինքն..

Ես երկու ինչ էի գրեալ Կամպանոյն. Նախ յաղագս ապրանացն որ Նոքա պարտ էին զմեր հակսն ծախել և ապա զմիւս հակսն բանալ։ Երկրորդ՝ կամաւոր ծախս չառնել, այլ Նոցին պատասխանն տեսանես։

Եթէ տէր Դաւիթն ընդ ապրանացն առաքէիր, այսքան վնաս ոչ պատահէր մեզ։ Եւս պանտրախտին լաւ վերահասու եղած չես, որպէս և համեմատ Նմին 95 էն և Ցունիսի 6-էն գրած թղթոցդ առ Նոսա վասն արգելման ապրանացն մինչև քոյ գալն և կամ կրկին հրաման գրելդ։ Ուրեմն մի զմեզ մեղադրէր, և ոչ մեք քեզ, զի այսպէս է պատահեալ մեզ՝ վիճակի մերում, ես շնոր-

հակալ եմ զաշխատանացդ ղրանիցդ և զքրտանցդ և օրհնեալ ժողովրդեան արոցն՝ Յորժամ ընկալնում ինչ կերպ կարգադրելն իսկոյն տամ քեզ գիտել։ Այլ արասցէ Տէր որ ոյս թուղթ ի յեւրոպիայ ընկալցիս։ Աստուած սիրես բաւ է. եկ և մի յամենար՝ զի որքան. և կայ ես այնու բաւական եմ։

Մերքն ամենեքեան զքեզ ողջունեն ընդ Տէր Դաւիթին և պարոն Փիլիպպոս Մանուչարեանին և ես օրհնութիւն տամ քահայնայից և ժողովրրդեան ուր և իցես։

Վասն քոյ ի սրտէ աղօթարար

Յովսէփ Արքեպիսկոպոս

1798 դեկտեմբերի 20.
ի Սանկթ-Պետրբուրգ.

Կրկին անգամ 1799 փետրուար 15 ի Պետրբուրգ

ԾԼ. Կցորդ թղթոյն Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն գրեցելոյ յայսմ ամի ի նոյեմբերի 18. Եւ որովհետեւ միանգամ յղելն մեր՝ անկեալ էր ի ձեռս լէզկեաց եւ կորուսեալ. վասն որոյ կրկին գրեալ զնոյն, զայս քան ինչ եւս կցորդեցաք նմա։

Դարձեալ ծանիր սիրելիդ մեր զի վերոյ դրեցեալդ՝ ի ցուցեալ ամսաթուին՝ հանգերձ թղթով միով առ քոյդ եղբօր որդի պ. Սողոմոնն, ի միում պահարանի փակեալ յանձնեցաք Բամբկաձորու Մէլիք Շաքարոյին՝ հասուցանել առ պարոն Սողոմոնն, զի և նա զքոյն առ քեզ յուղարկեսցէ։ Եւ մինչ յուսով էաք թէ առ քեզ իցէ ուղևորեցեալ թուղթն քո, այժմոյս յիշեալ Մէլիք Շաքարօն կրկին եկեալ ի սուրբ Աթոռս պատմեաց թէ ի Շուլաւեր լէզկիքն յափշտակեալ են զթէմբելեթն իւր, և թուղթքն ես անդ գալով ի կորուստ են մատնեցեալք։ Ընդ որ ոչ սակաւ տխրեցաք, և ապա զթուղթդ վերստին գրեալ ահա առաքեմք առ ի գիտել զինչ դիտմունսն մեր յայնժամ։ Իսկ զի խոստացեալ եմք զնուիրակն պատրաստել և առաքել, յիրաւի՝ հետևաբար ձեռնարկեցաք ի պատրաստութիւնն. գրեցուցեալ զկոնդակսն, և զքանի թուղթս յանձնարարութեան առ Հաշտարխանու գուբեռնաթօրն և աքեպիսկոպոսն, և առ այլս, և զքանիս ես ի թղթոցն շնորհակալութեան որ վասն տրոց և յիշատակաց, և մինչդեռ մնացեալսն ևս ունէաք ի գլուխ բերել, ձախորդութիւնք ելին ընդ առաջ, և հիւանդութիւն ի շողահարութենէ ամարայնոյ դիպեալ մեզ՝ սաստկացաւ և տագնապեցոյց մինչ ի նոյեմբերի վերջին աւուրսն. թէպէտ ողորմութեամբ Տեառն յայսմ ամսոյ առողջացաք, բայց ձմեռն ի վերայ ժամանեալ, և ճանապարհքն սառնասառոյցք արգելս ետուն առաջադրութեանն մերում։ Եւ սակայն յուսամք յԱստուած յառաջիկայս յաջողել մեզ լրացուցանել զմնացորդ գրելիսն ևս, և ի դիտել ճանապարհացն ուղևորել զնուիրակն։ Այլ սիրելիդ՝ զկայսերական նամակի և զայլոց զիսկսն՝ կամ զստոյգ օրինակսն փութով յուղարկել ջանասցես, որպէս ի վերոյ գրեալ եմք։ Կողմանցս վշտալի կացութիւնքն ևս այսպէս են. և յանՇահէն ոչինչ օգուտ, այլ վնասք։ Յոլոց փրկեալ գտանել՝ ի խնամս Տեառն ապաւինիմք։

Իսկ արդ՝ է և հարկաւոր բան ինչ, զոր ուրիշ թղթով երկարապէս պարտէաք գրել, սակայն դէպ եղև այժմ սատանօր համառօտել։ Քանզի այն թիֆլիղեցի Ստեփան երեցն՝ զոր առաքեալ ես ի Հնդիկս, ի նմանէ ոմանք բարեպաշտ և խոհական անձինք վնասս կրելով գանգատ են գրեալ զսաահակութենէ նորին։ Շատ էր նմա զհանգուցեալ Տէր Յարութիւն քահանայի զսկսեալ ժողովարարութիւնն լրացուցանել, և շուտով դառնալ, այլ այնքան յետացաւ որ զայնպիսի հոտս բուրեցոյց, և թէ յիւրեանց բուն տեղւոջն աղքատութեամբ իսկ չկարեն հանդարտիլ, զիմրդ յօտար երկրի յղփութեամբ կացցեն ի չափու և ի կարգի իւրեանց։ Արդ՝ եթէ ի մինչև ցայժմ յամելն զայնպիսի յանդգնութիւնս եցոյց, այսուհետև ևս թէ մնայցէ, առաւել քան զայնս գործելոց է, ածելով զնախատինս ազգի, և զամօթ անուան քոյ և մեր։ Ուրեմն գրեմ սիրելւոյդ՝ խոհեմութեամբ քո ի սակաւուս զշատն իմանալ և անյապաղ դարձուցանել զնա անտի. զորպիսայայտ զիրդ չպակասեցուցանելով՝ ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի Տեառն 1798 ի դեկտ. ելն։

1799

ԾԲ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Ռուսաց երկրի մեծազնէից առաջնորդ Յովսէփ վրդ. ընդ նոր նուիրակ… վարդապետին յիշումն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ առ սա, եւ յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակին։

Ցորմէ սիրով և օրհնութեամբ բազմաւ, Քրիստոսաձիր ողջունիւ խաղաղականաւ, և սրբոյ իջման տեղւոյս Նորին մեծազօր շնորհիւ ծանիր բարեմիտ սիրելիդ մեր՝ հարազատ ե աշխատակիր որդի սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփ Աստուածաբան վարդապետ ե Արհի եպիսկոպոս։ Զի յանցելում ամին ի հոկտեմբերի 18, թուղթ դրեալ առ քեզ ի պատասխանի երից թղթոցն քոց, ե յանձնեալ մէլիք Շաքարոյին՝ տանել ի Թիֆլիս առ եղբօրորդին քոյ. մինչ յուսով էաք յաւուրս բազումս իբր թէ՝ ի Թիֆլիզ իցէ հասեալ, ե անդուստ առ քեզ յուղարկեցեալ, պ. Շաքարօն ի դեկտեմբերին վերստին եկն աստ՝ և պատմեաց թէ թուղթքն մեր ընդ իւր իրացն ի Շուլաւեր յափշտակեցեալք են ի լեզկեաց և անհեա եղալք։ Ապա կրկին դրեալ զայն, յաւելլով և զծանուցումն անցից կորուսելոյն, յղեցաք ի դեկտեմբերի վերջն առ պ. Սօլօմօնն՝ հասուցանել առ քեզ, որ ի հարկէ քան զայս վաղապէս հասանի, ե յայտնի լինի քեզ զառաջագրութիւն մեր՝ յուղարկելոյ զնուիրակն ըստ խնդրոյն քոյ դրեցելոյ։ Եւ որպէս դրեալն եմք յայնժամ, թէպէտև յոլով ձախորդութիւնք ելին ընդ առաջ՝ հանդերձ զանազան զբաղեցուցիչ յոգօք, բայց որպէս ե իցէ, թէ զքոյդ խնդրեալսն, և թէ ի մէնջ պատեհ համարեալ զթուղթսն գրեցուցաք, և զհոգեոր որդին մեր ե սիրելին քո զ…

… բարեբարոյ վարդապետն ե զարքեպիսկոպոսն առաքեցաք։ Իսկ թուղթն քո որ ի Հաշտարխանու՝ նշանակեալ էիր զկոնդակ գրել ի վերայ բոլոր երկրիդ մերայնոց՝ զդիպուածսն մեր առաջի առնլով հանդերձ ազատութեամբն գահիս ի վերջին վտանգից. զի առ այն մխիթարեսցին, ե առ պակասութիւնսն օգնութիւն արասցեն։ Վասն որոյ ահա թող զհասարակ կոնդակն՝ և զՊետրպօլքու ե Մոսկովու կոնդակն՝ որք վասն նուիրակութեան, գրեցաք ե զայլ կոնդակ մի պատմութեան անցից մերոց, խնդրելով զյատկապէս օգնութիւն։ Եւ թէպէտ ցուցեալ էիր զպատուիրանս գրել առ հասարակութիւն իսկ, սակայն՝ յայնմ կոնդակի յարմար չվարկաք. զի ոմանց ոմանց թերևս գժուարընկալութիւն լինիւր։ Այլ ի կոնդակն Նախջուանու՝ և Ղզլարու և Մօզդօքու, գրեցաք զայնպիսի պատուէր։ Եւ Հաշտարխանու քահանայից և իշխանացն միայն սակաւ մի յանդիմանութիւն յաղագս ցուրտ երևելոյն առ մեզ։ Գիտեմք զի պիտոյ էր լինել և Ղրիմու և Գրիգորուպօլու յատուկ կոնդակք, սակայն չունիմք ներկայապէս տեղեկութիւն զօրպիսութեանց նոցա, յորժամ սիրելիդ և նուիրակն դրիցէք մեզ վնոցանէ թէ յի՞նչ կացութեան են, և զի՞նչ առնեն, յայնժամ ըստ պատշաճի նոցա կամ զուրախակցութեան՝ կամ զմխիթարական բանս գրեսցուք։ Իսկ մեծազօր կայսեր հրովարտակին կամ օրինակին մինչև ցայժմ սպասեալ զեռ ոչ ընկալաք, այն զոր գրեալ էիր ծ̃ե յղեցի՝ հանդերձ անուամբք կայսերազանց, ի Թիֆլիզ բացեալ էին, և մեզ ոչ հասին, այլ սակս առաջին թղթոյն գրեցաք քեզ, կրկին յուղարկել, որք երբ

հասցին, և վերծանեսցուք զբանսն, յայնժամ ըստ բանիցն գրեսցուք զշնորհակալութիւնսն թէ առ ողորմածաղունեղ Կայսրն, և թէ առ այլ գործակալսն։ Յաղագս ի Ղզլար մահտեսի Աղամայ որդւոյ նուիրեալ Բ արծաթեայ Պատկերացն, և այլ երից անձանց տուեալ շտօֆայ գոգնոցին, և աթլաս շուրջառին և խարայի շապկին, որ զայդ թուղթս էիր խնդրեալ՝ յղել ի ձեռն գործակալ Տէր Մինաս աւագ քահանային, ահա գրեցաք և Տէր Մինասին և՛ս թուղթ, բայց զյիշատակաց թուղթսն տուեալ եմք Նուիրակին, որ ի գնալն ի Ղզլար տալով զթուղթս քահանային, եթէ ընկալցի զյիշատակսն, զնոցա թուղթսն ես տացէ. և թէ ոչ, բերցէ առ քեզ։ Իսկ թուղթն որ առ Նազարն Մամուկեան և առ դուստրն նորա յաղագս վախճանեալ փեսային իւրեանց մահտեսի Գրիգորի յիսուն թումանին, իբր կտակի նորին, որ յանցեալ մայիսի աբիլ պարտիւր, և թուղթն որ առ գանձապետ Մանկասարն սարդարին, սակս վախճանեալ թոռին իւրոյ Ծաղիկին, և առն նորա Գրիգորին Ժ թուման հոգեբաժնիցն, զայս Բ թուղթքըս ընդ թղթոյս քոյղեցաք առ սիրելիդ, զի տուեալ իւրաքանչիւր տեարցն, զայս Բ թուղթքս ընդ թղթոյս քոյ յղեցուք առ սիրելիդ, զի տուեալ իւրաքանչիւր տեարցն, և զպրամսն առ մեզ հասուսցես։ Նաև առ Բաքուայ գանձապետ Աբրահամ Գիւրկինեան վասն ազատեալ անգլուխ դաւազանին որպէս խնդրեալ էիր զթուղթն այնպէս գրեալ զայն ևս յղեցաք առ քեզ՝ հասուցանել նմա, որ թէ նորոգել կամիցի զգաւազանն, ծանուցանելոց ես մեզ, և կրկին շնորհակալ լինելոց եմք։ Եւ արդ՝ ահա զայսոսիկ այսպէս պատրաստեալ հազիւ մինչև ցայժմ ցնուիրակդ ուղևորեցաք։ Որոյ կողմանէ ոչ ունիմք հոգ ի քումդ մասին երկար յանձնարարութիւն գրել քեզ, գիտելով զսիրելիդ ծոցածին որդի սրբոյ գահիս՝ և սրտացաւ սորին և օգտաջան, և կամեցող մեր ևս սրտադիւր լինելոյ։ Այլ զի բազմութիւն մարդոց են զձեօք՝ իւրաքանչիւր զանազան բարուց վիճակեալք, և պէս պէս խօսիլ կարեն, վասնորոյ զայսքան ինչ ազդ առնեմք, որ մեք ոչ անընտրողաբար, այլ ընտրութեամբ առաքեցաք

զդա, նախ զի հողեծին որդի է հողելոյս սրբազան հայրապետին և մեր, և քեզ վաղընջական սիրելի, և երկրորդ՝ զի թէ յաստանօր կացութեանն և թէ արտաքոյ ի գործոն զորս վճարեալ է, փորձուն է ի համեստութեան և ի քաղաքավարութեան, և ի սիրելն զխաղաղութիւն ընդ ամենեսին, և ի պահելն զպատիւ իւրաքանչիւր ըստ արժանւոյն. վասնորոյ միամիտ եմք, զի և զսիրելիդ ըստ քումդ վայելման յարգել սրտադիւր արասցէ. ապաքէն և դու ի պատիւ սրբոյ Աթոռոյս և մեր՝ զինքն մեծաւ սիրով և պատուով ընկալցիս, և նժդեհութեանն ասպնջական լիցիս և գործոյն օժանդակ և արդիւնաւորիչ. և բնաւին ի բաց հերքելով զքսութիւնս բանսարկուաց որք ոչ պակասին յաշխարհէ, սիրով սերտիւ սիրեսցես զդա ըստ որում միոյ ծնողի և միոյ Աթոռոյ որդիք էք և միաբանակից, զի մի գուցէ նշմարք ինչ ատելութեան երեւելով տեղի տացի միւսոց միաբանութեանցն պախարակելոյ զմիաբանութիւն մեր թէ՝ և ինքեանք յիւրեանս իսկ խռովեալք են, և այլն, զորս գիտես թէ կարեն ասել։ Այլ ի սէր կապակցութեամբ ձերով և համակամութեամբ, ամենեցուն պատկառելի երևեսջիք։ Եւ զի ցուցեալ էիր առաջնով թղթովդ թէ ի յօրհնեալ ժողովրդոց երկրիդ բաւական օգնութիւն մատուսցի պատկառութեանց սրբոյ Տանս, վասնորոյ և մեք գրեցաք զկոնդակն իմտատիայի, յուսով մեծի իրիք օգնութեան։ Արդ՝ որ ի նեղութեան յօգնութիւն ժամանեսցէ, նա է՝ որ պահէ զհաւատարմութիւն բարեկամութեան։ Ուրեմն՝ մինչ սրտացաւ հաւատարիմ որդի ես սրբոյ Աթոռոյս, պարտիս որդիական գթով և ցաւակցութեամբ ջանալ և ջանակից լինել նուիրակիդ, առ ի գլխաւորապէս օգնութիւն իմն ընծայել յԱստուածասէր ժողովրդոցդ առ բազմապատիկ պակասութիւնս սրբոյ Տանս և առ նեղութիւնս մեր։ Որով մեծագոյն վարձք պարգևեսցին ի Քրիստոսէ դոցա և քեզ, և մեք ևս դիւր ինչ գտեալ շնորհակալ լիցուք զսիրելութենէ ձերմէ։ Իսկ զոր ինչ վասն կայսերաձիր պարգևացն և Ղազար սրբազան Կաթողիկոսի զգեստին և որոց ընդ նմա, և այլ իրաց և հաշուոց ասելիքն են, թողլով ի

միւս Թղթին գրել, աստանօր վասն հոգևոր որդւոյն քոյ Աւետիք վարդապետին գրեմք։ Վասն դրամոցն որ ազաղակաւ գաւառարի ուրումն կալեալ է, յառաջ գրեցաք սիրելւոյդ, իցէ թէ զօրպիսութիւնն գրեալ իցես, և թէ ոչ. գրեսցես. մանաւանդ և փոյթ տարցիս արդեանցն չկորնչելոյ։ Եւ ապա ըստ որում և նուիրակիդ պատուիրեալ եմք, ի միասին խօսեսջիք ընդ դմա և՛ ի մէնջ ողջոյն տուեալ՝ հարկեսջիք զալ և օր մի յառաջ ուղևորեսջիք հանդերձ արդեամբքն սրբոյ աթոռոյս զալ օգնութիւն ինչ առնել ի նեղ ժամանակիս, և զօրհնութիւն ընկալնուլ։ Եւ վասն ի Հնդիկս եղեալ Ստեփաննոս քահանային, զոր յառաջ գրեցաք, այժմ ևս երկրորդեմք, որում չէր պարտ մաքառել ընդ այնպիսեաց երևելի անձանցն, և ի դատ մտանել, և ի կայից հանել, իսկ զի համարձակեալ է, և վիրաւորեալ զնոսա, և նոքա բողոքեն, չէ ևս վայելուչ թողուլդ զնա անդ, ուրեմն դարձուսցես, և զայլ երկարապէսն անցից նորա, և տրտնջանաց զրողացն ի նուիրակ վարդապետէդ ունիս իմանալ։ Եւ որպէս զի յիւրաքանչիւր տեղիս երևելքն մերազնէից նուազեցան, նոյնպէս և ի Հնդիկս. և ծերքն իսպառ պակասեցան, զի յայնցանէ միմիայն աղայ Շահամիրն կայր, որ նա ևս վախճանեալ է. զոր ի լսելն մեր յոյժ տրտմեցաք։ Աստուծոյ կամքն եղիցի օրհնեալ, որ և լուսաւորեսցէ՝ զհոգի նորա, և զքեզ մխիթարեալ ողջ պահեսցէ։ Իսկ և յետ ընդունելոյն զթուղթդ ի Պետրպօլքու, այլ ևս թուղթ ոչ ընկալաք ի քէն զգիր յերկար միջոցի, և չգիտեմք թէ այժմ ուր լինիցիս։ Ի՞նչ և իցէ, թէպէտ մեք յոգնազան հողօք պաշարեցեալ ոչ ժամանեմք յիւրաքանչիւր ժամանակի գրել առ քոյդ սիրելութիւն, այլ դու ի ձեռնհասութեանդ գրեսցես, և մի պակասեսցուսցես զթուղթդ ծանուցանելով զոր ինչ պատեհն է մեզ գրեցելոյ զձէնջ և զօրպիսութեանց կողմանցդ, որով շնորհակալ լինելոց եմք զհաւատարմութենէ սիրելւոյդ։ Ի վերջոյ ազդ առնեմք և զաղէտալի պատահումն միաբանութեան մերոյ, որ յամէ Տեառն 1797 և ի նոյեմբեր ամսոյն մինչև ի 1798 և ի մարտ ամսին աւելի քան զժ եպիսկոպոսք վախճանեցան զանազան ցաւօք և պատահարօք, որ թէպէտ մահն հասարակաց է, և չէ ապշելի, սակայն ի կարճ միջոցի այնքանեաց մի զկնի միոյ պակասիլն ի միջոյ զբազմապատիկ սուգ պատճառեաց մեզ. որոց երևելիքն և ծանօթքն քեզ Ղունկիանոս[58] բարեբարոյն և Ներսէս և Յակոբեանք եպիսկոպոսք։ Եւ զինչ ունիմք ասել, այլ թէ գոհանալ՝ և փառաւորել զամենամեծ անուն անմահ Արարչին, և հայցել ի նմանէ զողորմութիւն հանգուցելոցն ընդ սրբոց վարդապետացն դասուց, և զքեզ մխիթարել և երկարակեաց առնել հանդերձ մնացեալ միաբանիւք։ Եւ զայլ ամենայն գիտելիս ի նուիրակ վարդապետէդ իմանալով ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի փետրվարի 12. ի սուրբ աթոռս Էջմիածին։

ԺԹ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն, ընդ վերնոյ թղթոյն իբրեւ փուսուլայ վասն Կայսերական նամակին եւ պարգեւացն եւ այլ իրացն յղելոյ եւ այլ բանից հարկաւորաց.

Եւ զայսոսիկ աստանօր ծանիր մտերիմ սիրելիդ մեր Յովսէփ իմաստնախոհ արքեպիսկոպոս։ Զի յաղագս կայսերական նամոսին և պարգևացն, և հոգելոյս Ղազար կաթողիկոսի զգեստուցն և՛ այլոցն որ գրեալ էիր թէ մնաս հրամանի մերում, և մեք գրեցաք քեզ թէ՝ ընդ նուիրակին գրեսցուք։ Ահա որպէս պատուիրեալ եմք Եփրեմ նուիրակ վարդապետին, քեզ սիրելւոյդ ես գրեմք, զի կանխաւ զօրինակս կայսերական հրովարտակին և Բ՛էզպօրոտկի վէզիրի թղթոյն եթէ տակաւին չիցես յղեալ, անյապաղ յղեսջիք, զի և մեք զշնորհակալութիւնսն շուտով գրեսցուք։ Եւ ապա նախապէս զիսկ հրովարտակն կայսեր և ըզթուղթն վեզիրին, և զպնակն ե զկտորսն կնքեալ ձերովք կնքովք, ընդ կայսերական զօրաւոր արանց, և կամ ընդ հաւատարմագունից մերայնոց յղեսջիք ի Թիֆլիզ, ըզգուշացուցանելով նոցա՝ չյայտնել ումեք,

այլ հաւատարմութեամբ հասուցանել անդ առ մեր գործակալ աէր Յովհաննէսն Վանաքի եկեղեցւոյն՝ զոր լաւ ճանաչէք։ Եւ նմա ես զրեսջիք, զի նա ես չյայանեսցէ արձակարերան բնակչացն. վասն զի քանի պատճառօք զգուշանալ արժան է։ Երկրորդ՝ յեա ամսոց հոգասջիք և զայլսն առաքել, այսինքն՝ զՂազարու սրբազան կաթողիկոսի թագն և զգեստն և զայլ շուրջառսն ընդ նոսա ազատեցեալս, ես և այն ճնացեալ զգեստքն, զորս ի վաղագոյն յղեալ սպասուցդ զաւթարումն նշանակեալ էիր թէ առ իս ճնացին. Նաև զայլ յիշատակս և զդիազարդս, որք ի միջոցի քանի ամացս ստացեալք լեալ իցեն, զամենայնն նոյնպէս ընդ նուիրակիդ ամրացուցեալ և կնքեալ՝ հաւատարիմ եկողօք յուղարկեսջիք ի Թիֆլիզ առ նոյն յիշեալ գործակալն մեր, և մեզ գրեսջիք։ Եւ զայլ պարագայսն յուղարկաւորութեան իրացս թողումք խոհականութեան ձերում։ Երրորդ՝ որպէս առաջնոյ և երկրորդի նուիրակութեանցդ զզաւթարսն գրեալ և յղեալ էիր, նոյնպէս և զերրորդի նուիրակութեանն հոգասցես, զոր գործ զիարդ և վճարեաց Գրիգոր օգտագէտ վարդապետն պարզերես լիցի, սակայն այլ ես դու սիրելիդ փոյթ կալցիս զայն երրորդ նուիրակութեան զաւթարն ևս զառից և զտրից գրել և յուղարկել, զի տեսեալ՝ զզաւզ[54] յղեսցուք, որովք թէ մեզ և թէ քեզ միամտութիւն լիցի, և յապագայից ես անբասրելի գտանիցիմք։ Իսկ ի ՌՄԼԸ թուին մինչ ընդ Աւետիք վարդապետին և Գրիգոր սարկաւագին գրեալ էիր թէ՝ Ծ թուման յղեցի, որ էր ԱԾ պաճախլու ոսկի, և Տէր Սահակի Է թուման քշոցագինն, և Բաղդասար վարդապետի վեց թումանն, յայնցանէ նոքա զԱԾ, պաճախլուն հնդական ղուռուշով տուեալ մեզ հաշուեցին ԼԳ թուման, ԳՌ, Լղն. և զվեց թումանն Բաղդասար վարդապետին, այլ զեօթն թուման քշոցագինն բնաւ չետուն։ Եւ Աւետիք վարդապետն վասն ճանապարհի ծախուց պակասելոյն ԺԳ թուման խնդրեաց և տուաք։ Եւ տիրացու Գրիգորն ես խարճի խնդրեաց ի պէտս դառնալոյն, վասնորոյ զի թուման ԳՌԼդն ես նմա տուաք, որովք վճարումն եղև նոցա մեզ տուեցելոյն, միայն Բաղդասար վարդապետի վեց թումանն ճնաց առ մեզ։ Եւ մինչ այնպէս եղև, նմին իրի ոչ ևս զավզ գրեալ, այլ զփոխարինութիւն գրեցաք քեզ. բայց պատասխանի ոչ ընկալաք։ Ուրեմն՝ այժմ պարտիս և զայս նշանակել ի զաւթարիդ։ Եւ զայլոց ոմանց հաշուոց զկարծիս ոչ հարկաւոր վարկանելով աստ դծաղրել, ճնամք ի քէն պարզելոյ ի զաւթարիդ։ Չորրորդ՝ ի կողմանէ Նոր Նախչուանու խանութից. յամի Տեառն 1791, մայիսի 26 գրեալ ես թէ չորս խանութ գրեցաք ի ժառանգութիւն սրբոյ Աթոռոյդ, զոր տեղւոյն իշխանքն ևս ի թղթին իւրեանց Դ են գրեալ, բայց ի զաւթարին քում ի նշանակելդ զարդիւնսն խանութից, երեք խանութս յիշես, որով տարակուսութիւն է մեզ զմիոյ խանութէն։ Եւ դարձեալ գրես թէ՝ զքսան խանութից տեղիս առաք, որոց Ժ վասն սրբոյ Աթոռոյդ, և Ժ վասն Նախչուանու վանիցն. այլ յետոյ զայնցանէ ոչ ևս գրես ինչ։ Ապաքէն թէ վասն միոյ խանութին ի չորիցն, և թէ յաղագս տասանցն բացայայտօրէն գրեսցես, զի գիտասցուք։ Նաև Բ այգիք գոն ի Ղրղլար, որոց աղագաւ ղոչ սակաւ զրամս ես խարճեալ, հաստատելով զայնս ի ժառանգութիւն սրբոյ Աթոռոյս։ Եւ Բ տունք և մէկ այգի ես այլ՝ ըստ գրեցելոց քոց ցուցանին, որոց տուողքն պայմանեալ են՝ յետ անցման իւրեանց վախմ լինել սրբոյ Աթոռոյս։ Եւ երկուցն կտակագրաց օրինակքն քոյզ ձեռագրութեամբ ստուգեալք և ի քէն առաքեցեալք աստ գոն։ Զորոց զամենայն որպիսութիւնսն զմուտսն և զելսն պարզապէս դրեսցես մեզ, և նուիրակիդ ևս տեղեկացուսցես, և հասու լիջիք չկորնչիլ։ Եւ թէ այլ ևս այնպիսի վախմք հանդիպեսցեն, ծանուսջիք մեզ, զի և մեք ի քէն թեմէսուկսն սրբոյ դահիս գրեսցուք, զի անմոռացք լիցին, և արդիւնք նոցա հասցեն յօդնութիւն ծախուց սրբոյ Տանս, որովք և տուողացն և միջնորդացդ վարձք բազմասցին յերկինս ի Քրիստոսէ։ Հինգերորդ՝ թէպէտ և ահա նուիրակութիւնն որոշեցաւ ի վերայ յատուկ անձին, և այն՝ ըստ քոյդ խնդրոյ՝ վասն անձեռնհաս գոլոյդ, սակայն մեք զքեզ ո՛չ բաժան գիտեմք ի մէնջ և ի սրբոյ Գահէս. դու ևս այսպէս հաստատեա

սրտի քում զոլ անփոփոխելի հարազատ և աննուազելի հաւատարիմ որդի սրբոյ Աթոռոյս, և զի այդ վիճակ ի ընէ Տէրունի է սմա, որ երկրորդապէս ես ի հոգելոյս սրբազան հօրէն մերմէ հաստատեցաւ սմա սեպհական վիճակ, վասնորոյ որպէս ցարդ ջատագով և բարեջան ես եղեալ առ սա, նոյնպէս և յայսմհետէ լիցիս, և զօգտակարութիւնն ի ձեռաց չթողուցուս, այլ զոր ինչ յանուն սրբոյ Աթոռոյս հասոյթքն են, ժողովեալ, ընդ ժամանակս ժամանակս յատկապէս մատուսցես ի Տունս Տեառն, և աստի օրհնութեան կոնդակ ընկալցիս ի վերայ ժողովրդեանն ի միամտութիւն նոցա, և յանվրէպ ղաանիլ քեզ ի կրկին ուխտաղբութիւնսդ ընդ շնորհատու ծնողիս քոյ՝ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի։ Աստանօր թէ այլ բազում ինչ ևս ասելիք էին, բայց զայսքանս բաւական վարկանելով վսեմամիտ սիրելւոյդ կնքեմք զբանս։ Ողջ լեր Տէրամբ. և յանձնեցեալ ի նոյն։ Գրեցաւ յամի Տեառն 1799 և ի փետրվարի 12։

Կ. Բասպօրթ ըստ լեզուի Ռուսաց, եւ վկայական ըստ մեր բարբառոյ առ Ռուսաց երկրի կամէնդանթսն, այսինքն սահմանակալսն վասն աստի ի սրբոյ Աթոռոյս առաքելի նուիրակին.

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթողիկոս, և ծայրագոյն պատրիարք ամենայն հայոց՝ Առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, և լուսանկար Աթոռոյս սրբոյ Էջմիածնի՝ որ ի դաշտս Արարատեան։ Յորմէ սիրով և օրհնութեամբ, և փրկչաւանդ սուրբ ողջունիւ, և սրբոյ Իջման տեղւոյս նորին շնորհիւ ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց զգաստակենցաղ սահմանակալաց՝ ազնուական պ. Կամէնդանթացդ օրհնեցելոյ ազգիդ Ռուսաց լայնատարած մեծի կայսերութեանն։ Զի սոյն գրաբեր Եփրեմ արքեպիսկոպոսս որ է հաւատարիմ միաբան սրբոյ գահիս Էջմիածնի՝ և ի մէնջ առաքեցեալ ի նուիրակութիւն հայկազնեայ ժողովրդոց մերոց ի յԱստուածախնամ երկրիդ ընակեցելոց. ի հանդիպելն սորա ձեզ, և ի տեսանելն ձեր զայս վկայական թուղթս մեր, գիտելով և զհայսերական առատազունեղ շնորհսն առ մեզ, ըստ նորին մեծազօր հրամանին առանց ընդդիմադարձութեան ի ներքս ընկալեալ զզա՝ ձերով բաշպօրթիւ ուղևորեսջիք զնալ ի Հաշտարխան և յայլ տեղիս առ մերային ժողովուրդսն, ի կատարել զգործն նուիրակութեան սրբոյ գահիս։ Եւ լերուք ողջ ի Տէր, և զօրացեալք ի նոյն միշտ։ Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի փետրվարի 12։ Ի լուսանկար աթոռս ամենայն հայոց ի սուրբ Էջմիածին։

ԿԱ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Հնդիկս ի քաղաքն Կալկաթա առ պ. աղայ Սարգիսն տէր Յովհաննիսեան, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1797, ի նոյեմբերի 30. Շնորհակալութիւն վասն հոգ տանելոյն բանին տէր Շմաւոնեանց պ. Ստեփանին, եւ մխիթարութիւն վասն մահուան մօրն, եւ սփոփական բան առ զրեղն զգանզաս զլըբութեանց թիֆլիզեցի Ստեփան չերիցուէն՝ եւլն.

Յորմէ ժամանեսցէ թուղթ փրկչաւանդ սուրբ ողջունի, ճշմարիտ սիրոյ և հոգևոր օրհնութեան, հանդերձ պահպանողական շնորհօք և զօրութեամբք Միածնաէջ սրբոյ տեղւոյս և համայն հրաշագործ սրբութեանց և մասանցն սրբոց աստանօր եղելոց, ի վերայ քաջընտիր սիրելւոյդ մերոյ՝ և հաւատարիմ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսասէր և բարեպաշտ, իմաստնախոհ և ճոխապատիւ Աղայ Սարգսիդ Տէր Յովհաննիսեան. և բարեկարգ տան քում, և ամենեցուն որք քո են, ի Տէր խնդալ հոգեզուարճ ցնծութեամբ։ (Շնորհք).

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի Աստուածասիրութեան

քում։ Զի թուղթն քո յամի Տեառն 1797. ի նոյեմբերի 30, գրեցեալ, էհաս առ մեզ ի 1798 ի նոյեմբերի 10։ Որոյ ե երրորդ օրինակն որ ի վերոյ յիշեալ թուոյ դեկտեմբերի 15, էիր յուղարկեալ, էհաս ի 1799, ի մարտի 31։ Զոր սիրով ընկալեալ նախ իմացաք զողջութիւն ազնիւ սիրելւոյդ ե քոյոցդ, և փառս մատուցաք Աստուծոյ պահպանողին։ Իսկ ի դիտելն մեր զվճարումն կենաց բարեպաշտուհի ե երկիւղազարդ Մօրն քոյ ծերունւոյ, ե զտրտմութիւն ձեր ի վերայ նորա, մեք ևս տրտմեցաք. ե յիրաւի հարազատ որդւոց է տխրիլ ընդ հրաժարումն գորովագութ ծնողաց։ Բայց զի անշուշտ վճիռ է յԱրարչապետէն կնքեալ ի վերայ հողածին մարդկութեանս՝ դառնալ ի հող, զինչ ունիմք ասել առ բարի կամս Տեառն։ Մանաւանդ զի բարեբաստիկ անձն այն ոչ անկատար հասակաւ, ե ոչ առանց յիշատակի, այլ կատարուն հասակաւ ե լի աւուրբք, և զթոռունս որդւոց տեսեալ՝ այնպէս է վախճանեալ, ի ցաւալից կենցաղոյս ի հանգիստ փոխելով, ե որպէս հասուն ցորեան ի շտեմարանս արքայութեան ժողովելով։ Ապաքէն մնայ մեզ փառս տալ Աստուծոյ բարերարին. ե վասն հանգուցելոյն խնդրել զարքայութեանն ժառանգութիւն. և վասն յետամնացիցդ զխաղաղական կեանս յերկարաձիգս։ Վասնորոյ յիշելով զանուն լուսահոգւոյն ի փրկարար սուրբ պատարագս՝ ասեմք՝ արժանացուսցէ զնա Քրիստոս մտից երկնային առագաստին ընդ բարեհռչակեալ կանանցն իւղաբերից։ Եւ ըզքեզ հարազատ որդիդ նորա, հանդերձ բարեբողբոջ որդովքդ և թոռամբքդ մխիթարեալ ողջ պահեսցէ և երկարակեացս արասցէ։ Ծանեաք նաև զհոգեոր որդւոյն մերոյ Նուիրակ Յակոբ արհի եպիսկոպոսի խաղաղութեամբ ժամանելն ի յօրհնեալ քաղաքդ և մեծասէր ընդունելութեամբ ընկալեալ լինիլն յաստուածասիրացդ. զոր ինքն ևս կարի շնորհակալութեամբ գրեալ էր մեզ, վկայելով ջերմեռանդ սիրոյ և հաւատարմութեան ձերոյ առ սուրբ գահս և առ մեզ։ Որոյ աղագաւ և մեք առաւելապէս շնորհակալ եղաք զյատկեղ սիրելւոյդ և զբոլոր մերազնէից բարեճոխ քաղաքիդ։ Զորս Աստուած օրհնեսցէ և զօրացուսցէ, հեղլով առ ձեզ զշնորհս ողորմութեան և զթութեան իւրոյ. և զամենայն բանս և զգործս ձեր առ ի բարին յաջողելով։ Եւ յաղագս Թիֆլիզեցի պ. Ստեփաննոսին տէր Շմաւոնեանց կարևոր խնդրոյն՝ որ դրեալ էիր զյանձնառութիւնդ և մարդասիրապէս հոգ տանիլդ ի պահանջել զհաշիւն նորա ի պ. Յօհանէն, ոյր սակս և պայմանագիրն վաճառակցութեան նորա խնդրեալ էիր ի Բումբայու, ընդ այն ևս շնորհակալ եմք զբարեպաշտութենէ քումմէ, որում Աստուած լիցի վարձահատոյց աստ և ի հանդերձելումն։ Գիտասցես ապա՝ որ յիշեալ պ. Ստեփաննոսն գնացեալ ի Հաշտարխան՝ յանցելում ամին անդ վախճանեալ է որում Տէր ողորմեսցի, և սիրելիդ ողջ կացցես։ Բայց որդին նորա պ. Սողոմօնն և թոռունքն կան ի Թիֆլիզ։ Եւ մեք նոյն պ. Սողոմօնին գրեցաք զքոյդ բարեկամօրէն հոգատարութիւնն բանին իւրեանց, և նա ի հարկէ թուղթ գրեսցէ ազնուոյդ. և սիրելիդ ևս ի կատարումն բանին զոր ինչ հօրն էիր գրելոց, որդւոյն գրեսցես. և մեզ ևս ծանուսցես։ Իսկ յաղագս ամբարշտութեանց և զվնասակարութեանցն ի Հաշտարխանու յուղարկած Թիֆլիզեցի չքանալի Ստեփան կարգազեղծ չեբիցուն որ դրեալ էիր, աւելի քան զդրեալսդ իմացաք, և առաւել քան զձեզ վիրաւորեցաք սրտիւ, և հոգւով չափ ցաւեցաք վասն բարեմիտ ժողովըրդեանդ։ Արդ՝ յայտնի է, որ բազում ամօք յառաջ ըստ խնդրոյ նոր Նախիջևանցւոց՝ մեք նոցին քահանայ տէր Յարութիւնին տուաք զկոնդակն և մինչ խղճալին այն վախճանեցաւ, և այդ Թիֆլիզեցի լկտին եկն, շատ էր դմա զժողովքն առնուլ և դառնալ յետս, և մինչ ոչ դառնայր, արժան էր օրհնեալ իշխանացդ միաբանութեամբ պատասխանել թէ՝ մեք քեզ յաւիտեան պարտականութիւն չունիմք, խնդրելիքդ առեր, դարձիր գնա։ Այլ այնքան մնաց որ յետ մուրացիկ գոլոյն բռնաւորաբար պահանջող եղև, զի՞նչ ասեմք։ Աստուած զայնպիսի գայթակղեցուցիչսն բարձցէ յերկրէ, կամ թէ օրհնեալ ժողովրդեանդ արիութիւն և քաջութիւն շնորհեսցէ, որ իրաւամբ ի բաց մերժիցէք զվիրաւորիչ գայլսն ի միջոյ հօտիդ։ Եւ արդ՝ յետ հա-

սանելոյ թղթոյն քո առ մեզ, ի դեկտեմբերի ամսեանն գրեցաք Յովսէփ արքեպիսկոպոսին սաստիւ. դարձուցանել փութով զկորստական չքահանան զայն ի յօրհնեալ երկրէզ, և նա գրեալ է մեզ թէ՝ զնմանէ չար հարաւս լսեմ. բայց ես ամենևին հաճութիւն չունիմ ընդ արարմունս նորա, և զոր ինչ գործէ արտաքոյ իմ կամացն է, և այլն։ Եւ ի նոյն դեկտեմբերի ելն գրեցաք ի Բասրա պ. Ստեփաննոսին Տէր Յովհաննիսեան՝ ազգ առնել սիրելւոյդ։ Իսկ ահա մեք գրեմք ազնւոյդ, որպէս և Նուիբակ Յակոբ եպիսկոպոսին, և Քրիստոսիւ զօրացեալ Աղայ Մովսէսին ես գրեցաք, մինչև ցհասանիլ թղթոյս յայզր, եթէ վատշուեր չերէցն այն ոչ իցէ ելեալ այտի, հարկիւ կամ ձեօք, կամ վճռաւ իրաւասէր դատաւորացն զկոնդակն մեր առջիք ի ձեռացն, և ինքեան պատուսիանի տաջիք ելանել ի քաղաքէդ և հեռանալ ի ժողովրդենէդ մերմէ, և թէ ոչ ելանիցէ, արտաքսեալ է ի սուրբ եկեղեցւոյ ձերմէ, և ոչ գոյ նմա համարձակութիւն յեկեղեցի ձեր մտանել և քահանայ կոչիլ, մինչև ելցէ ի յերկրէդ Հնդկաց։ Պատուիրեմք ևս, մի միայն զդա, այլ և զայլ այդպիսի կարգուրացն և զինքնագլուխ շատաշրջիկսն մի ընկալջիք և մի պահեսջիք ի միջի ձերում, այլ թէ կամիցիք՝ ըստ կամաց ձերոց ողորմութիւն ինչ տուեալ ի բաց արասջիք ի ձէնջ։ Եւ եթէ ոչ մեկնեսցին, և ի զուր անէծս կարդասցեն, դարձցի առ ինքեանս, և դուք ազատ լիջիք յընդվայր բարբանջանաց նոցա։ Այսքան առ այս բաւ լիցի խոհեմութեան ձերում։ Զօրպիսութեանց մերոց և կողմանցս այսպէս գիտել լիցի. որ երկիրս և կողմունքս յանհանգիստ նեղութեան կայ ի պատճառս իշխողացն խստութեանց և անդադար խռովութեանց։ Եւ սուրբ Աթոռ Մայրս ձեր և մեք մինչև ցայժմ երբեմն ի փորձութիւնս և երբեմն սակաւ մի ապահովի յատկապէս խնամարկութեամբ Տեառն. յայսմհետէ ևս նորին այցելութեանն ապասաւորիմք անցուցանել զաւուրս։ Եւ իսկապէս սիրելիդ մեր ի ճշմարիտ սիրոյդ և ի բարեկամութենէզ աննուազ ծաւլով, և երբեմնապէս գրով հաւատարմութեան ձերոյ զնեղսակրութիւնս մեր սփոփելով, ողջ լեր ի Տէր։ Գրեցաւ ի թուականի Փրկչին 1799. և յապրիլի.. ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին։

Ողջոյն և օրհնութիւն առաքեմք բարեպաշտուհի կենակցին քոյ՝ զգաստամիտ Մարիամջան Տիկնոջն, և մօր նորա Ջանազան խաթունին. և քեռն քում Գաբրէլ խաթունին, և ազնուածին որդւոց քոց Աղազաղէից՝ զօրացելոց Քրիստոսիւ՝ պ. Յովհաննէսին, պ. Մկրտչին, պ. Կարապետին, Բէկտան կոչեցեալ պ. Առաքելին, և պ. Մարտիրոսին, և երկիւղազարդ պարկեշտուհի դստերաց քոց Թագուհի տիկնոջն, Ջանազանին, Ղատամին, Խաչխաթունին, և Բէկումին, և խոհեմառատ փեսային ձերում պ. Ստեփաննոսին և ծաղկափթիթ զաւակաց նոցին և համայն իսկ ձերայնոց՝ ազգականաց և բարեկամաց։ Որք լիցին մխիթարեցեալք Տէրամբ, և յանձնեցեալք ի պահպանութիւն հզօր Աջոյ նորին, և հոգեզուարճ շնորհք սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի եղիցի ընդ ինքեանս ի զօրացուցանել հանապազ առ Աստուածահաճոյ գործս օգտակարս, Ամէն։

ԿԹ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Տ. Ստեփաննին.

Արժանապատիւ տէր Ստեփաննոս աւ. քահանայ
Սիրեցեալ որդի մեր.

Ահա քանի ամք անցին, յորս ի քէն գիր ոչ ընկալաք և ոչ գիտեմք, յինչ միտս կաս և յինչ գործս, զի որպէս և յապրիլին գրեցի քեզ, սրբազան կաթողիկոսն մեր՝ զբազմադիմի զանգատանս էր մեզ գրեալ և հրամայեալ, որ զքեզ բերեմ, որ աւելի խռովութիւն չյառնէ և այլ բանք շատ։

Սիրական որդի՝ թէպէտ և ծասեալ եղաք յոյժ, և աշխատանքդ՝ ըստ մեծի մասին ի կորուստ գնաց որպէս և գիտես, բայց մեք բաւական եմք և շնորհակալ զջանիցդ և զտրոցն օրհնեալ ժողովրդեանն. ես զքեզ յաղագս դաւոյ չեմ առաքեալ և ոչ իսկ սիրեմ, և ոչ իսկ ախորժիմ լսել ի

սրբազան կաթողիկոսէն և յայլոց զորս լսեմ։ Դոքա խէռլուք են՝ շատ և իշխանաւորք, իսկ դու օտարական, մուրացիկ մի։ Մի առներ որդի, որպէս ե է, թօթափեա զքեզ ի վիճմանցդ ե եկ առ մեզ և առ ընտանիս քոյ, և թող դոցա՝ որք ամենեքեան առ հասարակ դղրդեալք են և զզուական բանս գրեն, ոչ միանգամ ե մի գրով, այլ բազմիցս, զնոյն գիրն կրկնելով։ Տեղս ով ոք լսէ, նա ես գայթակղի, և ամենեքեան յարգի ունին զպարոն Ծարդիսն. ուրեմն հաշտեաց ընդ նմա ե եկ, մի ես յամենար. առաջ քանիցս դրեալ եմ քեզ ե այլոց վասն այսմ, լաւ է պատառ մի հեշտութեամբ և խաղաղութեամբ, քան զբազումս լի խռովութեամբ. առ որ ոչ հաճի Աստուած, ե ոչ ընդունի ատեան մեր։ Մեր գործն է, սէրն, խաղաղութիւնն, անոխակալ գոլն ե այլն. եթէ խաղաղութեամբ տային ինչ ի պահանջմանցդ բարի էր յոյժ, թէպէտե լինէր սակաւ, բայց մինչ բանքն դատաստանի կարօտեցան, հարկ էր քեզ՝ բաց է ի րաց փախչել ե այլ կերպ դուռն գտանելոյ ստանալ զմասն քոյ։ Առանց այդմ ե կտրող է Աստուած զմեզ կերակրել, որպէս զագռաւունս ե այլ թռչունս՝ ըստ փրկչական բարբառոյն։ Այլ դու մի տար գայթակղութիւն աշխարհի. հնազանդեա բանիցս՝ ե եկ առ իս։

Որդի Աստուածատուրի յաղագս քանիցս գրած եմ առաքեալ մեր Եսայու ձեռամբն, ե քանիցս դրեալ այլոց՝ սուտ մահտեսին այն, զմեզ խաբելով, յօրէցօր գինն բարձրացոյց, այժմ քանիցս գրով թախանձեալ եմ սրբազան կաթողիկոսին մերոյ՝ որպէս և իցէ՝ չխնայել զգինն՝ առեալ առ մեզ առաքեսցէ ի մխիթարութիւն մօր նորին. յուսով եմ որ շուտով առաքեսցեն։

Իսկ յաղագս Շուշանին՝ յառաջ յիսուն թուման խնդրէին ե այժմ ԱԾՌ (150), մեր Նոնի Ցովհաննէսն գրեալ էր մեզ, ես պարոն Մկրտումն ե մեր Թաղոյն, գրեցի նոցա, ինձ երբէք չհարցանել. ինչ գին որ խնդրեն՝ տան ե առնուն մինչև երկու հարիւր թուման եւ։ Այսմ եւ յուսամ, որ յայս տարի բերեն։

Իսկ Թինաթինն ի Մօզգոկ, առողջ գոլով, միայն զկարօտութիւն զաւակացն կրէ և վասն քոյ գալստեանն հարցանէ։

Ցայս երկու ամս, բաւական գրեալ եմ քեզ զորպէսն մեր. ես Տէր Դաւիթի անզգամութիւնն ե վերջապէս երեք հազար ոսկի տալն նմա իւր մուղաթօմն ե ուզեսրիլն, որ լսեմ տակաւին ի Մօսկով գոլ, ե սոյն պարտք մուղաթով առեալ, տակաւին գրեմ զվերադիրն, քանզի թէպէտ ըստ ողորմութեան մեծի ԿԱՑՑԵՐՆ մերոյ՝ թարց մաքսի ստացայ զապրանս մեր, այլ անիծեալ կամպանիքն՝ զզօրութիւն ապրանացն ծծեալ դատարկ պարկն են թողեալ ե ոչ այլ ինչ, վասնորոյ թէպէտ բացի ե տեսի այլ ոչ ինչ ծախեալս աստ՝ եթէ ոչ՝ 33 նումերա սնդուղի եղեալ մնացորդքն, որք էին 8 զարով մարմառ, 47 ծաղկովբարակ մարմառ, զարոմն ֆի զանէն ԺԸ (18) թուման, իսկ սպիտակ ծաղկով մարմառն ֆի զանէն Ը (8) թուման։ Թէպէտ մաքս ոչ ետուք, բայց բաւական խարջ արարաք. մեղք աշխատանաց քոց որ ի զուր կորուսեր. եթէ այսպիսի ապրանք լինէր, և կամ լաւ զօլբանդ, լաւ ծախիւր աստ. երանի թէ ոչ լինէր ապրանքն որպէս բազմիցս եմ գրեալ քեզ. այժմ ե պարոն Ստեփան Աղարարն, մարգարիտ էր առաքեալ եղբօրն. անձայն եհաս ե լաւ գնով ծախեցաւ։ Քոյ սնդուղն որպէս ե ստացեալ եմ, այնպէս ամբողջ առաքեմ ահա ի Հաշտարխան մնալ մինչև զգալն քոյ՝ կամ ժողովումն զաւակացդ և տալ նոցա։ Միամիտ լեր։

Կանպանիքն՝ ի յառաքեցեալ գաւթարէն իւրեանց 12 կտոր եւ պակաս են առաքեալ յետի հիսապոմն և ԱԾՀԵ (175) եւ պարտք առաքեալ, զոր հատուցաք։

Կայսերական շնորհն և ողորմութիւնն առ ազգս մեր՝ բազմադիմի են, զի որպէս և յապրիլին գրեցի քեզ յերկիրս բնակեալ ամենայն քաղաքացն՝ հանգոյն Նախիջևանու պրվելեկ շնորհեաց, սրբազան կաթողիկոսին եւ որպէս գրած եմ, և այժմ Երուսաղէմայ պատրիարգին, նոյնպէս զգեստ և պնակիս։

Իսկ մեզ կամեցաւ զյատուկ շնորհ ինչ ցուցանել անակնունելի, յամսոյս 9, իւր ձեռագիր հրովարտակաւն առաքեալ էր առ մեզ, զկարմիր կավալեր սրբոյն Աննայի ի յառաջին աստիճանի ընդ աստեղ. խնդութեամբ ընկալեալ կավալերն ձգեալ ի պա-

րանոց մեր և սատղն կարեալ ի կուրծս յաջակողմեան ի վերայ փէրէջուս. մտի եկեղեցի ամբոխիւք և Աստուծոյ մատուցի զպարտաւորական զոհութիւնս, որ ոչ եթէ զիս, այլ յերեսս երկրի տարածեալ ազգիս մերոյ՝ արար զայս մեծ այցելութիւնս և ողորմութիւնս. ահա օրինակ հրովարտակին առաքեցի, ցուցանել ամենայն ժողովրդեանն՝ օրհնութեամբ մերով։ Գրաֆ Սուվորոֆն զֆանկսիզս յոյժ խորտակէ. Տէր մանրեսցէ զնոսա։ Իսկ սուրբ Երուսաղէմ սասանի յոյժ ի թշնամւոյն։ Մէլիքքն մեր՝ բախտաւորեալն եղեն յետոյ գրեցից։ Այլ օրհնութիւն ամենայն ժողովրդեան ուր իցես։

Եւ եմ վասն ձեր միշտ աղօթարար՝

Յովսէփ Արքեպիսկոպոս

1799 մայիսի 15

ի Պետրպօլք.

Կգ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տէր Ստեփանին

Արժանապատիւ տէր Ստեփան աւագ քահանայ

իմ մշտակարօտ որդի.

Աւետիս մատուցանեմ քեզ, որ միակ սիրական որդին քոյ՝ միջնորդութեամբ սրբազան կաթողիկոսին և Հօր մերոյ ազատեցեալ եղև ի կրկին գերութենէ Համատանցի մահտեսի Յովհաննէսին և առաքեցաւ առ ողորմելի կարօտեալ մայրն իւր ի Մօզդոկ։

Թէպէտ աւելի քան զճԼ (130) թուման ծախեցաւ, ապա ոչ են ինձ հոգս, փառք Տեառն, որ ազատեալ եղև։ Շուշանի յետն ես յատուկ մարդ եմ առաքեալ։ Իմ իղձն է այն՝ զի զաւակունքդ ի մի ժողովեցից։ որ ի գալդ Աստուծով ամբողջ տեսցես. և եթէ սրտապակասութիւն ունիցիս ի մէնջ, վասն ամենայնի գտանելոց ես զիս ազատ և պատրաստ՝ վասն հաւատարմութեան քոյ, ըստ կարեաց բաւականութիւն տալ քեզ։ Միայն փութա շուտով գալ։ Իսկ զոր ինչ պարոն Ներսէսն Յովհաննէսեան յաղագս քոյ գրեալ է մեզ՝ բոլորն սուտ պատճառք են. դու իմ ես, և ես քոյ. ես վասն քոյ ափսոսամ, դու վասն իմ, երբ զմիմեանս տեսցուք, ամենայն ի բարին ուղղի. ըստ որում անչափ երախտիք քոյ՝ գեր քան զչափն զգամ։

Գրեցի Թինաթինին, գալ ի Հաշտարխան ի տուն մեր Թինաթինին, մինչև գտնալն իմ։ Ես ևս Աստուծով ահա զերծանիմ ի դրան Մեծի Կայսերս. զամենայն ազգային հարկաւորութիւնս, ի յաւիտենական երջանկութիւն նոցա, որպէս սուգ ինչ միջոցի տեսանելոց է աշխարհ, և մխիթարեալ լինելոց են համայն ազգք մեր՝ չորս պրվէլիկօք, որպէս յառաջ քանիցս գրեալ եմ քեզ և բարեկամաց։

Ապրանքն մեր՝ ի Մօսկով է, տակաւին չեն ծախեալ, յոյս գոյ ծախել և ազատիլ ի պարտուց, վասն զի՝ լաւն ի Կոպընհակ են ծախեալ, և վատն մեզ առաքեալ։

Պարոն Անդրէաս Մինասեանն գրեալ էր թէ Կ. Պօլիս չղրկես, որ տեղս շատ կայ և պակաս ծախի. վասնորոյ մեք ի Մօսկով կամիմք ծախել. շէրին շաքարին ռՆԹղն ազաբանին տան և գեօտին շատ պակաս.լաչակն բոլորովին ոչինչ։Մնաց մեր յոյսն ի սպիտակ մարմառն, զոր ինչ Աստուած յաջողեսցէ։ Ես գոհ եմ վասն այնմ յԱստուծոյ, ի բարի ժողովրդէն և ի յաշխատանաց քոց։

Զիք Ղայթմազի որչափ չիք Յովսէփ սարկաւագ ոՌ Թիֆլիզեցի, զկնի գնալոյն քոյ, եկն առ մեզ ի Նախիջևան, իբր սարկաւագ։ Կացուցի զնա տպին տպարանին և ձեռնադրեցաք յաբեղայ. այլ զկնի ի վանիցն սուրբ Թաչին, խաչ, սկիհ և այլ անօթներ գողացեալ, զնա առաքեալ էին առ մեզ ի Ղռիմ. յետ քննութեան և վատնելոյն գտաք զնա աւազակ, որ ի Տաթևու վանից գրքատունն ես է յափշտակեալ և փախեալ։ Զկարգն առաք և զհերսն խուզեալ, վանեցաք ի յերկրէս, գնացեալ սատ և անդ, ձեւացեալ եղբօրորդի իմ, և ի բազմաց զբազում ինչ ընկալեալ յանուն մեր։ Մինչ.... բարեկամք ...մանք.......... գրեցաք որոնել զնա........ ի յՆաշ և հպիսկ·պոս

ձևացեալ շնատանն Լիբանանու. և անդ զաստիճանս առեալ, և գնացեալ ի Լիով։ Ես յայնժամ գոլով ի Պարսս, Գրիգոր վարդապետն. մեր՝ զինուորօք պահանջեալ զնա տեղւոյ եպիսկոպոսէն, և նա անճարացեալ իբրև զկալանաւոր առաքեալ էին առ Գրիգոր վարդապետն, որովհետև մեք հեռի գոլով չկարացեալ պահել զնա, զկնի բազում խրատուն, կրկին խուզեալ զմորուս նորա և զգլուխ ըստ հրամանի մերոյ արտաքսեալ էր։ Այժմ կրկին նա մտեալ ի սուտ կարգ՝ աստ և անդ շրջի՝ յանուն մեր՝ որպէս կարգաւոր և ժողովէ ինչս, և կազմեալ վասն իւր մեծ կնիք մի՝ իշու նալի չափով, որպէս թէ....Ստեփաննոսի առաջնորդ է։ Գրեմ քեզ՝ եթէ ի կողմունսն ուր և դու հանդիպիս, պատահեսցի քեզ, ոչ միայն ծանուսցես ժողովրդեանն՝ խոտել զխոտեալն յԱստուծոյ և զպիղծ հերետիկոսն, այլև՝ եթէ հնար իցէ շղթայեալ ի Պօլիս առաքեսցես, որպէս զգող, զի բազում ինչ ի գողունեացն վանից մերոց առ նա է, առաքեսցես անտի առ մեզ ի դատել։

Գրեցի վասն այսմ. և մեր տիրացու Մանասէին, յայտնել սրբազան պատրիարքին, յամենայն տեղիս տալ որոնել, զտանել և մեզ առաքել. զի մինչ երկու տէրութիւնքն այժմ մի են, կարեն ամենեքեան օգնել քեզ ի կառավարչացն Հագարացւոց։

Ուր և իցես, քահանայից և ժողովրդեան՝ զօրհնութիւն իմ յայտնեսցես։ Մեր Գրիգոր վարդապետն և քնեազքն՝ զքեզ սիրով ողջունեն։

Եւ ես Ճեամ վասն քոյ աղօթարար՝
Յովսէփ արհեպիսկոպոս եւ կավալեր

1799 սեպտեմբերի 1.
ի Պետրօբուրգ.

Արժանապատիւ տէր Ստեփան աւագ քահանային Նոր Նախիջևանու, Թիֆլիզեցի Տէր Յարութիւնեան իմ հարազատ գործակալին, ուր և իցէ։

Դեկտեմբեր 10 եհաս ի Պասրայ։

ԿԴ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն հիւսիսոյ ի պատասխանի յայսմ ամի յուլիսի 7. գրեալ թղթոյն, յառաջ քան զայն ի մայիսի 12 գրեալ թղթոյն վասն կավալերի...ինչ բանից. եւ յապրիլի 28, գրեալ թղթոցն, եւ կայսեր հռովարտակաց օրինակացն.

Յորմէ սիրով մեծաւ և Քրիստոսաձիր խաղաղական ողջունիւ, ծանուցումն լիցի սիրելւոյդ մերոյ և հարազատ որդւոյդ սրբոյ Աթոռոյս՝ Յովսէփայ մեծահանճար և կաւալերազարդ արքեպիսկոպոսիդ։ Քանզի մինչ առաքէաք զԵփրեմ զգօնամիտ վարդապետն ի Նուիրակութիւն, յաւուրսն յայնոսիկ Գ թուղթք քո ի միասին հասին առ մեզ, որք էին ի նոյեմբերի 11 և ի 18, և ի դեկտեմբերի 2. գրեցեալք, յորս և գոյին ազդմունք զքոյդ առաջադրութեանցն, և զբանէ սուրբ Երուսաղէմի Նուիրակին, և յաղագս աստի Նուիրակ առաքելոյ։ Եւ վասն տէր Ստեփանի որդւոյն ազատման։ Եւ յայնմ ժամանակի ոչ ձեռն հասուցեալ, ի գրութիւնս պատասխանեաց որք չէին այնքան հարկաւորք, խորհեցաք հոգ տանիլ յիշեալ տղայի փրկութեանն. ոյր սակս գրեցաք ի Բայազիտ Նաւասարդեան պ. Հայրապետին՝ որ ծանօթն է Թարվիզու մահտեսի Յովհաննիսին, և ըստ պ. Եսայու կարծիքական բանին, ՌԾ բաճախլու խոստացաք, և նա գրեալ մահտեսի Յովհաննիսին, զաղային բերել ետ և յղեաց առ մեզ, և մեք յետ ԺԷ աւուրց պահելոյ աստ ի շողոյն կասկածեալ ընդ Մեհրապի եղբօրն և եղբօրորդւոյն յղեցաք ի Թիֆլիզ առ եղբօր որդին քո ի յունիսի 18. ընդ որում և առ քեզ համառօտ թուղթ մի գրեցաք վասն այնմ։ Այլ մհտ. Յովհաննէսն քանիցս թուղթ գրելով առ պ. Հայրապետն վիճէ ընդ նմա թէ ի Գիլանու ինձ գրեալ են վասն այդ տղայիդ և զԾ պաճախլու ոսկի են խոստացեալ տալ. դու Ճ՞ր շուտով յուղարկեսցեր, ԳԾ ոսկի թամամ կը խնդրեմ. և այլն. և մինչ պ. Հայրապետն զայս գրեալ էր մեզ, և զնորա վիճոյ թուղթն յղեալ, մեք զքսան ոսկի ես յղեցաք և գեռ վճռն ոչ է վերջա-

ցեալ. տեսցուք ուր կարասցի, զրեսցուք քեզ։ Եւ առ այս պ. Եսային հասուցեալ է մեզ ԵԾ վաթսուննոց միայն։ Իսկ թուղթն քո որ յայսմ ամի ի փետրվարի 3 գրեալ էիր, էհաս ի մայիսի 2, հանդերձ Նախիջևանու կայսերական հրովարտակի թարգմանութեամբն։ Եւ յապրիլի 28, և ի մայիսի 12 գրեալ թուղթքդ հանդերձ կայսերական ողորմութեան առ մերազունս շնորհեալ նամակաց՝ և յատկապէս քեզ պարգևեալ կաւալերական հրովարտակի օրինակօքն ժամանեցին, զորս ընթերցեալ՝ ընդ առատազեղ բարեշնորհութիւնս Աստուածապսակեալ Մեծի Կայսերն առ ազգ մեր և առ սիրելիսդ, յոյժ ուրախացաք և մխիթարեցաք. և գոհացաք զՏեառնէ Ամենակալէ։ Բայց ընդ մխիթարութեանն որ յայգմ կողմանէ, տրտմականքն ևս յայսմ կողմանէ դարձեալ ծագեցան, այլ ես գալուստ սարդարի ի շահէն, և վրդովմունք երկրացս, և տարակուսանք մեր. (որ յետոյ պատմեսցի)։ Ընդ որս և երիցս սակաւ առ սակաւ գալ ուխտաւորաց, ևս և Դանիէլ վարդապետի պատրիարգութեան հաստատելոյ գրութիւնքն ի պատասխանի մահսարի նոցա, և այլ թղթոց, և բազում ևս ցաւք և զբաղմունք։ Որովք պատաղեալ մինչ ոչ ժամանէաք գրել զդարձուածս յիշեալ թղթոցդ, ի յուլիսի 7 դրեալ երկահատոր թուղթըդ էհաս ի սեպտեմբերի ամսոյս 2. և վերծանեցաք զամենայն գրեալսդ։ Եւ զի խնդրեալ էիր շուտով պատասխանի գրել, և մեք փութացաք ի գրութիւն այսր թղթոյ։ Այլնախ՝ ուրախակցութեամբ մեծաւ շնորհաւորեմք զշնորհեալն քեզ յԱմենաողորմած Կայսերէն զշքեղափայլ Կաւալերդ՝ հանդերձ նոմոսիւն, և ասեմք՝ Աստուածն բարձանց՝ տացէ զերկարագոյն կեանս նորին գերամբարձ մեծութեանն, և սիրելւոյդ շնորհաւոր արասցէ զկաւալերութիւնդ փառազուարճ կենօք։ Եւ ապա վասն զի իբրև խո...* վարկպարազի՝ ընդ մտանել Եփրեմ վարդապետին ի վիճակդ, ի վրդովեալ մտաց, զարմացաք յոյժ, և չգիտացաք թէ ...քան զսահման պաշտօնի իւրոյ, եթէ այլ ոք զգրգ... զգացոյց ձեզ, կամ թէ դու...փոխեցայք դիտմանէն ձերմէ։ Քանզի մինչ մեք . . . գագոյն անցեալ խօսից և պատասխանեաց՝ լռեալ էաք ի խօ . . . պիսի, դու սիրելիդ քեզէն ցաւեցեալ ընդ անհուն վնասսն սրբոյ Տանս, ի Թիֆլիզու գրեցեր թէ զփիլանն նուիրակ առաքեսցես, (զորոյ և եպիսկոպոս գոլն գիտէիր), որով մեծ օգնութիւն լիցի սրբոյ Աթոռոյդ ի վիճակէս իմովս պարտաւորական հետեողութեամբ. և մեք ի միտ առաք զբանն, և ոչ աճապարեցաք, մինչև երկիցս ևս գրեցեր, և ի դառնալդ ի Թիֆլիզու մինչ զԹաղէոս վարդապետն եպիսկոպոս Շուլաւէրցւոց տարար ընդ քեզ, յայտնի եղև իսկ, որ բազմութեան վիճակիդ եպիսկոպոս պիտոյ է, ըստ որում ի քանի քաղաքս և ի գաւառս են՝ յիրերաց տարակացեալս։ Վասն որոյ իրաւունս համարեցաք եպիսկոպոս խնդրելդ, և մտադրեցաք զպատեհն, և յիրաւի ընդ քոյգ նշանակեցելոյն համեմատեալ՝ զնա առաւել պատկանագոյն էր խոնարհ և հեզ բարուքն, զոր դու ևս գիտես։ Վասնորոյ զդա առաքեցաք։ Եւ ի կոնդակսն այսպէս է գրութիւնն մեր թէ՝ յայսքան ժամանակ զհոգևոր պարտսն մեր Յովսէփ արքեպիսկոպոսն վճարեալ, և զձեր արդիւնսն լրապէս առ մեզ հասոյց, և այլն։ Իսկ արդ՝ սիրելին մեր վասն յաճախելոյ նորեկ ժողովրդեանն մերոյ յայդր՝ և բազմանալոյ հողոց և զբաղմանց իւրոց յայցելութիւն նոցա, անձեռնհաս լինելով ի գործն նուիրակութեանն, խնդրեալ էր ի մէնջ զայլ ոք յուղարկել յատկապէս վասն նուիրականի գործոյն, որ ինքն ևս օժանդակելով նմա ի ժամանակին վճարեսցի, ուստի և մեք զառաջնորդականն գործ նմա ապաստան արարաք։ Իսկ զհոգևոր որդին մեր զԵփրեմ նորոգ նուիրակ կարգեցաք և այլն որ ինչ գրին ի հասարակ կոնդակս նուիրակաց։ Բայց ի նուիրակութեանն բանից՝ այլ ինձ ոչ գոյ՝ որ նմա տեղի յանդգնութեան լինիցի ընդդէմ քո։ Եւ վասն գործոյն ըսկըսանելոյ. ըստորում դու գրէիր յայս ինչ ժամանակի ի Հաշտարխան եղէց, առ այն ասացաք գնալ ի Հաշտարխան գտանել ըզքեզ. և թէ անդ չլինիցիս, զթուղթդ առաքել առ քեզ, և իշխանքն որպէս հաճիցին ըստ քոյգ կամեցողութեան, այնպէս առ-

* Թուղթը տեղ-տեղ պատառուած էր։

նել. բայց վասն անուն յիշատակելոյ, կամ այլ ինչ պատուէր գժղթնական ոչ է եղեալ ի մէջ մեր, այլ բազում անգամ ասացեալ եմք որպէս անօրինեսցես և առաջադրեսցես վասն նուիրակականի գործոյն միայն, այնպէս շարժիլ. Ճշմարիտն այս է. Իսկ սիրելիդ գրես թէ՝ նուիրակն ես եմ, և ո՛չ բաժանի յինէն, և հակաթոռ ո՛չ կամիմ, ելն, Արդ՝ յոյժ բարի. մինչև ցայժմ որ զգործն քև վճարէիր, մի՞թէ չէաք յօժարակամ ընդ նուիրակ կոչիլդ սրբոյ դահիս, կամ ի պատիւ մեզ չէ՞ր, այլ նախ դու ինքն նուիրակ խնդրեցեր. գրելով ես թէ՝ ես ձեռնհաս չեմ, և որոց յանձնեմ, պարտք բերեն ի վերայ իմ. Ապա և մեզ դէպ եղև զոք յղել, ահա երուսաղէմացիք զիւրեանց յուղարկեալն նուիրակ կոչեն, ապա մեք զ'ի սրբոյ Աթոռոյս յուղարկեալն սրբալոյս Մեռոնաւ զի՞նչ կոչէաք, սիրելիդ մէկ անուն ցուցանէիր յառաջ՝ որ իմանայաք. բայց զայլ անուն ոչ գիտելով նուիրակ եմք գրեալ, որ քոյդ օգնութեամբն և բանիւն զնուիրակութիւն արասցէ հանդերձ իմաստիայի ժողովմամբն, և դառնայցէ ի սուրբ Աթոռս. Եւ թէ զեպիսկոպոս գոլն ծանր վարկանիս, մտածեա լաւապէս թէ Աղուանից տան օտար վիճակի եպիսկոպոսմ ձեռնադրութիւն առնելն իցէ արժան յայդր, եթէ սուրբ Էջմիածնի. ընտրեա Աստուծոյ իրաւամբն, և այնու բանիւդ ես, որ գրես թէ՝ ես զիս ճանաչեմ ո՛չ միայն միաբան սրբոյ Աթոռոյգ, այլ՝ և ժառանգ. Իսկ թէ յան...կարծիցես զՆփրեմ վարդապետէն, դա ի Խօյ...ի Սալմաստ ընդ վայրենաբարոյ առաջնորդաց ոմանց...Յակոբ առաջնորդին այնպէս խոնարհութեամբ ... և հանդարտութեամբ մի վանկ տրտունջ ... ապա Որչափ առաւել զընտրելագոյն արժանապատիւ է ի յարգի է ... մանաւանդ ի մէնջ պատուիրեցեալ է. Եւ զիմբզ զբաժանումն և զհակաթոռ ձայնսն ի մէջ բերես, ի տան միում աւագ եղբայրն ի մի գործ լինի և կրտսերն յայլ գործ. և որդիքն յայլ և այլ սպաս, և փոքրն մեծին հպատակ. այնու միթէ տանն կամ գործոյն բաժանումն է, նոյնպէս իմա և զայգ. քանզի դու բազմամեայ կառավար և վերատեսուչ այդմ վիճակի, և դա ի նուիրակութիւնն միայն կարգեալ՝ և այն քեզ պաստան. դու ամենայն օրինաց եկեղեցւոյ վերակացու և հրամայօղ, իսկ դա միայն իւր մասնաւոր պաշտօնին հոգատար. Եւ ի ձեռնագրելիսն ես ամենայնիւ քեզ սպասող. զի վիճակն և հաւանութիւնն քո է, եթէ գրես, կամ ասես ձեռնադրել զոք ուրեք, արասցէ ըստ բանի քում, և մինչ ո՛չ կամիցիս, ամենևին մի արասցէ, քանզի վճիռն առաջնորդին է. Նա զի դու յայդր ընակցեալ իբրև մշտնջենաւոր, իսկ զդա յուղարկեալ եմք ի Գ կամ ի Դ ամս կատարել զգործն և դառնալ. Այսոցիկ այսպէս գոլոյ, այլ ուրմ երեիցի փեռեկտումն և հակաթոռութիւն, և ո՛չ իւիք. Արդ թողեալ դերկարաբանութիւնն, կարճ ասեմք. Ի վերայ առաջնոց պատուիրմանցն մերոց, այժմ ևս թղթով գրեցաք, ըստ ամենայնի հեզութեամբ գոլ և հպատակիլ բանից քոց, և զոր ինչ ասասցես և առաջադրեսցես՝ այնպէս վարիլ, ոչինչ ընդդիմութիւն ցուցանելով քեզ. Եւ քեզ խոհական սիրելւոյդ գրեմք, զայլ և այլ կարծիսն մերժել ի մտաց և սիրով ընդունիլ զՆփրեմ վարդապետդ, յորմէ քեզ ամենևին պակասութիւն ինչ ոչ գոյ. մի՛ ունկնդիր լինիր խառնակչաց բանին, և մի՛ ունայնացուցաներ զպատիւ Մօրս քոյ լուսոյ և մեր՝ որք յայսքան ժամանակ ոչ եմք անպատիւ արարեալ զքեզ. այլ մեծարեալ. ապա և քեզ արժան է ըստ խոստացեալ հարազատութեանդ՝ լսել բանից մերոց. և պարտիս իւրաքանչիւր քաղաքաց վերայ ուր և կամիցիս զգնալն, թուղթ տալ՝ թէ ի մեծամեծ զբաղմունս եղեալ ձեռնհաս չլինելով նուիրակութեանն, գրեցի հոգևոր տէրին զմի եպիսկոպոս յղել, որ զնուիրակութիւնն արասցէ և յոմանս իրս եկեղեցւոյ ըստ բանի մերում պիտոյասցի. Նա ևս զդա յղեալ էր. զոր ընկալայ և յուղարկեցի յայդր. սիրով ընդունիք և զընդունելութիւնն ինձ համարիք, և զառատ արդիւնս տայք յօգնութիւն նեղութեանց սրբոյ Աթոռոյն. Եւ զայլ ինչ ևս զոր պատշաճ տեսցես գրել. Այսպէս առնելով օժանդակեսցես որ զգործն վճարեսցէ, և մէկ օր յառաջ դառնայցէ. Զոր ինչ մի՛ անգամ գրեալ եմք, կոնդակքն իւր ձեռացն է, նոր ևս բան յաւելուլ և պակասեցուցանել ոչ լինի. Թէպէտ և ըստ սովորութեան գրեալ է կա-

պել և արձակել, բայց Եփրեմ վարդապետն ոչ է սովոր յայնպիսիս, որք մանաւանդ Առաջնորդին են գործք։ Այլ սակս ես գրեցաք զգուշանալ։ Դարձեալ զմեծի Կայսեր շնորհելն պատրիարգին սրբոյ Երուսաղէմի զպնակ և զկտորս, զորս ծան . . . էիր, յուղարկելով և զօրինակ Նամակին, իմացաք։ Եւ յաղագս մեզ շնորհեալ պարգեացն և հրովարտակին, որ գրեալ էիր . . . ի պատասխանագրութիւնն շնորհակալութեան, արդարև քանիցս . . . չյաջողեցաւ. և Նարդենիս քան զայլ ամենայն րանս . . . հարկաւոր, բայց յոյժ շփոթեալ կամք սարդարն և շահի որդին մինչ եկին ի . . . Սալմա . . . Ջաֆարղուլի խանն զամենայն բնակիչս երկրիս . . . ի Բայ . . . ես ամենայն ընտանեօքն փախեաւ . . . ի բերդին Խօյու զոր ինչ Թողեալ, յետոյ զօրաժողով . . . ի վերայ սարդարին ի վանել յերկրէն. բայց ինքն վանեցեալ արմատախիլ եղև ի Խօյու. և զամենայն ժողովուրդսն զորս մի անգամ ի Բայազիտ էր վարեալ, անտի ևս վարեաց յերկիրս Երեանու։ Եւ իւր տունն բազմութեամբ պարագայից ի հիւրանոցիս մերում և ի գեղ?ն քան, և ինքն գալոց է աստ՝ և Երեանու խանն ևս անտի՝ որք աստանօր խօսեսցին զպայմանս ինչ։ Զի մեր խանն ևս է ապստամբ ի շահէն։ Իսկ Շահզաղայն և սարդարն ի Խօյայ բերդն մտեալ և տիրեալ են. Թէպէտ երկիրն ամայի։ Այժմ այս ասի թէ կամին գառնալ ի Թարվէզ և ոմանք ասեն թէ գալոց են յայս երկիր. յորոց Աստուած ազատեսցէ։ Արդ այսպէս ամբոխեալ և վաքանեալ՝ անձեռընհաս եմք։ Իսկ Աստուծոյ այցելութեամբն գուցէ զայստսիկ աղմուկս ի գլխոյ հանցուք, յայնժամ գրելոց և յղելոց եմք թէ զկայսեր և զմեծամեծաց Թուղթսն, և թէ զկոնդակս Ղրիմու և Դարբանդու և այլ տեղեաց որպէս Նշանակեալ էիր։

Ցայս վայր ժամանեալ գրութեանս, ի յուլիսի 22 գրեալ Թուղթդ էհաս առ մեզ ի սեպտեմբերի 14. և ինմա ցուցեալ բանսդ ևս ծանէաք. որովք և զարմացումն կալաւ զմեզ ի վերայ ապշելոյ և տարակուսելոյ ամենահզօր Թագաւորութեանդ ընդ գալուստ եպիսկոպոսի միոյ ի լայնածաւալ երկիրդ։ Այլ զուր կարծիք են եղեալ քեզ, որով յաւելորդս աշխատասիրեալ ես հանել ի դրանէ Կայսերականէ զնոմոս արգելման Եփրեմ վարդապետին ի Հաշտարխան ցդարձ քո անդր։ Քանզի եթէ տեղականքն ասէինն մա՝ սպասել գալստեան քոյ, կամ թէ դու գրէիր թէ համբերեա, նա ՙոչ էր ընդդիմանալոց։ Բայց ի բնէ սովորութիւն է մերայնոց՝ զայդպիսիս գործել և թողուլ զախորժապատում յիշատակս յապագայս։ Եւ սակայն՝ զի խոստացեալ էիր կրկին՝ հաւատարմութեամբ ձեռնտու լինել և արգիւնացուցանել զգործն, շնորհակալ եմք զսիրելւոյդ, և ահա կրկին գրեցաք Եփրեմ վարդապետին՝ սպասել գալստեան քում ի Հաշտարխան։ Իսկ վասն Իւան Աբրահամիչին և Մարտինի որդի Գաբրիէլին որ գրեալ էիր թէ հերձուածք են, և զմեր առ Նոսա Թուղթս գրելն անվայելուչ էիր համարեալ, զայն պ. Յովհաննիսէն զլաւութիւնս մեք ի Թղթոց քոց եմք գիտացեալ յառաջագոյն. և բազում ամք են. յորս յերկրէ այտի եղնգաչափ Թուղթ չեմք առեալ՝ ղի ցանկով փակեցեալ է. և այնպէս գիտեմք թէ՝ ըստ յառաջ գրեցելոյդ Յովհաննէսն Նոյն է։ Գաբրիէլն ևս Ժ ամօք յառաջ ուխտ եկեալ ի սուրբ Աթոռս, և Ծ ղուռուշ խոստացեալ յետ ամաց զայն ի Պօլիս յանձնեալ էր Մինաս վարդապետին։ Եւ մեք ընդ Նուիրակին զերիս Թուղթս գրեցաք, մին առ մեր գանձապետ պ. Մկրտիչն, մին առ յիշեալ Յովհաննէսն իբրև գլխաւոր իշխան քաղաքին, և մին առ Գաբրիէլն վասն տրոցն։ Բայց զի այդքան վտանգաւոր ցուցանես, վասնորոյ գրեցաք այժմ Եփրեմ վարդապետին զգուշանալ ի տալոյ զԹուղթս երկուցն, և բաւ է։ Ո՛ղջ լեր ի Տէր։

Գրեցաւ յամի Տեառն 1799, և ի սեպտեմբերի 17։ Ի սուրբ Էջմիածին։

ԿԵ. Երկրորդ թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Պաւղ Պետրովիչ, այսինքն Պօղոս Պետրոսեան, շնորհակալութիւն վասն ողորմութեան ճռովարտակին եւ պարգեւացն զորս շնորհեալ էր, եւ այլն.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Ղուկաս և ողորմութեամբ Նորին կաթողիկոս ամենայն Հայոց՝ Քրիստոսական և Առաքելահաստատ սուրբ եկեղեցւոյս. փոխանորդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ ժառանգորդին վիճակի սրբազան Առաքելոցն Թադէոսի և Բարգուղիմէոսի, և պատրիարգ լուսանկար սրբոյ Գահիս Էջմիածնի՝ կառուցելոյ ի Վաղարշապատ՝ որ ի դաշտս Արարատեան։

Յորմէ ջերմեռանդ սիրով և կարօտիւ, և սրտակէզ փափագանօք մատուցի ողջոյն Քրիստոսաւանդ և օրհնութիւն հոգևորական, հանդերձ առատաղեղ ողորմութեամբն Աստուծոյ, և զօրութեամբք փրկական Խաչին Քրիստոսեան, և Նորին կողամուխ սուրբ Գեղարդեանն, և շնորհօք սրբոյ Տեղւոյս Իջմանն Նորա, և օրհնաբաշխ Աջոյ սուրբ Լուսաւորչին, և ախտափարատ ղամբարանաց սրբուհեացն Հռիփսիմեանց և Գայիանեանց։ Ամենաբարեպաշտ Թագաւորի և տիեզերասաստ արքայի արքայից՝ Աստուածապսակեալ՝ Օգոստափառ Ինքնակալ Մեծի Կայսեր ամենայն Ռուսաց՝ Պաւէլ Պետրովիչի, և ի Տեառնէ յարմարեալ զուգակցի քում Մեծ Թագուհի և Կայսերուհի Մարիա Ֆէտօրովնին։ Եւ Աստուածապարգև ծիրանածին զաւակացդ կայսերական բարձրութիւն Ալէքսանդր Պաւլովիչին, և զուգակցի Նորա Թագուհի և մեծ դշխոյ Եղիսաբէթ Ալէքսիովնին։ Կայսերական Բարձրութիւն և Մեծ Իշխան Կոստանդին Պաւլովիչին, և իւր զուգակից Թագուհի և մեծ Դշխոյ Աննա Ֆէոտորովնին, վսեմափառ և Մեծ իշխանաց՝ Նիկոլա Պաւլովիչին և Միխայէլ Պաւլովիչին։ Բարեպաշտ Թագուհեաց և Մեծ Դշխոյից՝ Ալէքսանդրիա Պաւլովնին և Հեղինէ Պաւլովնին և միւսոցն։ Ի Քրիստոս խնդալ հոգեզուարճ բերկրանօք։

Եւ ընդ խոնարհադէմ ողջունագրութեանս՝ զձկուցումն ինչ լիցի մեծահանդէս և իմաստնախոհ Ձեռումդ Վեհափառութեան։ Քանզի երջանիկն արքայից Աստուածարեալն Դաւիթ ի հոգեշունչ երգսն սաղմոսաց ասէ, Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն Նորա ամենեցուն տիրէ։ Եւ թէպէտ ըստ երանելւոյն Յովհաննու Առաքելոյ՝ խոստովանեալ լինի թէ է յամենեսին և ամենայն ուրեք մերձ՝ և ճշմարիտ է, վասն անպարագիր գոլոյ Աստուածութեանն, որպէս և ոմն յիմաստուն վարդապետաց գրէ, անուրեք վայրից, և չիք սահման առանց Նորա։ Սակայն զի հրաշակերտութիւնք Նորա առաւելապէս ի յերկինս երեւին, և զի ծաւալմունք խնամոց և շնորհաց՝ ի բարձանց յարմարի իջանել առ խոնարհս, վասնորոյ զերկինս նշանակեաց իւր սեպհական տեղի. յասելն Եսայեաւ մարգարէին թէ՝ երկինք Աթոռ իմ են։ Իսկ հոգերգողն յայլում սաղմոսի՝ զերկնաբնակ գահաւորութիւն Նորա իբրու պատճառաւն հանդերձ ի մէջ բերեալ ասէ, Տէր յերկինս յաթոռ իւրում, և աչք Նորա ի տնանկս հային։ Որով իմացեալ լինի թէ բնակել Նորա ի բարձունս՝ վայելչացուցանէ զակնարկութիւն Նորա ի ստորինս հայորդել զամենեսեան իւրում ամենաբաւական բարութեան ըստ իւրաքանչիւր ընդունակութեան։ Ի վերնախնամ տեսչութենէ նոյն ամենիմաստ Արարչապետին պատեհ պատկանաւորութեամբ շնորհեալ է կարգ ընդհանրոյ կառավարութեան, այսինքն հաղորդութեան վերնոցն առ ստորինս։ Քանզի վեհանձանցն՝ որք հանուրց կացուցմանց կառավարիչ իշխանաւորք են, և այցելուք ստրկաց, ի վերջին տեղիս ի բարձր բեմբի Գահ և Աթոռ սահմանեալք են. զի անարգել բայց միջնկեալ խտրոցի զիւրեանցն խնամատարութիւն հաղորդեսցեն ստորակայիցն՝ որոց են կարիք պիտոյից։ Վասնորոյ որպէս վերնագոյքն ի բարձանց գահոյից իւրեանց զաչս ի խոնարհ կարեն տարածել առ ստրուկսն, և գիտել և ճանաչել ըստ պատշաճին զպէտս նոցին, նմանապէս և կարօտքն խնամոց անխափան առանց միջնկեալ խտրոցի կարեն զհայցուած աչաց ի վեր առ վեհս իւրեանց ածել։ Որով

և լինի իբրու համբնաանութիւն երկուց տարանջատ հեռաւոր ծառայից, և հաղորդակցութիւն գեղեցիկ տուրեաոութեանց՝ ե ոչ ընաւ օտարութիւն։ Ապա ի գեղեցիկ կարգաւորութենէ աստի նպաստ ընկալեալ ստորինքն անխտիր մուտս և հայեցումն ստանան, ե ղհայցուածս ուղղակի առ վեհանձինսն ընծայեն, ե առնուն թարց բացառութեան զխնդիրսն։ Արդ՝ ե մերս նուաստութիւն նպաստ առնլով յօրինակէս վըստահացեալ յամենատարած բարեհոչակութիւն ձերոյ Աստուածասիրութեան՝ ի նախանցեալն ամի առաքեցաք զԹուղթ աղերսանաց ի սպաս առատախնամ ձերդ բարձրագահութեան, ձեռամբ Յովսէփայ արքեպիսկոպոսին. յոյս յղացեալ ի միտս մեր թէ ընդունելի լիցի բարեհաճ կամաց ձերոց։ Եւ ըստ որում ասէ սրբազան Առաքեալն Պօղոս՝ յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ. արդարե առաւել քան զյուսալին մեր գտաք։ Վասն զի կայսերական մեծութիւն ձեր շարժեալ ի գութ առ սուրբ Տաճարս Տէրունեան և առ յետնորդ հոգաբարձուս սորին՝ ամենաողորմածաբար շնորհեալ էիք զհրովարտակ ողորմութեան և բարեհաճութեան ձերոյ՝ գծագրեալ ի նմա զբանս պանծալիս ի պատիւ մեզ ներգևելոցս ե ազգի մերում, ե ի փառաւորութիւն Աստուածայնոյ սուրբ Տաճարիս, և կնքեալ կայսերական համայնաբազձիկ կնքովդ, ե ձեռագրեալ բարեբաշխ ձեռամբդ. և ոչ շատացեալ այսու մեծագոյն շնորհատրութեամբ, յաւելեալ էիք նաև ի նշան յատկական սիրոյ և անբաւ քաղցրութեանդ պարգևել զպարգևս չքնաղագոյնս՝ զպնակէ մի ոսկէկազմ, ընդելուզեալ անդամանդ և զմրուխտ ակամբք պատուականօք, և ի միջին տեղւոջ կանաչագեղ եաշմ զարմանալի քանդակուածով սքանչելի պատկեր Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զերկուս կտորս ոսկէհուռ դիպակաց։ Զորս ընդ շնորհալի հրովարտակին իբրև զձիրս երկնառաքս ընկալեալ ի վերայ գլխոց մերոց և նուիրեալ ի Լուսանկար Տաճարս Տեառն՝ լրութեամբ ուխտի սուրբ եկեղեցւոյս լիալիր գոհունակութեամբ փառաւորեցաք և փառաւորեմք զառ ի յԱստուածուստ փառաւորեալ զգերապանծ Մեծ Կայսերութիւնդ։ Որ այսու բազմազեղ շնորհիւ ձերով բարձրացուցիք զգլուխ մեր և ազգիս մերոյ անհամեմատ մխիթարութեամբ և փառազարդութեամբ։ Եւ ի վերայ այսր՝ ըստ խոնարհ խնդրոյ Յովսէփայ արքեպիսկոպոսին մերազնեայց, ի Տիրապահ երկրիդ ընդ հովանեաւ բարեխնամ թևոց Ձեր բնակելոց շնորհեալ էք ըստ իւրաքանչիւր քաղաքաց բնակութեան դոցա զհրովարտակս ողորմութեան յապահովութիւն կացութեան դոցին, և նորապէս յայս կողմանց գիմելոցն ևս խոստացեալ էք զխոստումն տիրաբար այցելութեան։ Արդ՝ յաղագս այսոցիկ Աստուածատիպ ողորմածութեանց և յոգնապատիկ երախտեաց ամենազթած Ձերոյ Տէրութեան զՁրպիսի շնորհակալութիւնս և զՁրպիսի գոհաբանութիւնս մատուսցուք. այլ միայն ծանուցեալ զողորմածագունեղ կայսերութիւնդ իբրև զյաստուածուստ յատկապէս բարերար և հոգաբարձու և իսկապէս Ինքնակալ Ասքանազեանս զրոհի առաւել քան զառաւել պարտականս կացուցանեմք զմեզ զօր հանապազ վերառաքելոյ զպաղատանս արժանաւոր հայցուածովք, ի յերկինս առ ամենակալ անմահ և կենսատու թագաւորն թագաւորաց՝ նորոգել ըզկենդանութիւն Աստուածապսակեալ՝ Օգոստափառ Ինքնակալ մեծի Կայսեր ամենայն Ռուսաց՝ Պաւէլ Պետրովիչի։ Եւ պերճապըսակ Մեծ Թագուհի և Կայսերուհի Մարիա Ֆէտորովնին։ Եւ թագազարդ ձերայնոցն Կայսերական բարձրութիւն Ալէքսանդր Պաւլովիչին, և իւր զուգակից թագուհի և Մեծ Դշխոյ Աննա Ֆէտորովին, Վեհափառ և Մեծ իշխանաց՝ Նիկոլա Պաւլովիչին և Միխայէլ Պաւլովիչին։ Բարեպաշտ Թագուհեաց և Մեծ դշխոյից՝ Ալէքսանդրիա Պաւլովնին և Հեղինէ Պավլովնին և միւսոցըն։ Մշտնջենապէս հաստատուն պահելով զգերամբարձ Աթոռդ Կայսերական, և օրըստօրէ ևս քան զևս բարձր առնելով զեղջիւր թագաւորութեան ձերոյ։ Եւ ըստ որում բարեպաշտօրէն հոգատարութեամբ վանէք զզօրութիւնս հակառակորդաց սուրբ եկեղեցւոյ՝ ի պարծանս Խաչին Քրիստոսականի. որոյ և աւետաւոր համբաւողն մեծապէս ցնծամք, նոյնպէս միշտ յաղթող և ահարկու արասցէ Տէր

զՏէրութիւնդ յազգէ ազգ մինչև ի կատարած աշխարհի, և ի հանդերձեալ կեանսն անվախճան թագաւորութեամբն թագաւորեցուսցէ յԱրքայութեանն երկնից։ Իսկ արդ՝ մինչ զԱստուածայնոյն առ խոնարհս ակնարկութեանն զնմանութիւնն բերեալ ի բարձրազահդ ձեր Մեծութիւն քաղցրացայք պսակել ողորմութեամբ և պարգեօք զմերս նուաստութիւն, և զսուրբ Աթոռս Հայաստանեայց, որովք իբրու և զողջոյն ազգս մեր. մանաւանդ զընակեալսն ընդ իշխանութեամբ գերազօր գաւազանի Ձերոյ, և զհոգևոր Տեսուչն դոցա զՅովսէփ արքեպիսկոպոսն, այգու առաւել ևս համարձակութիւն ստացեալ մեր առաջի վեհափառագոյն կայսերութեանդ, ընդ շնորհակալութեանս բանից՝ դարձեալ խնդիրս մատուցանեմք, զի զտիրական քաղցր խնամոցդ առատութիւն զոր գետօրէն զեղուք ի վերայ մեր և ազգի մերոյ՝ աննուազ առնիցէք ամենաբաւ ողորմածութեամբդ, որով յիրաւի յոյժ բաւականութիւն գտեալ բնաւիւք մերայնովք յաւէտ գոհունակութեամբ լիցուք աղօթաւորք վասն հանրաօգուտ կենաց Աստուածապսակեալ՝ Օգոստափառ Ինքնակալ Մեծի Կայսեր ամենայն Ռուսաց՝ Պաւէլ Պետրովիչի։ Եւ համայն ծիրանածին Թագաժառանգիցդ, և յաղագս արդիւնական մեծագործութեանց ձեր՝ և բովանդակ ընդ հրամանաւ ձերով բարեկարգ կառավարչաց, Ո՛ղջ լեր Աստուածապատրաստ պսակդ պարծանաց հիւսիսական ազանց, ի փառս ամենաթագաւորին Քրիստոսի, և ի հրճուանս մեր. Ամէն։ Գրեցաւ ի հոկտեմբերի 15. յամի Տեառն 1799 ի լուսանկարս սուրբ Էջմիածին։

(Ձեռագիր արքազանին)

Ի բացայայտութիւն ստուգութեան ամենայն դրելոցն ի թղթիս, իմով ձեռամբ գծագրեմ աստանօր՝ յետնորդ պաշտօնեայ Քրիստոսի, և յաղագս Խաչապսակ մեծի Ինքնակալիդ միշտ աղաչաւոր՝ խոնարհ Ղուկաս կաթողիկոս ամենայն հայոց։

ԿԶ. Ղուկաս կաթողիկոսի թուղթ Պետրպօլս առ ազնիւ Աղայ Յովհաննէսն Ենարալ, ընդ շնորհակալութեան թղթոցն որս առ կայսրն յաղագս հրովարտակին եւ պարգեւացն, եւ առ ոմանս Անձինս դրանն.

Յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ՝ Քրիստոսատուր ողջունի և հոգևոր օրհնութեան, հանդերձ մեծազօր շնորհօք սրբոյ Տեղւոյս Իջման բանին Միածնի, և համայն հրաշագործ սրբութեանցն և Մասանցն սրբոց, և շնորհաբաշխ Աջոյ սրբոյն Գրիգորի լուսատուին հոգւոց մերոց, ի վերայ իսկապէս սիրելւոյդ իմոյ պատուականի՝ հաւատարիմ և օգտաբար որդւոյդ սրբոյ Աթոռոյդ՝ յԱստուծոյ օրհնեցելոյ և փառազարդեցելոյ, բարեպաշտի և խոհականի, միազարմի և ճոխապատուի, պայծառ իշխան և յարգելի ենարալ գերազնիւ Աղայ Յովհաննէսիդ Եղիազարեան, և Աստուածապահ տան քում, և բնաւից քոյայնոցն և ընդ քեզ եղելոց, ուրախ լինիլ ի Քրիստոս յարաժամ (Շնորհք)։

Եւ ընդ առատաձիր օրհնութեանս Աստուածայնոյ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում։ Զի յանցեալ տարւոյ դեկտեմբերի վերջն թուղթ դրեցաք առ դերաղնուութիւն քո ի շնորհաւորութիւն նորապիրճ ենարալութեանդ, և ի յանձնարարութիւն վասն նորոդ նուիրակ Եփրեմ խոնհեմազարդ եպիսկոպոսին, զոր և ի մարտ ամսոյ 4 առաքեցաք, և այժմ ազդ եղև մեզ՝ որ ժամանեալ է ի Հաշտարխան քաղաք. և համարիմք թէ զայն թուղթն մեր յուղարկեալ իցէ առ աստուածասիրութիւն քո, և իմացեալ իցես զդրեալսն մեր անդ։ Եւ զի արժանավայել առաջնորդն Աստուածախնամ երկրիդ մերայնոց և սիրելին մեր Յովսէփ յոդնահանճար արքեպիսկոպոսն յայնժամ ծանուցեալ էր մեզ զմատուցումն աղերսական թղթոյն մերոյ առաջի հանդիսավեհ Քրիստոսազօր ինքնակալ Մեծի Կայսերն Պաւէլ Պետրովիչի, և զնորին բարեհաճութիւնն ընդ խնդրուածսն մեր, և ամենաողորմածաբար շնորհելն զհրովարտակ ողորմածութեան, և զպարգևս պատուա-

կանս, և նշանակեալ էր թէ զօրինակսն առաքեցի, բայց դեռ ոչ էին հասեալ, վասն որոյ ի նմին յիշեալ թղթին մերում խոստացեալ էաք՝ զի երբ և օրինակքն հրովարտակին ե պարզևացն առ մեզ ժամանեսցին, զրեսցուք զշնորհակալութիւնսն։ Արդ՝ յայնմհետէ ե այսր քանիցս գիր եմք առեալ ի Յովսէփայ արքեպիսկոպոսէն, որ թէպէտ զիսկ հրովարտակն ե զպարգեսն ոչ հաւատալով աննշան անձանց, խոստանայ ի ձեռն նշանաւոր ե հաւատարիմ մարդոց առաքել, այլ զօրինակս հրովարտակին և պնակէին ե վէգիլի թղթոյն յղեալ էր, զոր տեսաք ե ընթերցեալ իմացաք զմիտս գրեցելոց, և՛ շնորհակալ եղաք զառատաձոյն ողորմութենէ Օգոստափառ Քրիստոսազօր Ինքնակալ Մեծի Կայսերն Պաւէլ Պետրովիչի։ Եւ զի մինչև ցայժմ երկար ժամանակ է ի շնորհելոյն հետէ, եթէ սպասէաք առ մեզ հասանելոյ իսկ իրացն, առաւել ես յերկարաձգիւր ժամանակն, և անհամբեր լինէր յետաձգումն։ Վասն որոյ ահա գրեցաք զշնորհակալութեան և աղերսանաց թուղթ մի ի սպաս զերախնամ, և զերիս թուղթս ևս առ մեծապատիւ գործակալսն, ոչ միայն վասն առ մեզ ողորմութեանն և պարգևացն գոհանալով, այլ և յաղագս հրովարտակացն խնամարկութեան զորս շնորհեալ է ամենայն մերազնէիցն ի կայսերական երկրիդ ի զանազան քաղաքս բնակելոց, ի յապահովութիւն կացութեան նոցա։ Եւ զայս օրհնութեան և սիրոյ թուղթ ես առ ազնուազոյն սիրելիդ մեր գրել հարկաւորեցաք ի բացայայտութիւն շնորհակալութեան մերոյ զքէն յաղագս վերստին ընդունելութեանդ և մեծարանացդ ե շահեցողութեանցդ առ բազմաշխատ Յովսէփ արքեպիսկոպոսն, ե մանաւանդ վասն ձեռնտու ե օգնական լինելոյդ ի խնդիրսն որ վասն հանգստութեան և օգտի ազգի մերում։ Իսկ արդ՝ յիրաւի յոյժ ե յոյժ գոհունակութեամբ բարեխնդիր աղօթաւոք եմք միաբանութեամբ հանդերձ, ի հրաշազարդ սուրբ Տաճարիս, վասն ամենաողորմած Քրիստոսազօր Ինքնակալ Մեծի Կայսերն Պաւէլ Պետրովիչի, ե գերապանծ պսակակցին իւրոյ Մեծ Թագուհի ե կայսերուհի Մարիա Ֆէօդորօվնին, ե վսեմափառ որդւոցն իւրեանց՝ կայսերական բարձրութեանց՝ Ալէքսանդր Պաւլովիչին, ե Կոստանդին Պաւլովիչին և Մեծ իշխանաց Նիկօլա Պաւլովիչին և Միխայէլ Պաւլովիչին։ Եւ ծիրանածին դստերացն՝ թագուհեաց և մեծ Դշխոյից։ Որոց շնորհեսցէ Տէր զկեանս երկարս ե խաղաղականս, օրհնելով և զօրացուցանելով միշտ զյաղթող և հզօր թագաւորութիւն իւրեանց, և բարձր առնելով ի մէջ ազգաց ե ազանց, ե ահարկու առ թշնամիսն։ Իսկ զգթութիւնն և զխնամարկութիւնն առաւել ևս աճեցուսցէ ի վերայ ազգի մերոյ և սրբոյ Աթոռոյս։ Եւ զքեզ զբարեպաշտ սիրելիդ ըստ ազնուախոհ փութոյդ և օգտակարութեանցդ վարձատրեսցէ մշտնջենաւոր երկնային ձրիւքն, և ի խնամս իւր պահեսցէ լիագոյն աւուրբք, զարդարուն առաքինութեամբք և ճոխափառ մեծապատուութեամբ, ե յաւէտ ևս քաղցրացուսցէ յաչս տիեզերակալ Մեծի Կայսերն Պաւէլ Պետրովիչի։ Որոյ զքարի համբաւսդ միշտ լսելով մխիթարեցուք։ Զկողմանցս խռովութեանցն ե զմերս նեղութեանց ոչ երկարելով աստ, թողումք ի սիրելւոյն մերոյ Յովսէփ արքեպիսկոպոսէն իմանալ, որում փոքր ի շատէ գրեալ եմք։ Եւ յիշեալ նուիրակ Եփրեմ համեստաբարոյ եպիսկոպոսն ի սէր Աստուածասիրութեանդ յանձնի։ Ո՛ղջ լեր ի Տէր խաղաղական կենօք. Ամէն։ Գրեցաւ յամի Փրկչին 1799. և ի հոկտեմբերի 15. ի սուրբ Աթոռս Էջմիածին։

Աստուածային բազմազեղ օրհնութեամբն և հոգևորական սիրով, ե Քրիստոսաէջ սրբոյ Տեղւոյս պահպանողական շնորհիւն ողջոյն և օրհնութիւն առաքեմք հոգևոր և սիրելի դստեր մերոյ ե ժրաջանի կենակցին քում երկիւղիւ Տեառն զարդարեցելոյ՝ և բարեպաշտութեամբ ճոխացելոյ՝ զգաստամիտ վեհազնուուհի խաթուն Կատարինէ Իւանովնայ տիկնոջն, և համայն մերձաւորաց ձերոց ազգայնոց ե բարեկամաց, յանձնելով զամենեսեան ի խնամ Տեառն Ամենակալի։

ԿԸ. Թուղթ Դաւիթ եպիսկոպոսի առ Յովսէփ եպիսկոպոս Արղութեանց.

Երջանիկ և երանաշնորհ... Տէր... Յովսէփ Արհի եպիսկոպոսի։

Յառաջ քան զայս զմին թուղթ... մատուցեալ եմ վեհանձնութեանդ ի ձեռն եղբօրն իմոյ Տեառն Եփրեմայ Արհի եպիսկոպոսի, զոր կարծեմ ի հարկէ զու հասեալ. այլ այժմ հայեցեալ ի յապագայ վաանգս, զորս կրեսցէ Մայր Աթոռս մեր, հարկեցայ ի մտացս սոյն բանիւս զմիտս իմ ծանուցանել Հայրութեանդ, և նովիմբ իմանալ զքոյդ միտս. բայց նախ՝ յիմս կողմանէ միամիտ լիցիս, զի Աստուծով՝ զոր ինչ հարազատութիւն ունելոց է որդի սիրելի առ իւր ծնողն, զնոյնն՝ իմ առ քեզ ունել յուսամ ի Տէր, թերևս այսմ և քոյդ ճշմարտադատ միտքդ վկայեսցէ. և զոր ասելոց եմ, է այս։ Ահա գլուխ մեր Տէր և Հայր ծերացեալ է և մանաւանդ թէ ի յետին տկարութիւնս է. և ժամանակն նեղ և երկիրս խառնակ. թէպէտ որքան սոյն Հովիւս մեր ի կեանս է (որում Տէր Աստուած ըզկեանս խաղաղս պարգևեսցէ) Աստուծով որպէս բազում անտանելիքն տարլի են եղեալ և անցեալ, նմանապէս և հանդերձեալքն անցանեն, բայց զի մարդս մահկանացու է և այն է ի հասակի ծերութեան և Աթոռս դատարկ է Քեզապիռեաց, զի որդի ի տեղի հօր փոխ սնակեսցէ. և մեք թարց Ձեր գիտութեան չկարեմք ինչ վճռել, և մանաւանդ թէ ի քոյդ մտաց չունիմ ինչ տեղեկութիւն թէ արդեօք հաճիս գալ յայս կողմունս թէ ոչ, զի ի նոյն ջատագով եղէց, որ զմիտս իմ ի քեզ ունիմ հանդուցեալ. որ եթէ կամք Ձեր հաճին յայսր ի սուրբ Աթոռս գալ, տեղեակ եղէց, որ ո՛ զիտէ, թերևս մեք յառաջ ելանեմք, քան որոյ ելանելոյն կասկածս կրեմք, սակայն թէ ողջ մնացաք և այսպիսի ինչ պատահեցաւ, մեք քոյդ խորհրդոցդ տեղեակ զոլով՝ ի վերայ նոյնոյ մտացն ջատագով լիցուք, որ անբասիր ի ձէնջ զանձն մեր կացուսցուք։

Զայսքան առ այս բաւական համարիմ ի գրել և զայլս թողում խորհել Քոյդ մեծութեան և այլն։

Նուաստ Դաւիթ եպիսկոպոս
1799 նոյեմբեր 27
ի ս. Էջմիածին.

Այս թուղթը հանուած է Կար. վ. Շահնազարեանի թղթերից, որ իր ձեռքով գրել է վրէն հետեեալ ծանօթութիւնը.

«Ի վերայ թղթոյս գրեալ էր ձեռամբ Յովսէփայ արհւոյ՝ կարծեմ ի պատասխանի Դաւիթ եպիսկոպոսին այսպէս.

«Եփրեմ արքեպիսկոպոս եղբայրն մեր ի սեպտեմբերի 19 գրեալ էր մեզ թէ սըրբազան կաթողիկոսն վասն քո օգտի է զիս առաքեալ, որ ինքն այսօր վաղն է, նորին կամքն և բոլոր միաբանիցն առ քեզ է և դու ես ակնկալութիւն մեր. Աթոռն և միաբանքն քոյ են, զի դու ես Տէր և Հայր մեր. և այլն։ Յետ այսորիկ զիմրդ համարձակին զայլ ոք ի տեղի մեր ընտրել. զի Հոգելոյս Հայրապետի հրաւիրակն առ իս է. և այժմ լալով գրեալ է զգործն նոցա ապօրինաւոր...»։

1800

ԿԸ. Թիֆլիզի Հայ հասարակութեան հանրագիրը Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ընտրութեան համար ի կաթողիկոսութիւն.

Արհի եւ պանծալի սրբազան եպիսկոպոսունք, Արժանագով Քաջաքարոզ վարդապետք, եւ ստ հասարակ միաբանութիւնք սրբոյ եւ մեծի Աստուածեան Աթոռոյ։

Հոգեւոր հարք, եւ սիրելիք մեր.

Ի ստորև կնքօղք և ձեռագրօղք, Եկեղեցականք և աշխարհականք բնակիչքս Թիֆլիզու, ըստ օրինի հարազատ որդւոց, մտեալ ի սուգ և ի տրտմութիւն, յաղագս օրհասի Երանելի Հայրապետին մերոյ, և Գթածագունեղ Հօրն հասարակաց, և Քրիստոնէական յուսով տալով կամացն Աստուծոյ, զ՞անդիսական պաշտօնս և մաղթանս՝ նմա վերամատուցաք որ կոչեացն զնա ի կոչումն Երանելեաց, ի նպար և թոշակ ճանապարհորդողին առ նա։ Զի գթութեամբ ընկալնլով, ի դասս Երջանիկ Հայրապետաց, և ի Պարս սրբոց դասակարգեալ հանդուսցէ ի լոյս երեսաց իւրոցն և զձեզ և զմեզ՝ տրտմազգեաց զորդիսս նորին, պահելով ի խաղաղութեան՝ սփոփեալ մխիթարեսցէ ի սիրտ և ի հոգի բերկրութեան։ Արդ՝ զկնի այսց՝ մեք ըստ մերոյ որդիական հարազատութեան, մտերմաբար հետևելով օգտի և շահու սրբոյ Աթոռոյդ մեծի, և ձերդ անխարդախ միաբան կալոյն, և բարեոքաբար վարիլոյն։ Սապէս՝ և Քրիստոսազօր բարձրագունեզ Արքայս մեր, բարեջան հոգտարութեամբ որ միշտ զօգուտն սրբոյ Աթոռոյդ կամի և ջանայ, ահա դրեալ նմա ևս առ ձեզ, նախ զմխիթարականն, և ապա զօգտաշահն բանք, զգոյշ տալով ձեզ, զի մի գուցէ տարաձանութիւն ինչ անկցի ի ձեզ, յորմէ յառաջասցի պակասութիւն ազգի և եկեղեցեաց մերոց։ Որպէս և առ պանծալի Արհին Մինաս եպիսկոպոսին գրեաց, զի միաշունչ և համակամ եղեալ, գոյն ինչ մի ջոց վարեսջիք ըստ խրատու և հրամանի նորին, մինչև որպէս գիտեմք և վկայեմք մեք, և աշխարհ ընդհանուր, զի Յովսէփ սրբազան Արքեպիսկոպոսն, ամենայնիւ և ամենայնի, ունի զպատիւ զտեղի և զարժանաւորութիւն, և դուք ընտրել զնա ի դահակալութիւն սրբոյ Աթոռոյդ։ Որպէս զի՝ յառաջասցի պայծառութիւն ազգի և հաւատոյ, շինութիւն և արդիւնաւորութիւն սբբոյ Աթոռոյդ, և բարւոք կառավարութիւն, և յատուկ մխիթարութիւն միաբանութեան ձերում։ Իսկ ե զընտրանս և զհամահաճութիւն ձեր առ այս, ըստ Բարձրագունեղութեան սորին, և անդ ուր ե հարկն ծանուցանել փութալ, ե մի կաղալ ի վերայ այսր։ Զի մեք ըստ մերումս պարտականութեան և ըստ բերման ժամանակիս այսպէս բարեդատեալ ե զձեզ յորդորեցաք։ Եւ զայլ հանգամանս գրելեաց ե ասելեաց, թողումք ի պատմել և ծանուցանել, իշխանաղնեայ Տեառն Միրիշքարբաշի Յովսէփ Աղային. ե Տէր Ստեփան աւագ քահանային, որք առաքեցանն առ ձեզ, ի Բարձրագունեղ արքայէս մերմէ։ Մնամք միշտ ի մտերմութեան սրբոյ Աթոռոյդ, ցանկալով օրհնութեան ձերոյ։ Յամի 1800։ Եւ ի յունվարի ամսոյ 11։ Ի Թիֆլիզ։

ԿԹ. Թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ Պետր Իւանիչ Կաւալիցկինն ի Թիֆլիզ, որ ի կայսերէն Ռուսաց առաքեցեալ կայր ի Թիֆլիզ իշխանութեամբ[55], ծանուցումն զմահուանէ Տեառն Ղուկասու սրբազան հայրապետին մերոյ, եւ ապա շնորհաւորութիւն զալստեանն, եւ նշանակութիւն վասն բանին ի կողմանէ Յովսէփ արքեպիսկոպոսին. Եւ խնդիր վասն սուրբ Գեղարդին դարձուցանել, ընդ Յովհաննէս վարդապետին.

Ի լուսանկար մեծի գահիս Հայաստանեայց սրբոյ էջմիածնի պաշտօնէից քահանայակարգ միաբան եղբարց՝ այսինքն՝ յարքեպիսկոպոսաց, յեպիսկոպոսաց, ի վարդապետաց ե յաբեղայից մատուցի Քրիստոսաձիր ողջոյն ե հոգևորական օրհնութիւն բարձրապատիւ սիրելւոյդ մերում և գթաշատ բարեկամիդ սրբոյ Աթոռոյս Քրիստոսակերպի, և Աստուածապսակեալ ինքնակալ Մեծի Կայսերն հաւատարիմ գործակալիդ՝ Տէրամբ Ցիսուսիւ զօրացեալ բարեպաշտօն և իմաստնախոհ, շքեղափառ և մեծազնիւ Պետր Իւանիչ Կաւալիցկինիդ. Իշխան բնաւից ընդ քեզ և ընդ ձեռամբ քով եղելոցն, ի Տէր խնդալ. Շնորհք՝ սէր՝ ողորմութիւն և խաղաղութիւն Ամենասրբոյ երրորդութեան։

Եւ ընդ Աստուածապարգև օրհնութեան սիրառաք թղթոյս՝ ծանուցումն լիցի բարեպաշտութեան քում։ Զի յանցելոյ ամի դեկտեմբերի ամսեանն աւետաւոր համբաւ գալստեան ձերոյ ժամանեալ առ հոգելից հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթողիկոսն, և առ միաբանութիւնս մեր, և մեծ ուրախութիւն ընծայեալ մեզ, այն ինչ փութայր նա զթուղթ օրհնութեան գրել առ պատուականութիւն ձեր ի շնորհաւորութիւն գալստեան ձերոյ, (որպէս և բանիւ ողջունի իւրոյ խոստացաւ ի թղթի Յովհաննէս Արհի եպիսկոպոս եղբօրն մերոյ) ոչ ժամանեաց դիտմանն՝ յաղագս օրհասին մահու կանխելոյ։ Որով և ողորմելի միաբանութեանս մերում եղև սուգ և արամութիւն մեծ։ Բայց զինչ ունիմք ասել առ կամս Արարչին, եթէ ոչ՝ զփառս և զգոհութիւնս վերառաքել Նմա։ Որ և անբաւ ողորմութեամբն իւրով հանգուսցէ զսրբազնեալ հոգի երջանիկ հայրապետին մերոյ ի լուսեղէն խորանս երկնից արքայութեանն ընդ դասակարգութիւնս սրբոցն, և զգերարգոյ սիրելիդ մեր ողջ պահեսցէ երկարագոյն կենօք, և յաւելցէ՝ զաւուրս Աստուածապսակեալ ինքնակալ Մեծի Կայսերն, և համայն իւրայնոցն։ Ցետ վախճանման հոգելոյս Հայրապետին մերոյ և մեք ըղձայաք զսէր մեր օրհնութեան գրով մատուցանել ձերումդ Աստուածասիրութեան, բայց յաղագս ոչ գտանելոյ ի միջի հարկեցուցիչ պատճառի՝ ոչ համարձակէաք։ Միայն թէ՝ երբեմն ի յայտ առնել զեռանդն սիրոյ և փափագանաց սրտից մերոց՝ միջնորդութեամբ Յովհաննէս արքեպիսկոպոսին առաքեցաք զողջոյն ե զօրհնութիւն մեր, և յուսամք թէ քաղցրութեամբ հաճեցեալ իցէք։ Իսկ Նարդենիս մեծաշուք Արքայն Վրաց, և որդին իւր շքեղաշուք Դաւիթ Միրզայն և մերասեռ ժողովուրդն քաղաքիդ թուղթս էին գրեալ մեզ վասն հայրապատիւ յաջորդելոյն մերոյ Տէր Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսին ընտրութեան, ընդ նոսին և սիրելի եղբայրն մեր սրբոյ Գեղարդեան սպասաւոր Յովհաննէս բարեհամբոյր արքեպիսկոպոսն գրեալ էր մեզ զձերդ ազնուութեան մտերմօրէն խորհրդատուութիւն, ծանուցանելով մանաւանդ և զճշմարիտ սէր և բարեկամութիւն ձեր առ սուրբ Գահս և առ որբացեալ միաբանութիւնս, նաև զմեծապատիւ ընդունելութիւն և զմխիթարութիւն ցուցանելդ առ ինքն։ Որովք բաբեշնորհութեամբք ձերովք զվայելուչ վստահութիւն առստացեալ համարձակեցաք գրել զայս թուղթ սիրոյ և ողջունի առ ձերդ բազմագով բարեպաշտութիւն։ Որով նախ շնորհաւորեմք զբերկրալի գալուստդ քո ի քաղաքդ, հայցելով յԱստուծոյ, զի զամենայն օգտակար առաջադրութիւնս Աստուածապսակեալ Ինքնակալ Մեծի Կայսերն և զքոյդ բարեմտօրէն ջանասիրութիւն իւրով ամենակարող զօրութեամբն յաջողելով արդիւնաւորս և շահաւէտս արասցէ ի գիւ-

բութիւն հաւատացեալ ժողովրդոց։ Քանզի և մեք որք ըստ ամենայնի նեղեալ և վրշտացեալ եմք ամենևին անայցելու յումեքէ, յետ Աստուծոյ ի հզօրագունեղ տէրութենէդ ձերմէ յուսամք դտանել զայցելութիւն։ Երկրորդ՝ բացայայտ կացուցանեմք զմեծապէս շնորհակալութիւն մեր՝ զԱստուածասէր սիրելւոյդ վասն ճշմարիտ սիրոյ և հաւատարիմ բարեկամութեան ձերոյ առ սուրբ դահս, և առ մեզ, և յաղագս յոգնազան պատուոյ և յարգութեան և շահեցողութեան ձերոյ զորս ցուցանէք բաղձալի եղբօր մերում Յովհաննէս արժանապատիւ արքեպիսկոպոսին, զորս նա ինքն գոհունակութեամբ գրէ մեզ յիւրաքանչիւր թուղթրս իւր։ Այր աղագաւ և մեք պարտաւորիմք հանապազ առաջի սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի աղօթել վասն կենաց և բարեյաջողութեան ձերոյ։ Երրորդ՝ առ այն զի և մեծապատուութիւն ձեր կամեցեալ էիք սակս Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսին ընտրել և խնդրել ի կաթողիկոս, ծանուցանեմք զայս ճշմարտութեամբ, որ հայրապատիւ յարգելին մեր Յովսէփ ճոխափառ արհի եպիսկոպոսն ի յերկուս սինհոդոսն մեր ևս բազմիցս յիշատակեցաւ, և ամենայն հաւանութեամբ ընտրեցաք և ընդ պատրիարգին Կոստանդնուպօլսի նշանակեցաք զանունն ի թղթի. բայց վասն զարհուրելի վտանգից պատճառաց ոմանց ոչ իշխեցաք գրել ի մահսարին, (և այն պատճառք ի Յովհաննէս արքեպիսկոպոսէն յայտնի լինելոց են մեծութեան ձերում)։ Իսկ ապա մինչ թուղթքն քաղաքիդ ժամանեցին առ մեզ, և բանք գերազնութեան ձերոյ ի գրոյ Յովհաննէս արքեպիսկոպոսին ազդ եղեն մեզ, զերկրորդ մահսէր գրեցաք ըստ օրինակի առաջնոյն, և ընդ պատրիարգ Գանիէլ արհի եպիսկոպոսին զՅովսէփ արքեպիսկոպոսն գասեցաք, զերկոսեան ևս միապէս հաւանական ցուցանելով մեզ ամենեցուն։ Արդ՝ եթէ ազգս մեր զայլ ոք առաքեսցէ, մեք ոչ կարեմք ընդդիմանալ, զի շինութիւն սրբոյ Աթոռոյս և ապրուստ մեր ի նոցանէ է, և մինչ ազգն մեր կամակցեալ մեզ զՅովսէփ արքեպիսկոպոսն հրաւիրեալ առաքեսցեն՝ մեզ ընդունելի և յարգելի է։ Որք և ահա միաբանութեամբ զհրաւիրանաց թուղթ գրեցաք առ նա ինքն Յովսէփ վայելչաշուք արքեպիսկոպոսն, որ ի հրաւիրել օրհնեալ ազգին մերոյ եթէ ոչ կասկածիցի ի վտանգից, հրամայեսցէ գալ ի սուրբ Աթոռս, զոր մեծաւ հնազանդութեամբ վերընդունելոց եմք։ Չորրորդ՝ մինչ այսքան համարձակութիւն եղև մեզ խօսիլ ընդ գերապատուելւոյդ իբրև ընդ ընտրելագոյն բարեկամի, վստահացեալ ի մեծութիւն սիրոյ ձերոյ զայս մի ինչ խնդիր ևս առաջի առնեմք։ Բարձրաշուք Արքայն երկրիդ յամի Տեառն 1798 զսուրբ Գեղարդն Քրիստոսամուխ խնդրեաց ի հոգելոյս սրբազան Հայրապետէն ի փարատումն ժանտախտին և նա յուղարկեաց. որով և ցաւն փարատեցաւ։ Յետոյ ի յերկարել միջոցին քանիցս խնդրեաց, և մեծազօր արքայն խոստանայր դարձուցանել, բայց վերջապէս ձերոյ գալստեանն մնաց՝ զի և ձեր բարեպաշտութիւնն համբուրեսջիք։ Ապա յետ գալոյն ձերոյ սրբազան Հայրապետն վախճանեցաւ. և մեք ի վերայ սգոյ և տրտմութեան մերոյ ունիմք և ըզթախծութիւն կարօտութեան սուրբ Գեղարդին, և դորին պաշտօնեայ Յովհաննէս արքեպիսկոպոսին. որ պիտոյ է մեզ յայսմ անտիրութեան ժամանակի պատասխանել այլազգեաց։ Ամենայն ուխտաւորք ի հեռուստ եկեալք՝ լալով և տրտմութեամբ դառնան վասն ոչ տեսանելոյ աստ զսուրբ Գեղարդն։ Արդ՝ միաբանութեամբ զաղաչանս գրեցաք առ մեծազօր Արքայն երկրիդ, և զձերդ աստուածասիրութիւն ևս աղաչեմք ի փառս Քրիստոսի և ի սէր սրբոյ Աթոռոյս միջնորդ լինիլ առ օրհնեալ Արքայն, զի դարձուսցէ զսուրբ Գեղարդն ընդ Յովհաննէս արքեպիսկոպոսին ի մխիթարութիւն տաբակուսեալ միաբանիցս, և բաւական համարեսցի զայսքան ժամանակ յետաձգելն։ Եւ որպէս մեծազնութիւն ձեր լուիցէք աղաչանաց մերոց, ամենաբարեբարն Աստուած զձեր ամենայն բարի խնդրուածսն լուիցէ և կատարեսցէ, և զքաղցրագոյն խնամս Աստուածապսակեալ Ինքնակալ Մեծի Կայսերն առաւել ևս աճեցուսցէ ի վերայ ձեր և մեր։ Մնամք պայծառափայլ բարձրապատուութեան ձերում բարեխնդիր աղօթաւորք խոնարհ պաշտօ-

նեայք սրբոյ Աթոռոյս արքեպիսկոպոսք, եպիսկոպոսունք և վարդապետք ստորակնքողք ի Թղթիս՝ և այլք ամենեքեան որք ընդ մեզ։

Գրեցաւ յամի Փրկչին 1800 և ի յունվարի 29. ի սուրբ Էջմիածին։

Հ. Յետ վախճանման Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին թուղթ ի դիմաց միաբանից սրբոյ Աթոռոյս առ Դաւիթ Միրզայ Արքայորդին ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն զոր գրեալ էր վասն Յովսէփայ արքեպիսկոպոսին ընտրել զնա ի կաթողիկոս.

Ի լուսանկար մեծի Գահիս սրբոյ Էջմիածնի պաշտօնէից՝ քահանայակարգ միաբան եղբարց՝ այսինքն յեպիսկոպոսաց, ի վարդապետաց և յաբեղայից մեծաւ սիրով և կարօտիւ ողջոյն և օրհնութիւն առատացի ցանկալւոյդ հոգւոց մերոց և ստուգապէս բարեկամիդ սրբոյ Աթոռոյս, Տեամբ Քրիստոսիւ զօրացեալ քաջայաղթ բարեհամբաւ և շքեղապանծ Դաւիթ Միրզայ Արքայորդւոյդ։ Որում և գիտութիւն լիցի։ Զի սիրանշան թուղթն յարգի սիրելութեան ձերոյ ժամանեաց առ մեզ ձեռամբ միրիշքեարպաշի պ. Յովսէփին և Տէր Առաքել աւագ քահանային, և ընթերցեալ իմացաք զոր ինչ ի նմա բանք էին։ Եւ նախապէս զի ստոյգ բարեկամութեամբ և սրտացաւութեամբ զմխիթարական բանս էիր դրեալ յաղագս վախճանման գերընտիր Հայրապետին մերոյ Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, զոր Քրիստոսազօր օրհնեալ Արքայ հայրն քո ես էր գրեալ, յիրաւի մխիթարեցաք ի սգաւորութիւնս մեր, և շնորհակալ եղաք օրհնութեամբ զյարգութենէ ձերմէ։ Զոր Տէր օրհնեսցէ և վարձատրեսցէ երկնային ձրիւքն իւրովք և պահեսցէ հանապազ ընդ թեօք հանրախնամ Աջոյն իւրոյ ի խաղաղաւէտ կենդանութեան և ի բարձրապատիւ ճոխութեան։ Եւ ապա դրեալ էիք յաղագս հոգևոր հօրն մերոյ Տեառն Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսին, ընտրել զնա ի կաթողիկոս Աստուածեան սրբոյ Աթոռոյս, որ արդարև ոչ էր անդէպ ինչ, այլ դիպաւոր և համաձայն մերոյս կամեցողութեան, և ամենայնիւ ախորժելի մեզ. քանզի՝ յերկուսին ժողովսն մեր՝ զոր արարաք առաջի սրբոյ Իջմանտեղւոյն Քրիստոսի վասն ընտրութեան կաթողիկոսի, զնորին Յովսէփայ արքեպիսկոպոսի անունն ևս յիշատակեցաք, և արժանաւոր դատեցաք զնա կաթողիկոսութեան, սակայն յետոյ կասկածեալ ի վտանգից պատճառաց ոմանց ոչ իշխեցաք գրել զանուն նորա՝ ի հասարակական մահուէրին մերում։ Իսկ այժմոյս ի գալ ժամանել առ մեզ թղթոցն մեծութեան ձերոյ, թէպէտ մետասան աւուրբք յառաջ առաքեալ էաք զմահուարն մեր, բայց ըստ հրամանի Քրիստոսազօր Արքային և ըստ առաջադրութեան բաղձալի բարեկամիդ մերոյ՝ նաև խնդրանօք օրհնեալ մերազնէից քաղաքիդ՝ վերստին զմահուէր գրեցաք միաբանութեամբ, և ընդ Կոստանդնուպօլսի պատրիարգ Դանիէլ արհի եպիսկոպոսին զՅովսէփ արքեպիսկոպոսն դասեցաք, և զերկոսեանն ևս համահանգոյն հաճելի գոլ ցուցաք օրհնեալ Ազգին մերոյ, զի յերկուց անտի զորն և կամեսցին, առաքեսցեն փութով, որ մեզ ընդունելի է լինելոց։ Եւ զայն մահուէրն առաքեցաք ի Ղարս՝ անտի սուրհանդակաւ հասանիլ առ Մահուէրաարն, որ ընդ առաջնոյ մահուէրին տարցէ։ Թուղթ մի ևս առ գերապատիւ Յովսէփ արքեպիսկոպոսն դրեցաք, առաջադրելով զհաճութիւն և զբաղձանս միաբանութեան մերոյ, զի ի հրաւիրել ազգին հրամայեսցէ ի գալ։ Արդ՝ յիրաւի նա ինքն Յովսէփ վայելչաշուք արքեպիսկոպոսն ի բնէ ծոցածին հարազատ միաբան է սրբոյ Աթոռոյս՝ և բազմամեայ հաւատարիմ աշխատաւոր ի գործս սորին, զարդարուն խոհեմութեամբ և հանճարով, և հռչակեալ մեծանուննութեամբ և պատուով, և թէ ըստ ազնուութեան բարուցն՝ և թէ ըստ կատարելութեան հասակին չունի ինչ պակասութիւն. այլ յամենայն կողմանէ հաճելի և հաւանելի է, և վիճակն իսկ նմա է ժամանեալ այսօր։ Ապա՝ գիտասցես ստուգապէս, որ եթէ Ազգն մեր կամեցեալ մեզ առաքեսցեն զնա ի կա-

թուղիկոսութիւն սրբոյ Աթոռոյս, մեք ես մեծաւ սիրով և հնազանդութեամբ ընդունելոց եմք զնա ի գլուխս մեր և կառավարութիւն սրբոյ Տանս և ի պաշտպանութիւն որբացեալ միաբանութեանս մերոյ։ Զայսքան ինչ առ այս շատ համարեալ, զսիրոյ և զխնամոցդ առաւելութիւն խնդրելով, մրնամք աղօթաւորք շքեղափառ մեծապատուութեան Ձերում։

Գրեցաւ յամի Տեառն 1800. ի յունվարի ԻԹ ի սուրբ Աթոռս Էջմիածին։

ՀԱ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ իշխանապետս Հայոց Կ. Պոլսոյ.

Առ ընդհանուր բարեառհմ պայազատ Ամիրայից, իշխանաց և իշխանապետաց և բոլոր Հայկազուն ժողովրդականաց Քրիստոսասէր անձանց բնակելոց ի Կոստանդնուպօլիս, ողջոյն, սէր և օրհնութիւն Աստուածային ձօնելով. զեկուցումն առնանի։

Սիրելիք մեր ի Տէր.

Զմեծագոյն յարգանս և զյոգնազեղումն սէր հոգեկան որ ի վաղի հետէ ունիմք առ գերազնիւ և բարեպաշտօն ընդհանուր իշխանացդ և սիրազուն որդեկացդ մերոց, կարեմք ապացոյց բանիւ հաւաստել նովիմբ գրութեամբ մերով, որ մերթ ընդ մերթ ի յարմար դիպուածոջ ունիմք յղեալ յատկապէս առ Պայազատս ոմանս որ ի ձեզ. ընդ որոց կարացաք ունիլ իրաւացի առիթ ինչ գրութեան։ Իսկ առ հասարակութիւն ձերոյ ազնուութեան մինչ ըղձալով մնայաք ունիլ բանաւոր պատճառիմն, այն ևս դէպ եղև յանցելում ամի առաքել այդր ի ձեռն հանճարիմաստ տիրացու Մանասէ դպրապետի սիրելի որդւոյ մերոյ՝ զպատճէն գրոյն Նորապսակ Արքային Վրաց, որ կատարեալ գոլով ի նախնեաց և ի ծնողաց իւրոց, ունիլ հոգ և խնամածութիւն ի վերայ Աստուածաէջ և լուսակառոյց տանն և տաճարին Աստուծոյ, որ ի վերնային տուչութենէ գտանի ներկայապէս հանդերձ նորին նահանգաւ ենթ իւրոյ Արքայական գաւազանի իշխանութեանն վիճակեալ. որոյ Արքայի տեսանելով զծերութիւն և զանհանգիստ տկարութիւն անձին սրբազնասուրբ Հօրն մերոյ հասարակութեան Տեառն Ղուկասու երից երանեալ ընդհանրական Հայրապետի ամենայն Հայոց, և զմտաւ ածելով որ ըստ ընթացից մարդկային պարտաւորեալ բնութեան (Տէր մի արասցէ) փութով փոխել յանցաւորէս առ անանցն յաւիտենական երջանիկ հանգստութիւն պատահիցի, վրտանգ մեծ լինելոց է սրբոյ Տանն, վասն ներկայ խռովութեանց և անմիջոց բազմածուփ վրդովանաց կողմանցն այնոցիկ, թարց յատկագոյն կառավարիչ տնտեսի և ջերմեռանդ հոգաբարձուի մնալն նորին, ժամանակս ինչ մինչև լրասցի ընտրութիւնն, հրաւիրեալ էր զմեզ ընդ բազմաց երևելի անձանց եղելոց ընդ իւրոյ իշխանութեամբ, գտանել ի մերձակայ սահմանս, առ ի վերաժամանել արագ անդ՝ ի դիպուկ ժամու, և բառնալ զլուծ նորին հոգաբարձութեան, ըստ որում ականատես լեալ էր ինքնին՝ մինչ էաք մեք ի նոյն կողմանս ի ժամանակի անցեալ աղէտալի խռովութեանց, թէ Որպէս հեզաբարոյ քաղաքականութեամբ վարելով ընդ բարբարոսաբնոյթ բռնակալ խաներացն Պարսից, շահէաք զնոսա ի քաղցր ակնածութիւն։

Բայց մեք ըստ պատշաճին պատասխանեալ նմա, գրեցաք այդր առ ի Քրիստոս հանգուցեալ Զաքարիա սրբազան պատրիարքին, և առ ձեզ հարազատ որդեկացդ սրբոյ Գահին, զեկուցանելով թէ մեք ըզսոյն կոչումն ոչ կամիմք լինել միայն ի թագաւորաց և ի կայսերաց կամ յերևելի իշխանաց և ի մարդկանց. այլ նախ՝ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ հայկազուն Քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմութեան ձայն, ձայն Աստուծոյ հաւատալով կարասցուք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ։

Եւ այս վասն երկուց գլխաւորագոյն պատճառաց, նախ՝ զի մի բռնաբարիչ սրբացեալ աստիճանին երեեսցուք, որպէս և ընթեռնումք ի մեր պատմութեանց երբեմն եղեալ ոմանց՝ ստորև մեծի վշտալիր վրդովմանց ենթարկեալ զսուրբ Գահն, առիթ

ընդհանուր գայթակղութեան եղեն Ազգին։ Երկրորդ՝ զի մի՛ շունչ խռովութեան և քակտումն սիրոյ և միաբանութեան ծնանիցի ի մէջ ձեր և՛ ի մէջ անդ եղեալ բանաւոր հօտին Քրիստոսի, Այր սակս պատուէր առեալ վերոգրեալ աիրացու Մանուսէ հարազատ որդեկի մերոյ՝ մի՛ հրատարակել զնոյն գրեանս մեր մինչև զպատեհ ժամն, Քանզի թէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ պարտական իսկ եմք աղօթել առ կենսատու Աստուած՝ շնորհել առողջ և երկար կեանս սրբազնասուրբ գլխոյն և Հօտապետին մերոյ. զի որպէս այսքան ժամանակ զյոլովակերպ ճգունս և զվիշտս (զորս ի փառս իւր համարեալ՝ վարձս մշտնջենականս երջանկութեան պարգևեսցէ) կրելով կառավարեաց զսուրբ տեղին՝ ընդդէմ յարուցմանց բազմադիմի թշնամեաց, կրկին կառավարեսցէ ժիր առողջութեամբ ի բազում ամս, որպէս և յընթեռնուլն Ձեր զնոյն գրեանս մեր կտրէք վերահասու լինիլ սոյնոյ հարազատ և անտարակուսելի մտերմութեան մերոյ։

Եւ այժմ պատճառ երկրորդելոյ մեր զնոյնս՝ գիտասցէ Աստուածսիրութիւն ձեր՝ որ կրկին դիպեցեալ եղաք ի սոյն աւուր բազմութեանց գրեանց, ոչ միայն ի նախկին հրաւիրօղաց, այլ և արդիւնական յերևելի միաբանից սրբոյ Աթոռոյն, յորոց մինն է Ներկայարար յԱշաարխան եղեալ դեռիմաստ Եփրեմ սրբազան արհի եպիսկոպոս եղբայրն մեր, և յարգի մելիքներաց և յընտիր ժողովրդականաց այնոյ կողմանց, որք յորդորեն զմեզ զիջանիլ ի հաճութիւն, թողլոյ զսսախս ապ սհով վայելչութիւն և զմասնաւոր աշխատութիւն ի վերայ սակաւաթիւ ազգայնոց, և յանձն առնուլ կրել զծանրակիր լուծն տնտեսութեան և պաշտօնատարութեան սրբոյ Տանն, և ժամանեալ է սրբազնութեան գերերջանիկ Հայրապետն մեր * և յարուցմունք բնակչաց պարսից անդադար ալէծփեն զշրջապատս Արարատեան գաւառաց. որպէս և ի ներկայիս եղեալ խանգարումն Խօյայ քաղաքին և ամրոցին լուեալ իսկ էք, յորմէ և առ յայլ տեղիս կասկածք յայտնապէս նշմարին, ուստի ոչ է ժամանակ յետաձգութեան (գրեն) թողուլ միջոց ինչ անտերունչ զսուրբ գահն. և ո՛ է այժմոյս երևելապէս ժրաջան աշխատաւոր և առ թագաւորս և իշխանս յառաջադէմ և ենթակայ շնորհաբաշխութեան նոցին, և մանաւանդապէս ծերունի և աւագ ի մէջ սրբազան արհի եպիսկոպոսաց մերոց իբրև զՁերդ Հայրութիւն, վասնորոյ և ոչ ոք կարէ ներհակիլ և կամ խոչընդոտ լինել այսու արժանաւոր ընտրելականութեան և կոչման Ձերոյ սրբազնութեան. ուրեմն խնդրեմք մի՛ զանձինդ հանգստութիւն նախադասել առ ճգունսն, որ վասն Աստուծոյ և Տանն սրբոյ՝ և ընդհանուր ազգին՝ բանաւոր հօտին Քրիստոսի». և այլ սոյնպիսի բազում յորդորանօք խնդրեն ի մէնջ փութալ աճապարել և մերձենալ ի նոյն կոչումն. բայց մեք վերստին զնոյն առաջին բան պատասխանեցաք նոցա, թէ ոչ կամիմք ինքնակարևոր իշխանութեամբ նպաստաւորաց մերոց ելանել ի սուրբ գահն, այլ կոչմամբն Աստուծոյ և համահաճութեամբ առ հասարակ զաւակաց սրբոյ Մօրդ մերոյ, զի բազմասցի և վերականգնիցի սէր և խաղաղութիւն առ ամենեսին, որ է պտուղ և պարգև Ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկ և այլն։

Արդ՝ ահա վերստին հարկադրեցեալ ի նոցունց ժտից, գրեցաք զսոյն օրհնութեան նամակ, ազնուազարմ իշխանաց և իշխանապետ Ամիրայից, և օրհնեալ հարազատ զաւակացդ առ հասարակ բնակչաց մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ, որպէս և յատկապէս առ սրբազան Դանիէլ պատրիարդ տեղւոյդ՝ հոգեկից և սիրելի եղբայր մեր. որ եթէ կոչումնս այս իցէ ի Տեառնէ և լիցի ի ձեզ հաւանութիւն և համակամ հաճութիւն սստ և անդ եղեալ միաբանից և երևելի անձանց և Քրիստոսապսակ թագաւորաց, որ և յայնժամ խնդրեմք զեկուցանել մեզ հաւաստի դրութեամբ, զի և մեք հետևելով ընդ ձայնից բազմութեան, ստորագիցուք զմեզ ձայնի և հրամանի իս-

* Ինձ թուի թէ պակասին աստ մի քանի բառք, և վայելուչ է այսպէս լրացուցանել. «Քանզի փոխեալ յաստի կենաց յերկնային կայանս ժամանեալ է սրբազնագոյն գերերջանիկ Հայրապետն մեր»։ Ց. Ք. Մ.

կական պաշտպանչի և անքուն պահպանողի սրբոյ Տանն իւրոյ Որդւոյն Միածնի, որ Իջմամբն իւրով փառազարդեալ կառոյց ի վերայ անյաղթահարելի հիմանն՝ իւրոյ անշուշտ բանին. որոյ շնորհ և օրհնութիւնն հանդիցէ ի վերայ Ձեր ամենից. և ի վերայ ընդհանրութեան հայասեռ հաւատացելոց իւրոց Ամէն։

Գրեցաւ ի Սանկտպետրբուրգ ի 1 փետրվարի 1800 ամի Փրկչին

Խոնարհ Յովսէփ Արքեպիսկոպոս
Կողմանցս Ռուսաստանի և կաւալէր։

ՀԲ. Թուղթ Միաբանից Էջմիածնի առ Դաւիթ եպիսկոպոս.

Ի լուսանկար սրբոյ դահի Էջմիածնի միաբանից յեպիսկոպոսաց և ի վարդապետաց։ Քրիստոսական սուրբ ողջունիւ և սիրով ծանուցումն լիցի սիրելի եղբօրդ մերոյ Տեառնդ Դաւթի յոգնահանճար տրհի եպիսկոպոսիդ։ Զի ի Ղօշավանից գրեալ Թուղթդ եհաս առ մեզ և իմացաք զհասանելդ անդ. բայց ոպասեմք և զայլ Թուղթս ընդունելոյ ի քէն և իմանալոյ թէ ուր իցես հասեալ ցարդ՝ զոր դեռ ոչ գիտացաք։ Իսկ յետ մետասան աւուր ելանելոյ քոյ ի սրբոյ Աթոռոյս, Թիֆլիզու Միրիշքար դաշի պարոն Յովսէփն և Տէր Առաքել աւագ քահանայն՝ թղթովք մեծաշուք Գէօրկի արքային վբաց և որդւոյ նորա և մահսէրիւ քաղաքի մերային ժողովրդոցն եկին ի սուրբ Աթոռն, հանդերձ Մելիքաւ և Իւզբաշիւն։ Ընթերցաք զթուղթսն՝ որք ընդ մխիթարական բանից առաջադրեալ էին թէ՝ Յովսէփ արքեպիսկոպոսն ըստ հասակին և ըստ համբաւոյն և ըստ հանգամանացն արժանի է աստիճանի կաթուղիկոսութեան, զնա ընտրել և հրաւիրել արժան է։ Եւ զի՝ յերկուս սինոդոսն մեր ես յիշատակեցաւ անունն Յովսէփայ արքեպիսկոպոսին և արժանի գտեցաւ նա ես. և ի զանազան տեղեաց մարդիկ գալով ի Սինհոդոսն. ի հարկէ զհամբաւ ընտրութեան հասուցանեն առ նա. թէպէտե վասն կասկածելի պատճառաց ոմանց որք յայտնի են, ի մահսարից յայգմիկ ոչ համարձակեցաք գրել զանուն նորա, սակայն այժմոյս յերկար ես խորհեալ և խորհրդակցեալ հաճեցաք միաբանութեամբ և պատշաճ տեսաք զերկրորդ մահսէր գրել. զոր գրեցաք ահա ըստ նոյն օրինակի, միայն՝ ընդ յարգելի պատրիարք Դանիէլ արքեպիսկոպոսին ճոխապատիւ Յովսէփ արքեպիսկոպոսն զասելով, և զերկոսին ես միապէս հաւանական ցուցանելով։ Զոր և ընդ սոյն թղթոյս առաքեցաք ի Ղարս առ Գէորգ Աղայն, զի թաթարաւ հասուցէ առ քեզ ուր և իցես։ Եւ քեզ սիրելի եղբօրդ գրեմք, զի թէ առաջին մահսէրն, և թէ զերկրորդ մահսէրն ի միասին մատուսցես օրհնեալ Ազգին մերոյ, քանզի ունիս տեսանել յերկրորդումն զառաջինն ես պարզապէս յիշեալ։ Եւ բանասէր բարեխոհ ազգն մեր ի յերկուց արժանապատիւ անձանցն զորն և կացուցանիցեն մեզ ընդունելի են։ Բայց և ի ժամանել երկրորդ մահսէրին և թղթոյս առ քեզ, զու մէկ զաւզ դրեալ տացես թաթարին որ բերցէ ի միամտութիւն մեզ և ամենեցուն։

Իսկ վասն մահսէրին կնքոյն պակասութեան տարակուսութիւն մի լինիցի, զի յաղագս սղութեան ժամանակին, իւրաքանչիւր կնքողացն ոչ եղե ժամանել. այլ նշանաւորքն անձինք կնքեալ են։ Այսպէս գիտացեալ ջտն դիցես շուտով գալոյ, և Տէր ուղղեսցէ զճանապարհդ ի բարին։ Ողջ լեր.

Գրեցաւ ի ՌՄԽԹ (1830) թուոջս, և ի յունվարի ԻԸ ի սուրբ Աթոռն Էջմիածնի։

Մինաս եպս. Գրիգոր եպս. Աիմէօն եպս.
1215 լուսարար աթոռակալ
1235 1233
Աստուածատուր Բարսեղ Թադէոս
եպիսկոպոս եպիսկոպոս եպիսկոպոս
ՌՄԼԳ ՌՄԼԳ 1234

ՀԳ. Թուղթ ի Միաբանից սրբոյ Աթոռոյս առ Յովսէփ Արքեպիսկոպոսն կողմանն Հիւսիսոյ, որ յետ վախճանմանն Տեառն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսին ի Սինոդոսին ընտրութեան, արժանի համարեցաւ եւ սա կաթուղիկոսութեան, սակայն վասն կասկածանաց ոմանց, ոչ եղեւ համարձակութիւն գրել զանունն ի մահսարին որ առաքեցաւ ի Կոստանդնուպօլիս: Այլ յետ աւուրց ի Թիֆլիզու մահսէր եւ թուղթք եկին, որք յորդորեալ էին եւ զնա գրել, եւ միաբանութիւն մեր, ի վերայ առաջնոյ մահսէրին, զերկրորդ մահսէր գրեալ անուամբ Դանիէլ պատրիարգին, եւ Յովսէփայ Արքեպիսկոպոսին։ Վասն որոյ եւ դէպ եղեւ այս թուղթ հրաւիրանաց առ նա ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն գրել:

Մեծահամբաւ բարձրապատիւ և գերարգոյ հօրդ մերում հոգևորի, Տեառնդ Յովսէփայ սրբազնասուրբ արքեպիսկոպոսի վայելչաշուք և քաջահռչակեալ վերատեսչի կայսերապերճ մեծ երկրիդ Հիւսիսականի Հայկազանց, մատուցանեմք մաքուր սիրով և կաթոգին կարօտիւ և որդիական խոնարհութեամբ զողջոյն և սրբոյ աջոյդ և զ՚համբոյր։

Եւ ընդ սիրալիրական ողջունիս և համբուրիս յայտ առնեմք վսեմախոհ Հայրութեանդ։ Զի ըստ որում ի տան աշխարհիս հանապազ երկու են ձայնք՝ խնդութեան և կոծոյ, և կրկին ժամանակք՝ ծիծաղելոյ և լալոյ, գալոյ և գնալոյ, մուտ և ելս առնելոյ և իբր պանդոկ է կենցաղոյս, սահման որոյ ընդ մի դուռն մտելոց հարկ է ելանել ընդ միւս դուռն, որ է անխոտոր ճանապարհ ամենայն մարդոյ անդր անցանելոյ և տունն յաւիտենականութեան, վասն որոյ դէպ եղև մեզ նարդենիս ծանուցանել զայս ինչ ձերումդ մեծարգութեանդ։ Քանզի հասարակաշահ և խնամառատ Հայրապետն մեր Տէր Ղուկաս սրբազան կաթուղիկոսն յետ բազմապատիկ ճղանօք տանելոյ զանազան փորձութեանց և նեղութեանց ի վերայ հասելոց, ի լրման ժամանակի կենաց իւրոց հիւանդացեալ զհիւանդութիւն մեծ ինախընթաց ամի յամսեանն նոյեմբերի և խոստովանութեամբ հաղորդեալ պատուական մարմնոյ և արեան Տեառն, ապա ի դեկտեմբերի 28 աւանդեաց զսրբազնեալ զիւր հոգին առ Աստուած, և ի հետևեալ աւուրն որ էր տօն որդւոցն Որոտման մեծահանդէս յուղարկաւորութեամբ ամփոփեցաւ ի գաւթի տաճարի սրբուհւոյն Գայիանեայ, մերձ ի շիրիմս առաջնոց սրբազանից Հայրապետացն։ Արդ այսպէս էառ Տէր ամենակալ զՏէրն մեր ի գլխոց մերոց. և զհայրն բարեհոնոյց ի յորդւոցս ողորմելեաց, որ թէպէտ հանգիստ էր նմա ի տաժանուտ կենցաղոյս զերծանիլն և դիմելն առ մշտնջենաւոր կեանսն, այլ զմեզ եթող համակեալ ի սուգ և ի տրտմութիւն ի դառնաշունչ ժամանակիս և յանտերունչ երկրիս, շրջապատեցեալ ի խոցոտչաց զանազանից, ամենևին պակասեալ ի սփոփչաց։ Բայց զի գործ Աստուծոյ է կեցուցանել և հանգուցանել, և նա ինքն իշխէ կենաց և մահու, և ոչ ումէք է հակառակիլ ի կամաց Նորա. վասն որոյ ասեմք եղիցին կամք Նորին օրհնեալ։ Որ և անհուն ողորմութեամբ իւրով լուսաւորեսցէ զհոգի նորոգ հանգուցեալ սրբազան Հայրապետին։ Եւ զգլուխ պատուական հօրդ ողջ պահեսցէ և մխիթարեսցէ։ Իսկ արդ մինչև այսպէս փոփոխական և յաջորդական է կենցաղոյս վիճակ և հարկ էր որբացելոցս ընտրել մեզ այցելու և կառավարիչ, ի պաշտպանութիւն սրբոյ տանս հանրականի և ի պահպանութիւն միաբանութեանս և օրհնեալ ազգիս մերոյ, սմին իրի յետ թաղման երջանիկ Հայրապետին մերոյ, բոլոր միաբանք սրբոյ Աթոռոյս, և երևելի անձինք մերազնէից երկրիս և երկիցս անգամ գումարեցաք առաջի սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի յաղագս ընտրութեան կաթուղիկոսի և յերկուս գումարմունսն ես քանիցս յիշատակեցաւ մեծահռչակ անունն քաղցրայիշատակ յարգելւոյդ և ամենեքեան արժանի դատեցաք զսրբութիւն ձեր գահաւորութեան այսմ Աթոռոյ որք և ի կատարման բանից, երկրորդի

ժողովոյն նշանակեցաք ի վերայ թղթոյ և զքոյդ անուն ընդ պատրիարգին Կոստանդնուպօլսի, և այլոյ ուրումն արժանապատիւ եպիսկոպոսի, զի զերեսին ես դրիցեմք ի համահաճութեան մահսէրին, առաջադրել ազգին, զի զո և կամիցին յերեցունց զնոյն առաքեսցեն։ Բայց մինչև ցաւարտ դրութեան տարակուսեալ ի տակնտպեցուցիչ պատճառաց ոչ համարձակեցաք արձանագրել զանուն բաղձալւոյդ։ Վասն զի գործ խոհեմութեան է նախատես լինել զառնելեաց, դիտել զկեալն ի վերայ օդտին և զգուշանալ ի վնասաբեր իրաց։ Եւ մինչ հարկ է իրաւախոհ անձանց զրանն ի դէպ ժամանակին ոչ թագուցանել, ասասցուք զպատճառն ուղիղ մտօք և ստուգութեամբ։ Քաջայայտ իսկ է պատուականութեանքում թէ ազգն մեր ըստ մեծի մասին է այժմ ընդ գաւազանաւ տէրութեան Օսմանցւոց, և տարաբաղդ մասն Հայաստան աշխարհիս ընդ խիստ իշխանութեամբ Պարսից։ Իսկ ի մերս ժամանակի յերկրորդ պատերազմին այդմ հզօրաղունեղ կայսերութեան ընդ Ագարացւոցն մինչ սրբութիւն ձեր ընդ ծայրագոյն քնեազ Գրիգոր Գօտեմկինին գնացիք ի Բանտէր, և ի յԻսմայիլ և յՕչաշ և ի Սեչով և յայլ տեղիսն իբր բարեբարել անդանօր հանդիպեալ մեբազանց, յայնժամ ամենայն աղարացիք ծանեան զքեզ, և ի դուռն արքայի ևս ծանուցեալ եղեր. և յետոյ ի յառնել զրաֆ Վալէրիան Ալէքսանդրիչ Զուբով սպարապետին յայսկոյս ի վերայ Պարսից եկիր ընդ նոսա ի Տարբանդ և ի Շամախի, և ի Գեանջա, և ամենայն Պարսիկք թէ տեսութեամբ և թէ ի լրոյ իմացան, որոց և բազումք զյղացեալսն զգայռէին առ այսր։ Եւ սրբութիւն ձեր որ փափագէիր գալ յերկրպագութիւն Քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, և ի համբոյր սրբազան Հայրապետին, ի զառնալ զօրացն ոչ կարացեր գալ, այլ այնպէս կարօտակէզ սրտիւ դարձ արարեր, և զմեզ ևս թողեր կաթոգինս քաղցր տեսութեան ձերոյ։ Թողումք զայն որ յերկիցս հրաւիրել լուսահոգւոյն առ գործս երկուց մեծամեծ տեղեացն ոչ ախորժեցար ճաշակել զդառնութիւն խստութեան այլազղական իշխանութեանցն։ Արդ՝ այնոցիկ պատճառաց երկիւղիւն թէ գուցէ վնասք պատահիցին անձինդ ազնուականի և սրբոյ աթոռոյս և մանաւանդ խղճալի ազգի մերում թէ անդ և թէ աստ գտանելոց. և կարծելով ևս թէ ձեզ յօժարելի չիցէ ի կայսերական ապահով երկրէ գալ ի կալուած տէրութեան այլազգեաց, ոչ համարձակեցաք գրել զանուն մեծարգութեան քո ի մահսարին. այլ զկնի պատրիարք Դանիէլ արհի եպիսկոպոսին զՇփրեմ արհի եպիսկոպոսն նշանակեցաք գիտելով համաշունչ եղբայր և որդի քո և հաճելի զոլ ձեզ յետ ձերոյ յարգութեան զնա արժանի տեսանելն. և զայն առ ի զփորձ առնուլ թէ վստահանայցէ ազգն յայդմ կողմանէ զոք խնդրել. և հետևաբար ազգ ևս արարաք անդ զաստանօր յիշատակութենէ քո։ Ահա ճշմարտաբանութիւն անմասն խստութենէ, որ մեք վասն երկիւղի պատճառացն չգրեցաք ի մահսէրին, ապա թէ ոչ և զքեզ ընտրեալ եմք կատարեալ հաւանութեամբ արժանի գահակալութեան սրբոյ աթոռոյս. և վիճակն իսկ քեզ է ժամանեալ այսօր։ Իսկ յետ մետասան աւուր յուղարկման մահսէրին, ի Թիֆլիզու ժողովրդենէն մահսէր ընկալաք հանդերձ թղթովք մեծազօր Գէորգի արքային Վրաց, և որդւոյն նորա քաջազէն Դաւիթ Միրզային ձեռամբ միրիշքեարբաշի Յովսէփ աղային. և Տէր Առաքել աւագ քահանային. որք գրեալ էին զարժանաւորութենէ մեծաշուք անձինդ և զժամանելոյ վիճակին առ քեզ և ցուցեալ էին յամենայնի օգտակար զոլ զգահակալելդ աստ և ոչ վնասաբեր. իբրև տեսաք թէ ոչինչ է տարաձայն խընդիրն ի մերս ընտրութենէ և հաճութենէ, ապա զերկրորդ մահսէր գրեցաք ըստ օրինակի առաջնոյն, և ընդ Դանիէլ պատրիարգին զձեր ըղձալի անուն կարգեցաք զերկոսին ևս միապէս հաւանական և հաճելի մեզ ցուցանելով, զի յերկոցունցդ զո և կամիցին առաքեսցեն։ Ապա և զայս թուղթ հրաւիրանաց ջերմեռանդ սիրով խոնարհաբար առ վեհանձնութիւն ձեր գրեմք, առ ի գիտել թէ մեք միաբանք սրբոյ աթոռոյս յօժար սրտիւք և բարի դիտաւորութեամբ կամիմք և խնդրեմք զսրբազնութիւն ձեր լինել կաթուղիկոս սրբոյ աթոռոյս, և ազգին մերոյ և մեզ, որ եթէ յիշեալ պատճառօքն

չունիս կասկած վտանգի առ ամենտագնիւ անձն քո և առ սուրբ տունս, և առ ազգ մեր մշտարարբերար ի հրաւիրել ազգին հրամայեսցես եկեսցես ի սուրբ աթոռս ի կաթուղիկոսութիւն ուղղափառ սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, և ի պաշտպանութիւն մեծի տանս. և ի հայրապետութիւն որբացեալ միաբանութեանս. Ճշմարտիւ հաւատացեալ թէ ի մէնջ ըստ ամենայնի մըտադիւր ընդունելութիւն և որդիական հնազանդութիւն առընծային սրբազութեան ձերոյ և ի վերայ գլխոց մերոց ունիս զտեղի, զի արդարև այսօր ձեր է վիճակն կաթուղիկոսութեան։ Բայց եթէ երկիցես ի պատճառացն յիշատակելոց թէ վտանգ լինիցի շքեղափառ անձինդ, և սրբոյ աթոռոյս և ազգի մերում, և չկամիցիս գալ, առ այն ոչ կարեմք լինել Ձեզ մեղադիրս, ապաքէն թողլով զընտրութիւն օկտի ձերոյ իմաստութեան, և յաւէտ ևս վերնախնամ տեսչութեան ապաստան, մնամք ձերումդ մեծապատիւ հայրութեան արժանահայց աղօթաւորք և հնազանդ որդիք որբացեալ միաբանք սրբոյ գահիս սաորակնքողք ի թըղթիս եպիսկոպոսք և վարդապետք և այլք որք ընդ մեզ։

Գրեցաւ յամի Տեառն 1800 և ի թուականութեանս Հայոց ՌՄԽԹ ի յունվարի ամսոյ 20. ի լուսանկար աթոռս սուրբ Էջմիածնի։

ՀԴ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ իշխանապետս Հայոց Կ. Պօլսոյ.

Առ ընդհանուր բարետոհմ պայազատ Ամիրայից, իշխանաց և իշխանապետաց և բոլոր Հայկազուն ժողովրդականաց Քրիստոսասէր անձանց բնակելոց ի Կոստանդնուպօլիս, ողջոյն, սէր և օրհնութիւն Աստուածային ձօնելով, զեկուցումն առնանի։

Սիրելիք մեր ի Տէր.

Զմեծագոյն յարգանս և զյոդնազեղուն սէր հոգեկան որ ի վաղի հետէ ունիմք առ դերազնիւ և բարեպաշտօն ընդհանուր իշխանացդ և սիրալուն որդեկացդ մերոց, կարեմք ապացոյց բանիւ հաւաստել նովիմբ գրութեամբ մերով, որ մերթ ընդ մերթ ի յարմար դիպուածոջ ունիմք յղել յատկապէս առ պայազատս ոմանս որ ի ձեզ. ընդ որոց կարացէք ունիլ իրաւացի առիթ ինչ գրութեան։ Իսկ առ հասարակութիւն ձերոյ Ազնուութեան մինչ ըղձալով մնայաք ունիլ բանաւոր պատճառ իմն, այն ևս դէպ եղև յանցելում ամի առաքել այդր ի ձեռն հանճարիմաստ տիրացու Մանասէ դպրապետի սիրելի որդւոյ մերոյ՝ զպատճէն դրոյն Նորապսակ Արքային Վրաց, որ կատարեալ գոլով ի նախնեաց և ի ծնողաց իւրոց, ունիլ հոգ և խնամածութիւն ի վերայ Աստուածաէջ և Լուսակառոյց Տանն և Տաճարին Աստուծոյ, որ ի վերնային Տուչութենէ գտանի ներկայապէս հանդերձ նորին նահանգաւ ենթ իւրոյ Արքայական ղաւազանի իշխանութեանն վիճակեալ. որոյ Արքայի տեսանելով զծերութիւն և զանհանգիստ տկարութիւն անձին Սրբազնասուրբ Հօրն մերոյ հասարակութեան Տեառն Ղուկասու երից երանեալ ընդհանրական Հայրապետի ամենայն Հայոց, և զմտաւ ածելով որ ըստ ընթացից մարդկային պարտաւորեալ բնութեան (Տէր մի արասցէ) փութով փոխիլ յանցաւորէս առ անանցն յաւիտենական երջանիկ հանգստութիւն պատահիցի, վտանգ մեծ լինելոց է սրբոյ Տանն վասն ներկայ խռովութեանց և անմիջոց բազմածուփ վրդովանաց կողմանցն այնոցիկ, թարց յատկագոյն կառավարիչ Տնտեսի և ջերմեռանդ հոգաբարձուի մնալն նորին, ժամանակս ինչ՝ մինչև լրասցի ընտրութիւնն. հրաւիրեալ էր զմեզ ընդ բազմաց երևելի անձանց եղելոց ընդ իւր իշխանութեամբ, գտանիլ ի մերձակայ սահմանս, առ ի վերժամանել արագ անդ՝ ի դիպուկ ժամու, և բառնալ զլուծ նորին Հոգաբարձութեան, ըստ որում ականատես լեալ էր ինքնին՝ մինչ էաք մեք ի նոյն կողմանս ի ժամանակի անցեալ աղէտալի խռովութեանց, թէ որպէս հեզաբարոյ քաղաքականութեամբ վարելով ընդ բարբարոսաբնոյթ բռնակալ խանեբացն Պարսից, շահէաք զնոսա ի քաղցր ակնածութիւն։

Բայց մեք ըստ պատշաճին պատասխանեալ նմա գրեցաք այդր առ ի Քրիստոս

հանդուցեալ Զաքարիա սրբազան Պատրիարքին, և առ Ձեզ հարազատ որդեկացդ սրբոյ դ·ոհին, զևկուցանելով թէ մեք զսոյն կոչումն ոչ կամիմք լինիլ միայն ի թագաւորաց և ի կայսերաց կամ յերևելի իշխանաց և ի մարդկանց. այլ նախ՝ յԱստուծոյ, և ապա ի բոլոր հասարակութենէ Հայկազուն Քրիստոսասէր ժողովրդոց, որոց բազմութեան ձայն, Ձայն Աստուծոյ հաւատալով կարասցուք յանձն առնուլ յօժար ընդունելութեամբ։

Եւ այս վասն երկուց գլխաւորագոյն պատճառաց, նախ՝ զի մի բռնաբարիչ սըրբացեալ աստիճանին երևեսցուք, որպէս և ընթեռնումք ի մեր պատմութեանց երբեմն եղեալ ոմանց՝ և ստորև մեծի վշտալիր վրդովմանց ենթարկեալ զսուրբ գահն, առիթ ընդհանուր գայթակղութեան եղև Ազգին։ Երկրորդ՝ զի մի չուինչ խռովութեան և քակտումն սիրոյ և միաբանութեան ծնանիցի ի մէջ ձեր և ի մէջ անդ եղեալ բանաւոր հօտին Քրիստոսի։ Որք սակս պատուէր տուաք վերոգրեալ տիրացու Մանասէ հարազատ որդեկի մերոյ՝ մի հրատարակել զնոյն գրեանս մեր մինչև ցպատեհ ժամն։ Քանզի թէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ պարտական իսկ եմք աղօթել առ կենսատու Աստուած՝ շնորհել առողջ և երկար կեանս սրբազնագոյն գլխոյն և հօտապետին մերոյ, զի որպէս այսքան ժամանակ զյոլովակերպ ճգունս և զվիշտս (զոր ի փառս իւր համարեալ՝ վարձս մշտընջենականս երջանկութեան պարգևեսցէ) կրելով կառավարեաց զսուրբ տեղին՝ ընգգէմ յարուցմանց բազմադիմի թշնամեաց, կրկին կառավարեսցէ ժիր առողջութեամբ ի բազում ամս, որպէս և յընթեռնուլն Ձեր զնոյն գրեանս մեր կարէք վերահասու լինիլ սոյնոյ հարազատ և անտարակուսելի մտերմութեան մերոյ։

Եւ այժմ պատճառ երկրորդելոյ մեր զսոյնս՝ դիտասցէ Աստուածսիրութիւն ձեր՝ որ կրկին՝ դիպեցեալ եղաք ի սոյն աւուր բազմութեանց գրեանց, ոչ միայն ի նախկին հրաւիրողաց, այլ և արդիւնական յերևելի միաբանից սրբոյ Աթոռոյն, յորոց մինն է ներկայաբար յԱշտարխան եղեալ դերիմաստ Եփրեմ սրբազան Արհի Եպիսկոպոս եղբայրն մեր, և յարգի մելիքներաց և յընտիր ժողովրդականաց այնոյ կողմանց. որք յորդորեն զմեզ զիջանիլ ի հաճութիւն, թողլոյ զաստիս ապահով վայելչութիւն և զմասնաւոր աշխատութիւն ի վերայ սակաւաթիւ ազգայնոց և յանձն առնուլ կրել զծանրակիր լուծն Տնտեսութեան և պաշտօնատարութեան սրբոյ Տանն, և ժամանեալ է սրբազնութեան դերերջանիկ Հայրապետն մեր. և յարուցմունք բնակչաց պարսից անդադար ալէծփեն զշրջապատս Արարատեան գաւառաց, որպէս և ի ներկայիս եղեալ խանգարումն Խոյայ քաղաքին և ամրոցին լուեալ իսկ էք, յորմէ և առ յայլ տեղիս կասկածք յայտնապէս նշմարին. «ուստի ոչ է ժամանակ յետաձգութեան (գրեն) թողուլ մինչոց ինչ անտերունչ զսուրբ գահն. և ո՞ է այժմոյս երեելապէս ժրաջան աշխատաւոր և առ թագաւորս և իշխանս յառաջադէմ և ենթակայ շնորհաբաշխութեան նոցին, և մանաւանդապէս ծերունի և աւագ ի մէջ սրբազան արհի Եպիսկոպոսաց մերոց իբրև զՁերդ Հայրութիւն, վասնորոյ և ոչ ոք կարէ ներհակիլ և կամ խոչընդակ լինել այսու արժանաւոր ընտրելականութեան և կոչման Ձերոյ սրբազնութեան. ուրեմն խնդրեմք մի զանձինդ հանգստութիւն նախադասել առ ճգունսն, որ վասն Աստուծոյ՝ և Տանն սրբոյ՝ և ընդհանուր ազգին՝ բանաւոր հօտին Քրիստոսի». և այլ սոյնպիսի բազում յորդորանօք խնդրեն ի մէնջ փութալ աճապարել և մերձենալ ի նոյն կոչումն. բայց մեք վերստին զնոյն առաջին բան պատասխանեցաք նոցա. թէ ոչ կամիմք ինքնին կարևոր իշխանութեամբ նպաստաւորաց մերոց ելանել ի սուրբ գահդ, այլ կոչմամբն Աստուծոյ, և համահաճութեամբ (առ) հասարակ զաւակաց սրբոյ Մօրդ մերոյ, զի բազմասցի և վերականգնեսցի սէր և խաղաղութիւն առ ամենեսին, որ է պտուղ և պարգև ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, որովք և մեք կարասցուք զգենուլ զզօրութիւն ի բարձանց առ ի հովուել զհօտն Աստուծոյ և կրել զծանրութիւն լծոյն այնորիկ և այլն։

Արդ՝ ահա վերստին հարկադրեցեալ ի նոցունց ժտից, գրեցաք զսոյն օրհնութեան նամակ. ազնուազարմ իշխանաց և իշխանապետ Ամիրայից, և օրհնեալ հարազատ զաւակացդ առ հասարակ բնակչաց մեծի մայ-

րաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ. որպէս և յատկապէս առ սրբազան Դանիէլ պատրիարգ տեղւոյդ՝ հոգեկից և սիրելի եղբայր մեր. որ եթէ կոչումնս այս իցէ ի Տեառնէ և լիցի ի ձեզ հաւանութիւն և համակամ հաճութիւն ասա և անդ եղեալ միաբանից և երևելի անձանց և Քրիստոսապսակ Թագաւորաց, որև յայնժամ խնդրեմք զեկուցանել մեզ հաւաստի գրութեամբ, զի և մեք հետևելով ընդ ձայնից բազմութեան, ստորագիցուք զմեզ ձայնի և հրամանի իսկական պաշտպանչի և անքուն պահպանողի սրբոյ Տանն իւրոյ Որդւոյն Միածնի, որ Իջմամբն իւրով փառազարդեալ կառոյց ի վերայ անյաղթահարելի հիմանն իւրոյ անշուշտ բանին. որոյ շնորհ և օրհնութիւնն հանգիցէ ի վերայ Ձեր ամենից, և ի վերայ ընդհանուր Հայասեռ հաւատացելոց իւրոց. Ամէն։

Գրեցաւ ի Սանկտ Պետերբուրգ ի 1. փետրվարի 1800 ամի փրկչին.

Խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս կողմանցս Ռուսաստանի և Կաւալէր։

ՀԵ. Տեառնդ Մինասայ սրբազան Արքեպիսկոպոսի եւ Աստուածաբան վարդապետի.

Ողջոյն կարօտալի։

Զփոփոխումն յաստի կենաց առ երջանիկ կեանս վշտալիր և երանելի Հայրապետին մերոյ և Հօր՝ ի Թիֆլիզու լուեալ ողբացաք ըստ օրինի որդւոյ. և արտասուեալ, համայն վիճակաւ կատարեցաք զպաշտօն հանդիսաւոր, մինչև տալ գիտել մեծի կայսերն մերոյ, և ղհանգէսն եղեալ ի կազէթի հռչակեալ եղև ամենայն ուրեք։ Փրկիչն մեր Քրիստոս հանգուսցէ զհոգի նորա ընդ սուրբ Հայրապետսն, յարուսցէ զարժանաւոր ժառանգս Աթոռոյ իւրոյ և մխիթարեսցէ զսիրտ մեր ամենեցուն։

Ըստ լրոյ մահու նորին ընկալաք և ըղնամակսն, որ առ Ամենազօրմած Թագաւորն մեր և առ այլս, ահա աշխատեմք ի թարգմանել և իբրև ի կենդանւոյ մատուցանել. ծանեայ և զզանազան գրութիւնս երանեալ Հօրն մերոյ որ առ մեզ սակս Եփրեմ վարդապետին. նա բնակելով ի տան իմում որպէս որդի և եղբայր կայ ի մխիթարութեան, որպէս յառաջադէմ։

Գրեալ էր մեզ նորին Արքայական բարձրութիւն, նոյնպէս և այլք բազումք յետ վախճանի սրբոյ Հօրն՝ զընտրութենէ միաբանիցն զմի ոք ի նոր Հայրապետութիւն. և որպէս թէ ձայն եղբօրդ և ներսնայնոցն բարձրացեալ եղև ի վերայ նուաստութեան մերոյ. առ այդ շնորհակալ եմ զՍրբազնութենէ քումմէ և զներսնային ամենայն հարազատացն մերոց. բայց անպատրուակ բանիւ լուր Հոգի եղբայր. զի ահա երկու ամս լրանայ, վասն այդմ խօսին ընդ իս ի Վրաստանու, ի սուրբ Աթոռոյդ և ի Պօլսոյ. հուսկ յետոյ ևս Եփրեմ վարդապետն երկիցս գրեալ էր առ իս թէ՝ առ այն վախճան եմ եկեալ առ քեզ, զի յորժամ գլուխն մեր փոխեսցի, զքեզ մուծցուք ի սուրբ Աթոռն, զի աչք ամենից ի քեզ հային և այլն։ Սոյնպէս գրեն մեզ և այլ երևելի եպիսկոպոսունք սրբոյ Գահիդ. ուրեմն յետ այսր ամենայնի ոչ մարթ էր միաբանիցն մերոց, ընդ մերս անուան դասել և զայնպիսի անուն, որով նախատինք վերաբերի սրբոյ Գահիգ և Ազգին։ Այլ գու իմաստասիրեա. միթէ ոչ գոյ Աստուած Իսրայէլի որ երթան պաշտել զճանճիկն։

Այս ամենայն ի բաց թողեալ գրեմ Հոգի եղբօրդ. Ազգն ամենայն ընդ երեսս երկրի՝ գիտելով առ իս ջերմեռանդ սիրով կապակցեալ, հաւաստի գիտեմ զմեզ հրաւիրել առ այն, (թէպէտ ի մեծ կայսերէ նշանակեցեալ իցեմ առ այն նպատակ, և ի Վրաց Արքայէն հրաւիրեալ ամենայն նախարարօք Ազգին մերոյ.) բայց Վեհագունից հրաման յետին համարեցի և համարիմ, զի մի բռնութիւն նովաւ մտցէ ի սուրբ ատեանն. այլ տեղի ետու ազգային սովորութեանն, զի Ազգն ևս՝ և զիս՝ Ազգն ընդգրկելոց եմք. ուստի և վասն այսմ նիւթոյ ի ժամանակս կենդանութեան Զաքարիայ պատրիարքին գրեցի նմա և իշխանացն, և զնա կոչեցի ի բարձրագոյն ատեանն՝ ըստ ամենայն իրաւանց. այլ մինչ նա մեռեալ գտաւ, իշխանք

ամենեքեանք՝ որպիսիք են։ Շնորհք, մահտեսի Ստեփան Չէլէպին, Պետրոս Մարտիրոսեան և այլք, ընդ տիրացու մահտեսի Մանուսէին, դրեալ էին մեզ պահել զԹուղթն հասարակ իշխանաց, զի յորժամ տէրն մեր փոխեսցի ի կենաց, յայնժամ յայտնեսցեն։ Ըստ այսմ գրութեան նոցա, և ըստ բարձրագոյն հրամանին հանրական իշխողին կիսագնդին տշխարհի, որ ոչ իշխանքն մեր իշխեսցեն առնել ինչ, և ոչ մեր Դանիէլ վարդապետ պատրիարքն համարձակեսցի մերձիլ այսմ, իսկ միւսն անյիշելի է այժմ և յապայն։ Եւ օգուտ սուրբ Աթոռոյդ է այն՝ զի եթէ Հոգին սուրբ ըստ իւրոյ զուտ ընտրութեանն զմեզ արժանաւոր համարեսցէ այնմ կոչման՝ Դանիէլ պատրիարքի լինելն ի Պօլիս, որպէս թէ յատուկ Աստուծոյ տնօրինութիւնն է։

Ամենեքին որք գրէին ինձ՝ զայս և եթ ցուցանէին, իբր աչք ամենից առ իս է, այլ ոչ գիտեն ես յօժարե՞մ թողուլ զհանդստութիւն և զփառս՝ զորս վայելեմ աստ, որպիսիք են Դաւիթ վարդապետն, Յովհաննէս վարդապետն Դեղարդակիր, Եփրեմ վարդապետն և այլք․ զի ընդ Ձեզ երևելիքն սուրբ Աթոռոյն այժմ սոքա են. ապա մինչ նոքա աղիողորմ ձայնիւ կոչեն, և յոյս իւրեանց առ իս դնեն, յաղագս ծառայելոյ Մօրն մերոյ, որքան քարացեալ սիրտ պարտ էր ունիլ հակառակիլ, և որքան անձնասէր պարտէի գոլ զանձն իմ չտալ ի զոհ ծառայութեան լուսարուղխ Մօրն, յորում ծնեալ և սնեալ եմ, որոյ շնորհօքն և գտեալ զայսքան շնորհ և պատիւ․ մի՞թէ չէր օրէն անողորմս ոչ լինել վասն զմին աղքատ աղաղակողացն. այսմ նուիրել զանձն իմ, և կապեցեալ գրութեանց միաբանիցն Աթոռոյն և համայն Ազգին՝ կամայ ակամայ իջի ի խնդիր նոցա. լինել սպասաւոր սրբոյ Աթոռոյդ, աշխատիլ վասն նորա և Ազգի նորին, բանիւ և գործով, որքան կարն իմ տացէ տևողութիւն. վասն որոյ և յանձնելոյդ *) զգուշացեալ ի յապազայն վտանգէ սուրբ Աթոռոյդ՝ սակս անտիրութեան, և մանաւանդ համառօտելով ղշնչիւնս ոմանց և կարճեցուցանելով զգրիչս անշրջանկատից, ըստ խնդրոյ Եփրեմայ վարդապետին գրեցի առ Դաւիթ և Յովհաննէս եպիսկոպոսն՝ զոմանս պատուէրս իմ ցուցանել միաբանիցն, և լինել կառավարիչք կամ վէքիլք մեր, մինչև հաճեսցի Տէր արժանացուցանել զմեզ այդմ վիճակի։

Իսկ այժմ առ Հայրդ իմ և եղբայր զայս և եթ գրեմ, որ եթէ կոչումն մեր յԱստուծոյ իցէ հաստատեալ, ըստ առ քեզ գրութեանն Արքային և ես գրեմ. խոնարհաբար խնդրեմ ի սրբազնութենէդ զի հաճեսցիս ի խնդիր իմ. գնացեալ ի Ներսն ի բնակութիւն Տեղապահ Մկրտիչ վարդապետին, և անդ կացցես ընդ Ներսնայնոցն մերոց՝ որպէս Հայր խոհական քոյդ սիրեցելոյն Յովսէփայ, և անդ լինել յամենայն աւուրս կենաց քոց որպէս Յակոբ ընդ Յովսէփայ. զի ոչինչ է ընդ մէջ Հօր և որդւոյ։ Նոքա երկոքին եղիցին անդէն վէքիլ, որպէս և դրեալ եմ նոցա, իսկ դու Հայրդ իմ որպէս Տեղապահ որդւոյ քոյ՝ և կառավարիչ Ներսնային որդւոց մերոց և տան, . . . միաբանիցն ամենեցուն սրբազան Եպիսկոպոսաց, Աստուածաբան վարդապետաց, աբեղայից, սարկաւագաց, դպրաց, մահտեսեաց, նաև վարձեալ մշակաց ամենից՝ յինէն ողջոյն և օրհնութիւն և պատուէր տալ, լինել զգաստ իւրաքանչիւրոցն ի պաշտօնս իւրեանց, լինել միաբան հոգւով, հնազանդիլ օրինաց և կառավարչաց իւրեանց և արի ի պաշտօնս զոր ունին ինքեանց յանձնեցեալ։

Արդ զոր ինչ հարկն է՝ գրեցեալ եղև ի Պօլիս յինէն, Տէրութիւնն ես դրելոց է. մինչ մեք ի դրունս գտանեցաք՝ ոչ (է) կարելի շտապել, մինչև ոչ եկեսցէ բազմակնիք մասար ձեր և խնդիր Արքային, առ հզօր կայսրն, որոյ յաղագս լսեմ, զի առաքեալ է առ Ձեզ զպարոն Միրիշքեարն, և զՏէր Առաքելն, որպէս գրեն և նոքա շուտով ծանուցանելոց են Նորին Կայսերական Մեծութեան և մեզ. ուր եմք և մեք պարտիմք սպասել աստ. ապա յետ ընկալման համահաճութեան՝ աստ հոգալ զԱզգային հարկաւոր գործս. և որպէս երևի մեծ թագաւորն ունի կամս մեծ շքօք առաքել զմեզ, ըստ որում նոր է այս։ Ես սպասեմ մինչև ամսոյս վերջն ի Պօլսոյ լուր առնուլ, որպէս զի պատրիարքն և իշխանքն ըստ կարգի հոգասցեն զհողալիսն և զֆէրմանս։ . . . Եւ եթէ հնար իցէր մին ռաղամ Պարսից և ֆէրման Օսմանցւոց յաղագս կա-

---

* Յանձնելոյն (*)։

թուղիկոսական իշխանութեանն առաքիցէիք, յոյժ բարւոք լինէր. . .

Մնամ Ձերդ եղբայրութեան ի Քրիստոս եղբայր և սրբոյ գահիդ սպասաւոր

Նուաստ Յովսէփ արքեպիսկոպոս

Յամի 1800 փետրվար 23.

Ս. Պետերբուրգ։

ՀԶ. Թուղթ Յովսէփայ Արք Եպիսկոպոսի առ սրբազան Եփրեմ Արք Եպիսկոպոս.

Յանցեալ փօշտին գրեցի առ քեզ զամենայն որպիսութիւնս մեր, և զկնի այնմ ընկալաք ի քէն ի փետրվար 16-էն գրեալ գիրդ. առացէ Տէր այժմ կատարեալ առողջութիւն ունիցիս։ Գրեալ էիր որպէս թէ Յովհաննէս վարդապետն գրեալ է առ Քեզ ի յունվար 25. զգնալ Դաւիթ վարդապետին ի Պօլիս մահսէրաւ. այդմիկ չեմք տեղեակք և եթէ գայ մեզ թուղթ՝ Վրաց դեսպանքն ի Մոզդոկ են, ի հարկէ պահեն ինքեանս ըստ սովորութեան իւրեանց. զի ինքեանք տացեն մեզ։ Յամսոյս 5. հրամայեցին նոցա գալ աստ, այլ ոչ գիտեմ Դաւիթ վարդապետն զկնի տեսանելոյ Միրիշքիար բաշուն և Տէր Առաքելին է գնալն նորա թէ յառաջ. այս միայն էր ինձ հարկաւոր։ Այլ դու լուր ինձ այժմ զանցս Պօլսոյ։ Ի յունվարի 23, ի Կարնոյ գրեալ են անդ զմահն Հայրապետին. լսելով Պատրիարքին հրամայեալ է ումեք չյայտնել, մինչև գրոյ գնալն յԱթոռոյս. այլ քրթմնջիւն բարձրացեալ ի տունս տունս իշխանաց զանազան զրոյցք են (եղեալ) որպէս գրեն մեզ Զօպան Ամիրայն, Գրիգոր Սախազատայն, մահտեսի Ստեփան Ամիրայն Եղիազարեան, ծերունի Սահակ Ամիրայն, Պետրոս Ամիրայն, մահտեսի Գասպար Ամիրայն, մեր տիրացու Մանասէն և այլք, որպէս թէ ոմանք առաջնորդք կողմանց յարեալ յիշխան բարեկամս իւրեանց խոստանան զծախսն հատուցանել և ծանր ծանր ընծայս տալոյ Պատրիարքին, իսկ Պատրիարքն՝ տակաւին ոչ իւր կամքն է յայտնեալ, և ոչ նոցա հաճեալ. այլ մի ոմն յԵպիսկոպոսաց (որ կարծեմ թէ վեքիլ Յովհաննէս վարդապետն իցէ) 200 քիսայ խոստանայ վէզիրին և վէզիրն գոլով ի բանակս՝ յիւրոց բարեկամացն առաքեալ է առ նա աղերս հաճել՝ զընծայսն ընկալնուլ և հրամայել իշխանացն զնա ընտրել ի կաթուղիկոսութիւն. իսկ մեզ աղաչեն փութալ ի յԱթոռն ըստ յուսոյ Ազգին, յայնժամ խորհուրդ ամենեցուն ջրեալ լինի. նաև միաբանքն Աթոռոյ ըստ իւրեանց բուն սովորութեան զանազան քսութիւնս են գրեալ ոմանց, զորս չէ վոյթ մեզ երկարել։

Նախ՝ ամօթ միաբանիցն, երկրորդ՝ ամօթ իշխանացն, երրորդ՝ համօրէն ազգին, որ արծաթով ընտրեալքն ունիցին Հայրապետ ինքեանց։ Որպէս և իցէ գրեմք Քեզ պարզապէս թէ՝ խոստացեալքն արծաթով յառաջ մատիցեն, և թէ նոյն Պատրիարքն իւր մակագրութեանն ոչ շատացեալ, յառաջասցի ընդդէմ մեզ ապօրինաւորութեամբ որ ըստ ամենայն իրաւանց իմ է ժառանգութիւն ի Սիմէօն կաթուղիկոսէն մինչև ցարդ. որպէս գոյ գրութիւն ի մէջ իմ և հանգուցելոյն՝ ըստ ծերակուտութեան իմ, ըստ աշխատանաց իմ, ըստ հաճոյութեան երևելի Միաբանից՝ յորոց մի և դու ես։ Ի վրաց աշխարհին ուր միշտ մեծ ձայն ունիմ, զիարդ հնար է նոցա գալ իբրև սեղեխ մտանել յառագաստ հարսին իմոյ. ծառայքս՝ լինել լի՞ ձ տեարք, և որդիքս՝ հարք. որով գիտութեամբ և կամ խեղկատակութեամբ ոչ կամիք *. իսկ մերն յայտնի է աշխարհի որպէս զլոյս, ուքեմն ես զնոսա ճանաչելոց չեմ որպէս կաթուղիկոս. այլ իբրև զմի ի լիրբ բռնաւորաց և ի յարծաթոյ ընտրելոց։ Թէ ի՞նչ աստի ծնանի՝ իմաստասիրեա և գրեա յաթոռն. իբր ** կալ, որ քան ջուղայեցի Ստեփաննոս վարդապետի և Քիւթիւրի անցքըն մեծ լինի ի նախատինս Ազգին և ի ֆսաս Աթոռոյն, և մանաւանդ թէ մինչև ամենամեծ Կայսրն և վրաց Արքայն այժմ ճանաչեն զիս Պատրիարք ամենայն հայոց։ Վասն այսմ թէպէտ յանցեալ փօշտին գրեցին դեսպանքն, սակայն այսօր յատուկ սուր-

* Գիտեմ։

** Ի մտի։

հանդակ առաքեցին գաղարեցուցանել զընտրութիւնս այլոց՝ թէ և հրովարտակ իցեն առաքեալ, այլ վասն մեր տալ պատրաստել. գրեցին և ի Վիրս՝ գիտել, և մի՛ զոք մուծանել ի յայն Աթոռն։

Փութա գրել Դանիէլ պատրիարքին, մի՛ լինել պատճառ խռովութեան թաղաւորաց. մի՛ թեթևանալ և մի՛ օտարանալ ի վիճակէն իւրմէ՝ եթէ որդի է սրբոյ Աթոռոյն. իսկ եթէ ձգտեսցի, ունի տեսանել զոր ոչ կարծէ, բարուոք է մնալ անդ որպէս է. թէ ի ճանապարհին իցէ՝ արգելցի որպէս Սահակ Ահաղինն, եթէ ոչ հաճեսցի՝ հրով ծախեն զսուրբ Աթոռն, և լինի ամբարիշտ խռովարկու և ապօրինաւոր բռնաւոր. ես չեմ մեղաւոր, որ ի Ռուսաց երկիրն եմ. չեմ անբանացեալ, այլ շահաւոր լեալ Ազգին, Աթոռոյն և հաւատոյն, ծառայէի Մօրս որպէս որդի ժառանգ և փեսայ Նորին՝ և ոչ եթէ ծառայ Դանիէլի և կամ այլոյ ուրուք, որ և իցէ՝ ես զնոսա չեմ ճանաչելոց կաթողիկոս ոչ այս երկիրն և ոչ տունն Վրաց։ Ահա դրբեցի նախահոգալ նոցա և գիրդ շուտով հասուսցես միաբանացն գիտել. կորուսանէ Աթոռն զհամայն բազաւորութիւն իւր. որպէս թէ զԱթոռն Լուսաւորչի։ Մի՛թէ դու, Դաւիթ վարդապետն և Յովհաննէս վարդապետն և այլք, որք երևելիքն էիք Աթոռոյն դրով ձերով ինձ խաբէի՞ք։ Գրեցի Յովհաննէս վարդապետին զսուրբ Գեղարդն թողուլ ի Թիֆլիզ կնքով 12 իշխանաց ի Մօզնի Եկեղեցին. և ինքն դնալ ի սուրբ Աթոռն հոգստանիլ կատարման դրութեան իւրեանց և բարձրագոյն հաճոյութեան Կայսերն մեծի, և Արքային Վրաց և երկրի նորա։

Դանիէլ վարդապետին գրեա ի վերայ Պօլսոյն և ի վերայ Աթոռոյն. եթէ ի տեղւոջն է տակաւին՝ կացցէ ի լռութեան. եթէ ի ճանապարհի է մնասցէ անդ՝ մինչև իմ դնալ ի յԱթոռն. յայնմհետէ եկեսցէ անդէն, իմ է. սոյնպէս աքսեսցեն և նոքա՝ որք իցեն կոչեցեալ. այս տղայութիւն չէ՝ որ ինձ երկու ամ կոչեն, յետոյ ընտրեն զայլ և այլ անձինս, և թէ չգիտեն ինձ՝ ես յիմ տեղ նստեալ էի հանգիստ, թողուլ հաճեցայ զհանգստութիւնն, զի սուրբ Աթոռն փառաւորեսցի, և դու իմաստասիրեա և փութա անցուցանել զհուրն սկսեալ, ապա թէ ոչ բազումք այրին, ափսոս է սուրբ Աթոռն որ մնասի։

Եւ եթէ 200 քսակաւորն յառաջասցի, ուրեմն այն մնալոց է ի վերայ Աթոռոյն ի Դուռն Թուրքաց որպէս մուխաղղայ Մէլքիսէթ կաթողիկոսի, այլ ամենայն հրատաբակեալ են, սպասեն սոքա յայնժամ ունիլ, յորժամ ի յարքայէն և ի Կավալիցկուն գիր ընկալնուցուն։

Ես զՄինասն Տեղապահ եմ կարգեալ ըստ բանի Արքային, և ամեն ինչ նմա գրեալ, եթէ զնա կացուցանէին, չունէի ինչ ասելոյ, զի ես զնա միշտ հայր եմ ճանաչեալ։

Խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս

1800. մարտի 8.
ի Ս. Պ.-բուրգ։

ՀԷ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ Յովհաննէս արքեպիսկոպոս

Ի Քրիստոս սիրեցեալ եղբայր՝ Յովհաննէս արքեպիսկոպոս եւ աստուածաբան վարդապետ.

Զպատասխանիս թղթոցն քոց՝ յառաջնոցն և ի յունվար դրեցելոյն յաղագս փոխման Հայրապետին գրեալ եմ առ քեզ, առ բազումս և առ եղբօրորդին իմ։ Այժմ հարկադրեալ եղէ՝ կրկին գրել ձեզ, զամենայն անցս Պօլսոյ գիտել և ըստ այնմ տնօրինել։ Բարւոք էր որ երբէք՝ զանունն իմ ոչ յիշէիք. այլ դուք ի կենդանութեան Հայրապետին գրէիք մեզ՝ որ մի միայն եմ ակնկալութիւն խարայէլի. ըստ որում և Դաւիթ վարդապետն և Եփրեմ վարդապետն՝ երբ զիս յաբուցիք ի կատարումն բազմականաց ձերոց յանձն առնուլ զլուծ անարատ հարսին Քրիստոսի (զորմէ և նորին բարձրութիւնն և երկիր իւր խօսիւք ընդ իս ամ մի՛ ողջոյն.) իսկ զկնի մահուն՝ ի յընտրութեան՝ ընդ իս և զայլս յառաջ ածիք և ի Պօլիս զզանազան գրու-

թինս արարիք, որպէս էր սովորութիւն միաբանիցն։

Այժմ տես դու՝ զհուրն զոր բորբոքելոց է աստ՝ նախ՝ տեսանես Նորին Արքայական բարձրութիւնն, որ բոլոր երկրաւ իւրով կանգնեալ կայ վասն մեր մինչև ցմահ. երկրորդ ամենաողորմած Կայսրն ամենայն ռուսաց՝ լուեալ զկոչումն ընտրութեան մերոյ, ահա պատրաստ՝ մեծաւ շքով առաքել զխոյ այլ սպասէ Արքայի դրոյն և յատուկ մարդոյն. երբ բոլոր եւրոպիու թագաւորքն չկարացին սմա դէմ կալնուլ, միթէ ողորմելի և տարաբախտ Ազգն մեր և միաբանքն քսուք, կարեն ընդդիմանալ հզօր հրամանի սորա։

Երրորդ եթէ՝ ի բռնութեան տաճկաց և կամ ի փառամոլութեան լրրաց, համարձակիցի ոք յառաջել ինձ. և զիմ օրինաւոր ժառանգութիւնն տիրել և կոչել ինձ հայր և տէր՝ յետ այնքան աշխատանաց իմոց և արդեանց՝ որ առ ազգս և եկեղեցիս. մի՞թէ՝ իբր զղերունքն (?) չպարտիմ ընդունել զնա։ Չորրորդ տես թէ՝ ինչ նախատինք սուրբ գահին և ազգին ոչ ելանէ աստի։ Քանզի ի յունվարի 23 լուեալ ի Պօլիս պատրիարքին և իշխանաց ի գրութեան կարնեցւոց, թէպէտ հրամայեալ են ումեք չյայտնել մինչ գիր ոչ եկեսցէ, սակայն բանն ի հռչակի է և վեզիրն ի բանակի։ Պատրիարքն դեռ զկամս իւր չէ յայտնեալ յանձն առնելոց է թէ ոչ. ի մի ի մէջ իշխանացն՝ մին քրթմնջիւն, ոմանք զմեզ կամին. Զօպան ամիրայն. Գրիգոր ազայն. մահտեսի Ստեփան Եղիազարեան, մահտեսի Գասպար Ագնաւուրեան, ծերունի Սահակ ամիրայ. Պետրոս ամիրայ Մարտիրոսեան և այլք բազումք։ Իսկ ոմանք կամին զպատրիարք կացուցանել. բայց ընդ սմին և ի զանազան կողմանց եպիսկոպոսաց գրեալ են առ բարեկամ իշխանս իւրեանց և զխոստմունս արարեալ նոցա և ծանր ընծայ պատրիարքին։ Իսկ մի ոմն՝ լիրբ, չար և որդի սատանայի, որ կարծեմ գոլ վէքիլ Յովհաննէս վարդապետն՝ առաքեալ է ի բանակն առ վէզիրն. երեք հարիւր քիսայ խոստացեալ որ հրամայեսցէ իշխանացն զնա ընտրել, այլ թէ բանն որպէս վճարի, չէ յայտ. այլ երևի որ ամենայն ունկն արծաթոյ լսէ. և թէ դէպ լինիցի նմա, լինի ոչ թէ՝ հայրապետին ազգին, այլ մատնիչ յուդայ, խոտեսցին այնոքիկ որք ընտրեալք են արծաթով, նա ոչ լինի փեսայ՝ այլ սեխեխ և կամ պոռնիկ։ Ամօթ միաբանից մերոց, այլ և այլ գրութեամբ լցեալ են ի Պօլիս։

Գրեմ քեզ պարզապէս. ես օրինաւոր ժառանգ եմ սրբոյ Աթոռոյն ի Սիմէոն կաթուղիկոսի գրութեանցն և ի այժմոյս հանգուցելոյն և ի հաճութեան միաբանիցդ երեւելեաց և ի հաստատութեան չորից հրովարտակացն կայսերական մեծութեան. զօտար ոք ոչ ճանաչեմ և զհաբսն իմ ոչ օտարացուցանեմ յինէն և ոչ տամ տեղի սեխեղի և պոռնկի. պատրիարք Դանիէլ վարդապետին՝ շատ է Պօլիս և պատրիարքական անունն. արծաթով ընտրեալն խոտեալ է ի հոգւոյն սրբոյ և ոչ կարէ մտանել յԱթոռն սուրբ և այն չար օրինակն թողուլ յետնոցն. որպէս Մելքիսեթ կաթողիկոսն. իսկ այլք ամենեքեանքն ոչ ունին զիրաւունս մտանելոյ ի յայս աստիճան։

Վասնորոյ փափակելով իմ, շուտով շիջուցանել զհուրս այս, ծանուցանեմ քեզ. նախ՝ Նորին Կայսերական մեծութիւնն ամենողորմած թագաւորն սուրհանդակ առաքեաց ի Պօլիս առ դեսպանն, ծանուցանել պատրիարքին և իշխանացն չհամարձակիլ զոք հանել յայն աստիճան և եթէ արարեալ իցեն յետս կոչել. իսկ ի դրանէն խնդրել, որպէս նախնի կաթուղիկոսացն. նոյնպէս և մերն ֆէրմէնսն առաւել լաւապէս տայցեն պատրաստել։ Վասն այսմ, ես աներկրայ եմ, ար . . . ինքն պատրիարքն եկեսցէ՝ ամօթով մնալոց է. վասն այսմ հրամայեմ քեզ, սուրբ զեղարդն թողուլ յայդր ի միում սանդուղոջ երկոտասան իշխանաց կնքով և դու փութալ ի սուրբ Աթոռն և տալ միաբանիցն գիտել, մի՛ լինել նախատինք ազգի, և ընդ սրբազան Մինաս արք եպիսկոպոս հօրն իմոյ և ներսային և ի յարտաքսային հարկաւորութեանցն մինչև մեր գալն, որպէս յունվարի 26-ին գրեալ եմ առ քեզ և առ Դաւիթ վարդապետն. և այս դիրս տացես կարգալ որոց հարկ իցէ. գրեցին և տեղդ առ Կավալենցկին. այլն ի եղբօրորդւոյս գիտասջիր. դի ահա պատրաստ տեսանես զմեզ ուղևորելոց. եթէ ընտրեալ ոք իցէ իբրև զահագին Սահակն՝ գագարեցուցանել ուրևից է։

Յովսէփ արքեպիսկոպոս

1800 մարտի 8, ի Պետրպօլք։

ՀԲ· Եփրեմ արքեպիսկոպոսի շրջաբերականը Յովսէփի ընտրութեան մասին [57].

Երկնահանգէտ ե աղենասարան մեծի ե սրբոյ Աթոռոյդ Էջմիածնի Աստուածերամ անդամոց արքեպիսկոպոսաց եպիսկոպոսաց վարդապետաց ե ամենայն անձանց ի նմա կրօնաւորելոց հարց ի յԱստուածաճեմ կայսերութեան ռուսաց երկրի բնակեալ ընդհանուր ի հոգեորականաց ե յաշխարհականաց, ի վարդապետաց քահանայից, ղենարալաց, գնդապետաց և յամենայն աստիճանաւոր... կայսերականաց... Ազնուաց վաճառականաց, արհեստաւորաց, ե յամենայն ազգ կացութեան եղելոց անձանց համահաճական ընարութիւն։

Ամենաբարձրեալ արարիչն որ կարգէ և կառավարէ զամենայն էակս ընդհանուր անփոփոխ տնօրինութեամբ, ըստ բարեհաճ կամաց իւրոց, լնու զամենեսեան վայելչութեամբ ե բարութեամբ կամեցաւ թէպէտ խոցոտել զմեզ ըստ Յոբայ բարձմամբ սրով մահուամբ զիւրաշնորհ կեանս ընդհանրական գլխոյն տանն Արամեան, երանաշնորհ կաթողիկոսին. քրիստոսեան սուրբ տաճարիդ և հարսի անախտ փեսայի, Հօրն հասարակաց երանելւոյն Ղուկասու... և ի կսկիծ ածելով զսիրտ մեր, զրդեաց ի յողբ արտասուս, որպէս երբեմն զԻսրայէլ վասն Ահարօնի, սակայն ըստ անշուշտ բարութեան իւրոյ և մարդասէր կամաց, որ միշտ հարկանելովն միով ձեռամբ, սպեղանէ միւսովն, ոչ յամեցաւ ապաքինել զցաւ սրտի մերոյ, և սրբելով զարտասուս ի ղիմաց, քաջալերեալ զյոյս մեր ի լաւ անդր յարուցանելովն արժանաւոր ժառանգ ե տեղակալ նմին, փոխանակելով բազմաշխատ հօր զսիրելի որդի Յ... կոչելով, զաստուածարեալ դէտն կողմանցս զբազմամեայ աշխատաւոր հայրս մեր, զսրբազան Յովսէփ յընդհանրական կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, ե ի փեսայութիւն անարատ հարսի իւրոյ սրբոյ Աթոռոյդ ակնարկելով, ի համակամ բաղձանս, ի հաճութիւնս ե ի ձայնս զանդորրութիւն նորին. ըստ որում ձայն բազմաց ձայն Աստուծոյ, որպէս սրբազան սիւնհոդոսիդ, նմանապէս ազգին և մանաւանդ տանն Վրաց, իրաւի յիշելով մեր թէպէտ զերանութեանցն Աստուծոյ արժանաւոր, հանգիցէ զբարւոք(*) տնտեսութեան առ ազգն և զամենախոհեմ կառավարութիւնն առ սուրբ գահդ և զխնամաշատ հայրութիւն առ մեզ. ցաւիմք և մորմոքիմք զի զրկեցաք, բայց կարեմք առնել թէ ընդդէմ բնութեան ե թէ արարչին. Նա որ կոչէ զամենայն աշխատեալս և բեռնաւորս առ ի հանգուցանել, կոչեաց զսրբասնեալ հոգի նորին առ ինքն և ժառանգորդ արարեալ վերնոյն Երուսաղէմի, ղասակցեաց երանելի հայրապետաց ես և զտրտմակիր սիրտ մեր ամենից մխիթարեաց սուրբ հոգւովն իւրով։ Արդ ըստ պարտաւորութեան մերոյ գրելով ձեզ թուղթ համահաճական որպէս մխիթարեմք զսիրտ մեր վասն փոխեցելոյն, նոյնպէս և շնորհաւորեմք զնորոգ կոչեցեալն, տացէ ամենագթած արարիչն, զի յաւուրս սորա ես քան զես բերցի սուրբ տունդ ի պայծառութիւն, և դուք եղբայրակիցքդ ի Տէր ի հանգստութիւն և ազգն յերջանկութիւն, զոր Տէր հաստատեսցէ երկար ամանակաւ ի սրբասնեալ գահոյի իւրում և բարեբաղդ երջանկացուսցէ զինքն. և ղյանձնեալս յինքեան զբանաւոր հօտ իւր հովուել ըստ հաճոյից սուրբ կամաց իւրոց յաստի կեանս և ի հանդերձեալն, աչալուրջ կալ առաջի Քրիստոսի նորա ե ասել ահա ես ե մանկունք իմ, զորս ետ ինձ Աստուած, յորում տուողին ամենայն բարեաց փառք և պատիւ և գոհութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն. գրեցաւ յամի տեառն 1800 մարտի 16 ի կայսերական քաղաքս ի Սանկտ Պետրբուրխ։

Դեստուիտէլնի ըստացկի սովետնիկ
Յովհաննէս Աղասարեան Լազրեվ.

Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի նուիրակ ռուսաց երկրի և... Տեառն Յովսէփ արքեպիսկոպոսի...

Եփրեմ արքեպիսկոպոս։

ՀԹ. Թուղթ Յովսէփայ արքեպիսկոպոսի առ Դանիէլ պատրիարք.

Երջանկազարդ եղբօրդ իմոյ տեառնդ Դանիէլի սրբազան արքեպիսկոպոսի, աստուածաբան վարդապետի պատրիարքի մեծիդ Պօլսոյ, նաեւ բարեպաշտ եւ պայծառածին իշխանաց եւ Ամիրայից ազգի մերում, ողջոյն եւ օրհնութիւն ցանկամ.

Յառաջին գրեցելովքս, նաև ի փետր. մուտն թղթովքս ամենայն ինչ յայտնի լեալ է ձեզ, և յուսամ զի և դուք ըստ այնըմ իցէք համաձայնեալ ընդհանուր գըլխոյն, այսինքն՝ բաղձանացն հոգելոյս հայրապետին. զի սրբազան Եփրեմ արքեպիսկոպոս եղբայրն իմ, ի սեպտ. 19 գրեալ է մեզ թէ՝ սրբազան Հայրապետն մեր կայ ի յետին հիւանդութեան. կամքն նորա և բոլոր միաբանիցն առ քեզ է և դու ես ակընկալութիւն մեր ամենեցուն, յետ մահու նորա լինել տէր Աթոռոյն և հայր հասարակաց ազգի մերում. ևս ի յունվ. 5 դրեալ է մեզ զայսպիսիս, նոյնպէս և Դաւիթ արքեպիսկոպոս ի նոյեմ. 2, գրէ մեզ, որ ակընկալութիւն Իսրայէլի դու միայն ես և ոչ այլ ոք, ըստ այս և դեղարդակիր Յովհաննէս արքեպիսկոպոսն գրէ մեզ ի հոկտ 10 և 20, ուստի և մեք անկասկած լեալ յայսմանէ, զի և Վրաց Արքայն և երկիր իւր համաձայն գտաք յամս երկուս, որք զմեզ յորդորէին յանձն առնուլ զլուծ տնտեսութեան սրբոյ Աթոռոյն և Ազգին, ուստի և իմ հաւատ ընծայեալ բազմութեան գրողացն և առ իս աղաղակողացն, տեսանելով իմ որ ըստ ճշմարտութեան, ըստ հնութեան, ըստ աշխատանաց ես իմ է այն ժառանգութիւն, լքի թողի զամենայն աստ եղեալ պատիւս և զփառս իմ և զհանգստութիւնս, տեղի ետու բանից նոցա. այց առնել լուսոյ մօրն իմոյ և համօրէն ազգի, ծանուցաք ամենաողորմած թագաւորին մերոյ և կայսեր զբարձրագոյն հրամանաւ, գրեցաք առ մեզ, պահելով զսովորութիւն հանուրց ազգին և զպատիւ ձերդ սրբազնութեան և իշխանացդ յարգութեան, ուստի և ձեզ գրեցի զկամս իմ յառաջևյետ, որպէս զի և ձեր իմացեալ զօրինաւոր ժառանգութիւնն մեր և զընտրութիւնն, միացուսջիք և զձերդ ձայն. զի մի մացեն յանարատ կոչումն մեր զարատ ինչ և զաղտեղութիւն ի . . . ազգին, ի վնաս սրբոյ Աթոռոյն և ի յարհամարհումն հրամանաց վեհաղունից. Իսկ այժմ լսեմ, որ զկնի վախճանի հոգելոյս հայրապետին, թէպէտ միաբանքն յառաքեալ սինոդոսին զմեզ միայն են կամեցեալ, իսկ յերկրորդումն զայլ և այլ սնոտի պատճառս յառաջ բերեալ, ի տեղի մեր զայլս են ընտրեալ և ձեզ գրեալ, առ ի յարուցանել դշփոթ մեծ և դհուր անշիջանելի. Զոր լսելով և նորին կայսերական մեծութեան յատուկ սուրհանդակս առաքեաց յայդր առ դեսպանն իւրոյ մեծութեան առ գերազանցագոյն Վասիլ Ստեփանիչ Թամարովն, որպէս զի՝ զբարձրագոյն բարեհաճութիւնս իւրոյ մեծութեանն յայտնեսցեն ձեզ և ամենափառաւոր դրանն Օսմանցւոց, որ ամենեքեանքդ հաճեսջիք առ ընտրութիւն իմ, որ ունիմ ի ձեռին՝ զհաւանութիւն լուսահոգի հայրապետին և երևելի միաբանիցն և հրաւիրականացն առ իս ունիմ, այս է Եփրեմ արքեպիսկոպոսն, և զբարձրագոյն կամեցողութիւնս նորին մեծութեան, զհաւանութիւն և զմահսար Վրաց, աշխարհին Ռուստաց, և ընդդէմ այսմ, ոչ ես կարելի զոք առնել ձեզ ինձ հայր և տէր. Սրբազան Դանիէլ Պատրիարքն տեղդ լինելն և մեր անդ՝ շինութիւն և հաստատութիւն է սրբոյ գահին, եթէ ջերմեռանդ էք առ այն սուրբ տունն և ազգն. իսկ այլք՝ ոչ ունին երբէք զիրաւունս յառաջ մատչիլ ընդդէմ մեզ և դուք ոչ ունիք դիրաւունս զնոսա յառաջ կացուցանել և առնել գլուխ ազգին, մինչ ես ի կայսերէ, ի թագաւորէ, ի հոգելոյս Հայրապետէ և յերևելի միաբանիցն ընտրեցեալ եմ և յատկացեալ առ անտեսութիւն տանն Աստուծոյ.

Գրեցին և ի Թիֆլիզ առ Արքայն Վրաց և առ դեսպան Կավալենցկին, եթէ ընտրեալ ես ոք լինիցի ի ձէնջ ի տեղի մեր՝ մի մուծանել ի սուրբ Աթոռն և մի համարձակել օծանել, որ կաթողիկոս լինել ոչ կարէ ընդդէմ բարձրագոյն բարեհաճութեանն. Վասնորոյ և հարկադրեալ եղէ գրել առ եղբայրդ իմ և առ իշխանսդ, գիտել և ոչ առնել

ընդդէմ օրինի և ընդդէմ նորին մեծութեանն. զի եթէ արհամարհիցէք զմերս զրութիւն և զբարձրագոյն հրամանն՝ թէ ինչ անաւ ծնանիցի, ես անպարտ անձն իմ անտի կացուցանեմ. և խղճամ ազգի իմոյ ապերախտութեանն, որք ոչ ճանաչեցին զիս և զվաստակս իմ ի վերայ հանուրց ազգին, հաւատոյն և եկեղեցւոյն, զորս ոչ երկարեմ. փափագեալ իմ շուտով անցուցանել զհուրն՝ որ ունի ծնանել աստի՝ առաքեմ առ ձեզ զհարազատն իմ զԿարապետ վարդապետն՝ զամենայն ինչ խաղաղական հոգւով յառաջադրել ձեզ. զի և դուք համաձայնեալ ընդ ճշմարիտ և օրինաւոր ընտրութիւն իմ, որպէս սեպհական ժառանգ սուրբ Աթոռոյն, և առ վեհագոյն հրաման, որպէս զի ազգային խաղաղութիւնն և թագաւորական պատիւն ի կարգէ մնասցէ և սուրբ Աթոռն մեր՝ նորոգեսցէ զնմանութիւն իւր որպէս զարծուի և տեսցէ զայն, որում երկայն ժամանակաւ փափագի ազգն իմ ընդ միաբանիցն տեսանել զայն ամենայն, որում ըղձան՝ զի զանձն իմ պատրաստեալ եմ զոհ առնել ի վերայ ազգին և Աթոռոյն, և զԱթոռն լուսաւորել իմաստութեամբ, գիտութեամբ և ամենայն կերպ բարեկարգութեամբ. որ եթէ համաձայն դտանիցիք ինձ և զձերդ համբուրելի խաղաղութիւնն, սէրն, համաձայնութիւն և միաւորութիւնն ընդ Կարապետ վարդապետ հարազատին իմոյ և կամ Դաւիթ արքեպիսկոպոսին որ եկեալ է յայդր՝ առ իս առաքեսջիք, իմացէք թէ զԱթոռն զայն նոր շինէք, մուծանելով ի նմա ի ցեղէ Լուսաւորչին ձերոյ սրբոյ Դրիգորի, յորմէ եմք մեք. զոր ողորմութեան Թագաւորն ես հաւաստեալ ի զանազան պատմագրաց և ի գրութենէ Արքային վրաց, նորոգեացզցեղն իմ և զտոհմակից կնքով Աստուածատիպ մատամբն հաստատել։

Իսկ եթէ ոչ լուիցէք ինձ՝ լուարուք. ում և ընտրէք, կաթուղիկոս լինել ոչ կարէ և ոչ իշխել ի վերայ կողմանցս. այլ խղճալի է յոյժ տեսանել զայն աղէտալի տեսարան, զոր տէր մի՛ ցուցցէ մեզ։

Եւ եթէ ընտրեալ ես իցէք և առաքեալ, ես սուրբ և մաքուր հոգւով յառաջադրեմ ձեզ, դադարեցուցանել ուր և իցէ ընտրեալն այն՝ որպէս զահագին Սահակն. յաղագս հասարակացն խաղաղութեան և Աթոռոյն հաստատութեան և կատարման բարձրագոյն հրամանին։ Արդ դիտելով ձեր զամենայն հանգամանս բանից այսոցիկ՝ ես յուսով եմ, որ դուք հարազատ բարեկամութեամբ և որդիական ջերմեռանդութեամբ պարտաւորիցէք զիս, առաւել գրկել զձեզ սիրով, այնու որ դուք, անդր քան զյառաջնոյն տայցէք պատրաստել վասն իմ զփերմէն ամենափառաւոր դրանէն ի շահ և ի յօգուտ սուրբ Աթոռոյն և ի բարձրութիւն անուան ձերոյ. առ այս օգնելոց է ձեզ և մեծ դեսպանն Ռուստաց, որքան ինչ թուղթք վասն այսմ նիւթոյ գրեալ եմ առ լուսահոգի Զաքարիա պատրիարքն և առ իշխանսն, ևս առ Դանիէլ պատրիարքն և առ ի մէնջ ընտրեալ վէքիլն իմ և հարազատ տիրացու Մանասէն, ըստ պատահման հարկին մատուցանել ձեզ. ի հարկէ նա մատուցեալ լինի. ի յոյս զտանել կարէք զազգասիրութեան պարզ հոգին իմ, պահպանումն պատուոյն ձերոյ և զխաղաղութիւն հանուրց ազգին. զի եթէ ես անձնասէր ոք լինիցէի, ոչ թողուի աստ զհանգստութիւնս իմ և զփառս, զորդ ունիմ ի մեծ և ի բարեպաշտ կայսերէ, որպէս և լուեալ էք և գիտէք, այլ զամենայն կամաւ թողի, լինել ծառայ ազգին և Աթոռոյն, վայելել զանհանգստութիւն և զվրդովալի կասկածալի կեանըս ի պատիւ և ի շահ Ազգին և սուրբ ծնողին իմոյ, կենցաղավարելով ընդ բարբարոս ազգաց, այլ յորժամ ձերդ սէր որդիական լինիցի առ իս, այն ամենայն գըրկեմ որպէս բաժակ պատրաստեալ վասն իմ ի Տեառնէ Աստուծոյ։ Ես այժմ առաքեմ առ ձեզ՝ զօրինակ համահաճական թղթոյն զոր երկիրս այս առաքեաց ի սուրբ Աթոռն, որպէս և Վրաց աշխարհն էր առաքել, թերևս ձեզ յայտնի իցէ։ Սոյն ճշմարիտ յուսով քրիստոնէականաւ, սպասեմ համաձայնութեան սրբազան Պատրիարք եղբօրդ իմոյ և պայծառ իշխանացդ և համօրէն ազգին. որով և մնամ վասն ձեր միշտ աղօթարար

Խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս
աւելածու սրբոյ Աթոռոյն էջմիածնի
1800 մարտի 23
ի կայսերական քաղաքն
ի Սանկթ Պետրբուրգ.

Չ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Յովհաննէս Եղիազարեանին.

Գերազանցութիւն ձեր
Ողորմած Տէր իմ.
Աղայ Յովհաննէս Եղիազարեան.

Ընկալեալ ի Ջերմէ գերազանցութենէ յանցեալ 1799-րդ ամի հոկտ. ընդ խնդրոյ ձերոյ՝ զարարեալ կարգաւորութիւն ձեր, որ վասն երկուց եկեղեցեացս հայոց ի Սանկթ Պետրբուրգ սրբուհւոյն Կատարինէի և սուրբ Յարութեան՝ կառուցելոց ի ձէնջ սեպհական արդեամբ ձերով, և շինուածոցն զորս շինեալ էք շուրջ զեկեղեցւով սրբուհւոյն Կատարինէի, և ծանուցեալ զնոյն խընդիր ձեր՝ զի ըստ պարտաւորութեան կոչման իմոյ՝ զնոյն կարգաւորութիւնն ձեր հաստատեցից թեալ անխափան առ ապա՝ ձեռագրութեամբ իմով. ոչ յամեցայ յարգել զիրաւացի խնդիրդ՝ բարի համարելով զնոյն կարգաւորութիւն, և հաստատելով զնոյն ձեռագրութեամբ իմով, գրեցի և հրաման ի Հաշտարխանու հայոց հոգևոր կանցիստօրն, ուղևորելով զօրինակ որպէս կարգաւորութեան թղթոյդ, նոյնպէս և այս իմս առ ձեզ գրեցելոյ ի պատասխան խնդրոյդ որ նոյն կանցիստօրն մուծեալ զերկու օրինակն ևս ի գիր մատենից իւրոց՝ գրեսցէ առ ամենայն անձինս հոգևորականս յիշեալ եկեղեցեացն որ ի Սանկթպետերբուրգ, որպէս զի նոքա և որք զկնի նոցա՝ քահանայք և պաշտօնեայք եկեղեցականք՝ վարեսցին յամենայն հանդիպմունս ըստ ամենայնի համաձայն յիշեալ կարգաւորութեան ձերոյ։

Բայց զոր ինչ պատկանի առ իմս և առ ազգին հայոց ճշմարիտ երախտագէտ լինիլ առ գերազանցութիւն ձեր, սակս երախտեաց առ սուրբ եկեղեցին և անբաւ բարերարութեանց ձերոց առ ազգն, զորս ցուցեալ էք նախ քան զգալուստ իմ. ի յերկիրս Ռուսաց, և ներկայութեանց իմում, օգնական լինելով յամենայն հանդիպմունս բանիւ և արդեամբ՝ ձեռնտու եղեալ նոցա վասն օգտի և բարեաց. զոչ այլ ինչ ունիմ. առ այս ասել, եթէ ոչ՝ գովաբանելով զայսպիսի սրբասնեալ ջերմեռանդութիւն ձեր առ սուրբ եկեղեցին, և զանհամեմատ սէր ձեր և բաբեբարութիւն առ ազգն, զորս առատօրէն վայելեցաք մեք՝ եկեղեցիք մեր և ազգն բոլոր, շնորհակալել ի դիմաց իմոց և բոլոր հօտին իմոյ, որպէս վկայելով զբարեգործութեանց ձերոց, նոյնպէս և յայտնելով զմեզ զերախտագէտս առ գերազանցութիւն ձեր։

Մաղթելով յամենաբարձրելոյն Աստուծոյ վարձատրել զձեզ ամենառատ շնորհիւ իւրով և անսպառելի ողորմութեամբ, ունիմ. պատիւ յարամնալ միշտ կատարեալ վերապատուութեամբ և հպատակութեամբ,

Գերազանցութեան ձերոյ՝ ողորմած Տեառն իմոյ ջերմեռանդագոյն աղօթարար և խոնարհագոյն ծառայ՝

Յովսէփ արքեպիսկոպոս

Ռուսաց երկրի Հայոց ազգին՝ իշխան Երկայնաբազուկ Արղութեան և կավալեր։

Ի մարտի 30 1800 ամին
ի Սանկթ-Պետրբուրգ։

ՉԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Կարապետ վարդապետին.

Սիրելի որդի Կարապետ վարդապետ.

Ահա Կայսերական Բարձրագոյն բաշպօրթն առ քեզ ուղևորեմք, փութով գնալ ի Պօլիս օր մի յառաջ ծովով և կամ ցամաքով։ Թամարով դեսպանին բաւական ես գրեալ եմ. վասն քո, և ունի կայսերական հրովարտակ վասն մեր՝ որ ոչ ոք շարժիցի ի յախտակրութենէ ընդդէմ. օրինաւոր ժառանգութեան մերոյ...։ Պատրիարքն ոչ ունի իրաւունս յառաջանալ ինձ և լինել հրամանատու, եթէ ամ. մի պատրիարք եղև՝ որ տակաւին Ազգին, Հաւատոյն և Եկեղեցւոյն ոչինչ է արարեալ, այլ նոր պարտ առնել... Ազգն ևս ոչ ունի իրաւունս զնա շարժել ի տեղւոջէն, թեթևացուցանել և ան-

պատիւ առնել յաշխարհի և ի տեղի նորա զայլ ոք կացուցանել, որպէս առնեն ոմանք ախտակիրք... այլ կատարումն ախտից իւրոց է շնորհելն զԴանիէլ պատրիարքն՝ և դնելն ի տեղի նորա իւր ընտրեալն արծաթով. ոչ ապաքէն խոտեցին այնոքիկ՝ որք ընտրեալ են արծաթով։ Պատրիարք եղբայրն իմ ըստ դրութեան քեռորդւոյն իմոյ Սիմոնին, որպէս թէ խարի ի սուտ բարեկամ ձեացեալ ախտակրէն. այլ մեղանչէ յանձն իւր և ի սուրբ Աթոռն։ Յամսոյս մուտն դրեալ եմ սրբազան պատրիարքին և երեւելի իշխանաց միրոց՝ վասն զքեզ առաքելոյն, որոց (արարի) զյանձնարարութիւն, զորս ամենայն անդ պատրաստ գտանես. Շնորհքին, Հովիւին, Գրիգոր Ռստակէսեանին, Գրիգոր Սախկազատէին, մահտեսի Գասպար Աղնաւուրեանին, ծերունի Սահակին. մահտեսի Ստեփան Եղիազարեանին, Պետրոս Մարտիրոսեանին, Գերջաննեց Կարապետին, Մանասէն, Գէորգ Աղայէկովին և մեր Անդրէասին... Սրբազան պատրիարքն պատիւ և փառք համարեսցէ ի ժամանակս իմ պատրիարք գոլն իւր՝ մեծի քաղաքիդ, և ցուսցէ առ իս զորդիական հպատակութիւն և զեղբայրական սէր... թէպէտ իմս իղձ էր ի վերայ Պօլսոյ անցանել, սակայն դիտեմ հաստատապէս ծանր լինի յոյժ և յամէ գնալն իմ ի սուրբ Աթոռն. (թէպէտ օգտութիւնք բազում յառաջանան անտի ս. Աթոռոյն և Ազգին), այս կախի զհաճութենէ իշխանացն և ազգին. .։

Սրբոյ Աթոռոյն
անուանեալ
կաթողիկոս

Յովսէփ արքեպիսկոպոս

1800 ապրիլ 12
ի Ս. Պետերբուրգ։

ԶԲ. Վասիլիյ Թամարայի թուղթը Սէրգէյ Լազրիչ Լաշկարովին [58].

Ողորմած Տէր իմ.

Առաջին գրութիւնն իմ, թուի թէ տրտմեցոյց զձեզ, զընիկ շնորհունակդ իմ. բայց ի ներկայս ուրախացուցանելոց է։ Մեր հասարակաց բարեկամ յարգելի Յովսէփ արքեպիսկոպոսն այոյ ընտրեալ լինելոց է և լինելոց պատրիարգ յէջմիածնի։

Հակառակորդ նորա, նոր ընտրեալ պատրիարգն անտի Դանիէլ նստաւ ի մէջ երկուց Աթոռոյն ի գետնի, և այժմ ողջունէ զձեզ ի Տենեգոսէ՝ ուր յաքսորս է ուղարկեցեալ։ Իսկ վասն միւս հակառակորդի Փափազ օղլու մահտեսի Սիմօնի՝ խոստացեալ է այլ կայան՝ եթէ ես ազմկեսցէ։ Ափսոսելի է ինձ նախանձաւորն մերս կողմանէ Գալուստն, որ ի պատճառէ մինչև ցայսօր անասելի աղմկաց յառաջացելոց Հայոց՝ յիւրոյ անզգուշութենէ մասին՝ վարեցեալ է ի Լիմնոս առ ժամանակ ինչ սուղ, սակայն եթէ հաճոյ թուիցի պատրիարգին Յովսէփայ, ըստ ինմանէ ընկալեալ յանձնարարութեանն ազատեալ լինելոց է։

Մնամ ըստ ներսին անփոփոխ հաւատարմութեամբ

Ձերոյ գերազանցութեանն խոնարհ ծառայ՝

Վասիլի Թամարով

ի Պէյիւկտերէ
16 մայիսի 1800.

ԶԳ. Յովսէփ կաթողիկոսի անդրանիկ կոնդակը Ղազար վարդապետին.

Ի Յովսէփայ կաթուղիկոսէ անդրանիկ օրհնութեամբ ծանիր սիրեցեալ որդի Ղազար վարդապետ։ Զամենայն որպէսն մեր գիտելոց ես ի մեծ կոնդակէն և ի Տէր-Յակոբէն. ահա զքեզ կացուցի վանահայր ս. Խաչ վանքին. որպէս յառաջ դու ես լեալ նորոգող նորին, վերջն ևս դու լինիցիս և մահ քո ի նմա լինիցի։ Այժմ հեշտ է վասն քոյ և արդիւնաւոր պատճառն՝ որ տեղերն

որքան որ չափեցեալ եղև մինչև յՕթուղու ճանապարհն՝ անապատն ես ի մէջ նորա, մեր է և պարտին նոր չափել և պլանն տալ քեզ. և դու պարտիս՝ գիւմրուկն տալ՝ որքան և օրէնքն կարգեալ իցէ, և ապա ըստ կարգին տիրութիւն արասցես և պահպանեսցես վասն վանիցն բարւոք պահպանութեամբ, զի վայելողն դու ես որդի, այլ զգուշութեամբ որ ջանկալն (°) չաւիրեն։ Ծախու առնողին՝ հեռի տեղն տռաքեսցես. որ անպիտան փայլքն ծախվին և ճանապարհքն միշտ բաց լինին։ Յանձնեմ քեզ և Սուդաղու այգին, որպէս մուլք վանիցդ. նոյնպէս և Կաֆայու սուրբ Աստուածածին վանքն ընկալցիս իւր հողովն ի քաղաքի հայոց մահլին մինչև Իսկէլէն. որպէս կայ նշանեալ ի պրվելէկին՝ հաստատեալ ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեանն. սոյնպէս և Հաջիխանն ընկալեալ, շինեսցես ամենայն օգայք Նորին ըստ կարգին յանուն իմ և քիրայով տացես։ Կարգ դնիցես և յաղագս սուրբ Գէորգին՝ զի վասն այն յատկացուցանել եառ ի պրվէլէկին, որ դուրսն է հայքն սակաւ են, մի գուցէ այլազգ քրիստոնեայք տիրեսցեն։

Ինչան հոգևոր օրհնութեան մերոյ՝ ահա առաքեցի քեզ՝ ի պատիւ վանիցն՝ զխաչ պարանոցի զի կրեալ ի պարանոցիդ պատուով լինիցիս յամենայն ուրեք՝ որպէս կարգն է Արխիմանդրտացն. և եթէ Գրիգոր վարդապետն մեր այժմ իցէ յայդր, զոր ինչ կարգ նա դիցէ վասն վանիցն և ժողովրդեանն՝ ընկալցիս որպէս ի յառաջնորդէ քումմէ։

Յովհաննէս վարդապետի ամենայն հաշիւն տեսեալ և զամենայն անօթս վանից ընկալեալ, զնա ուղևորեսցես ի Նախիջևան իւր սարկաւագաւն զի Կարապետ վարդապետն դնելոց եմ. նա Յռալոց է ի տան մերում, մինչև նոր առաջնորդի գալն։ Ահա քահանայապետական պատուէրս իմ գրեմ քեզ, պարտիս զնոսա ի հոգւոյ քում դրել և ըստ այնմ շարժիլ. Նախ մինչև ի մահդ որպէս միաբան սուրբ Էջմիածնի և սպասաւոր իմ, հարազատ լինիցիս մեզ միշտ և միշտ ջանասցես զսուրբ Աթոռն արդիւնաւորել յամենայն օրինաց որ հանդիպի։

Երկրորդ՝ զուԹ ունիցիս ի վերայ սըրբոյ վանիցդ և ջանասցես շինել և պայծառացուցանել յանուն մեր, ըստ որում ես եմ պատճառն շինութեան դորին, զի լինիցի մեզ վայելուչ։ Երկրորդ՝ (երրորդ) ջանասցես զմիաբանս ժողովել և սիրով պահել և կառավարել։

Չորրորդ՝ ով ոք իցէ առաջնորդ երկրիս, հնազանդ լինիցիս նմա՝ որպէս և մեզ. և երբ սուրբ Աթոռոյ Նուիրակ Եփրեմ արքեպիսկոպոսն եկեսցէ առ ձեզ, ըստ ամենայնի ծառայեսցես նմա, որպէս և մեզ և ջանասցես՝ զգործ Նորա արդիւնաւորել. զի դու ես միաբան իմ ես։

Հինգերորդ՝ ամենողորմած Թագաւորն, հաստատուն պրվէլէկաւ և իւր ձեռագրովն, ասկի Ղրիմ ԺԲ հազար դեսեթին հողով՝ մեզ և ազգիս մերոյ է տուեալ. որ ի Ղրիմ եղեալ տնաւորքն՝ եկեալ անդ բնակեալ շինեսցեն յատուկ քաղաք և Մաղիսթրաթ և հոգևոր կառավարութիւն. կամայ ակամայ՝ ամենեքեանքն գնալոց են անդ և դու յորդորող լինիցիս ամենեցուն՝ յօժարութեամբ գնալ և շինել. եթէ ոչ, բռնութեամբ տանելոց են անդ՝ ի կատարումն բարձրագոյն հրամանին. լսեմ որ Յովհաննէս Թամրազեանն՝ այսմ հակառակ է. ասասցես նմա զգուշ լինիլ. եթէ ոչ, ոչ միայն ի յաստիճանէն և ի տեղւոյն զրկի, այլ և իբրև զգիժ մանուկ Տրիջանովն, ի սիւք առաքի ամենայն համախոհիւքն իւրովք. և ասա չխառնիլ ի հոգևոր բանս և եպետնիկութիւն չառնել տգիտութեամբ, որպէս և լսեմ. եթէ ոչ՝ իբրև զչիք Վասակ՝ լիրբ Իւան Աբրահամիչն, ի հասարակութենէ ազգիս. արտաքսեալ լինելոց է անարգանօք. մի համարեսցէ թէ՝ ես յերկրի աստ չեմ. հրամանս աստ է. և ում գրեմ պատժելոց են զգա որպէս հակառակ բարձրագոյն հրամանին։ Կրկին գրեմ, ասա զգուշ լինել՝ չը կորնչիլ և զտեղն իւր չկորուսանել.

Զսա օրհնութեամբ և ազնիւ պարոն Յովհաննէս Ղարաղաշովին. զի լցուցանելով զբարձրագոյն հրաման՝ գնացեալ ի յասկի Ղրիմ, ըստ պատշաճին տանտեղ ընկալցի և սակաւ սակաւ շինեսցէ, որ այլք տեսեալ, նոքա ևս յօժարեսցեն. և եթէ ոչ, յորում ժամու և իցէ, զնա տանելոց են անդ բռնութեամբ և անպատուութեամբ։

Վեցերորդ՝ կաֆայեցիք ով ոք կամին, կարող են ի Կաֆայ բնակիլ և լինիլ օրինօքն ասկի Ղրիմու և անդ զխանութ և զմաղազայս շինել, որքան որ տեղ չափեն ի Կաֆայ. յետ այնորիկ՝ այլազգի տեղ չր տաս. ոչ տուն և ոչ խանութք և մաղազայք։

Եօթներորդ՝ զգուշ լինիցիս ի յարբեցութենէ և ի գինասիրութենէ, զի մի անպատիւ լինիցիս, զի ոչ վայել է քոյդ կոչմանն և կարգի. զքեզ այժմ այլ մարդ գիտացիր և ջանա զպատիւդ միշտ պահել։

Ութերորդ՝ սրբոյ Աթոռոյ Աթոռակալաց արդիւնքն միշտ հասցէ առ Նոսա, և դու քո վանքի գանձանակին և այլ արդիւնքն ընկալցիս, և ջանա զոր ինչ կանոն կայ վասն վանիցդ՝ պինդ պահել և պահել տալ ժողովրդեան. զծերունի Բարսեղ վարդապետն՝ շահեսցես որպէս զհայր քո տէր-Գրիգորն և միաբանք աւելացուսցես։ Այլն առաքեմ առ քեզ զքահանայապետական զօրհնութիւն մեր առ քեզ և առ քոյսդ։ Ամէն.

Յովսէփ Կաթուղիկոս

1800 յօգոստոսի
ի Նախիջևան.

Իմ եղբօր որդի քնեաղ Բարսղի անուամբն այգիք ունիմ առեալ. կուպչիքն՝ յանուն նորա են տեգդ է ընդ մեր թղթոցն. այն ջոկ՝ պահեսցես որ նորա է՝ շատ թէ քիչ ինչ արդիւնք լինի, պարտիս նմա հասուցանել, և զամենայն թուղթս վանից՝ լաւ պահել։



ԶԴ. Թուղթ երկրորդ առ Յովսէփ կաթուղիկոսն ի գործակալաց սրբոյ Աթոռոյս յիշումն յառաջ գրեալ թղթոյն հրաւիրանաց եւ ծանուցումն զմահուանէ Մինաս արք եպիսկոպոսին, եւ խնդիր ստիպաւ անյապաղ գալ ի սուրբ Աթոռս·

**** Տեառն Յովսէփայ սրբազնասուրբ կաթողիկոսի ի քաղցրահայեաց ակնարկութենէն Աստուծոյ ընտրեալ յառաջագոյն ճանաչմամբ և շնորհազարդեալ ամենաազնիւ քաջընտիր հովուապետի և յարարթուն դիտապետի նշանադրելոյ.... փեսայութիւն անարատ հարսին Քրիստոսի լուսանկար զահիս սրբոյ Էջմիածնի, Մեծախնամ Տեառն մերում և հօր հասարակաց Տեառն Յովսէփայ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց խոնարհաղէմ հպատակութեամբ և կաթոգին կարօտիւ օրհնածիր սրբոյ Աջոյ զհամբոյրս մատուցանելով՝ ծանուցանեմք զայս ինչ։*

Քանզի յետ ժամանելոյ առ միաբանութիւնս շնորհալի նամակի ձերոյ սրբութեան ի Հաշտարխան գրեցելոյ ի մետասաներորդ աւուր ամսոյս գրեցաք զթուղթ հրաւիրանաց և աղերսանաց առ ձերին մեծահանդէս վեհափառութիւն, զոր մինչ յուղարկեցաք յԵրևան հարկ եղև միզ ի հրաման իշխողին գնալ անդ, որք ի վերայ պատասխանեացն միրոյ՝ ընկալեալ և առ ի նմանէ զթուղթ և գրեալ մեր այլով նոր թղթով զպատմութիւն անցիցն համառօտակի ի վեշտասաներորդում աւուր ամսոյս դարձուցաք զթղթաբերսն յԵրեւանու առ ի Թիֆլիզ և մեք դարձաք առ սուրբ գահս, և այն ինչ ժամանեցաք այսր, զհոգևոր Հայրն մեր զՄինաս ծերունափայլ արք եպիսկոպոսն՝ զոր թողեալ էաք ի թեթև հիւանդութեան, գտաք յայնժամ ի տագնապի ծանրագոյն ցաւոց. որում մինչ պատմեցաք զիջումն կամաց իշխողին, ի կամս մեր, կարի իմն զիւրասիրտ եղև։ Բայց զի կամք եղեն անմահ Արքային կոչել զնա յանցաւոր կենացս, օր քան զօր առաւելաւ հիւանդութիւն և ինքն երանելին ես իբրև իմացաւ զհրաւէր մահուն, պատրաստեցաւ

խոստովանութեամբ և հաղորդութեամբ։ Եւ յամսոյս ԻԲ ի չորրորդ ժամու ցերեկին աւանդեաց զսրբասնեալ զիւր հոգին առ Աստուած։ Արդ՝ Տէր մեր սրբազան զկնի վախճանման հողեւոյս Հայրապետին երկու պատուական ծերք էին ատանօր, ի սուրբ դահիս՝ աշխատաւոր և օգտախոհք և բարեջանք. առաջին սոյն այս յիշատակեալս, խոհական բանաւոր և իմաստուն վարդապետս։ Երկրորդն հաւատարիմ և ընտիր լուսարար Գրիգոր առաքինազարդ վարդապետն։ Յորոց երկուցունց պիտանեղոյն արանց՝ լուսարար արհին յառաջ քան զգալ պարսկական հինին մեռաւ խաղաղութեամբ և թաղեցաւ փառաւորապէս, որոյ զրէթէ դիւրագոյն մահն, ցանկալի էր կենդանեացս քան զթըշուառալից կեանս մեր։ Իսկ Մինաս հոգեզգօն արք եպիսկոպոսն կրեալ և զդառնութիւն նեղութեանցն զիւածողով զօրուն և վշտացեալ յայնչափ հողս, յետոյ վախճանեցաւ, ըստ որում ծանուցաւ։ Եւ թէպէտ հանդիստ էր նմա ի վշտաց ծերութեան և աչաց վտանգին զերծանելն, սակայն մեք բոլոր միաբան, որ զնա փոխանորդ Հայրապետի ճանաչէաք և ի մեծութենէ ձիրմէ և ի կոստանդնուպօլսեցւոցն բազմակնքով կարգեցեալ տեղապահ ունէաք, որ ամենեցուն պատկառելի հրամանատու էր, և խորհրդականութեամբ նորին վարէաք, և խրատուքն մխիթարէաք. այսօր զրկեցեալ ի նմանէ ի մեծի թախծութեան կամք, տեսանելով զմարգարէական սպառնալիսն առ միգ վճարեալ, զբարձումն առն հզօրի, և զիմաստնոյն և զծերոյ, և զսքանչելի խորհրդականին։ Այլ հանրախնամն Աստուած՝ հանդուցիչն ննջեցելոց և պահպանիչն կենդանեաց լուսաւորեսցէ զհոգիս բարեյիշատակ յոգնավաստակ արք եպիսկոպոսացն, և զԱմենապատուական գլուխդ սրբոյ եկեղեցւոյ մերոյ յետ գլխոյն Քրիստոսի, ողջ պահեսցէ և ընդ երկայն աւուրս արասցէ ի պարծանս և ի մխիթարութիւն բազմավարան որդւոցս քոց և ծառայից։

Եւ արդ պարտական համարելով զայս ազգ առնելս սրբազան վեհապետիդ մերում, ի վերայ այսր մանաւանդ կարևոր իմանամք կրկնել և երրորդել զխնդիրն հասարակութեան մերոյ, այս է զանյապաղ գալուստն սրբութեանդ առ սուրբ Աթոռս։ Քանզի այս Ժ ամիսք եղեն անտերունչ գոլոյ սրբոյ տանս և տարակուսեալ լինելոյ միաբանութեանս. և յորբութեանս մերում այն գլխաւոր աղէտք ևս ժամանեցին ի վերայ ի կենդանութեան ծերոց՝ յերեսս նոցա նայէաք, յետ նոցա ես պակասելոյն զինչ ունիմք առնել։ Թէպէտ և աշխատասիրեմք, թէպէտ և հոգամք, թէպէտև ջանամք վասն բարւոյն, սակայն ընդ առն և զօրութիւն իւր, զի՞նչ է կար զօրութեան մերոյ, և զի ի մէջ օձից և կարճաց բնակեալ եմք, ըստ բանի մարգարէին, և ժամանակս ժխորեալ ողութիւն ամենայն պիտոյից յարտաքուստ յումէքէ դանկ մի չէ մահալ ի սուրբ տունս, բաց ի յուխտաւորացն եկելոց և (նոքա ևս յայնպիսի աւուրս եկին որ ժամ. մի յառաջ ի բաց առնելն հոգայաք)։ Բայց զառտնին եղեալսն իբր թէ սպառեցին։ Ընդ այսոքիկ ծանիցէ Տէրութիւնդ և զայնոսիկ պակասութիւնսն որք ըստ հոգևորին. ի քանի վիճակս եպիսկոպոս ոչ գոյ. և ատանօր յարտաքուստ և ի ներքուստ սպասողքն շլացան դիտելով ի ճանապարհս կաթողիկոսի։ Այլ և Պօլսոյ նուիրակն ի մետաղս (*) և չորք վիճակք ես ի տէրութեան օսմանցւոց, ահա յերիս ամս առանց նուիրակի են, որոց կոնդակքն գրեցեալ հոգեւոյս սըրբազանն ձեռնհաս չեղև առաքել։ Սրբալոյս Մեռոնն ևս նուազեալ է մերձ ի սպառումն, ուստի նախահոգութեամբ լուսահոգի Հայրապետին նիւթն պատրաստեցաւ ձեռամբ մերով, և այնպէս կնքեալ պահպանի։ Արդ այսոքիկ պակասութիւնք հարկաւորք կարօտին հզօր բազկի, բարձր սրբազնութեան ձերոյ, առ լցումն։ Վասն որոյ աղաչեմք զՎեհափառութիւն Ձեր մի ևս ամենևին յետաձգել այլ փութացուցանել զբարիոք գալուստն շքեղաշուք փեսայիդ առ մաքուր հարսն քո սգացեալ որ զբաղձանսն իւր առ երագութիւն ընթացիցդ ցուցանելով կոչէ տարփմամբ սիրոյ դարձի եղբօր որդի իմ, և նմանեաց այծեմանց կամ. որթուց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց, եկ և բարձ զախբութիւն այրիութեան իմոյ և որբութեան մանկանց իմոց։ Եւ մի զուցէ յետոյ բարձրաձայն աղաղակեսցէ, թէ խնդրեցի զնա և ոչ գտի, կոչեցի և ոչ ետ ինձ զձայն։

Ապաքէն ըստ խոստմանն Տեառնդ, և ըստ խնդրոյ ծառայիցս կամաց և ջանա երագել ի գալ որպէս զի գոնէ ի դեկտեմբերի վերջին աւուրսն աստանօր գտանիցես, և զբաղում հոգալիս սրբոյ տան (որ չէ արձանացուցանելի աստ) ի գլուխ հանցես, ապա տեսցուք թէ յապրիլէ և այնր զինչ նշանք երևեցին, որք թէ խաղաղութեան իցեն անխռով վայելեսցուք, իսկ թէ խռովութեան իցեն մի անպատրաստ գտանիցեմք. ամէն ասեմք զի յայնժամ անգլխութիւն մեր և անպատրաստ լինելն ածելոց է զվախճան շինութեան սրբոյ Աթոռոյս, զոր մի արասցէ Տէր։ Զներկայական կացութենէ նուաստիցս այսպէս գիտել լիցի գորովագութ հայրութեանդ, զի ի դարձէ երկրականացս ի վտանգութենէ իւրեանց, մինչև ցարդ ես խառնակութիւնն և շփոթութն սոցա ոչ դադարեաց, զի ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց, այլ ամենայն ջանիւ ջան գործածեալ զմնացորդ որայսն ցորենոյ ժողովեցաք ցԴԾ սոմար որ սերմանելոյ ես չէ բաւական։ Գնեցաք և գնեմք մինչև ցՌ սոմար գարի և ցորեն, և ի յօրհնեալ երկիրն Ղարսայ ժողովարար առաքեցաք կոնդակաւ հասարակութեան. ակնունիմք թէ օգնութիւն լինիցի. և զայլ պիտոյս ձմրան ես պատրաստեմք, և զամենայն հոգալիսն տեսանեմք։ Զաւանգս ինչ զորս ի մեծի վրդովմանն տարեալ էին ի սրբոյ Աթոռոյս ի բեղն ամբողջ դարձուցին առ մեզ։ Տէրութիւն ձեր ապահով մտօք եկեսջիք և մի յամեսջիք. ա՛ննագէտ սպասեմք աւետաւոր գրոյդ և ուրախաբար գալստեանդ։ Ողջ լեր ամենայն խաղաղութեամբ և փառաւորութեամբ ի մխիթարութիւն որդւոցս քոց և ծառայից իբր գործակալաց սրբոյ գահիս ստորակնքողացս։ Գրեցաւ յամի կենարարին 1800. և ի հոկտեմբերի ԼԱ ի սուրբ Էջմիածին։

ՁԵ. Կոնդակ Յովսէփ կաթուղիկոսի առ Դաւիթ եպիսկոպոս.

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովսէփ կաթուղիկոս և ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելականի եկեղեցւոյն Քրիստոսի, նաև լուսակերտի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։

*Յորմէ բազմաւ սիրով Տեառնաւանդ ողջունիւ և անդրանիկ օրհնութեամբ ծանիր, սիրեցեալդ իմ հարազատ Դաւիթ բազմաշխատ վարդապետ, և յոգնահանճար արքեպիսկոպոս։ Զի գրեանքն քոյ՝ զորս ի Պօլսոյ գրեալ էիր, զերկուսն ի յունիսի քսան և ութն, և զմինն ի յուլիսին, սակս յիշատակեցման անուան մերոյ՝ և քոյդ իջանելոյ ի ճանապարհ զամենայն ի միասին ընկալայ ի սեպտեմբերի 12, ի յԱժդարխան, ի դառնալն իմ ի Նորոյն Նախիջեանու, առ ուր դիմեալ է ի Մոսկովու, ըստ մեծահաւատ ջերմեռանդական խնդրոյ և թախանձանաց հասարակութեան նոցա, առ ի շնորհել զմերս Քահանայապետական օրհնութիւն։ Ընկալայ և ըստ քոյդ գրեանց զբարձրագոյն ֆէրմանի զատտի շէրիֆի օրինակն հզօր թագաւորութեան Օսմանցւոց, ընդ հայերէն թարգմանութեան իւրոյ. և զի որովհետև ամենայն թուղթքն ձեր և պատրիարքին Պօլսոյ, և իշխանացն և այլոց բազմաց, ընդ սիւրէթի * ֆարմանի, ի Սանկտ Պետերբուրգ առաքեալ էր դեսպանն, ուստի ի Ռուսաց բարբառ անդ թարգմանեալ զգիրս պատրիարքին, քոյ, և ամենայն իշխանացն ես զզատի շէրիֆն. և այնպէս ցուցեալ էին ողորմած կայսերն մեծի, և ապա զամենայն ի միասին կնքեալ և զհայեվար թարգմանութիւն ֆէրմանի ընդ նոսին առաքեալ էին առ մեզ, (զորոյ օրինակս առաքեցի ի Թիֆլիզ), զորս ընկալեալ մեր ուրախացաք, և զմիտ բերածն կատարելապէս դիտացեալ միամտեցաք, և մի ըստ միոջէ զգրութիւնսն քոյ ընթերցեալ Տնօրինողին ամենայնի փառս և գոհութիւն վերառաքեցաք, որ զընդհանուր զԱզգս մեր զտարացրուեալս աստ և*

* Պատճէն հրովարտակի.

անդ՝ այսպէս միաշունչ և միահոգիս կազմեաց. մինչ զի յաւուր Պայծառակերպութեան Տեառն որպէս ի մեծն Պօլիս, նոյնպէս և ի Մօսկով ի ներկայութեան մերում մեծաւ հանդիսիւ, և ի Նոր Նախիջևան, ի Գրիգորուպօլ և յայլ քաղաքս, անուան մեր ընդհանուր Ազգիս Հայոց քահանայապետական կոչման սկիզբն եղև, որպէս թէ կանուխ ժամանակաւ խորհրդեամբ ձայնից էին տուեալ միմեանց։

Նոր պատրիարգն Մեծին Պօլսոյ երկիցս է գրեալ առ մեզ գիր, և զիւր խոր խոնարհութիւն և զորդիական հնազանդութիւնն այնու ցուցեալ առ մեզ կատարեալ խոստմամբ, ունիլ առ մեզ յարաժամ հաւատարմութիւն և զհրամանակատարութիւն մինչև ցմահ իւր. և խնդրեալ էր ի մէնջ շնորհել զկոնդակ վերահաստատութեան պատրիարքութեան իւրոյ. ուստի գրեցաք առ նա և առ ամենայն իշխանս զպատասխանին թղթոց իւրեանց և առ հասարակութիւնն զկոնդակ անդրանիկ օրհնութեան, ըստ փափագանաց սրտից իւրեանց, որք որպէս հարազատ որդիք կարօտք հայրական գրոյ և օրհնութեան մերոյ՝ ըղձանօք խնդրէին. և գրեցաք ի սմին զհամեզ խրատս և զփրկաւէտ պատուէրս առ ամենայն մարդկեղէն կացութիւնս, ընդ որում ես շնորհեցաք զվերահաստատութիւն պատրիարքութեանն և խրատս օգտակարս առ լցուցումն պարտաւորութեան իւրոյ, որ և յուսամ թէ ամենայն ժողովրդականացն դասք գրաւական մխիթարութիւն այնու ունիցին, զի ի բովանդակ յանցեալ կաթողիկոսացն մերոց հաւաստի դիտեմք որ նոյն գունակ կոնդակ քաղցր և ախորժ հայրական խրատուց և մխիթարութեան սրտի ընկալեալ չեն. և խոստացեալ եմ զլին և զպատարուն ի սուրբ Աթոռոյդ գրել, յետ ընկալման օծմամբ զշնորհս սուրբ Հոգւոյն ի գլուխ մեր։

Զոր ինչ սակս Դանիէլ վարդապետին հարկաւորն էր՝ հայրական գթով յայցելեալ գրելոյ, զլիովինն գրեցի պատրիարքին և իշխանացն. զի և նա իմ է. կամիմ ես զամենեսեան ի գոգ խնամոց հայրական սիրոյս ժողովել. և ամենեցուն զհանգստութիւն և զանդորրութիւն պարգևել, զի զչափ առցեն հեզութեան և քաղցրութեան սրտի իմոյ, և այնու ի բարելաւութիւն անդր յառաջնոց լինիցին ամփոփինք սրտի՝ ըստ Հոգւոյն կոչման Հօրն իւրեանց, մխիթարութիւն համայն ազգիս Հայոց և պարծանք Մօրն լուսոյ սուրբ Աթոռոյն Միածնաիջի։

Քոյդ ամենայն թղթոց զպատասխանին զօրս գրեալ եմ առ Քեզ՝ յուսամ թէ ընկալեալ իցես զի պատրիարքն և պարոն Գէորգն (Ադայէկեան) գրեալ էին մեզ յՕգոստոսի 15, թէ զամենայն յղեալ են առ քեզ յՒզնիմիդ, որովք ի հարկէ գիտացեալ ես զամենայն միտս իմ։ Ես թէպէտ զբարձրագոյն պէրաթի զօրինակն ի դրանէ հզօր թագաւորութեանն Օսմանցւոց ընկալայ շնորհակալութեամբ, բայց տակաւին սպասեմ Օգոստափառ կայսերական մեծութեան բարեհաճական հրովարտակին վասն ծայրագոյն պատրիարքութեան, և ընդհանուր ազգիս Հայոց կաթուղիկոսութեան մերոյ՝ զոր պատրաստեալ են, յուսամ յայս քանի օրս՝ կատարելապէս ընկալնուլ ընդ այլ կայսեբավայել տրոց և յատկական պարգևաց, և այնպէս փութով ելեալ ի ճանապարհ, ժամանել առ անձկալի Մայրն իմ սուրբ Աթոռդ տիրակառոյց, և ընկալնուլ միահանգոյն ի սէր և ի գթութիւն իմ զամենայն զմիաբանս՝ որք սպասեալ ակնկալեն գալստեան մերոյ։ Քանզի զամենայն զծանրութիւնս իմ առաքեալ եմ ի Մօզդոք և զեղբօրորդին իմ խնդրեալ՝ որ ընդ հարապետ և Աբբահամ վարդապետացն մերոց զամենայն ինչ անցուսցեն ի Կովկաս, և մինչև ցմեր ժամանել ի Թիֆլիզ, սոքա յառաջասցին ի սուրբ Գահդ՝ որ մեզ ճանապարհական ինչ խոչ չլինիցին։ Իսկ (վ ա ս ն) մեր՝ կան պատրաստեալ զօրք կայսերական առ ի անցուցանել ընդ Կովկաս և անփաս հասուցանել ի սահմանս Վրաց։

Տառապեցուցանեն զհոգի իմ յիշատակութիւնք յափշտակութեան և աւերութեան անօրինաց՝ որք ի նորոյ հասուցին աշխաբհիդ, վանօրէիցն և սուրբ Աթոռոյդ, որոյ մտածութեան ցաւով հիւծիմ և մաշիմ յամենայն կիտոջ, և տքնիմ զհնարս բուժեցման գտանել, որոյ վասն՝ որպէս առ Շահն և առ Հաճի Իպրահիմ խանն, զոր

ինչ հարկն էր գրեցի, նոյնպէս և առ Տիրապահ դուռնն Օգոստափառ կայսերական Մեծութեան զամենայն ինչ հասուցի· և զօգնութիւն տառապակրութեանս մերոյ խնդրեցի, որ յուսամ ոչ մնալ ապարդիւն։ Զայս գիր՝ և Տեղապահին իմոյ Մինաս արքեպիսկոպոսին ծերունազարդի տացես ընթեռնուլ, զի սրտադիւր լինիցի ի նեղսակրութեան իւրում մինչև ցգալն մեր։ Քանզի զամենայն զպատշաճաւոր կառավարութիւնս սուրբ Աթոռոյդ և համայն միաբանիցն, նորին խոհեմ խորհրդոցն եմ յանձնեալ· որոյ լինիցիք ամենեքեան՝ օրինաւոր հրամանացն լսօղ, և սուրբ Աթոռոյ բարեկարգութեանն պահպանօղ, և այնու Հօրն ձերոյ սրտի մխիթարութիւն պարգևօղ. որպէս և զայսմանէ ունիմ կրկին գրել առ ձեզ ի մօտոյ ի յղելս զՎարապետ և զԱբրահամ վարդապետս մեր։

Պայծառ իշխան Մելիք Աբրահամն ըստ հաւատարիմ որդիութեան իւրոյ դրեալ է առ մեզ զպատասխան գրութեանց մերոց, որոյ զՔահանայապետական զօրհնութիւնն մեր նուիրեմ։ Շնորհք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ քեզ և ընդ համայն միաբանսն սուրբ Աթոռոյդ, Ամէն։

Եթէ եկեալ իցես ի սուրբ գահն ցարդ՝ ունիս իշխանութիւն ի գործ մտանել ըստ զօրութեան գրոցն իմոց որ առ քեզ ի յունվարի 26։ Սաստել անզգաստիցն զգաստանալ, ի բաց թողլով զտղայական խաղս իւրեանց, որով բաւական խաղացին, և մինչև մեր գալն զներսնայինսն և զարտաքսայինսն ամենայն պահել ի զգաստութեան և ի պարկեշտ կացութեան, որ գտեալ զնոսա զգօնացեալս ի թմրութեանց, առիթ լինիցի ինձ ընդգրկել զնոսա հայրական գթով։ Գիտես որ գալդ յայդր և տեսանելն մեր զերեսս միմեանց՝ օգուտ սրբոյ Աթոռոյն առաջանայ, ուստի և դու լինիցիս միամիտ՝ որ զյատուկ սէր իմ վայելելոց ես որպէս յատկացեալ բարեկամ և որդի· ուրեմն դու այսուհետև կարող ես զամենեսեան ի կարգի պահել ընդ տեղապահին, որպէս բնիկ սերտ իմ և հարազատ սուրբ գահիդ։

Յովսէփ կաթուղիկոս

Պարոն Բարսեղ եղբօրդ օրհնութիւն տամ, որոյ ձեռագիրն ընկալեալ եմ ի Թիֆլիզու առ որ գրեալ էր, և ծանեայ զամենայն գրութիւն նորին, իսկ մինչ դու հարազատ իմ եղեր՝ այն ամենայն ի սնոտիս գրեալ լինի որպէս գործ խելագարաց, գիտես զպատճառն այնց ամենից, ըստ յառաջագոյն գրութեան իմում։

1801

22. Թուղթ ի Թօխաթ ի հասարակութենէ միաբանից սրբոյ Աթոռոյս առ Դանիէլ սրբազան արքեպիսկոպոսն, ընդունելութիւն եւ հրաւիրումն գալ ի կաթողիկոսութիւն սուրբ Աթոռոյս, մինչ Յովսէփ կաթողիկոս կոչեցեալն վախճանեալ էր ի Թիֆլիզ.

Ի քաղցրահայեաց ակնարկութենէն Աստուծոյ ընտրեալ յառաջագոյն ճանաչմամբ և շնորհազարդեալ, ամենազնիւ բարեհամբաւ և գերյարգոյ հօր մերում՝ նշանադրելոյ յանախտ փեսայութիւն անարատ հարսինս Քրիստոսի Լուսանկար Գահիս ս. Էջմիածնի, Տ. Տ. Դանիէլի արհիապսակ և քաջընտիր արքեպիսկոպոսի, մատուցանեմք մաքուր սիրով և կաթոգին կարօտիւ և որդիական խոնարհութեամբ զողջոյն յարգոնաց, և սրբոյ Աջոյդ զհամբոյրս, ըստ եղջերուաց փափագանաց յաղբերս ջուրց փափագելով պայծառաշուք երեսաց մեծաբաղձ Հայրութեանդ։

Եւ ընդ սիրալիրական ողջունիս և համբուրիս՝ ծանուցումն լիցի ամենացանկալւոյդ սուրբ Հօրդ մերում։ Զի ասէ Մարգարէն Երեմիաս թէ՝ ո՞չ ոք յուսացաւ յԱստուած և յամօթ եղև, և սրբազան Առաքեալն Պօղոս գրէ. Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ։ Քանզի արդարև ըստ բանիցս այսոցիկ՝ ամենայն ոք որ միանգամ մեծաւ հաւատով խնդրէ զինչ և իցէ՝ և աներկմիտ յուսով սպասէ այնմ, ոչ երբէք զրկի ի յուսալւոյն, որպէս նարդենիս ահա մեզ յուսացողացս պատահեցաւ, թէև յամեցմամբ միջոցի սակս արգելառիթ ինչ պատճառի, զոր հետագայ բանիւք ահա ունիմք ցուցանել։ Վասնզի՝ յետ առ Աստուած փոխեցման երջանկազարդ Հայրապետին մերոյ Տեառն Ղուկասու սրբազնագոյն կաթուղիկոսին՝ բոլոր միաբանք ս. Աթոռոյս՝ և երկրիս Քահանայք Մէլիքք, Իշխանք և Ժողովուրդք գումարեալք առաջի սրբոյ Իջմանտեղւոյս Քրիստոսի, և խորհուրդ ի մէջ առեալ վասն յաջորդ կաթուղիկոսի, ազդմամբ ամենասրբոյ Հոգւոյն՝ նախապետաբար զվերաբաղձալի հայրդ մեր ընտրեցաք լինել կաթուղիկոս և Հայրապետ մեզ և Ազգիս մերոյ և ս. Աթոռոյս։ Եւ զի յայնժամ նորոգ պերճացեալ էիր ի պատիւ պատրիարգութեան մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ, ի կարծիս մտանելով եթէ՝ թերևս ժողովուրդք տեղւոյն սիրավառ կապակցեալ ընդ քեզ՝ չկամեսցին թողուլ, բերաք ի մէջ երկրորդաբար զՀաշտարխանու նուիրակն մեր զԵփրեմ արքեպիսկոպոսն, և ըստ այնմ գրեցաք զմահուէրն հասարակութեան մերոյ. բայց և գիտելով թէ՝ ի հիւսիսոյ դժուարին է հրաւիրել զոք ի կաթողիկոսութիւն, ի վերջոյ հարկաւորապէս զքեզ խնդրեցաք նոյն բազմակնքիւ մերով, և յղեցաք զայն առ օրհնեալ Ազգն մեր։ Թողումք յիշեալ զերկրորդ մահուէրն մեր՝ զոր զկնի առաջնոյն գրեցաք՝ ի բռնաբարութենէ Վրաց Գորգին արքային վախճանելոյ։ Երրորդաբար գրեցաք՝ և զբազմակնիք թուղթ մի յատկապէս առ Սրբութիւնդ և առ փառազարդ իշխանսն մեծին Պօլսոյ, յորում և միմիայնակ զքեզ ինքնդ խնդրեցաք լինել մեզ Հայրապետ, որպէս ահա յայտնի է Աստուածապարգև խոհականութեան քում, զոր երկարելն աստէն աւելորդ է։ Ապա ազդ եղև մեզ ի Պօլսոյ՝ թէ ըստ բաղձանաց մերոց՝ պատուական սուրբ Հայրդ մեր անուանակոչեցեալ իցես՝ ի կաթուղիկոս, առ որ ուրախացեալ յուսաւորեցաք թէ՝ շուտով զայ-

ցես ժամանեսցես յայցելութիւն և ի մխիթարութիւն տառապելոցս։ Բայց սակայն ընդհակառակն յուսոյն մերոյ՝ զայն անակնունելի ձախորդութեան համբաւն իմացաք. ի պատճառս մեղաց ե տարաբախտութեան մերոյ։ Որով անտանելի տխրութիւն էհաս մեզ, եթէ ոչ լրութեամբ սրտի աղօթել առ ամենակալն Աստուած՝ որ գիտէ առնել ընդ փորձութեան ե զելս՝ ըստ բանի սրբազան առաքելոյն։ Իսկ ի վերայ այսր անցից՝ լուաք թէ՝ Յովսէփ արքեպիսկոպոսն է յատկացեալ ի դահակալութիւն հռովարտակօք Թագաւորին ե հաւանութեամբ Ազգին, ե ի նմանէ իսկ թուղթս ընկալաք քանիցս՝ հայրապետական նորակերտ կնքով ե կարմրադեղով կնքեցեալ. և յարգելի եղբայրն մեր Դաւիթ արքեպիսկոպոսն ևս դարձեալ ի Պօլսոյ՝ եբեր զարքունական նոմոսն յանուն նորա։ Վասնորոյ և մեք զընդունելութեան և հրաւիրանաց թուղթ գրեցաք առ նա, և նա զԿարապետ վարդապետն իբրև զպատկեր և փոխանորդ իւր առաքեաց՝ ի սուրբ Աթոռս, որե ստէպ ստէպ գրէր ի տեղեաց տեղեաց թէ գալոց եմ, բայց անագանէր ի գալն, մինչև հազիւ ուրեմն ի փետրվարի ԺԱ եկն եմուտ ի Տփխիս քաղաք։ Եւ զի՝ յառաջագոյն գրեալ էր մեզ՝ ի Մօզդոքու՝ զքանի երևելի վարդապետս յղել ի Տփխիս ընդառաջ իւրն, վասնորոյ և մեք յառաջ քան զգալուստ նորին անդ, զաթոռակալ Սիմէօն, զգրագիր Անդրէաս, զԲարսեղ և զԹադէոս Արհի եպիսկոպոսն առաքեցաք. որոց ի գնալն և ի հասանիլն անդ ի քաղաքն, ապա ևս եկեալ էր մեծաւ շքով, և անտի թուղթ գրեալ առ մեզ։ Զորոյ զփոխադարձն և մեք գրեալ՝ այն ինչ սպասէաք զայսր գալստեան լուրն լսել, յեղակարծում ժամու թուղթ էհաս մեզ ի վարդապետաց մերոց և յայլ անձանց՝ որք գրեալ ծանուցեալ էին մեզ, թէ նա հիւանդացեալ ե վախճանեալ էր յամսոյս իններորդում աւուր։ Զոր և մեք լսելով տրտմեցաք։ Այլ զի՝ այսպէս գիտեմք, եթէ և ոչ տերև մի ծառոց անկանի յերկիր առանց կամաց Արարչին, հաւատամք եթէ ի բարերար կամացն նորին հաճութենէ եղև որ եղեն։ Վասնորոյ զայլ ինչ ոչ ունելով առնել, զփառս և զգոհութիւնս վերառաքեմք ամենակալ մեծի տէրութեան Նորա։ Որև՝ լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն ի լոյս երեսաց իւրոց, և արժանացուսցէ արքայութեան երկնից։ Եւ զգերըդձալի հայրդ մեր ողջ պահեսցէ, և երկարակեացս արասցէ բոլորեալ բնաւ բարեբաստութեամբ ի պարծանս սրբոյ Էջմիածնի Մօրս մերոյ և ի մխիթարութիւն տառապեալ որդւոցս։

Արդ՝ ի նորոյ ևս միաբանութեամբ ժողով արարեալ, հանդերձ քահանայիւք՝ իշխանօք և ժողովրդովք երկրիս, ըստ Աստուածայինն ազդեցութեան՝ և ըստ առաջնոյ ընտրութեան մերոյ՝ վերստին զբարեգովեալ և զամենապատուական հայրդ մեր ընտրեցաք լինել գահակալ ս. Աթոռոյս, և կաթուղիկոս և Տէր հոգևոր Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ և բնաւից պաշտօնէիցս։ Վասնորոյ զայս մահսէրական թուղթս մեր գրեցաք առ սրբութիւնդ, որով և զսիրելի եղբարս մեր զՅոհաննէս և զՆերսէս հանճարունակ վարդապետքն փեսաւէրս և հրաւիրակս առաքեցաք։ Որք և խնդրեմք մեծապաղատ աղաչանօք, զի անյապաղ հրամայեսցես եկեսցես, և մի ինչ զմտաւ ածիցես վասն անցիցն անցելոց, զի ամենագթածն Աստուած վասն մեծի սիրոյն և առատ խնամոցն առ քեզ՝ խրատեաց սակաւուք փորձութեամբք ըստ իմաստնոյն բանի, զի տացէ զմեծ բարութիւնս, որպէս սովոր է միշտ փորձել նախապէս զսիրելիս իւր իբրև զոսկի և զարծաթ, և ապա ընկալնուլ ի փառս։ Ըստ որում և ասէ ի ձեռն Զաքարիայ մարգարէին թէ, Անցուցից զնոսա ընդ հուր, և ջեռուցից զնոսա որպէս ջեռնու արծաթ, և փորձեցից զնոսա որպէս փորձի ոսկի, նա կարդասցէ զանուն իմ, և ես լուայց նմա, և ասացից Ժողովուրդ՝ իմ է սա, և նա ասասցէ Տէր Աստուած իմ ես դու։ Ապաքէն զանցեալն անցեալ դնելով՝ միամտութեամբ փութացուսցես զշնորհաբեր գալուստդ. ահա Տէր է որ յաջողէ և կոչէ զսրբութիւնդ գալ պսակիլ ընդ նախկնաբար ձեզ նշանեցեալ անարատ Հարսինս լուսոյ՝ առ ի կատարել զխնդիրս նուաստ ծառայիցս իւրոց, զոր հաւատով հաստատնով խնդրէաք ի վաղուց հետէ, և աներկբայ յուսով սպասէաք ընդունել։ Վասնորոյ և սրբութիւնդ հարկ է հնազանդիլ Տեառն՝ կոչողին զքեզ ի յայս

զերագոյն պատիւ Քահանայապետութեան, և լսել ձայնի աղաչանաց մերոց։ Այս հնգետասան ամիսք եղեն՝ յորս առանց կաթուղիկոսի իբրև որբս և անտերունջս կամք, թէ զինչ ինչ նեղութիւնք և փորձութիւնք հասին մեզ, և ծրքան պակասութիւնք ունիմք ներկայապէս, ոչ է զրելի աստ։ Ահա իշխողն մեր ես հրաւիրանաց թուղթ գրեաց զի շուտով գայցես։ Ուստի՝ և մեք վերստին կրկնեմք զաղաչանս մեր, զի մի ամենևին կամեսցիս յամել և յապաղել յինչ և իցէ պատճառս. այլ որպէս՝ ի թևս աղաւնոյ սլացեալ հասցիս առ ս. Աթոռս Մայրս լուսոյ, որ զբաղձանս իւր առ երագութիւն ընթացիցդ ցուցանելով՝ գոչէ տարփմամբ սիրոյ ըստ երգոյն. Դարձիր եզբօր որդի իմ, և նմանեաց այծեմանց, կամ որթուց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց, եկ և բարձ զտխրութիւն այրիութեան իմոյ, և որբութեան մանկանց իմոց։ Բայց զայս ևս աղաչեմք, զի մի սպասեսցես ամենևին ի պօլսեցւոց զֆէրման և կամ զթուղթ ինչ ընկալնլոյ, զայնց հոգսն աստուստ ևս կարեմք տեսանել։ Բաւ է։ Իսկ զայլ երկար որպիսութիւն մեր թողլով ի թղթաբեր եզբօրէդ մերմէ իմանալ, ասեմք ողջ լեր ի Տէր պարազայց ամօք և խաղաղական կենօք ի սփոփութիւն և ի պարծանս անտերունջ միաբանից ս. Աթոռոյս, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և աբեղայից ստորակնքողաց թղթոյս և այլ աստիճանաւորաց եղելոց ընդ մեզ։ (Կնիքք)։ Գրեցաւ ի ՌՄԾ թուոջս, և ի մարտի Ի ճսուրբ Աթոռս էջմիածին։

ՁԷ. Կոնդակ ի միաբանից սրբոյ Աթոռոյս ի վերայ Վրաց Երկրին, վասն վախճանման Յովսէփ Նորակոչ կաթողիկոսին, որ եկեալ ի Թիֆլիզ՝ անդ վախճանեալ էր ի մարտի Թ, առ որ մխիթարութիւն. ի վերջոյ ազդարարութիւն վասն ընտրութեան Դանիէլ արհւոյն ի կաթուղիկոս.

Ի լուսանկար և երկնահանգէտ Աթոռոյս սրբոյ էջմիածնի պաշտօնէից համայն քահանայակարգ միաբան եղբարց, այսինքն յարքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, ի վարդապետաց և յաբեղայից, հասցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, հանդերձ Աստուածային երկնածիր մխիթարութեամբ, և տրտմափարատ շնորհիւ Միածնաէջ սրբոյ Տեղւոյս. հոգևոր սիրելեացդ մերոց՝ և լուսածնունդ որդւոցդ սրբոյ Աթոռոյս, Հայկազուն և Լուսաւորչակրօն հաւատացելոց՝ ի Քրիստոս, որք բնակեալ կայք յԱստուածապահ քաղաքդ Թիֆլիզ. սրբանուէր քահանայից աւագաց և երկրորդաց, փառազարդ իշխանաց, իմաստնախոհ վաճառականաց, հաւատարիմ երէցփոխանաց և զանձապետաց, վայելչագործ արհեստաւորաց, քրանաջան երկրագործաց, երկիւղազարդ տանտիկնաց, և այլ համայն Քրիստոսասէր օրհնեալ ժողովրդեանդ առ հասարակ՝ արանց և կանանց, մեծաց և փոքունց խնդալ...

(Շնորհք)։

Եւ ընդ օրհնութեանս Աստուածայնոյ՝ ծանուցումն լիցի հոգևոր սիրելեացդ մերոց՝ և հարազատ զաւակացդ սրբոյ Աթոռոյս էջմիածնի։ Զի որովհետև փշոտ և տաժանական է ասացեալ աշխարհս լի աշխատանօք, վասնորոյ ուրախականքն սորա ոչ են ի հաստատութեան։ Քանզի բնական է բերմանց սորին ընծայել բնակչացն ի սմա ընդ ուրախութեան և տրտմութիւն, ընդ ծիծաղելոյ և սուգ, ընդ քաղցրութեան և դառնութիւն, և այլն ամենայն ըստ սոյն եղանակի։ Որպէս և նարդենիս հանդիպեցաւ մերումս խղճալի միաբանութեան։ Վասն զի բազում աշխատեալ մեր առ ի գիւտ արժանաժառանգ գահակալի Աստուա-

ծեան սրբոյ Աթոռոյս Մօրս մեր լուսոյ, և վախճանաբար ստացեալ զՏէր Յովսէփ վեհափառ կաթուղիկոսն, յանցելումն այն ինչ լուաք զմեծահանդէս փառաւորութեամբ և զարքայապատիւ ճոխութեամբ գալ ժամանելն նորա յայդր ի Թիֆլիզ քաղաքդ, արդարև ուրախութեամբ մեծաւ ուրախ եղաք առ այն, համարելով եթէ գայցէր նա աստ, և մխիթարիցէր զբազմաժամանակեայ որբութիւնս մեր, բայց ընդ հակառակն՝ վերստին ժամանեցին մեզ աւուրք սգոյ և տրտմութեան։ Քանզի՝ թուղթս ընկալեալ մեր ի վարդապետաց մերոց և յայլոց անձանց՝ գիտացաք թէ նա ինքն մեծահամբաւ և դերաշուք Հայրապետն մեր ութօրեայ միջոցաւ հիւանդացեալ է և վախճանեալ, որով դառնաղէտ համբաւով տրտմեցաք մեծապէս և ցաւեցաք մինչև ցմաշումն ոսկերաց. զի թէ Համբաւ բարի՝ պարարէ զոսկերս ըստ իմաստնոյն, ապա և ներհակն նորին հալէ և մաշէ։ Ակնունէաք մեք այսօր և ի վաղիւն գալ բարձրանալ նորին բարձր սըբբազնութեան յաստուածապարգև Գահոյս իւր, և տօնել զուարճութեամբ զնոր փեսայութիւն, և որդւոցս խրախճանալով իբր ի հարսանիս, զառագաստի նուագել զերգս. սակայն ընդդէմ յուսոյն մերոյ՝ դարձաւ տօնն մեր ի սուգ, և ուրախութիւն մեր ի տրտմութիւն ի սակս բազմութեան մեղաց մերոց։ Վասնորոյ որչափ և լայցեմք և ողբայցեմք զվատաբախտութիւն մեր՝ ոչ լինի ասել շատ։ Եւ զիարդ ոչ լացցուք և ողբասցուք զմեզ, զի այս ահա հնգետասան ամիսք եղեն յորմէհետէ անարատ Հարսն լուսոյ զրկեալ ի փեսայէ՝ իբրև այրի ձեռն ի ծնօտի նստեալ ողբայ, և մեք որբք և անտէրունջ մնամք տեսանելով վճարեալ առ մեզ ողբերգական բանի սրբոյն Խորենացւոյն թէ Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ոչ փոխանակէ առաջնորդել յերկիր Աւետեաց։ Ահարօն ննջեաց, և Եղիազար տեղակալէ։ Եղիա համբարձաւ, և Եղիսէոս ոչ մնաց կրկին հոգւով յաջորդել զտեղի նորին։ Այլ զի Արարիչն Աստուած՝ զամենայն զոր ինչ կամի, և առնէ, և ոչ ոք կարէ ասել ցնա թէ զինչ գործեցեր, որպէս և իմաստունն ասէ՝ Մեծապէս կարող լինիլ յամենայն ժամ առ քեզ է, Տէր, և զօրութեան բազկի քոյ, ով է որ ընդդէմ դառնայցէ։ Վասնորոյ և մեք ոչ զայլ ինչ ունիմք առնել, եթէ ոչ փառս և գոհութիւնս մատուցանել ամենակալ տէրութեան նորա։ Որ և՝ անճառ ողորմութեամբ իւրով լուսաւորեսցէ զհոգի Տեառն Յովսէփայ սրբազան կաթուղիկոսի մերոյ, և ընդ երջանիկ սրբոց հայրապետացն դասեսցէ զնա և պսակազարդեսցէ։ Եւ զձեզ և զմեզ մխիթարեսցէ և սփոփեսցէ, և զարժանաւոր կաթուղիկոս յարուսցէ ի փարատումն այրիութեան սըբրոյ եկեղեցւոյս Հայաստանեայց։ Արդ՝ մինչ հարկ էր մեզ վերստին ի խնդիր ելանել յաղագս յաջորդ կաթուղիկոսի, վասնորոյ համայն միաբանք սրբոյ Աթոռոյս, և երկրիս Քահանայք, Մելիքք, Իշխանք և Ժողովուրդք գումարեալք ի մի, և խորհուրդ ի մէջ առեալք, զգերըղձալի հայրն մեր և զհարազատ զաւակն սրբոյ Աթոռոյս՝ զԴանիէլ շնորհազարդ և սրբազան արքեպիսկոպոսն, նախանցեալ պատրիարքն մեծի Մայրաքաղաքին Կոստանդնուպոլսոյ՝ զոր յառաջնմէ ազդմամբ սուրբ Հոգւոյն ամենայօժար կամօք ընտրեալն էաք, այլ ևս դարձեալ զնա ընարեցաք լինել կաթուղիկոս և հայրապետ Ազգիս մերոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի լուսածին Մօրս մերոյ։ Որ և ի գրութեանց և ի համբաւուց լսեմք թէ՝ հաւաստեաւ եկեալ է նա ի Թօխաթ քաղաք։ Յաղագս յորոյ և համակամ հաճութեամբ զբազմակնիք մահսէր դրեալ առ սրբութիւն նորին, առաքեցաք ձեռամբ երկոցունց վարդապետաց, որ արագնթացութեամբ գնացեալ՝ բերցեն զնա՝ ի սուրբ Աթոռս։ Ընդ որոց իշխօղն մեր ևս ընդունելութեան և հրաւիրանաց թուղթ գրեաց, հարկելով շուտով ի գալ. Աստուծով յոյս ունիմք թէ կանխաւ գայցէ առ մեզ խաղաղութեամբ։ Բայց և պատշաճ համարելով գրեցաք զայս թուղթ մխիթարութեան և միամտութեան առ ձեզ, որով և խնդրեմք ի հոգևոր սիրելեացդ մերոց, զի զջերմեռանդ սէր և զոգգիական հաւատարմութիւն ձեր որ առ սուրբ Գահս Աստուածեան առաւել ևս աճեցուցանելով՝ աննուազ պահեսջիք և յօղտարարութեանց սորին մի պակասեսջիք։ Եւ զվարդապետ եղբարսն մեր զչորեսին արքեպիսկոպոսն սիրով և ընդունելութեամբ շահելով, շու-

տով օր յառաջ ուղևորեսջիք գալ ի սուրբ Աթոռս, որք հարկաւորապէս պիտանիք են մեզ ի կարևոր գործս մեր։ Որովք միշտ ընկալջիք զվարձս յԱստուծոյ, և ժառանգեսջիք զհոգեպարար շնորհս սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի, և զօրհնութիւնս մերոյս համախումբ միաբանութեան։ Ամէն։ Գրեցաւ յամի Տեառն 1801 և ի մարտի 21. ի լուսակազմ Աթոռս սուրբ Էջմիածին։

ՁԲ. Վասիլիյ Թամարայի թուղթը Զմիւռնիայի Մարտիրոս արքեպիսկոպոսին.

Գերապատիւ Տեառն Մարտիրոս վարդապետի եւ առաջնորդի Զմիւռնիոյ՝ ողջոյն սիրոյ.

Գերապատիւ հայր.

Ընկալայ ձեռամբ սինիօր Ֆօրցման Քօնսուլի քաղաքիդ, զգիր գերապատուութեանդ գրեալն ի 25 նոյեմբերի, որով պատուեալ էիք զիս։ Արդարև հետևութիւնքն զորս գրեալ էիք՝ համարիմ անտարակոյս, թէ յառաջ եկեալ իցէ յերկիւղէ. իբր զի տարաձայնութիւն կարէ պատճառել աւերումն մեծ ի Հայոց եկեղեցւոյն սուրբ Էջմիածնի, թուլացուցանելով զյօդուածս, որք վասն ամենեցուն հանգստութեան պարտ էին արդեօք միաբանել զանդամս. և խափանելով զգործս քաղցրագութ խնամոց Օգոստափառ Կայսերն Ռուսաց Տեառն իմոյ ի նպաստ այսր եկեղեցւոյ. իսկ Օգոստափառ Կայսրն իրաւի վշտանայ տեսանելով, զի այն պաշտպանութիւն զոր ունի ի վերայ եկեղեցւոյն, որպէս ի վերայ ամենայն քրիստոնէից, լինի առիթ շփոթութեան և տարաձայնութեան, ի մէջ պաշտօնէից այսր կրօնի, և այնպիսի եկեղեցւոյն, որոյ գըլխաւորքն պարտէին տալ օրինակ միաբանութեան, և յետս կալոյ յամենայն առանձնական օգտէ յիւրս պատշաճեալս իւրեանց պաշտօնի։ Որպէս չէր արժան անկարգութեամբ յետ վախճանի Յովսէփ կաթողիկոսին լինել ընտրութիւն յաջորդի նորա, որ եղև պատճառ ծանր գայթակղութեան։

Օգոստափառ Կայսրն հրաժարեալ յամենայն մարթաւոր ակնառութենէ ընտրութեան գլխոյ սրբոյ Էջմիածնի ընկալաւ և հաստատեաց զընտրութիւն Դաւթի կաթուղիկոսի. և յետոյ եցոյց զյայտնի նշան իւրոյ անաչառութեան և խորհրդոյ, որով կառավարի։

Զի վերստին քննութիւն առնելով ի վերայ այնր ընտրութեան, վաղվաղակի ի հաւատալն անդ՝ թէ սխալ ընտրութիւն լեալ իցէ, արժան դատեցաւ տալ պատշաճաւոր հրաման վասն կաթուղիկոսութեան Դանիէլի։ Գիր գերապատուութեանդ կարէ ծնանել զնոր տարակոյս և զի պարտ էր ինձ առաքել զայն առ Օգոստափառ Կայսրն, վասնորոյ անյապաղ առաքեցի զայն։

Սակայն ոչ կարեմ գուշակել, թէ գրութիւնք գերապատուութեանդ յոր վայր կարասցեն ազդել ընդդէմ փաստից, որով Օգոստափառ Կայսրն միւսանգամ շարժեալ բերիցի յառաջին ընտրութիւն. և այլն ողջ լերուք։

Գերապատուութեան քում
Նուաստ ծառայ Վասիլի Թամարայ

Կոստանդնուպօլիս
ի 31 դեկտեմբերի
1801.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

I

Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանի Գ. մասից

«Դիւան հայոց պատմութեան» ժողովածուի անտիպ նիւթ

Ա. Ի Հաշտարխան եւ ի Գիլան ընդ Կարապետ վարդապետին եւ Եսայուն.

Ի Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետէն թուղթ ժամանեաց առ սրբազան Վեհն, որ գրէր նախ թէ՝ նոր դումրէնաթ եկն ի քաղաքս, և խնդրէր վասն նորա զթուղթ շնորհաւորութեան։ Վասն որոյ և սրբազան Վեհն զթուղթ գրեաց առ Իւան Վարֆօլեմէեվիչ Եակօբի նոր գումրեռնաթն Հաշտարխանու, շնորհաւորելով զգալուստն, և յիշեցուցանելով զսէր քան զինքն յառաջ նրստող գումրեռնաթիցն, որ առ ինքն և առ սուրբ Աթոռս և առ ազգս մեր, և յինքենէ ես զնոյնս խնդրելով։ Եւ յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին, և օրհնութիւն հայսերուհւոյն և որդւոյն։

Թուղթ ևս ի Հաշտարխան առ մահտեսի Ազարիայի որդի և մեր գանձանակ շուրջ ածող Պարոն Վարդանն, շնորհակալութիւն վասն անչափ հարազատութեանցն որ առ ս. Աթոռս, և յամենայնի շահելոյն և մխիթարելոյն զՅովսէփ վարդապետն։ Եւ վասն մարգարտաշար թագին՝ զոր յանուն ս. Աթոռոյս տուեալ էին Յովսէփ վարդապետին ինքն և կինն իւր Ծաղիկն. ի լինիլ ինքեանց հոգևոր զաւակ, ի տեղի մարմնաւոր զաւակի, զի չունէին զաւակ, զոր նոյն Ծաղիկ կինն իւր ձեռամբն էր կարեալ, և գին ականց և մարգարտացն էր Ծ թուման։ Օրհնութիւն և շնորհակալութիւն շատ, հանդերձ խնդրուածովք յԱստուծոյ՝ ի տալ զզաւակ մարմնաւոր։ Եւ բաց յայսմանէ՝ որ ինչ հասարակ յիշատակս տային ս. Աթոռոյս ի քաղաքէն, մասնակցէր ամենիցն, և զյատուկ արդիւնք ևս առատութեամբ տայր, սակս այսց ևս օրհնութիւն։ Եւ պատուէր վասն իւր գործոյն, և վասն Յովսէփ վարդապետին ևս յանձնարարութիւն։ Թուղթ ևս ի Հաշտարխան առ Ջուղայեցի պարոն Մկրտումն, նոյնպէս օրհնութիւն և շնորհակալութիւն։ Զի սա ևս նոյնպէս առաւել հարազատութեամբ և սիրով շահեալ զՅովսէփ վարդապետն։ Եւ վերստին յանձնարարութիւն։ Թուղթ ևս ի Ղզլար առ պարոն Նուրիջանն, նոյնպէս օրհնութիւն և շնորհակալութիւն վասն առ ս. Ա-

թուոց հարազատութեանցն, և զՅովսէփ վարդապետն շահելոյն։ Եւ մխիթարութիւն վասն մահուան հօրն իւրոյ Գեօրգինին։ Այլ և՛ յատուկ պատուէր զի ամենայն գործոց և հոգալեացն ս. Աթոռոյս որք անդ՝ հարազատօրէն հոգ տարցի առ ի յառաջանալ։ Մանաւանդ՝ զկանոնսն զորս գրեաց անդ ի յապրիլի ԺԹ հասեալ էր անդ, որում ներհակ էին անդ ոմանք, յորոց մի էր լեալ և սորին հայրն, որ այժմ վախճանեալ էր, Իսկ սա այժմ ի մէջ քաղաքին խօսից տէր էր, և թէ կամէր, զամենայնն կարէր հաստատել և յառաջացուցանել։ Ուստի՝ գրեաց թէ՝ ի քէն եմ իմանալոց զզոցին յառաջանալն և զո՛չ յառաջանալն, և ամենայնիւ արկ ի վերայ սորա։ Իսկ ներհակութիւն նոցին ըստ մեծի մասին՝ էր վասն ննջեցելոց դիազարդին, զի կամէին վասն իւրեանց եկեղեցւոյն առնուլ և մեզ չտալ։ Ուստի՝ ի շատ ստիպմանէ նոցին, նախ քան զհասանիլն անդ կոնդակին, առ ի հաճել զմիտս նոցին և իբրու ակամայ կամօք, այսպէս էր պայմանեալ Յովսէփ վարդապետն, զի ի ննջեցելոցն զոր ի յեկեղեցին տարցեն, զդիազարդսն նոցին տացեն եկեղեցւոյն, իսկ զորս ո՛չ տարցեն յեկեղեցին, զնոցին դիազարդսն սրբոյ Աթոռոյս տացեն։ Յետոյ մինչ հասեալ էր կոնդակն առ Յովսէփ վարդապետն. զայն պատուէրն որ վասն դիազարդին էր՝ քերեալ էր, և այսպէս շինեալ որպէս գրեցաք, և յղեալ ապա ի Ղըզլար։ Թուղթ ես առ Յովսէփ վարդապետն գրեաց, ի պատասխանի ի սեպտեմբերի ԻԵ գրեալ թղթոյն, ծանուցանելով զգրելն առ ինքն զթուղթ ի յուլիսի ԻԸ, որ դեռ ոչ էր հասեալ առ ինքն, նաև ի հոկտեմբերի ԻԷ ևս։ Առ որ և յղեաց զվերոյգրեալ թուղթսն՝ զորս ըստ խնդրոյ սորին գրեաց։ Նա գրեաց զհաւանութիւնս վասն կանոնացն և կարգագրութեանցն զորս ասացաք ի վերն, և պատուիրեաց այնպէս յառաջ տանել։ Ծանոյց և զյղելն ի Գիլան նուիրակ և առաջնորդ զԿարապետ վարդապետն, (զոր ասելոց եմ ի ներքոյ)։ Ծանոյց նաև զորպէսն նորին, թէ Ճրպէս ի Կարնոյ բերեալ մերային արար։ Եւ պատուէր սէր առնել ընդ նմա գրով։ Իսկ և՝ (որպէս խոստացեալ եղև ի դեկտեմբերի Զ ի թղթոջ ս. Աթոռոյս վէքիլ Ալէքսանին) գրեաց այժմ սրբազան Վեհն առ սա՝ վերահասու լինել կայից Գիլանու հանդուցեալ Տէր Աբրահամին, և վասն ս. Աթոռոյս զմեծ բաժինս հանել ի նմանէ։ Եւ զսորին ընչից որպէսն մեր Գիլանու վէքիլ պ. Ալէքսանն էր գրեալ սրբազան Վեհին, թէ ի Հաշտարխան է, և զանդ եղեալ սակաւ իրսն կնքեալ էր և գրեալ սրբազան Վեհին, զոր ծանոյց սմա։ Իսկ Գաւիթ Աղայն զայս ո՛չ գրէր, զայս ես ծանոյց։ Եւ զի Մինաս վարդապետի ժողովեալ արդիւնքն անդ առ Սարգիս Աղայն էր, և մինչև ցայժմ դեռ ո՛չ տայր, և ի նաւաբեկութենէն որ ասացաւ ի յուլիսի ԻԸ բաղում վնաս էր դիպեալ սմա։ Ուստի՝ կամելով սրբազան Վեհին շուտով հանել ի նմանէ զդրամն, գրեաց սմա թէ՝ Մինաս վարդապետի յայդր թողեալ արդիւնքն առ ով և իցէ՝ պարտիս առնուլ և ի ս. Աթոռս հասուցանել, զի պակասութիւնս շատ ունիմք, չգիտէաք ասէ թէ առ ով է, որ մեք ևս գիր գրէաք իւրեան, զու առ և յղեա։ Զայս այսպէս գրեաց զի ընթերցեալ առ նմա, այսու պատճառաւ զդրամն խնդրեսցէ։ Ծանոյց և զլինելն մեր այժմ յԵրևան, և պաշարիլն հոգօք Նաւասուզին։ Իսկ և Թիֆլիզեցի պ. Եսային որ ի Հաշտարխան երթալ կամէր՝ (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԷ), (որ և ի փետրվարի ԻԳ և ի վերոյսն յիշեցաւ) մինչև ցայժմ ի պատճառս իւրոց բանից արգելեցեալ աստ մնաց, իսկ այժմ երթայր ի վերայ Գիլանու։ Ուստի՝ գրեաց զփուսուլայ առ Յովսէփ վարդապետն սրբազան Վեհն, և յիշեցոյց նմա զայն՝ զոր ի հոկտեմբերի ԻԷ գրեաց առ սա, տալ Եսայուն զդրամս, զոր և այժմ հարկադրեաց՝ զի թէ ինքն զդիւրին իմն ոճ գտեալ կարասցէ անվնաս ի սուրբ Աթոռս զդրամ հասուցանել, այնպէս արասցէ, ապա թէ ոչ, սմա տացէ և թամասուկ առեալ յղեսցէ աստ առ ինքն, զի առնուցու ի նմանէ։ Եւ զի գրէր թէ՝ ընդ իս եղեալն կարմրացուցեալ եմ, որ դիւրին է առ ի յղել, գրեաց, զի թէ զայն բանն զոր ի հասարակ թղթոջն գրեաց՝ ընթերցցի Սարգիս Աղային մօտ, և նա զդրամն տացէ, ապա ի վերայ նորին յիւրմէն ևս լցուս-

ցէ զայն, զոր գրեաց տալ. իսկ զկարմրացուցեալն նոյնութեամբ աստ յղեսցէ։ Եւ վասն առնլի իրաց մեզ հարկաւորաց որպէս ի հոկտեմբերի ԻԷ, նոյնպէս և այժմ գրեաց, թէ ասացաք ղմա, զի զոր ինչ վասն մեր հարկաւոր գիտէ, առնու և բերէ, ղու ևս այդմ մուղայէթ լեր. զմեզապատշաճ հարկաւոր իրս առնուլ տուր զի բերցէ։ Եւ զի Եսային աստ այժմ ի կողմանէ այս գրեալ ղրամոյս զրամ ետ մեզ, վասնորոյ գրեալ ծանոյց սմա։ Փուսուլայ ևս գրեաց դարձեալ առ Յովսէփ վարդապետն թէ՝ թէպէտ գրեցաք թէ՝ եթէ այլ հաւատարիմ գաանիցի, նովաւ յղեա զդրամն ապա թէ ոչ՝ Եսայուն տուր. սակայն՝ ղու ի սմանէ յորիշ կարծիս մի՛ անկցիս, այլ թարց երկբայութեան ղմա տուր զդրամն, զի որքան և իցէ՝ մեր փորձեալն է, և մեզ յամենայն կողմանէ հաւատարիմ։ Եւ յոյժ հարկ առ այս, զի Եսայուն տացէ զդրամն։ Զորս զամենայնսն ի մի պահաբան եդեալ՝ տուաք Եսայուն՝ տանիլ տալ Յովսէփ վարդապետին։ Իսկ և՝ (որպէս ի վերն ասացաւ), յղեաց սրբազան Վեհն զԿարնեցի Կարապետ վարդապետն ի նուիրակութիւն և յառաջնորդութիւն Գիլանու։ Որում ետ զնուիրակական կոնդակ, յորում էր և շնորհակալութիւն վասն հնոյ նուիրակին։ Թուղթ ևս առ Ռէշտու և Անզալուայ քահանայսն և իշխանսն գրեաց յատկապէս։ Քանզի՝ վասն վիճոյն զոր անկեալ էր՝ ի մէջ նոցա և հին նուիրակ Պետրոս վարդապետին, (որ յանցեալ ամին ի մարտի Է և ի վերոյսն ասացեալ է)․ յոյժ նուազ էր լեալ արդիւնք Պետրոս վարդապետին։ Ուստի գրեաց թէ՝ գիտէք ահա, թէ ո՛րքան պակասութիւնք եղեն արդեանց հին նուիրակին, զորոյ զպատճառն թողցուք, այժմ պարտիք ղմա այնպէս առատութեամբ տալ զարդիւնս, զի անցելոյ թերին ևս լցցի։ Եւ առ այս շատ սիրով յորդորումն և հարկ։ Թուղթ ես առ Գաւիթ Աղայն գրեաց, ծանուցանելով թէ՝ ի դեկտեմբերի ԻԶ ևս գիր գրեցաք քեզ։ Եւ վասն նուիրակին յանձնաբարութիւն. և վասն արդեանցն նոյն հարկ և պատուէր՝ որ ինչ և առ հասարակ քահանայսն և իշխանսն։ Եւ վասն վերոյիշեցեալ հանգուցեալ Տէր Աբրահամի ընչից պատուէր վերահասու լինիլ, և ս. Աթոռոյս զմեծ իմն բաժին հանել ի նմանէ։ Եւ այլ բանք առ այս։ Թուղթ ևս առ ս. Աթոռոյս վէքիլ պ. Ալէքսանն, ըստ ամենայնի նոյն՝ որ ինչ առ Դաւիթն գրեցաւ։ Եւ պատուէր վասն գործոյն և նուիրակին։ Եւ զի՝ ընչից Տէր Աբրահամին հասու լեալ՝ յանձնեսցէ նուիրակին, և գրեսցէ ինքեան։ Թուղթ ևս առ Գիլանու նոր Շահբանդար Եակոբ Իվանիչ Մետիկն, ըստ ամենայնի նոյն ոճիւ, որպէս առ Հաշտարխանու գումրեռնաթն գրեցաւ, զորոյ որպիսութենէն և զլաւութենէն Յովսէփ վարդապետն էր գրեալ առ սրբազան Վեհն, զոր ծանոյց սմա, սէր՝ և յանձնարարութիւն վասն նուիրակին, և յորդորումն՝ ի սէր և ի բարեկամութիւն առ ս. Աթոռս և առ ինքն և առ մերայինսն, յիշեցուցանելով և զսէր և զբարեկամութիւնս քան զինքն յառաջ անդ նստող Շահբանդարացն որ ընդ մեզ. և յինքենէ ևս զնոյն խնդրելով, և օրհնութիւն Կայսերուհւոյն և Որդւոյն։ Թուղթ ևս առ Գիլանու Հագայադ Խանի առաջագահ Ջաֆարբէկն գրեաց՝ սէր՝ և յորդորումն ի սէր և ի բարեկամութիւն առ ս. Աթոռս, և յանձնարարութիւն վասն Կարապետ վարդապետին։ Զի յանցեալ ամին խանն իւր յղեալ էր զսա առ Հերակլ Արքայն, որ ի դառնալն աստ հանդիպեցաւ և լաւ ծանօթացաք։ Առ այն այժմ գրեաց առ նա զայս թուղթս, և Խանին ևս ողջոյն գրեաց։ Թուղթ ևս յատկապէս Թիֆլիզեցի պ. Եսայուն ետ որ յիշեցաւ ի վերոյ, որ էր վկայութիւն վասն բանից նորին, զի զայն ղաւին՝ զոր ի յունվարի ԻԵ ասացաք թէ՝ դրեալ էր Հերակլ Արքայն, զի կամ Կարսայ Իբրահիմ Աֆանտին, կամ Բայազտոյ Իսաղ փաշայն, և կամ Խանն մեր՝ կամ սրբազան Վեհն հատցեն. ոչ եղև հաստատեալ, և իրաւունքն մնաց ի կողմն Եսայուն։ Զի նա հրամանաւ Արքային գնացեալ առ Իբրահիմ Աֆանտին ի Կարին, ի ձեռն նորին կոչեաց զնոսա ի դատաստան, իսկ նոքա ոչ եկին յԱխալցխայու, և ոչ եկին ի դատաստան, վասնորոյ՝ ի փախչելն նոցա ի դատաստանէ՝ Եսային իրաւացի երևեցաւ։ և այսր աղագաւ վկայութիւն խնդրեաց ի սրբազան Վեհէն, վասնորոյ՝ ետ նմա զայս

դիրս։ Եկին ի միասին Գիլանու նուիրակ և առաջնորդ Կարապետ և Թիֆլիզեցի Եսային ի ՌՄԻԶ (1777) մարտ ԺԵ.

Բ. Ի Մոսկով՝ ի Ղզլար եւ ի Հաշտարխան.

Զպատասխանի թղթոցն Հաշտարխանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետին, այժմ գրեալ յղեաց սրբազան Վեհն առ նա։ Զի ի Մօզտօքու դարձեալ ի Ղզլար. Բ թուղթ էր գրեալ առ սրբազան Վեհն, մինն ի յունվարի ԺԲ ի ձեռն Թիֆլիզեցի մեր ճորտ Յարութիւն տղայի միոյ՝ որ յառաջ աստ ի դպրատանն էր, և Յուսիկ կոչիւր։ Եւ զերկրորդն ի Ղզլարու դարձեալ, ի մարտի Ե ընդ իւր եղբայր Մովսէսին, որպէս ասացաւ յամսոյս ԺԲ։ Եւ յերկոսեանսն ես խընդրէր զթուղթս։ Որք են թուղթ առ Ղզլարու նոր կումէնդատ և պօլկոֆնիկ Իւան Պետրովիչ ոմն, որ էր ի մեր ազգէ, ե Ղափանցի։ Որ յետ վախճանման հօրն՝ որ լեալ էր պօտպօլկոֆնիկ, գնացեալ էր ընդ եղբարց իւրոց ի գուռն Կայսեր։ Եւ անտի ընդ զօրացն գնացեալ ի մեծ մարտն, որ ընդ Օսմանցիս, զմեծ և երևելի քաջութիւնս էր ցուցեալ։ Զորոյ զքաջութիւնն գովարանեալ մեծի Զօրապետի առաջի Կայսեր, մեծարեալ էր զնա Կայսրն, տալով զպօլկօֆնիկութիւն, և զկումէնգատութիւնն Ղզլարու։ Ուստի՝ շնորհաւորութիւն գրեաց նմա սրբազան Վեհն որ գեռ նոր էր զալոց անդ, և էր փեսայ Ներսէս Աղային։ Եւ գրեաց զի խնամս ունիցի ի վերայ համազգեաց իւրոց, և զսէր առ սուրբ Աթոռս և առ մեզ։

Թուղթ ևս ի Ղզլար, առ Զաքարեա Պավլիչն, որ է մայեօռ և զօրապետ Ղզլարու. և մեր ազգ։ Օրհնութիւն և շնորհակալութիւն վասն սիրոյն որ առ ս. Աթոռս և մեզ։ Թուղթ ևս ի Ղզլար՝ առ Անդրէի Միխայէլիչն, որ էր ռուս, և պատուովն կապիտան կայսերական, և զինուոր, և գլուխ մաքսապետացն Ղզլարու։ Շնորհակալութիւն վասն սիրոյն, զոր ունէր առ ազգս մեր, և առ ս։ Աթոռս, և առ մեզ, և առ Յովսէփ վարդապետն։ Թուղթ առ Մակար Վասիլիչն, որ էր որդի Ներսէս Աղային, և ընկեր մաքսապետութեան վերոյ գրեալ մաքսապետին. նոյնպէս օրհնութիւն և շնորհակալութիւն։ Եւ սոցա ամենեցուն յորդորումն, զի միաբանեն ի նոյն սէր։ Եւ սմա յատուկ շնորհակալութիւն ևս, որ սեղանի գոգնոցին և մեծ վարագուրացուին լաւ օգնութիւն էր արարեալ՝ զորս հոգայր Յովսէփ վարդապետն։ Թուղթք ևս առ Գ իշխանս՝ որք ի Ղզլար, այսինքն առ պ. Գէօրկինն, պ. Եղիայն, և պ. Յօհանջանն, նոյնպէս շնորհակալութիւն վասն հարազատութեանցն և սիրոյն, և յատուկ շնորհակալութիւն, որք դրամս էին տուեալ ի յօգնութիւն գոգնոցին ի մասնակցիլ նմին։ Թուղթ առ պ. Գէօրկինն էստատեան, որ յայժմ ամի էր երեցփոխան ի Ղզլար. նոյնպէս շնորհակալութիւն վասն սիրոյն և հարազատութեանցն. որ իւր ձեռօք ողջոյն էր գրեալ սրբազան Վեհին ի Յովսէփ պետի թղթոջն վրացերէն։ Թուղթ ևս առ Յովհաննէսն և Մնացականն, որք վասն հոգւոյ հօրն իւրեանց նոր վախճանեալ Աբրահամին ոսկերչի զմէկ արծաթեայ սկիհ էին տուեալ ս. Աթոռոյ։ Օրհնութիւն։ Թուղթ ևս առ Ջիպուխլուեցի Յարութիւնի որդի Կարապետն, որ ի մասնակցութիւն ս. եկեղեցւոյս մերոյ սեանց նորոգմանն դրամ էր տուեալ. օրհնութիւն և շնորհակալութիւն։ Թուղթ առ Ահարցի և ի Ղզլար հանգուցեալ զաքկեար Մինասի կին Արզուն գրեցաւ, Վասն Ա ձեռք տանն, զոր այրն իւր ի ժամ վախճանին կտակեալ էր ս. Աթոռոյս, այնու պայմանաւ, զի որքան իւր կին Ներսէսի դուստր Արզուն կենդանի է՝ նստցի ի նմա, և յետ մահուան կնոջն ս. Աթոռոյս լիցի։ Եւ այսր աղագաւ կինն Ա գիր էր տուեալ. ի բերանոյն, հաստատելով զկտակ առն, և ինքն ևս զնոյն խոստանալով, զի յետ իւր մահուանն ս. Աթոռոյս լիցի։ Զի որպէս իմ այր Մինասն տուեալ է ասէ ս. Աթոռոյն, ես նորին կենակից Արզուս ես ետու։ Ուստի յետ մահուան իմոյ, մի ոք ի յընտանեաց կամ յօտարաց դաւի արասցէ այս

տանս, զի մեզ անյիշատակացս յիշատակ լիցի ի դուռն ս. Աթոռոյն Էջմիածնի։ Տան կողմունքն ևս էին գրեալ. որք էին, հիւսիսակողմն Փանոսի տունն, հարաւակողմն՝ քուչայ. Արևելից կողմն՝ Բէկլարի տունն. և արևմտից կողմն Սողոմօնի տունն։ Եւ բազումք զթուղթն ձեռագրեալ՝ Բ օրինակ էին արարեալ, զմինն աստ էին ՚յղեալ որպէս ասացաւ ի վերն, և զմինն անդ առ ս. Աթոռոյս գործակալսն թողեալ, զի ըստ ժամանակին այնու տիրեսցեն տանն։ Ուստի գրեաց սրբազան Վեհն օրհնութիւն և շնորհակալութիւն առ կինն. և պատուէր՝ զի հաստատուն պահեսցէ զխոստումն առն իւրոյ զարկար Մինասին, և իւր, զի ՚յիշատակ լիցի ինքեանցն միշտ։ Թուղթ ևս առ Ղըզլարցի Պօղոսի որդի հանգուցեալ Իսախանի կին Մարիամն, վասն կտակի առն իւրոյ, որ ի ժամ վախճանին՝ զտունն իւր և զայգին կտակեալ էր ս. Աթոռոյս։ Այսու պայմանաւ, զի որքան կինն կենդանի է նստցի՝ ի տանն, և զտունն և զայգին վայելեսցէ, և ՚յետ մահուան կնոջն, ս. Աթոռոյս լիցի։ Իսկ եթէ կինն առն երթիցէ, ապա բոլոր տունն և այգւոյ կէսն ս. Աթոռոյս լիցի, և կէս այգին կնոջն լիցի։ Զայս միջնորդութեամբ և ձեռամբ իւր խոստովանահայր Տէր Մարգարին էր կտակեալ, որոյ կտակագրի օրինակն ՚յղեալ էին աստ, զոր և ձեռագրեալ էին գիտակքն. իսկ զիսկականն տուեալ էր անդ Յովսէփ վարդապետն գործակալացն ս. Աթոռոյս, զի առ ինքեանս պահեալ՝ ըստ ժամանակին տիրեսցեն տանն և այգւոյն։ Իսկ զի կինն փոքր ինչ գժկամակեալ՝ կամեցեալ էր տալ զտունն ընտանեաց իւրոց, ուստի՝ Յովսէփ վարդապետն գրէր յորդորումն գրել նմա, զի հաստատուն պահեսցէ զկտակ առն զի ինքեանց յիշատակ լիցի։ Զոր և սրբազան Վեհն գրեաց յոյժ ՚յորդորմամբ։

Բ. Թուղթք ևս առ գործակալսն ս. Աթոռոյս՝ պ. Դանիէլն, և պ. Նուրիջանն, որք աշխատեալ էին ի վերոյգրեցեալ երկուց վախուպիցն, և էին յոյժ հարազատք ս. Աթոռոյս, և Յովսէփ վարդապետին ձեռընտուք անդէն ի Ղզլար։ Վասնորոյ՝ յոյժ օրհնութիւն և շնորհակալութիւն գրեցաւ երկուցն ևս, և պատուէր նոյնն միալ. և ամենայն արդեանց ս. Աթոռոյս և վախուպիցդ և ՚յիշատակացն հարազատօրէն մուղայէթ լինիլ։ Եւ Դանիէլին յատուկ շնորհակալութիւն ևս, որ ընդ իշխանաց քաղաքին կատարելով զհրաման սրբազան Վեհին, զհօրեղբօր որդի սրբազան Վեհին ազատ էին արարեալ յամենայն արքունական հարկաց։ Թուղթ ևս օրհնութեան և շնորհակալութեան առ Ղզլարու իշխանսն գրեցաւ, ի պատասխանի իւրեանց թղթոյն։ Որք որպէս ասացաւ ի վերդ, զհօրեղբօր որդի սրբազան Վեհին զԷլիազն՝ ազատ արարեալ յամենայն հարկաց, գրեալ էին սրբ. Վեհին։ Նաև շնորհակալութիւն դարձեալ և օրհնութիւն վասն առ ս. Աթոռոյս հարազատութեանց և սիրոյն, և պատուէր ի նոյն միալ։ Եւ վասն Էլիազին, զի արարեալ են նմա խնամս, նոյնպէս ի խնամ ունիցին միշտ։ Թուղթ ի Հաշտարխան՝ առ Շամախեցի Սարգիս Աղային, ոչ այլ ինչ այլ միայն սէր՝ և օրհնութիւն վասն հարազատութեանցն և մխիթարութիւն ևս, զի կոտր էր անկեալ։ Թուղթ ևս ի Մոսկով՝ առ Եղիազար Աղայն, որ ըստ խոստմանն իւրոյ՝ որ ասացաւ ի ՌՄԻԵ և յապրիլի ԺԹ թափեցուցեալ վասն ս. Աթոռոյս զմէկ ջուխտ մեծ և ազնիւ զանկակ, ՚յղեալ էր ի Հաշտարխան, զի անտի նաւու յղեսցեն ի Բաքու՝ և բերցի աստ։ Որում օրհնութիւն և շնորհակալութիւն յոյժ յոլով։ Նաև՝ մեծ վարագոյրն զոր Յովսէփ վարդապետն կարել տայր ի Ղզլար՝ որ ի վերն ՚յիշեցաւ, կամեցեալ էր սա իւրեան ևս առնել ՚յիշատակ տալով և ինքն զդրամս, ի զինս նորին, առ ի մասնակցիլ նմին. այսր աղագաւ ևս գրեաց զշնորհակալութիւն։ Նաև վասն սիրոյն և հարազատութեանցն որ ս. Աթոռս և առ ինքն, և լաւութեանցն՝ որ առ Յովսէփ վարդապետն։ Եւ խնդիր՝ միալ ինոյնս միշտ։ Որդւոցն իւրոց՝ Յովհաննէս՝ Մինաս և Յովակիմ աղայիցն, ողջոյն։ Թուղթ ևս առ ինքն Յովսէփ վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոցն որք ի վերն ՚յիշեցան իսկզբան բանիս։ Առ որ հասեալ էր այն թուղթն սրբազան Վեհին, որ գրեցաւ առ նա ի ՚յունվարի Դ համառօտ։ Զոր յիշէր ի ՚յետին թղթոջն, որ ի մարտի Ե էր գրեցեալ։ Եւ զայս գրէր նախ, թէ մեր Եսային դարձեալ ի Պետրպօլքու ի

Մոսկով, գրէ թէ՝ զքեզ բերելոց են ի մայիս ամսեանն ի Պետրբորգ՝ իւրեանց ծախուքն, զի օծանիցես զեկեղեցին։ Ուստի ասէ թէ՝ մինչև ցարդ չես ՚յղեալ յայսկոյսն զնոր նուիրակ, այլ մի՛ ՚յղել, մինչև տեսից թէ մեք տանեն զմեզ, և կամ. տանեն թէ ոչ։ Եւ երբ գրեցից, յայնժամ. ՚յղեա զնոր նուիրակն, զի ես եկից։ Գրեաց թէ՝ բարի է, եթէ տանելոց են զքեզ՝ կամ. տարեալ իսկ են, մեզ գրեալ ծանո։ Եւ գրէր թէ՝ յորժամ. Եսային աստ եկեսցէ, զնորին առեալ քսուրսն կամ ընդ ինքեան եմ. ՚յղելոց, և կամ ի վերայ Թիֆլիզու՝ ի ձեռն որիշ հաւատարիմ. մարդոյ շուտով։ Գրեաց թէ՝ որպէս և պատշաճն է՝ այնպէս արա։ Քանզի զու գիտես զտեղւոյդ և զճանապարհաց որպէսն։ Զաքտաւայ էր առեալ ի Տաղստանու, ըստ մեր գրեցելոյ, գրեաց զայն ևս շուտով ընդ Եսայուն, կամ. ընդ այլ հաւատարիմ. մարդկանց յղել շուտով։ Եւ թէ ահա զոր ինչ օրհնութեան թուղթս էիր խնդրեալ յայս Բ թղթոյս, զամէնն դրեալ առ քեզ ՚յղեցաք։ Նոյնպէս և վասն զանկակացն՝ Եղիազար Աղային և իւր որդւոցն գրեցաք զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան։ Իցէ թէ՝ ասէ մինչև ցարդ նաւու յղեալ իցես ի Բաքու զզանկակսն, որպէս խոստանաս։ Եւ զի գրէր թէ՝ Եղիազար աղային գրեա թէ՝ զամենայն որպէսն մեր ի Ցովսէփ վարդապետէն իմա, զի ի հարկէ տանելոց էք զնա յայդր վասն Օծման Պետրպօլքու եկեղեցւոյն։ Սրբազան Վեհն ևս այնպէս գրեալ նմա, սմա ծանոյց։ Եւ վասն վախուալ տանցն և այգւոյն Ղզլարու որք ի վերն ՚յիշեցան, օրհնութիւն և շնորհակալութիւն գրեաց նմա. և պատուիրեաց ջանալ՝ զի հաստատուն լիցին։ Եւ զի զՎարդան վարդապետն՝ որ էր սպասաւոր սորին, ըստ խնդրոյ ժողովրդեան Մոսկովու յղեալ էր անդ ի մէջ նոցա։ Իսկ այժմ. նոքա չթողուին, ասելով թէ՝ թող սրբազան Վեհն զսա մեզ բաշխեսցէ։ Քանզի մեզ խոստացեալ է ի վաղուցհետէ ըստ խնդրոյ մեր՝ ՚յղել աստ զքահանայ կամ յզաբեղայ, կամ. զսարկաւագ ոմն, թող զսա աստ թողուցու, սա մեզ բաւական է։ (Վասն ՚յիշեալ խոստմանն ասացեալ է յառաջ, իսկ Ցովսէփ վարդապետն կամէր զնա հանել անտի որպէս գրէր, և նոքա ո՛չ թողուին, և կամէին ևս թուղթ գրել առ սրբազան Վեհն, և իմանէ խնդրել։ Ուստի սա գրէր թէ՝ երկնչիմ. թէ եթէ զնա անտի հանցուք, նոքա զայլ ոմն խաբեբայ ճարեալ ՚յայլուստ պահեսցեն անդ, և ս. Աթոռոյդ խոչ լիցի, եթէ ո՛չ է ՚յոյժ ընդդէմ, շնորհեա զնա նոցա։ Բայց թէ շնորհելոց իցես, մերովս խնդրանօք շնորհելդ բարւոքագոյն է, քան թէ նոցին խնդրանօքն, իբրու ակամայ։ Գրեաց թէ դեռ ի նոցունց թուղթ ոչ է եկեալ առ մեզ. զու տես, թէ սիրով չթոյլատրեն, այլ պնդապէս ստիպեն, յայնժամ. վերստին մեզ գրեա։ Վասն Սարգիս Աղային ասէ որ մխիթարութեան թուղթ էիր խնդրեալ, ահա յղեցաք, տուր իւրեան և ի դիմաց մերոց մխիթարեա։ Բայց որպէս ՚յառաջ՝ որ ասացաւ ի մարտի Զ. նոյնպէս և այժմ. գրէր՝ գրել առ սոյն Սարգիս Աղայս վասն առ Ագուլեցի Ցովսէփն եղեալ Ցակոբ կաթուղիկոսի թամասուկին, զի առնուցու ի նմանէ։ Գրեաց թէ զայդ պատշաճ ո՛չ տեսաք գրել, որոյ զպատճառն դրեալ եմք ի մարտի Զ. զի շատ հետևելով զոչինչն ինչ առնեմք։ Վասն Սաղիմայ անդ գնացող նուիրակին որ յիշեցաւ ի մարտի Զ, գրէր թէ դեռ չերևի յայս կողմունքս. բայց գրեա, որ եպիսկոպոս չյղեն։ Գրեաց թէ առաջին եկօղն այլ չէ գալոց, լուաք թէ զաբեղայ են յղեալ, դեռ չիմացաք զհաւաստին։ Եւ Հալէպցի Աղթարմայ ոմն անդ ի դրունս Ռուսաց անկանելով կամէր առնուլ զդուստր Ղեոնդ Աղային, իսկ սա արգելոյր։ Գրեաց պնդապէս կանգնել և չթողուլ, զի մի՛ այլոց չար ճանապարհ լիցի ասէ։ Իսկ և զպատճառս ՚յետանալոյն այս թղթոցս գրեաց. որ էր յԵրևան ի Նաւռուզին շատ ՚յամիլն, (զոր և լաւապէս անցուցաք ասէ), և այլ շատ զբաղմունք և ուրիշ թղթագրութիւնք, և վերստին գնալն յԵրևան ըստ հրաւիրման խանին, վասն դստեր նշանգրէքին, և երկար մնալն անդ։ Եւ հիւանդանալն։ Եւ նա ինքն ևս հիւանդ էր լեալ, սփոփութիւն գրեաց։ Բայց կարճմտաբար գրէր թէ՝ ահա ՚յամենայն տեղիս նուիրակ ես յղեալ, ինձ չը գրեցեր թէ՝ զոր տեղի ես տալոց. զի զոնեայ ուրախանայի, թէև չգնայի, և զանունս գնացողացն խնդրէր գրել։ Զոր և

դրեաց, և փոքր ինչ սիրով յանդիմանեաց վասն այսպիսեաց կարճմտութեանց և սնոտի մտածմանց։ Այլև նոյն Ցարութիւն տղայն որ ի սկիզբն բանիցս յիշեցաւ, ունէր ի Ղզլար փեսայ Սարգիս անուամբ, որ էր Թիֆլիզեցի։ Որ ձեռամբ սորին աջահամբոյր էր յղեալ սրբազան Վեհին, և զտուրս ինչ ես վասն մասնակից լինելոյ նորոգութեան սեանց սրբոյ եկեղեցւոյն. իսկ սա գրէր թէ այսպէս է ասացեալ տղային, զի թէ տեսցէ աստ զպատշաճաւոր յիշատակ ինքեանց լինելի շինուածք իմն, կամ ի քարանց սեանցն, ես աւելի տացէ, զի մասնակցին հոգևոր յիշատակին։ Գրեաց թէ՝ զեռ աստ է տղայն, և յորժամ գայցէ յայդկոյս՝ կամ տայցէ ևս ինչ, գրելոց եմք առ փեսայն իւր զթուղթ օրհնութեան։ Եւ խնդրէր գրել Հերակլ Արքային, զի թողուցու նմա տանիլ զտունն իւր ի Թիֆլիզու ի Ղզլար։ Զոր խոստացաւ գրել։ Քանզի կամէր տղայն էրէց լինիլ ի Մօզդօք։ Այլ և Ջիպուխլուեցի Բայրամի որդի Մանուչար անուամբ տղայ մի գերի անկեալ ի վաղուց ի ձեռս լեկզեաց, այժմ փախուցեալ անցեալ էր ի Ղզլար։ Եւ տէր Նորին գնացեալ անդ՝ խնդրէր յենարալէն շնորհել ինքեան զգերին իւր, և նա հրամայեալ էր տանել։ Վասնորոյ՝ յոգոք անկեալ առ Ցովսէփ վարդապետն արք տեղւոյն, մանաւանդ՝ Ջիպուխլուեցիքն որք անդ, խնդրեալ էին ճար իմն առնել։ Եւ աղաչեալ էր զենարալն չտալ զնա լեկզւոյն. իսկ նա հրամայեալ էր լեկզւոյն դրամով ծախել զնա։ Եւ գին էին հատեալ նմա վեց թուման։ Իսկ ի չտալն ումեք դրամ, Ցովսէփ վարդապետն ի սոյն Ցարութիւն տղայէս՝ և ի սորին փեսայ Սարգսէն առեալ և տուեալ էր։ Որպէս զի՝ Ցարութիւնն եկեալ աստ ի Նորին հօրեղբայր Ջիպուխլուեցի Տէր Դաւթէն առնուցու, որովհետև աստ էր գալոց լեալ տղայն։ Եւ նոյն գերի Մանուչարն գիր էր գրեալ իւր հօրեղբայր Տէր Դաւթին զի զայն դրամս տացէ։ Բայց ոչ կնիք կայր ի վերայ այն թղթոյն, և ոչ ձեռք և վկայութիւն ուրուք, և ոչ զոնեայ Ցովսէփ վարդապետն էր ձեռք եդեալ, կամ գրեալ աստ ումեք։ Ուստի՝ ի գալն աստ Ցարութիւնին, Տէր Դաւիթ և այլ Ջիպուխլուեցիքն ոչ տային զդրամս՝ անկանելով յայլ և այլ կարծիս։ Եւ զայս ևս ասէին, թէ՝ դիցուք թէ մեք զայդ դրամդ տամք, իսկ մեր տղայն զայն երկիրն լաւ տեսանելով՝ եթէ չգայցէ, մեք ոչ փողի տէր լինիմք, և ոչ տղայի։ Եւ այսու բանիւք վիճելով՝ եկին ի դատաստան սրբազան Վեհին։ Եւ Ցարութիւնն ասէր թէ՝ Թող այս իմ բերած թղթոյս վրայ ձեռք դնեն, թէ մեք զայս փողս չետուք, ես անդ կարեմ պահել առ իս զայն տղայն, և առնել յաւիտենական ծառայ ըստ սովորութեան երկրին, որ այլ չկարիցէ անտի ելանել։ Ուստի՝ չիպուխլուեցիքն աղաչէին զսրբազան Վեհն դտանել զհնար ինչ։ Եւ սրբազան Վեհն զայն վեց ետ աստ այն տղային, և էառ գրերեալ զգիրն, յորոյ վերայ ձեռն դնել ետուք և կնիք և պահեցաք աստ, և զապզ ևս էառ, այսու պայմանաւ, զի թէ այն տղայն եկեսցէ աստ, չիպուխլուեցիքն և Տէր Դաւիթն տացեն մեզ աստ զայն դրամս։ Իսկ թէ անդ մնասցէ, ապա Ցովսէփ վարդապետն զայս դրամս անդ ի յայս տղայիս փեսայէն և ի սմանէ առնուցու, և իւրեանք զայն Մանուչար տղայն զի՞նչ և կամիցին, այնպէս արասցեն։ Եւ զայն զապզն յղեաց սրբազան Վեհն առ Ցովսէփ վարդապետն, և զայս իրակութիւնս նմա ծանոյց, և գրեաց, զի թէ գայցէ այն տղայն, հաւատարիմ մարդով զնա յղեսցէ աստ, և զայն զապզն ցուցցէ անդ նոյն տղային և իւր համշարի չիպուխլուեցւոյն, և դարձեալ առ ինքն պահեսցէ, մինչև եկեսցէ աստ այն տղայն և մեք զփողն աստ առեալ՝ գրեսցուք ինքեան, որ զայն զապզն տացէ նոցա։ Իսկ եթէ ոչ եկեսցէ, ապա՝ այն զապզն բաթալ լիցի, առնուցու անդ ի յայս Ցարութիւն տղայիս փեսայէն զմեր դրամս, և զայն զապզն տացէ նմա, և զայն տղայն որպէս կամիցի առնել, այնպէս արասցէ։ Եւ վասն սոյն բանիցս, Ա. գիր Ցարութիւնն գրեաց իւր փեսային և Ա. գիր ևս Տէր Դաւիթն գրեաց առ անդ եղեալ չիպուխլուեցիսն, զորս եդաք ի թղթոջ Ցովսէփ վարդապետին, տալ նոցա։ Զայս ամենայն եդեալ ի մի պահարան, պատրաստեցի յղել ի Հաշտարխան առ Ցովսէփ վարդապետն յապրիլ Լ.

Գ. Հաշտարխանու Նուիրակ եւ առաջնորդ Յովսէփ վարդապետի թղթոյ պակասն է.

Զայս ևս գրեաց ի թղթոջ Յովսէփ վարդապետին, (որ ի վերն յապրիլի ելն յիշեալ գոյ) թէ Ղզլարու իշխանքն մեզ գիր էին գրեալ ի պատասխանի մեր թղթոյն և մեր հօրեղբօր որդի Էլիազին զբաբերարութիւնս արարեալ, մեզ ծանուցեալ էին, և մեք շնորհակալութիւն գրեցաք նոցա, յղեա առ ինքեանս ի Ղզլար։ Փուսուլայ ես գրեաց առ սա, թէ այժմ ի մէջ հիւանդութեան էաք, վասն այսորիկ ոչ կարացաք ի ներքոյ թղթոյն ձեռք գնել ըստ տեղւոյդ սովորութեան. եթէ հետաքրքիր լիցի, ծանո զայս։

Փուսուլայ ևս դարձեալ գրեաց առ սա՝ յետ պահարանելոյ թղթոյն, և եդաւ յանկեան պահարանին։ Զի սևագլուխ ոմն Մովսէս անուամբ՝ եկն ի Սաղիմայ, որ էր Նախիջևանցի, և ի Հաշտարխան սնեալ, և ունէր անդ մայր՝ և զեղբայրս, զորս կամէր երթալ և տեսանել։ Եւ զի յոյժ աղքատ էր, գրեաց սմա ժողով առնել վասն նորա ծանուցմամբ, և յետ տեսանելոյ զընտանիսն, շուտով աստ յղել. քանզի՝ խօսք ետ մեզ՝ գալ և աստ մնալ։ Եւ ի մէջ ժողովրդեան մնալն ոչ է ասէ բարւոք։ Այլ և՝ այս սևագլուխս ի յԵրուսաղէմայ ընդ Հաջնեցի Սարդիս վարդապետին էր եկեալ՝ որ անդ Նուիրակ էր գնալոց, և մինչ նա ի Պօլիս էր մնացեալ, սա ի նմանէ որոշեալ՝ եկեալ էր աստ՝ զի աստի գնասցէ ի տես ընտանեացն։ Եւ ասաց ևս՝ թէ մինչ իշխանքն զՍարգիս պետն չթողին. գնալ ի Հաշտարխան, զՄարգար վարդապետ ոմն յղեցին, որ չէր եպիսկոպոս։ Զայս ծանոյց նմա։ Եւ ասաց զլիապէսն ի նմանէ իմանալ, քանզի և զորպէսն տեղւոյ վիճոյն՝ սա լաւ գիտէր, զոր իմանալ ասաց ի նմանէ։ Այլ և՝ Տէր Ղազարի գալն, և մեզ վէքիլ և աւագ երէց լինիլն սմա ևս ծանոյց, և ասաց այսուհետև զոր ինչ թուղթս և և այլ իրս ի վերայ Թիֆլիզու յղելոց լինի առ մեզ՝ ի ձեռն նորին յղեսցէ՝ զի նա առ մեզ հասուսցէ, յայլոց ձեռս մի՛ յղեսցէ։ Տէր Ղազարին ևս ասաց գրել նմա զայս։ Եւ զայն Մովսէս վարդապետն եդ ընդ նմա, և հրամայեաց ժողով առնել վասն նորա ի Թիֆլիզ, և յղել ի Հաշտարխան։ Եւ ինքն սրբազան Վեհն ևս ետ նմա ողորմութիւն վասն ծախուց ճանապարհին, և հանդերձ չափաւոր։ Ելին Տէր Ղազարն, Տէր Աստուածատուրն և Մովսէս վարդապետն ի մայիս ԺԴ.

Դ. Ի Հաշտարխան թուղթք, այլ եւ այլ դիտմամբք.

Ի Հաշտարխանու Նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետէն թուղթք ժամանեցին առ սրբազան Վեհն, յորս դրեալ էր զզանազան որպիսութիւնս։ Յորոց մի և գլխաւոր այս. զի վասն Վարգան վարդապետին որ դրեալ էր յԱռաջնորդ՝ թէ Մոսկովցիք խնդրեն, այժմ գրէր թէ ահա հարկեալ են զիս գրել առ քեզ՝ զի շնորհեսցես զնա ինքեանց՝ առ ի մնալ անդ միշտ։ Որոց զգիրն ևս առ ինքն էին գրեալ՝ յղեալ էր առ սրբազան Վեհն ի տեսանել։ Որք գրէին թէ՝ մեք յառաջ ևս եմք խնդրեալ ի սրբազան Վեհէն շնորհել մեզ ի ս. Աթոռոյս զգիտուն Աբեղայ մի, և նա խոստացեալ է մեզ զգիտուն սարկաւագ կամ զքահանայ ոմն առ մեզ յղել ի մնալ աստ։ Արդ՝ վարդապետս մեր յոյժ ընդունելի է, թող զսա մեզ շնորհեսցէ սրբազան Վեհն. զի չունիմք զգիտուն ոք, որ զմանկունս մեր վարժեսցէ որպէս զի տեղեկասցին գիտութեան, և զի քահանայացու ևս ի նոցանէ լիցի. զի ոչ զքահանայ ունիմք, և ոչ ուսուցիչ, զմեծ ամօթ կրեմք ի յազգացս ռուսաց, յորժամ հարցաքննութիւն ինչ լինի ընդ մեզ վասն հարկաւոր իրաց իրակութեանց կանոնականաց, մանաւանդ՝ յորժամ ի սինօթն նոցա մեզ ևս հարկ ինչ պատահի խօսիլ, կամ յորժամ հարցափորձ ոք լինի մեզ վասն գիտութեան գրոց։ Զմանկունս մեր չգոյ

ոք ուսուցանօղ, զի նախ զմեր գիրն և զուսումն ուսանիցին, և ապա զայլոց ազգաց։ Եւ այլ սոյնպիսի պատճառ առաղրէին։ Որք և հարկեալ էին զՅօվսէփ վարդապետն՝ դրել սրբազան Վեհին, զի հաճեսցի մնալ անդ Վարգան վարդապետին։ Ուստի և սրբազան Վեհն զԹուղթ գրեաց առ ժողովուրդսն Մօսկովու վասն այսր խնդրոյ իւրեանց, խօսելով ընդ նոսա առարկութեամբ, թէ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ և որդիք և թոռունք իւր ի հաստատելն զպէսպէս բարեկարգութիւնս յազգս մեր, հաստատեցին և զայս, զի կարգաւորքն Բ տեսակ լինիցին. մին տեսակն կանամբիք, որք ի մէջ աշխարհականաց մնալով՝ զնոսա հովուեսցեն և կառավարեսցեն, և մին տեսակն վանականք՝ կուսակրօնք և վեղարաւորք, որք ի վանս և յանապատս բնակիցին՝ հեռացեալք և հրաժարեալք յաշխարհէ և յաշխարհականաց։ Եւ այս կանօն մինչև ցայսօր տևեաց՝ և տևելոց է, զի հարկ է իւրաքանչիւրոց նոցին, զի յոր կոչումն կոչեցեալ են, ի նմին կայցեն։ Զի անպատեհ իսկ է՝ կանամբեացն ի վանս լինել, և կուսակրօնիցն ի մէջ յաշխարհականաց. զոր և փակեալ են կանոնիւք։ Որպէս ս. Գրիգոր Լուսաւորիչն ասէ թէ՝ ոչ հրամայեն կանոնք անապատականաց և վանականաց մկրտութիւն առնել, կամ օրէնս տալ ժողովրդեան, և կամ պսակ դնել, ի Ի գլխոյ կանօնաց իւրոց։ Նոյնպէս և սուրբն Կիւրեղ Աղէքսանդրացին ասէ ի մէկ գլխոյ կանօնին իւրոյ թէ՝ քահանայ որ կոյս իցէ և կամ այրի, և աշխարհի քահանայութիւն արասցէ, ընդ նզովիւք է ինքն և ընդունօղքն և այլք շատք ասէ, որք ոչ տան հրաման վանականաց ընդ աշխարհականս բնակիլ՝ և նոցա քահանայութիւն առնել։ Ուրեմն մտածեցէք լաւապէս ասէ՝ և զիրաւունս արարէք, նախ զայս թէ՝ զայս ոչ եթէ ես գրեմ, այլ նախնի սուրբքն։ Երկրորդ և զայս մտածեցէք զի մեք՝ որք գլուխ եմք գտանեցեալ՝ օրհնեցելոյ ազգիս, և հետևօղ հարցն սրբոց, պարտիմք կանօնաց նախնի սրբոցն ջատագով՝ հաստատիչ և պահօղ լինիլ, և ոչ աղարտիչ և խանգարիչ։ Իսկ դուք ստիպէք մեզ թէ՝ զմէկ աբեղայ տուր մեզ, որ ի մէջ մեր նստի, և մեզ քահանայութիւն առնէ։

Ուրեմն դուք ձեզէն արարէք զիրաւունս վասն այսր։ Դարձեալ՝ վեղարաւոր և վանական կարգաւորքն ևս Բ տեսակ են ասէ, զի ոմանք ոչ ախորժեն բնաւ ելանել ի մէջ ժողովրդոց ի գործ ինչ՝ նուիրակութեան, կամ Առաջնորդութեան, և յայլ սոյնպիսիս, այլ ի խցի նստիլ, աղօթից պարապիլ, և զոգիս շահել, որք և մեծագունի աստիճանի ևսոչ ցանկան։ Իսկ միւս տեսակն ցանկան այսպիսեաց, որպէս զի յօրէյօր ի մեծագոյն աստիճանս բարձրասցին, Նուիրակ. կամ Առաջնորդ լիցին, և երևելիք լիցին։ Եւ այս Բ տեսակք ևս գոն ի ս. Աթոռոջս։ Արդ՝ դուք զորն ի սոցունց խնդրէք ի մէնջ։ Թէ զայնս՝ որք ի խցի նստիլ սիրեն, նոքա որպէս ախորժեն ի մէջ աշխարհականաց բնակիլ։ Կամ որք մեծամեծ գործոց և փառաց ոչ ցանկանալով՝ ոչ ելանեն յաշխարհ, մասնաւոր գործոյ քահանայութեան և ընդ աշխարհականս բնակելոյ որպէս ցանկան։ Իսկ թէ յայնցանէ խնդրէք, որք ցանկան ի մեծագոյն գործս և ի բարձր աստիճանս ելանել յօրէ յօր, նոքա ևս որպէս թողուն զմեծագոյնն, և մասնաւոր գործոյ քահանայութեան ցանկան, և ի մէջ ձեր միշտ բնակին. զի վասն այնորիկ են եղեալ վարդապետ կամ աբեղայ, զի նուիրակ լիցին, առաջնորդ լիցին, զանուն ստասցին, ի մեծագոյն աստիճանս ելցեն, և փարթամասցին ևս ըստ մարմնոյ։ Ապա՝ ո՞վ ի սոցունց գալ յօժարի յայդր միայն վասն քահանայութեան։ Մտածեցէք և դուք ուրեմն ասէ, և զմեզ մի ընդ վայր մեղադրէք թէ՝ զԱբեղայ մի չունի որ մեզ տացէ։ Ահա շնորհօքն Աստուծոյ ունիմ ասէ. բայց այս Բ տեսակքն են՝ զորս ասացի, իսկ զոր դուք խնդրէք, չունիմ յիրաւի. որ լաւ գիտուն և հանճարեղ և պարկեշտ իցէ յամենայնի, և ցանկանայցէ յաշխարհի քահանայութիւն առնել։ Զի այնպիսին վասն այսորիկ է հրաժարեալ յաշխարհէ, զի ի վանք մտեալ պարկեշտ մնասցէ, իսկ եթէ յաշխարհի և ընդ կանայս մնալ յօժարէր, ընդէ՞ր և ինքն ոչ առնոյր կին։ Դարձեալ կանամբի կարգաւորք վասն այն ստհմանեցան աշխարհականաց քահանայութիւն առնել, զի ըստ Պօղոսի, որ փորձն առեալ է, կարօղ է փորձանաւորին օգնական լինիլ։ Զի նոքա կնատէր գոլով՝ գիտեն զորպի-

սութիւնս կնատեարց՝ անձամբ առնել զփորձն, ուստի և ցաւակցաբար զնոսա հոգալ՝ և ըստ ցաւոյն զդեղս հնարել նոքա են կարօղք։ Իսկ աբեղայն որ անփորձ է անտեղեակ է նոցին ոբլխութեանց, զիա՞րդ ցաւակցիլ և զդեղն հնարել կարէ։ Զի խոստովանաորդին որպէս համարձակի կուսակրօն աբեղային զմեղս իւր զամենայն խոստովանիլ, և նա ճրպէս լսել կարէ, և կամ հարցանել և ասել տալ։ Եթէ մտածիցէք ղայսոսիկ ասէ՝ զմեզ ոչ մեղադրէք։ Տեսէք ասէ թէ՝ մինչև ցարդ ճվ է արարեալ զայդ, զի ի կաթուղիկոսէն խնդրիցեն, թէ մէկ աբեղայ առաքեա, որ մեզ քահանայութիւն առնէ։ Որպէս ահա դուք արարեալ էք, դրելով առ մեր Յովսէփ վարդապետն՝ և մեզ դրեցուցանելով նմա։ Եթէ այլք արարեալ են ասէ, դուք ես արարէք, և եթէ ոչ ի զանց առնելն մեր՝ զմեզ մի մեղադրէք։ Գոնէ ասէ և զայս մտածեսցուք։ Դիցուք թէ զայդ աբեղայդ ձեզ ետու ըստ խնդրոց ձերոց. դորա վերջն զի՞նչ է լինելոց։ Զի որպէս ասացաք, յայնօրն յորում եդ դա ի մտի վանական և սեւագլուխ լինել, զմի յերկուցս եդ ի մտի, այսինքն կամ ի խցի նստիլ՝ և զհոգին կեցուցանել. և կամ յօրէ յօր ի բարձր աստիճանս ելանել և զանուն և զպատիւ ստանալ։ Արդ յայդր թողլով՝ յերկուցն ես զրկի, զի ոչ զհոգին կարէ կեցուցանել, և ոչ զանուն ստանալ և զպատիւ։ Այլ քան զքահանայս ես ողորմելի լինի և զուրկ, որպէս զցռուկն կապեալ եզն ի կալս։ Ուրեմն՝ թէպէտ դուք միամտօրէն խնդրէք ասէ, սակայն և ինքն եթէ յօժարի, անկարծիք զմին յայսցանէ ունի ի մտի այսինքն կամ զցռուկն լուծանել, և կամ ըստ ժամանակին ստիպել ղյայդրաբնակսն, թէ զիս եպիսկոպոս առնել տուք զի մնացից աստ։ Զի վասն այն է եղեալ ասէ աբեղայ՝ որ եպիսկոպոս լիցի։ Զի որպէս դուք այժմ միայն յայդր թողլն խնդրէք, յայնժամ ես ոյք և իցեն, ղեպիսկոպոսանալն խնդրեն։ Մտածելի է թէ որքան խռովութիւնք և գլխացաւութիւնք են ծնանելոց յայնմանէ։ Զի եպիսկոպոս մի յայդր, եպիսկոպոս մի ի Հաշտարխան, և եպիսկոպոս մի ես ի Պետրբօռք թէրևսնստուցեն, և սեւագլխաց բարքն յայտնի, և թշնամին խաղաղութեան արթուն և ի պատրաստի։ Աչքն լոյս ժամանակին կաթուղիկոսին, և ականջք ժողովրդեան ժամանակին ի բարին։ Քանզի քահանայ մի որ այնքան լըբացաւ, մինչ զի թարց պատճառաց զմեզ՝ (որք միշտ իյաբդի ունէաք զնա) այնքան անարգեաց անճոռնի վայրաբանութեամբ, զորս տէրն ծառային ոչ առնէ, որպէս և դուք դիտէք, մեք չկարացաք խօսիլ՝ զի դուք մի լինիցիք խաթրամնացն (զայս վասն Պետրբօռքու Տէր Յովհաննէսի լըբութեանցն ասէր, որ յիշեցեալ է յանցեալ ամին ի հոկտ. Լ ի թղթոջ սորին). ապա թէ սեւագլուխ և եպիսկոպոս բնակալեալ նստցի յայդր, յետ ժամանակաց ինչ՝ արդեօք զինչ իցէ առնելոց, կամ ի միտս իւր անցուցանէ արդեօք, թէ կաթուղիկոս գոյ թէ ոչ։ Եւ ճվ գիտէ ասէ թէ բացի յանհնազանդութենէն զորպիսի հաւատ և զկրօնս իմն բուսուցանէ՝ անահ յումեքէ։ Այսք ամենեքեան ասէ հաւաստի երեւին քննողաց, և ոչ են կարծեօք, որոց բնաւից պատճառն դուք էք լինելոց։ Եւ ի վերայ այսր և զայս թէ ժամանակին մի որ այդ երկիրդ ոստուցեալ էր յԱթոռոյս, գիտէք թէ յինչ կացութեան էր՝ առաջնորդով և ժողովրդովք, յայն ժամանակն ոչ գոյր այդպիսի առաջադրութիւն։ Մեք թէ զորքան ցաւս կրեցաք, զի ձերով օժանդակութեամբ յԱթոռս դարձուցաք, յուսալով՝ դի թէրեւս ապահով մնասցուք։ Այժմ տեսանեմք զայնպիսի դրունս բացեալ, որ քան զառաջինն վատթար է լինելոց և ի չլսելն մեր՝ դուք նեղասրտիք։ Իսկ թէ ասէք՝ ապա քահանայ չունիմք, ընդէ՞ր է, զի աղքատ գիւղ մի ունի ըստ բաւականին քահանայս, և դուք ոչ ունիք։ Կամ ի Հաշտարխանու ընդէ՞ր ոչ տանիք։ Եթէ ասէք տգէտք են, վասն մեղաց մերոց, յայս ժամանակիս ամենեքեան են տգէտք։ Բայց դուք զայդ յառաջ ես մինչ գրեցիք մեզ ասէ, մեք ձեզ գրեցաք թէ՝ զտղայս յղեցէք առ Մինաս վարդապետն ի Հաշտարխան, զի նա վասն ձեր զքահանայս վարժեսցէ։ Ընդէ՞ր ոչ յղեցիք։ Զի ես այնու մտօք զՄինաս և զՅովհաննէս վարդապետսն յայդկոյս յղեցի՝ զի դուք զտղայս յղիցէք առ նոսա, և նոքա վարժեսցեն զնոսա վասն ձեր, յայս Ժ տարիս ընդէ՞ր ոչ յղեցիք ասէ։

Գրեաց և զայս, թէ յայս երկրոջ ոչ գոյ բազմութիւն մերայնոց, և եղեալքն ես տաճկաց ծառայեն. թէ կամաւ, զի լաւապէս կեցցեն, և թէ ակամայ, և զոր ինչ մեք ի դպրատունս մեր ունիմք, Ю կամ Ծ, շատ դրամով եմք գնեալ, յորոց ևս ի քսանէն մէկն չմնայ յԱթոռոջս, զի ծնողքն տանին ի ցաւակցութիւն իւրեանց։ Բազմութիւն մերայնոցն յՕսմանցւոց երկրոջն է՝ և յայդր, դուք պարտիք զտղայս ձեր յուսումն տալ, զի վասն ձեր քահանայացուք լիցին, ապա թէ ոչ, ուստի է լինելոց։ Զի թէպէտ ուսուցանօղքն մեք եմք, այլ ուսանօղն ի ձէնջ պարտի լինիլ։ Իսկ աստ՝ ոչ քահանայացուաց միայն, այլև մերազնեաց մարդկանց կրեմք զսով, և եղեալքն ևս կան ի ծառայութեան, և ի մէջ անել վրշտաց։ Դուք ընդ իշխանութեամբ քրիստոնէից՝ և յապահովութեան, ՝ զմեր ցաւն ով գիտէ, և փոխանակ մխիթարելոյ, մեղադրէք ևս, իբր ի վերայ վիրաց աղ ցանելով։ Ապա վերջապէս զայս թէ՝ եթէ ինձ լսէք, զսևտգլուխ միշտ պահելն յամենայնի անօգուտ է և վտանգաւոր։ Հարկաւորն՝ և առաջին օրինաւոր պատասխանին իմ այս է։ Իսկ թէ ասիցէք, ահա ի ներկայումս ոչ քահանայ ունիմք, և ոչ վարժիչ քահանայացուաց, զինչ արասցուք, ապա և ես իբրու անճարացեալ և ի հարկէ բռնադատեցեալ, և մանաւանդ՝ վասն պատուոյ և խաթեր ձերոյ, իջանեմ ի յերկրորդն և իբրու ի կարելին. այսինքն՝ այսքան, զի զվարդապետն ձեզ բաշխեմ մնալ յայդր, ոչ միշտ, այլ ժամանակ ինչ՝ պայմանաւ, զի ի քանի ամս առ ձեզ պահեսջիք, զի զմանկունս ձեր ուսուսցէ, և զքահանայացուս վարժեսցէ, և ապա վերադարձցի ի ս. Աթոռս։ Զոր ահա Յովսէփ վարդապետին ևս գրեցի ասէ, և ձեզ ծանուցանելոց է, թէ որքան պարտի մնալ դա յայդր, և որպիսի պայմանաւ ձեռագիր պարտի տալ ձերով կնքով և գիտութեամբն՝ Բ հատ, զի մին յայդր մնասցէ վասն ապագայից տեսանելոյ և մին աստ։ Արդ՝ եթէ առաջին դրեալն ասէ խոչ թուիցի ձեզ, ապա զերկրորդն արարէք, և այդպէս վարեցարուք ժամանակ մի, թերևս յետոյ բարւոք իմն հնար ցուցցէ Աստուած, որ քան զմեր և քան զձեր գիտացեալն լաւ լինիցի։ Ահա ես այսքան կարացի ընտրել ասէ զմիջին շաւիղն, առ ի շահել զձեզ։ Իսկ դուք եթէ սմին ոչ հաւանիցիք, ապա՝ զոր ինչ հաճելի է ձեզ՝ զայն արասջիք, և զմեզ անմեղադիր արասջիք։ Սակայն՝ ես ասէ զայսքանս հարկ իմացեալ գրեցի ձեզ նախապէս, զի այս թուղթս առ ձեզ [մնասցէ, և զսորին օրինակն ևս ի ս. Աթոռս պահեցաք, որպէս զի յետագայք մեր որք աստ՝ կամ յայդր, տեսեալ զայս, զմեզ մի մեղադրիցեն։ Ապա գրեաց և զօրինակ ձեռագրի, զի Վարդան վարդապետն և Մոսկովցիքն գրեալ կնքեսցեն ըստ այսմ օրինակի Բ հատ՝ զի մին աստ մնասցէ, և մինն անդ։ Յորում յիշելով, թէ որպէս խնդրեցին իւրեանք ի սրբազան Վեհէն, և սրբազան Վեհն ևս ետ նոցա կանոնեալ ժամանակաւ։ Եւ պայման այսք, նախ՝ զի եօթն ամ մնասցէ անդ, և ոչ աւելի։ Երկրորդ, զի ի ս. Աթոռոջս յՄսչ կացութեան, յոր կրօնի, և յոր աստիճանի մնացեալ է, անդ ևս այնպէս մնասցէ։ Երրորդ՝ զի ի ս. Աթոռոջս որպէս ունեցեալ է զերկիւղ՝ զպատկառանս և զհնազանդութիւն առ սրբազան Վեհն, և անդ ևս առ իւր մեծաւոր Յովսէփ վարդապետն, զնոյն զերկիւղն, և զպատկառանսն՝ և հնազանդութիւնս միշտ ունիցի անդ ևս՝ առ ի ս. Աթոռս նստօղ Հայրապետսն, և առ ի Հաշտարխան նստօղ ի սրբոյ Աթոռոյս կարգեցեալ առաջնորդն և նուիրակն։ Նոյնպէս և զորգիական հարազատութիւն առ ս. Աթոռս և զհնազանդութիւնն և զօդտասիրութիւնն անփոփոխ մտօք պահեսցէ, որպէս ցարդ պահեալ է։ Եւ թէ շեղիցի յայսցանէ, և ոչ արասցէ լուծցի ի կարգէն, և ընդունօղքն ես լիցին յանցաւորք, և անկարգութեանց նորին կցորդք։ Զայս յղեաց առ Յովսէփ վարդապետն, և զթուղթ գրեաց առ նա վասն սոյն բանիս յատուկ, այնպէս, զի թէ դէպ լիցի։ Մոսկովցիքն ևս տեսցեն, համառօտելով նախ, թէ զինչ գրեացնոցա վասն իւրեանց խընդրոյն։ Եւ ապա պատուէր, զի թէ զպահելն զնա առ ինքեանս՝ չյօժարիցին, ապա վերոյգրեալ օրինակաւն ձեռագիր առցէ ի նոցունց Բ հատ, զի մին աստ յղեսցէ, և մին անդ մնասցէ, և այնու պայմանաւն թողցէ զՎարդան վարդապետն։ Եւ զոբպէս առնելն

[illegible] Ձերոյ կայսերական մեծութե, [illegible]

[illegible] Ձերոյ [illegible] մի [illegible] Ձերոյ կայսերական մեծութեան [illegible] Ձեր [illegible] Ձերոյ [illegible] Ձերոյ [illegible] Ձերոյ [illegible] Ձերոյ կայսերական մեծութե։

Ամենայօգոստափառ Թագաւոր Ամենաողորմած Տէր!

[illegible] դուք [illegible] Ձեր [illegible] Ձերոյ կայսերական մեծութե, [illegible] Ձերդ [illegible] դուք [illegible] Ձերում [illegible] Ձեզ [illegible] անձն Ձերոյ կայսերական մեծութեան։

[illegible] Ձերոյ կայսերական մեծութե, [illegible]

Ձերոյ կայսերական մեծութեանն

[illegible]

[illegible]

[illegible] 14 [illegible]
[illegible] 1800.
[illegible]

Ամենապատիւ Օգոստափառ կայսր և ինքնակալ

Ամենողորմած Տէր!

[illegible]

[illegible] Ձերոյ կայսերական Մեծութեան [illegible]

[illegible] կայսերական Մեծութեան [illegible]

[illegible] Ձերդ կայ- սերական Մեծութեան [illegible] Ձերդ կայսերական Մեծութեան [illegible]

գրեսցէ ինքեան։ Իսկ և զերիս օրհնութեան թուղթ առ Պօլկօմնիցայ Դարեջան խանումն, որոյ միակ դուստր Մարիամջանն վախճանեալ էր։ Ուստի՝ վասն հոգւոյ նորին տուեալ էր զմէկ գեղին զառ շտօֆ շուրջառ։ Օրհնութիւն և մխիթարութիւն, և յորդորումն ևս, զի զյատուկ յիշատակի մի շինեցուցեալ տացէ ս. Աթոռոյս, ի յիշատակ ինքեան, և առն իւրոյ հանգուցելոյ պօլկօմնիկ Թաղիբէկին, և հանգուցեալ դըստերն իւրոյ Մարիամջանին։

Թուղթ առ Գասպար տղայ ոմն, (որ դեռ չէր պսակեցեալ), որոյ մայր Շուշանն վախճանեալ էր, և սա տուեալ էր վասն հոգւոյ նորին՝ Ա եաղուտ մատանի, և զնորին դիպազարդն ևս, որ էր Ա սև զառ շտօֆ շուրջառ։ Սոյնպէս գրեաց և զթուղթ առ Եազունտի կինն, որոյ որդի Մովսէսն մեռեալ էր, և սա տուեալ էր զդիպազարդն նորին, որ էր Ա կարմիր խարայի ծածկոց սեղանոյ։ Գրեաց գարձեալ զթուղթ՝ առ Նոյն Հաշտարխանու Նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն։ Ի պատասխանի չորից թղթոց նորին, որք ի յունիսի Ի և Իէ, և ի յուլիսի ԻԵ գրեալ էին։ Առ որ յղեաց զվերոյգրեալ թուղթսն, զՄոսկովցւոց թուղթն բաց, զի ինքն ընթերցեալ կնքեսցէ՝ և յղեսցէ առ Նոսա։ Բայց թէ վասն եօթն ամացն տրտունջ արասցեն ասէ՝ թէ սակաւ է, դու Ժ ամ շինեա, և զձեռագիրն ևս այնպէս գրել տուր։ Եւ վասն վերոյիշեալ Պօլկովնիցայ Դարեջանին ինքն էր խնդրեալ զյորդորմունս գրել՝ ղի յանուն Նոր շինութեանցն ս. Աթոռոյս ղրան ինչ առնուցու։ Իսկ մեք զի գրեցաք Նմա յիշատակի տալ, ուստի, սմա ևս գրեաց, ղի թէ Նա զյիշատակին չտայցէ, ապա՝ յանուն Նոր շինութեանցն զքան ինչ յորդորեալ առնուցու։ Այլ և գրէր կսկծանօք զմահ եղբօրն իւրոյ Մովսէսին՝ (որ յայսմ ամի վախճանեցաւ ի Թիֆլիզ)։ Ուստի՝ գրեաց զմխիթարութիւն։ Եւ թուղթք սրբազան Վեհին՝ որք ի մարտի Զ և ի մայիսի ԺԴ գրեցան, հասեալ էին առ սա։ Եւ որպէս գրեալ էր յառաջ՝ զքսուրմն յղեալ էր ի վերայ Թիֆլիզու, որք և հասեալ էին անդ, զոր գրէին անտի, որ էր Ե թայ։ Յորս և Եսայուն գոյին ապրանք։ Եւ սա՝ զայն որ մերն էր՝ յուքոյն դաւթար էր արկեալ, և որք Եսայուն, ուրոյն։ Զորս և յղեալ էր առ սրբազան Վեհն։ Եւ գրէր թէ՝ զինչ և պիտոյ լիցի ձեզ, ի յԵսայու ընչիցն վեր առէք, և ի տեղի տալեացն հաշուեցէք, և թէ իցէ ինչ՝ որ չիցէ ձեզ հաւանելի յայնցանէ՝ զորս վասն ձեր եմք առեալ, զայնս ի վերայ Եսայուն արկէք։ Եւ վասն Եսայուն գրէր թէ՝ ծովով է գալոց, և զզանկական ևս ընդ ինքեան բերելոց։ Գրեաց թէ՝ դեռ քսուրն ի Թիֆլիզ է, և այդ դրեալքդ ի գալն Եսայուն լինին հոգացեալք։ Եւ մահտեսի Յակոբջան ոմն Թիֆլիզեցի, Ֆրանկստանու եղեալ, ուխտեալ էր առաջի սորա՝ գալ յայսկոյս, և յԱնապատ մտանել։ Եւ զամենայն կայսն իւր սորտ ձեռօքն կտակեալ էր՝ և բաժին արարեալ ս. Աթոռոյս, և այլ վանօրէից։ Եւ սա առաջադրեալ էր Նմա ի ս. Աթոռոջս մնալ, իսկ Նա յամբոխէ փախչելով, զԱնապատն էր խնդրեալ, և ղՍեան էր Նմա առաջադրեալ գալ և մտանել անդ։ Եւ Նա հաւանեալ՝ գալոց էր ընդ Եսայուն։ Ուստի զյանձնագրութիւն գրէր։ Գրեաց թէ՝ երբ եկեսցէ՝ տեսցուք։ Եւ շնորհակալութիւն վասն ղյիշատակիսն բազմացուցանելոյ օրըստ օրէ։ Որպէս և այժմ ևս, որ ասացաւ ի վերն։ Այլ և Ակուլեցի և Նուխի բնակեալ Ստեփան ոմն անդ վախճանեալ էր։ Յորոյ կողմանէն, թէ վասն ս. Աթոռոյս, (Է) և թէ վասն առաջնորդի (Ա) առեալ էր զբաժին հոգւոյ։ Ուստի՝ խնդրէր դրել զթուղթ օրհնութեան և մխիթարութեան առ Նորին եղբայր մահտեսի Առաքելն ի Նուխի։ Եւ սրբազան Վեհն խոստացաւ գրել յետոյ։ Այլ յետոյ դնացող դիպեցաւ գրեաց։ (տես յետոյ յամսոյս ԻԱ)։ Զոր ծանոյց սմա թէ յղեցաք ի Գանձասար անդ հասուցանել։ Եւ որպէս յառաջ դրեալ էր սա բանս վասն Բեարուլու ժողովրդեանն և սրբազան Վեհն հրամայեաց սմա զքահանայս ճարել և առ Նոսա յղել, այժմ սա զերկուս քահանայս էր յղեալ անդ։ Մին կանամբի, և միւնն այրի։ Որոց և Լ թուման փող էր տուեալ՝ ժողովեալ ի քաղաքէն պայմանեալ, զի երիս անդ մնասցեն, և որքան անդ իցեն, ի Հաշտարխան ևս զիւրեանց քահանայական իրաւանց բաժինն տացեն ի տուն իւրեանց։ Եւ անդ զտիրացու մի ունէին Նոքա անպսակ, պատուիրեալ էր զնա պսակել, և տղայս ես

ուսուցանելը։ Նւյնտ Դ ամացն կանամբի քահանայն առ նա բերցէ զնա ի Հաշտարխան՝ զի անդ քահանայ ձեռնադրեցեալ՝ յետս դարձցի անդ առ նոսա ի Բեարուլ, և քահանայութիւն արասցէ, ապա այրի էրէցն ևս դարձցի։ Բայց թէ հաճեսցի ընդ տեղին այն և ժողովուրդն՝ մնալ առ նոսա, ապա՝ զթուղթ վկայական ի նոցանէ առեալ, ընդ Պարսից երկիրն ի ս. Աթոռս եկեսցէ, և եպիսկոպոս ձեռնադրեցեալ՝ դարձցի առ նոսա և հովուեսցէ։ Զայս շտապով այսպէս հոգացեալ և յղեալ էր զքահանայսն, քանզի, բողոքէին նոքա միշտ վասն քահանայի զովոք որ տեսանէին ի մերձակայից ի կողմունսն Բուշարու, և նոքա եկեալ աստ և անդ պատմէին մանաւանդ ի Հաշտարխան։ Ուստի՝ փռանկ պատրիքն որք անդ գըրեալ էին յերկիրն հնդկաց ի Շահջհանապատ, զի պատրիք երթիցեն անդ։ Վասնորոյ շուտով յղեալ էր զքահանայսն անդ ծովու։ Պատուիրեալ էր ևս նոցա զի ի Շահջհանապատ ևս երթեալ՝ հաղորդեսցեն զանդ եղեալ հայսն, որք էին զինուորք թագաւորին որ անդ։ Եւ սրբազան Վեհն ղրեաց այսց ամենից զհաւանութիւն և պատուիրեաց, զի որքան անդ է, զգիրն ի նոցունց մի պակասեցուսցէ, և զորպէսն նոցին իմացեալ՝ գրեսցէ ինքեան, և յորդորեսցէ զնոսա կալ արի և ժիր ի յառաջադրեալ պաշտօնն իւրեանց։ Իսկ և՝ վասն զինքն ի Պետրբօռք տանելոյն տեղականացն, գրէր թէ կամին, զի իմ ծախուքն գնացից, բայց յուսադրեն թէ մեք զքեզ կրկնապատիկ։ եմք շահելոց։ Զայս Եղիազար Աղայի որդի Յովակիմն և Մինասն էին գրեալ նմա, զորոյ զթղթոց օրինակն յղեալ էր աստ առ սրբազան Վեհն։ Եւ գրէր թէ՝ եթէ Եղիազար աղայն և Աղայ Յովհաննէսն ևս գրեսցեն, ապա երթալոց եմ, և թէ ոչ, չեմ երթալոց։ Գրէր և զօգուտսն, թէ արդեամբք և թէ պատուով և փառօք, որք լինելոց էին ի Պետրբօռք և ի Մոսկով, զի Պետրբօռք զեկեղեցի էր օծանելոց, և ի Մոսկով զնոր եկեղեցի հիմնարկելոց։ Գրեաց թէ՝ որպէս գրես՝ այգպէս արա։ Իսկ վասն նուիրակի և առաջնորդի ստիպէր փութով յղել, գրեաց թէ՝ գեռ դու չես հաստատեալ զմիտսդ, թէ դալոց ես, թէ ոչ, երբ բանդ ի մի կողմն անկցի, զի կամ ի վերն գնասցես և կամ գալոյ լինիս աստ, յայնժամ ծանո մեզ, և որպէս պատշաճ իցէ, այնպէս արասցուք։ Այլ և՝ վասն Զիբուխլուեցի գերւոյ բանին՝ որ գրեցաք առ սա ի մայիսի ԺԴ, կամ զգերին յղել աստ, զի ի տէր Դաւթէն մեք զփողն առնուցումք աստ (Զ) և կամ թէ գերին չգայցէ՝ ինքն անդ ի Յուսիկ Յարութիւնի փեսայ Սարգսէն առնուցու, սա այժըմ զկարճ բան իմն գրէր, և չցուցանէր թէ՝ զինչ է հոգացեալ վասն այսր։ Վասն որոյ հարկեաց սմա, զի կամ զգիրն յղեսցէ, և կամ զդրամն առնուցու ի Սարգսէն։ Զհնոտի քեաթանասէր ժողովեալ Գ բեռնաչափ զոր Եսայուն յղել խոստանայր թղթատանն, գրեաց զշնորհակալութիւնս։ Գիլանու Գաւիթ Աղայի որդին ի Պետրբօռք մեռեալ էր, որոյ անունն էր Մովսէս, գրէր մխիթարութիւն գրել առ հայրն։ Խոստացաւ գրել։ Եպիսկոպոսն տեղւոյն՝ (առ որ գրեցեալ է թուղթ յանցեալ ամին ի հոկ. Լ) ընդ սմա ոչ բարւոք վարիւր, բայց դրեալ էր զպատասխանի թղթոյ սրբազան Վեհին շողոքորդական իմն ոճիւ։ Ուստի՝ սա գրէր պատասխանեալ նմա ըստ արժանւոյն, առ այս սրբազան Վեհն գրեաց թէ՝ այժմ չգրեցաք, զի չունէաք հարկաւոր գրելի նմա, և ի նորին թղթոջն ևս չգոյր ինչ հարկաւոր։ Այլև՝ Ջուղայեցի Փիլիպպոս էրէցն՝ որ յառաջ ի Մօսկով լինէր վասն վիճոյ և դատապարտութեան իւրեք ի դատաստանի, գնացեալ էր առ սոյն ասացեալ Անտօնիէ եպիսկոպոս Ռուսաց և ուսացեալ։ Յորոյ կողմանէ գրէր սա թէ՝ Ջուղայեցի Տէր Յովհաննէսի որդի Ստեփանին վրայ դրամ ունի, (Մ) գրեմ զի թէ նա խնդրեսցէ, մի տայցէ՝ մինչև եկից, զի մեզ հասանի իրաւամբ։ Խոստացաւ այնպէս առնել։ Խնդրեալ էր յղել զՊարսից և Օսմանցւոց թագաւորաց ռաղամսն և զֆարմանսն, զորս վասն գիւմրուկի՝ և ճանապարհի երթևեկաց տուեալ են, զի ցուցցէ ի դրան թագաւորին ի գնալն անդ, և ի նմանէ ևս առնուցու, գրեաց թէ՝ զիսկսն ոչ կարեմք յղել, իսկ զօրինակսն թէ յղեմք, թերևս չհաւատայցեն։ Դու զոր ինչ հարկաւորն է, գիտես, ասա, եթէ գիտես լսեն և հոգան։ Եւ թէ ոչ, աստ թուղթ յղելն ևս չառնէ ինչ

շահ։ Այլ և Գանձասարու անդ եղեալ գանձանակին, գրէր թէ՝ Ժ թումանի շալ և այլ ինչ առեալ և յղեալ եմ, իսկ մնացեալսն չկարացի առնուլ, զի կոար անկան գանձապետքն, որք են որդիք Ղեոնդ Աղային։ Այլ այժմ Յովհաննէս կաթուղիկոսն զաղաչանս էր դրեալ առ սրբազան Վեհն դրել Յովսէփ վարդապետին և Ղեոնդի որդի Միխայէլ Աղային, զի տացէ զգրամն գանձանակի, և Յովսէփ վարդապետն առ ինքն յղեսցէ։ Եւ սրբազան Վեհն առ Միխայէլ թուղթ ոչ դրեալ՝ Յովսէփ վարդապետին միայն գրեաց, հոգ տանիլ վասն այն դրամոցն, և առնուլ, և յղել առ Յովհաննէս կաթուղիկոսն ի Գանձասար։ Նոյնպէս և մեք այլ արդիւնք Գանձասարու զոր ինչ և գացի, առնուլ և յղել առ նա ի Գանձասար։ Զայս ամենայն մի պահարան շինեալ գրեցաք ի ձեռն Յովսէփ վարդապետին, զոր և յղեցաք առ ս. Աթոռոյս նոր վէքիլ Տէր Ղազարն ի Թիֆլիզ։ Եւ գրեաց զթուղթ առ նոյն Տէր Ղազարն ի Թիֆլիզ, ի պատասխանի ի հոկտ. ԻԹ գրեալ թղթոյն, զոր ընդ իւր եղբայր Աղալօյին էր յղեալ։ Պատուէր նա՝ զի զթուղթսն Հաշտարխանու նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետին՝ շուտով և հաւատարմաւ յղեսցէ առ նա ի Հաշտարխան։ Այլ և բեռինքն որք ի Հաշտարխանու եկեալ էին, (որք ի վերն ի թղթոջ Յովսէփ վարդապետին յիշեցան), սա ես էր դրեալ զորպիսութեանց նոցին։ Քանզի Յովսէփ վարդապետն սմա ևս էր գրեալ, և սա մեզ գրէր։ Գրեաց թէ՝ մեզ յոյժ հարկաւորք և պիտանիք էին այդ իրքդ, վասն այն եմք խնդրեալ, դուք ընդ վայր էք պահեալ յայդր մինչև ցարդ։ Եւ հարկ՝ զի յղեսցեն յԵրևան իւրեանց անուամբ առ Զաղարտենց Ստեփաննն, ընդ հաւատարիմ եկողաց զի և նա մեզ հասուսցէ։ Այլ և խնդրեալ էր սա բերանով եղբօրն վերոյիշելոյ զի զկոնդակ իմն տացէ վասն ժողով առնելոյ զի զՎանքի եկեղեցւոյ պարիսպն լայնացուսցեն։ Իսկ սրբազան Վեհն բացասեաց, թէ մեզ անյարմար և անպատշաճ համարեցաք, դուք զոր ինչ կամիք, արարէք։ Զոր և եղբօրն բերանով ասաց նմա ասել. և աստ այսքան անորոշակի, թէ ընդ եղբօրդ ապսպարեալն մեզ անյարմար էր՝ և անպատշաճ, վասն այն բաց ասացաք։ Այլ և Ինկլիզ Վարլիզ վարպետքն որք ի յուլիսի ԻԹ ի Թիֆլիզ գնացին, անդ յոյժ սիրեցեալ էին Արքային. զի զբազում անծանօթ բանս և զարհեստս անդ յառաջացուցեալ էին։ Եւ զի աստ ի մէջ խօսից ասացեալ եղև նոցա, որ Գրիգոր աղայն ի Հնդկաց զԻԸ հատ գիրս էր յղեալ, որ զամենայն ազատական և ծառայական արհեստից զկերպն և զորպէսն ուսուցանէր, գրեալ էին այժմ նոքա, և Տէր Ղազարին ևս գրեցուցանել զի զայն հատորն, յորում է արհեստն թղթաշինութեան, յղեսցուք անդ առ ինքեանս, զի թարգմանեսցեն։ Իսկ մեք զայլև այլս կարծեալ՝ թէ գուցէ Վրացւոց դրդմամբն իցէ, և զմիւս հատորսն ևս խնդրեսցեն, վասնորոյ զայն ոչ յղեցաք։ Այլ Գրիգոր Աղայն որիշ թուղթս ևս էր յղեալ յառաջագոյն որք միայն զթղթատան արհեստն ուսուցանէին, այժմ զայնս յղեաց կնքով առ սոյն Տէր Ղազարս, գրելով թէ՝ հատորն անձեռնհաս տեղւոջ գոլով, չյղեցաք այժմ, այլ զայդոսիկ ևս ի Ֆռանկստանու էաք բերել տուեալ։ Զորս ահա յղեցաք, զորս ի պէտս մեր թղթատան և տպագրատանն էաք բերել տուեալ, որք են ԻԳ թուղթ և ԽԸ երես, յոր գոն ԺԳ պատկերք, որք ցուցանեն զկերպս թղթաշինութեան և այլոց։ Դու զայդ ասէ տուր իւրեանց, և մուղայէթ լեր լաւապէս թարգմանել տալ, և յորժամ գերծցին, թէ ինքեանք շուտով եկեսցեն աստ, ընդ իւրեանս բերցեն, և թէ ոչ, դու զհեղինակն, և թէ զթարգմանեալն, առ ի նոցանէ, և աստ յղեա. զգոյշ լեր՝ զհեղինակն առ նոսա մի թողուցուս յետ աւարտմանն։ Եւ Տէր Պետրոսին ևս ասէ ողջոյն տուր զմէնջ, և ասա, զի լաւ հետևելով թարգմանեսցէ անսխալ։ Ինկլիզացն ևս գիր գրեալ վասն այսր սմա ծանոյց։

II

Ա. Թուղթ Պլատոն արքեպիսկոպոսին Մոսկովու առ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան.

Խոնարհ Պլատոն, ողորմութեամբն Աստուծոյ մեծի մայրաքաղաքի Մոսկովու և Կալուգու արքեպիսկոպոս, սրբոյ երրորդութեան Սարգիսեան վանացն սրբանուէր արքիմանդրիտ և սրբազնագունի կառավարիչ սինօդին ամենայն Ռուսաց զահակալ վեհապատուելագունեղի տեառն Սիմէօնի ամենայն հայոց գլխաւորագոյն հովուի և հօրն, զշնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զհազոր. սրբոյ Հոգոյն և զբարեկեցութիւն ըստ ներքին և արտաքին մարդոյ աղօթիւք հայցէ Սրբութեանդ ձերոյ. ընդ արժանապատիւ պարոն արքեպիսկոպոս Յովսէփիւ առ յիս առաքեցեալ յարգոյական զԹուղթ ընկալայ ես և գոհացայ զհովուապետէն Քրիստոսէ զի ներգործութեամբ շնորհաց իւրոց յարդարեաց զսրբութիւնն ձեր սիրով առ յիս, այս է գլխաւորագոյն պատուէր աւետարանական օրինի զի սիրեսցուք զմիմեանս և զի թէ ամենայն քրիստոնեայք պարտին այսու սրբական շաղկապաւն լինել միացեալ, որքան առաւել ևս նոքա որոց գլուխն եկեղեցոյ Քրիստոս յանձնեաց զհովուութիւն հօտին իւրոյ, պարտին այսու առաքինութեամբ յատկացեալ գոլ և այլոց ցուցանել զարժանաւոր հետաքօտման զօրինակ. վասն որոյ յօրինակ այնու իսկ պատուիրանի Փրկչին մերոյ ի համապատասխանատութեան բարոյ սահմանի ձերոյ մտաց, զձեզ հաւաստի հեռացեալդ իբր զմօտաւորս քրիստոնէական ընդգրկեմ սիրով և սրբութեանդ ձերում ի Քրիստոս զհամբոյր իմոյ յայսմիկ առ յանձն ձեր բարեմիտ յօժարութիւն կարէ հաստատել. պատուելագոյն պրն. արքեպիսկոպոս Յովսէփն զոր ես բազմիցս տեսանելով և ընդ նմա համակցորդ լինելով ՚ւսի զն՚ս համապատասխանատու ձերոյ զնմանէ յուսոյն և զի նա ի սրբութենէ ձերմէ նմա յանձնեալ սպասաւորութիւն լցուցանելոց է ի գովեստ և ի պատիւ բոլոր ձերոյ հասարակութեան. ընկալ արժանապատուելագոյն տէր զայս ստորագրութիւն իմոյ յառնէ իբր յայնմանէ որ զինքեան պարտաւոր համարէ գոլ բաբեհայեցող և բարեմիտ ևս և առ այնոսիկ որք ընդ մեզ բարի մարդկութիւն զայլ ոչ ինչ ունին զհաւաստրս ցորքան առաւել առ այնպիսի անձն որպիսի է ձերդ հովութեամբն քրիստոսական եկեղեցւոյ պատուեալ և առ հայկազեանն ազգ որ բացի հռչակաւոր կոչման քրիստոնէութեան ես և համբաւով արիութեան և բարւոյ կառավարութեան ծաղկիւր ի յառաջին ժամանակս. քանզի յայտնի իսկ է ինձ թէ որքան երևելիք են ի պատմութեան անուանք Հայկայ, Տիգրանայ, Արշակայ և Տրդատայ, հիմնադրողաց և հռչակողացն զՀայաստան, որքան առաւել զայնցանէ ծաղկեալ ժամանակացն Հայաստանեաց խոկամ այնքան առաւելապէս

սակս այժմ ժամանակեայ ծառայացեալ կացութեանն նորին ի բարբարոսաց ցաւակցութեամբ համարիմ. ճանապարհք Տեառն անգիտելի են և ամենայն գործք նորա իրաւամբ. բայց մինչ ընդ իրաւանց նորա զոն և անընդհատ բարութիւնք վասն այն ես իբր քրիստոնեայ ի սրտէ հայցեմ և մաղթեմ զգորովագթութիւնն Աստուծոյ զի թեթևացուսցէ և բարձցէ զայս նեղութիւն ոլ զձեզ ի նանիր ծանրացուցանէ և զի հայկազունեացն ազգաց դարձուսցէ ի յառաջին փառսըն և նեղեալ քրիստոնէութիւնն իսկ ազատութեամբն ուրախացուսցէ: Արդ մինչև հաճեսցի նա յայտնել զայս բարեբախտ վիճակ զօրաւիգ ընդդէմ ուժգնակի վասն ձեր փորձութեան իմաստնախոհ համբերութեամբ և ջերմ աղօթիւք առ Աստուած և ի ձերումդ հովուական յանձին ցուցէք այլոց իսկ օրինակ բարեհոգութեան ի յայլն զմաերմական վերապատուութիւնս և զհայցուածս ձերումդ սրբութեան մատուցանելով, որպէս զի հաստատեսցէ նա զողջութիւն ձեր առ բարեմտաբար կրուճն աւետարանական բեռին, յարաճեամ բարեկամական և եղբայրական սիրով ի Քրիստոս սրբութեանդ ձեբում, յայնմանէ բարեկամեցող և մտերմագոյն եղբայր և ծառայ

Պլատոն արքեպիսկոպոս Մոսկովու

1779 թուին ապրիլ ամսոյ 10 յարքայանիստ քաղաքն Մոսկով:

Բ. Ի Մոսկովու ի Յովսէփ արքեպիսկոպոսէ Արղութեան առ սրբազան Սամուէլ արքեպիսկոպոսն.

Վսեմափառ եւ գերյարգոյ տեառն ամենապատիւ Սամուէլ սրբազան արհի եպիսկոպոսիդ Ռաստովու եւ գահակալի սրբազնագունեղ կառավարիչ սինօդին Քրիստոսաւանդ ողջոյն եւ սէր,

Վարդապետութիւն Փրկչին մերոյ հարկադրէ մեզ աշակերտելոցս ինքեան այնու յատկանալ յայլոց խառնիճաղանջ և անկրօն ազգաց որով ինքն երևեցաւ յաշխարհի այսինքն սիրով, վասնորոյ ասէ այսու ծանիցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք եթէ սիրիցէք զմիմեանս. զսոյն փրկչաւանդ պատուէրս առաւելապէս էլից սրբութիւնն ձեր խնամելով զմեզ մարդասիրութեամբ, և ողջախոհ դատողութեամբ իբրև ղ·մնգամ գլխոյն Քրիստոսի ընկալնելով ի սէր հայրութեանդ, վասնորոյ պարտաւորեալ մեզ անարգամեծար շնորհի քո հարկաւորեցաք զխոնարհական շնորհակալութիւնս մեր ի հեռուստ աստի գրով արձանացուցանել առաջի սրբութեանն քո զի գիտասցես թէ այնչափ գոհունակութիւն ունիմ ի սուրբ սիրոյդ և ի մաքուր մտացդ զոր ցուցեր առ անարժանութիւնս մեր. խնդրեմ ի Տեառնէ բազմապատիկ հատուցանել քեզ փոխարէնն այդ ճշմարիտ սիրոյդ յորժամ գայցէ փառաւոր առնել զսիրելիս իւր. և հայցեմ յաննուազ շնորհացդ և աստ արձակեսցես զշառաւիղս. գիտեմ հաւաստի զի ցանկաս լսել զորպիսութիւն մեր, չկամելով ձանձրութիւն տալ լսելեաց սրբութեան քում, վասնորոյ գրեցի ազնուոյն մերս Մինաս Լազրիչին և Եգիմ (Յովակիմ). Լազրիչին ծանուցանել վեհանձնութեանդ թէ որպիսի սիրով ընկալաւ պայծառափայլ քնեազ Գրիգ. Ալէքսանդրիչ Պոտեմկինն ըստ նախագուշակ մարգարէութեամբ սրբազնութեանդ, ընդ նմին և սրբազնագունեղ արհի եպիսկոպոսունքն զորս վարձատրեալ տէր ընդ երկայն աւուրս պահեսցէ. որ և ճեամ սրբութեանն քում յամենայօժար սրտէ բարեկամ և ծառայ

Յովսէփ արքեպիսկոպոս հայոց Արղութեան

1779 յօգոստոսի 11

ի Սանկտ Պետրբուրգ:

Գ. Թուղթ Սամուէլ արքեպիսկոպոսին Ռոստովու առ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան.

Սրբազնազունեղ Տէր,

Տէրամբ Քրիստոսիւ սիրական եղբայր։

Սրբազնութեան ձերոյ եղբայրական սիրով և բարեկամութեամբ առաքեցեալ գիր ընկալայ ես իւրում ժամանակի ստոյգ բաւականութեամբ և գոհունակութեամբ փոխաբերաբար պարտաւորութեան սիրոյ իմոյ և վերապատուութեամբ որ առ ձեզ. ի վաղուց պահանջ էր յինէն հաւաստել զձեզ զանքակտելի մտերմութենէ իմմէ զոր առ ձեզ. բայց հիւանդութիւնք մեր յարաժամ ծանրացուցինք իմոյ մինչև ցայժմ ոչ ետուն թոյլ առ հասուցանել բաղձանաց իմոց. սրբազնութեանն ձեր հիմնաւորէ, կամ զնէ զբարեկամութիւնն իւր ընդ յիս ի վերայ սիրոյ քրիստոնէականի. բայց մինչ նա ոչ ի յարտաքինսն այլ ի ներքինսն սահմանս սրտի և հոգւոյ գտանի. ուրեմն ըստ այսմ, խնդրեմ չպահանջել յինէն որ ես այսքան երկար ժամանակ սրբութեանդ ձերում գոհութիւնս իմ գրով ոչ յայտնեցի. ես զձեզ հանապազ ընդգրկեմ սրտիւ և հոգով և ոչ երկմտիմ թէ դուք հաւատայք յայսմ վասն զի քրիստոնէական սէր ըստ առաքելոյն զհաւատս բոլոր զգուէ կամ ունի և կամ բովանդակի. Հայկական պատմութիւն ի յինքեան պարունակօղ զմատեան ընկալայ ես զգայակցորգ գոհութեամբ և պահպանեմ զայն առ յիս միշտ ճշմարիտ գրաւ սիրոյ և բարեկամութեան ձերոյ որ առ յիս. և զի շնորհն Աստուածային արժանացուսցէ զիս փութանակի ցուցանել ձեզ յայտ յանդիման զիմն մտերմութիւն և զսէր, որով միշտ մնամ և եմ

Սրբութեանդ ձերումի Քրիստոս Տէրն սիրելոյ եղբօրդ զամենայն բարիս հաւատարիմ հայցող եղբայր և ծառայ

Սամուէլ արքեպիսկոպոս Ռոստովու

Յամի Տեառն 1779
դեկտեմբերի 10
ի Մոսկով։

III

Վրաց Հերակլ արքայի հրովարտակը Արղության տոհմի ազգաբանության մասին.

Ողորմութեամբն Աստուծոյ՝ մեք երկրորդ Հերակլ՝ Արքայ Վրաց, և Արքայ Կախէթու, և գըլխաւոր ժառանգ Մցխէթու, Աթաբէկու, Իշխեցող Ղաղախու, իշխող Բօրչալուու, իշխօղ Շամաթիլու, իշխօղ Կակու, իշխող Շաքու, իշխօղ Շրուանու, տիրօղ և Հրամայող Գանձակու, Երեանու և այլոց։

Որովհետև ամենայն երևելի ազգաբանութիւն՝ ի հնութենէ ազգաց հաստատի, և երևելի նախնեօք, վասն որոյ՝ չէ անպատճառ և անտեղի՝ որ ի մէնջ վկայութիւն տացի Արղութեանցն, որք են Երկայնաբազուկք. զի են ի միջոյ Սօմխէթու[59], այսինքն Հայաստանու, և Իվերիայու, այսինքն Վրաստանու, ազգ մեծ և երևելիք, որպէս վկայեն պատմագիրքն մեր, և մանաւանդ Թագուհեաց Թամարայ և Ռուսուգանայ պատմութիւնքն, վասն Զաքարիայ Իշխանին և մեծ Սպասալարին, և Յօհաննէս՝ Աթաբէկին, որոց հաւատարմութիւնն՝ որ առ. Բագրատունի Թագաւորսն Վրաց, քաջայայտ իսկ է յամենայն արձանագիրս, ևս առաւել՝ ի վերայ իշխանական Նշանաց նոցա, ուր դրոշմեցեալ է այսպէս. Վահան՝ տեղն արծաթով, ի վերայ նորա Դրօշակ՝ որպէս նշան սպարապետութեան, յորոյ վերայ նկարեալ կայ Պատկերն ամենասուրբ Աստուածամօրն, որ ընդ ձախմէ ընդգրկեալ ունի զՈրդին իւր՝ զբանն Հօր յաւիտենականի, և ի ներքոյ պատկերին՝ աջ կողմն կայ կարկառեալ Բազուկ հանդերձ սրով, իբր բացայայտիչ քաջութեան ազգաց իւրեանց, և յահեակ կողմ Վահան՝ երեսն ի վայր եղեալ, և ի վերայ նորա Նիզակ՝ ուղղակի եղեալ. և այսուամենայնիւ են պսակաւորեալ՝ վերոյ Իշխանական Պսակաւ[60]։

Զսոցա ամենահոչակ ազգարանութիւնն բացայայտեմք ամենեցունց, թէ այսպիսի պատուելի անձինք են եղեալք, որպէս բացայայտեցաք իսկ ի սմա ըստ պատշաճին, բոլորովին արդարութեամբ և նշանաւ։

Եւ խնդրեմք յԱմենամեծ Կայսերական դրանէն՝ ամենայն Ռուսաց, զի ի կարգս Ռուսաց պայծառածին Իշխանաց՝ համարեսցեալք իցեն Երկայնաբազուկ անուամբ։

Հերակլ արքայ Վրաց

Աստ է Բարձր Արքայական
Կնիքն Մեծ Թագաւո-
րացն Բագրատունեաց։

Շնորհեցաւ յԱրքունական Քաղաքս մեր ի Թիֆլիզ, յամի Տեառն 1783 յօգոստոսի 28. յերեսուն իններորդի ամի Թագաւորութեան մերում։

IV

Ջիմշիթ եւ Փրիդոն մէլիքաց խնդիրն ի թագաւորէն 1788 մարտի 8 ի Սանկտ պետրբուրգ.

Ամենաօգոստափառ Թագաւոր

Տարագրական վիճակաւս մերով անկանիմք առ սրբագունեղ ձերոյ կայսերական մեծութեան գարշապարաւն. և ամենահպատակօրէն խնդրեմք հայիլ ի հնազանդութիւնս մեր առ ամենայն Ռուսաստանեայց Աթոռոյն, որպիսարար ի վաղ ժամանակաց հետէ և նախնիքն մեր բացայայտեցին առ Տէր հանգուցեալ՝ երջանիկ և յաւիտենական փառաց և յիշատակաց արժանաւոր հաւոյն ձերոյ Թագաւորին և կայսեր Պետրոսի Մեծի, զորս վկայեն ստացելոցն ի նոցին բարձրագոյն բարեհաճութեան հրովարտակս. և թէպէտ ոչ նոքա նախնիքն մեր. և ոչ մեք՝ ամենախոնարհքս մինչև ցարդ կարօղացաք բարէօրութեամբ բաղդաւորիլ. սակս յատկագոյն հպատակութեան մերոյ, ի բարեհաճութեանց ամենաօգոստափառ դրանէն ամենայն Ռուստաց, բայց կայծն այն՝ ի սրտի մերում մաքրապէս և անշիջանելի կայ առ նա. և ամենայն հաւատարմութեամբ պահպանի մինչև ցարդ. և այն ամենայնում ժամու վկայեցեալք են, որպէս գործովք, նոյնպէս և թղթովք մերովք, որ առ սահմանական ձերդ Կայսերական Մեծութեան եներալացն. զորս յորժամ քնեաղ Պոտեմկին և միւս նորին անուամբ եներալըն, ըստ վեհագունի հրամանի իւրոհւոյ Մեծութեան հանգուցեալ Թագուհւոյն և ամենասիրելի ծնողին Ձերոյ Կայսերական Մեծութեան, դրովք կոչեցին զմեզ, առ ազատութեան, ի լծոյ բարբարոսական, ոչ զանց արարաք մեք հրատարակել և ջերմեռանդութեամբ ընդհանուր աշխարհի բացայայտել. շարժելոյ ամենեսին, իսկականապէս գոլով մեք գործով իսկ պատրաստի միաւորել զմեզ. զօրութեամբ մերով, առ զօրութեան Տէրութեանն ամենայն Ռուստաց, յաղագս որոյ՝ և յայնժամ ունեցաք համարձակութիւնս գրելոյ առ հանգուցեալ ծնողն Ձերոյ կայսերական մեծութեան. և սակս անխափան յառաջ ընթանալոյ այնց և որ բազում ինչ դժուարին և անկարելի էր հաւատալ ի թղթի նշանակեալն, վասն այնմ առաքեցաք ի մէնջ յատուկ անձինս առ աստ եղեալ սրբազան արքեպիսկոպոսին մերոյ Յովսէփայ քնեազ Երկայնաբազուկ Արղութեանին ծանուցանել սոյնոյ եներալաց Ռուստաց որոց գիտել պիտոյ էր. ընկալնլով ի նոցունց ըստ վեհագոյն կամաց հանգուցեալ ծնողին Ձերոյ Կայսերական Մեծութեան յուսադրութիւնս զի ըստ ցանկութեան մերոյ ազատութեան և ի ձեռնտուութենէ նորին Կայսերական Մեծութեան զրկեցեալք ոչ լինիմք։ Բայց՝ ըստ անա-

խորժ ապաբաղաութեան որ ի դառնալն անհագօրէն հալածէ զմարդն. դիպեցաւ մեզ զայն վիճակ, որ սոյնս ամենայն սպասեցեալ լինիւր բարութեամբ յանդ ելանելոյ, դարձաւ ի վնաս և ի սեպհական կործանումն մեր, խանն Իբրահիմ ունելով զիւր բնակութիւն ի Շուշի, որոյ հայրն ոչ այլ ինչ էր եթէ ոչ նախընթաց վրանաբնակ բնակչաց, ի վերայ մեր հողոյ ի աննշան մահմեաականաց. որ ի ձեռն զանազան չարութեան կորղեաց ի'յինքն ժառանգութիւնս մերս տէրութեան և տեղեկացեալ ի առաքեցելոցն առ մեզ ի ենեռալ Պօտեմկինին, և սակս համակամութեան և հպատակութեան մերոյ առ ձերդ Կայսերական Մեծութեան ամենայն Ռուստա'ց աթոռ. նախագահսն ի մէնջ, այսինքն Աղուանից կաթուղիկոսն Յովհաննէս և զՄելիք Բախտամն մահացոյց. և զՄէլիք Մէջլումն և քեռին իմ Մելիք Ապովն խաբէութեամբ ըմբռնեալ յափշտակեաց զամենայն դոյս նոցա մինչև իսպառ. և մեք թէպէտ բազմիցս ապրեցուցեալ էաք զանձն նորա ի ձեռաց թշնամեաց բայց կասկածն ոչ ելանէր ի սրտէ նորա. և մանաւանդ ես ի ժամ գալստեան զօրացն Ռուստաց ի Պարսս առաքեցի զքեռորդին իմ զՄելիք Ֆրիդօնն որ այժմ աստ է ընդ յիս. առ գրաֆ Զուպովն, սակս նախաընկալման զզօրաւոր հնարս ընդդէմ թշնամեացն. բայց, ի դառնալն անտի գրաֆ Զուպօվին զօրօք, Իբրահիմ խանն առաւելապէս զօրութիւն ընկալեալ, և ինձ Մէլիք Ջիմշիտի սակս ուղարկելոյն իմոյ զՄէլիք Ֆրիդօնն իբրև իրաւունս գտեալ, տուգանեաց զիս յափշտակելով յինէն ոչ սակաւ գոյս. և վերոյիշեալ քեռորդին իմ Մելիք Ֆրիդօնն, կալեալ սաստիկ պատժեաց յափշտակելով զամենայն կայս նորա. փոյթ զկնի այնմ դիմեաց անդր զօրօք Աղայ Մահմադ խանն, որոյ երկիւղէն հպատակքն մեր փախեան ի զանազան կողմունս աշխարհին. և մեզ ասպատակեալ ըմբռնեաց և կալանաւորեաց, և վերջին մնացեալ ինչս յափշտակեալ էառ և զրկեաց զմեզ. որև զրկեցեալ եղև և ինքն ի կենաց. և մեք զկնի այնքան տառապանաց և վնասուն կրելոց, որք յառաջ եկին սակս ջերմեռանդութեան և հպատակութեան մերոյ առ աթոռն ձերոյ մեծութեան, բաժանեալ կորուստք ստորագրեալս. շարժական և անշարժ կայս մեր միանգամայն ամենայն զօրութիւնս մեր. ընդնմին և զիշխանութիւնս. և խորհեցաք յաղագս ապրեցուցանելոյ զանձինս, միայն մերձաւոր ընտանեօք և եթ հեռացեալ անտի եկաք ի Թիֆլիզ, զի և անտի դիմիցեմք ենթ հովանաւորութեան Ձերոյ Կայսերական Մեծութեան։

Ներ որպիսի թշուառ կացութեան ընկղմեցեալ լեալ՝ վերոյգրեալ որպիսութեամբ համարձակօրէն դիմեմք առ ամենաողորմածադունեղ հովանաւորութիւն Ձերոյ Կայսերական Մեծութեան, ոչ ի ձեռն հրեշտակաց մերոց որպէս յառաջ, այլ մեք ինքնին անձամբ ներկայացեալ անկանիմք ենթ Ձերոյ Կայսերական Մեծութեան գարշապարի. և ամենահպատակօրէն խնդրեմք. զի խոնարհեցուսջիք զլսելիս ձեր, ի լսել զաարաբաղտ անցուածոց մերոց զոր եղեն ի ջերմեռանդութիւնէ մերմէ առ Ձերդ աթոռ. արարէք մեզ ողորմութիւն. այն զոր մեծ հաւն ձեր խոստացեալ է նախնեացն մերոց, և այնու բարեբախտս առնել որպէս զմեզ նմանապէս այնց անհամար քրիստոնէից, որ յետ Աստուծոյ ի քէն ողորմութեան ակն ունին և աներկբայ յուսալով սպանին. զի զոր ինչ խոստացաւ Աստուած մեծ նախնեաւն ձերով Պետրոսիւ, այն լրացուցանելոց է այսօր Մեծ Պօղոսիւ իսկական փոխանորդի և համահետևողի մեծագործութեանցն նորին, ուստի՝ ամենաողորմածադունեղ Թագաւոր ամենախոնարհաբար խնդրեմք ի բարեբուխ տրդարադատութենէ և վեհագոյն ողորմութենէ Ձերմէ զներքոյ հետևեալսն։

Մեծ Կայսր,

1.

Փրկեա զմեզ զանօգնականս, հասո փրկութեան զկործանեցեալս. սակս հպատակութեան առ աթոռն ամենայն Ռուստաց. ճշմարտեա խոստումն յուսացելոցն ի ամենաօգոստափառ անուն ձեր, և մի ի բաց ընկենուր զաղաչանս այս։

Կարողութեամբ ամենաբարձրելոյն հալածելով զնշանս հակառակորդ թշնամոյ

խաչին Յիսուսի Քրիստոսի. ընկալ ենթ
բարձրագոյն հովանաւորութեան և իշխա-
նութեան, Ղարապաղու աւանն մեզ մելի-
քացս պատկանեալ ժառանգութեամբ, որ-
պէս մէլիք Ջիմշիտիս և Ֆրիդօնիս նոյնպէս
և այլոց և ոչ Իպրահիմ խանին, որ յափշ-
տակիչն է և խանգարիչ երկրին մերոյ. և
հինգ աւանն Ղարաբաղու ունի հինգ մե-
լիքս իւր. սոյն կալուած մտանէ ենթ հո-
վանաւորութեան ձերդ Կայսերական Մե-
ծութեան գաւազանի. այնու հարկեցեալ լի-
նին ամենայն ազգն հայոց որք տարակա-
ցեալք են և հեռացեալք վերստին դալ և
բնակիլ ի սահմանի իւրեանց, աներկիւղ և
վստահ միշտ պահպանեցեալ գոլով ի ներ-
քոյ ամենազօր աջոյն Ձերոյ, տալով ի կող-
մանց անտի կայսերութեան ռուստաց զնոր
զօրութիւնս ընդդէմ հակառակամարտիցն
իւրոց ի կործանել և ի քակել զզօրութիւնս
թշնամոյն։

2.

Եթէ այն ամենայն չլինիցի ձերդ Կայ-
սերական Մեծութեան հաճոյ, որոյ և իցէ
պատճառաւ, առ այն ամենախոնարհաբար
խնդրեմք արժան առնել մեզ հաւատալով
յաղթանակիր զօրաց քոց երկոտասան հա-
զարս. համայն պարագայիւք իւրեանց, որ-
պէս զի զօրութեամբ նոցին կարողասցուք
մտանել ի կալուածս մեր. և հանել անտի
զքրիստոնեայս և զմահմեդականս որ ի ընէ
հպատակք են մեր և հաւատարիմք. որոց
թիւ աւելանայ քան զքսան հազար տունս.
որոց բարի դիտաւորութեանց և հաւատա-
րիմ հպատակութեանց ձերդ Կայսերական
Մեծութեան կարէ վկայել վերոյիշեալ սըր-
բազան արքեպիսկոպոսն, ունելով ընդ նո-
սա գրոց երթևեկութիւնս։ Շնորհելն խնդ-
րեցեալն ի մէնջ զօրս պաշարօք շինուածս
Օռէթինու կամրջաց թողեալ լինի վեհա-
գոյն կամաց ձերոյ Մեծութեան բարեկար-
գելոյ. բայց՝ հասուցանելն նոցա կերակուր
և այլ ինչ ի պիտոյութիւն և ի բաւակա-
նութիւն նոցա, վեհագոյն գթութեամբ հա-
յոց ժողովրդեանն ելելոց յանձն առնումք
եթէ հաճութիւն կամաց իցէ ձերոյ Կայսե-
րական Մեծութեան. և ի հանելն զժողո-
վուրդս ի Ղարապաղու գաւառէն ամենահը-
պատակօրէն խնդրեմք վասն բնակեցուցա-
նելոյ զնոսա վեհաբար հրամայեսջիք տալ
մեզ այն ընդարձակ երկիրն, որ է Մաճա-
ռու մինչև ցԵկատերինէղրատ. և զշրջակայս
նորին որ կարիցեն բնակիլ, ոչ միայն այս
նախկին ելանօղքն, այլ և այնոքիկ որ առ
ապա ելանել ունին, և բազմանալով օր ա-
ւուր ենթ բարերջանիկ կալուածոյ ձերդ
Կայսերական Մեծութեան, կարեն փութով
կացուցանել նոր Փոքր Հայաստան ի երկ-
րիս Ռուստաց. վասն հողագործութեան որք
ունին հայք առաւել առ այն տեղեկութիւնս,
նոյնպէս ապրշումապահութեան և այդեաց
առաջացուցման, որոյ յաղագս անդառնա-
լի հարկաւոր է լայն ընդարձակ երկիր,
նոյնպէս մայրիք ջուրք բլուրք և դաշտք.
Թողացուցեալ լինի վեհագոյն կամաց և բա-
րեհաճութեան ձերոյ Կայսերական Մեծու-
թեան ի մարդաբնակ առնելն մեր զերկիրն
զայն. շնորհել մեզ մէլիքացս արտօն ի վե-
րայ հպատակաց մերոց որպէս մինչև ցարդ
ունեցեալ եմք. և այնց մերոց հպատակաց
յատկացուցանելն զկենցաղավարութիւնս
նոցա, զպատկանեալն ի դէմս մեր որպէս
սուրբ կամք ձերդ Կայսերական Մեծու-
թեան բարեհաճիցի բարեբախտս առնել
զմեզ զամենեսին. որք ամենեքին ոչ թո-
ղումք ամենախոնարհ պատակագոյն խոնարհու-
թեամբ պատկանաւոր բարէեռանդութեամբ
և ջերմեռանդ Ձերդ հպատակ։

3.

Եթէ սոյն երկոքին խնդիրքն մեր
ձերդ Կայսերական Մեծութեան ոչ ընկա-
լեալ լինի ի բարեհաճութիւն, յայնժամ թե-
րևս արժանացուսջիք հրամայել Արքային
Վրաց ի տէրութեան իւրում ունեցեալ դա-
տարկ երկիրն որ հնումն կոչիւր Գուգարք
և այժմ անուանի Ղազախ, որոյ երկարու-
թիւնն ձգի մինչև գաւառն Լօռու, ի վերայ
որոյ և ի նախնումն բնակեալքն էին հայք.
որ ամայացեալ կայ ի զանազան աւերածու-
թեանց թշնամեաց Պարսից և այլոց ազգաց.
զնոյն տալ մեզ ի կալուածս բնակութեան,
որոյ սակս կապակցեալ լինիմք ամենայն
ժամու Արքային Վրաց, ոչ միայն ի հպա-
տակութեան, այլ ամենայնիւ ձեռնտու լի-
նիլ ընդդէմ լինելով թշամեացն նորին ի հար-

կի պահանջման։ Այլ թողացուսցի մեզ ի վերայ հպատակաց մերոց որպէս հայոց նոյնպէս և ի վերայ թուրքաց, վարել զիշխանութիւն, այն կանօնաւ որպիսին ունէ․մք մինչև ցարդ․ թէպէտ երկիրս այս է լեռնային, բայց պտղատու և արդիւնարար․ լի զանազան հանքօք որք են ոսկւոյ, արծաթոյ, պղնձոյ, երկաթոյ, արճիճոյ և այլոց բազմաց, և ընդ այն ունի բազում մայրիս ի պիտանաւորութիւն այնց մետալեղէնաց, որովք հնար է նորոգել աւերեալ և ամայեալ ամրոցսն․ և զթագաւորութիւն վրաց այնու իբրև պարսպաւ ամրացուցանել ընդդէմ թշնամեաց։ Եւ առաջոցուցանելով այսց ամենից օգտութեանց, ի կարճ միջոցի, ըստ առատաձեռ օգնականութեան աջոյն ձերոյ կայսերական Մեծութեան կարեմք ժամանել ի ծաղկեալ կեցութիւն, և բազումք ի համազգեացն մերոց տեղեկանալով զմերս բարօրութենէ միահաղոյն դիմեսցեն առ մեզ և միաւորեալ բազմասցին. ոմանք երկիրն գործելով, ոմանք զանազան հանքս հանելով և ոմանք վաճառականութիւնս ընդարձակեցուցանելով սակս արդիւնաւորութեան անձին և հասարակութեան. և ոմանք զֆապրիքս (որ է ոստայնկութիւն) յառաջեցուցեալ զապրանս իւրեանց փոխադարձութեամբ հասուցանելոց են մինչև ի Հնդիկսն որպէս ի յօգուտ իւրեանց, նոյնպէս և ձերդ կայսերական Մեծութեան. և ի փոքրիկ միջոցի կարեն ժամանել բնակութիւնս այն բազմամարդութեամբ. և ազգն բազմացեալ կարեն ի պատշաճեալ միջոցի ոչ սակաւ օգուտս բերել երկրին Վրաց ի հինից թշնամեաց ազատ պահելով զնա և յաւիտենականապէս կապակցիմք առ աթոռ ձերդ կայսերական Մեծութեան ի ամենայնում հանդիպման ընդիմամարտ լինել թշնամեաց ձերոց. ոչ միայն սակաւուք այլ բազում և հզօր զօրութեամբ մերով. մերս ամենայն պատրաստութեամբ կապեալ գոլով երդման ձերդ կայսերական ամենայն Ռուսաստանեայց աթոռ. սակս փրկութեան և ազատութեան մերոյ. և կանդնելոց զանկեալ և զտարագրեալ ազգն ժողովելով ի մի ի հայրենի կալուածսն իւր։ Եւ ի ժամանակս ժամանակս բազմացեալ ազգն այն ոչ սակաւ և արդիւնս կարելի է ի նոցանէ ժողովել։

Վասն այնպիսի յարգելի պատճառաց լիցի բարեհաճութիւն այնց սակս ամենաողորմածօրէն հրամայել առաքել ի Վրաստան սակաւաթիւ յաղթանակող զօրս ձերոյ Մեծութեան, որպէս զի միաւորեցուցեալ զօրութիւնս իւրեանց ընդ Վիրս օգնական լիցին ազատելոյ զհպատակս մեր ի հնազանդութենէ բարբարոսաց. զի Վիրք ոչ ունին այնքան զօրութիւնս որ թարց ձերդ զօրաց նոքա կարողասցին ինչ յառաջ ածել. այլ երբ ձերդ ղրան օգնականութիւն ժամանեսցէ առ նոսա դիւրութեամբ կարեն մեզ ձեռնտու լինիլ. որև մեր բնակեալ ի տեղւոջն այնմիկ մշտապէս լինիցիմք օգտաւէտք և փառաւորողք կայսրութեանն Ռուստաց։

Եւ եթէ ըստ ապաքախտութեան վիճակի մերոյ բարեհաճութիւն չիցէ ձերդ կայսերական Մեծութեան իջանել և ոչ ի միում ի խնդրուածոցն մերոց վերոյդրեցելոց, և այնու ի բաց առեցեալ լինի ի մէնջ զամենայն յոյսս մեր, առ ի ազատեցեալ լինելոյ լծոյ բարբարոսաց, մինչ կամք աստ ի սեմոցդ դրանց օգոստափառ գահոյն Ջերոյ Մեծութեան, զրկեցեալք գոլով՝ հայրենեաց, ի հպատակաց, ի յիշխանութեանց, և ամենայն գոյից, ուստի մատուցանեմք վիճակն ծանրագոյն կենաց մերոց Ջերդ բարձր բարեհաճութեանդ անկանելով առ մաքուր Ջերդ կայսերական Մեծութեան գարշապարացն, և առ ի սեփհական բարելաւութեան սրտից ձերոց ըստ արդարադատութեան տանջեցելոցս սպասեմք կենաց մերոց վիճակի որպէս բարեհաճութիւն լիցի թագաւորիդ մեծի վճռել ըստ այնմ. և մնամք ամենավշտակիրքս ջերմ հաւատարմութեամբ Ջերոյ կայսերական Մեծութեան ամենահպատակագոյն իշխող Ղարաբաղու գաւառին կառավարութեան Վարանդու և Շուշու Մէլիք Ջիմշիդ Մէլիք Շահնազարով

Իշխող Դզիրմիտօրտու Մէլիք Ֆրիդօն Մէլիք Բեգլարով։

Ուզպաշի Պետրոս Մադաթով։

Մարտի Ե աւուրն
1798 ամի.

V

ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐ [61].

Ա.

Ծերունազարդ Հայր տէր Ստեփաննոս աւագ քահանայ·

հոգեծին տեառնս իմոյ գործակից, եւ իմ մտերիմ բարեկամ։

Դեկտեմբերի 1էն դրեալ ախորժելի թուղթ ձեր, ամսոյս 3ին բազում յարգանօք ընկալայ, գիտացի զամենայն գրեցեալսդ և փառս նուիրեցի ապենիազին Աստուծոյ, որ ի վերջին ուսահատ ժամու, ըսքանչելիս իւր առ մեզ արտմեալս ներգործեաց, փառք և հազարիցս փառք, աննուն ողորմութեան նորա։ Այժմ Լազրեանքն և Եփրեմեանքն նորանոր չարեաց զհետ լինին, և ի դիմաց ազգին գիր մի յօրինեալ գոլեկն [62] մատուցին, որ իբր խնդրէ ազգն միահամուռ, զԵփրեմ երկրիս առաջնորդ թողուլ անկախ ի կաթուղիկոսէ, և կամ հանել երկիրս ի յիշխանութենէ էջմիածնի, և տալ ընդ հրամանի Գանձասարու, և կամ Աղթամարայ, որովհետև Դանիէլն ախթամարցոցէ օծեցաւ, ի շնորհս այնմ կամին ընդ նորին հուանեաւ լինիլ։ Բայց՝ ես սպասեմ ազգին ընդդեմ սմին, առ կայսր բողոք, մանաւանդ ի Նախիջևանցոց, զի թէ յամեսցի ազգայինն, ծվ գիտէ որպիսի շփոթ ծագի ի մէջ ազգի և տէրութեան, գլխովին ի կորուստ Եփրեմի, և տանն Եղիազարու [63], որ վստահին ի բերանոյ ազգին, ստութիւնս յօրինել և տալ ի դիւան Կայսեր։

Բայց ես տակաւին ի վերայ առաջին գրեցելոյս կամ, և սպասեմ կայսերական շնորհեցեալ դքամոյն ընկալման, զի ուքազի կոպիայն, այսինքն սուրաթն եառուն, իսկ տակաւին կատարումն ոչ տան, այլ՝ յետ լսելոյ զփոփոխութիւնն կաթուղիկոսաց օրէ օր ձգեն, և ես լռեմ սպասելով կատարածին, զիան մի չունիմ, որ այսր և անդր՝ ի գործ դնեմ, դատարկ խոստմամբ սակաւք ունկն մատուցանեն, իմ բանն մնացեալ է Աստուծոյ, զի առ ի մարդկանէ հատեալ է, սրբազան Կարապետ արհին՝ [64] ի Թիլֆիզնստեալ մի գրով ոչ-սփոփէ զմեզ. թող թէ այլ կերպիւ օգնական գտանիլ։ Իսկ ես զոր ինչ միանգամ ունէի մսխեցի, այժմ կամ մերկ՝ իբր զսանդի տօռ, երբ սրբազան կաթուղիկոսի հաստատութիւնն հեռեիցէր ի կայսերէ, յուսամ ի շնորհս տեառն որ իմն ևս առ բարին ընթանայր զգործ սակայն՝ զրան գազանքն տակաւին արգելեն ի յայտնելոյ կայսեր, սպասեն ըստ հաւատարմացուցանելոյ Եփրեմի, թէ Դանիէլն ի ձեռաց տանողաց զերծեալ, անկցի ի Թիլֆիզ, բայց՝ Աստուած ոչ տայ. այն ի աւերութիւն ս. տաճարին այնմիկ, այժմ թարգմանեցին բոլոր այդի եկեալ թուղթքն, պատուիրեալ էին թարգմանին յամբ թարգմանել, սակայն՝ նա սակաւ մի՝ ի խաթէք մեր, և սակաւ կա-

շառաց յակեալ, փութացոյց և ակն ունիմ ոզորմութեան տեառն, կայ(ս)րն քաղցրութեամբ ընկալեալ հաստատեսցէ զարարս Թագաւորին Օսմանցւոց, և զհաճոյս ժողովրդեան հայոց, բայց վասն իմ անելոց է սակաւ մի երկար, յաղագս այնմ որ գոլէկն ընդիս չունի զսէր, այլ և առաւել թշնամութիւն, մանաւանդ Սերկէ Լազարիչն սակայն՝ որպէս և իցէ ճշմարտութիւնն ո՛չ կարեն գաղել, զի այնպիսի անձինք գոն իմ հաւատարիմ, որ ամենայն զօրութենէ ջանալոց են առ ի ո՛չ թողուլ զբանն ծածկեալ, և ես տակաւին չեմ խնդիր իմոյս, այլ՝ զկաթուղիկոսինն խնդրեմ, երբ այն լինի, ամենայն ուստեքէ օգնութիւն ժամանելոց է ինձ, յուսամ և կաթուղիկոսն չուրասցի. առաւել այժմ ջանամ զհարապետ վարդապետն ընկալնուլ այսր։

Մանիէլ[66] աբեղայն եկեալ է, և գիր մի յօրինեալ անուն Դանիէլի մատուցին գոլէկն որպէս թէ Դանիէլն մի օր մնացեալ ս. էջմիածնի գրեալ է առ կայսրն և խնդրէ, ո՛չ այնքան զիւրն օգնել որքան Եփրեմ պաշտպանել, իսկ վասն բարերար դեսպան Թամարոյիդ լցուցեալ է ղոնքաստանութիւնս, երեք հարիւր քիսայ կաշառս առեալ, և այլ բաղում ինչ, ընդ նմին վասն իմ, վասն քանի մի ամիրայից, և Դևորք Աղաեկովին և ձեր վասն, և լի զանազան աղջատանօք, մատուցին ծաղր թարգմանութեամբ Վոռոնցովին, առ ի մատուցանել կայսեր։ Յուսամ իւրովի խայտառակիլ,—զարմանամ որ նախկին երկու փոստի ուրախարար թուղթք ձեր ոչ ժամանեցին առիս, զի իմ է մեղն, ըստորում գրեալ էի ի Տուպասար բէյինին, իմ թուղթքն ի Եկատարինէսլաւ՝ առաքել, վասնորոյ առաքելն այսքան երկար յամեցաւ։ Թէպէտ գրեցի առիս ուղևորել սակայն՝ տակաւին ոչ ժամանեցան։

Նախիջևան դեփութաթքն ամենայն բաւականութեամբ ելին աստի, մերս ձեռնտուութեամբ, յուսամ ի հասանել իւրեանց առ եղբարս, գրեսցեն բողոք առ կայսր, հասարակութեամբ, և խնդրեսցեն վասն մեր և այլն։ Զի նոքա տեսին զարարս Լազրեանց և Եփրեմի, թէ որքան լի է անաստուածութեամբ։ Այժմ ամենայն ժողովուրդն համարեա թէ յիմարեալ, կան ի տարակուսի, չունին զմի բաբի առաջնորդ որ ցուցցէ նոցա, զարգարութեան բողոտայ. զտէր Մինասն Հաշտարխանու զոր ունէին, աստ առաքեցին աստի խելայեալ քարոզել Հաշտարխանցոց, առ ի դառնալ ի ս. էջմիածնէ, տէր ցրեսցէ զխորհուրդս դոցա։

Տակաւին Եփրեմ այդր գրովք լնու, կարծեմ առ տէր Մեսրոպն լիցի, տեղեկասջիք։ Թէ առ Թափէ զթիւնս, ասացեալ է ի հրապարակի թէ, ուրացայց զհաւատս, այլ ո՛չ մտից ընդ հարկաւ Դաւթի և այլն։

Յոյժ երկնչի որ մի գուցէ կայսրն, տացէ զինքն ի ձեռս Դաւթի, վասնորոյ ջանայ զզանազան հակառակութիւնս սերմանել ի ժողովրդեան որ ինքն մնասցէ հաստատուն։ Աբեղայն այն որ եկեալ է, օտար անուամբ, գիժ և կռվարար ոմն է ասեն խռովասէր և այլն, Աստուած ուրեմն բաւականին պատիժ տուեալ է յինքեան, իւրովի դատեսցէ։

Յատկեղ բարերարին իմոյ Դևորք Աղաեկովին խոնարհ զողջոյնս ձօնեմ, տէր Յիսուս օրհնեսցէ զինքն, և պահեսցէ ամենայն վտանգէ։

Սրբազան Յովհաննէս պատրիարգն եթէ այդր ժամանեալ իցէ խորին խոնարհութեամբ, աջոյն համբոյրս նուիրեմ, Աստուած ապաշխարանս համաբեսցէ կրեալ նեղութիւնքս թէպէտ իմս չէր աքսոր, սակայն՝ չէին իւիք պակաս, աքսորոյ, ո՛չ պատմեմ այլ մնասցէ, Աստուած որ ետես ամենայն, ինքն արասցէ զդատաստան իմ։

Ստեփան արհոյն ողջոյնս նուիրեմ։ Դալուստ սրբազան նուիրակին, յայտնել ժտեմ զիմ ողջոյն։ Եթէ առ դեսպանն անկլիացոց բան ինչ իցէ հարկաւոր, ես աստ յոյժ բարեկամութիւն ունի(մ) ընդ նոցին դեսպանի այդր գրել տաց զհարկաւորն։

Մահտեսի Միսեսերին սիրով բազմաւ զողջոյնս նուիրեմ. տակաւին առ դեսպանն ո՛չ գրեցի զգիր, զի աստ կայսերական դրանէ տակաւին ոչինչ գիտեմ, երբ աստուծով ուրախարար ինչ լուիցեմ յայնժամ գրեցից, զյատուկ շնորհակալութիւնս. պրն. Քուչուպէյն, ի վերայ այս բանիս, մեծ թշնամի է ընդիս, բայց դեսպանիդ բարեկամ, տեսցուք Եփրեմի զանկատանքն զինչ պտուղ ընկալնու։

Քոյդ յատուկ բարերարաց, և կամ յատկացեալ բարեկամաց բազում ողջոյնս աստուածային առատազեղ օրհնութեամբն նուիրեմ, և ասեմ Տէր օրհնեսցէ զպատուական և զպիտանի կեանս դոցա, այժմ ծանեայ որ դոքա հայք են և իշխանք հայոց, և գիտեն պահել զհայրենի սուրբ տունս հոգւոյ իւրեանց, այնց սրբութեանց աղօթքն հասցէ դոցա, և պահեսցէ ամենից չարեաց։

Զանազան խիլայս պատրաստեմ ձեզ ասար առաքելոյ, անուամբ քանի անձանց, բայց տակաւին չեմ հանեալ ի մտաց, և շատ շուշեղէն է, յուսամ յոյժ յաղկիցի այդր երբ պատրաստեսցի յայնժամ անուանքն գրեսցին։

Ջերայինքն ըստ դրելոյ պրն. Խաթիսովի, ողջ և առողջ են, և ցանկան զձերդ առողջութիւն, և ես մնամ վասն ձերոյ խոհականութեան և ծերունի հայրութեան պատրաստական ծառայ և որդի, **Գրիգոր արքեպիսկոպոս** *հայոց, և սրբոյ Էջմիածնի։*

Նոր տօնացոյց արդեօք եղև տպեցեալ անուամբ Դաւթի ի Վենետիկ, առ այդ հոգս տանելի էր, որ այն չքոյ անուամբ չհանցեն, և առեհին զորս անուամբ լուսահոգի Յովսէփայ տպեցեալ էր, որ զեղծեալ էին չարասէրքն, ջանալ նորոգել,—առ այս խնդրել զարբազան պատրիարգին. որ սոյնս արասցէ առաջին ընծայ, լուսահոգւոյն։

Քնեազ Բարսեղն ի Դրիգորիպօլ դիմեաց, քնեազ Դաւիթն զձեզ սիրով ողջունէ։

Բ.

Սիրեցեալ եղբայր մաճեսի Միեսեր իմ յատկեղ բարեկամ.

Ամենայն փոստի թուղթ քոյ անխափան ընկալնում ընդ տէր Ստեփանոս աւ. քահանայի գրոյն, որոց վասն մատուցանեմ զիմ յատուկ շնորհակալութիւնն։

Անցեալ ամսոյ 25-ին պատասխան եղև ի Նորին կայսերական Մեծութենէ, առ Եփրեմն և առ իս, դարձուցանել նմա յետս զամենայն ապերաղդութիւնս զոր մատուցեալ էր անուն Յովսէփայ և իմ, կայսրն իբրև անյարգի համարեալ և անվայելուչ կարգի նորին հրամայեաց դարձուցանել և կրկին չհամարձակեսցի այսպիսի անպիտան բանիւք ձանձրացուցանել զկայսրն։ Իսկ առ մեզ այսպէս նորին կայսերական մեծութիւնն լսէ որ ժողովուրդք երկրիս զնա կամին, և ձեզ վասն բազմատեսակ ծառայութեանց ձերոց, շնորհէ ամ յամէ հազար ռուպլի ռոճիկս, որ բենցի[66] կոչեն, աւարտել զշինութիւնն Գրիգորիպօլի, Ֆալկառավար և զնիրչ տպարանի. այսու լռեցաք, բայց Եփրեմն և իւրայինքն ի խոր կործանեցան, զի խնդիր նոցա այն էր, որ զիս հանցեն գլխովին երկրէս, որ յայնժամ որպէս կամիցին, այնպէս շաքժեսցին, բայց ոչ եղև ըստ կամաց նոցա, թէպէտև ոչ գլխովին ըստ իմոյ կամաց, կայսեր բոլորովին հաւատարմացուցեալ են թէ բնաւ զԴաւիթն ազգն չկամի, այլ զԴանիէլն, և այսմ զարմանալոց էք թէ ընդէր նոքա սուտն յառաջ տանեն, և ես ճշմարիտն ոչ, ընթերցիր առ այս պատասխան հոգտեմբերի հնգէն գրեցեալ գիրս առ Գևորք Աղաեկեանն, Աստուծոյ օրհնեալ կաթուղիկոսն կողոպտեալ արձակեաց ինձ այսր, եթէ ոչ՝ իմ երկրիս որդ գոլով, զինքը հնարէր յաղթել ի ցոպեկէն այսմանէ, ապա բոլորի պատճառն քիսակքն են, և իմ չքաւորութիւնն, որ աստ ի մեծ քաղաքի, հազիւ զմեր օրականն գտանեմ, ուր գոցուք աստ և անդ ցրելոյ. ես մեղաւոր չեմ, որչափ ունէի չխնայեցի մինչև վերջինն ևս տալ. իսկ որ չունիմ, և Աստուած ոչ կարէ յինէն պահանջել, գուցէ Աստուծոյ կամքն այսպէս էր. լսեմք որ եպիսկոպոսունքն գան մինչև օրս լսեմք, և ոչ տեսանեմք. ես գրեալ էի ի Պօլիս առաքել աստ այժմ բան չկայ, զի կայսեր այնպէս ծանուցեալ են որ զոր ինչ Օսմանցոյ տէրութիւնն առնէ, այն ազգն Հայոց առնէ, և սմա այն ընթունելի է. թող ուրեմն նա այդր փութացուցանէ զեպիսկոպոսունս, և այսր բաւականին գրամ, որ ես աղքատութենէ նեղեալ՝ հարկիւ հարկ հեռանալ ասար պարտիմ, եթէ ոչ օգնեսցեն ինձ,

Եփրեմին ամենայն կուսէ լնուն զգօգն, իսկ ինձ և ոչ դիան մի, միթէ ըստ ասից առակին եբխլան · գունեանըն զիրեկի պեն օլաճաղըմ[57], թող մի անձն ինձ գործով և բանիւ օգնական լինէր, եթէ ես անձնս խնայէի յայնժամ մնայի մեղադրելի, երբ մնացի միայն, և ոչ ինքն Գաւիթն փութայ օգնել, զինչ արարից ես, ես ամենայնի անպարտ եմ։ Տեղդ ասէք չորս իշխանք առնեն, և ասա միմիայն Եղիազարեանքն, մնացեալքն լռեն, ուրեմն և նոքա հաճեալք են որ լռեն. թէպէտ ճշմարտութիւնս իբրև ղամպար վառեալ ի ձեռիս ամենայն տեղ մտանեմ և տեսանեն թէ արդարև ճրագ է, սակայն ոսկոյ զօրութիւնն համակրական ներգործութեամբ սուտ երևոյթ կերպաւորէ ճրագն, ըստ նմանութեան գոլորշեաց որ երկինս ցնդին, և ի զօրութեան արեգական այրին և իբրև աստեղունս երկնից թօթափին, և մեզ երեին ճշմարիտ աստեղս անկեալ, այնպէս և կաշառօք կուրացեալքն թէպէտ տեսանեն ի մեզ զստոյգ բանն, սակայն ի ագահութեան մօլորին և ասեն բարի է ապա և նոքա այսինչ ասեն, մինչև այնքան կայսեր զականջն լցուցեալ ունին, որ թէպէտ ամենայն ճշմարտութիւնս իմոյս կողմանէ եռեւ. և վարձատրութեան ես արժանացոյց իբրև իսկական հարազատս իւր, բայց հակեալ կողմանէ ոչ կարաց դառնալ, ասելով թէ ազգն ասեն ոչ կամին զԴաւիթն, ահա զինչ արարից այսու առաւել։

Մարտիրոս վարդապետի արզայն թէպէտ ընկալեալ է կօլէկն սակայն իբրև անպէտ կարմիր չուխայի տակն ձգեալ, յոյժ բարւոք էր անուամբ կայսեր բողոք գրէին և ուղիղ իմ ձեռն առաքէին որ ես հարազատութեամբ ինքնին թարգմանեալ՝ ուղղակի կայսեր մատուցանէի, և ցուցանէի նմա թէ ոչ համայն ազգն, այլ քանի մի անձինք առնեն, ի մէջ ժողովրդեան, որպէս անցեալ փոստին ես գրեցի, ջանացէք թէ այդի և թէ Իզմիրու բազմակնիք թուղթ հասուցանել ինձ ձեռնարկողաց մեծութիւնն և փոքրութիւնն չհայեցեալ՝ այնքանէ որ առանձին լիցի, և այն ուղիղ ի ձեռս իմ առաքէք։ Ի սանկթ Պետրբուրխ, ի վերայ փակեթին այս ի մէջ սորա եդեալ մակագրութեամբն դրեալ ուղղևորել։ Բայց ջանալ որքան հնար է փութացուցանել։

Մեծապէս շնորհակալութիւն ունիմ ի պրն. Գևորքեն և ի ձէնջ, որ իմ սիրական ծնօղի աշխատաւոր որդին և իմ հարազատագոյն եղբայր Տէր Ստեփանոս աւ. քահանայն այդքան սիրով ընկալեալ էք, գրեցի վասն նորա առ մեր բարեբար դեսպանն շնորհակալութիւն և խնդիր, խնդրեմ և առ ապա չթողուլ Աստուած ողորմած, թէ չեմ մեռանիլ այսպէս անկեալ ոչ մնացից և ես, եափու թաղ ասեն առակս՝ եափուտան ղալմաղ[68]. թէպէտև իցէ կարի դժուարին համբերելն, բայց արդարութիւնն որ գործակից է ինձ ոչ թողու բնաւ կործանիլ որպէս թշնամիքս՝ իմ խորհին, որպէս ահա այժմ զինչ խորհէին և զինչ տեսին, նոքա սպասէին զարշապարի իմում, ինքեանք խայտառակեցան և անկան ի գուբն, զոր վասն իմ պատրաստեալ էին, հաստատել եառուն կայսեր և ծանուցին աշխարհի իմ կայսերութեանս հարազատ լինիլն և բազում ծառայութեանց մէջ զանձինս ի օգուտ հայրենեաց. այսքանս բաւականին ինձ պարծանքէ, թէև զհազար ռուպլի բենցին չլինիցէ, մշտնջենաւոր արդիւնաւորութիւն իմ ի կայսերական գանձարանէ։ Ես զարմանամ առ այն թէ որպէս կարողացաւ այսպիսի տգէտ մի՝ այսքան բազմութիւն աղգաց, խռովել և զիւր կամքն յառաջացուցանել, ոչ յաղագս յաւիտենականութեան իմիք այլ վասն օրական առաջնորդականի անուան, նա այնպէս գիտաց թէ իբրև զՅովսէփն զարգարեալ լինի զանազան նշանօք և ոճկօք, բայց կարի խաբեցաւ, ահա Յովսէփայ ծառային աշխատաւոր և հարազատ տէրութեանս կոչելով բենցի շնորհեն իսկ նմա և ոչ մի դիան, և ոչ ես արժանացեալ տեսութեան կայսեր, բացի մի անգամին որ ի Մօսկով, և վերջապէս շնորհեցին նմա անգ զմի խաչ որոյ գինն չէր աւելի քան ութն հարիւր ռուպլի։ Եթէ Նախիջևանցիք թերևս նախանձու իւրեանց բարեբար զարթնուին, ձեռնտու լինիլ ինձ, ոչ այլով իւիք եթէ ոչ, այսու թէ մեք զԳրիգորն իբրև Յովսէփայ կտակեալ զնա կամիմք և ոչ այլ ոք, սակայն զինչ օգուտ և նոքա մոլորեալք են, բարւոք էր յոյժ որ գուք

ընդ տէր Ստեփանին յայտնի հասարակութեանն նոցա գրէիք, հանդերձ պրն. Գէորգիւ, յիշեցուցանելով զերախտիս Յովսէփայ, և թէ ի գոլն իմ զինչ բարիս ունի յառաջանալ, և լինիլն Եփրեմի զինչ կարիս. ողորմելի պրն. Յարութիւնն կեանքն եղեալ ունի իմ վերայ հանդերձ պրն. Աստուածատուրիւ բայց զինչ օգուտ որ հակառակք բազումս ունին, և ոչինչ կարողանան յառաջ բերել։ Թուի այս ամենայն Աստուծոյ են կամք։ Գիտացի որ Եփրեմ գիր է գրեալ մեր բարերար դեսպանի, զարմանամ թէ զիմերգ ոչ պատկառեցաւ, որ սուտ զբազում զըրպարտանս յողելով ի վերայ նորա հայհոյէ զպայծառ անուն դորա, իսկ ի վաղջանի իբրև սիրելի գիր ևս գրէ, թէպէտ այսճըշմարիտ է որ ոչ ինքն գիտէ զինչ գրելն զի ոչ ինքն գրէ և ոչ ևս հասկանայ զբառսն որ ամաչիցի, այլ զոր ինչ Մինաս Լազրիչ Եղիազարեանն գրել տացէ, այնմ կոյրն ի կուրի ձեռն արկանէ, և զայս ևս գիտելի է, որ Մինասն քան զինքն կոյր է գրոյ։ Հայերէն գրերն մէկ գիտուն էրէց ունի տէր Առաքելի որդի Տէր Մէլիքսէթն, Պէրթի եկեղեցոյ, որ տէր Ստեփանն զհայրն լաւ ճանաչէ, և որդին գուցէ, ոչ զի տղայէ հասակաւ։

Գրեալ էիք թէ տէրտէրն կամի Իզմիր գնալ, մի գուցէ և նա վախի Գրիգոր նոր պատրիարգէն, նմա ինչ զի չէ նա նորին վիճակի մանաւանդ Ռուսիայ պոտան[69], և թէ վասն այլ օգտի գնայ բարի է։ Բայց՝ որպէս գրեալ եմ նմա անցեալ փոստին գրեցէ ուղիղ որպիսութիւն անցուածոցս Հնդու ժողովրդեանն, և որոց պիտոյն է զի նոքա գիտասցեն ուղիղն, չհաւատասցեն ստութեանցն Եփրեմի։ Նոր ձայն հանին աստ այսօր Եփրեմեանքն, որպէս թէ սրբազան Կաթուղիկոսն կամեցեալ է փախուցանել զսուրբ Գեղարդն, զարմանալի ծաղրածութիւն, եթէ կաթուղիկոս է ուր փախուցանէ, եթէ չէ ընդէ՞ր ինքն ոչ փախչի, և կամ ոսկի և արծաթ ոչ փախուցանէ, հակառակ մարդկային մտաց բանքս։ Աստուած վերջն հոգասցէ։ Լսեմք որ ի սահմանս Ռուսաց ո՛չ թողուն զեպիսկոպոսունս որք գային սրբոյ Էջմիածնայ այլ՝ տակաւին ի Թիլֆիզ կան արգելեալ, Եփրեմ մեծ քսակով գուռն ընդդէմ նոցա փակեաց, քիսակ պիտի բանալոյ, գրեցի իւրեանց քիսակ առաքել և ինքեանք գրեսցեն կաթողիկոսին Պօլիս մարգ հասուցանել, Դանիէլն և Եփրեմ թուի թէ ազգի ճրագ եղեն, և ազգն պարտին լուսաւորել, ով կուրութեան ազգին, գրէ տէր Ստեփանն թէ ջանայ և անձնադիր լեր, միթէ ոչ առնեմ սակայն ինչ օգուտ, որ ձեռս դատարկ ուր և դիմեմ ամօթով դառնամ, և լաւ իմացէք, որ տակաւին ես եմ որ դիմանամ հանդէպ սոցա կալն, այլում դժուարին էր, շատ խոշտանկեցին զմեզ գուցէ նեղեալ, հաւատոյ թուլութիւն ցուցից, տեսին թէ ոչ գտին զայն ի յիս, այժմ սակաւ մի լռեցին և յարգամամբ անցանեն ընդ մեզ, մանաւանդ այժմեան կայսերական ողորմութիւնն առ մեզ, բոլորովին կարկեաց զբերան նոցա։ Մէկ գիր գրեցի և լցի բոլոր լրօք, որ լիցի գիտելի, մեծ տէքտէրին, և պրն. Գէորքին, և այլն. Ցամ վասն ձեր աղօթարար

խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս.

1802 մարտի 2.

ի Ս. Պետրբուրխ։

Գ.

Ծերունի Հայր, տէր Ստեփաննոս աւ. քհ., իմ ախորժ եւ աննենգ բարեկամ.

1802 օգոստ. 16 ի Ս. Պետրբ.

Յուլիսի 15-էն գրեալ թուղթ ձեր, ընդ որդեկիդ գրոյն ամսոյս 13ին ընկալայ. և տասն և հինգին ամսոյս, Աստուածատուր սիրական որդոյդ գիրն՝ իմ գրովս ուղևորեցի ի Մօզդօկ առ Խաթիսէնց Գաբբէլն, որպէս մատուցանէ իւրն զգիրն իմ՝ նոյնպէս ինմանէ առեալ զթուղթ առ յիս ուղղեսցէ, առ այսմ լեր միամիտ։

Վասն հաստատուն գրութեան մերոյ առ սրբազան Կաթողիկոսն մեծապէս շնորհակալ եմ, և ես ի յայն միտս ունիմ լիովին գրեալ՝ յուսամ մերն այտի՝ և իմն աստի, առ նա հասեալ՝ ազդեսցէ ինչ զերազանց

կարծութեանն նորին։ Դանիէլեանքն նորին շռայլութենէն ամենայն տեղիս գանկատին իսկ՝ մեք ժլատութենէ բողոքեմք, չգիտեմ որն է հաւատալի։ Գուցէ թէ նա չառաքեսցէ զնաղղ գրամ, այգ չէ առիթ ուսահատութեան, զի թէ փոխանակ ղրամոյն որ ներկայիս չիցէ ձեռնահաս զհաստատուն խոստմունս գրով՝ ձեզ հաւատարմութեան առաքեսցէ և այն ընդունելի է, զի յետ կատարման բանին, ամենայն ուստեքէ հնար է դրամ հասուցանելն, զի երբ այդր փոփոխիցի բանն աստ իսկոյն ստոր անկանի և թուլանայ, վասնորոյ աստ սակաւ դրամօք կարեմ ես գլուխ բերել, կամ թէ շատ և սակաւ իմ յանձին լիցի այն, և երբ Տեառն շնորհիւ Յովհաննէսն գտցէ իւր աթոռ, միթէ օգնելոց չէ սրբազան Կաթողիկոսի մսխիցն, ես յուսով եմ որ նա չգտանիցի երախտամոռաց անձն ըստ նմանութեան զոր գիտես, այլ՝ այն, մի՛ է և անօրինակ, բայց չէ ի սմա այժմ օգուտ, զի ասի՝ քենտի տիւշէն աղլամազ[70], և կամ ըստ Մարկոսի Աւրելիոսի՝ ամօթ է յետ մատուցանել բարեկամին զամենայն խորհուրդս քոյ, ասել՝ սղալեցայ. զի երեւարն ասէ ոչ գնի անփորձ, վասնորոյ ե ինձ ամօթ է, որ թէ երկարիցեմ, վասնորոյ լռեմ՝ վասն զի՝ պատկառիմ ի խօսելս. բայց՝ խնայեցէք դարձեալ՝ ո՛չ զիս, զի ես կարեմ ապրել փառօք յամենայն կեանս իմ, ծեր և իցեմ, բայց՝ բազմամեայ զաշխատանս հոգեծնիս, որոյ գործակից և թիկնապահն էիք, ե միշտ յուսադրութեամբ մերով՝ վըստահանայր ամենայն ազգաօգուտ իրակութիւնս առնել, այժմ անօրինաց ձեռս անկեալ՝ գլխովին կործանի, և ամենայնի եղծեալ՝ աւերի, վասնորոյ ի յայն խնայեցէք. ո՛չ թէ միայն այն՝ այլ ս. Աթոռն ահա ազգէն իւրմէ օտարանայ աղախնածինն զօրացեալ զտէրն հանէ ի բաց, նախնեաց հաստատեալ Աթոռն կամի քակել, ուր Լուսաւորիչն խրախուսէր զարքայն Տրդատ, Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս, ի Հայաստան յաշխարհի։ Իսկ Եփրեմ՝ Դանիէլիւ, խրախուսեն զազգն հայոց եկայք, քակեսցուք սուրբ զխորանն լուսոյ, և կառուսցուք, զԻւչքիլիսայն՝ յորմէ անունն իմ փառաւորեալ բարձրասցի, թէ ես արարի զայս, ընդդէմ կամաց և հաճութեան ամենայն ազգին հայոց։

Իսկ ես հաստատուն կամ ի հաւատս և սպասեմ կատարածի արդարութեան, զի եթէ խորհուրդս այս ի մարդկանէ է՝ ինքնին քակտեսցի. իսկ թէ ի յԱստուծոյ՝ մի՛ գուցէ աստուածամարտ գտանիցիմք, բայց՝ ըստ խրատու Փրկչին ի պտղոյ իւրմէ ծանիջի՛ք զնոսա, ծառն չար է, դի՛արդ արասցէ զպտուղ բարի։ Նախիջևանու ժողովուրդքն երկու տեփութաս առաքեալեն առ կայսրն պրվելէկիւ իւրեանց, երբ եկեալ կոփածու մարդակերպ առաջնորդն իւրեանց տեսին, բացէ ի բաց հեռացեալ՝ առ իս դիմեցին և աղերս արկին օգնական լինիլ իւրեանց գործոյն, ես առաջինն չկամեցայ սակայն՝ ի բազում թախանձանս նոցա աղաչանացն լուեալ՝ և սրտացաւօրէն ցաւակից լեալ՝ ողորմութեան նոցա, որ մնացեալ են թափառիկ ըստ յիմարութեան իւրեանց ի անապատի մօլորեալ՝ առանց հովուի, ընկտլայ զնոսա գթով, մանաւանդ ջատագովքն էին Յովսէփայ. ուստի ի պատիւ հոգեծնիս, անկայ առաջի նոցա. տարայ առ երևելի բարեբար իշխանս, մատուցի զդրեալ վասն նոցա խնդիրն իմ ի դիմաց նոցա, և յանձնեցի իմ բարեբար եներալ բրգուրորին զգործն. սիրով յանձն էառ, զի այրս այս յատուկ պաշտպան է իմ, և երկրորդ՝ անձն թագաւորութեանս։ Վաղեան օրն որ է կիւրակէ, տօն վերափոխման սրբուհոյն Աստուածածնի, կայսեր լինելոց են ներկայ առ ի մատուցանել զփոքրիկ զնծայիկս իւրեանց, որ է 25 ջիֆտ մաշկի երես կարովի, և տասն հատ ջզտան. որով ուրախացեալ բերկրին և օրհնեն զլուսահոգին և զմեզ, գրեցին առ քաղաքացիս իւրեանց զկուրութիւն իւրեանց ժողովրդեան, թէ որպէս նոքա յիմարեցան միանալ ընդ Հաշտարխանցիս, այժմ կամին սոքա ի դիմաց իւրեանց հասարակութեան կայսեր վասն իմ խնդիր մատուցանել, թէ մեք օտարական եմք մեք թարց լեզուագէտ առաջնորդ գոլ ո՛չ կարեմք, զի Եփրեմ իբրև մեզ անգետ ունէ, մեք նմա առաջնորդեսցուք, թէ նա մեզ, և այսպիսիս, բայց՝ ես սպասեմ որ յետ աւարտելոյ բանից իւրեանց հասա-

րակութեամբ առ կայսր բողոքեսցեն, որպէս վասն իմ նոյնպէս վասն ս. Էջմիածնի, որ օտարանալ չկարեմք։

Վասն խիլային ձերոյ լերուք անհոգ, երբ ուրախացուսջիք զմեզ. բայց՝ մի՛ զլանայք, այլ՝ փութացէք զի կեանքս մաշեցաւ երբ կենամաշ մեռայ և ես ընդ Յովսէփայ թաղեալ ի գերեզմանի սակաւ հարկաւորի խնդութեան զայս աւետիս։

Վասն քոյ գքելոյ խնդրոյն չէ պիտոյ օրինակ ռուսերէն առաքել, այլ ըստ յարմարին գրեսջիք հայերէն և առաքեսջիք ուղիղ կայսեր անուամբ, և խնդիր մի վրացերէն գրեալ առ Սէրկէ Լազարեիչն խոստանալով նմա ծառայութիւնս հաւատարմական, որ ցուցանէ և այլն։ Եւ կամ վրացերէն լիցի ե կայսերական թուղթն, ես աստ գիտելով զժամանակն թղթոյդ ժամանմամն հոգացայց ի ձեռն որոյ հարկն է, առ այն լեր միամիտ։

Իսկ վասն ժամացուցին լեր անհոգ մինչև ցգալոյ փոստն հոգացից եթէ ըստ գրեցելոյդ զտանիցի, լաւութեամբ և գնովն։ Զի ես ոչ թէ գնովոյն դարձուցմամբ, այլ՝ վասն խաթէր քոյ բարեկամուհոյն քո կարեմ ընծայել որ ի յատուկ սիրողէ քումէ մատուսցեն ընծայն սիրուհոյն և կամ բարեբարուհոյն քո։

Գևորք Ազաեկեանին կարօտիւ ողջոյնս նուիրեմ. նոյնպէս Ստեփաննոս արհոյն, զարմանամ որ ի մէջ իմոց աննենգ բարեկամաց իմով գանգատէք ախքատութենէ, ես գրեալ եմ և գրեմ որ իբրև իսկական ձեր դրամ սաասջիք ի նոցունց, այսինքն իմ բարեբարաց, և կամ անձնագիր բարեկամաց։

Այս փոստին ոչ կարացի լուսահոգւոյ կօնդակի օրինակն առաքել, որով յանձնէ ինձ զտպարանն իւր հանդերձ ամենայն նորին պարագայիւք, որմէ գիտասցես լիովին՝ զոր հարկն է գիտել ձեզ մինչ այդր էք և մերձ Հնդկաց, որ կարասջիք հրատարակել։

Եփրեմն կայսերական բացասութեան ոչ բաւականացեալ ի պոլիցն մատուցեալ է խնդիր ի վերայ իմ բողոք, ոչ այնքան ի վերայ իմ որքան ի վերայ լուսահոգոյն, որ իբր ամենայն հայոց դրամս ժողովեալ, ոչ ինչ բարեկարգութիւն չէ յառաջեցուցեալ ի յազգս, և զայն ամենայն իբր ես կողոպտեալ եմ, և չեմ հասուցեալ ի ս. Աթոռն, և այլ այսպիսի մօլի և տգէտ բանս։ որոց կատարածն յինքեան ելցէ խայտառակութեան պտուղ։

Մահտեսի Միեսեբիգ կարօտիւ ողջունեմ, շնորհակալ եմ գրոյդ ընկալայ ընդ տէրտէրի գրոյն, բայց՝ տակաւին ոչ ուրախ առնես զիս գրովդ, վասնորոյ և ես զիմ մեծամեծ շնորհակալութիւնքն գաղեալ ունիմ, ի հողոջ։ Եփրեմն խայտառակ եղև առաջի կայսեր, զի յայտնեցաւ ստութիւնն նորա, թիլֆիզցիք ե միաբանք ս. Էջմիածնի բողոքեցին ուղիղ առ կայսր և այժմ ամենայն ուստեքէ ակնունիմ արդարութեան դատաստանին լսելոյ։ Արիացիք և քաջալերեա զպարոն Գևորք Ազաեկեան աննենգ բարեկամս իմ, զիարդ ի քուն թըմրեալ թշնամեաց ծաղր լինիլ թողու զիս, և զգերեզման սիրելոյն իւրոյ Յովսէփայ զարթիցի իբրև հազար ի քնոյ. և կործանեալ թոթափեսցէ ընդ ոտիւք ջմլեսցէ զթշնամիս ս. Էջմիածնի, և գերեզման ծնողիս որ ի զօրանալն առաւել, խայտառակել ունին զնորին ոսկերս, իսկ պր. Անդրէաս Մինասեան սիրական իմոյ բարեկամի ամենայն շարժմանցն այնպէս երևի որ հաջեալ է ընդ կաթուղիկոսութիւնն Դանիէլի, զիարդ ոչ ցուցանէ զբարեկամութեան իւր զնշան. միթէ ի մահուանէ երկնչի, ոչ ապաքէն ոչ գուի բարեկամն, եթէ ոչ անձնագիր լիցի վասն բարեկամին, զի բարեկամութեան ճշմարիտ կապն Փրկիչն իւրով ընթացիւքն եցոյց, յանձն մատնելով ի չարչարանս վասն փրկելոյ ի մահուանէ զբարեկամ բնութիւնս մարդկային յանձնէ և զմահ, րևեռեցաւ ընդ խաչափայտի, երբ փախչի ոք ի գրամավատնութենէ ի նեղութենէ ի ցաւօց, ի հոգոց, վասն բարեկամի. այլ ասել թէ բանիւ պատրաստեմ օգնել, այնպիսի կերպ բարեկամք բազումք գտանին, զի և թռչունք սպասաւորեն, յորժամ տեսանեն զփշրանս ի սեղանոյ անկեալ, զի գտցեն ի շողոքորթութենէ զկերակուր անձանց զայս ոչ միայն վայելէ պրն. Անդրէասին, այլ՝ մեզ ամենեցուն։ Վասնորոյ ես կամ, զոր խոստացայ հաստատուն, եթէ ոչ Տէր բարձցէ յինէն զկեանս, մեռանիմ

վասն անուան Յովսէփայ և ապրիմ ընդ պայծառ անուան նորա, ոչ վասն այնմ որ իբր ի փշրանաց անկելոց ի սեղանոյն յագեցայ, Տէր ցրեսցէ ոսկերս այնպիսոյն, այլ այնմ և եթ, որ յետ Աստուծոյ նովաւ համարիմ կեալ, և գոլ։ Այլ վասն շահուց հեռաւորք առաւել կարէին պարծիլ, քան ես որ ես մերձն էի, մանաւանդ զի և բնութիւնն իմ ես չէր կամակից այնմ արծաթսիրութեան, վասնորոյ և ոչ եղէ հարուստ, որպէս ոմանք ի մեզ։ Այլ՝ ես անուամբ պարծիլն բարւոք վարկայ քան քիսակով, վասնորոյ այժմ եբբեմն համարիմ ինձ սխալեալ, երբ տեսանեմ ամենայնունկն արծաթոյ հեզութեամբ լսէ։ Իմոյ աղքատութեանս և անարծաթութեանս գուցէ Աստուած լսիցէ, որ և յուսամ ըստ հաւատարիմ խոստմանն, և Տէր արժանացուսցէ լսել ուրախական երանաւէտ կենաց ձայնին, որ գերագոյն լինի քան զամենայն բարիս աշխարհի համայն սիրելեօք, ձեօք և համայն աշխատաւորօք, որ և մնամ վասն ձեր պատրաստական ծառայ և խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս հայոց և սրբոյ էջմիածնի։

Դ.

Ծերունազարդ տէր Ստեփաննոս խոհական աւագ քահանայ.

Իմ հարազատագոյն բարեկամ.

Օգոստոսի 16էն գրեալ թուղթ մեր, ամսոյս 12ին յարգմամբ և բազում սիրով ընկալայ, նախ՝ ինձ յոյժ ցանկալի առողջութեանդ համբաւն լսելով, երկրորդ՝ իշխանին աշխարհիս անկումն, զոլոյն նախապատրաստեալ, Տէր Յիսուս յաջողեսցէ զգործս ձեռաց ձերոց, ապենիազն Աստուած՝ զօրացուսցէ զգործաւորս մեր, առ ի խընդութեամբ ազատել զգերեալսն ի նմանէ, անցեալ փոստին համեմատ ձերդ քարոզութեան, և ես գրեալ էի առ ձեզ և առ Դևորք յարգելին մեր, և դուք նոյն մտօք խօսեցեալ էք, մինչ դրամն յայնժամ լինի վճարեալ երբ բանին վաղջանն տեսցի ուրախ, ընդ՟ր ուրեմն, երկնչելի է այնմանէ, բանիք են որ յառաջ մատչին յայնժամ, քանի հոգիք նոր նորոգեալ կենդանութիւն զգենուն յայնժամ։ Քաջալերեցարուք, զի ե աստ Տէր կոբծանեաց զհակառակորդ իշխանս, Քուչուպէյն եզև մեծ, և անուանեցաւ մինիստր ներքսային բանից, իսկ արտաքին բանիցն, փոխանակ յիմար Քուրաքինի, Վոռօնցօֆն, և այսպիսի բազում իշխանք զարթեան նոր. իսկ հինքն անկան որք հակառակք կային ճշմարտութեան. այժմ հաւատացի և ծանեայ զոր Տէր Յիսուս պատերազմի ընդ ճշմարտութիւնս մեր, կանգնելոյ, և զիշխանն Բելիար ընկենլոյ, տակաւին ոչ տեսեալ հաւատամ որ յաղթութիւնն ի մեր կողմն է։

Ամսոյս 14ին Եփրեմն պատարագաւ իւրով ընթերցաւ կօնդակ Դանիէլի ի յեկեղեցւոջ, և քարոզ կարդալ ետ տէր Առաքելի որդի տէր Մէլիքսէթին, և զայն ռուսերէն թարգմանեալ, տարածեցին ամենեցուն, իբր Դանիէլն Աթոռ մտեալ և օծումն ընկալեալ, բայց՝ տէրութիւնն այժմ լաւ գիտէ, ոչ կարեն խաբել, փութացուցէք դուք զձեռագիր հասարակութեան, և Դաւիթի վերայ այդր Ֆէրմանն փոխել զի երբ այդր հաստատի, աստ յոյժ դիւրին լինի, զի սոքա այժմ այդր ընդունեալն ցուցանեն մեզ, յայնժամ չունին պատճառս ինչ առաջի առնելոյ,—լինի արդեօք ինձ դադարիլ այսմանէ և հոգալ միմիայն յազգաօգուտ իրակութիւնս, որ յառաջացուցեալ լուսահոգի Տեառնս ընդ վայր չկորնչէին, այս միայն է որ պահէ զիս ի նեղութեանս, ապա թէ ոչ երթնում Աստուածն կենդանի որ վաղ ուրեմն հեռացեալ՝ իբրև խոտաճարակ ոմն ի յանապատս թափառիկ անկանելոց էի խորհիլ միմիայն փրկութենէ հոգոյս, բայց անջինջ յիշատակքն Յովսէփայ, ոչ թողուն զիս, զի ես եմ նմա պատասխանատու հանդերձեալն, ուրեմն մի երբեք թուլանայք ով հարազատք տեառն և իմ, աշխատիլ, և արձանն մարմառօնեայ կանգնեալն

ի յիշատակ գերյարգեանի, այժմ երկրորդել, հանդէպ նորա կանգնել և զանմահն Ցովսէփ, որ թէ մեք ձեռս ի բաց կալցուք, ոչ միայն Ցովսէփն ոչ կանգնի, այլ և բազմաց գովութեան արժանի այրն մեծ, գերյարգեան սամր իւրով, ոսկէ զրօշմ ի խորամիտի ծածկի, քանզի ընդ այն աշխատի Եփրեմն չիք. և Լազրեանքն մոլեալքն ի փառս։ Անցեալ փոստին թուրց վկայութեան հաւատարմացուցանէի ձեզ յաղագս առողջութեան մերայնոց, այժմ ահա ի ստուգութիւն այնմ, մատուցանեմ զթուղթ սիրական որդոյն ձերոյ, ցաւիմ ամուսնացուցանել դստերն ձերոյ որ չեղև ըստ կամաց ձերոց, բայց տղայն թէ լաւ համեստ և պիտանացու անձն է ձեռաց մի հանէք, աղջիկ շատ ունիմք վասն լաւից, խարջի էին խնդրեալ, ամսոյս տասնին առաքեցի ի ձեռն Սիմոն Սէրկէիչին տասն թումանս... այժմ յուսամ լինիցիք առ այս անհոգք...

Իսկ զոր ինչ պատկանի վասն ժամացուցին, ամենևին ոչ երևի ինկլիցի գործ, այլ խոստանան ըստ կամաց մերոց աստ լինել, և հաւատարմացուցանել որ գերազանց լինի ամրութեամբ քան զԻնգլիզուն, բայց՝ երեք ամիս հարկէ սպասել. իսկ Ֆրանսիզու շատ գոյ, և լաւն և մեծագինքն որպէս հաճիս, խնդրեմ իմացումն գրեսցես, զիարդ այդր ոչ գտանի. ես ընդ այն զարմանամ, սակայն հաւատարմացուցանեն վարպետք թէ, շատ սակաւ չինեն Ինկլիզք կանանց ժամացոյցս, առ ամօթոյ թէ առ ինչ վաղջան, զայս գոլն ոչ գիտեմ։ Անցեալ փոստին առ Փիլիպպոս ամիրայն գրեցի թուղթ և խնդրեցի թէ պատշաճ տեսանէք ինքնին մատուցանէք։

Գրեալ էիք վասն կասկածանացս, որ իբր ի դուր խորհիմ, ես ամենայն ինչ առաւելութենէ մեղաց իմոց զոլ ճանաչեմ, երբ աքեղայութիւն յանձն առի, և մուրանալն ոչ ամաչիմ, սակայն՝ վստահ եմ՝ ի ձեռնտուութիւնս աննենգ բարեկամաց իմոց ձեզապիսաց, որ ելից ի լոյս՝ և ապրեցայց ի ժանից չարակոր վիշապին, ես զԳանիէլն ի վերայ իմ տէր ճանաչողն չեմ. երբ պատառոյ միոյ հացի ևս կարօտիցիմ. զի հոգևոր աստիճանն խոնարհութեամբ՝ դարձոյց ի դիւական և արեանարբու մարթաւոր պետութեամբ՝ յաքշտակեալ իւրովի զպատիւ և զփառս, ասելով իմ էր զայս պատիւ և ես ում կամիմ նմա տամ, իբրև իսկական դաստիարակին իւրում նմանեալ։

Պարոն Գևորք Աղաեկոֆն բարով առնէր թէ մէկ շնորհաւորական թուղթ գրեալ, վասն իմ յանձնարարութիւն առնիցէր. քանզի Լազրոֆն գնացեալ առ նա շատ վատաբանեալ էր զդա՝ իսկ նա պատասխանել էր թէ ես Աղաեկոֆն ճանաչեմ, լաւ և հարազատ անձն է մերոյ թագաւորութեան, և ճշմարտասէր ոմն է. երբ նա Գրիգորական է ուրեմն երևի որ ճշմարտութիւնն նոցա կողմն է, այսմանէ Լազրոֆն հանդերձ Եփրեմիւ ամօթով և պատկառանօք ելեալ էին, և այնքան յիմար գտեալ, որ այս ամենայն անցք իւրոցն ի տան պատմեալ էին և մինն ի հարազատից նոցին, փութացոյց զհամբաւս այս ի գիտութիւն մեր, վասնորոյ յոյժ պատշաճ վարկանիմ գրելն և փութով, և ինձ իմացումն տալ ի գրելն։

Ստեփան արհին այդր պարապ նըստեալ զինչ գործէ որ մէկ գիր ևս չկարէ փոստէ ի փոստ առ մեզ և կամ առ Վեհն գրել, որում ծուլութեան երանեալ ողջունեմ։

Ցովհաննէս սրբազան պատրիարգին յինէն ողջոյն յայտնեսջիք. նոյնպէս Մարտիրոս արհոյն, երբ դրելոյ լինիք այս փոստիս Ցակոբ վարդապետէն սուրբ Կարապետու առաջնորդ ոչինչ էիք գրեալ և կամ Փիլիպպոս ամիրայէն, զի եղև վէճ նոցա և կաք։ Իմ Ղազար վարդապետն լռեաց, այլ ևս ոչ գրէ ազատ է արդեօք, լինի արդեօք զնոսա երամօք ուրախացեալ տեսանել, Աստուած ողորմեսցի ողորմելեացն և հանցէ զնոսա ի լոյս, օգնականութեամբ ձերին անարատ աշխատանաց. աստ յոյժ թուլացեալք են չարքն զի օգնիչք նոցա ամենեքեան իւրեանց գլխի քօսն հազիւ քորեն։ Տէր օրհնեսցէ զձեզ, և զԳևորք Աղաեկեանն որ խորհեցիք այդպիսի ազդու գիր առաքել սրբազան Վեհին, եթէ ոչ տակաւին անվճիռ լինէաք, օրհնեալ և դարձեալ լինիցիք օրհնեալ։

Քնեազ Բարսեղն և Սիմոն Մատաթեանն, նաև փոքր եղբայրն Բարսեղի քնեազ Գաւիթն զձեզ սիրով ողջունեն, անցեալն թուղթ

ձեր ընթերցեալ նաեւ թէ իւր անունն ոչ է ընդ ողջունս եղբարցն, ասաց թուի թէ իմ սատ լինելն ոչ գիտէ մեծ տէրտէրն, այժմանէ երևեցաւ նորին ներսային բաղձանքն. որ ողջոյն ձեր ցանկայ անել. ծառայէ սատ օֆիցերութեամբ ի յանձնապահ գնաի կայսեր, և է ուսեալ ամենայն եւրոպիական ուսմունս, հմուտ լեզուին ռուսաց, ֆրանսիզաց և նեմցէից. հայոց ե վրաց ոչ սակաւ։

Վասն ապրանաց առաքման զոր գրեալ էք պրն. Գողոսինչև Յովհաննէսին, բարոք է, բայց երկբայիմ թէ կարողասցեն առաքելն, զի մինչև տէրամբ չկործանեսցի պիղծ Եվրեմն, ոչ լինի մեզ կատարեալ փրկութիւն. զի զանազան խափէութեամբ լցուցեալ է զականջս ողորմելի ժողովրդեան և նոքա չգիտեն որն ճշմարիտ գոլ և որն սուտ, զի եպիսկոպոսական ատրճանաւ տեսանեն, և կարծեն թէ մարդ է և կամ բարեպաշտոն. այլ՝ ոչ մտածեն թէ, առաքելոց մինն սատանայ էր,

և այլն յանձնելով զի ի անփոփոխ սէր քոյ մնամ վասն ձերին սրբութեան. պատրաստական ծառայութեամբ խոնարհ. **Գրիգոր արքեպիսկոպոս** սրբոյ էջմիածնի։

1802 սեպտ. 16.
ի Ս. Պետրբուրխ.

Ե.

Ծերունազարդ, Հայր. Տ. Ստեփաննոս աւ. քհ., իմ յատկեղ բարեկամ.

Շնորհակալ եմ ամենայն աշխատութենէ ձերմէ, սակայն՝ ինձ այնպէս թուի թէ, նախ քան զառնել բանին ամենայն տեղիս հռչակելն, գործեաց ոչ սակաւ վնաս, զի թշնամիքն զգաստացեալ, ոչ խնայեցին զոսկին դարձեալ ի աւերութիւն մեր մխել, վասնորոյ դարձեալ եղաք աշխարհի նախատ։

Ի ձեր գրուած ապաւինեալ երիցս մատուցի կայսեր, զխնդիր, և ոչ միայն պատասխան արարին, այլ ի չորորդումն ահղոյգ ստորագրութիւնն թշնամեաց գաղտովի առաքեալն ժամանեալ առ Քուչուպէյն, որպէս թէ ամենայն ազգն մեր հնազանդ և հլու են հայրապետական իշխանութեան Դանիէլի բայց՝ զԴրիգորն պղտօրէ և հանէ ղնոսա ի ուղղութենէ, վասնորոյ Քուչուպէյն կոչեալ զիս, պատմեաց զգանկատս նոցա և ասաց չխառնիլ, և թէ ոչ ասէ, կայսեր յայտնեցից, որ դու ես պղտորիչն, ես թէպէտ զոր հարկն էր խոսեցայ, սակայն տեսի որ լցուցեալ են ստաբանքն. վերջապէս թողեալ բանն Աստուծոյ արդարութեան, խոյս տալն համարեցի իրաւունս, զի նախ գիտն մի չունելոյս խարջի երկրորդ օգնական և ոչ մի, իսկ սրբազան կաթողիկոսն երբէք ոչ զղայ և ոչ ղթայ, այլ վասն ուրեմն զանձնս մահու մատուցից։ Այժմ պատրաստիմ աստէն ելանել, և գնալ ի Գրիգորիպոլ, և անդ աւարտեալ հոգալիքս, դիմել ի Նախիջևան, և անդ սպասել Աստուծոյ իրաւանցն, տեսցուք ձեր պատմեալքն որպէս լինի, եթէ ազգն արդարապէս ս. Աթոռն կամի ի հարկէ թագաւորք և Աստուած ողորմելոց են, իսկ թէ ուրացեալ զայն նոր աթոռ կազմեն, այն եղիցի ի հաջայս նոցա. մեք այժմ չունիմք երկար ինչ գրելոյ, զի ի ամենայն ժամանակի գրեալ եմք թէ աստէն ոչինչ լինի, այլ՝ ամենայն ինչ այգի պարտի սկիզբն լինիլ։

Խնդրեմ ապրանաց հաշիւն սիրելի եղբայր մահտեսի Միեսերիւ հասու եղեալ ինձ ի Դրիգորիպոլ ծանուցանել, զի ես անդեն աւարտեալ զամենայն հարկաւոր հոգալիս, կայսերական ռոճկօք անցուցանելոց եմ զկեանս ի խցի միում, եթէ տէր ոչ այց ելցէ, ըստ ձերդ յուսադրութեան, ամենայն տեղիս պարծեցաք, և պարծանք մեր՝ սրբազան կաթողիկոսն ի յերկիր կործանել ետ, զի ամենայնի մի պատճառն նորա ժլատութիւնն է, Աստուած տեսցէ ոչինչ ունիմ գրելոյ, զի ես այս ամենայն ի վաղուց տեսեալ, հոգեկան աչօք գրեցի։

Կայսրն հրաման ետ, նոր կարգեալ կողմնակալին ի տեղի Քնորինին, վերահասու լինիլ բանին և գրել իւրն։ ես դարձեալ մատուցի թուղթ կայսեր յայտնելով բոլոր բանին եղելութիւն, անիրաւութիւնքն Դանիէլի, և իրաւունքն Դաւթի, և ինքս չու-

եալ ելի ասաի, զի տեսցուք զինչ առնէ Աստուած։ Ես յուսամ՝ որ Վրացիքն հոգով չափ աշխատեսցեն վասն ճշմարտութեան, և լիցի յայտնեալ իրաւունքն, իմ սակաւ մի ևս աստէն մնալն բարոք էր առ ի տեսանել զմերձեալ վաղջանն ապա ամենևին, զօրութիւն ոչ մնաց, ի գոյս, և մանաւանդ անիծեալն Եփրեմ զյիմար Գրիգորիպօլցիս յարոյց իմ վերայ, վասնորոյ մեծ վտանգ լինի ինձ, և ծնողիս անվան պակասութիւն թէ ոչ փութացայց անդր, առ ի երես առ երես հանդիպիլ նոցա։

Երբ Աստուած յաջողեսցէ ձեզ զգործս ձեռաց ձերոց, բազմակնիք թուղթն, սրբազան պատրիարգն կարէ դեսպանին մատուցանել առ ի ուղղակի հասուցանել ի ձեռս կայսեր, և կամ, գրաֆ Վորոնցօվին։

Սիրական իմ ցաւակից Գևորգ Աղաեկեանին, սիրով և բազում կարօտիւ ողջոյնս նուիրեմ, նոյնպէս մահտեսի Միեսերին, և այլ հարցանողաց։

Ներել ժտեմ, և այլն ամենայն զոր հարկն է գրել, ի գալոյ փոստին գուցէ ի Գրիգորիպօլու գրեցից, և թէ ոչ յամեցայց ի կուպէռնն մեր։

Եւ այլն մնամ վասն ձեր պատրաստական ծառայութեամբս խոնարհ

Գրիգոր արքեպիսկոպոս հայոց։

1802 նոյեմբ. 2

ի Ս. Գ.

Ներեսք որ այլոց գիր չկարացի հասուցանել, այլ այսու գրով, կարեք ելս ասաի գիտել։

Ջ.

Սիրեցեալ եղբայր մահտեսի Միեսեր, իմ աննենգ բարեկամ.

Անցեալ ամսոյ մէկէն արձակեալ թուղթ ձեր, ամսոյս 12 ին ընկալայ, գիտացի ամենայն անցս յառաջացեալս այդր ի բարեհամբոյր ժողովրդենէ ի յառաջնորդութենէ զօրաւոր աղօթից սրբոյ հօրն մերոյ Լուսաւորչի, որոյ աղօթիւքն ակն ունիմ, մերկապարանոց լինիլ զամենայն օձապատիր խափէյութիւնս թշնամեաց։ Սակայն յոյժ ցաւիմ, որ նախ քան առնել գործոյն, ամենայն ուրեք հռչակեցաւ, մինչև թշնամիք ևս, որ զենընկեց կային ի ապահովլի, աճապարեցին ամրանալ, և մատնել զանձինս դարձեալ ի գործ պատերազմի, և զգոյս իւրեանց անխնահ նուիրեալ ի զոհ ԾԱՋ։ Ոյն ակկարօնի, աղթահարեցին զամենայն հարազատս, անուանելով պղտորիչ պարզամտաց, որպէս զհարազատն մեր Սիմօն Աէրկէիչ որ է Հաշտարխանու մաքսապետ, թէպէտ զօրաւոր մնաս չկարացին հասուցանել, սակայն ցաւեցուցին զսիրտս նորա. և վասն մեր աւելորդ է գրելն, երբեմն ողոքանս, երբեմն սպառնալիս, ի ձեռն զօրաւոր իւրեանց կողմն առեալ իշխանաց, սակայն՝ ոչինչ օգտեցան. մեք հնազանդ ցուցաք զանձն մեր մահու, քան ճանաչել զԴանիէլն կաթողիկոս վերջապէս խնդրեցաք ի կայսերէ. յատկացուցանել մեզ ի բնակութիւն զգաւառն Նովոռոսիսկու, ի քաղաքին որում մեք հաճիցեմք. ողորմածաբար հրամայեցաւ. ուստի հանդարտութեամբ տեսանեմք զպատրաստութիւն ճանապարհական, առ ի գնալ աստի նախ ի Գրիգորիպոլ և ապա ի Նախիջևան դադարիլ, ի սուրբ Գևորգ եկեղեցոյն, մինչև տեառն այցելութիւն։ Մեծապէս գոհունակութիւն ունիմ ի Գևորգ աղայեն. ես ոչ խնդրեմ զնմանէ թուղթ. այլ ցանկամ զառողջութիւն նորա. և ապա սպասաւորութիւն ճշմարտութեան, ես ոչ ելանէի, եթէ չէր ծանրացեալ սրբազան կաթողիկոսն ի վերայ քիսակաց, և Կարապետ վարդապետն լռելեան նստեալ ի Թիֆլիզ։ Երբ ելից աստի տեսցուք ով ձրի նստցի ծանուցանել նմա. ով ոք զինուորիցի իւրովք թոշակօք, ըստ առաքելոյն։ Երկարելն սրտամաշութիւն է երկոքին կողմանց, գրելն՝ և լսելն։

Երբ տեառն շնորհիւ հարկաւորիցի մահսէրական թուղթ, մատուցանելն ուղղակի դեսպանին բարոքէ, որ անմիջաբար կայսերական ձեռն հասուսցէ, զի մեք ոչ լինիմք աստ։ Այլ թողումք աստ յաղագս յիշեցուցանելոյ մերոյս բարեբարաց զանցս իւրաց. զպարոն Սիմօն Մագաթօֆն, քեռ որ-

զի՛ն լուսահոգւոյ որ ղրելոց է առ մեզ և առ ձեզ, նոյնպէս և դուք նմա։ Ցաւիմ որ ձերդ աշխատանք ո՛չ ժամանեաց ինձ ի ներկայութեանս որքան էի աստ, այժմ Աստուծոյ է յայտ որ զօրութիւնս հատաւ, և հասի ի խորին աղքատութիւն, դուք խոհեմութեամբ ձերով դատել կարէք, որ այսպիսի մեծածախ քաղաքի եօթն անձամբ, ինչ պիտոյ էր մսխել, տան միայն տալով քառասուն ռուպլի ամիսն, թող զվառելիսն, որ ծանր է քան զքիրահն, իսկ՝ զայն թողում որ թէև լոկ անուամբ սակայն՝ եպիսկոպոսականաւ բնակիմ, և ընկալնում զեկեալս չունելով արտաքուստ դիան մի՝ օգնութիւնս, բացի կայսերականէն. իսկ կարէթին ամսէնն հարիւր ռուպլի թարց որոյ անմարթէ իմոյ աստիճան ունողի արտաքս զելանել. զի այս օսմանցոյ տէրութիւնն չէ, որ գտակաւ հնար իցէ ամենայն ուրեք շրջիլ, մինչև առ երևելիս, զի և աստ դուցէ հնար է, բայց ո՛չ ինձ, այլ միւսում, որ թէ բիւրք դիպեցին, մինն հազիւ ի բիւրուց ճանաչէ, բայց մեզ ամենայն ոք. վասնորոյ ըստ կոչման աստիճանիս պարտիմ արտաքոյ տան երևիլ, թէև ի տան քաղցած նստիցիմ։

Ի վշտացեալ սրտէ դարձեալ մատուցի խնդիր ողորմած կայսեր, խնդրելով երեք ամաւ արձակութիւն երկրէս ելանելոյ և դիմելոյ ի սուրբ Սաղիմ, յաղագս լալոյ զապաբաղդ վիճակ կենի իմոյ, և առ այն ճանապարհորդութիւն խնդրեցի հինգ հարիւր թուման դրամ ի յօգնութիւն, տեսից զինչ պատասխան ելանէ, զի յագեցայ ամենայնի ոչ կամիմ զյետ լինիլ շքոյ և փառաց. բաւ համարիմ զոր վայելեցի, թող ժամանակ մի լացից զմեղս և զանօրէնութիւնս որովք հալածիմ։

Եւ այլն Մնամ վասն ձեր պատրաստական ծառայ խոնարհ **Գրիգոր արքեպիսկոպոս** հայոց և սրբոյ Էջմիածնի։

1802 նոյեմբ. 17
ի Ս. Պետրբ.

Ստեփաննոս արհոյն կարօտիւ զողջոյնս ձօնեմ։

Ի մէջ քանի աւուրց ելանելոց եմ աստի, զի տկարութիւնս արգելու, եթէ ոչ-վաղ ելեալ էի ի Գրիգորիպոլու գրեցից որպիսի վիճակի լինիլն իմ։

է.

Ծերունի Հայր տէր Ստեփաննոս աւագ քահանայ,
իմ անուշիկ բարեկամ,

Անցելում փոստին գրեցի համառօտիւ ձեզ որ յառաջագրեալ եմ ամենևին ելանել ի Ռուսաստանու և դիմել այդ կոյս անուամբ ուղթագնացութեան, զի կարի ստիպմամբ խնդրեցի ի կայսերէ, արձակել, զի նեղէին հնազանդիլ Գանիէլի, բայց ինձ չէր հնար առնուլ յանձն, և լինիլ ուղթագրուժ վասնորոյ հնարս գտի ժամանակ մի հեռանալ մինչև տեսցուք Աստուած ինչ առնէ, զի ձեր գրութիւն զմեզ յուսակտուր արարին, զի միոյ փոստէ միւս փոստն ստիպէին ակնկալեալ սպասել, վերջապէս տեսաք թէ այժմ, վերջ լինելոց չէ։

Խնդիր իմ ողորմածաբար ընկալեալ, արձակել հրամայեաց զիս ի յերկրէս երեք ամ ժամանակաւ շնորհելով հինգ հազար ռուպլի ճանապարհական խարջի և ես ուրախ և լի գոհութեամբ ընդունեալ նախապատրաստեմ զանձնս ելանել աստի, բայց այս երկարելոց է մինչև ամառնային եղանակն, զի թէպէտ յառաջագրեալ եմ ցամաքաւ ելանել ի վերայ Մալտաւու և Ուռումէլու և այլն զոր ինչ Աստուած յաջողեսցէ։

Որչափ Դանիէլն կայ ի գահի, չէ հնար մեզ դադար ունիլ ուրէք, զի անմարթ է մեզ հնազանդիլ անիրաւին, և թարց այնմ ամենայն օր ալիք խռովութեան ո՛չ դադարին ի ժողովրդեան, ես բազմիցս գրեցի առ ձեզ թէ, աստի չէ հնար բան ինչ առնել զի լցուցեալ են ստօք զականջս երևելեաց և կայսեր, ամենեքեան այնպէս գիտեն թէ ազգն ամենևին Դաւիթն չկամի, և անուանն

ևս յիշել մեզ և անիրաւութիւն համարի,՝ որպէս թէ բռնութեամբ աթոռ նստելոյ վասն։ Զինչև իցէ այդի կախի ամենայն բարեբաղդութիւնք ազգաց, և սրբազան արհեաց։

Աստ բաց այսցանէ ոչինչ նորագոյն լուր գոյ մեզ գրելոյ, զի Եփրեմն առ Լազրեանս նստեալ սպասէ Դանիէլի մուտն ի ս. աթոռն լսել, տեսցուք զայն որով օրինակօք, փառօք թէ կապանօք։

Թաղէոսն ժամանեալ է՝ ի Հռիմ, գրեալ էին առ մեզ՝ վասն նորա, այդպիսիս թէ չժողովեն ի երանելեաց ով կամաւորի մտանիլ ի պիղծ ժողովս նոցա, ցրւեսցէ։

Գէորգ Աղաեկովին սիրով օրհնութիւն տամ ցաւիմ այդքան երկար ձգելոյն զբանն. մինչև քլանիլ մեզ և յուսահատիլ, գուցէ վաղջանն զսքանչելապէս յայտնեսցի։

Մահտեսի Միսսերին օրհնութիւն տամ, շնորհակալ եմ յուսադրութեանցդ, բայց սակաւ օգտեցայ չարքն ամենայն ուրէք զօրացան, և մեք ընկճեցաք վասն մերոյս աղքատութեան և ծուլութեան։ Եւ վերջապէս քանի չարաց փոքրագոյնն յանձն առեալ չնաշխարհիկ լինիլ յանձն առաք, քան նաբուկոդոնոսօրեան կռոցն երկրպագանել։

Ստեփաննոս արհոյն կարօտիւ ողջոյն նուիրեմ, և խնդրեմ ի խոր քնոյ զարթնուլ։

և այլն մնամ վասն ձեր պատրաստական ծառայ և խոնարհ **Գրիգոր արքեպիսկոպոս** հայոց և սրբոյ Էջմիածնի։

1802 դեկտ. 2
ի Ս. Գ.

Սիմօն Սերկէիչ բարեկամն իմ, տասն թուման խարջի հասուցեալ ի տուն ձեր, ղաւզ էր ընկալեալ ի նոցանէ, և առ մեզ առաքեալ։

Զոր ինչ հակառակ անցք անցանիցէ առ Դանիէլն՝ ի ժողովրդենէ խնդրել պարտիք դեսպանին որ ծանուսցէ այսր։

Ը.

Ծերունի Հայր, տէր Ստեփաննոս աւագ քահանայ,
ծնողիս գործակից. եւ իմ աննենգ բարեկամ.

Ո՛չ է զամանք, որ ես ի սեպտեմբերի վերջին զկնի, այլ թուղթ չունիմ ի ձէնջ, զի նեղեալ և յոյժ վշտացեալ զոլով ի անօրէնութեանցն տանն Եղիազարու, և կազէն Եփրեմի, յանձն առի չնաշխարհիկ առնել զանձնս, հեռանալ երկրես, ամենեւին, և մտանել ի անկիւն մի անցուցանել անդ արտասուօք զմնացեալ զաւուրս կենաց իմոց։ Ուստի խնդրեցի ի կայսերէ արձակել զիս երեք ամաւ, անուամբ Սաղիմայ, և կայսրն ողորմածաբար թուլագրեալ հրամայեաց ևս շնորհել հինգ հազար ռուպլի վասն ճանապարհական խարջի, բայց՝ Աստուած որ գիտէ զմեծամեծ զողորմութիւնս իւր, յայնժամ ներգործել, . յորժամ պակասեալ նուաղիցին առ ի մէնջ զամենայն բարիք. ի ուսահատութենէ մինչ ամենայն ուրէք գրեալ էի առ ամենայն բարեկամս իմ, թէ չառաքել անուն մեր այսր թուղթ զի մեք ելանեմք, որպէս և առ Ֆետր Պետրովիչ Պէինն, վասն ձեր թրղթոց,—և մինչ դանդաղէի թողուլ քաղաքս, ել հողմ ի յարևմտից զեղեցիք և յոյժ ագնիւ անուշահոտ բուրմամբ, և լցոյց զքիմս, ամենայն ուղղափառ հաւատաւոր ակնադետ սպասողաց, ողորմութեան տեառն, և մեծ զարմանքն այս էր, որ նոյն անուշահոտ բուրմունքն, զոմանս մեռուցանէր, և զոմանս կենդանի առնէր, զոմանս ուրախ, և զոմանս, տխուր։ Եփրեմն կենդանի իբրու զմեռեալ, Լազրեանքն անշունչ իբրև զծառս չրջին։

Եփրեմն սոյն լուր ստացեալ ի Ներսէս աբեղայէ դանիէլեան, ոչ կարաց ծածկել, այլ՝ Լաշկարեւիւ, միացեալ՝ դարձեալ՝ մատոյց կայսեր զխնդիր իւր, առաջին հին ստորագրութեամբն, զի Ներսէսն գրեալ էր թէ իշխանքն ասացին այս բռնութեամբ թուրքաց է, իսկ մեր խօսելն և խնդիրն

խնդիր է, բայց՝ թէ բիւր ձեռնարկ մատուսցեն, անգործ մնայ, որպէս երբեմն զմերն։

Տակաւին ի դեսպանէն ոչ գոյ յայտարարութիւն—սպասէն այնմ, յուսամ զկնի այնմ ամենայն ինչ, իւր կարգն գացէ։ Ես ուրախ եմ նուիրեմ Աստուծոյ ամենամեծի զանհուն գովութիւնս, սակայն ոչ ինչ, կատարելապէս չգիտեմ վասն գրեանց առ իս չհասանելոյն, յուսամ ի մօտոյս ընկալնուլ, զի գրեալ եմ, առաքել, ես տակաւին աստ եմ, երկար գրելոյ ոչինչ ունիմ, դուք զօրացարուք տէրամբ և կարողութեամբ նորա. և ի գալ սրբազան պատրիարգին Յովհաննու յինեն աջոյն համբոյրս նուիրեալ, խնդրել ընդ ամենեսին սիրով և քաղցրութեամբ վարիլ, չտալ չարիս, չաբագործողս որք չարավճար եղեն՝ նմա. թող տէր ինքնին տեսցէ զգործս նոցա, և դատեսցէ, ինքեանք ամաչեսցեն իւրեանց անիրաւ գործոյն.—չիք Մանիէլն, և Ներսէսն, փախստեամբ գան այսր, զիարդ ոչ կալան զնոսա, որ խլուրգնէի չիք Դոնիէլի, բայց ասեն թէ անուանափոխ փախեալք են այդի, ոմն Կարապետ և ոմն Գրիգոր անուամբ։

Ես այժմ տակաւին, նոր ուրախարար լուր չունիմ, այլ Եփրեմեանց տրտմութեամբն շատանամ, բարերար իմ կոյս եղեալ իշխանքն կազմ պատրաստի կան ընդ կայսեր խօսելոյ վասն իմոյ ապաբաղդութեան, և այսքան անիրաւ կրեալ հալածանացս, ի ձեռաց Լազրեանց, և Եփրեմի։ Տեսցուք զինչ առնէ Տէր, սակայն սպասեն դեսպանի յայտարարութեան։

Այժմ զիմ խորհին շնորհակալութեամբն տակաւին ոչ հանդիսանամ առ ձեզ, այլ երբ բոլոր գրեանք ձեր ստացեալ տեղեկանամ, յայնժամ կատարեալ բանիւ մտից առ ձեզ, իսկ այժմ տակաւին, թալանված, բաղթնված, նեղեալ՝ և հալածեալ։ Որպէս լաւ տեղեկացայք ի առաջին փոստին գրեալ գրոցս,

Թնեազ Բարսեղն այսօր եւ աստի, և գնայ ի Տուլպասար, երբ անդր ժամանեսցէ գրելոց է առ ձեզ, բայց զիմ գիր միշտ առ բարեկամ Պէինն առաքէք որ ուր լինիլս նմա լինելոց է յայտ, և նա հասուցանելոց է, մահտեսի Միսսերն կարէ երբեմնապէս և զքնեազն իւր ուրախալի գրովք մխիթարել։

Աստ փոքր լրովք բոլորն գարձեալեն ի չիք Դանիէլէ և Եփրեմէ, և սկսեալ են հայհոյել զկազ դեն։

Եւ այլն մնամ վասն ձեր պատրաստական ծառայ

խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս սբրոյ էջմիածնի։

1802 դեկտ. 15

Սիրելի Դեորք Աղաեկովին, մահտեսի Միսսեր եղբորս սրբազան Ստեփանոս արհոյն, և այլ ամենայն հարցանօղաց կարօտական զողջոյնս նուիրեմ, խնդրեմ, Մարտիրոս արհոյն դրել յինէն շնորհաւորութիւն, և զողջոյն, նոյնպէս պրն. Յովհանէսին։

Թ.

Ծերունի Հայր տէր Ստեփանոս աւագ քահանայ, իմ աննենգ բարեկամ.

1803 փետրվ. 1. ի Ս. Պ.

Անցեալ դեկտեմբերի 15էն արձակեալ թուղթդ՝ յունվարի 18ին ունեցայ պատիւ ընկալնուլ, գիտացեալ տեղւոյդ ամենայն անցսն, ուրախ եղէ։ Աստ տակաւին ոչ գոյ խաղաղութիւն, այլ մաշումն, վասն զի՝ թշնամիք իմ հարուստ, և ես աղքատ. նոքա բազումք և ես մի՝ և սոյնս տակաւին սքանչելիք երեին տեսողաց. որ ես տակաւին ամբացեալ՝ կամ հաստատուն առաջի աչաց նոցա. իրաւի՝ շնորհք սրբոյ Աթոռոյն ընդ իս, և աղօթք հոգեծին Տեառնս հանդուցելոյ. այնքան լացի, աղաղակեցի—և գրովք գրեալ յայտնեցի սրբազան կաթողիկոսին պակակասութիւնս, երբէք ոչ թէ արդեամբք, այլև բանիւ չեզև ինձ օգնական. վասնորոյ ուսահատութեան հասեալ, հատաւ և վերջին զօրութիւնս. յաղագս որոյ՝ խնդրեցի ի կայսերէ թողուլ զիս երկրես. զի բազմացան զօրութիւնք նեղջացս. նեզէին հնազանդիլ Դանիէլի, և իմ ոչ առ-

նուլն յանձն, կատաղի մոլութեամբ գործէին զանազան չարիս՝ հակառակ մեր, մանաւանդ՝ զայն ի մէջ սրբոյ եկեղեցւոյ, այլ ես լինէի օրպէս խուլ, և որպէս համր, և թէպէտ ժողովուրդք դայթագղեալք հայհոյեին զնոսա, և բանբասէին, սակայն՝ նոքա այնցանէ և ոչ բնաւ պատկառէին, վերջապէս չգտի այլ հնար, քան թողլոյ երկիրս, և հեռանալոյ ի սմանէ, անւամբ ս. Երուսաղէմայ, և կայսրն գթութեամբ ընկալեալ խնդիրս, հրամայեաց արձակել զիս, և հինգ հազար ռուպլի, շնորհել ի գանձարանէ իւրմէ, վասն այսպիսի ճանապարհորդութեանս. մինչ այս փոփոխումն եղև, թշնամիքս տեսին, թէ երկու զօրաւոր վտանգ անկաւ առաջի նոցա, մնալս՝ և գնալս, բայց՝ մինչ գնալս փառօք էր քան մնալս, ջանացին արգել լինիլ, ի ձեռն Քուչուպէի, և բարեկամք ես այս փոխարկութենէս զօրացեալ՝ խնդիր արկին, աստի և անտի գրով հասեալ. որն՝ թշնամեաց ջանք, և որն իմ թուլադրութիւնն, արգել եղեն ինձ, մնալ աստեն. ուքազի օրինակն մնաց ի ձեռս իմ, իսկականն առ տէրն, և գրամն ի գանձարանի։

Հոգտեմբերի 21ին բազում չարիք յարուցին ի վերայ իմ, մինչև ի քաղաքէս հալածել, բայց շնորհօք սրբոյ աջոյն Լուսաւորչի, դարձեալ՝ զօրացեալ խորտակեցի զժանիս առիւծանման թշնամեացն, փառք և հազար փառք։ Կայսերն ծանուցին տեղոյղ փոփոխումն, և արքայի կամքն, սիրով ընդունեաց, և հրամայեաց հաստատել զԴաւիթն, բայց Քուչուպէյն Լաշկարեւիւ հակառակ կացին կամացն թագաւորի, ասելով, խնդրէ ազգն երրորդն ընտրել, զի այս հնազանդութիւնն առ Դաւիթ՝ ակամայ է, և կայսրն հրամայեաց, յայտնել ազգին, որ թէ կամին ոչ թէ երրորդն՝ այլ և չորրորդն ընտրեսցեն, վասնորոյ և յամեցաւ հաստատութիւնն կաթողիկոսի, զի Եփրեմն մատուցեալ էր չիք Մանիէլի բերեալ թուղթքն, մեր որում գրեալ էր, թէ ամենայն այսուհետև առաքեալ թուղթքն մեր, լինին ի նեղութենէ այլազգեաց վասնորոյ. մի՛ հաւատայք, օգնեցէք ողորմածութեամբ ձերով Դանիէլի, և թէ չիցէ հնար, հրամայեցէք ընտրել մեզ երրորդն, ըստ սրտի մերում, այժմ գրեցաւ դեսպանին յայտնել այդր ազգին թէ ճշմարիտ է զոր կամին, յուսամ այսմանէ յայտնեսցի բոլոր խափէյութիւնք սոցա, և այդր որպէս օրէնքն է յօրինեալ թուղթ մի ի բերանոյ ազգին, աղեկիզեալ սրտէ, յայտնեսցի բոլոր ապօրինաւոր աբարքն Եփրեմի, ընդդէմ մերոյս ճշմարիտ օբինաց, և հայրապետադիր կանօնաց, թէ որքան հակառակ գործեաց և որ տակաւին ոչ դադարի, և յատուկ թուղթ մի՝ պատրիարգին հնարէ տալ, բոլոր կարգն մերոյս ծիսի և օբինաց յայտնելով, յանձնել պատուէլի դեսպանին, ի անուն օգոստոս կայսեր, կարելի է և սոյնս ջիշել թէ, Եփրեմի արարմամբ ոչ ումի ինչ առաջանալ, քան ցրտութիւն սրտից ազգիս մերոյ, առ ս. Աթոռ ձեր, զի որքան ջեռեալ էր լուսահոդի Յովսէփ կաթողիկոսիւ, և ջեռանալ ունէր Գրիգորիւ, այնքան սառիլ ունի Եփրեմիւ, որպէս ահա ամս ողջոյն եցոյց. խնդրեմք յետս կալ ի նորին սնօտի խոսից, և քաղցրութեամբ լսել հարազատին ձերոյ Գրիգորի արքեպիսկոպոսի, համեմատ սմին կարելի է ի մէջ ընդհանրականին դրել, բայց՝ խնդրեմ փութով, զի այդմանէ կախի վաղջանն ամենայնի։

Դրեցի և առ բարեբար դեսպանն զոր ինչ հարկն էր, և եղի ի թուղթս. Դևորք աղայի, որ ինքն մատուցեալ առանձին գիտելեացն հասու լիցի, շատ ջանաց Քուչուպէյն փոխել զքանս, բայց՝ կայսրն ամենևին ոչ հաւանեցաւ. որպէս տեսանելոց էք և կամ լսելոց՝ առ դեսպանն հասեալ թղթոց։

Եփրեմն աստեն պոպկացաւ, երրորդն զինքն լինիլ, և այդր մօտ հարիւր թուղթ գրեաց յորդորանաց, ըստ խորհրդոյ չիք Մանիէլի, կարէք թուղթ մի ձեռ ձգել, զի բոլորն մի զօրութեամբ է, յորդորէ այժմ երրորդն ընտրել, և Ռուսաստան թողուլ, որպէս թէ ժամանակ մի, Ով սուրբ Լուսաւորիչ՝ մինչև երբ համբերես սորին արարմանց, հոգւով զգամ որ սոցա հոգւով և մարմնով կորուստն մերձեալ է, զի ինքեանք ոչ դիտեն զինչ գործեն, Դանիէլի պատւով ընկալեալ լինիլն՝ ի Դաւթէ կաթողիկոսէ, մինչև կայսեր ականջն հասուցի, ներհակ այնմ՝ զանազան այլանդակ գրուցս յօրինէն, բայց ամենևին չէ նման բանի։ Կայսրն ի

լսելն զովեալ էր, և հաւանեալ, և ասացեալ էր՝ երևի այր իմաստուն է, զկնի այնմ երբ պատկերն էր տեսեալ ասացեալ էր, արդարև իմաստուն դէմս ունի, և նմանի իսկական կարգաւորի. այսպիսի կերպ՝ կերպ՝ բանիւ առաջարկութեամբ ջանամ մեղմել զսիրտ նորա և քաղցրացուցանել առ նա, տեսցուք զինչ յառաջ գայ, և այսմանէ։ Սակայն՝ և ես այդի սպասելի է, զի բաւական էր, որ քաղցր կայսրս, հեռացոյց զանձն ի պաշտպանութենէ Դանիէլի, ասելով՝ իմ զործն չէ, ինքն ազգն գիտէ, հնազանդիլ, պահել և ոչ պահել, այլ մեզ չէ փոյթ այնմ։ Եփրեմ ոչ այսպէս կարծէր, վասնորոյ այլ հնարս խորհեալ, երրորդն առաջի էարկ որ գուցէ այսու սակաւիկ ևս մօլորեցուցանել մարթասցի, բայց ձվ լինի այնմ յառաջ մատնողն. կարգաւոր թէ աշխարհական, վասն երրորդի ինքն պոպկացեալ պատրաստ է, ես համբաւ առաքեցի առ ինքն թէ, բարւոք խորհի գլուխ լինիլ ազգիս անգլուխ մնացելոյ, բայց օգուտն սակաւ է, զի այսպիսի արբեալ գլուխ ունելուն, չունելն է բարւոք՝ պատասխանն այս էր ապարբեալ թէ, ես այն զող Դաւիթին ոչ հնազանդիմ—զի ազգն ձրպէս կարէ տանիլ այնմ որ երեք հարիւր քիսայ արքունի դուռն տուեալ, զանմեղ զառն յափշտակեաց—և թէ որքան տանջանաց մատնեալ է այժմ զանձն նորա ·և այլն. իսկ ժողովուրդն զզուեալ առ հասարակ, ժամէ ի ժամ սպասեն պատառել զամօթ և դառնալ առ մեզ, զի յայտնի ի հրապարակի քարոզէ հետս տալ՝ ի ս. Աթոռոյ, զի պիտոյ է մեզ ասէ Պարսիկս կերակրել, կուրութեամբ որպէս թէ հաւատոյ տունս մեր պահեմք, Աստուած՝ երբ՞ երարձ զթագաւորութիւնս մեր, երարց զամենայն շքեղութիւնս, վասնորոյ աւելորդ է կաթողիկոսական շուքն, եպիսկոպոսքն բաւ են մեզ ոմանք արդարև ծաղր առնեն. և ոչինչ համարին, իսկ որք ծերքն են, որպէս էին գեփութաթքն Նախիջեանու, զայրացեալ լնանին բարկութեամբ։ Եւ սակաւ ներումն վասն այն ընկալնու, որ անլեզու արբեալ անկեալ է գիշեր և ցերեկ հնար չէ որ ոք զնա արթուն տեսցէ, զի ի գիշերի ևս ծարաւոյ զովացուցիչն, հացէ հանեալ արաղն է, զոր աստ ռամիկք ընպեն, և կոչեն պռօստոյ, այսինքն հասարակ. ես զարմանամ թէ ի ժամանակս ժամարարութեան որպէս համբերէ. և կամ մինչև կէս գիշերն միայն, ունի կանօնեալ, ի կէս գիշերէ անջրպետիլ, ի ծոմապահութիւն, և այլն, Աստուած ինքն գատեսցէ, մեք դարձցուք ի բանս մեր։

Առ սրբազան պատրիարգն համառօտ շնորհաւորութիւն գրեցաք, նոյնպէս առ մահտեսին, դիտեմ երկարն դուք ծանուցանելոց էք։ Սակայն՝ խնդրեմ ի սէրն Աստուծոյ տակաւին չհեռանալ այդի, մինչև ես աստի ուրախութեամբ սրտի չձայնեցից՝ արի տէրն, զի այդր ձվ գիտէ որպէս նենգաւոր հոգիք շրջապատելոց են զանմեզ հայրիկն իմ, զի յետ լուսահոգի ծնօղիս զգա ընկալայ ինձ հայր և տէր, իսկ դու իբրև ծնօղիս հանգուցելոյ գործակից, և այժմ լեր նորին որդոց խնամիչ և պաշտպանիչ. զգա այդր ամրացո և ապա զիս աստ, տեզոյդ օգնականութեամբ, և ապա ի մէջ երկուցս, ճիսկական՝ հայրական, և տէրունական պատուով՝ ապահովացիր։ Իսկ այսմիկ միջոցի յոյժ՝ և յոյժ հարկաւոր է քոյ այդր գոլն. աղաչեմ համբերել սակաւիկ մի ևս, վասն ընտանեացդ լեր անհոգս, ես որքան կարս զօրեսցէ օգնական լինելոց եմ կան ի ողջութեան օրհնելով կեանքդ։

Առ սրբազան կաթողիկոսն թուի թէ թուղթքս ոչ ժամանեն, զի և ի նմանէ չունիմ համբաւ և լուր, զի ամուր կապեալեն, վասնորոյ խնդրեմ՝ դուք այդի, զամենայն հարկաւոր գրելիսն յայտնեալ ծանուսջիք, թող փութացուսցէ նուիրակունս, իւր հարազատից ընդ ամենայն երկիրդ ցրուել և պատուիրել, ընդ ամենեսին սէր առնել, առաւել ընդ թշնամիս, մինչև ցժամանակ ինչ, որ այս մրրիկս աստուածուստ անցցէ։ Բարոք է արարեալ սիրով ընկալնուլն Դանիէլի, ե Գրիգորի, բայց՝ արթուն մնասցէ, մի գուցէ ըստ նմանութեան Յօհաննիսի ի Թիլֆիզ յայտնեսցի, և հանցէ նոր պղտօրութիւն կրօնից և օրինաց մերոց։ Տէր Մեսրոպէն պատրաստ լերուք, և Եփրեմի թուղթքն տեսէք առ ով լինի, ինձ թւի Անկլիացոց դեսպանի թարգմանի ձեռամբն լինի. տարածեալ, ինձ տեզոյս դեսպանն Անկլիացոց շատ մերձ բարեկամ է

եկեալ էր առ նա Մանիէլն, ատորում այդի դեսպանէն դիր ունէր, երբ յինէն բոլոր անցքն տեղեկացեալ էր, առանց գթոյ ընկալաւ զնա։

Այժմ այս ճշմարտութեամբ գիտեմ որ Եփրեմի սիրող ոչ ոք է ի ազգէ մերմէ, բացի Լազրեանց, ի ռուստաց, միմիայն Լաշկարևն, և զայն վասն գաղտնի բարեկամութեանց, և բացի սոցանէ ոչ ոք. և սոքա շուտով թողուն, մանաւանդ Լաշկարեն։

Ես տակաւին աստ եմ՝ և սպասելոց եմ վաղջանին, թէ զինչ տայ Աստուած սքանչելապէս ըստ առաջնոյն, որ անակնկալ լսողք զարհուրեցան։ Օրհնեալ լիցին մատունք և շրթունք ձեր, զորս աշխատեցան, Տէր Յիսուս վարձատրիչ լիցի, մինչև և մեք զգաստասցուք։ Եւ կամ զօրութիւն ըստառցուք։

Տէր Գրիգոր աւագ քահանայն տեղւոյս մշտահարազատն մեր՝ թէպէտ ի վաղուց հեծեր և հոգայր, և խորհէր սկսել ինչ, բայց՝ ոչ գտանէր պատճառս, այժմ ուրացութիւնն Եփրեմի, զսուրբ աթոռն, և երրորդ չորրորդ ընտրութեան զհետ լինիլն, եգև առիթ, ընաբանի սմա, վասնորոյ գրեաց առ իւր Հաշտարխանցիս, առ Նախիջևանցիս զգաստանալ, և փութալ աղերսական թղթովք առ ողորմած կայսրն, յայտնելով զայն որ ամենայն ազգք մեր՝ գոլով ենթ լծոյ բարբարոսաց ոչ զրկին ի շնորհարաշխ գլխոյ իւրեանց, և սրբոյ աթոռոյ ակն ունիմք որ ենթ քրիստոսապսակ օգոստափառ գաւազանի ձերում եղեալքս, ևս առաւել չը գտցուք զրկեալք, և այլ սմին նման յորդորական բանք, յուսամ շնորհիւ տեառն զի աստեսցի նոցա։

Մեծ ջանքս պիտի այժմ ձեզ, և արթնութիւն զարթուցանելոյ զբարեբար դեսպանն, և յայտնելոյ նմա, զամենայն կանոնս՝ և օրէնս, ազգիս մերոյ, որ և նա լի պարագայիւք յայտնեալ դուռն մեծի կոյսեր, յուսակտուր լեալ անարգեսցեն զպղտորիչս, երբ ասիցէք, թէ ընդէր դու ոչ յայտնէք, լաւ յայտնեմ՝ ապա ըստ գայլի և աղուեսու առակին կարթացօղ չգոյ։ Այժմ ես յուսամ որ ձեր աշխատանքն սրբազան պատրիարգիւ առաւել զօրաւոր լիցի, և աստու, որ այլ պղտորիչք ոչ կարեն մեզ խոչն լինիլ, մի խորհուրդ ևս տալն այնպիսեաց չէ փոյթ, ես աստ եմ ապա շատ կասկածանօք, արդարև որպէս ի վերն գրեցի, ես եմ որ տանիմ, և կամ դիմանամ, իմ պակասութիւնս աղքատութիւնն է, այս մէկ մազեայ կարմունջս անցանել մարթանայաք, Աստուծով այնուհետև ի խաղաղ հանգիստ վայրս դադարել լինէր.—Գևորք Աղաեկովին աղաչեմ ի սէրն աստուծոյ, այս անգամս առաւել այրութիւն զգենուլ, զի այս վերջինն է, Աստուած քրտանցն վարձատրիչ լինիցի. և սուրբ Լուսաւորիչն, սրբազան Մարտիրոս արհոյն զգաստացուցէք։ իմ գիրս դարձեալ՝ առ Պէյինն առաքեցէք, զուցէ դժւարին լիցի այլևս աստէն ժուժելն, նմա գրեցից ուր և իցեմ, ինձ Լազրեանքն ճանճ մի են, դժւարս ի Քուչուպէյի հակառակութենէն է։ Աստուած ինքն բարձցէ զկեանս սորա, խնդրեմ առանձին տէր ողորմեա ասել ի եկեղեցիս, որպէս առ Ուլիանոսիւ տէր բարձցէ զնա։ Զի բոլոր պղտորողն և խառնողն սա է, Լաշկարևիւ։

Եւ այլն Յամ վասն ձեր պատրաստական ծառայ խոնարհ **Գրիգոր արքեպիսկոպոս** սրբոյ էջմիածնի։

Ժ.

Ծերունազարդ Հայր տէր Ստեփանոս խոհական աւ. քահանայից, եւ հոգեծին տեառնս գործակից՝ բազմարդիւն բարեկամից ի տէր խնդալ.

Փետրվարի 27էն ելեալ ի Պետերբուրխու, եկի ի վերայ Մոսկովու, ի Եկատերինոյսլաւ, և անդ վասն տկարութեանս մէկ ամիս լրիւ կացեալ, եկի քաղաքս ապրելի 29 ին, զի թէպէտ Նախիջևանցիք գրով խնդիր արձակեալ էին առ մեզ գնալ առ ինքեանս, սակայն՝ մեզ չէր հնար այսրնախ չդիմել, զի Եփրեմի ստութիւնն և աստուածուրաց զրպարտանքն պայծառ անվան Յովսէփայ արկեալն՝ յայտնեսցի. ուստի նախ՝ իջի ի գիւղն լուսահոգւոյ եղբօր որդոց

պատկանեալ, որ վեց ժամ. հեռաւորութիւն ունի քաղաքէս, և ի մահ ունէի անդէն մնալ առ ժամանակ մի և անդէն աւարտել զհաշիւ սոցա, եթէ ունէին ընդ հանդուցեալ ծնօղիս և կամ. մեր, սակայն՝ քաղաքացիքն ի լսելն իւրեանց ի մի ժողովեալ ընտրեալ էին երեք պատուաւոր անձանց դէփութաթս և կամ. խնդրակս, որ առ մեզ եկեալ ի հասարակաց դիմաց խնդրեսցեն առ իւրեանս, որոյ աղաչանօք եկի ի քաղաք այսր, ուր բազմութիւնք քաղաքիս՝ քահանայք իշխանք և աղքատք եկին առ մեզ ամբոխիւ, և անկեալ ոտս մեր մեղայիւ թողութիւն խընդրէին տալ, և ներել անզգամութեան իւրեանց զոր ի յոմանց չարասիրաց պատրեցեալ՝ անզգամեցան ընդդէմ. բարերարաց իւրեանց, յետոյ ի ծիծաղ արկեալ անամօթ չվք էրէցն Յոհաննէս, որ բուն պզտօրիչն է խաղաղութեան սոցա ասաց, մեղաք ձվ տէր, զի առաւել ստոյգն այն է, որ մեք թէ իմանայաք որ դու իբրև Ղազարոս յարուցեալ գաս առ մեզ մեք, բնաւ ոչ կարայաք զայս յիմարութիւնս առնել, ստութեամբ լնուլ զթուղթս ձեր, և անմեղ անձն լուսահոգւոյ և մեր զրպարտել, այլ՝ այնպէս իմացաք թէ դուք ընդ Յովսէփայ մեռաք, և զկնի մեռելոյ խօսիլն անպատասխան է, իսկ այժմ. մինչ կենդանի տեսանեմք, մեղայի արկանեմք բուռն, որ զօրաւոր է քան զամենեսին ըստ վկայելոյ ս. գրոց, վերջապէս ըստ պատշաճին խօսեալ ընդ նոսա արձակեցաք սիրով։ Իսկ Եփրեմն նախ քան զգալուստ մեր այսր արձակեալ էր առ սոսա թուղթ մի՝ և պատուիրեալ էր, այն գրով զմեզ եպիսկոպոս չանուանել և չպատուել՝ համբոյր աջոյ չմերձիլ. եկեղեցի չթողուլ, և թէ անգգնեալ մտանիցեմք, եպիսկոպոսական պատիւ չտալ, խալիչայ .և աթոռ չունիլ, և թէ մեռանիլ դիպեսցի քահանայական թաղմամբ չպատուել և այլն, և թէ անդգնեսցի ոք ընդդեմ. նորին. հրամանի վերոյ գրեցելոցն ցուցանել մեզ, հոգևոր և մարմնաւոր պատժոք պատժեցեալ լինելոց է, այնպիսին, զի հրամանս ասէ՝ կայսերականէ, և զայս պատւէր ընթերցեալէ չիք էրէցն Յոհաննէս ի մէջ մաղիստրաթի, ի ներկայութեան հրապարակական ատենի, որ ի սոյն պատճառ կոչեցեալ լեալք են, և այնց լսողաց և պատուէր ընկալնօղաց բազումք անբաւական համարեալ զինքեանս եկեալ են, առ քաղաքապետն և յայտնեալ զամենայն անցս, ասելով եթէ կայսերական է հրամանն, և մեք պարտիմք լսօղ լինիլ, պարտ էիք և դուք ստանալ ի կուպէոնաթօբէն, որ մեք առաւել յարգութեամբ ընդունէաք կայսեբական հրամանն, քան մեր կորդաւորաց ձեռամբն և քաղաքապետն նեմցայ գոլով ազգաւ և արդարասէր ոմն, առաքեալ է միաւորական գրով յայտարարութիւն առ մաղիստրաթն՝ տալ և ինքեան գիտել, զայն .կայսերական հրաման. զոր նոքա ընկալեալ են, զի և նա համեմատ հրամանի կայսերական պատուիրեսցէ ժողովրդեանն հեռի կալ ի մենջ, և չպատուել և այլն. իսկ մաղիստրաթն տեսանելով վտանգ ինքեանց և առաջնորդին իւրեանց ցուցմանէ գրոյն, ուրացեալ են թէ այնպիսի գիր չեն տեսեալ և չեն ընթերցեալ, քաղաքապետն և բազմութիւն ժողովրդեանն անկեալ ի մեր կողմն խնդրեն զթուղթն իսկ նոքա զմեզ շողոքորթելով ջանան ծածկել, վասնորոյ ամենայն կողմունքն զատ իբերաց զան, և հակառակ կողմն զրպարտութեամբ մբոտեն, բայց մեք ջանամք զմեր հարկաւորն գործել, և առնել, ոչ նոցա և ոչ միւսոցն տամք հաստատուն բռնեալ որով պարծեսցին այլ՝ թողում. արածելով զհոտն շրջիլ, մինչև զիմն եզերեցից, այժմ. սկսեալ եմ. ապրանքի պահանջման, և տան քուրքս, որ մինչև աթոռքս կողոպտեալ են գրեանքս և այլ ինչ բազում, այժմ. տեսցուք մեղայից պտուղն զինչ կթեմք։

Ի գալս տեսի աստ ի զարանթինոջ զբարերար դեսպանն Թամար, խօսեցայ և լցուցի զականջն հարկաւոր գիտելեօք, բազում. ջերմութիւն տեսի ի նմա առ մեր կողմն, Աստուած ինքն օգնեսցէ, և այլն ձեզ է յայտ նորա հոգի, վասն ձեր գրեալն Եփրեմի այդր ամիրայից ծանոյց ինձ, վասն այնմ՝ զինքն կացուցանէր դատախազ, փոխանակ ձեր, լինիլ առ Եփրեմն. և յուսադրեալ միամտեցոյց ի կողմանէ տեղոյդ նոր դեսպանին, որ իբր բոլորովին իւր շաւօղքն ընթանայ, տէր տացէ։

Նոյեմբերի 1 էն գրեալ թուղթ ձեր ֆարմանի օրինակն, և փոքրիկ մանսարն

նախ քան զգալուստ սրբազան պատրիարգի արարեալ, նոր ընկալայ ի գալն իմ ի Եկատերինոսլաւ, զի մինչ անդր գրեալ էի թէ գալոց եմ, թողեալ էր փոխմեստրն զթուղթքս առ իւրն. ուր ի գալս գտի և ի ձեռն երեք թուղթ, նոյեմբերի՝ դեկտեմբերի և յունվարի ամսեան գրեցեալքն, և մէկ թուղթ Գևորք Աղաեկով անուշիկ իմոյս բարեկամի։ Մարտիրոս արհոյ բազմակնիք թուղթն ընկալայ. աստէն և թարգմանեալ առաքեցի ի Պետերբուրխ որում հարկն էր, սակայն օգուտն փոքր է՝ մինչև տէր Ցիսուս, ինքնին ոչ այց ելցէ, ժամանակն հարկաւոր կորուսաք, ես աղաղակելով վաստակեցայ, իսկ Դաւիթ սրբազան վեհն վէմ. անշարժ եղեալ ոչ ետ զունկն ի լսել աղաղակի իմոյ, համարելով իրաւունս, թէ ոչ զնի արծաթով շնորհն Աստուծոյ արդարև այնպէս է, ապա որք ի սեղանոյ սպասաւորեն ի սեղանոյ անտի կերիցեն. սիրելոյն իմոյ և յարգոյ բարեկամին Գևորք Աղաեկեանին բազում յարգանօք զողջոյն նուիրեմ, նոյնպէս մահտեսի Միսսեր եղբօրս, սպասեմ ես աստեն ամենայն արդար իրաւանցն, լսել և տեսանել, զի՞ եղև երրորդ ընտրութիւնն և կամ լուրն ի ս. Էջմիածնէ զոր իբրև հրատարակէ, և մահտեսին դրեալ էր թէ յատուկ սուրհանդակաւ սպասեմք ստոյգ լրոյ, ես աստ ունիմ ժամանակ մի լինիլ. վասնորոյ ձեր գիր այսր առաքէք, և զկնի ամենայնի ի մտի ունիմ ի Նախիջևան բնականալ, հաստատուն սիրով կան վասն իմ և վասն լուսահոգի տեառնս զինեալ ընդդէմ ուրացողին իբրև։

Ամենայն սիրելեաց օրհնութիւն տուեալ մնամ վասն ձեր աղօթարար խոնարհ

Գրիգոր արքեպիսկոպոս

Սրբոյ Էջմիածնի և սպասաւոր Ցովսէփայ հոգելոյս կաթողիկոսի.

1803 մայիսի 15
ի Գրիգորիպոլ.

Աստ ի կողմունս առատ. անձրևօք ցընծան դաշտք, ուստի զուշակումն է մեծի առատութեան հացի։ Քննեաց Բարսեղն, աղայ Պողոս Թումանովն զձեզ սիրով՝ և աղայ Գևորքին յարգանօք ողջոյն նուիրեն, այժմ. չեն աստ այլ դիմեցին ի կուպեռնայն Նիկոլայև ուր բացեալ լինի նոր կարգաւորեալ, կուպեռնայն այսօր։

Մարտիրոս սրբազան արքեպիսկոպոսին և որք են ընդ նմա ճշմարտասէր հարց և եղբարց, նուիրեմ բազում կարօտիւ ողջոյնս։

Սրբազան պատրիարգին Ցօհաննու չկարացի յատուկ գրով նուիրել ծառայութիւնս խնդրեմ խոնարհութեամբս յայտ առնել կարօտական ողջոյնս, և ամենայն սիրակումար նորին գործակցաց։

Քոյային ամենեքեան ըստ քաջ տեղեկութեանս ողջ և առողջ են, և աղօթեն պատուականիդ կենաց սակս նոսա լեր անհոգս, այլ հոգա տեղոյդ հարկաւորն, որ այս անկմանէ կանգնեսցուք, քաջ կալոց են և ամենայն մեզ յարգողք յայնժամ. յոտին, և այլն Աստուած։ Այժմ. ունի իրաւունս իբրև չարասէր պաքուբել՝ որքան հնար է և խելքն տնօրինեսցէ չարախնդաց բանս ի վերայ մեր զի դոյ սակաւ նմանութիւն, որ անզօրութենէ ելի ի Պետերբուրխու։

ԺԱ.

Մեծապատիւ հայր տէր Ստեփաննոս աւ. քահ., յարգոյապատիւ աղայ Գեւորգ, եւ յարգելի եղբայր մահտեսի Միսսէր, իմ անփոփոխ բարեկամք.

Ի անցեալ նոյեմբերի 2էն մինչև սոյն թւոյ մարտի 15ըն գրեալ թուղթքդ ժողովեալ են առ պըն. Պէրնն և տարեալ էր ընդ ինքեան ի Պետերբուրխ, երբ չէր գտեալ զմեզ անդ, աւեալ էր տէր Գրիգորին և քննեաց Դաւիթին մեր, և նոքա անբողջ հասուցին առ մեզ, զոր ամսոյս 17ին ընկալեալ գիտացաք ամենայն ժամանակի գրեալ բանք ձեր, և մեծ տէրտէրի, այժմ. իմոյս կողմանդ չմնաց ինչ գործելոյ զի արարի որքան կարս զօրեաց, և կարօղութիւնս կա-

րաց տեսել, այժմ մնաց տեղւոյդ օգնականութեան, և Աստուծոյ արդար իրաւանցն յայտնութեան։ Թող այժմ Եփրեմն ցնծասցէ, և պարծեսցի գրովք ընդ ամենայն աշխարհ, որ և արժան իսկ է, թող սրբազանն պահեսցէ զծրարն ոսկւոյ զուցէ աւուր թաղման պիտանասցի, որ ոչ եմոյծ ի գործ՝ աւուր որում ունէր պիտանաւոր լինիլ ազգի իւրում՝ և մերս փրկութեանն Քաղաքացիքս միաբերան մեղայիւ լցուցեալ զշրթունս զան և լալոտ աչօք թողութիւն հայցեն, մերկապարանոց կացուցանելով զամենայն անաստուած արարս և գրութիւնս Եփրեմի, որով սգալեալ խաբեցան ի ուղիղ պողոտայէ, և մեք երբ այս ամենայն գրութիւն նորա ժողովեալ առաքիցեմ ի ղուռն կայսեր գտանելոց է զիւր արժանաւոր պատիւն, սակայն սակաւիկ մի տակաւին ներեմ զանձնս համբերութեան, զուցէ տէրամբ յայտնեսցի, խափէփայական ուղղեալ լար որոգայթից նորա։ Աստ գրեալ էր նախ՝ քան զգալուստ մեր, չնգունել իբրև զեպիսկոպոս չհամբուրել ձեռս մեր, չըթողուլ զմեզ եկեղեցի, չթաղել ի մեռանիլս իբրև կարգաւոր, և այլ այսպիսի հոգէ ուրաց խրատս, զորս առ ոտն հարեալ ժողովուրդք քաղաքիս, ընկալան զմեզ ընդդէմ ամենևին նորին հրամանի, այժմ գրեալ է թէ, ահա զտի զղօղութիւնն Դրիգորի որ յանձնեալ է միում իշխանի յիսուն հազար ռուպլի, որ ի մօտ աւուրս ատեան քաշելոց եմ այրն այն, դուք խնդրեցէք ճշտիւ ի նմանէ զհաշիւ, և ի մի հաւատայք խօսիցն եթէ ասասցէ չունիլ, և ցուցցէ զինքն աղքատ, և այլ այսպիսի վայր ի վերոյ զրուցք, զոր եկեալ մի ըստ միոջէ ծանուցին մեզ, զինչ արդեօք հաշիւ ունին քաղաքացիքս որ ընդխս տեսցեն, այս որպիսի աստուածուրաց յուդայութիւն է, որպէս զարշ հոգւոյ է վիճակեալ ողորմելին, ես ամենևին երկբայիմ նորին մարդ լինիլն զի այս չէ արարք մարդոյ, այլ գիւի, զուցէ սա մարմնացեալ սատանայ է, որ յոյժ նմանի, և հաւատամ թէ իցէ ընդ նմա այս պատահումն, և կամ նեռն է սա, որոց վասն խօսեցան մարգարէք, և փրկիչն պատուիրեաց իւրոց աշակերտաց, զգուշ լինիլ ի մարգարէից, որք արտաքոյ ունին զկերպ ոչխարի, այլ ի ներքոյ լի են զայլեննեօք,—վայ ժամանակիս որ մեք վիճակեալ պատահեցաք, այն զգուշալի անձին մօլորութեան, զի որպէս թիւր է մարմինն՝ և ընթացքն անուղիղ, նոյնպէս ամենևին թիւրեալ՝ ընթացքն հոգւոյն, ամենևին կերպարանեալ սագանել։ Զի չէ հնար ընդ գրով արկանել զգործ և զարարս նորա, և տեսանօղքն են՝ զիւքն, ոչ կաքեն հաւատալ, որ այս ամենայն արարք, առնս այսմիկ իցէն հանճարք, զի աբտասւօք կեղծէ զտեսանօղս, խափէփայական այնպիսի արարս առնէ, մինչև հանդէպ եղելոցն խափել, և տալ ասել, թէ այրս այս՝ անմեղ և սուրբ ոմն է, և այս ամենայն արարքն զուցէ ուսուցմունք են այլոց, բայց՝ խափին ողորմելիքն, զի ոչ թէ այս գործ, այլ բազում սոյնպիսի հոդէուրաց խրատս թիւնել կարէ բազմաց, և ձգել զլխովին ի գեհեանն անշէջ։ Զոր տէր Յիսուս փրկեսցէ, ի սորին փորձութենէ։ Որպէս ի երկ տեսակ դիւական հնարից, յոդայնոց, երկրականաց, և անդնդականաց, երանելի նախնիքն տակաւին չէին տեսեալ զայս չորրորդ դևս, այլ՝ զսա կոչէին չորրորդ գազանն, Դանիէլեան, արդարև գազան, Դանիէլեան։ Արդարև դև, զի աստ այլ գրեալ մատոյց կայսեր, այդր այլ կերպ հնարեաց գրել, այսր վիճակի այլ կերպ, այն աստիճան հասոյց ազգն՝ մինչև միմեանց չիմանալ որպէս օտար բարբառոյ պատահեալ, վասն որոյ մնացին տարակուսեալ, այդր գրեաց իբր. կ. և տեղւոյս ազգն կամի աստ ընդ ամենայն տեղիս սուտ մանսարս յօրինեալ անուամբ ամենայն քաղաքաց երկրիդ եցոյց և հրատարակեաց, որպէս թէ ահա ընդհանուր ազգն, իբրև պաշտպանի իւրեանց առ ինքն դիմեն, ի սուրբ աթոռն այլ կերպ, առ փքացեալ Դանիէլն այլ կերպ, ես արդարև տակաւին արուշ կամ մնացեալ, և զարմացումն ունի զիս, թէ որպիսի դիւական խափէյութեամբ կարաց պատրել զազգն և երկիրս, նախիջևանցիք իմաստուն գտան քան զայլս որ զգաստացեալ արթնացան, և գրեցին նմա զարժանաւոր պատասխան։ Իսկ յաղագս զազէթին զոր խնդրէք, գրեցի ի Պետերբուրխ քննազ Դաւիթին առնուլ ուստի և իցէ նոյն ամսոյ տպեալ զմէկ երեսն, թարգմանեալ առաքեսցէ առ իս ուղևորել ձեզ,

միթէ խափէութիւն համարիք զայն մեր զրութիւն, հոգին ստախօսաց ի սանդարամետս մաշեսցի, երբ տեսիք ի գիրս մեր խափէյութիւն, որ այժմանէ երկբայիք, քաւ և մի լիցի, ես թէ օրինակն չառաքեցի գաղէթային, վասն այն էր՝ որ գուցէ այդր հեշտութեամբ առ ձեռն բերել կարէք, ես խօսիմ իմ ամենայն գրովք ընդ ձեզ, իբրև քահանայ Աստուծոյ բարձրելոյ, պաշտօնեայ Յիսուսի Քրիստոսի, և ոչ արքանեակ սատանայի, որպէս առնէ ընտիրն Եփրեմ, իւրովք համախոհիւք, մեզ քաւ լիցի, այնմանէ բուռն առնուլ՝ որոյ վազջանն բերէ ամօթ, և կրճտումն ատամանց, ի հրապարակական ատենի, վասն ճշմարտութեան գաղէթի այնքան լերուք միամիտք, որպէս թէ ինքեանք աչօք տեսեալ, զի ինձ մեծ ամօթ է ընդ ձեզ պատրողութեամբ խօսիլ, ես ընդ ձեզ խօսիլս՝ համարիմ խօսիլ՝ ընդ ամենայն սիրելի համազգիսս իմ, և ընդ մեծապատիւ եղբարցս, ի Քրիստոս Յիսուս, Ցաւիմ ընդ իս չունելոյս օրինակն այնմ գաղէթի, ձվ գիտէր, որ դուք այդր չէք կարող գտանիլ։

Սրբազան Յովհաննու, Աստուածահրաւէր պատրիարգի, սրբոյ գերամաքուր աջոյն համբոյրս նուիրեմ, և ցանկամ զառողջութենէն գիտել, խնդրեմ առ սրբազան Մարտիրոս արքեպիսկոպոսն յայտնել զիմն սէր և ողջոյն, գիր նորին սրբազնութեան ունեցայ պատիւ ընկալնուլ, առաքեցի ի Նախիջևան տեսանել, բաբեմիտքն մեր, բայց զմանսարն նախ քան զգալուստ սրբազան պատրիարգի յօրինեալ, առ իս ուղևորելոյ, որև ընկալայ իսկ, մնաց առ իս, իսկ մեղայական թուղթն Գանիէլի, երբէք չնմանի մեղայի, այլ անդրեն սպասէ պատիւ կաթողիկոսական ունիլ, ի հանդերձեալ ժամանակի, ընդ Սիմէօնի և Ղուկասու, և ոչ ընդ այլ սրբափայլ վարդապետս, որ գուցէ փառօք գերազանց են առ Աստուած, սակայն՝ նա ի մեղայն իւր ես խառնէ փուքն իւրոյ բարձրայօնութեան, ով երանելի աստիսն պղտորեալ, դիւական մօլորութեամբ կորուսէր այժմ զաթոռ քոյ, ջանաս հաւասար դնել ընդ ամպս զաթոռ քոյ, յարմարի սմա շարքն Վանանդայ,—Մօլիս մօլորիս փառաւօն փտան, զի մաղձ ղառնութեան երեիս դաժան. մօլիս մօլորիս՝ փարաւօն անբան, աջոյն Աստուծոյ լինիս ջրոյ կործան։ Եւ այլն թողում խոհեմութեան ձեր, դատել և քննել,— որև մնամ վասնորոյ ձերոյ գերայարգութեանցն պատրաստական ծառայ և աղօթարար խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս
սրբոյ էջմիածնի.

1803 մայիսի 30
ի Գրիգորիպոլ.

Ամենայն յարգելի բարեկամաց և յատուկ մերոց բարերարաց նուիրեմք աստուածային օրհնութիւն և զողջոյն սիրոյ. ապրանքն այս քանի օրս ըստանալոց եմ, դարձեալ գուցէ դարձուցից քաղաքացոց ի տեղի պարտուցս, և կամ առաքեցից այդ կոյս տակաւին չեմ հաստատ ի յոր և իցէ միտս, այլ նախ ջանացից յինքեանց տալ, և ամենայն ջանջալէ ազատիլ, տէր Մեսրոպի հաշւոյն յաղագս, որպիսի դիր հարկաւորիցէ, խնդրեմ ծանուցանէք մեզ, որ մեք ըստ այնմ գրեսցուք, ձեզ՝ և դեսպանին։

ԺԲ.

Ծերունի Հայր տէր Ստեփանոս աւագ քահանայ, յարգելի աղայ Գեւորգ եւ սիրական մահտեսի Միսսեր, իբրեւ խարիսխ հաստատուն բարեկամք.

Սիրաշար թուղթք ձեր, հանդերձ բազմակնիք թղթոց օրինակօքն, թէ նախկինքն և թէ վերջինքն անսղալ լրիւ ստացեալ եմք. և չէ անցեալ ի ձեռն ումէք, զի ի Գետրբուրխ դիմեալքն, տէր Գրիգոր աւագ քահանայն անթերի հասոյց, իսկ յետ այնորիկ այսր ժամանեալքն, ես անձամբ ստացայ որոց վասն մատուցանեմ զիմ զխորհին սրտէ շնորհակալութիւնս տէր օրհնեսցէ զպատուական կեանս ձեր։

Յուսամ մեծ զօրութիւն ունիցի վերջին բազմակնիքն առ դրան կայսեր, մանաւանդ՝ ճշմարտասէր դեսպանդ՝ առաւել յայտնութեամբ ծանուցեալ իցէ մինիստրութեանն, թշնամիքն որպէս լսեմք, ի Գետր-

րուրխ ի խոր կործանեալ՝ կան ի տարակուսի, զի հատաւ լարն սաութեան, և ամենայն ոք ի հեռուստ ծանեաւ ստապատիր խափէութիւնս աստուածուրացին Եփրեմի և արբանեկաց նորին, վասնորոյ որ զաչս ունէին մի առ մի՝ յետս չոքան, և Մինասիւ մնացեալ միայն, թուլացան ի զօրութենէ, և այժմ ինքեանք առաւել քան զամենեսին խնդրեն ի լարեալ յորողայթէ իւրեանց ելանել, զոր փորէինն այլոց, անկեան ինքեանք ի նոյն, ըստ մարգարէին։

Սրբազան վեհապետն այժմ գրէ, յայնժամ երբ հարկն էր լռէր, և մեզ վասն իւր ժլատութեան ձգեաց ի յայս աստիճան պատւոյ, աղքատութեան, և տառապանաց, ի մէջ խորին պարտուց՝ անելապէս թաւալիլ, օգնութիւն ինձ ի տեառնէ եկեսցէ։ Եփրեմն, Մինաս Լազրովիւ գրեալ են ի Նախիջեան որ հաւատարմական թուղթ արձակեսցեն նոցա, վասն կաթողիկոսութեան, որ Դանիէլի վասն ուր և զօր ինչ հարկն է ի դիմաց նոցա խնդրող լիցին, և Յովսէփ կաթողիկոսէն առնելիքն ստանալ որ պարտէ քաղաքի հասարակութեան նոցա, նոքա պատասխանեալ են թէ, մեք վասն կաթողիկոսի գաւ չունիմք, զի փոքր քաղաք մի եմք, մէկ կաթողիկոս պահել ոչ կարեմք, որոյ վասն և ոչ ի խօսս մտանել ունիմք մեք եղբարք աւագագոյն քան զմեզ, զՊօլիսն, զի նոքա պատրիարգաւն իւրեանց զօր ինչ արասցեն, այնմ հնազանդեալ ընդունելոց եմք, և գիտեմք հաւաստիւ որ նոքա, ի հնազանդութենէ սրբոյ Էջմիածնի ոչ ելանեն, որպէս և մեք, ի նոյն ծնեալ եմք և ի նոյն մեռանելոց եմք, և կայսերական հրովարտակքն համեմատ սմին հաստատեալ են զմերս օրէն և ուղթ․ իսկ վասն առնելեացն Յովսէփայ, չունիմք ուրեք խնդրելոյ, զի նախ՝ որ առնելիք չունիմք, երկրորդ զնա անմօռաց յիշատակաւ պատւեմք և ճանաչեմք մերս ազգի, և մանաւանդ մերոյս քաղաքի իսկ, բարեբար և երկրորդ լուսաւորիչ հաւատոյս մերոյ, ի մէջ Ռուսաստանու, և այսու կտրեալ՝ խայտառակեալ են զնոսա, և առ մեզ փութով յայտնեալ, զոր ի ստանալս ետու ընթեռնուլ տեղւոյս իշխանաց, ըստ որում և սոքա այնմիաս գոլով անպատասխան էին թողեալ, այսմանէ առաւել արթնացեալ գրեցին համեմատն և փոքր ինչ ազդու։

Քնեազին գրեալ ձեր գրոյ պատասխանն ես գրեցի յետոյ միւս փոստին չկարացի գրել, զի թէպէտ և համառօտ գրեալ էի, բայց՝ յանձնեալ էի քնեազին տանիլ ի Դուպասար և նա թղթովն անդրեն դարձեալ էր, զի մոռացեալ էր ի փոստն ձգել, իսկ ի միւս փոստին, եկն վիճակիս արքերէն ռուսաց առ մեզ իւր վիճակն ակնածելով, մնաց առ մեզ երկու օր, և ապա տարաւ զմեզ ընդ իւրն․ իբրև անգործ ըստ հաճութեան նորա տասն աւուր չափ շրջեցաք ընդ նմա, ամենայն եկեղեցիս ուր և մտանէաք ընդ նմա ի սուրբ պատարագի քարոզմն յիշատակել տայր զանուն մեր, և յոյժ սիրով սիրեաց զմեզ և եցոյց զբազում մեծարանս և զսէր, գիտէ տէր յետ տասն աւուր մերոյս տեսութեան անջատիլն արտասուօք իբրև եղբօրէ և մերձ ընտանոյ բաժանիւր զի նախ քան զայս չէաք տեսեալ, և ծանօթ ընաւ ևս չէաք։ Զարմացեալ տեսողքն արուշ մնային, մանաւանդ Տուպասարու պոյարքն, տեսանելով զմերս անուն յիշատակեալ ի յեկեղեցոջ իւրեանց, թէպէտ ոմանց գանձաց մահ էր, իսկ գրիգորիպոլցիք բերկրութեամբ սրտի խնդային, եկն ի մեր պատարագ, պատարագիչ էր համեստ աւագ քահանայ ոմն տէր Աւետիք կոչեցեալ Իսմայելու թարգմանութեամբ ծանուցեալ մեր զամենայն արարողութիւն սրբոյ պատարագի, խելամուտ լեալ ուրախ եղև, և գովեաց։

Տեղոյս Հնդու ապրանքն քաղաքացիքն առնուն ի տեղի քսան հինգ հազար կայսերական պարտուց բայց՝ կարի ստոր գնով, չգիտեմ ուստի գիտեն Պօլսոյ ծախսն, երբ այն գնով ստանան, հազիւ թէ պարապար լինիմք, թէ գնովն լինէր թերևս շիրին շաքարն իմ ինձ մնայր, տակաւին տեղոյդ հաշիւն չունիմ, և թէ չէ ընդդէմ ի պարապութեան գրեալ առաքել։ Եւ վասն գրեանց հաշւոյն որպէս արարից, նախ՝ խնդրեմ յինէն ողջունիւ յայտնել սրբազան պատրիարգին թերևս հրամայեսցէ հաշիւն ի իրիցուհէն առնուլ, թարց հակառակութեան, և թէ ոչ գրեսջիք մեզ օրինաւոր հաւատարմական գրով պահանջել, և զայն որպէս կերպիւ լինիլն ինձ ծանուցանել, ռուսերէն

առ դեսպանն գրել, թէ հայերէն առ սրբազան պատրիարգս. որում խոնարհութեամբ զողջոյնս յայտնել. եթէ Աբրահամ սրբազան նուիրակն ժամանեալ է առ ձեզ, եղբայրական սէրս ողջունիւ իւրն յայտնել։ Տէր յաջողեսցէ և նմա, օղնական լերուք, զի իմ յոյժ սիրելի է, որպէս լսելոց էք ի նմանէ։ Եւ դու ծերունի հայրդ քաջ գիտես։

Քնեազն՝ և Գողոս աղայն զձեզ սիրով ողջունեն, սրբազան Մարտիրոս արհոյն խոնարհ զողջոյնս յայտնէք ի գրելն ձեր զգիր, և ամենայն բարերար տեղոյդ իշխանաց, և ես մնամ վասն ձեր աղօթարար խոնարհ **Գրիգոր արքեպիսկոպոս** սրբոյ Էջմիածնի։

1803 յուլիսի 15
ի Գրիգորիպոլ.

Ի ելանելս Պետրբուրխու, ոմանք ի բարերար իմոց բարեկամ իշխանաց խնդիր եղեն թեզպէհի որ առաքեմ նոցա զի կանայք նոցա ի պարանոցի կրեն, վասնորոյ խնդրեմ քսան հատ և կամ քսան թել թեզպէհ առաքել, երկարութիւնն թելի լինի մէկ գազ և կամ աւելի, իսկ հատքն մանրագոյն իբրև հատիկս ոսպան, և կամ սակաւ մի խոշոր, տասն թելն կարմիր, տասն թելն սև թարց խաչի։ Եղբայրս և հարսս զձեզ սիրով ողջունեն, և մահտեսի Միսսերիդ խնդրեն Գայտնին ողջունել, որպէս կեան, գրեմ։

ԺԳ.

Գերզգօն Հայր տէր Ստեփաննոս աւագ քահանայ, աղայ Գեւորգ եւ մահտեսի Միսէր, իմ ամենահարազատ բարեկամք.

Ամսոյս 1 էն արձակեալ թուղթ ձեր՝ ընդ վեհի թղթոցն յարգութեամբ ընկալայ, որում և պատասխանեցի, ահա ընդ գրոյս բաց առաքեմ ի ձեռս ձեր որ երկարօրէն

ամենայն բանն այնմանէ տեղեկացեալ՝ ուղեորիցէք առ ինքն։

Ինձ աղքատութեամբ մաշեաց ի Պետրբուրխ և այժմ տեսանէ հարկաւոր գոլս, թէպէտ Աստուած ողորմած չկայ ինչ կասկած, սակայն՝ մաշումն է մերս սրտի։

Սրբազան պատրիարգին, և Մարտիրոս արհոյն և նոր նուիրակին ձերոյ, Աբրահամ արքեպիսկոպոս եղբօրս, մատուսջիք յինեն զողջոյն, և սէր։

Աստ տակաւին ոչ գոյ ուրախարար ինչ լուր, յոյնայն սպառնալիքեն զոր յիշեցուցանեն վեհին, կայսրն՝ և օրէնք նորա սուրբք են ոչ կարէ այդպիսի հեթանոսական գործ ի սոցանէ առաջանալ. անհոգ լինիլ ծանուցէք։

Ամենայն հարցանօղաց կարօտական զողջոյնս նուիրեալ, մնամ վասն ձեր աղօթարար խոնարհ **Գրիգոր արքեպիսկոպոս** սրբոյ Էջմիածնի։

1803 յուլիսի 29
ի Գրիգորիպոլ.

Քնեազ Բարսեղն, աղայ Գողոսն, և Անդրէաս եղբայրս զձեզ սիրով ողջունեն Սիմօնի գրեանքն հասին, բայց՝ տակաւին որքանութիւնն ոչ գիտեմ, տէրողորմեայքն խնդրեմ առաքել, զոր անցեալ փոստին գրեալ եմ, Տէր հայր, գրեցի վասն սիրական որդոյդ, առ Սիմէօն Սերկէիչն, ի Հաշտարխան։

ԺԳ.

Խոհեմազարդ Հայր՝ տէր Ստեփաննոս Արդարավաստակ աւ. քահ., իմ հոգեհատոր բարեկամ.

Ամսոյս 1 էն արձակեալ թուղթ ձեր, 19 երրորդին ունեցայ պատիւ յարգմամբ ընկալնուլ, դիտելով զառողջութիւն պատուական և պիտանագոյն անձինդ ուրախ

եղեալ՝ մխիթարեցայ, աղաչեմ զԱստուած՝ պահել առաւել ամրութեամբ, ի մխիթարութիւն ընկեալ՝ և կործանեալ ոգւոյ իմոյ։

Գրէք թէ՝ թալկացեալ երեիմ ի գործոյ, ոչ ապագէն օրէն է այդ զինուորաց, ի զիպիլ անարի զօրապետի կորուսանէ զօրն զիւրն արի սիրտ, որքան և իցէ զօրաւորագոյն, սապէս և ես, զիմըդ պատերազմել մարթացայց՝ երբ պարագլուխն զօրու՝ ձեռն ի ծնօտի եգեալ, ի փափուկ բարձի ընկողմանեալ՝ ի խոր քնով ննջէ, կարծէ ամենայն ոք հարկիւ իւր թոշակօք զինուորեալ՝ յաղթութիւնն նմա նւիրել ունի, որ ի հնումն չէ եղեալ, վասնորոյ և ոչ ի պատմութիւնս հնոց երևի, վասնորոյ և այժմ չէ մարթ լինել։ Որպէս և սրբազանն Պօղոս բացասաբար յայտնաբանէ, ասելովն՝ ով ոք զինուորիցի իւրովք թոշակօք, և այլն։

Իսկ զոր ինչ պատկանի յաղագս առաքման սրբազան Աբրահամ արք եպիսկոպոսիդ, այսպէս գիտացէք. նախ՝ ի զուր զդմ տեղահան առնէք, և բանից զրկէք, և արդեանց, երկրորդ՝ զդա ի սահման չնկալնուլն, ամօթով տայք դառնալ, ծաղր լինիլ թշնամեաց, երկրորդ՝ ինձ ընդ դմա երթալն՝ չէ կարևոր, զի մինչև ոչ պարզեսցի գործն, ինձ աստի Պետրբուրխ դիմել՝ չէ հնար։ Զի այնմ յատուկ կայսերական հրաման պիտի։ Այլ թէ կամիք ազգովին պաշտպանել զմայր աթոռս ձեր, և չկորուսանել զշքեղութիւն նորա, որ միմիայն պարծանքն է ազգիս, փութացէք երկու հաւատարիմ և համարձակախօս անձինս ի դիմաց ազգին առաքել, մինչև ցՊետրբուրխ զինքեանս վաճառական անուանելով, որ թշնամիքն ամենևին ի քուն մնասցեն, և անդ գալն՝ ի դիմաց ազգին զաղերս խնդրանաց կայսերական մեծութեան անձին դեմ հանդիման մատուսցեն,—երբ առաքէք, և եկեալ նոքա այսր՝ մեզ պատահեսցին, մեք զհարկաւոր պատւերս տուեալ նոցա, արձակեսցուք աստի, յանձնելով զնոսա, անդ մերոց բարեբարաց, իսկ առ կայսրն ի ժողովրդենէ յատուկ խնդիր չէ պիտի, այլ ինքեանց տալի է վկայական բազմակնիք, որ նոքա ունիցին իրաւունս զաղերս մատուցանելոյ վասն պաշտպանութեան սրբոյ աթոռոյն, և վասն հաստատութեան սրբազան դահակալի նորա, և անմեղութեան, նոքա յայտնող գտանիցին ուր պատկանի, թէ առ կայսր, և թէ առ մինիստրս կայսերական եթէ այս այսպէս առնիցէք, գիտեմ որ կարէք արգիւնաւորիլ, ապա թէ կարգաւորօք, և կամ ի դիմաց Վեհի՝ ամենևին անգործ մնայ առաջարկեալ բան ձեր, և դրամն ի զուր վատնի, երբ բարեաւ յայտնեսցի փոքր ի շատէ զարդարութիւնն՝ յայնժամ մեք ունիմք առաջ կալ, և զանիրաւ զրպարտողս, արդարութեան դատաստան կոչել, յայնժամ լինի առաքել և ի դիմաց կաթողիկոսին, և պատրիարգին զրկեցելոց ի անիրաւութեանց սևաւորաց, որք բունեալ ի երկրոջս յաղթահարեցին զանմեղ վկայս ճշմարտութեան, իսկ՝ այժմ սակաւիկ մի՝ լռելն է բարոք, քանզի ժամս այս, աշխարհականաց է վարկ խօսիլ, դատիլ, և մեզ ժամ մի՝ լռել։

Գրէք ևս թէ՝ փութացէք ի Նախիջևան, բարոք ասէք, բայց՝ տակաւին չև է հասեալ ժամանակն, զի Նախիջևան մերն է և առ այն չեմք երկբայ, այլ մեր տկար խախտեալ պարիսպն այս է քաղաքս, որ ի հեռանալս փակի, վասնորոյ ջանամ աստ հաստատնապէս լինել, որ արտաքս ինչ ի վերայ լուսահոգոյն չծագեսցի, և կամ մեր, ապա ամենայն ինչ դիւրին է։ Մանաւանդ՝ ի ժամոյս հեռի կալն ի բազմութենէ չէ ընդվայր. ահա փոստիս ընկալայ ի նոցունց բազմաձեռնարկ թուղթ մի խնդրանաց, օգնական լինիլ նոցա վասն ռուս ազգէ պոլիցմեստր չգնել առ նոսա, իսկոյն գրեցի և ես ի Պետրբուրխ որոց պետք էր, գրեն ևս՝ թէ զոր ինչ խարջես, շնորհակալութեամբ հատուցանողն եմք. յուսամ որ այսմ մասին օգնական գտայց նոցա. սովաւ գատելի է, զսիրտ նոցա առ մեռ հաստատուն գոլն, որ Եփրեմն Պետրբուրխ նստեալ՝ զմեզ աղաչեն, տեսին նոցին խոհական գեփութաթքն, որ թէ՝ ի գոգսն կայսեր ևս իցէ նստեալ՝ անպիտան ոմնէ վասն ազգի, զի անլեզու ցուպ անքաղաքաւար, արբեցողաց ոմնէ, երբ Աստուծով և այս խնդիր գոցին կատար հասուցից յայնժամ նոքա համարձակապէս բողոքել ունին կայսեր, առ այն ոչ երկբայիմ, վասն որոյ և համբերութիւնս չէ ընդ վայր. գի-

անեմ ես հաւաստեաւ, եթէ և իցէ, թէ անձն իմ իցէ կենդանի, անօգուտ ազգին չէ մնալոց, այլ միշտ պաշտօնեայ լինելոց է, և զայն ոչ ի յետնոց սակի, ուրեմն ընկենլնի է զհոգս առ տէր, և նա հոգասցէ զարժանն վասն տառապեալ մերոյս ազգի։

Վասն իրիցուկին գրէք թէ ոչ կարէ պատրիարգն հրամայել ընդ այն զարմացայ, զուցէ վասն ուրացութեան իցէ երկիւղն սրբազան պատրիարգի, Նախիջևանու առաջնորդին թէ կամի տալ չէ և զայն ընդ վայր, սպասել կարեմք և այնմ, թողլի է այժմ, և ոչ ես գրեմ դեսպանին։

Գրէք ես թէ չկարացաք տեսանել զԱնդրեաս Մինասեանն առ ահի, ինչ է այգ ահն, մեք չիմացաք, զի չէիք գրեալ, քսան հազար դուռուշ թէ լեալ է տեղոյդ ապրանքն, մեծ վնասէ զի դուռուշն աստ՝ կէս ռուպլի անցանի, վասնորոյ լինի տասն հազար ռուպլի. իսկ մեր պարտքն է քսան և հինգ հազար ռուպլի, հազար ոսկի միայն դոյ ի պատրաստի, և փոքր ի շատէ նիւթ, քար և այլ ինչ, ուստի ուրեմն լրացուցուք զայլն. այս ապրանաց յուսով՝ ես կործանեցայ Աստուած կանկնեսցէ, լուսահոգին չորս հազար թուման հաշւեալ յանձնեաց մեզ, և մեք այնմ յուսով յանձնեցաք նմա քսան և հինգ հազար կայսերական գրամն, զոր վճարեաց աղայ Յովհաննէսի հազար թուման պարտքն և Մարտիրոսի իւրում փեսայի, որմէ առեալ էր եալտուզ ոսկի, առի վճարել միում քահանայի Թիֆլիզեցոյ որ ի ձէնջ առաքեցեալն էր Հնդու, իսկ այժմ իմ գլուխն մնայ բաց, ինձ դժուարութիւն չէր, եթէ պարտքն չիցէր կայսերական, իսկ կայսերական գոլն, նուաճէ զմեզ։ Աստուած իմ ապաւինեալ նա հանցէ ի լոյս զանմեղութիւնս մեր. քաղաքացիքս գիտելով տեղոյդ անգին վաճառվիլն ապրանաց, այն գնովն խնդրեն, մեք ոչ հաճիմք ընդ այն զի երբ այն գնով տաց, ուստի լրացուցից զմնացեալն մանաւանդ ասահարիւր հատ շիրին շաքար իմ յանձնականն ունիմ, որ յատկապէս առեալ էի գնով ի լուսահոգուց, այժմ ընդ այլսն, և նա կորնչի, ինչ և իցէ՝ ես ուրախ լինէի եթէ ամենն կորուսանելով մնայի ազատ կայսերական պարտուց, իսկ միւս պարտքս աստուած ողորմած է։

Գրեք ես վասն սիրական որդւոյդ որ գալոց է ի Նախիջևան, դրեցի փոստովս Ցարութիւն աղային լեր առ այն անհոգս, երբ եկեսցէ հաւատարմաւ հասուցից ձեզ զարդարեալ զգեստիւք ըստ արժանոյն։ Աղայ Գէորգին կարօտիւ բազմաւ զողջոյնս նուիրեմ, նոյնպէս այնց յատկացեալ անձանց որք յայտնի են մեզ։

Եւ այլն մնամ վասն ձեր պատրաստական
Ծառ. խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս հայոց։

Սեպտ. 29 1803
ի Գրիգորիպոլ.

Խնդրեմ սոյն դիրս որ ներ սմին ձեռամբդ տալ, և ընթերցմամբ խելամուտ առնել քեռս Գայանէին, և իւր սիրական առնն՝ փեսայ Անտօնին։

ԺԵ.

Խոհեմազարդ աւ. քահ, տէր Ստեփանոս, յարգելի աղայ Գեւորգ, եւ հաճի Միքայէլ.

Իմ յատկեղ ըարեկամք.

Տէր հօրդ սեպտ. 15 էն արձակեալ թուղթն, ամսոյս 10 ին ընկալայ, դիտացի դրեցեալք առ այն ես լիովին գրեալ եմ առ ձեզ վասնորոյ այժմ ոչ երկրորդեմ, թէ հնար է զայն արարէք ձեռամբ առն աշխարհականի և ոչ սեաւորի։

Ես ի տան կամ և շարժելս ուրէք պարտիմ նախ կայսեր յայտնել, Նախիջևանցիք զմեզ խնդրեն առ իւրեանս, առաջարկի նոցա խնդրել ի կայսերէ, յուսամ համեմատ գրեցելոյս արասցեն։ Աիրական որդեկիդ զգիր ուղևորեցի ի Նախիջևան անդ վաղ ուրեմն պատուիրեալ եմ ի գալն խնամօք ընկալեալ՝ առ իս այսր ուղևորել։

Համայն հարցանողաց սիրով ողջոյնս նուիրեմ, մանաւանդ սրբազան պատրիարգին և սրբազան նուիրակին, և վշտակցոյն

մերոյ Մարտիրոս բապունոյն Զմիւռնոյ։
Եւ այլն մնամ վասն ձեր պատրաստական ծառայութեամբս խոնարհ

Գրիգոր արքեպիսկոպոս հայոց։

Հոկտ. 15 1803.
ի Գրիգորիպոլ։

Նախիջևան արգելեալ սանդուղս ի Նփրեմէ, օրհնեալ իշխանքն առեալ ի առաջնորդարանէ առաքեցին առ մեզ, զոր երեկեան օրն ընկալաք օրհնելով զնոսա,

ԺԶ.

Խոհեմազարդ հայր՝ Տ. Ստեփաննոս գերահանճար եւ սրբակենցաղ խաչակիր ա. քահանայիդ, յարգելի Գեւորք աղայիդ, եւ մահտեսի Միեսէրիդ, անձենց բարեկամացդ իմոց բազում կարօտիւ ողջոյն եւ սէր.

Ամսոյս մէկէն արձակեալ թուղթ ձեր ընկալայ դրեալ ձեռամբ մահտեսի Միեսերի, որով մեղադիր լինիք զմենջ՝ յաղագս ծուլացման, ես թուի թէ ամենայն փոստի, որպէս առ ձեզ—ի Պօլիս, նոյնպէս՝ կողմանցս վիճակիս, բարեսէր անձանց, ոչ թողումք թարց ծանօթութեան զմենջ ամենայնում փոստի, դրելով և զհարկաւոր դիտելիս։

Յաղագս սրբազան նուիրակին գրեալ եմ ի զուր զոլն այսր գալուստ, զի բացի ամօթոյ՝ ոչինչ ունի առաջ գալ։ Որոյ ողջոյնն ընկալեալ սիրով՝ գարձուցանեմ նոյն զունակն սրբազնութեան յայտնել, նոյնպէս և սրբազան պատրիարգին հանգստացելոյ, տէր պահեսցէ և ևս նոյնութեան։ Համեմատ նմին ծանուցանել խնդրեմ Մարտիրոս արհոյն զսէր և կարօտական զողջոյն,—

Այսմ կողմանց վոյենի կուպեռնաթոռ Պէքլէշովն վաղջանեցաւ, որոյ վասն շատ տրտմեցաք զի նախածանօթ և բարեկամ մեզ յանձն էր, այժմ կարգեցեալ է ի տեղի նորա եներալ Ապրեսկովն, որդի այնմ Ապրեսկովի որ լեալ է երկար ժամանակաւ ի Պօլիս, ինձ ոչ թէ միայն նախածանօթ է և բարեկամ, այլ իբրու արենակից և ընտանի, և յոյժ սիրելի, եթէ ճշմարտիւ նա իցէ զոր կարծեմք, և զոր պատմեն՝ գրողք ի Պոլսոյ, ոչ են ունելոցք զգոզ, զի յուսամ աստուածային նախասահմանութենէ եղեալ, և ամենայն ինչ դիւրին ծանուցի ի ձեռն նորա ականջս կայսեր, տէր տացէ տեսանել ինձ զնա այսոքիկ կողմանց առաջնորդ և զօրաւոր, յայնժամ հաւատարմացուցանեմ զձեզ որ չեղեց ծոյլ, այլ՝ արիագոյն արի։ Մահտեսիդ ողջուն գրելդ նուիրակ հայր սուրբէ, գրեալ էիր և փոքր Աբրահամ վարդապետէ ողջոյն, այն ով է փոքրն ոչ գիտացի, միթէ հաշտարխանցի Աբրահամն է, և կամ այլ ոք, գրեսցես։

Խնդրեմ գրել Գայանի կացութիւնն որպէս է սիրով են ընդ առնն թէ ոչ, ապրուստ ունի՞ն, և ուր բնակին, ի սեփական տան, և որ կողմն Պօլսոյ,—յաղագս սիրական որդոյդ գիտասցէ հայրդ իմ պատուական, տակաւին չէ եկած Նախիջևան երբ գայ միամիտ լեր ի վերայ ձեռաց բարձեալ հասուցանելոց են առ իս, և ես առ ձեզ, քանի մի՝ մանր հատիկ տէր ողորմեայս էի խնդրեալ, և ոչ արժանի պատասխանոյն եղէ. խնդրեմ մէկ հայր մաշտոց առաքել, և մէկ Պազտասարի, Գուրելին յատուկ յանձնել Պէինի, և կամ տաստապուզի նորին յոջորդի անուամբ, նոքա ինձ ունին հասուցանել։

Քաղաքս ի մէջ մեծի վրդովման է, յարուցեալք են ըստ աւետարանի, տէր վերջն բարեաւ եզերեսցէ խռովասէր ունելով և զհովիւս, նմանիլն ջանան, մեք ի զատեայ կամք. ի վերայ այնր ամենայնի և նա այլ կերպ յուսամամբ որդորէ զխաշինս իւր, միանգամայն ըստ առաջնորդութեան սազաէլի ի սանդարամետն կենդանոյն ջանայ տանել, և անդ ազատաբար տիրել, և յայնժամ՝ համարձակապէս ասել բեհեղզեբուզեան գնդապետին, թէ ահա ես՝ և մանկունք իմ զորս ետ քեզ,—և անդէն առնուլ զարժանաւոր վարձս, եղիցի՝ եղիցի՝

տաստցեն ընդ մեզ հրեշտակք, և մարդիկք, —խնդրեմ դրել առ մեզ, սրբազան վեհն ինչ մտաց կայ, և զինչ պատասխանեաց ձեզ, ընդ յառաջարկութիւն ձեր։ Յաղագս այնմ գազեթի կարծեմ մեղադիր լինելոց էք որ խոստացայ և չառաքեցի, սատ ես դտեալ եմ, ներեք ի ժամոյս, զի Պետերբուրխուռնն ոչ եկն, իսկ տեղոյս թարգմանողն եներալ է, վասնորոյ ստիպել չկարոզանամ, երբ ռուսերեն թարգմանեալն առից, և ես զհայերենն թարգմանեալ իսկոյն առաքեցից, որ թէպէտ շատ հարկաւորութիւն այնմ չունիցի, սակայն՝ մեք ճշմարտեալ գտցուք, առ բարեսէր իշխանս։

Գեւորք Ազաեկովիդ իմոյս բարեսէր իշխանի կարօտիւ զողջոյն նւիրեալ, հարցանեմ զպատուական խաթերն, և ցանկամ յարաժամ յողջութեան հանդերձ բարեպաշտուհի ամուսնաւդ, և անուշիկ ընտանեօքդ. պրն. Պապասինն սատի անցեալ ողջութեամբ դիմեաց առ ընտանիս իւր, մեք տեղոյս գարշելի պաթլ ապրանաց բանն չկարացաք զերծանել, մինչ աւարտելոյ վերայ էաք անհաշտելի խռովութիւն մի՝ ծագեցաւ ի մէջ ժողովրդոց, ճեղքեցան երկու թիրայս, իշխանք և աղքատք, աղքատք ըստ բազմութեան ձայնին թէպէտ ըստ ծխի եւրոպիացոց զօրաւոր գտան և յաղթահարել զիշխանս իւրեանց, սակայն թւի ինձ որ մանկզիլն նոցա կարճ իցէ։ Եւ այլն Աստուած ողորմեսցէ։

Համառօտելով զբանս Թեամ վասն ձեր աղօթարար խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս սրբոյ էջմիածնի։

1803 հոկտ. 29.
ի Գրիգորիպոլ.

Այսօր սկիզբն արար ձիւնախառն անձրևել։

ԺԸ.

Ծերունազարդ Հայր տէր Ստեփանոս խաչակիր աւ. քահանայիդ գերյարգոյ Աղայ Գեւորք սիրելւոյդ իմոյ, եւ մահտեսի Միեսէր եղբօրդ իմոյ, բազում կարօտիւ ի Քրիստոս ողջոյն.

Նոյեմբերի 16 էն արձակեալ թուղթ ձեր, ամսոյս 6 ին ընկալայ, որով գիտացի զառողջութիւն պատուական ձերում անձին, և խաղաղութիւն կողմանցդ, նովաւ շահեցեալ՝ սրտադիւրեցայ, տեսիլք երազոց ձերոց՝ տակաւին ունին ժամանակք լրութեանց, զի և սատ բազումք մխիթարեն զմեզ տեսլեամբք իւրեանց, բայց կատարումն նոցին ի Տեառնէ է սպասելի, Եփրեմն ի կրկնել խնդրոյն առ ողորմած կայսերն, հրամայեալ է յայտնել յինքեան, բաւական համարեալ զիւրեան ըստացեալ պատիւն, ելանել ի քաղաքէ, և գնալ առ իւրայինսն, և թէ զինչ է լեալ նորին Եփրեմի խնդիրքն՝ չէ յայտ, այլ՝ ի պատասխանոյն իմանալի է, զի Եփրեմն և ի ներկայութեան իմում երկիցս խնդրեաց ի կայսերէ, խաչ՝ գաւալէր, և ռօճիկ, թւի թէ դարձեալ խնդրեալ է, որ ընկալեալ է յինքեան յարմար պատասխանին, և ինքն դրեալ էր սատ իւրոցն, թէ ես ելանել ունիմ աստեն, ներ քանի աւուրց, և դիմել ի Հաշտարխան։ Մինչդեռ ապրանքն անտէր կարծէր, կամէր այսկոյս դիմել, մինչ քաղաքացիքն ի տեղի պարտուց իւրեանց ընկալան, և իւրն գրեցին թէ, ընդ Յովսէփայ եթէ հաշիւ ունիս, դու նոցին ժառանկացն խնդրեա մեք զայս ապրանք ի ձեռն պատրաստ գտեալ ի տեղի մերոյս պարտուց ընկալեալ, աւարտեցաք զդատ մեր որ ընդ արհոյն Գրիգորի, և պատշաճաւոր գիր ետուն ինձ, որ այսմ հետէ առնելիք տալիք չունիմք ընդ ձեզ, ի կողմանէ մերում հասարակութեան, և ոչ թէ ընդ բարեբարին մերոյ Յովսէփայ, և նախ քան զայս զոր ինչ գանկատ արարեալ է անուն մեր Եփրեմն բողոքելով առ կայսր, հաղորդութիւն և տեղեկութիւն չեմք ունեցեալ, և զայս գիր բազմութիւն ժողովրդեանն ձեռն

արկեալ, մաղխտարաթի կնքով ամրացուցեալ ետուն մեզ, զայս ամենայն ունիմ թարգմանել և առ կայսր հասուցանել, և այսու ամենայնիւ ցուցանել որպէս միով՝ նոյնպէս ամենայն կողմանց զխափեփայութիւն նորա, որ զինքն ի տեղի բազմաց կացուցեալ, մատուցանեք զխնդիր ի դիմաց ընդհանուր աշխարհի, ահա տեսցէ կայսրն և մինիստերքն նորին տուեալ թղթոց զուղղութիւնն, և այլն սպասեցից մինչև լսել կատարեալ զելն նորա ի Սանկթ Պետրբուրխու։

Անցեալսն գրեալ էի առ ձեզ թէ ի թշնամեաց դարձեալ յաղթահարիմ, սակայն ոչ այնպէս, զի գրեալ էր կուպեռնաթն առ մեզ զստոյգն, որ ըստ բանիւ յայտնելոյն մերոյ ինքեան, զկամս մեր, ծանուցեալ է Թուչուպէյին, և նա գրեալ էր ուր երկոցունց այս քաղաքացս կամիմք բնակել յայտնեսցուք ինքեան, մեք զՆախիջևանն ընտրեցաք ըստ խնդրոյ և հաճութեան տեղոյ բնակչացն, և դիմելն մնաց ի հաճոյս մեր, ի առաջակայ գարնան գուցէ երթամք։ Մեք աստի շարժիլն երկնչէաք յաղագս դիւրափոփոխ գոլոյ բնակչացս սորին, երբ այն գիրն ստացաք և ապրանաց բանն աւարտեցաք, փոյթ չէ հեռանալն, թող այսուհետև հարիւր աչօք և ձեռօք մտցէ այսր Եփրեմն, զի այժմ առաւել հաւատ նուիրեմ մարգարէական բանիցն, թէ, արդարն փըրծանի յորսողաց և փոխանակ նորա մատնի այր անպարիշտ, դարձեալ թողում ամենազօր կամացն Աստուծոյ զվիճակ իմոյս բարեպաշտութեան։ Սիրական որդւոյդ կողմանէ քանիցս գրեալ եմ ի Նախիջևան և ի Մօզդոկ, Նախիջևանու գրեն ոչ գալն, իսկ ի Մօզդոկու ոչ պատասխանեն։ զՁեր գալուստն սակաւ մի՝ յամեցոյ, երբ երթայց ի Նախիջևան անտի հասարակութեամբ խնդրագիր առաքեցից գալ ձեզ ի սեփական յաթոռ և վիճակ ձեր, եթէ մեք տակաւին այսպէս անպիտան լինիցիմք անկեալ։ Աստուծոյ ապաւինութեան է մնացեալ զմերս գործ, և ոչ թէ Թամարոյի և կամ այլոց, զի ամենայն ոք զիւրն հոգայ։ Աստի ելանելս տաց գիտել ձեզ որ յայնժամ թուղթքս առ քնեազ Բաբսեղն ուղևորեսցիք, հասուցանել մեզ, բազմօք աշխատին Եփրեմեանքն դարձուցանել զՊօղոս Թումանովն ի կողմն իւրեանց, բայց ոչ մարթանան, և զիարդ հնար է առն քրիստոնէի զկնի անմաքուր շաղւացն նոցա երթալ, մանաւանդ զԹումանովն, որ երկրորդ է հարազատութեամբն առ մեզ, Դևոբք քրիստոսազօր Աղաեկովի, և սորա անհամաձայնութիւն բազում վնասս գործէ նոցա, և ամօթ նախատանաց ածէ, զի աստ ազնւաց գլուխն է և գաւառական պետ, որ ըստ ռուսաց, Դվորեանսկի Բրետվոտիթել, այսինքն ազնւաց առաջնորդ, որպիսի թուղթս և խնդրեն չարքն, բոլորն զներհակն գրեալ առաքի, վասնորոյ կրեն զմեծ ամօթս, ոչ թէ զսուտն գրի որպէս թէ մեր, քաւ լիցի այլ՝ զստոյգ ճշմարիտն, որ կործանէ զխաւարասէրս, և ըստ Ջզջկանն՝ շլացուցանէ զաչս զգեղեցիկ լոյսն արևոյն, որ զաշխարհս այնու մխիթարի, սապէս և նոցա, հետևողացն խաւարաընթաց չարեաց, այսինքն զիւաց. ոչ դադարիմ կարդալ զանուն Տեառն զօրութեանց, երգելով զերգս Դաւթի, դատեա Տէր զայնոսիկ որք դատեն զիս, մարտիր ընդ այնոսիկ որք անիրաւաբար մարտնչին ընդ յիս, առ զէն, և այլն։ Եղիցին արդեօք օր՝ որ համարձակ կարացից ժողովրդովք, օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ, զհեծեալս և զերիվարս ամեհի Լազրեանց և Եփրեմի ընկեց ի ծովս դժոխոց, երանի լինի ժամոյն և ժամանակին, որ տացէ մեզ տեսանել զայն, և այլն եղիցի անուն Տեառն միշտ օրհնեալ։ Տեղոյդ տպեալ օրացոյցն տեսաք, յաղագս առաջագայ տարոյս զկաթողիկոսական անունն լռեալեն, և միայն պատրիարգինն եղեալ, թւի թէ վերակացուն դև Մեսրոպն է լեալ, Տէր կուրացուսցէ երկոքին զաչս նորա, մի ևս տեսանել, զոր տեսեալ՝ ոչ իմանայ։

Պատուելի Անտօն փեսայիս և Գայանէ քեռս օրհնութիւն տամ, համահաճական թուղթ նոցա ընկալայ, և ուրախ արարի զհարսս՝ և զեղբայրս, գրեցից նոցա ի դադարիլս ուրեք, վասն մսխից մի հոգասցեն, իսկ վասն արհեստի նորա՝ որպէս աստ, նմանապէս ի Նախիջևան ունի զբազում շահաբեր արգիւնատւութիւնս տալ յինքեան։ Որդի Փիլիպպոսին օրհնութիւն տամ, հայրն նոցա այսքան օրս աստ լինի, զգրեալ

եմք բերել, և քոյր Կատարինէն զոր նշանեալ է աստ, և կամ կամի, Վասնորոյ պարտի գալ և ինքն ընդ քեռն և փեսային իւրոյ, և լինիլ սուտիթ, և ապա երթալ ի վաճառ, թէ հաճի իբրև պոտտան ռուսաց, ազատ գոլով հարկաց։ Վասն զաւակաց եղբօրս լիցին միամիտ են կենդանի։ Միայն չգրելոյս ամենից անունն այն է, որ թարց մտածմանց ոչ գայ ի միտս, վասնորոյ չէի գրեալ, այժմ ողջունիւ ամենեքեան համբուրեն զձեռս հարցանող մօրաքեռ իւրեանց, մանաւանդ՝ իւր Յարութիւնն, որ և իմ, որ ընկալեալ ունիմ յատուկ ի որդեկրութիւն իմ։

Եւ համայն հարցանողաց մերոց, բարեբարաց և սիրելեաց մատուցանեմք կարօտական ողջոյն և սէր, որպէս մեծապատիւ արհեաց, նոյնպէս յարգոյամեծար իշխանաց, և այլն Մնամք վասն ձերում գերայարգութեան պատրաստական ծառայ և աղօթարար խոնարհ

Գրիգոր արքեպիսկոպոս
սրբոյ Էջմիածնի։

դեկտ. 15 1803.
ի Գրիգորիպօլ.

ԺԲ.

Խոհեմազարդ Հայր՝ տէր Ստեփանոս աւ. քահ., գերայարգոյ աղայ Գեւորք, եւ եղբայր մահտեսի Միեսէր, իմոյ ծնողի եւ իմ իսկ մտերիմ բարեկամք.

Շնորհաւոր ծնունդ՝ և մկրտութիւն, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ շնորհիւն տացէ հայրն մանկացելոյն այսօր, աշխարհաց խաղաղութիւն, ազգիս մերոյ ուղղափառութեանն ճոխութիւն, ինքեանց անդորր կացութիւն, սրբոյ լուսատու մօրն մերոյ հաստատութիւն և անշարժութիւն, իւրաընտիր փեսայի նորին անտրտում յերկար կենցաղաւարութիւն ի վերայ գերագահ Աթոռոյ իւրոյ, և ձեզ իմոց, աննենգ սիրելեացդ, երկարաձիգ ամօք յաջողութիւն, խնդութիւն, և անտրտում կենցաղաւարութիւն ընդ վայելս համայն արենակցաց՝ սիրելեաց մերոց, ի մխիթարութիւն տրտմասգեաց սևաւորիս։

Դեկտեմբերի 1 էն գրեալ թուղթ ձեր՝ ընկալայ յարգանօք, գիտացի զամենն՝ զոր յառաջն ես աներկբայապէս գիտութիւն ունէի, յաղագս սրբազան վեհի։ Մաշտոցն բաւ է զՊաղտասարի սրբագրեալն, իսկ յաղագս ձեռնադրութեան մաշտոցի, չունիմ հարկաւորութիւն, որ եկեղեցի անգամ ոչ երթամ, մաղթանս աղօթից ըստ պարտուցս, որ առ Աստուած, ի տան իմում կազմեալ սեղան վեր առաքեմ առ բարձրեալն արտասուօք հանդերձ։ Մանաւանդ լուսահոգւոյ մաշտոցքն առ ընթեր ունիմ, որով ձեռնադրեցաք ի Թիֆլիզ զքահանայ մի՝ և սարկաւագ մի. և՝ յետ այնմ՝ իբրև հնացեալ, կամք անպիտանութեամբ ի յանկեան միում, մինչև այցելութիւն Տեառն հասցէ ի Թիկունս։ Յաղագս տէրողորմեայից շնորհակալ եմ զոր խոստանայք առաքել։ Սակաւ մի՝ նախկին գրովս տրտմելոց էք, սակոյն ոչ ընդերկար. զի և մեք յայնժամ առ մեզ հնչեալ համբաւոց տրամեալ՝ զձեզ վրդովեցուցաք, զի առ ով ունէի զսիրտս բանալ քան զոր ձեզ, բայց՝ փառք Տեառն, որ հակառակն փոխեցաւ, այժմ ինքն Եփրեմ ի տաքնապի, միայն Քուչուպէյն հակառակ մեր, զոր տէր կործանեսցէ։ Լուսաւորչական աստու աղօթից օգնականութեամբ, եթէ ոչ վաղ ուրեմն վաղջան ճշմարտութեանն յայտնի եղեալ էր։ Նա է մթաւոր ամպն՝ որ զճառագայթ արեգականն արգելեալ մթացուցանէ. Աստուծոյ արագահաս օգնականութեամբ հալածեալ վանեսցի ի սանդարամետս, արքելինչ ամպիկն այն։—

Ամսոյս 14 ին երրորդ ժամոյն գիշերոյ 9 երրորդ ժամոյն զկնի կէս աւուր ըստ եւրոպիացոց։ Մէջ արևելեան յարաֆոյ, յերկինս երևեցաւ համանման աղեղան պայծառ և ջինջ գունովք, և ի տուաւեն պայծառութենէ մերձ ինքեան ցուցանէր և զմիւս համակերպ զաղեղն, բայց՝ առաջնոյն գունովք՝ գիշերացեալ երկինքն լու-

սափայլս երևէր և մեղմն հողմովք՝ ձիւնս ի վերուստ իջանէր, և զայս տեսիլ եկաց և մնաց իբրև րոպէս քառասուն և բազմութիւնք ժողովրդեան ի բնակչաց քաղաքիս, արք և կանայք, դիմեցին զեկեղեցին, և մեօք զաղօթս առ Աստուած կարդացին տէր ողորմեայիւ, Աստուած ի բարին կատարեսցէ,—այսպիսի տեսիլք և ո՛չ բնաւ ընթերցեալ էր ի նախնեաց մերոց գրեաց։ Մօռացմամբ անցեալ փոստին չգրեցաք՝ Եթէ հնար էր, չէր ընդ վայր զտանել առիթ խօսակցելոյ· ընդ Զամչեանի, զի մի՛ աղաւաղեսցէ զանցից այժմեան պատմութիւն, որպէս պղծեալ է բազմագով զաշխատանս իւր, ի հաւաքումն ընդհանուր պատմութիւնս հայոց, մանաւանդ ի պատահիլ ուղղափառութեան արանց ճշմարտասիրաց, զիարդ պռանց խղճոյ, ձեռն առնու բասրել, և կամ իբրու սրնթաց երիւարաւ խոյս աւեալ այնմանէ անցանել, որով յայտնի ցուցանէ անմաքրութիւն իւրում հոգւոյ, եթէ այնք՝ որք ի մէնջ ծածկեալք են և հեռի ժամանակաւ, այնքան տրտմեցուցանեն զուղասէր հոգիս ընթերցողաց, որչափ ևս առաւել եթէ զմօտաւորաց անցից զաղաւ·ղս ինչ ծանուցանել հանդիսասցի, մանաւանդ թէ՝ յայնժամ և անկար իցեմք, վահանաւ արդարութեանս խցել զանդուռն բերան նորա։ Վասնորոյ բարւոք է այժմ յորսալ զնա, որ կարի հնարաւոր է մինչև ծախսն զրգոյն խոստանալով վճարել, խնդրեմ առ այս հոգս տանիլ, զի տպարանն լուսահոգւոյ ընդ մեծ փակեղ արկեալ փակի, Ով գիտէ զիարդ առ ձեռն եկեսցէ, Աստուած եթէ կամի տակաւին զփոքրիկ լուսաւորութիւնն չբառնալ ազգէ մերմէ, զձեր պիտանի անձն պահելոց է կենդանի, առ ի յառաջ ածել, զկարգաւորութիւնն լուսահոգւոյն Ցովսէփայ և զբաղձանս ընդհանուր ազգի մանաւանդ՝ բարեպաշտիցն Հնդու. անկարելիքն ի մարդկանէ հնարաւորք են առ Աստուած։

Անցեալ փոստին գրեցաք զգիր ողոքանօք առ բարեբար Թամարոն, սակայն նա այժմ չէ ձեռնահաս, և այլն Աստուած գիտէ։ Եթէ փող լինէր, մինչև տասն հազար ռուպլի և կամ առաջի նուազին զվեց հազար մեք կարող էաք ձեռն ի գործ տալ. և յետ վաղջանի գործոյն յետ վեց ամսոյ և կամ ևս մօտ դարձուցանել, տեառն, և ընդ գրամոյն զձեզ ունիցէի զծերունիդ ի խորհրդեան, Աստուծով վստահէի ամենայն ինչ դիւրութեամբ ի գլուխ տանիլ, ի Նախիջևան նստեալ, ոչ ընթացեալ յառաջ. զի ներկայիս քաղաքացոց տւեալ թուղթն ժամանեալ կայսեր բեկանելոց զզօրութիւն Եփրեմի, զի ազգն որով պարծէր յայտնապէս ծանուցեալ յայտնեցին զստութիւնն նորա, որոյ օրինակն ահա ընդ սմին ուղևորեմ, առանձին տեղեկութիւն ձեր, և մերոց համախոհից, որոյ օրինակն առ վեհն կարէք հասուցանել։

Արբազան պատրիարգին ի տեսանելդ յայտնեալ կարօտական զողջոյն համբուրեսցես զաստուածագործ ձեռս նորա, Գրիգորն՝ և Ցովհաննէսն թզուկ՝ խնդրեալ էին ի կայսերէ գալ ի Պետերբուրգ, և հանդիման լինիլ կայսեր, որոյ պատասխանին ընկալան. ո՛չ, որպէս և Եփրեմն, ելցեն....այժմ էր մերոյս կողման զօրանալոյն զժամ, սակայն, զինչ օգուտ, որ ամենայն ունկն արծաթոյ լսէ, և ի մեզ. և ո՛չ զձայն պղնձոյ զողլի։ Որոյ վասն առաւել մաշիմ։ Եւ ի յաղօթս յաճախագոյնս պարապիմ։ Ի նա արկեալ զբոլոր յոյս իմ, և ապաւէն։

Պարոն Անտօնին և Գայանէ քեռս օրհնութիւն տամ, շնորհակալ եմ որ լրիւ ծանուցեալ էիր, որպիսութենէ նոցին արդարև՝ կարեն ապրիլ, Փիլիպպոսին օրհնութիւն տամ. եղբայրս՝ ամուսնաւ իւրով Կատարինէիւ, և հինգ զաւակօք զգոստ ողջունեն, և են ի միջակ առողջութեան, յետոյ գրեցից յաղագս նոցա։

Երկուց համանուն սրբազան վարդապետաց կարօտական զողջոյնս ձօնեմ, ցանկամ զառողջութենէ և զաջողութենէ գործոց նոցին լսել։ Գիտեմ այժմ և զՍիւնեաց տէրն զի թէպէտ այժմ չեմ տեսեալ ի ս. Աթոռոյն բայց՝ ի սարկաւագութեանս տեսեալ եմ և վայելեալ զսէրն։ Սրբազան Նուրակն Ուռումելու կորուսեալ զկօնդակն շքշի թարց այնու, թէպէտ և ընդունեն զնա ժողովուրդք սակայն, քրթմնջելով, թւի թէ արք վատք իցեն դողացեալ, յաղագս շփոթելոյ զպարզամիտս թէ Աստուած ևս ոչ ընդունի ի յեկեղեցիս իւր զանուն Գաւթի,

որպէս և քրթմնջունէ. մեք գրեցաք ի Փոթիշան և Եաշ որոց հարկն էր, գուցէ և ինքն ծանուցեալ իցէ այդ սրբազան պատրիարգին. բարոք է բերել տալ նմա զնոր կոնդակ։ Եւ այլն հնամ ձերում յարգութեան ամենախոնարհ աղօթարար ծառայ

Գրիգոր արքեպիսկոպոս
սրբոյ Էջմիածնի.

յունվարի 1 1804
ի Գրիգորիպոլ.

ԺԹ.

Ծերունի Հայր տէր Ստեփանոս աւագ քահանայ, գերամեծար աղայ Գեւորգ.

Իմ հարազատագոյն բարեկամք.

Այսմ ամի, և այսմ ամսոյ 2 էն արձակեալ գիր ձեր, և եղբայր մահտեսի Մինասէրի, ընդ որդեկիդ գրեալ գրոյն, ընկալայ բազում յարգմամբ դարձեալ ամսոյս 21 ին որով գիտացի զառողջութիւն պատւական անձին ձերոյ և ուրախ եղէ,—ժամանակս յոյժ պատեհաւոր է բայց պակասութիւն ձեռինս արգելու՝ և յետս ընկրկէ ի հրաշալի գործոյ, թող տէրս մեր յամառեալ նստցի։ Ահա երկիցս եղև պատգամ Եփրեմին ելանելոյ, բայց՝ տակաւին նստի, երրորդին հանելոց են ամօթով, ոչ դրէ թէ ուր երթայ, զի երբ Մօսկով եկեսցէ յայտնեսցի։ Զիք աբեղայն առ նմա է, բայց կարի անպատիւ, ոչ ոք յարգէ զնա բացի Եփրեմէ զի երկիցս գանակոծ լեալ է տեղոյ քահանայից, և մի անգամ ի սեղանի իսկ, առ ներկայութեամբ Եփրեմի,—Նախիջևան երթալն բարոք դասէք ապա և չերթալն բարւոք, առաւել բարին այն լինէր որ նոքա թարց իմոյ ներկայութեան բողոքէին առ կայսր, յայտնելով ճշմարտութիւնն, այլ յետ իմոյս երթալոյ թշնամիք այլ կարեն ծանուցանել եթէ բողոքեսցեն, և թէ լուիկ նստելի է, քեօռ հապունտայ հա պաղտատայ։ Ի Զմիւռնու այս առաքելն՝ յոյժ բարոք լինէր,—անտի այր մի եկն Յովհաննէս Քեթխուտով անուն, հայհոյէր և վատաբանէր զտէր Մարտիրոս արհին, մինչ վասն աղքատութեան առ իս ի տուն ընկալեալ ունէի, հանի, երբ այնմանէ վիրաւորեալ զմեզ ի բերան էառ, և զգործս կաթողիկոսութեան այլ և այլս խօսելով ի պղտօրութիւն պարզամտաց, արտաքսել ետու յայնժամ և ի քաղաքէ, գրեցի առ զգուշութիւն ի Նախիջևան, որ ի պատահիլ պղծոյս անդր, պատրաստ հասասցեն, ես տակաւին այսպիսի վատաշուեր այր չէի տեսեալ ի կեանս իմ,—ասէր թէ երեք ամ կացի Իզմիր, խեղճ Մարտիրոս վարդապետն զինչ արդեօք լինի կրեալ ի ձեռանէ անօրինիս, Աստուած հատուսցէ, իմ փոքրոգոյ զնորին մեծն ունիմ ճանաչել, զանգատէր և Գևորք աղայէդ իբր ի Երուսաղէմ երթան ընդ քեռն անիրաւել ես, և այլ ինչ բազում, սատանայն առնու զինքն, դժոխոյ պարկ անվանեցի իւրն, զի այլ գերագոյն պատիւ ոչ գտի նմա տալ։

Տէրողորմեայքն այս կոյս առաքելն դտցես հնար, և կամ Օտես, եթէ մաշտոցն փոշտ ոչ առնուն կարէք ընդ պրն. Անտոնին և Գայանին առաքել, որ առաջի դարնան նաւաւն ելցեն ի Օտես եթէ կամք ունին գալն առ մեզ, եկեսցէ և Փիլիպպոսն. վասն որդեկիդ գրեցի, Կովկասու կուպեռնաթոռ Գասպարովին, և Մօզդոկու երկուքին երևելի վաճառականացն, պրն. Ղալօեանց Փարսադանին, և պրն. Գաբրիէլ Խաթիսովին, որ օգնականութեամբ կուպեռնաթին, զամենայն հարկաւորութիւնս հոգացեալ՝ ընդ հաւատարմի միոյ հասուսցեն ի Նախիջևան առ մերս հարազատ պրն. Յարութիւնն, իսկ թէ ի ժամանակսնաւոյ իցէ գալուստն, պրն. Յարութիւնին գրեցի, նստուցեալ ի նաւ մեզ առաքեսցէ, բայց թէ առաջ իցէ քան ղնաւոյ ժամանակն, մի առապայ վարձեալ առ մեզ առաքեսցէ, ես այժմ աներկբայ յուսամ որ կամայ և ակամայ գալոց է նա, կամ առ ձեզ ուղղակի, և կամ առ մեզ։ Եւ ձեր գիրն ևս առ այն հարազատս մեր առաքեցաք, տալ որդեկիդ, և թէ օրինաւոր պատճառս գտցեն չգիտեմ,

թէ ոչ առանց իմիք պատճառի, նա ուղեւորելոց են ի ձեռն սուրհանդակի, և կամ այլ հաւատարմի։ Գրեցի երբ գալ յոժարեսցի հարիւր ռուպլի տացեն մօրն, իսկ իւրն ես՝ կամ. պրն. Յարութիւնն, հոգալոց եմք։

Մահտեսի Մինասէրին օրհնութիւն տամ։

Սրբազան պատրիարգին, և երկուց համանուն արհեացն՝ խոնարհ ողջոյնս ձօնեմ, և մնամ. վասն ձեր պատրաստական ծառայութեամբս

Իբրու Գրիգոր արքեպիսկոպոս

1804 յունվարի 26.

ի Գրիգորիպոլ.

Պարոն Անտօնին, և քոյր Գայանին օրհնութիւն տամ, կամին գալ առաջայկայ գարնան, թէ ոչ ծանուսցեն մեզ։ Փիլիպոսին ես բերցեն, յետոյ ես արձակեսցուք թէ կամիցի։

Ի.

Խոնեմազարդ հայր տ. Ստեփանոս աւ. քահանայ, գերայարգոյ աղայ Գեւորք եւ եղբայր մահտեսի Միեսէր.

Իմ հարազատագոյն բարեկամք.

Փետրվարի 1 էն արձակեալ թուղթ ձեր յարգանօք ընկալայ գիտացի առողջութիւն ձեր, և այլն, և ուրախ եղէ։ Որպէս լսեմ հանգերձեալ է ելանել բայց՝ խնդիր ունեալ է թէ ռօճիկ չունիմ, և աղքատ եմ. ժողովուրդն ոչ կերակրէ զիս, ակն ունի տեսանել, տես թէ որքան ամօթ էր իւրն եթէ առանց ռօճկի ելանէր ի մէջ ազգին, որ ես ընտանեամ. և ինքն ոչ, և զայն ոչ սակաւ ամօթ լինի իւրեան եթէ իմ հաւասար և կամ. պակաս կարգեսցեն նմա ռօճիկս, զինչև իցէ մեր թուլութիւնն է որ թէ նա տակաւին կայսերական ողորմութեամբ ելցէ ի քաղաքէ անտի, աստուածային վճիռ հասցէ նմա, Սուրբ Լուսաւորիչն ելցէ նմա ընդ յառաջ, իւրով երկաթեայ ճգնողական գաւազանաւ փշրել և խորտակել զգլուխ նորա։ Սակայն՝ Աստուած դատաւոր՝ արդար՝ հզօր, և երկայնամիտ, որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօր հանապազ, ապա թէ ոչ և այլն։ Եւ թէ ոչ զօրանայ մարդ իւրով զօրութեամբ այլ Տէր տկար առնէ զթշնամիս իւր։ Ուրեմն եղիցի անուն Տեառն օրհնեալ. հնազանդ եղեց օրինաց և սուրբ կամաց նորա, զի թէ կամի ի քարանցս յարուցանէ որդիս Աբրահամու, ուր մնաց զմեզ որ ըստ Սամուելի պատրաստեմք ասել ահաւասիկ եմ. Տէր, ուրեմն՝ կամ. ոչ կամի, կամ. ժամանակն չեւ է լցեալ, և կամ. վասն մեղաց և անօրէնութեան իմոյ, ամենեւին դարձուցեալ է զերեսս իւր ի մէնջ, ըստ մարգարէին, ձեզ աղաչել՝ և ինձ ոչ լսել։—

Վասն սրբազան արհոյն Աբրահամու անցեալ փոստին գրեցի թէ կարելի է զայն արասցէ և թէ ոչ զայլ ինչ խորհեսջիք, և Տէր յաջողեսցէ։ Եթէ տակաւին վեհն լռութեան արկցէ բանն, և մեք համեմատ խորհեալ եմք ի մէջ հալածանաց մերոց առնել, որ անդադար տգնիմք և օգուտ ինչ ոչ գտանեմք, զի բազում. աշխատութեան մերոյ կթեցաք զպտուղն և ոչ ինչ։

Սրբազան պատրիարգին զխոնարհ զողջոյնս նուիրեմ, Տէր եղիցի եդմա պաշտպան—իսկ մեք ի հեղեղէ զերծեալ՝ ի կաթիլէ ոչ երկնչիմք, և նուիրեալ եմք զմեզ զըլխովին ի տանջանս ի գանս, ի փորձութիւնս և ի յայլ զանազան նեղութիւնս որ թէ դեպ լիցի ելանել մեր ընդ յառաջ, ամենայնի նուիրեալ եմք զմեզ վասն սիրոյ սրբոյ Աթոռոյն, թէպէտ սակաւ մի՝ կասեցուցանէն զմեզ անզգայութիւնք գլխոյն մերոյ, և զայն Աստուած յարգարեսցէ,

Վասն սիրական որդւոյդ գրեալ եմ. լեր անհոգ, գրեցից և այժմ. ըստ գրեցելոյդ պր. Մալխասան Գողոսեան, աստ յետ ընկալնլոյ ի մէնջ զզանազան յարգական պատիւս, ուրացեալ զամենայնն եղև պարագլուխ քանի մի անզգամաց հակառակ ի մեր կողմն, և գրեաց զբազում առասպելս ի վերայ լուսահոգոյն Յովսէփայ և մեր, և իմ լեալ զայն խնդիր ետու պոլիցայն. մի՞ առ մի

հարցանել զնոսա, արդեօք ճշմարիտ է զոր գրեն և կարող են զայն պահանջողութիւնս իւրեանց գրով և վկայիւք հաստատել, թէ-պէտ ամենեքին ուրաստ եղեն, ընդ նմին և պիղծ պարագլուխն նոցա, սակայն՝ ինչ օգուտ որ տէրութեանն յայտնի լինելոց է, թէպէտ և ինքեանք զինքեանս ստեցին, եօ-թանասուն ինն հազար ռուպլու գող շինե-ցին գլուսահոգին, և մեզ քսան հազարի. ըստ յորդորելոյ չիք Օհանէս երէցին եզև, ի ակնածութենէ Եփրեմին, ահա պրն. Մալ-խասի չզոյ մարդութիւնն զոր ի գալն այսր եցոյց։ Ես խնդրեալ եմ չթողուլ զնա ի քաղաքէ աստի մինչև խնդրանացն նորա կատարումն և աւարտն եղիցի, որ մինչև տասն տարի հազիւ վճիռ լինի, թող մնասցէ։ Չի քենտի տիւշէն աղլամազ ասի. վասն այսմ և ոչ ի հարսանիսն իւր դստեր զմեզ հրաւիրեաց։ Թէպէտ գնացողն ես չէի։ Բայց՝ երկու ա-ւուրբ առաջ զիմ ոչ գիտելով զնորին պիղծ հոգւոյն զմաղձ հրաւիրեալ յարղեցի ի սե-նեկի իմում, քանի մի բարեկամօք, և ի նա ըստ յուղայի՝ յետ պատառոյն եմուտ սատանայ։

Խոնարհ ողջոյս նուիրեմ ամենայն սի-րելի բարեկամաց և բարերարաց, նոյնպէս սիրելի փեսայ պրն. Անտոնին և քոյր Գա-յանէին—վասն գալստեան իւրեանց թող ծանուսցեն ինքեանք և կամ ի ձեռն ձեր՝ և ճանապարհելն զնոսա ըստ օրինի, մնայ ի խոհեմութիւնս Գևորք Աղաեկեանիդ։

Եւ այլն մնամ վասն ձեր աղօթարար
խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս
1804 փետրվ. 29
ի Գրիգորիպոլ



ԻՆ.

Ծերունի Հայր՝ տէր Ստեփանոս աւ-ֆահ., յարգոյամեծար աղայ Գեւորգ, եւ եղբայր մահտեսի Միսսէր.

Իմ յատկեղ բարեկամք.

Անցեալ փոստի ընկալեալ գրովս մահ-տեսի Միսսէր եղբօրէս տրտմեալ կայի ի հոգս որ յաղագս ծերունոյդ լռեալ էր և դուք չունէիք գծագրութիւն ի նմա, արդարև ի խոր տրտմութիւն զմեզ իջոյց, զի ի մէջ բազմավիշտ հոգոց զայդ և եթ ունիմք մեզ հոգեկան մխիթարութիւն, այսինքն առող-ջութիւն անձնադիր բարեկամացդ և զայն ենթ տարակուսանաց արկեալ, արդարև էհան զմեզ ամենևին և ի խելաց, խնդրեմ եթէ ձեզ չիցէ ձեռնահաս եղբայր Միսսէրն, չձանձրասցի յիշել զառողջութենէ հոգէհա-տոր սիրելոյդ իմմէ, զի ես ոչ ցանկամ զլուր թագաւորաց և ազգաց գիտել ի ձերդ գրոց քան զառողջութենէ, որոց ես կապեալ կամ հոգւովս, թէպէտ Գևորք աղայդ ոչ գրես առ մեզ անձամբ զդիր, սակայն՝ զա-ռողջութեան զքոյին անձին լուր մահտեսու գրովն լսեալ ուրախացեալ բերկրիմ, Եփրե-մին շատ դնոյ եզև այս անգամ ժամանա-կաւոր մնալն ի Պետրբուրխ, մէկ օֆիցէր եկն անտի, այսինքն Մսր օղլու Կարապետն որ երթմամբ հաստատէ թէ, երեսուն հինգ հազար ռուպլու վէքսիլն Եփրեմի ես տե-սայ աչօք, հաւատարմական ստորա-գրութեամբ Լազրովի, որ երբ Դանիէլն պա-զեսցի յաթոռ յայնժամ ի արդեանց և կամ ի անօթից աթոռոյ վճարեսցեն, այս երևե-լին, որ ի տեսութեան, թող բաց այսմանէ զկանայս և զմանկտիս։ Տակաւին կայ ի Պետրբուրխ վերջին գրով յայտ առնեն մեզ թէ պահոց առաջի շաբաթոյն ելանելոց է, բայց՝ չունիմ տակաւին կատարեալ տեղե-կութիւն։

Իւրոցն տեղս գրեալ էր թէ հրաման գնաց զԳեորք Աղաեկովն ղարաւուլի տակ առնուլ և ապրանացն Ցոլսէփայ հաշիւս խնդրել թէ ում աւեալ է, և թէ պատճառ է Լուսաւորչանման հայրապետին Դանիէլի

չարչարանացն, որ այժմ ընկալեալ է իւր ս. Աթոռն, և փոխանակ ինքեան զանարժանն արկեալ է ի պանա և ի կապանս և այլն, զի երբ լւան աստ Երևանու իշխանքն զառումն Գնջայու, զմահ Նորին խանի և որդոյն ի պատերազմի, վասնորոյ խորհեցան աստ ընդ խանի իւրեանց տալ զբալանիսն պերթի, և զԳաւիթն կապեալ կողմնակալին և այլ բազում առասպելս, զոր կուտեսցէ ի յիւր գլուխ, Աստուածն սարաօթ խոստղացն զայս ամենայն պատշաճին պատասխանելոյս զկնի, վասն ապրանացն ասեմ, Նախ՝ որ Ցովսէփ կաթողիկոսն ի Պոլիս ապրանք չէ առաքեալ, և ոչ վաճառողքն գիտէին թէ Նորայն է, այլ ես որպէս առաքեալ եմ նոյնպէս և գինն ստացեալ, և մանաւանդ ոչ առ Գևորգ Աղաեկոմն այլ՝ առ այլս, այսր ես սպառնալիս է արձակեալ թէ զիմրդ համարձակիք ընդ սևորիգ այգմիկ միանալ, զիմրդ դհաշիւս քաղաքի ձերոյ ոչ խնդրէք, ահա ես զքսան և հինգ հազար ռուպլին և ապրանքն ստացայց, իսկ զմնացելոյն դուք գիտէք, և վասն այսց ընկալման մինչև ցայսօր ինքն և կամ Լազրոմն գային իսկ այժմ գրեն թէ, կացուցանեմք վէքիլ դնիք Օհաննէսն էրէց Ախքիրմանու, և աղայ Ցովհաննէս Սաթոմն, իսկ ես չկամիմ խոսիլն ես ընդ սոսա եթէ և Սաթոմն յիմարեալ մտցէ ի մէջ բանիս և սկիսըն արասցէ հարցանել, զի ես ութն հարիւր թւոյն, ըստ ձեռագրոյ և հրամանի հոգևոր տեառնս, գրամն կայսերական յանձնեալ յինքեան, սոյն ապրանքս ընկալեալ եմ, և նոյն գրոյ զօրութեամբն յանձնեալ տեղոյս եկեղեցի շինող վէքիլաց իմոց, որ վաճառոյ գինն ըստացեալ լրացուսցեն զքսան և հինգ հազար ռուպլին, որպէս և վկայեցին մաղիսթրաթոջ և քաղաքացոց համակամութեամբ առին զներկայ եղեալ ապրանքն ի տեղի մնացեալ գումարին քսան և հինգ հազար ռուպլու․ և սոյնս մաղիսթրաթն կարգաւորութիւն արարեալ ծանոյց բարձրագոյն կառաւարութեան, և մեզ գւիթանձի ետ, այսինքն զաւզ և կամ սէնագ որ այլ տեսակ առնելիք ոչ մնաց առ մեզ ամենն ստացան, նոյնպէս ետ և ժողովուրդն երկու հարիւր մարդոյ ստորագրմամբ․ և ի պոլիցայն ժուռնալ արկմամբ․ այժմ զայս իրաւունք բերէ Եփրեմն թէ, այս ապրանքն երբ ժողովեալ լինէր, ես օգնական եղէ վասն պայծառութեան Ռուսաստանու տէրութեան որ ակն ունէի անցանել այսկոյս, և այլ այսպիսի առասպելաբանութիւնս։ Այժմ թող ընդ տեղոյս մաղիսթրաթին և ժողովրդեան զինեսցի ես թուղթս առեալ յետս նստիմ,—և լսել ես չկամիմ չիք Ցօհաննէս էրէցով քանի մարդիք կողմն են անկեալ Եփրեմի, և Մալխասն ընդ նոսա, որք ասեն թէ ապրանքն Եփրեմին է, բայց՝ հարկանելոց է տէրութիւնն թէ ուստի գիտեն և զինչ վկայութիւն ունին․ այնժամ սևերես և խայտառակ մնալոց են, ողորմութեամբ տեառն։

Վասն որգեկիդ խնդրեմ լինիլ միամիտ, ի բարեաւ գալն, առնելոց եմ ըստ ախորժակացդ զանազան լուրք որք ի չարասիրաց ծաքին չթողուն զերեխայն շարժել ի տեղոյն, զկատարեալսն երբեմն խափեն, ուր մնաց զանկատարս, և զկանայս։

Խնդրեմ որպիսի լուր իցէ այդ կողմն առ մեզ պատկանեալ միամտութեան անապաղ ծանուցանելն փութալ, սրբազան պատրիարգին․ երկուց Աբրահամ արհեացն, և Գևորգ վարդապետ բարեհամբոյր առնն բարեկամին քոյ և անտես սիրելոյն մերոյ զողջոյնս ձոնեմ, և մնամ վասն ձեր պատրաստական ծառայութեամբս

Գրիգոր արքեպիսկոպոս

մարտի 28 1804
ի Գրիգորիպոլ․

Պարոն Անտօնին և քոյր Գայանէին օրհնութիւն և սէր նուիրեմ,—սպասեմ Փիլիպպոսի գալստեան, գիտել զմիտս դոցա։ Ջիք հաջի Ցօվանէսի արարքն գիտացի և ծանուցի, նա դառնալն ոչ տեսանէ, եղիցի ի ... ամենայն խաղաղասէր իշխանաց օրհնութիւն և սէր նուիրեմ։

ԻԲ.

Ծերունի հայր տէր Ստեփանոս աւագ քահ. գերայարգելի Աղայ Գեւորգ եւ հանի Միեսէր

Իմ հարազատագոյն բարեկամք.

Անցեալ փոստով լիօրէն գրեցի, այժմ չէ ինչ աւելեալ ի համբաւս ստասանից. Թաղղէոսն եկեալ քաղաքս, օրհնեալ զհիմն եկեղեցւոյ ղաւշանցոց, տեսութիւն արարեալ ընդ մեզ, դարձաւ անդրէն ի Ղոիմ ի վանքն, ուր ունի հրաման Եփրեմէ կառաւարել, ղնա տեսի այր խաղաղասէր, և մասամբ գիտօղ երախտեաց որ առ հոգևոր ծնօղս, իսկ զոր ինչ ունէր զատ ի սրտէն աւելուածու խոսից զայն չէր հնար դիտել. և կամ հնարէր իսկ էր գիտել՝ զի չէր այնքան ի խորութեան սիրտ նորա. որպէս յայտնի է և ձեզ, բայց՝ ի վերայ այնր ամենայնի, ոչ եղիտ պատիւ ի հասարակութենէ. այլ միայն այն քառասուն երեքից, վասնորոյ ի նոցին եկեղեցոջ միայն մատոյց զպատարագն սուրբ, որ և ես տկար էի սաստկապէս այն աւուր. իսկ Մանուէլն նըստեալ սպասէ, ընկալնուլ զհամբաւ հաստատութեան Դանիէլի, և երթալ ի սուրբ Աթոռն, և կամ այդր դառնալ առ դեսպանն յանձնարարութեան յաղագս ընկալնլոյ ի յանուն Դանիէլի զֆէրման.—Ստեփան ոմն եպիսկոպոս նշանադրեալ են ի պատրիարգութիւն քաղաքիդ. և այլ բաղում մեծաբանութիւնք ի բերան սորա, սակայն՝ Աստուած խափանեսցէ.

Ամենայն բարերարաց օրհնութիւն տամ, մանաւանդ՝ բարի աշխատաւորաց մերոց, և մանաւանդ՝ բարերարաց սրբոյ Աթոռոյն, հարկաւոր է և սակաւ մի արթուն կալ՝ ի փառս հաւատոյ.

Անտօնին և Գայանէին օրհնութիւն և այլն մնամ վասն ձեր պատրաստակամ ծառայութեամբս

խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս
Սրբոյ Էջմիածնի.

1804 սեպտեմբերի 28
ի Գրիգորիպոլ.

ԻԳ.

Ծերունի հայր տէր Ստեփանոս աւ. քահ. գերայարգելի Աղայ Գեւորգ, եւ մահտեսի Միեսէր.

Իմ հարազատագոյն բարեկամք.

Ուրախապատում թուղթ ձեր՝ ամսոյս 24 ին ընկալեալ մխիթարեցայ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որ արդարութիւնն Աստուծոյ, ընկալեալ է զիւրն զանաղօտ պայծառութիւն, բայց մինչ չէր լիովին հաւաստի բանքն և ունէր տակաւին թէյութիւն, վասնորոյ թողի դարձեալ զյոյսն իմ առ արդարադատն Աստուած, որ լիովին մխիթարեսցէ զցաւագնեալ սիրտս մեր.

Բայց՝ նախ քան զժամանել զձերդ գրոյ, պրն. Մանուէլն զգացեալ էր և էր սիրտ նորա ի տաքնապի և մինչ նա չյայտնեաց մեզ ինչ, վասնորոյ և մեք լռութեամբ անցաք, բայց ծանուցաք մերոց մտերմաց, այլաբանական ոճիւ, որպէս թէ այսպէս պատմեն եկողք և այլն.

Ես անփոփոխ հանգստութեամբ կամ ի տեղոջ իմում, նմանապէս թշնամիքս ի տագնապի. այս միջոցիս տրտմութիւն մի դիպեցաւ ինձ որ և դուք զգալոց էք, որ ի ծանր ցաւոց վաղջանեալ է սիրելի բարեկամն մեր, զկուպեռնաթոռն հովկասուպրն. Ցովհաննէս Կասպարովին, որ խնամատարն էր մերոց մտերմաց. որով ուրախ են թշնամիք մեր. և հայհոյեն, որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ. Խնդրեմ ընդ շալացն և զտէրողորմեայսն առաքել, որ հարկաւոր է ինձ.

Ամենայն բարերար իշխանաց խոնարհ զողջոյնս նուիրեմ մանաւանդ սրբազան պատրիարգին, և Աբրահամ արհոյն և սրբազան պատրիարգի վէքիլ վարդապետ եղբօրս—և ամենայն հարցանողաց և աղայ Անդրիաս Մինասեանին, և պրն փեսայ Անտոնին և քոյր Գայանէին և զծերունի մայրս իմայնովք զձեզ սիրով ողջունեմ.

Եւ այլն մնամ վասն ձեր աղօթարար՝

Գրիգոր արքեպիսկոպոս

1804 նոյեմբ. 30.
ի Գղորիպոլ

ԻԳ.

Տէրունի հայր տէր Ստեփաննոս աւ. քհ., գեւ այարգելի Աղայ Գեւորգ, եւ եղբայր մահտեսի Միեսէր.

Իմ ախորժագոյն բարեկամք.

Նոյեմբերի 1 էն և տասնուհնգեն արձակեալ թուղթք ձեր խնդութեամբ սրաի ընկալայ, մանաւանդ գիտելով զողջութիւն ձեր ուրախ եղէ.

Բարոք դատեալ էք Գրիգոր աղայի երթալն, բայց՝ մինչ դոքա դանդաղին մի գուցէ գայլոք յառաջագոյն իջցէ, և դոցա յայնժամ իւղ գնեալ ի վաճառատեղաց և դառնալն, լիցի անօգուտ ըստ հնգիցն. և այլն որպէս դուք գիտէք։ Ես աղքատութենէս ծրարեալ եմ ղիս ի անկիւնս խցի իմոյ, ողորմութիւն կայսեր հազիւ օրական ապրուստիս հասուցեալ, և զայն անբաւական, ուր մնաց թէ կարողացայց զգրունս իշխանաւորացն բաղխել. զի ոսկեայ բալանի բարտե ունիլ, առ դուրս նոցին դիմեցողաց որպէս և դուք քաջ գիտէք։ Վասնորոյ նոքա ժլատ ես աղքատ ըստ աշակերտացն Արիստոտելի, մինն կամէր և ոչ կարէր, և միւսն կարէր և ոչ կամէր։—Եթէ դորին գալուստն էր աննհնար՝ գուցէ ինձ լինէին ձեռնտու. ես զիարդ և իցէր, կասեցուցանէի զբանն առ ի ոչ վաղջանաբար վճիռ լինիլ իրին. զի թէ տակաւին ոչ օգտեցայց դրութեանցս, մի գուցէ հարկեցայց լինիլ և ես մի ի այնց անշնորհակալաց, և զայն լինի իրաւամբ. զի Մանուէլի խնդիրն առ իս ոչ այլ ինչ է, եթէ ոչ թողուլ զկողմն Գաւթի և հակիլ ի Գանիէլն, թէև հարալէզն է ի սուկս(*) սակայն միանալ է ի կամս կայսեր իմոյ, և ես ըստ ձերդ յուսադրութեան այսօր և վաղն գնելով ի մտի յամառիմ, գաշամբ խոստանան պատուել զանուն ծնօղիս, պահպանել զտըպարանն նորին անուամբ, և այլն, այլ այսքան միայն՝ որ ես վասն առաջնորդութեան երկրիս հրաժարական տացից զթուղթ կայսեր. և ճանաչել գլուխ Ազգի զԴանիէլն թէև ոչ է։

Բացի սրբազանէն օգնելն իրաւամբ առ մեզ հասանելին, ահա քանի ամիս է դանդաղիք որոց պատճառոյն անտեղեակ գոլով լռեմ։ Եւ թողում ի քաղցր կամս ձեր։

Սպասեմ ողորմութեամբ տեառն այս փոստիս լրիւ ուրախական առնուլ զլուր, այդի—քնեաղ Բարսեղն զձեզ սիրով ողջունէ։

Գերոտի մայր, և եղբայրս բոլոր իւրայնով զձեզ և զիւրայնս որք այդր են ողջունեն,

Սիրական Աստուածատուր որդեկիդ օրհնութիւն։

Եւ այլն մնամ վասն ձերում յարգութեան պատրաստակամ ծառայ

Գրիգոր արքեպիսկոպոս

սրբոյ Էջմիածնի.

դեկա. 12 1804

ի Գրիգորիպոլ։

Շնորհաւորեմ զնոր տարիս որ հանդերձեալ եմք մտանել և ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ շնորհիւն ցուսցէ մանկացեալ տէրն զձեզ ամենայն անզրաւ իւրովք բարեօք։ Եւ ուղղեսցէ զընթացս ձեր առաքինի և աստուածահաճոյ գործովք, թօթափեսցէ զամենայն տրտմութիւնս ձեր ղմէնջ. զարդարեսցէ անեզրական խնդութեամբ քահանայապետօք և համայն եկեղեցական լուսաւորչական մանկամբք։

Սրբազան Յովհաննէս պատրիարգին, և նորին խոհական վէքիլ վարդապետին սիրով զողջոյն նւիրելով ողջութենէ նոցին հարցանեմ։ Եւ սապէս յինէն շնորհաւորել զնոր տարիս և ծնունդ տեառն մերոյ Յիսուսի քրիստոսի, համայն մերոց բարեբար իշխանաց անուանէ ամենեցուն։

ԻԵ.

Ծերունազարդ հայր տէր Ստեփաննոս ա. քահ., զերայարգելի Աղայ Գեւորք, եւ մահտեսի Միեսէր.

Իմ հաստատուն բարեկամք.

Դեկտեմբերի 15 էն արձակեալ գիր ծերունոյդ ընկալայ ամսոյս 4 ին գիտաց զզրութիւն բանիցն, և դըարոք խորհեալ յառաջարկութիւնդ, որ ի ձեռն այդմ տէրութեան մտանել բողոք, առ դեսպանն և նօքօք կայսեր, այժմ յոյժ դիւրին է ստորում Մինասն և Եփրեմ արտաքսեցան ի կայսերական դրանէ, և սակաւիւք ծանեաւ կայսրն անհաւատարմութիւնս նոցա, զի յոյժ քաղցրասիրտ է կայսրս մեր, մինչ զի ելաց ի վերայ անմեղ սպանելոցն ի Պարսից, զարմանամ ես ընդ այն որ տակաւին չփոխեցին ի գործոյն դքնեազ Ծիցիանով և նմա հասցէ, զի յոյժ գառնացեալ է կայսրն, ընդ տգետ արարս նորա. այժմ է ժամանակ ամիրայից յոտին կալ, և զհարկաւորն հոգալ, և Գրիգոր աղային փութալ դիմել պատրաստի նիւթովք զի տէր խորտակեաց զԹշնամիսն, ձեր խորհուրդն գերազանց գովելի է, բայց՝ շտապել պիտի։ Զի երկիրս համայն յերես դարձուցեալ ունի ի Եփրեմայ. վասն զանազան խափեփայական գրութեանցն, որ այժմ անպատկառ երեսօք անամօթաբար հայելոց է զերեսս նոցա, գնայ Հաշտարխան զի այլ տեղ ամենևին չունի ակնկալութիւն ընկալեալ լինելոյ, անկան ի ոսկոյ, վերջապէս անկան ի փառաց անձն Աստուած այսպէս համբերեալ դատապարտէ զհակառակորդս իւր։ Լիասիրտ խնդութեամբ կատարեսցի զտօն մանկացեալ աստուածորդոյն, օրհնեալ է Աստուած որ մեծ արարսքանչելիս իւր ի մեզ։

Խնդրեմ աւետարանել բանն իմոց բարեբարաց և սրբազան պատրիարքին։ Եթէ փութասջիք օրէ յաղթանակութեան. պսակեսցէ տէր ի մօտոյս զամենայն գործս մեր բայց՝ աղաչեմ չդանդաղիլ։

Այլ և խնդրեմ ի գալ Աղայ Գրիգորին պատրաստել զնա ոչ միայն ոսկոյ պաշարօք այլ և զանազան ճօթիկղէնօք շալօք և տամանունայիւք, որ արժանաւոր տեղիս ընծայաբեր լիցի, եթէ լաւ շալք լինի հնալ է և կայսերուհոյն նուիրել, ի դիմաց ազգին, չօրս հատ պարտի լինիլ այն, և կամ վեց։

Վասն իմ թէ ծանրութիւն է ձեզ գալ առնուլն և յանձնելն պրն. Պէյինի գրեալ մարդոյն, խնդրեմ երկու հազար դուռուշն յանձնել մեր պրն. Փիլիպպոս աղային որ տհա ինքն ևս նմա գրեաց, որ նա ի տեղեկանալն իւր այդի ձեր վճարելն, ինձ ասա հաստուսցէ։ Խնդրեմ առաջին փոստով վճառաբար ինձ իմացումն գրել։ Եւ գիր ձեր առանց վճարելոյ զգինս այն մարդոյն յանձնել անուն իմ, նա ի գիրս պրն. Պէյինի եղեալ առաքեսցէ, և ես ձեռամբ Պէյինի ստանամ։

Եւ այլն մնամ վասն ձեր պատրաստական ծառայութեամբս

խոնարհ Գրիգոր արքեպիսկոպոս

1806 յունվարի 13
ի Գրիգորիպոլ.

Ստեփան կամ Նիգողայոս Ամիրայն 51 շալ է առաքեալ ձեռամբ իւր որդւոյն առ Մանուէլն, չգիտեմ առ ինչ վաղջան ասէ… կամին նոքա Ռուսեայ գրվիլ։

ՎԵՐՋ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Յովսէփ Արղութեանը ռուսիաբնակ հայերի առաջնորդ ժամանակ պահել է ժամանակակից անցքերի և իր գրագրութիւնների յիշատակարան մատեաններ, որոնց և անուանել է «Դաւթար»։ Այդպիսի մեծ և փոքր դաւթարներ յայտնի են մինչև այժմ չորս հատ։ Դոցանից երկու խոշոր հատորները սեպհականութիւն էին Արղութեան տոհմի այժմեան նշանաւոր ներկայացուցիչ իշխան Նիկողայոս Երկայնաբազուկ Արղութեանի, որ իր տոհմի վերաբերեալ բոլոր գրագրութիւնների հետ միասին այդ դաւթարներն էլ նուիրել էր հանգուցեալ պատմագիր Ա. Երիցեանին, իսկ սորա մահից յետ իւր ձեռագիրների հետ գնուելով նուիրուեցաւ Էջմիածնի մատենադարանին։ Հակառակ մեր տարևոր ջանքերի մեզ չյաջողուեց այս հատորի համար օգտուել այդ «դաւթարներից», որոնք մնացին նիւթ «Դիւանի» հետագայ հատորների։ Երրորդը մեր այս «Դաւթարն» է, որ ստացել ենք հրատարակելու Ն. Նախիջևանից պ. Աբր. Ջամինեանից։ Մեր ստացածը դաւթարի պատճէնն էր գրելու թերթի մեծութեան, որ բաղկացած էր երկու մասից. առաջինը այն է, ինչ որ հրատարակել ենք այստեղ, իսկ երկրորդը մանրամասն ցուցակն էր այն եկեղեցական զարդերի, սպասների և անօթների, ինչ որ Ն. Նախիջևանի. ժողովուրդը բերելով իր հետ իրանց բնակավայրից՝ Յովսէփ արքեպիսկոպոսը զետեղել էր Ն. Նախիջևանի նորակառոյց եկեղեցիներում։ Այս ցուցակը մենք չենք հրատարակում թէ էական նշանակութիւն չունենալու պատճառով, և թէ մեր հրատարակութիւնը չծանրաբեռնելու համար։— Իսկ չորրորդ դաւթարը այն «պատմութիւնն» է, որ տպուած է այս հատորում յիշեալ դաւթարից յետոյ. դորա օրինակը մենք ստացել ենք Կ. Պոլսի մեր մի բարեկամից։

2. Երգալեան ազգանունը կամ գրչագրի սխալն է կամ Խալդարեանը կոչւում էր նաև Երդալեան, քանի որ այդ ձևը կրկնւում է «Դիւան»-ի այս հատորի մէջ մի քանի տեղ։ Պետերբուրգ առաջին հայ տպարան հիմնողը եղաւ Ջուղայեցի Գրիգոր Խալդարեանցը—1783 թուին, որ շարունակուեց 5 տարի միայն։ Խալդարեանցը վաճառականութեան համար գնացել էր Լօնդօն և այնտեղ տեսնելով գիրը և գրականութիւնը ծաղկած՝ ցանկութիւն ծնաւ մէջը՝ տպարան բաց անել և այդ միջոցով հայրենակիցների մէջ գիտութիւն տարածել։ Նա մեծ նեղութիւններով ու ծախքով հայերէն տառեր պատրաստեց—ինն տեսակ տառեր, ինչպէս որ այդ երևում է այդ տպարանի վաճառման պարագաներից—և բաց արեց Պետերբուրգում առաջին հայ տպարանը՝ Յովսէփ Արղութեանի խորհրդով և խրախոյսներով։ Այդ տպարանում Յովսէփ արքեպիսկոպոսի հրամանով և կարգադրութեամբ տպուեցան բազմաթիւ գրքեր կրօնական և ազգային բովանդակութեամբ. այդ գրքերի թիւը Զարբանալեանը իր մատենագրութեան մէջ սահմանափակում է եօթով. Նրան յայտնի չեն մի շարք ուրիշ հրատարակութիւններ, որոնք տպուել են նոյն տպարանում. հէնց ամենագլխաւորը նա չէ յիշատակել իր մատենացուցակի մէջ, այդ Եղիշէն է, որ տասնևութերորդ դարում, 1764 ի Պոլսի տպագրութիւնից յետոյ, Եղիշէի երկրորդ տպագրութիւնն է Մարգար Մանիչարեանցի ծախքով և Յովսէփ արքեպիսկոպոսի հրամանով կատարուած։ Եղիշէն փոքրադիր մի գեղեցիկ հրատարակութիւն է. սկզբում մի

ընդարձակ «Նախերգանք»՝ Ակնեցի Սահփաննոս Պետրոսեան բանասէրի գրուած, որ և եղել է գրքիս սրբագրողը, ապա քաջ Վարգանի մի նրբաքանդակ և խորհրդաւոր նկար, որից յետոյ Եղիշէի պատմութեան բնագիրը։ Դարձեալ մի նուրբ պատկեր՝ Վեհոնդ երէցի՝ յաղթական պսակով զարդարուած։ Յետոյ գրքի մանրամասը ցանկը և ի վերջոյ վերջարան խմբագրողի կողմից, որից, ի միջի այլոց երեւում է, որ Եղիշէն դեռ չաւարտած՝ վախճանուել է ապարանի տէր Գրիգոր Խալդարեանը, և տպարանի հոգայողութիւնը անցել նորա ձեռնասուն աշակերտ պարոն Մկրտումին։

Յովսէփ Արղութեանի մեծագործութիւններից մէկը նորա բաց արած տպարանն է. այն ժամանակ, երբ Սիմէօն կաթողիկոսը Էջմիածնում տիրող խաւարը փարատելու և գիր ու դպրութիւն տարածելու համար մեծ աշխատութեամբ և Հնդկաստանցի վաճառականների օժանդակութեամբ Էջմիածնում տպարան բաց արեց, հեռու հիւսիսում էլ նոյն եռանդով և զոհաբերութիւններով տպարան էր հաստատում իր հոգեծին որդի և սան Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսը։ Ամենից առաջ Յովսէփը երկար տարիներ բանակցութիւն ունէր Ղուկաս կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ՝ Ամստերդամի հայ տպարանը ձեռք բերելու, որ չյաջողեց։ Իսկապէս ասելով Յովսէփի տպարան բաց անելը կապ ունի Խալդարեանի տպարանի հետ. Խալդարեանի տպարանը նոյն իսկ Յովսէփի տպարանն է, որի ծախքերը վերջը վճարելով Արղութեանը՝ իր յարմարութեան համար նախ փոխադրեց Նոր Նախիջևան քաղաքի ս. Խաչ վանքը և ապա Հաշտարխան։ Այդ երեք տպարանում տպուած բոլոր գրքերի վրայ դրոշմուած է Յովսէփ Արղութեանի հրամանը։

Յովսէփի տպարանը, չնայելով իր աստանդական վիճակին տասնևութերորդ դարի հայ տպարաններից ամենից բեղմնաւորներից մէկն էր. թէպէտև գրաբար լեզուով՝ բայց այնտեղից լոյս տեսան բազմաթիւ գրքեր թէ կրօնական-բարոյական բովանդակութեամբ, թէ հայ պատմագիրներ և թէ արտաքին գրականութիւնից թարգմանութիւններ. Զարբանալեանը իւր մատենագիտութեան մէջ 19 դիրք է թւում Պ. Բուրգի, Ն. Նախիջևանի և Հաշտարխանի տպարանում տպուած. նրան յայտնի չեն շատ հրատարակութիւններ, այդ տպաքաններ/ց ելած. օրինակ՝ նրանց մէջ ամենահետաքրքրական աշխատութիւնը «տետրակ համառօտ բառարանի, արարեալ և չափաբերմամբ ոտանաւորեալ՝ աշխատասիրութեամբ Պօղոս Դասասաց դպրի Տիւրիկեցւոյ Թորոսեան ի փառս տեառն Աստուծոյ, և ի վայելումն նորավարժից Դպրատան, արդեամբք և ծախիւք ի Հնդիկս ի Դաքայ բնակեալ՝ մեծահաւատ և բարեացապարտ պարոն Մարտիրոսին տէր Ստեփանոսեան», 1794 ս. Խաչ վանք Նոր Նախիջևանի։ Յառաջաբանը հեղինակի աշակերտինն է՝ Թադէոս Կ. Պօլսեցի վարդապետինը, որ դիրքը նուիրելով Յովսէփ Արղութեանին՝ յայտնում է, թէ իր մօտ կան հեղինակի և ուրիշ լաւ լաւ աշխատութիւններ։ Բառարանը թուրքերէնից հայերէն է ոտանաւոր չափով գրուած։

3. Յովսէփ արքեպիսկոպոսի յիշատակարանի այս հատուածը պարունակում է իր մէջ 4 տարուայ մանրամասն պատմութիւն Արղութեանի գործունէութեան, սկիզբն առնելով Ղրիմի գաղթականութիւնից։ Յայտնի է, որ Ղրիմի հայերը գաղթել են Անիից. այդ մասին մենք ունենք Ն. Նախիջեանին մօտիկ Նիսվիթայ դիւղի եկեղեցու ձեռագիր յայսմաւուրքի վերջը մի ընդարձակ յիշատակարանի օրինակ Անիի գաղթականութեան մասին, որ տպուած է «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքում կրճատումներով և առանց տոհմական ադիւսակների, ուստի և ամբողջութեամբ հրատարակում ենք այստեղ.

«Պատմութիւն ժողովրդեանն Անւոյ քաղաքին՝ ելանելոյն ի սեպհական հայրենի աշխարհէն իւրեանց և բնակելոյն ի յԱղսաբայ ընդ մէջ Ղազանու և Աստրախանու, և ի վերջոյ ի Կաֆայ՝ ուր և կոտորեցան իշխանք և պարոնք և երևելի ազնուապետք նոցին։ Հանեալ ի ձեռագիր յայսմաւուրէ միոջէ, որ էր ի Նէսօվիտոց գիւղն Նոր Նախիջեանու, գրեալ ձեռամբ Դաւթի դպրի որդւոյ տէր Ներսիսի յամի տեառն 1694. և հայոց 1139. ի կաթողիկոսութեան Եղիազարու և

յառաջնորդութեան Ղրիմայ Վարդան արք-
եպիսկոպոսի և Ցակոբ վարդապետի. կցոր-
դեալ յայսմաւուրն սրբոյն Սարգսի զօրա-
վարի՝ ի31 յունվարի։

«Դարձեալ և զայս ով բարեմիտ ունկն-
դիրք. ի յիշումն ածցուք ինչ ինչ ի կարճա-
հաւաք յորակութեանց տարարախտ և հայրե-
նազուրկ թշուառակենցաղ ազգիս հայոց, զորս
ի մերոցն նախնեաց՝ և զորս ի յետնորդացս
ի մէնջ. և տպրերահոս արտասուօք վարսա-
քրքիր գլխով յերկիր անկեալ՝ անխնդաց
կենօք լացցուք, թէև ոչ հաւասարի անմը-
խիթար սուգն մեր՝ ընդ տանջանացն բազ-
մաչարչար և կենցաղազուրկ նահատակացն
մերոց նախնեաց՝ որք ի Կաֆայ կատարե-
ցան ի ձեռն անօրէն Կէտիկ Ահմէտ փաշա-
յին. հեղին զարիւնս իւրեանց վասն ա-
նուանն Քրիստոսի և վասն սուրբ եկեղե-
ցւոյ՝ իբրև զվտակս դետոց։ Բայց ոչ պա-
տեհ դոլոյն զանցառութիւն պատճառի
զրկման և նախնեացն մերոց ի բնիկ հայ-
րենեաց և պանդխտավարութեան մերում.
և մանաւանդ ոչ յուստեքէ գոլն յիշատա-
կարան վասն անցից մերոց պատմագրեալ,
հարկեցաք նաև իւրաքանչիւր ամեայ՝ յի-
շատակօրէն պատմաբանել. զորս ի կենդա-
նութեան նախնեաց մերոց՝ և զորս այժմ ի
մեզ. հանդերձ մարտիրոսական կատար-
մանցն ոչ անյիշատակ առնել. և ոչ զկարս
ըստ դիտութեան մերում առ ի յօրինել թէ
ծրոց էր՝ և է մեր ներկայքնակ մեծ կղզիո
այս Ղրիմ. և կամ թէ ուր, և յորում գա-
ւառի, կամ ի տան, կամ ի դահոյ էր սե-
պուհ բնակութիւն մեր։ Ուրեմն ով աս-
տուածասէր հաւատացեալք և Քրիստոսի
արեամբ գնեալք և ի գոգս նորին հօտակու-
տակեալք՝ ուշադիր լերուք առ այս զհարկս
հասարակաց յիշատակողիս խնդրոյ. զի մեծ
կղզիս զայս Ղրիմ յորում բնակիմք, էր ի
յառաջին ժամանակսն բնակութիւն յունաց,
որ յետ համբարձմանն Քրիստոսի փրկչին
մերոյ, եկն մին ի յեօթնասնից քարո-
զեաց զնոսա զորս և գարձոյց ի հաւատս
քրիստոնէական. որք էին պարապօղք այ-
դեաց և նաւարարութեանց և բնակութիւն
նոցա լինիւր ի ծովեզերս, ի քարանձաւս, ի
դղեակս՝ որք կան այնպէս նաև մինչև ցայսօր։

Եւ յետ ժամանակաց 491 ամին ըստ
հայոց եւ ի պարսկական գնդէն Ղբչաղ կո-
չեցեալ ազդ մի այլալեզու մահմէտական
կրօնիւք. գայ աւրէ զբոլոր Ղրիմն։ Իսկ սա-
կաւուց ժամանակաց՝ լատինք եկեալ ցան-
կան տեղւոյն Կաֆայու՝ որև ասի Թէոդո-
սիայ։ Եւ սիրով ուխտ եդեալ խնդրեն ի
Ղբչաղէն, և տայ նոցա հրաման. և շինեն
զֆռանկիհիսար ի ծովահայեաց տեղն, ի
ստորոտ լերինն. ուստի բղխին ակունք
քաղցրահամ ջրոցն զանազան աղբերց. այս-
քան վասն ներկայքնակ Ղրիմայ կղզւոյս բա-
ւեսցուք։ Եւ դարձցուք առ այնմ որ ի վեր
անդր ասացաք, թէ ուր կամ յորժում գաւա-
ռի էր սեպուհ բնակութիւնն մեր. զի մեք
եմք սերունդք Պալհաւունեաց, ի մեծ թա-
գաւորանիստ քաղաքէն յԱնւոյ, որ է ի գա-
ւառին Շիրակվանու տանն Շարայեան
գահւոյն Բագրատունեաց։ Զի մեծ թագա-
ւորանիստ քաղաքն մեր Անի՝ իշխանաց և
ազնուականաց էր բնակութիւն. և զի ոչ
կարեմք ներ սահմանի արկանելով պատմել
զանսահման և զանհուն հարստութենէ իշ-
խանացն ազնուականաց մինչև ցգռեհիկս։
Եւ բացի զանազան ոսկեզօծ պալատից իւ-
րաքանչիւրոցս, ունէաք նաև ինմա հազար
և մէկ եկեղեցիս։ Բայց վերջապէս զհոգի և
զմարմին մեր ոչ արդարութիւն գտանեցաւ
ի մեզ, և ոչ զղջումն առ ի զերծուցանել
զգրաւեալ հոգի և զմարմին մեր. բարկացաւ
տէր ի վերայ մեր։ Եւ յետ սակաւուց ժա-
մանակաց Ջարմաղան խանն թաթարի,
առաքեալ դեսպանս ի քաղաքն յԱնի. զի
զբնակիչս նորին հնազանդեցուսցեն ինքեան.
զի գլխաւորքն ոչինչ պատասխանի ետուն
նոցա. իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն
սպանին զդեսպանս. և զայն տեսեալ զօրքն
այլազգեաց ի բարկութիւն դրդեցան. և զքա-
ղաքն պաշարեալ անթիւ զօրօք՝ առին,
և սուր ածեալ առ հասարակ՝ անողորմաբար
կոտորեցին, զսակաւ կանայս և զմանկունս
թողեալ. կողոպտեցին զինչս և զստացուածս,
աւերեցին զբոլոր եկեղեցիսն. քանդեցին
զքաղաքն, եղծին և ապականեցին զփառս
վայելչութեան նորա։ Անդ էր տեսանել տե-
սիլ ողորմագին, որ ծնօղք և ծնունդք ի միա-
սին կոտորեցեալք և դիզացեալք ի վերայ
միմեանց իբրև զդերբուկս քարանց կու-
տակեալք. քահանայք և պաշտօնեայք ցիր

և ցան անկեալք ընդ երեսս դաշտացն։ Արբեալ երկիր յարենէ ե ի ճարպոյ վիրաւորացն, փափուկ մարմինք որք անառօք լուացեալք սևացեալք էին ե այաուցեալք, և այնոքիկ որք ոչ էին ելեալ արտաքոյ քան զդուռն քաղաքին, բոկ և հետիընթաց վարեցան ի գերութիւն, և որք ի պատուական մարմնոյ և յարենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հաղորդէին, ուտէին զմիս զանսուրբ ե զհեղձուցիչ. և ըմպէին ի պղծ կաթանէ ձիոցն. կանայք պարկեշտք և ողջախոհք մատնեալք ի խայտառականս վավաշոտ մարդկանց։ Ապա բազումք թողլով զոսկեզօծ պալատս և զծաղկաւէտ դաշտս վանօրայս և զեկեղեցիս աւեր, չուեալ եկին որպէս փախստական ի յԱղսարայ՝ որ է ի մէջ Հաշտարխանու և Ղազանու. ոմանք գնացին ի Ջուղայ. ոմանք ի Վան. և ոմանք ի Սիս։ Եւ որք յԱղսարայ եկին, հրաման առեալ ի Թաթար խանէն բնակեցան անդ ոչ բազում ժամանակս, որ էր զայս ՉԽԸ (748) թուին. վասն զի մինչ նեղեալ եղեն ի Թաթարացն՝ դեսպան յղէին ի Ղրիմ առ խանն ճինիվիզաց՝ որ բնակէր ի մէջ Փոէնկիհիսարին Փէօտոսիոյ։ Ուխտ դնեն ընդ իշխանին Փէօտոսիու, ելեալ ի յԱղսարայէ իշխանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք վառեալք զինու՝ պատերազմելով ընդ Թաթարացն՝ ճեղքեալ գան ի Ղրիմ, ե բնակին ի Փէօտոսիայ՝ ի Կազարաթ, և ի Սուրխաթ և ի կողմանս նոցա. այս եղև ՉՀԹ (779) թուին։ Յայնժամ զօրացաք մեք ե բազմացաք և շինեցաք զգիւղս և զգաւառս իշխանք ե ազնուականք ի Ղարապազարէն սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Փէօտոսիայ ի լերինս և ի դաշտս լի արարին վանօրէիւք և եկեղեցեօք մինչև ի Սուրխաթ։ Եւ շինեցին տունք հարիւր հազար և զեկեղեցիս հազար. և ի յահէ հնձականաց պարսպեցին զքաղաքն Փէօտոսիայ։ Իսկ ՊԽ (840) թուին գայ մեծ խանն Թաթարի՝ պատերազմեալ հալածէ զՂբչաղ պարսից, և տիրէ զբոլոր Ղռիմ ի ձեռաց նորա. բայց վասն ոչ զօրելոյն առնուլ զՓէօտոսիայ, ակամայ բարեկամացեալ զերթևեկութիւնս առնէին ընդ իշխանին ճինիվիզաց. զի յոյժ սիրով էին ուխտիւք և պայմանօք մինչև ՋԺԷ. (912) թուին. ապա խանն էառ զդուստր Շիրին իշխանին ի կնութիւն որդւոյ իւրոյ՝ և յետ խնամենալոյն հրաւիրեաց Շիրին իշխանն զփեսայն իւր ի յինքն, բայց կոուարկուք միախորհուրդք լեալք՝ այնքան խռովութիւնս արարին առ խանն ասելով թէ Շիրինն զորդի քոյ կոչեաց ի խորհուրդ հալածելով զքեզ նստուցանել յաթոռ քո. և առ Շիրինն թէ եկեալ է փեսայն քո առ քեզ, զի զքեզ հալածեալ կորուսցէ և այլ բազում բանիւք. մինչ զի պարոն Շիրինն հաւատացեալ ըմբռնեաց զփեսայն իւր եդ ի պահեստ լատին իշխանին։ Ընդ որ ոխացեալ խանն՝ դեսպան առաքէ առ սուլթանն Թուրքաց՝ գալ ի յօգնութիւն ենթ պայմանիս այսորիկ ասելով թէ՝ քաղաքն ձեզ լիցի և զորդին իմ ինձ։ Իսկ Թուրքն երեք հարիւր նաւօք ընդ ծովով, և ինքն ընդ ցամաքիւ պաշարեցին զՓէօտոսիայ. յայնժամ ընդդիմացան իշխանքն և ազնուականքն մեր. և ոչ ետուն զբերդն։ Ապա Թուրքն ուխտ եդեալ ընդ հայոց չմեղանչել՝ եթէ հնազանդեսցին, այլ ազատութիւն տալ, տեսեալ իշխանացն մերոց և ազնուականաց զթուլութիւն իշխանին ճինիվիզաց և զօրաց նոցին, մանաւանդ թէ իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու առին զերդումն և զքաղաքն ետուն Թուրքաց, զայս եղև, ՋԻԴ (924) թուին։ Իսկ Թուրքն զկնի սուղ ինչ. ժամանակաց ստեցին երդմանցն և պայմանին իւրեանց հանապազ հարկադրէին իշխանաց մերոց և ազնուականաց դառնալ ի կրօնս մահմէտականն, զի դիւրաւ կարասցեն նուաճել զմնացեալ դռեհիկս։ Բազումս Կէտիկ Ահմէտ ղափիաան փաշայն բռնադատէր, և բազմիցս ի ճաշ և յընթրիս հրաւիրեալ զպատասխանս խնդրէր դառնալ ի հաւատոց և իշխանք մեր պատասխանեն թէ՝ եթէ բռնութեամբ և կամ սրով կոտորեսցես զմեզ, մեք յօժարիմք. փոխել զկենցաղս զայս ընդ յաւիտենականն. քան եթէ զքրիստոնէական օրէնն ընդ մահմէտականի. զի մեք ոչ եմք վաճառօղ կամ փոխօղ հաւատ ընդ հաւատոյ, այլ սէր ընդ բարեկամի, և բարեկամ ընդ սիրոյ։ Եւ յետ բազում հարցմանց և պատասխանատւութեանց՝ կրկին կեղծեալ բարեկամացն, բազմիցս իբրև զսէր ցուցանէր իշխանաց և ազնուականաց մերոց. և ասէր՝ այսուհետև ոչ է

պատեհ ձեզ զսուր ընդ մէջ կապեալ առ իս գալ ի ճաշ կամ յընթրիս, այլ առանց սրոյ և այլ բազում բանիւ։ Ցաւուր միում հաւատացեալ իշխանաց մերոց բանիցն փաշային, և մանաւանդ անճար մնացեալ ըստ հրամանի նորին գնացեալ առանց սրոյ ի ճաշ առ փաշայն, զի էր բնակութիւն նորա իսկելէ զափուսին ի վերայ չորրորդ դստիկոնի պալատին՝ յետ ճաշելոյ նոցին և յիջանելն ընդ ձիգ ձիգ աշտիճանսն պալատին՝ գահիճքն ըստ հրամանի փաշային՝ մի մի կոտորեալ արկին ի ծով. այսպէս իշխանազունք մեր և ազնիւք կատարեցան ի Քրիստոս։ Ապա հրամայեաց թուրքաց և թաթարաց կոտորել զամենայն ազգս հայոց. որք ի նմին աւուր բազմամարդ քաղաքն Ֆէօտօսիայ՝ սակաւաբնակ արարին, զի զծերս և զտղայս, զարս և զկանայս սրոյ ճարակ ետուն զարիւնս նոցա յերկիր հեղեալ, իբրև զվտակս գետոյ ընթանայր ի փողոցսն. անթիւ աղջիկք և մանկունք և մատաղ տղայք գերեալք՝ առաքեցին ի Պօլիս առ սուլթանն. զսոյնս արարին ի Կազարաթ և ի Սուրխաթ։

Այսպէս բազում յիշխանաց յազնուականաց և հասարակ ժողովրդոց մեր՝ յոմանս առ Աստուած կատարեցան. և յոմանս գերի վարեցան վասն հաւատոցն և վասն անուանն Յիսուսի Քրիստոսի։ Բայց անօրէն իշխանն Ղրիմոյն և զժնաբարոյն և ծարաւին անմեղ արեանց, և պատճառն կոտորման ազդիս մերոյ՝ ինքն ևս մնաց ամօթալի՝ որ ոչ միայն ոչ ետ զափիաան փաշայն զորդին խանին ըստ պայմանին, այլ տարաւ ի Պօլիս առ սուլթանն, և նա հնազանդեցուցանելով ինքեան զմանուկն Օսման ամրափակ նզովիւք, առաքէ ի Ղրիմ, զհայրն սպանեալ, նստուցանէ յաթոռ իշխանութեան։ Ցորմէ մինչև ցայսօր խանն թաթարի նստի ըստ հրամանի սուլթանին թուրքաց։ Եւ մնացեալ զազգս հայոց՝ մինչև ցայսօր բնակիմք ի ձեռս թաթար խանին հարկատուողական պայմանիւ։ Բայց նախ քան զայսոսիկ ի ժամանակս պարսպաշինութեան Ֆէօտօսիայ, կայր տէր Մաղաքիայ անուն աւագ երէց մի՝ որ ընդ պապու եղբօր թոռոյն իւրոյ Պետրոսի, շինեցին զբերդն ի չափ ԵԾ (500) կարտի. որոց զանուանս մինչև ցայսօր գրեալ կայ ի վերայ սէլ զափուսոյն յետկոյս ս. Լուսաւորչայ եկեղեցւոյն։ Իսկ յետ կատարման պարսպաշինութեան՝ տէր Մաղաքիայն ընդ պապու եղբօր թոռին Պետրոսի՝ ելեալ ի Ղրիմայ գնացին ի յԱղթամար առ Յովհաննէս վարդապետն որ էր պապու եղբօր որդի տէր Մաղաքիային և եղբայր Պետրոսն հօրն Անանիային, որք էին որդիք ի Վանայ ի տոհմէն Պահլաւունեաց ի գաւառէն Որոտնայ, ի քաղաքէն Վանանդու։ Զի Պետրոսն այս ծնաւ ի Նախիջևան քաղաքի զԴաւիթ, Դաւիթ զՍեղրակ, Սեգրակ զՄարգար, Մարդար զՍագի, Սագի զԱբրահամ, որ այս Աբրահամս հազար յիսուն և մէկ թուին ի աւերելն Ջելալին զերկիրն պարսից. բազումք ի յազգէ մերմէ չուեալ անտի զան ի Ղռիմ ի Ֆէօտօսիայ՝ ի Ղարապազար. ի Պաղչասարայ և ի Կէօզլէօվ, և այլք գերի վարեցան. յորոց միջի այս Աբրահամս միայն ընդ քեռորդւոյն Պետրոսին Բագրատեանց ի գերիվարելն սպանեալ զչորեսին պահապանսն ի գերեվարացն ի ննջել նոցին և փախեալ եկն ի Ղրիմ ի Ֆէօտօսիայ քաղաք։

Եւ անդ էր ազնիւ Մարդարն Մուղալեանց. (որդի Թորոսի, Ակոբի, Դանիէլի, Մուրատի՝ Թէոդորայ նախարարին, որ ըստ հրամանի Շիրին իշխանին Ջինիվիզաց բնակէր զօրօք ի վերայ Ջրոյն Կազարաթի, որ զգետն զայն կոչեցաւ Մուղալեօղէն ի թաթար լեզուէ). սա ի տեսանելն Աբրահամին Պալհաւունեանց, և Պետրոսին Բագրատունեանց պարգևեաց նոցա զբազում ինչս և զստացուածս, և պալատ մի ի բնակութիւն ի պատիւ տոհմի նոցա, բայց Պետրոսն Բագրատունեանց յետ ոչ բազում ժամանակաց առ Աստուած փոխեցաւ ՌԿԷ (1067) թուին։

Իսկ Աբրահամն Պալհաւունեանց ողորմութեամբն Աստուծոյ և օգնականութեամբն ազնիւ Մարդարին Մուղալեանց՝ և աւագ պարոն Մուրատին Դարէջանեանց (որդւոցն Մատթէի՝ Ովինի՝ Սամուէլի՝ Սարդսի՝ Յովսէփու առաջին նախարարին Ֆէօտօսիու). և ազնիւ Թաղէին Աղամալեանց) որդւոյն Սերօրին՝ Ցարութիւնին, Բարդուղին՝ Մինասին Մեսրօրէին՝ չորրորդ գնդապետին Ֆէօ-

տօսիու). և այլոց Մուղալեանց եկեալ զարդացաւ և հաստատացաւ, և էառ զդուստրն ազնիւ Գէորգին Մուղալեանց, և եղև ինմանէ դուստր մի Աննա և որդի մի Տրդատ, և այս դուստրն Աննա և Տրդատ որդին Աբրահամին շինեցին ի Թէօտօսիայ քաղաքի ի վերայ բարձր լերան միոյ՝ եկեղեցի մի ս. Նիկողայոս. և զանուանս իւրեանց և ծնողացն իւրեանց գրեցին ի վերայ արտաքին դրան եկեղեցւոյ. և զայս մեկնութիւն վասն անցից ազգիս մեր եաուն գծագրել ի յայսմ աւուրոջ. և զծառս ազգահամարութեան իւրաքանչիւրոց՝ յեակոյս յօրինեցին. և պարտաւորեցին յետնորդացն յետ մահուան իւրաքանչիւրոց հարց աճեցուցանել զարական ճիւղս իւրեանց ի վերայ ծառոցն. առ ի յիշատակ տոհմին իւրեանց: Եւ վասն վերոյիշեալ իշխանաց, պարոնաց և ազնուականաց և նոցին յետնորդացն. նաև պարտաւորեցին իւրաքանչիւր ամի վասն սուրբ նահատակացն մերոց առնել ի սոյն եկեղեցւոջ զտօնախմբութիւն. և յիշել ի սուրբ աղօթս ձեր զյիշատակօղս սորին զՏրդատն՝ և զքոյրն Աննա դշխոյն, և զհայրն զԱբբահամն և զմայրն Թադուհի դշխոյն, զհանգուցեալ Պետրոսն Բաղրատենց. դարձեալ զկենդանի աւագ պարոն Մուրատն Դարեճանեանց, զՄարդար, զԱկոբ Մուղալենց, և զԴաթէ Աղամալենց, և դուք յիշեալ լիշիք յահեղ աահինին Քրիստոսի. որ ողորմի սաացողի դրոյս աիրացու Աւետքին և կենակցին Գոհարին (և կողակցին Դուհար Պիքէին) և ծնողացն մահաեսի Թագւորին, և զաւակացն Մնացականին Գրիգորին և Ինճէպէքէին. և քուերցն Ալամին և Տօլվաթին և ամենայն զարմից. նաև մեղապարտ գրչի զրիմցի Գաւիթ դպրի. կարդացողաց և լսողաց և որք ողորմիս ասէք Աստուած ողորմի ձեզ:

Մարդար որդի Թորոսի, որդի Յակոբին, Գէորք Միոկեոիոս և Յակոբ. որդիք Մինասի, որդի Յակոբի, և լինին սոքա ընդ Մարգարին պապու Թոռնունք:



4. Նոր Նախիջևանի հայերին Եկատերինէ Կայսրուհու 1779 թուի նոյեմբերի 14-ին տուած «պրիվիլեգիան» կամ արտօնագիր հրովարտակը մի նշանաւոր դոկումէնտ է, որ երջ. հայասէր կայսրուհին շնորհեց Ղրիմի գաղթականներին մեծամեծ արտօնութիւններով։ Այդ հրովարտակը այժմ գտնւում է Նոր Նախիջևանի քաղաքային վարչութեան դիւանում, թարգմանութիւնը տպուած է առանձին գրքոյկով Հաշտարխանի Յովսէփ Արղութեանի տպարանում 1800 թուին այս վերնագրով «Թարգմանութիւն Պրիվէլէկացն Հայոց։ Բնակեցելոցն ի զանազան գաւառս մեծին Ռուսաստանու, շնորհեցելոցն Աստուածաբար խնամովք՝ ի մեծէն ի կաճառս օծելոց՝ յՕգոստափառ Կայսերէն և Ինքնակալէն ամենայն Ռուսաց. տպագրեցեալ ընկալնովլ պարգևացս՝ հոգեբնաիր հայրապետի տ. տ. Յովսէփայ սրբազնակատար կաթուղիկոսի սրբոյ գերագահ աթոռոյն Էջմիածնայ և ծայրագոյն պատրիարգի ամենայն հայոց»։ Տես. եր. Շահազիզի պատմական պատկերներ արտ. «Լումայ» հանգիսից 1903. Թիֆ.

5. Այդ խնդրի մասին տես «Դիւան Հայոց պատմութեան» գիրք Դ. Յաւելուած ա.

6. Այս մելիք Ջումշուդը, երբ Ներքինի Մահմատ խանը Շուշի մտաւ, ընդառաջ գնաց նորան հայազգի երեելի իշխանների հետ և սրա տանն իջեանեց խանը իր բոլոր ծառաներով և սկսեց կեղեքել ու կողոպտել նորան։ Մելիք Ջումշուդը հաւաքել էր իր բոլոր հայրական հարստութիւնը, որ առաւօտը յանձնէ ագահ Մահմադ խանին, բայց այդ գիշեր Սադըխ խանի թելադրութեամբ նրա անձնապահներից մէկը սպանեց խանին, որով իրարանցում ընկաւ զօրքի մէջ և ցիրուցան եղան, և այդպիսով ազատուեցան հայերը վրիժառութիւնից. իսկ Ջումշուդ խանը, որի մասին կասկածում էր Իբրահիմ խանը թէ այդ սպանման մէջ նրա մատն էլ խառն էր, իր ամբողջ ընտանիքով խոյս տուաւ Թիֆլիզ և Յովսէփ Արղութեանի հետ ինքն ու Մելիք Փրիդոնը գնացին Պ. Բուրգ Նոր կայսեր դուռը, որին և մատուցին մի ընդարձակ խնդրագիր, խնդրելով կայսերական օգնութիւն իրանց հայրենիքը այլազգիների ձեռքից ազատելու համար։ Այդ խնդրագիրը տես գրքիս IV յաւելուածում։

7. Խարճ կամ հարճ թուրքերէն բառ է և նշանակում է՝ ծախք։

8. Այդ ժամանակ Կ. Պօլսի պատրիարքը Զաքարիա նշանաւոր արքեպիսկոպոսն էր, որին նուիրուած ընդարձակ յիշատակարանը մենք կապենք «Դիւան»-ի X-րդ հատորում «Մանր մատենագիրք» գրքի մէջ։

9. Այս մահտեսի Յարութիւն Ամիրան մահտեսի Յոհաննէս Երկանեանի հայրն է, որ երկիւղից մահմեդականութիւն ընդունեց։

10. Փեղամաջի Յահակ եպիսկոպոս; Սիմէոն կաթողիկոսի քարտուղար, նրա նշանաւոր յիշատակարանների մեծ մասի խմբագրող. ժամանակի գիտնական եկեղեցականը, որին Սիմէոնը, Էջմիածնում տպարան հիմնելով, կարգեց նրա վերատեսուչ։ Սիմէոնի մահից յետ Ղուկաս կաթողիկոսը նուիրակ ուղարկեց նրան Կ. Պօլիս։

11. Յայտնի՝ խրիմեցի Գէորգ Աղայեկեանն է (եաղճի Գէորգ), Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան թարգմանը, որ այնքան մեծ դեր խաղաց Յովսէփի և Դաւթի կաթողիկոսանալու խնդիրներում։

12. Տէր Յարութիւնը Ծիրանեցի տ. Յարութիւն քահանան է, որ Հնդկաստանի Մադրաս քաղաքում առաջին հայերէն լրագիրը հրատարակեց «Ազդարար» անունով։

13. Ֆիլգիդի թուրքերէն բառ է և նշանակում է՝ փղոսկրեայ։

14. Ղալամքար, թուրքերէն է=քանդակագործ։

15. Ֆսրոց՝ քսուր բառն է թուրքերէն, որ կահկարասիք է նշանակում։

16. Բէթ սօյի կամ պէթ սօյու, թուրքերէն է, նշանակում է՝ վատազգի։

17. Շամիրամ՝ նոյն Շահամիր ազան է, որ յայտնի է իր նուիրաբերութիւններով ազգային հաստատութիւններին։

18. Պրվէլէկ, ռուսերէն՝ привилегія, նշ. առանձնաշնորհութեան հրովարտակ։

19. Ամստէրդամի տպարանը, ինչպէս յայտնի է, անդրանիկ հայ տպարաններից մէկն էր և կառուցուած Էջմիածնի

անունով. 18-րդ դարից յետոյ նա համարեա թէ այլ ևս չէր գործում և Հայոց եկեղեցու հետ միասին փակուեց նաև այդ ապարանը։ Երկար ժամանակ այդ վիճակում մնալուց յետոյ՝ 1871 թուին Գէորգ Դ. կաթողիկոսի հրամանով էջմիածին տարուեցան եկեղեցու և ապարանի բոլոր գոյքերը և տպագրուած գրքերի մնացեալ օրինակները, ինչպէս են «Պատկերասէր պատկերատեաց», «Շարական» և այլն։

20. Ծօրայ—գուռն կամ կապան Ծորայ, Պահակ Ծորայ, Ջողայ քաղաք կամ գուռը հնումը կոչւում էր Դերբէնտից 1 ժամ հեռու Աղուանից մայրաքաղաք Ջողան, Աղուանից առաջին կաթողիկոս ս. Գրիգորիսի նահատակութեան տեղը. 551 թուից յետոյ Աղուանից կաթողիկոսութեան աթոռը Ջողայից փոխադրուեց Պարտաւ մայրաքաղաքը։

21. Մեր եկեղեցական գործիչները իրանց գրագրութիւնների մէջ Բագրատունի անուանում են վրաց արքայական տունը, համարելով նրան Բագրատունեաց ցեղից սերուած։ Բագրատունի ասելով այստեղ հասկացւում է վրաց զօրքը՝

22. Տես ծանօթ. 2.

23. Դիան՝ դրամի չափ է։

24. Ներսէս Շնորհալու Ընդհանրականը Գրիգոր Խալդարեանցի Սանկպետերբուրգում ունեցած տպարանի լաւագոյն տպագրութիւններից մինն է. տպուած է, 1788 թուի մայիսի 1-ին հրամանաւ «առաքելաշաւիղ առաջնորդի՝ Աանահնեցի Երկայնաբազուկ Արղութեան իշխանազնեայ Տեառն Յովսէփայ սրբազնագունեղ արքեպիսկոպոսի» նրա իսկ արդիւնքով, յօգուտ մանկանց եկեղեցւոյ՝ սիրելի ազգին իւրոյ։

Գրքի սկզբում կայ Յովսէփ արքեպիսկոպոսի մի ընդարձակ յառաջաբանը, Ներսէս Շնորհալու և իր ընդհանրականի մասին, 2 նրբաքանդակ պատկերներ Ներսէս Շնորհալու. և գրքի վերջը երկար վերջաբան Յովսէփ Արղութեանի շինարարութեանց, Խալդարեան տպարանի, Արղութեանի հրատարակութիւնների և սորա ազգաբանութեան մասին։

25. Ռուփի հնդկական դրամ է, մօտ 1 ռուբլի արժողութեամբ։

26. Աղօթամատոյց գիրքը տպուած է 1790 թուին, հրամանաւ և ծախիւք սուրբ Աթոռոյն էջմիածնի ծայրագոյն Նուիրակի ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց, առաքելաշաւիղ Առաջնորդի Տեառն Յովսէփայ սրբազան եպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց։ Ի տպարանի նորին բարձր սրբազնութեան, ընդ հովանեաւ երկնահանգէտ ս. Խաչ վանիցն, որ ի Նոր Նախիջևան»։

27. Գրքի վերնագիրն այսպէս է. «Ողբ և հառաչանք, ի դիմաց մօր մերոյ սրբոյ Աթոռոյն էջմիածնի, արարեալ տեառն Ստեփաննոսի Նախտգահ մետրապօլտին Սիւնեաց, որդւոյ Տարսայիճ իշխանին... տպագրեալ... յամի տեառն 1790 յօգոստոսի 26, ընդ հովանեաւ ս. Խաչ վանիցն որ ի Նորն Նախիջևան»։

28. Յովսէփ արքեպիսկոպոսը ցանկանում էր իր տպարանում տպել հայերէն Աստուածաշունչ շքեղ և պատկերազարդ, որի համար և փորագրել էր տուել պղնձի վերայ մի քանի հարիւր պատկեր, խոշոր ծախքեր անելով դրա համար, սակայն Հնդկաստանից սպասուող գումարների ստացումը ուշանալով՝ այդ ցանկութիւնը մնաց անկատար և Յովսէփի հովկաս գալով թէ տպարանը փակուեց և թէ կորստի մատնուեցան այդ կլիշաները։

29. էջմիածնի գահակալները իշխող խաների, փաշաների ու մեծամեծների, ինչպէս նաև վրաց արքայի ու արքայազների գութը քաղցրացնելու համար հայոց ազգի ու Մայր Աթոռի վերայ աջ ու ձախ նուէրներ էին բաշխում թէ դրամով, թէ կահ կարասիքով, ձիերով, թանկագին զարդերով, հազուագիւտ իրերով, ինչպէս օր. ժամացոյցներով, և նոյն իսկ սնդղեղէնով։ Այս ձևի կաշառարութեան այնպէս էին ընտելացել «յանդուգն առօղքն», որ եթէ կաթողիկոսները կամովին չէին տալիս, զօռով էին առնում նրանցից։ Այս է պատճառը, որ Հայոց կաթողիկոսները շարունակ Պօլսից ու Եւրօպայից և նոյն իսկ Ռուսիայի մայրաքաղաքներից էին այդպիսի ընտիր առարկաներ ապսպրում Աթոռի գործակալներին ու նուիրակներին «յանդուգն առնօղներին» բաւականութիւն տալու համար։

30. Գրիգոր վարդապետ, սան Յովսէփ արքեպ. Արղութեանի և նորա հոգեծին զաւակ. ապա արքեպիսկոպոս և առաջնորդ ռուսիաբնակ Հայոց։ Մեծ դեր խաղաց թէ Յովսէփի և թէ Դաւթի ընտրութեանց խնդիրներում և Յովսէփից յետոյ դառնալու ռուսիաբնակ հայերի առաջնորդ՝ շարունակեց նորա գործերն իբրև նորա ժառանգ։ Խիստ մեծ կարևորութիւն տալով այս պատմական անձնաւորութեան, մենք գրքիս յաւելուածի բաժնում տպում ենք նորա 25 անտիպ ինքնագիր նամակները, գրուած տ. Ստեփան քահանային Հնդկաստան, և Կ. Պոլիս պ. Միհսէրին և Գէորգ Աղաեկեանին, որոնք մեծ մասով վերաբերում են Յովսէփ Արղութեանի ձեռնարկութիւններին նորա տ. Ստեփանի ձեռքով հանգանակել տուած գումարներին, այն ապրանքներին, որոնք տ. Ստեփանի ձեռքով Հնդկաստանից ուղարկուեցան Յովսէփ Արղութեանին և մասնաւորապէս Դաւիթ Դանիէլեան կռիւներին։

31. Յովսէփ Արղութեանը, որ գաղթեցրել էր Ղրիմի հայերին Նոր Նախիջևան և շրջակայ երկիրները, Մոլդաւիայի և Վալաքիայի հայերից մնացած լուսաւորչականներին էլ գաղթեցրեց Ռուսիա, Գրիգորիոպոլ քաղաքը շինեց նրանց համար և բնակեցրեց այնտեղ, նրանցից շատ որբ երեխաներ տարաւ և զետեղեց ս. Խաչ վանքում իր շինած ուսումնարանի մէջ, այժմ խնդրում է Ղուկաս կաթողիկոսին շնորհակալութեան գիր գրել գերմանական նոր կայսեր հայերի վրայ ունեցած խնամքի համար, ինչպէս որ փոքր ինչ առաջ էլ խնդիր և աղերս էր գրել Գերմանիայի կայսր Յովսէփին և Պետերբուրգի գերմանական դեսպանին Սուչուվայի հայերի առաջնորդական խնդրի համար. այս բոլոր թղթերի պատճէնները գտնւում են մեզ մօտ, որոնցից զետեղում ենք այստեղ Յովսէփ կայսեր գրած մի թուղթը, իսկ միւսները բոլորն էլ կտպագրուեն «Դիւան»ի Ղուկաս կաթողիկոսին նուիրուած հետագայ հատորներում։

Թուղթ առ կայսրն Գերմանիոյ Յովսէփ. այս է թագաւորն Նամսայի, խնդիր աղերսանօք, զի հրամայեսցէ մտանել ի կալուածս իւր ի Սիչով եւ ի յՈւլան՝ մերային եպիսկոպոսաց եւ կարգաւորաց, ի վերատեսչութիւն մերազուն ժողովրդեանն որք յայնս տեղիս, եւ կամ սակս այլոց հոգեւորական իրակութեանց։ Քանզի խղճալի ժողովուրդքն զԱռաջնորդ խնդրէին ի սրբոյ Աթոռոյս։ Այլ թագաւորն վերոյիշեալ՝ սաստիկ հրամանաւ պնդեալ էր, զի մի մտցեն ի կարգաւորաց այլոց ազգաց յիշխանութիւն իւր։

Յիսուս Քրիստոս ծառայ Ղուկաս՝ Որոյ և շնորհիւ կաթողիկոս ամենայն հայոց, Առաքելականի եկեղեցւոյ Քրիստոսի։ Յաջորդ սրբազան Առաքելոցն Թադէոսի և Բարգուղիմէոսի, և նոցին փոխանորդի, արիւնընծայ կենդանի վկային Քրիստոսի, և յոգներախս Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և առաքելապատիւ Հայրապետին։ Եւ ծայրագոյն պատրիարք Քրիստոսաէջ և լուսակառոյց մեծի աթոռոյս Հայկազնեայց սրբոյ Էջմիածնի որ ի Վաղարշապատ քաղաքիս։ Յորմէ ճշմարիտ սիրով, հոգետարփ կարօտիւ, և Փրկչաւանդ ողջունիւ սրբով, հանդերձ յարամնացական օրհնութեամբ և նախախնամութեամբն։ Հանրակեցոյ ողորմութեամբ և պահպանութեամբ՝ Ամենասրբոյ Երրորդութեան և միասնականի Աստուածութեան, այլ և հոգետած շնորհօք և զօրութեամբք, և արագահաս օգնականութեամբք կենսատու Խաչին Քրիստոսեան, և նոյնամուխ արիւնաներկ սրբոյ Գեղարդեանն, և յոգնահրաշ սրբոյ տեղւոյս Իջմանն Նորին, և շնորհաձիր աջոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և սքանչելարար մասանց և դամբարանաց սրբուհեաց կուսանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց, և այլ ամենայն Աստուածակիր սրբութեանց և մասանցն սրբոց ի սուրբ Աթոռոջս մերում եղելոց, ընծայեալ մատուցի թուղթն այս մաղթանաց և խնդրուածոց, զթաշարժութեան և ողորմարկութեան։ Ամենապատիւ և գերաբարձր սիրելւոյդ մերոյ, և բաղձալւոյդ հոգւոյս, Աստուածակացոյց տանդ և իմաստնապերճ կառավարչիդ և խնամատարիդ հասարակաց, յԱստուծոյ հօրէ ընտրեցելոյ, յՈրդւոյն միածնէ պսակեցելոյ, յամենասրբոյ Հոգւոյն օծեցելոյ, թագաւորիդ մեծի,

յարաիշխող Տիեզերակալի, և օգոստափառ Արքայից Արքայից Աստուածասիրի և բարեպաշտի, առաաղթոյ և ողորմածագունի խաչապսակ և ինքնակալ մեծի կայսերդ Ցովսէփայ, և բնաւից քոյայնոցն, հաւատարմաց, հրամայողաց, հնազանդեցելոց, Տէրանց և ծառայից, մեծամեծաց և փոքունց, ի Տէր խնդալ մշտազուարճ ցնծութեամբ։ Ամէն...

Շնորհք ընդ քեզ և խաղաղութիւն, քաղցրութիւն և մարդասիրութիւն ամենասրբոյ Երրորդութեան՝ Հօր արարչագործի, Որդւոյ արարչակցի, և Հոգւոյն կենդանարարի իջցէ և հանդիցէ ի վերայ քոյ և քոյայնոցն, լցուսցէ զձեզ երկնածիր պարգեօք և բարութեամբք, և զարդարեսցէ ամենատեսակ առաքինութեամբք։ Ամէն...

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան ողջունամատոյց և սիրածանոյց թղթոյս ի խոնարհ դիմաց ծանուցուﬓ լիցի վսեմափառ և գերապանծ տէրութեան ձերում, զի ըստ գրոց սրբոց, զամենայն տուրս և զշնորհս բարութեան ի նախնոյ անստեղծ և բուն բարւոյն Աստուծոյ խոստովանիմք առ ի մեզ ծաղկեալ և աճեցեալ։ Որովք և լաւապէս ճանաչեմք զնա, իբր ծանօթիւք զանծանօթն, վասն զի՝ մինչ զպատճառելիսս բարւոք և օգտակարագոյնս գտանիմք, այսոքիւք և զպատճառն սոցա ճանաչեմք ամենաբարի և փառաւորելի։ Արդ՝ ի զանազան պարգեացն Աստուծոյ՝ մեծագոյն ձեր իﬓ ես՝ է երկրաւոր տէրութիւն, որ ստուգիւ ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի ոչ յայլ ուստեքէ է, եթէ ոչ յաստուածպետական ամենիշխան Տէրութենէն. որպէս և հոգեհանճար իմաստունն Սողոմոն կանխաւ զեկուցանէ առ տեարս իշխանութեանց թէ՝ ի Տեառնէ տուաւ ձեզ իշխանութիւնդ, և հարստութիւն ի բարձրելոյն։ Եւ արդ՝ դի պարգևս այս յԱստուծոյ է՝ վասն որոյ, և ընդունակն այսօրիկ ևս ի հանրազննին տեսութենէ նորին ընտրի և պատրաստի, ըստ որում մանաւանդ յայտնապէս ընտրեալք եղեն ի հնուﬓ երջանիկն Դաւիթ, և ի նորումս բարեպաշտն Թէոդոս (թող զայլսն, որոց ընտրութիւն առ յԱստուծոյ յաներեւոյթքս էր, որոյ ի հաստատութիւն և սուրբ Առաքեալն բերէ ի վերայ առաջնոյ բանին և զայս թէ՝ որք ենն, յԱստուծոյ կարգեալ են։ Քանզի որպէս մարդս դիր ինչ ազնիւ ոչ դնէ ի յանպակաս տեղիս, այսպէս և ամենաիմաստն Աստուած զպատուական պարգեսն իւր ոչ ի յանարժանս, այլ ի յարժանաւորսն և յերկրասէրս ստացեալ Աստուածային անձինս հեղու և զետեղէ, որոնելով և գտանելով ի բազմաց, ըստ Սաղմոսին թէ՝ գտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։ Վասն զի ոչ փոքր ինչ է, այլ վորս կացուցանէ պետս և տեարս, և թագաւորս իբր օրինակ և յարացոյց իւր կարգէ ի վերայ բազմութեանց ժողովրդեանց, առ ի վրէժխնդրութիւն չարագործից, և ի գովութիւն բարեգործաց, առ ի ծանուցանել հասարակաց ի ձեռն նոցա զկամս և զհաճոյս իւր, նաև զահաւորութիւն և զխնամողութիւն իւր և զընդհանրական կառավարութիւն։ Որպէս և ահաւասիկ զամենայն գովութեանց արժանաւոր զզինափառ և զբարձրապատիւ Արքայդ Արքայից ընտրեալ է Աստուածային շնորհիւ իւրով, հրաշապէս պսակազարդեալ, լցուցեալ է երկնածիր իմաստութեամբ և պերճացուցեալ գերիշխան Տէրութեամբ, փառաւորեալ է զարմանալի փառօք, և բարձրացուցեալ է ի ծայրագոյն կայսերական և թագաւորական Մեծութիւն դոյնոյ Տիրական և վերամբարձ Աթոռոյդ հաստատեցելոյ յարդարութիւնս և յիրաւունս։ Զոր և նոյն ինքն իսկական Տէրն Տէրանց և թագաւորն թագաւորաց Աստուած պահեսցէ ի յամաց ամս և ի խաղաղ կեանս հզօր բազկաւ, բարձր ձեռօք, բուռն զօրութեամբ և անխոնարհելի իշխանութեամբ։ Օրհնեսցէ անանցանելի օրհնութեամբքն զքեզ և զամենայն քոյայինսդ, զերկիրդ և զժառանգութիւնդ, և զբարեսէր ազգդ ամենայն, և զծնունդս և զորդիս ձեր։ Անթառամելի արասցէ զթագաւորութիւնդ ձեր, և մշտապէս հաստատուն, յաղթող և անվանելիս պահեսցէ, զթշնամիսն պարտեալ կացուսցէ. և հակառակորդն գլխակոր արասցէ։ Ձեռն Տեառն ընկալցի զձեզ, և բազուկ նորա զօրացուսցէ զձեզ, ճշմարտութիւն և ողորմութիւն նորա ընդ ձեզ, և յանուն նորա բարձր եղիցի եղջիւր տէրութեան ձերոյ, և տարածեսցի ընդ ոլորտս տիեզերաց, ի զօրութեան Տեառն ուրախ եղիջիս և փքկու-

թեան նորա ցնծասցես։ Որ և զցանկութիւն սրտի քոյ տացէ քեզ, և զամենայն բարի խորհուրդս և զգործս քոյ նա կատարեսցէ, տալով քեզ զյաջողութիւն յամենայնի, ի փառս իւր։ ի բարձրութիւն եկեղեցւոյ և ի յուրախութիւն մեզ փափաքողացս զթութեանց քոց։ Իսկ արդ՝ զի գիրք սուրբք զերկրաւոր և զզգալի թագաւորութիւնն օրինակ և յարացոյց կոչեն երկնաւոր և իմանալի թագաւորութեան Աստուծոյ, վասնորոյ և մեք ի ներգործութեանց նոյնոյ նախատպին, զկարելիսն ի յարժանավայելուչ պատկերդ նորին համարիմք լինել։ Իսկ անդրանիկ գործ Աստուծոյ է ողորմելն համայնից, և բարերարելն առ ամենեսեանն, որպէս և արքայաղուն արքայն Սողոմոն գրէթէ զմիօրինակն խնամ ունի ամենեցուն, և թէ խնամով դարմանէ զամենեսին, և դարձեալ առ ինքն Տէր ասէ «Տիրելդ քո ամենեցուն, խնայել տայ քեզ. յամենայն։ Վասն զի բարերարութեամբն իւրով վստահաբար իշխէ ի վերայ ծառայից իւրոց։ Արդ եթէ Աստուած ի յամենաստեղծ տէրութենէն իւրմէ ստիպի խնայել յամենայն արարածս. ուրեմն և բարեփառ օրինակդ նորին, ի նոյնապարգև գերիշխանութենէդ, հարկիս բարերարել առ հովանաւորեալս ի ներքոյ պայծառափայլ Աթոռոյ և Աստուածառաք գաւազանի կայսերական և թագաւորական մեծութեան, և օժանդակել ամենայն կարօտելոց ողորմութեան ձերում։ Արդէն ի յայս վստահացեալ նուաստութեան մերոյ, դրեմք զթուղթս զայս ի սպաս ձեր և խնդրեմք ի յողորմածութենէ ձերմէ զխնդիր իմ, մեզ հարկաւոր խնդրելոյ, և ձեզ արժանի կաաարելոյ։ Մանաւանդ և զի ընդ ծագս տիեզերաց ծաւալեալ է համբաւ մեծութեան ձերոյ, և Արևելք Հայաստան աշխարհաւս յայտնի առնեն, թէ որքան իմաստութեամբ ունիք զաշխարհ. Նա զի և յարդիս լսելի լինի մեզ յամենայնի բարեհըռչակեալ անուն իրաւարարութեան և մարդասիրութեան քոյ, որով արդարև ի քեզ ճշմարտես զբանս իմաստնավճիռ թէ՝ Թագաւոր հանճարեղ հաստատութիւն ժողովրդոց. այսոքիկ առաւել ևս յուսաւորեն զմեզ առ ներկայիս փոյթ։ Եւ զոր առաջիկայ մեզ խնդրել ի բարեպաշտութենէ ձերմէ, ծանուսցուք ահա։ Քանզի խղճալի ազգս մեր՝ յետ բառնալոյ մարմնական իշխանութեան մերոյ, մինչ գնացին ի զանազան իշխանութիւնս, ամենեքեան զհոգևոր տեսուչս և զեպիսկոպոսս իւրեանց ասաի խնդրեալ տանին ի Պատրիարգարանէս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և ի փոխանորդացս նորին։ Ուստի և յիւրաքանչիւր երկրաց իշխողաց զնոմոսս ունիմք, զի զկարգաւորս մեր առաքեսցուք ի յերկիրս նոցա, առ մերայինս ի յայցելութիւն հոգևորապէս։ Որպէս և ի նախանցեալ ժամանակիս հանգուցեալ հայրապետն մեր Տ. Սիմէօն կաթողիկոսն որ յառաջ քան զմեզ պատրիարգն էր սրբոյ Գահիս Էջմիածնի, գրեաց և խնդրեաց ի Քրիստոսապսակեալ ամենաբարեպաշտուհի կայսերուհւոյն Ռուսաց Եկատարինեայ զնոյնակերպ հրովարտակ զոր և նա սիրով կատարեալ զխնդիրն գրեաց, և առաքեաց և ունիմք յԱթոռոջս ի պահեստի մեծաւ պատուով, և ի մէնջ առաքեմք եպիսկոպոս ի յօրհնեալ երկիրս Ռուսաց առ մերազնեայս ի յառաջնորդութիւն նոցա։ Ըստ սմին օրինակի և ի քաղաքն Օչովայ ուր գոն վանորայք ազգիս, և որոց ընդ հովանեաւ բնակեալ մերազնեայք քրիստոնեայք, մինչ էին ընդ իշխանութեամբ Հագարացւոց, ի բնէ անտի ի մէնջ գնայր առ նոսա եպիսկոպոս և կարգաւոր անխտրաբար՝ ի հոգևորապէս մատակարարել զնոսա։ Վասն որոյ և այժմ մինչ ըստ վերնախնամ տեսչութեան անկեալք են ի ներքոյ զովացուցիչ հովանաւորութեան ձերոյ, գրելով մեզ զհոլովագոյն գոհացողութիւնս զխնամոց ձերոց, որով խաղաղութեամբ և բարերջանկութեամբ կենցաղավարին, (ուստի և մեք զշնորհակալութիւնս բազումս ունիմք զաստուածահաստատ տէրութենէ ձերմէ)։ Հայցեն և ևս, զի եպիսկոպոս մի կարգեսցուք նոցա յառաջնորդ վասն պահպանութեան հաւատոյ և օրինաց մերոց, զոր ի Լուսաւորչէ անտի և ի նախնեաց մերոց ուսեալ ունիմք։ Որ և մեք առաքել հարկաւորիմք, առ ի չմնալ հօտին Քրիստոսի առանց հովուի, և մնասիլ ի հոգեկորոյս գայլացն սատանայի։ Բայց զի մի լիցին արգելք հոգևոր իշխանութեան մերոյ՝ զայս աղերսական թուղթ գրեցաք ամենաբարե-

պաշտ, խաչապսակ և ինքնակալ մեծի կայսերդ Ցովսէփայ, և յոգնաթախանձ ժառութեամբ խնդրեմք ի յաստուածասիրութենէ ձերմէ ի փառս Քրիստոսի, ի պատիւ Սրբազան Առաքելոցն նորին Թադէոսի և Բարդուղիմեայ, և ի սէր սրբոյն Գրիգորի, զոր ընդունիք և յարգէք, շնորհել մեզ զհրովարտակ հրամանի ձերովդ կայսերական նշանաւ, զի անարգել առաքեսցուք ի Աչովայ առ մերազնեայս, որք առ վանորէիւք մեռովք, և առ այլ մերձակայ վիճակայինս նոցին զեպիսկոպոս մի և կամ զայլ հոգևորական մերովս կոնդակաւ և վկայական թղթով ի վերատեսչութիւն նոցա և ի կառավարութիւն հոգևորապէս ըստ աստուածային օրինաց և ըստ աւանդութեանդ քրիստոսականի եկեղեցւոյս մերոյ, որ նոյն ժողովուրդքն բարեկարգութեամբ անցուսցեն զկեանս իւրեանց և բարերանեսցեն զԱստուած, նաև զփառաւորեալդ ի նմանէ։ Ահա հային աչք իմ ի յօգտաւէտ հրաման ձերոյ կայսերական և թագաւորական մեծութեան, զոր մինչ ամենաողորմածաբար շնորհեսցես, այնու զիս լրութեամբ ազգի իմոյ պարտականս կացուսցես յարաժամ շնորհակալելոյ զքաղցրագոյն մարդասիրութենէ ձերմէ, զաղօթս մշտամատոյցս նուիրելոյ Ամենատեառն, յաղագս գերապայծառ և հզօր տէրութեան ձերոյ յաւիտեան բարձր և յաղթող և ճոխ լինելոյ, որպէս և միշտ իսկ մաղթէ եկեղեցիս մեր առ Տէր վասն թագաւորաց քրիստոնէից և իշխանաց բարեպաշտից։ Եւ մինչ հաճոյ թուեսցեալ խնդրոյս առաջի քոյ առցէ զկատարումն, յայնժամ ի յառաքելս մեր ի յօրհնեալ երկիրդ քոյ եպիսկոպոս, դրեցից ընդ նմա զարժանաւոր բանս շնորհակալութեան և օրհնութեան, և որպէս տենչամս, պսակեցից կս զաստուածապսակեալ արքայդ արքայից շնորհալոյս սրբովք նշանովք սիրայայտականօք։ Ողջ լեր ի Տէրն Տէրանց, բոլորեալ ընաւ բարեսրտութեամբ ի բերկրութիւն և ի պարծանս մեր։ Ամէն։ Գրեցաւ ի Թուոջս Փրկչին 1785, փետրվարի ԺԵ և ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց ի սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան։

Նուաստս Ղուկաս կաթողիկոս,
Եւ պատրիարք ազգիս հայոց,
Ցոր եմ հովիւ հօտիս փոքու,
Քրիստոսականս եկեղեցւոյ։
Վասն բանիցս աղերսական,
Որք ի վերոյ գրեցեալ կան,
Կնքով իմով ստ կնքեցի,
Եւ զայսքանս ձեռագրեցի։
Որովք Կայսրդ իմաստալի,
Ամենևին միամտիցի,
Թէ որ ինչ գոյ յայսմիկ թղթի,
Համայնքն յինէն են հաւաստի։
Որ և սպասեմ ողորմութեան,
Խնդրոյս իմոյ իսկ կատարման։

32. Մուդաթ թուրքերէն միւդդէթ բառն է և նշանակում է միջոց ժամանակի. ուզում է ասել՝ փոխանակագրի վճարման օրը։

33. Խսէպ, հիսապ—հաշիւ, թիւ, համրանք։

34. Գօդամ, ապրանքը գոգամում պահել.—արդեօք cottage?—ամարատան, գիւղի փոքրիկ տնակ։ Հաւանօրէն՝ մթերանոց։

35. Թասվիլ — անշուշտ՝ արտօնագիր կամ յանձնարարագիր։

36. Բարլամա—նկարագրութիւն (*)։

37. Մէպլաղ—գրամ, գումար։

38. Անշուշտ կրակից ապահովութեան ապահովագիր։

39. Այս բառը մնաց անբացատրելի։

40. Կմպնին = կոմպանի =Compagnie ընկեր կամ ընկերութիւն։

41. Բողչայ թուրքերէն է. նշ. ծրար, կապոց։

42. Սիահին—հնդկական կերպասի անունն է։

43. Ըռիսգր—реестръ—յայտագիր։

44. Երբ—гербъ, դրոշմ, նշանադրոշմ։

45. Սարմայ, թուրք՝ սէրմայ. նշանակում է դրամագլուխ։

46. Հաշտարխան — Թաթարաց նախկին թագաւորութիւնն է, որ Իվան Վասիլևիչ կայսրը 1554-ին հնազանդեցրեց ռուսաց տէրութեան, Կասպից ծովի ափին. բնակիչները՝ ռուսներ, թաթարներ և նողայներ. Վօլգա գետի ափին Աստրախանի և Սարատովի մօտ կան նաև ղալմուխներ և թէրգէթներ, որից եզրակացնում են, թէ

սոցա նախնիքը եղել են Տիսսաղէթ կամ Տերսաղէթ՝ որոց մասին յիշատակում է Հերոդոտը։

Հաշտարխանում շատ հնուց բնակւում են փոքրաթիւ հայեր. Յովսէփ Արղութեանը առաջնորդանիստ հաստատելով այնտեղ՝ ոյժ տուեց այդ գաղութին, մանաւանդ տեղափոխելով այնտեղ Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքից իր դպրատունն ու տպարանը։

47. Օրգնի—ուղում է ասել՝ իր ներկայացուցիչը։

48. Վրաստանի՝ Ռուսիայի հետ միացման գործում, ինչպէս երեւում է մեր հրատարակած այս դօկումէնտներից, նշանաւոր դեր է կատարել և Յովսէփ Արղութեանը, լինելով միջնորդ երկու տէրութիւնների մէջ և Վրաստանին համոզելով՝ մտնել ռուսական տիրապետութեան ներքոյ։

49. Միգէլ, կարծում ենք գրչի սխալ է. պէտք է լինի սիգէլ=կնիք։

50. Յովսէփ Արղութեան արքեպիսկոպոսը Ռուսիա նստած՝ ոչ թէ կրօնական պետի դեր էր կատարում ռուսահայ ժողովրդի, այլ և մի կապ էր Պետերբուրգի արքունիքի և էջմիածնի կաթողիկոսների, արքունիքի և վրաց թագաւորների մէջ։ Իր այդ քաղաքական դերն է արտայայտում Յովսէփը այս նամակով, գրելով իշխան Սոլոմոնին Թիֆլիզ, որ ծառայում էր վրաց արքունիքում, թէ ինքը ցանկանում է ռուսաց սիրտը «կակղեցնել», որ վրաց արքային ոչ թէ միայն վրաց թագաւոր կոչեն, այլ և Հայոց և խոստանում է, որ շուտով վրաց թագաժառանգը «Բաւիլիանտէ աստղ» կստանայ։

51. Կոտած — ծաղրական կոչումն է թլփատածների—մահմեդականների և հրէաների։

52. Ցառաջանց այրը յայտնի Աչառանց այրն է Հաղբատից կէս վերստ հեռու՝ ձորի մէջ. երկար դարերից ծառայել է իբրև Հաղբատի հնութիւնների և մանաւանդ հարուստ գրչագիրների ժողովածուի թաքստեան տեղ ժամանակի աւարառութիւններից ազատելու նպատակով։ Անմատչելի տեղ է։ Դեռ ԺԸ դարի վերջերում Յովսէփ Արղութեանը հանել է այնտեղից շատ ձեռագիրներ, ապա 40-ական թուերին Ջալալեան արքեպիսկոպոսը, յետոյ 70-ական թուականներին Ա. Երիցեանը հանեց այնտեղից 2 մեծադիր մագաղաթէ մատեան քարացած դրութեամբ. վերջինը ինձ վիճակուեց 1900 թուին զննութեան ենթարկել այդ այրը և միջից հանեցի բազմաթիւ գրչագրերի կտորտանքներ, որոնք խոնաւութիւնից մեծ մասամբ փթել էին և որոնց մասին մանրամասն զեկուցում տուել «Լումայ»-ի համարներում։

Այրի յատակը հող է և աւազ և մէջը մտնողը թաղւում է աւազի մէջ, ուստի և ենթադրւում է, որ այրի մէջ հողի տակ ծածկուած են մնում դեռ գրչագրի և ուրիշ հնութիւնների մնացորդներ։

53. Ղունկիանոս «բարեբարոյ» կոչուած եպիսկոպոսը նոյնպէս ժամանակի հայագէտ եկեղեցականն էր. նա Սիմէօն կաթողիկոսի կոնդակագիրն էր և նորա նշանաւոր յիշատակարանի հեղինակներից մէկը։

54. Ղաւղ, ստացական տոմս, անդորրագիր։

55. Պետր Իվանիչ Կաւալինցկի, Թիֆլիսի քաղաքապետը — եռանդուն գործիչ Դաւիթ Դանիէլեան չփոթի ժամանակ իբրև պաշտպան Դանիէլի։

56. Մուխադդայ. արաբերէն բառ է՝ մուխաթթա, նշանակում է՝ նշանակերպ։

57. Տպում ենք այստեղ Եփրեմ արքեպիսկոպոսի շրջաբերական ծանուցագիրը հայ ժողովրդին Յովսէփի ընտրութեան մասին. դա մի աղքատ և անգրագէտ գրութիւն է, դժուար ընթերցանելի, կապոյտ թղթի վրայ գրուած, որ ստացել ենք Թիֆլիզի ս. Կարապետ եկեղեցու հանգ. Յովհաննէս ք. տէր Յակովբեանից, որ այդ թերթի վրայ հետևեալ ծանօթութիւնն է գրել. «Այս թուղթ թուի գրեալ ձեռամբ Եփրեմ կաթողիկոսի, իբրև զսևագրութիւն»։

Ճիշտ է, որ դա Եփրեմի ձեռագիրն է և ցոյց է տալիս, թէ որ աստիճան տկար է եղել Եփրեմ կաթողիկոսը հայագիտութեան և առհասարակ գիտութեան մէջ։ Եփրեմի ագիտութիւնը ապացուցանում են նորա բազմաթիւ ինքնագիր գրուածքները, որոնց մէջ հայագիտութեան նշոյլ չկայ, նոյնը վկայում են ժամանակակից գրողներ,

ի միջի այլոց. և Գրիգոր վարդապետը իր նամակներում։

58. *«Դ ի ւ ա ն»-ի Է. գրքի յառաջաբան-պատմութիւնից յայտնի է թէ ինչպէս հայերը երկու կուսակցութիւնների բաժանուած՝ ռուսասիրական և թուրքասիրական՝ կատաղի կռիւ էին մղում տարիներ շարունակ առաջինը Դանիէլին և երկրորդը Դաւթին կաթողիկոսացնելու համար։ Իսկ ինքը ռուս կառավարութիւնը ոչ մէկին էր ուզում իսկապէս և ոչ միւսին, այլ գլխաւորապէս Ցովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին, որ իւր կոչումով, պաշտօնով և դիրքով վաղուց գրաւել էր ռուս արքունիքի ուշադրութիւնը իւր վերայ. այս թուղթը՝ գրուած Պօլսի ռուսական դեսպան Վ. Թամարայի կողմից իւր համազն իշխան Սերգէյ Լազրիչ Լաշկարովին, որին պոլսեցիք Սէրզօ-բէկ էին կոչում, լաւագոյն ապացոյցը կարող է լինել մեր խօսքին։ Դանիէլի համախոհները և մանաւանդ նրա մոլեռանդ կողմնակից Մանուէլ Վ. Կիւմիւշխանեցին մինչև իսկ ենթադրութիւններ են անում, թէ ռուս կառավարութիւնը Ցովսէփ Արղութեանի ցանկութեամբ Դանիէլին աքսորեց Լիմնոս, իսկ ովքեր որ Պօլսի իշխաններից կհակառակուէին Ցովսէփի կաթողիկոսութեան՝ նոցա համար էլ այլ կայան էր պատրաստել։*

59. *Սօմխէթ վրացիք կոչում են Հայաստան երկիրը, հայերին էլ անուանում են Սօմէխի. իսկ «Սօմխէթի վիճակ» ասելով այժմ հայերը հասկանում են Դաղէթի և Բօլնիսի գաւառակը։ Հին ժամանակ սակայն վրացիք Հայ աշխարհը Սօմխէթ չեն կոչել, այլ «Հայոսեան»։ Անդրէաս վ. Տէր Ղազարեանը մի թռուցիկ է հրատարակել 1859 թուին հայ և վրաց լեզուներով, ուր նա ասում է, որ վրացիների այն մասը, որոնք հայոց աշխարհից դէպի հիւսիս էին ապրում, մեր երկիրը համարելով հարաւակողմ, իրանց լեզուով անուանեցին այն Սօմխէթի՝ Սամխրէթի (հարաւ) բառից և մեզ էլ՝ այնտեղի բնակիչներիս՝ Ս օ մ է խ ի, Իսկ վրացի գրողներ միշտ անուանել են մեզ Հ ա յ ո ս ե ա ն։*

61. *Գրիգոր վարդապետ, ապա արքեպիսկոպոս Զաքարեան, Աղքերմանցի, Ցովսէփ արք. Արղութեանի սան, աշակերտ և նրա հոգեծին զաւակ, նրա իսկ ձեռքով ձեռնադրուած վարդապետ. Ցովսէփի բոլոր ձեռնարկութիւններին անմիջական օգնական։ Ցովսէփի բոլոր ունեցածը նրա ձեռքին էր, Հնդկաստանից Ցովսէփի անուան բարեգործական նպատակով ուղարկուած բոլոր գումարները անցնում էին նրա ձեռքով. մեծ ազդեցութիւն ունէր Ցովսէփի վրայ և չափազանց գործունեայ անձն էր։ Մինչև իսկ Նոր Նախիջևանցիք բամբասում էին նրան, թէ Ղրիմից իրանց բերած հարստութեան մի մասը անցել էր Գրիգորի ձեռքը, դրա համար էլ մի ժամանակ թշնամացան իրանց բարերար Ցովսէփին և բողոքեցին կայսեր, բայց պատժուեցան, կայսրը Ցովսէփին յանձնեց այդ դատը. վերջը սարջացան և ներում խնդրեցին Ցովսէփից, որ նրանց համար նորանոր արտօնութիւններ ստացաւ պետութիւնից։*

Ցովսէփի կաթողիկոս հաստատուելով Գրիգորն էլ նրա հետ գնաց մինչև Թիֆլիզ, ուր վախճանուեց Ցովսէփը. և այնուհետև Գրիգոր վարդապետը եռանդուն և կատաղի կռիւ մղեց Դանիէլի և Ներսէս Աշտարակցու դէմ Դաւթին կաթողիկոս ընտրել տալու համար, յաջողեցրեց այն, ներկայ գտնուեց Դաւթի օծման և նրանից եպիսկոպոս ձեռնադրուելով և նշանակուելով Ռուսաստանի հայերի առաջնորդ՝ գնաց Մոսկուա, Պետերբուրգ, Նախիջևան և Հաշտարխան, ուր մեծ թշնամութեան և ընդդիմութեան հանդիպեց Եփրեմ եպիսկոպոսի կողմից. հեռու հիւսիսում ժողովուրդը բաժանուեց երկու կուսակցութեան՝ Եփրեմեան, որ նոյնպէս այնտեղ էր գտնւում իբրև նուիրակ դեռ Ցովսէփի Ռուսաստանի առաջնորդ ժամանակից, և Գրիգորեան. երկուսն էլ կայսերական տան և մեծամեծների հետ յարաբերութիւն պահպանելով, մէկն աշխատում էր Դանիէլի, իսկ միւսը Դաւթի կաթողիկոսութեան հրովարտակ ստանալու և ռուսաբնակ հայերի առաջնորդութիւնն իրան սեպհականացնելու համար։ Այգ միջոցներին է պատկանում այս 25 նամակները, որ գրել է Գրիգոր եպիսկոպոսը Ցովսէփ արքեպիսկոպոսից Հնդկաստան հանգանակութեան

ուղարկած ա. Ստեփան աւ. քահանային և Պօլսի իրանց կուսակից Միեսէլին և Գէորգ Աղայեկեանին ուղղած, ուր մի կողմից ընդարձակ տեղեկութիւններ կան Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռնարկած հաստատութիւնների և նորա հրամանով Հնդկաստան կատարուած հանգանակութիւնների մասին, որպիսի խնդիրը դեռ կարևոր չափով լուսաբանուած չէ մինչև այժմ, իսկ միւս կողմից Դաւիթ կաթողիկոսի օրինականացման համար գործ դրած միջոցների մասին։

Այս ընդարձակ նիւթը մենք զետեղում ենք Յովսէփի հատորի մէջ, ցանկալով ընդարձակ չափով նիւթ մատակարարել Յովսէփի մեծածաւալ գործունէութեան մասին, որ դեռ ցանկալի չափով ուսումնասիրուած չէ։

Այս Գրիգոր վարդապետը վերջը նորից նշանակուեց ռուսահայերի առաջնորդ և գնաց Քիշնև, ուր և մեծագումար արժէք ունեցող մի կալուած թողեց Էջմիածնին, որ ներկայումս Էջմիածնի և ճեմարանի կառավարութեան ամենախոշոր աղբիւրն է կազմում։

62. Դոլեկ—կոլլեգ, иностранныи коллегъ նախարարութեան այլազաւան ազգերի վարչութեան բաժանմունքը։

63. Եղիազարու տուն ասելով ակնարկում է Եղիազարեանց տունը, որոնք Եփրեմ եպիսկոպոսի հետ միացած՝ աշխատում էին յօգուտ Դանիէլի կաթողիկոսութեան։

64. Նոր Նախիջևանցի Կարապետ եպիսկոպոսին Յովսէփ արքեպիսկոպոսը, կաթողիկոս հաստատուելուց յետոյ, նախ քան իր ուղևորելն Էջմիածին՝ առաջուց ուղարկել էր այնտեղ նշանակելով նրան իրան տեղապահ. երբ Յովսէփը վախճանուեց Թիֆլիս, Կարապետը Յովսէփի ամբողջ կուսակցութեան հետ անցաւ Դաւթի կողմ և սրան կաթողիկոս օծելուց յետոյ՝ Էջմիածնի միաբանութեան և ժողովրդի մահսէրը—համախօսականը Դաւթի ընտրութեան մասին տարաւ Կ. Պօլիս վաւերացնել տալու համար։

65. Մանուէլ աբեղայ Ալթունեան, Կիւմիշկերտացի, Դանիէլեան կուսակցութեան պարագլուխներից մէկը, գրագէտ և հայագէտ. ունի մի քանի անտիպ աշխատութիւններ, յիշատակարան, իր ինքնակենսագրութիւնը, զանազան մանր աշխատութիւններ, որոնք բոլորն էլ կմտնեն «Դիւան»-ի հետագայ հատորների մէջ, իր կենսագրութեան հետ միասին։

66. пенсія—կենսաթոշակ.

67. Փլչող աշխարհի յենարանը ես պիտի լինիմ։

68. Շինութեան յարմար քարը շէնքից դուրս չի մնայ։

69. подданъ—հպատակ։

70. Ինքնիրեն ընկնողը լաց չի լինի։

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Յառաջաբան։

1778—1789

Ա. Դաւթար ի Ղրիմու բերեալ եկեղեցական անօթիցն արծաթեղինաց և շորեղինաց։

1779—1782

Բ. Մասնաւոր պատմութիւն յաղագս հանգիպեցելոցն մեզ յորժամ ի Հաշտարխան ելեալ գնացաք ի Մոսկով ի պատճառս օծման եկեղեցւոյն Սանկթպետըրբուրխու, զոր կառուցեալ էր Ջուղայեցի Եղիազարեանց Եղիազար Աղայի որդի ազնիւ Աղայ Յովհաննէսն։

1781

Գ. Սաւատ ինոստրանն կոլէգլն առաքեցեալ ըեսկրիպտին ի Կոստանդնուպոլիս առ Ստաթսկի սովէթնիկ Ստախիեն։

Դ. Սաւատ ինօստրաննի կօլլէգէն առաքեցեալ գրոյն առ Նորին պայծառափայլութիւն քնեազ Գրիգորի Ալէքսանդրովիչ Պօտեմկինն։

1786

Ե. Յովսէփ արքեպիսկոպոսի տուած հրահանգը Ստեփանոս քահանայ Տէր Յարութիւնեանին։

Զ. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը տ. Ստեփանին։

Է. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը տ. Ստեփանին։

Ը. Յովսէփ արքեպիսկոպոսը տէր Ստեփանին։

Թ. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը Հաշտարխանի ինն ընտրեալ պատուելի հոգաբարձութեան։

1788

Ժ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի յերկիրն Ռուսաց առ մերազնեայցն առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի չորից Թղթոց Նորին ընդ միջոցս միջոցս գրեցելոց, յաղագս զանազան իրաց և իրակութեանց։

ԺԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը տ. Ստեփանին։

ԺԲ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Հաշտարխան առ Յովսէփ վրդ. փոխանակ չորիցս գրեալ Թղթոց Նորա. ի պատասխանի ոմանց բանիցն՝ որք հարկաւորք էին։

ԺԳ. Դարձեալ Թուղթ առ նոյն Յովսէփ վարդապետն, վասն յղելոյն մերոյ զխոստացեալ գրեանսն, և զԹուղթսն առ ոմանս, և զԱմասիացւոց գրեալ Թուղթսն։

1789

ԺԴ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն որ ի յերկիրն ռուսաց, ի պաաասխանի Բ. Թղթոցն։

ԺԵ. Թուղթ Նորին ևս ի Մոսկով առ ազնիւ Աղայ Մինասն Եղիազարեան, ի պաաասխանի Թղթոյն որ էր ջատագովութիւն վասն Յովսէփ վարգապետին։

ԺԶ. Ի Յովսէփայ արքեպիսկոպոսէ առ տ. Ստեփան։

1790

ԺԷ. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը տ. Ստեփանին։

ԺԸ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Հաշտարխան առ Յովսէփ վարդապետն վասն այս երկրացի ծերունի Առաքեալին Մայիլեան, որ յայն երկրոջն առ ոմանս զառնլիս ինչ ունէր։

ԺԹ. Թուղթ Նորին ևս առ Ռուսաց երկրի առաջնորդ և Նուիրակ Յովսէփ վարդապետն ի պատասխանի երից Թղթոց Նորին, վասն զանազան իրաց և որպիսութեանց և խնդրոց։

Ի. Թուղթ Նորին ևս առ Իսրայէլ կաթողիկոսն Աղուանից ի պատասխանի Թղթոյն զոր գրեալ վասն ոմանս խնդրոց. և խնդիր, զի յղեսցէ զպատմագիրքն Աղուանից՝ վասն տպագրութեան։

1791

ԻԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի Թուղթը տ. Ստեփանին։

ԻԲ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ ռուսաց երկրի մերայնոց Նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապեան, ի պատասխանի քանեաց Թղթոցն գրեցելոց ի յՆաշու և ի Բէնգերու հանդերձ մխիթարութեամբ վասն մահուան եղբօրն, և երկրիս և մեր որպիսութեամբք։

ԻԴ. Յովսէփ արքեպիսկպոսի Թուղթը տ. Ստեփանին։

1792

ԻԴ. Թուղթ Ղուկաս կաթ. առ ռուսաց երկրի նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն ի համառօտ պատասխանի թղթոյն ի Մոսկովու և ազդարարութիւն մահուան Վարդան վարդապետին ի յԱմիդ և արձակելոյ սպասաւորի նորին Աբրահամ վարդ. ի Հաշտարխան ի տեսութիւն ծնողացն։

ԻԵ. Թուղթ նորին ես առ Յովսէփ վարդապետն ի լիագոյն պատասխանի թըղթոյն նորա ՚յամի Փրկչին 1791. յօգոստոսի 18 գրեցելոյն վասն իրաց և իրակութեանց ոմանց։

ԻԶ. Թուղթ նորին ևս ի Մատրաս առ Շահամիր աղայն, ի պատասխանի թղթոյն նորա գրեցելոյ ի թուոջ Փրկչին 1789, ի նոյ. 1. և շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն։

ԻԷ. Թուղթ նորին ևս առ Հաշտարխանու և կողմանցն առաջնորդ և նուիրակ Յովսէփ վարդապետն, յանձնարարութիւն վասն սրբոյ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին։

ԻԸ. Թուղթ նորին ևս ի ՚յերկիրն ռուսաց առ մերայնոց նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդ. ի պատասխանի թղթոյ նորա ՚յամի Փրկչին 1791 ի նոյ. 27 գրեցելոյ։

ԻԹ. Ռուս ազնուականութեան որոշումը Յովսէփ արքեպիսկոպոսին անդամ ընդունելու իրանց մէջ։

Լ. Ռուս ազնուականութեան թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին նոյն մոքով։

ԼԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը գրաֆ Անհալտին։

1793

ԼԲ. Գեներալ Վասիլ Պօպովի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

ԼԳ. Գրաֆ Ռումեանցովի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

ԼԴ. Կոնդակ Յովսէփ արքեպիսկոպոսի ի վերայ հասարակութեանն գրեցաք ի Մոսկով յաղագս ՞Նւիմու ս. Խաչ վանից պայծառութեան։

ԼԵ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Ռուսէթ առ նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետն, ի պատասխանի թղթոց նորա։

1794

ԼԶ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

1795

ԼԷ. Տ. Ստեփան քահանայի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

ԼԸ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

ԼԹ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը պ. Ստեփանին և պ. Փիլիպպոսին։

Խ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տէր Ստեփանին։

ԽԱ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

ԽԲ. Ի Յովսէփ արքեպիսկոպոսէ առ քնեազ Սօլօմօնն ի Թիֆլիզ։

ԽԳ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

1796

ԽԴ. Տէր Ստեփան քահանայի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին։

ԽԵ. Կարգադրութիւն Թիֆլիզի հայ եկեղեցիների արդեանց մասին։

ԽԶ. Տէր Ստեփանի թուղթը Յովսէփ արքեպիսկոպոսին։

1797

ԽԷ. Հերակլ արքայի հրովարտակը Հանգստարան մեծ եկեղեցու համար։

ԽԸ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ վէզիրն կայսերն Ռուսաց քնեազ Ալէքսանդր Անդրէիչ Պէզպօրօտկին յիշատակութիւն երախտեաց առաջին վէզիրին. և յորդորումն ինքեան ի նոյն։ Ծանուցումն գդառնաղէտ անցիցն կողմանցս. և դտրտմութենէն իւր որ վասն մահուան Կատարինէ կայսրուհւոյն, և գհետևաբար ուրախութենէն որ վասն յաջորդելոյ նոր Կայսերն. և յաղագս թուղթ դրելոյն առ նա, որոյ սակս և խնդիր. զի մատուցէ և զնամակ ողորմութեան ընկալցի ի նոր կայսերէն և առ ազգն մեր և առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն խնամս ունիցի։

ԽԹ. Թուղթ նորին ևս առ Հաշտարխանու և կողմանցն առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսն, ընդ թղթոց կայսերն և վէզիրին և այլոց։

Ծ. Թուղթ նորին ևս ի Պետրպօլք առ ազնիւ Աղայ Յովհաննէսն Եղիազարեան, վասն անցիցն կողմանցս և կրից մերոց, և վասն թուղթ դրելոյն մեր առ նոր կայսըրն ի շնորհաւորութիւն. և վասն Յովսէփ

վարդապետին որ գնայր անդ ի դուռն. ես և յաղագս ի Դարբանդու նոր գնացեալ ժողովրդեանն յանձնարարութիւն, զի ընդ Յովսէփ վարդապետին հոգ տարեալ առաւել ևս ի գութ շարժեսցեն առնոսա զկայսրըն, և զգործակալսն։

ԾԱ. Թուղթ նորին ևս ի Պետրպօլք առ Մանուչարեանց ազնիւ տ. Մարգարն, ըստ մտաց վերնոյ թղթոյդ, յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին։

1798

ԾԲ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

ԾԳ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

ԾԴ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

ԾԵ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն ի պատասխանի երից թղթոց նորա ի Ղզլարու, ի Հաշտարխանու և Պետրպօլքու գրեցելոց. և ազդարարութիւն թէ պատրաստեմք զնուիրակն։

ԾԶ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

ԾԷ. Կցորդ թղթոյն Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն գրեցելոյ յայսմ ամի ի հոկտեմբերի 18։ Եւ որովհետև մի անգամ յղելն մեր՝ անկեալ էր ի ձեռս լէզկեաց և կորուսեալ. վասնորոյ կրկին գրեալ զնոյն, զայսքան ինչ ևս կցորդեցաք նմա։

1799

ԾԸ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ ռուսացն երկրի մերազնէիցն առաջնորդ Յովսէփ վրդ. ընդ նոր նուիրակ... վարդապետին յիշուամն յառաջ քան զայս գրեալ թղթոյն մերոյ առ սա, և յանձնարարութիւն վասն նորոգ նուիրակին։

ԾԹ. Թուղթ նորին ևս առ Յովսէփ վարդապետն, ընդ վերնոյ թղթոյն իբրև փուսուլայ վասն Կայսերական նամակին և պարգևացն և այլ իրացն յղելոյ և այլ բանից հարկաւորաց։

Կ. Բաշպօրթ ըստ լեզուի ռուսաց, և վկայական ըստ մեր բարբառոյ առ Ռուստաց երկրի կամէնդանթսն, այսինքն սահմանակալսն վասն աստի ի սբբոյ Աթոռոյս առաքելի նուիրակին։

ԿԱ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի ի Հնդիկս ի քաղաքն Կալկաթա առ պ. աղայ Սարգիսն տէր Յովհաննիսեան։ Շնորհակալութիւն վասն հոգ տանելոյն բանի տէր Շմաւօնեանց պ. Ստեփանին, և մխիթարութիւն վասն մահուան մօրն, և սփոփական բան առ գրելն զզանգատ զլըբութեանց Թիֆլիզեցի Ստեփան չերիցուէն՝ և այլն։

ԿԲ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տ. Ստեփանին։

ԿԳ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը տէր Ստեփանին։

ԿԴ. Թուղթ Ղուկաս կաթողիկոսի առ Յովսէփ վարդապետն հիւսիսոյ ի պատասխանի յայսմ ամի յուլիսի 7. գրեալ թըղթոյն, յառաջ քան զայն ի մայիսի 12 գրեալ թղթոյն վասն կավալերի... ինչ բանից, և յապրիլի 28, գրեալ թղթոցն և կայսեր հրոբարաակաց օրինակացն։

ԿԵ. Երկրորդ թուղթ նորին առ Պաւլ Պետրովիչ, այսինքն Պօղոս Պետրոսեան, շնորհակալութիւն վասն ողորմութեան հրովարտակին և պարգևացն զորս շնորհեալ էր, և այլն։

ԿԶ. Նորին թուղթ Պետրպօլք առ Ազնիւ Աղայ Յովհաննէսն ենարալ, ընդ շնորհակալութեան թղթոցն որք առ կայսրն յաղագս հրովարտակին և պարգևացն, և առ ոմանս անձինս դրանն։

ԿԷ. Թուղթ Դաւիթ եպիսկոպոսի առ Յովսէփ եպիսկոպոս Արղութեանց։

1800

ԿԸ. Թիֆլիզի Հայ հասարակութեան հանրագիրը Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ընտրութեան համար ի կաթողիկոսութիւն։

ԿԹ. Թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ Գեար Իւանիչ Կաւալիցկինն ի Թիֆլիզ, որ ի Կայսերէն Ռուստաց առաքեցեալ կայր ի Թիֆլիզ իշխանութեամբ. ծանուցումն զմահուանէ Տեառն Ղուկասու սրբազան հայրապետին մերոյ, և ապա շնորհաւորութիւն գալստեանն, և նշանակութիւն վասն բանին ի կողմանէ Յովսէփ արքեպիսկոպոսին։ Եւ խնդիր վասն սուրբ Դեղարգին գարձուցանելւ ընդ Յովհաննէս վարդապետին։

Հ. Յետ վախճանման Տեառն Ղուկա-

սու սրբազան կաթողիկոսին Թուղթ ի դիմաց միաբանից սրբոյ Աթոռոյս առ Դաւիթ Միրզայ արքայորդին ի Թիֆլիզ, ի պատասխանի թղթոյն զոր գրեալ էր վասն Յովսէփայ արքեպիսկոպոսին ընտրել զնա ի կաթողիկոս.

ՀԱ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ իշխանապետս հայոց Կ. Պօլսոյ։

ՀԲ. Թուղթ միաբանից Էջմիածնի առ Դաւիթ եպիսկոպոս։

ՀԳ. Թուղթ ի միաբանից սրբոյ Աթոռոյս առ Յովսէփ արքեպիսկոպոսն կողմանն հիւսիսոյ, որ յետ վախճանմանն Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ի Սիւնոդոսին ընտրութեան, արժանի համարեցաւ և սա կաթողիկոսութեան. սակայն վասն կասկածանաց ոմանց, ոչ եղև համարձակութիւն դրել զանունն ի մահսարին որ առաքեցաւ ի Կոստանդնուպօլիս։ Այլ յետ աւուրց ի Թիֆլիզու մահսէր և թուղթք եկին, որք յորդորեալ էին և զնա գրել, և միաբանութիւն մեր, ի վերայ առաջնոյ մահսէրին, զերկրորդ մահսէր դրեալ անուամբ Դանիէլ պատրիարգին, և Յովսէփայ արքեպիսկոպոսին։ Վասնորոյ և դէպ եղև այս թուղթ հրաւիրանաց առ նա ինքն Յովսէփ արքեպիսկոպոսն գրել։

ՀԴ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ իշխանապետս Հայոց Կ. Պօլսոյ։

ՀԵ. Տեառնդ Մինասայ սրբազան արքեպիսկոպոսի և Աստուածաբան վարդապետի։

ՀԶ. Թուղթ Յովսէփայ արքեպիսկոպոսի առ սրբազան Եփրեմ արքեպիսկոպոս։

ՀԷ. Թուղթ Յովսէփ արքեպիսկոպոսի առ Յովհաննէս արքեպիսկոպոս։

ՀԸ. Եփրեմ արքեպիսկոպոսի շրջաբերականը Յովսէփի ընտրութեան մասին։

ՀԹ. Թուղթ Յովսէփայ արքեպիսկոպոսի առ Դանիէլ պատրիարք։

Ձ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Յովհաննէս Եղիազարեանին։

ՁԱ. Յովսէփ արքեպիսկոպոսի թուղթը Կարապետ վարդապետին։

ՁԲ. Վասիլիյ Թամարայի թուղթը Սերգէյ Լազրիչ Լաշկարովին։

ՁԳ. Յովսէփ կաթողիկոսի անդրանիկ կոնդակը Ղազար վարդապետին։

ՁԴ. Թուղթ երկրորդ առ Յովսէփ կաթողիկոսն ի գործակալաց սրբոյ աթոռոյս յիշումն յառաջ գրեալ թղթոյն հրաւիրանաց և ծանուցումն ղմահուանէ Մինաս արքեպիսկոպոսին. և խնդիր ստիպաւ անյապաղ գալ ի սուրբ Աթոռս։

ՁԵ. Կոնդակ Յովսէփ կաթողիկոսի առ Դաւիթ եպիսկոպոս։

1801

ՁԶ. Թուղթ ի Թօխաթ ի հասարակութենէ միաբանից սրբոյ Աթոռոյս առ Դանիէլ սրբազան արքեպիսկոպոսն, ընդունելութիւն և հրաւիրումն գալ ի կաթողիկոսութիւն սուրբ Աթոռոյս, մինչ Յովսէփ կաթողիկոս կոչեցեալն վախճանեալ էր ի Թիֆլիզ։

ՁԷ. Կոնդակ ի միաբանից սրբոյ Աթոռոյս ի վերայ Վրաց երկրին, վասն վախճանման Յովսէփ նորակոչ կաթողիկոսին, որ եկեալ էր ի Թիֆլիզ՝ անդ վախճանեալ էր ի մարտի Թ, առ որ մխիթարութիւն. ի վերջոյ ազդարարութիւն վասն ընտրութեան Դանիէլ արհւոյն ի կաթողիկոս։

ՁԸ. Վասիլիյ Թամարայի թուղթը Զմիւռնիայի Մարտիրոս արքեպիսկոպոսին։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

I

Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանի անտիպ III հատորից՝

Ա. Ի Հաշտարխան և ի Գիլան ընդ Կարապետ վարդապետին և Եսայուն։

Բ. Ի Մոսկով՝ ի Ղզլար և ի Հաշտարխան։

Գ. Հաշտարխանու Նուիրակ և առաջնորդ Յովսէփ վարդապետի թղթոյ պակասն է։

Գ. Ի Հաշտարխան թուղթք, այլ և այլ դիտմամբք։

II

Ա. Թուղթ Պլատօն արքեպիսկոպոսին Մոսկովու առ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան։

Բ. Ի Մօսկովու ի Յովսէփ արքեպիսկոպոսէ։

Գ. Թուղթ Սամուէլ արքեպիսկոպոսին Ռօստովու առ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան։

III

Վրաց Հերակլ արքայի հրովարտակը Արղութեան տոհմի ազգաբանութեան մասին։

IV

Ջիմշիթ և Փրիգոն մէլիքաց խնդիրն ի թագաւորէն 1788 8 մարտի, ի Սանկտ Պետրբուրգ։

V

Յովսէփ Արղութեանի աշակերտ Գրիգոր արքեպիսկոպոսի Նամակներ. Ա—ԻԵ։

Ծանօթութիւններ 1—70.

Նիւթերի ցանկ.

Ցանկ յատուկ անունների.

ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Աբասղուլի 33.
Աբդլմսէհ 247 254.
Աբէլ 65 106.
Աբէլ Աբէլեանց 58.
Աբէլ դպիր 120.
Աբրահամ 468 494.
Աբրահամ արքեպ. 450—1 455 472 474.
Աբրահամ, մեծ եղբայր Խօջայ Մինասեանց
Էմինաղ աղայի 204.
Աբրահամ վ. 131—3 136—167 344—5 456.
Ադամ մահ. 259.
Ագարացիք 309.
Ագլբէգ 191.
Ազարիա մահտեսի 557.
Ազնաւուրեան Գասպար մահ. 323 333.
Ազօվացիք 131—3 136.
Ազօվք. 5 10 19 15 50 54.
Աժտարխան տես Հաշտարխան
Ալաման 139.
Աթաբէկ 395.
Ալդէտ 81.
Ալէքսան 57.
Ալէքսան վէքիլ 364—5.
Ալէքսան վէքիլ Գիլանու 364 .
Ալէքսանդր պատմագիր 119.
Ալէքսանդր Պաւլօվիչ 10 220 228 283 290.
Ալէքսանդրա Պաւլօֆնա դժխոյ 11 283 286.
Ալսուփով Ադամ Վասիլիչ 29.
Ախալցխա 74 194 366.
Ախթամար 405.
Ախքերման 102.
Ակուլիս 384.
Ահարօն 325 353.
Աղա Մահմադ խան 136 141 147 399.
Աղա Մահմադ խան, իշխող Պարսից 206.
Աղարարեան Ստեփան 118—20 129 184.
Աղաբաբեան Նիկողայոս եղբ. Յակոբոսի 61.
Աղալօ 387.
Աղաճայ Յովհաննէս 111.
Աղայէկով Գէորգ 333 344 407—8 410 412
—4 417 418 422 429 432 434 438
441—2 446 450 454 457—8 460—1
465 467 470—1 473—8.
Աղաջանեանց Յարութիւն Սահակ 252.
Աղասի ենիչար 103.
Աղեքսանդր Համադանցի 191.
—Մակեդոնացի 191.
Աղթամար 140 494.
Աղթարմայ Հալէպցի 372.
Աղսարա 488 491.
Աղմէջիղ 14.
Աղուանից տուն 279.
Աղուանք 26 116
Ամասիացիք 87.
Ամբրոսիէ եպիսկ. 111.
Ամիդ 136.
Ամիրջանեան Մկրտիչ ամիրայ Շնորհք 242.
Ամստերդամ 70 487.
Այվազով Թորոս 178.
Անանիա, եղբայր Պետրոսի 494.
Անգլիացիք 188 436.
Անդրէյ Միխայէլիչ 367.
Անդրէ քահ. 22—3.
Անդրէաս 333 450.
Անդրէաս գրագիր 349.
Անդրէաս Մինձս 253.
Անղալի 365.
Անի քաղ. 488 490.
Անհալտ գրաֆ 145—50.
Աննա Իվանովնա կայսրուհի 27 135.
Աննա սուրբ 272.
Աննա Ֆէօդօրովնա, կին Մեծ իշխան Կոս-
տանդին Պաւլօվիչի 283.
Անոյշ, կին Աշոտ արքայի 155.
Անտօն 454 460 464 467 469 472—4.
Անտօնիէ եպիսկ. 46 386.

Աշոտ Բագրատունի արքայ 155.
Աչակով 96.
Աջառանց այր 243.
Առաստով 24.
Առափայել 12.
Առաքել 70 384.
Առաքել, Բէկլան կոչեցեալ, որդի Տէր-Յով-
հաննիսեան Սարգիս աղայի 270.
Առաքել քահ. Անահնեցի 155.
Ասլան 63.
Ասկղրիմ 14.
Ասպահան 126.
Աստուածապահ 56—7.
Աստուածատուր 413.
Աստուածատուր եպիսկ. 306.
Աստուածատուր մհտ. 13 65.
Աստրախան տ. Հաշտարխան
Ասքանազեան 286.
Առաքելեան Մովսէս 239.
Արամեան տուն 325.
Արաղստան 141 225.
Արարատեան գաւառ 303 314.
Արարատեան դաշտ 265 283.
Արարատեան լերինք 49 52.
Արղաւիլ 141.
Արզի, կին Ահարցի Մինասի 368.
Արիստոտել 475.
Արղութեան Երկայնաբազուկն իկողայոս 485.
Արշակ 390.
Արշակ թագ. 66.
Արղութեան տոհմ 395.
Արշակունեաց թագաւորութիւն 167.
Արսէն եպիսկ. Թուէրու 37.
Արցախ 34 87 141 147.
Աւետեաց երկիր 353.
Աւետիս արեղայ 97.
Աւետիք աղայ, որդի Խանփերի խանու-
մի 112.
Աւետիկ Դիւան 194 277.
Աւետիս մհ. 97.
Աւետիս վ. 14 85 125 225 251 261 263.
Աքերման 111
Ապրեսկով եներալ 456.

Բագրատ 81.
Բագրատունեաց գահ 490.
Բագրատունի 72 155.
Բագրատունի թագաւոր 395—6.
Բագրատունի թագաւորաց կնիք 396.
Բաղարապիա 107.
Բաղդատ 57 79 80—2 105 140 161 226.
Բաղդասար Ղալգեան 77.
Բաղդասար վարդ. 263—4.
Բաղչիսարայ 2 14.
Բամբակաձոր 255.
Բայաղիտ 105 276 281.
Բանդաորուշէր 79 96.
Բանտէր 309.
Բասրայ 57 59 61 63—5 79—82 105 119
161 165 174—7 181 190 192 195
—6 203 208 211—2 236—242
244—8 252 269 275.
Բարաթսկի մանասաէր 9.
Բարաղամ որդի Առաքելի 70.
Բարաղամեանց Մովսէս 99.
Բարգուղիմէոս առաքեալ 283.
Բարլամ 172.
Բարղամեանց 17.
Բարսեղ 98 120.
Բարսեղ արքեպ. 349.
Բարսեղ եղբայր Դաւիթ եպիսկ. 336.
Բարսեղ եպիսկ. 306.
Բարսեղ վարդ. 337.
Բարսեղ քննող, եղբօրորդի Յովսէփ կաթո-
ղիկոսի 450 459 378 422 431 441
167 337 409.
Բաքու 250 259 370—1.
Բելիար իշխան 420.
Բէգում խաթուն, դուստր Էլիազ Մինա-
սի 204.
Բէժան պարոն 122.
Բէթղահէմ եկեղեցի 206.
Բէթղէհէմեան Յովհաննէս 59 61 64.
Բէզբօրօկին Աղէքսանդր Անդրէիչ 145
218 222 228.
Բէզպօրօտկի վէզիր 262.
Բէկում, դուստր Տէր-Յովհաննիսեան Սար-
գիս աղայի 270.
Բթաւիա երկիր 190—1 204.
Բէկլարի տուն 369.
Բելգրաթ 105 111.
Բենդեր 13 96 102—3 106—7 111 117 121.
Բուլղակով Եակոբ Իւանիչ 105.
Բումբայ 176 192 268.
Բուշար. տես Բուշէռ 212 385.
Բրիտանիա 61 101 105 175.

Բօլթու 7 42.
Բօղդանու քաղ. 102.
Բօրչալու 395.
Բօքրէշ 104.

Գաբրիէլ արքեպ. 222.
Գաբրիէլ արքեպ. Նովուգորոգու և Պետրպօլքու 21 26—7 31 44.
Գաբրիէլ եպիսկ. 24 36.
Գաբրիէլ Կրցհանցի 59.
Գաբրիէլ միարօպօլիտ 7 8 42—3.
Գաբրիէլ որդի Մարտինի 282.
Գաբրէլ խաթուն, քոյր Տէր-Յովհաննիսեան Սարգսի 270.
Գալիցի Փրթմաշալ տեղակալ Պետրպօլքու 30.
Գալուստ Նուիրակ 408.
Գալստեան Աւետիք 242.
Գալստեան Կարապետ 79 82.
Գալստեան մահտեսի 242 252—3.
Գալստեան Մկրտում 183 241.
Գալստեան մահտ. 55—8 60—1 63 73 76 79 84 89 92 93 105 112 125 165—6 183.
Գաղղիացի 251.
Գանթօմ քաղ. 187.
Գանձասար 384 387 405.
Գանձակ 89 97 116 309 395.
Գանջա տես Գանձակ
Գայիանէ 449 454 456 460 464 467 469 472—3.
Գայիանէ կոյս 218 283.
Գայիանէ ս. կուսի տաճար 308.
Գասպար Ղարասուեցի Փանոսի որդի 10.
Գասպար ամիրայ 319.
Գասպարեան Վարդան 204.
Գասպար տղայ 383.
Գասպարով Իվան Պետրովիչ 60 65.
Գասպարով կուպեռնաթ 466.
Գարսեան քնեազ 194.
Գեանջա տես Գանձակ
Գէորգ 56—7 62 64.
Գէորգ աղայ 306.
ս. Գէորգ եկեղեցի 10 13 335 420.
ս. Գէորգ եկեղեցի Հաւլաբարի 207.
Գէորգ տիր. 64.
Գէորգ վարդ. 472.
Գէորգ տիր. Ագուլեցի 71.
Գէօրկի 193 363 368.
—որդի Աւալի 193.
Գիլան 276 365.
Գենգալօղլու Յակոբ 12.
Գեղարդ 413.
Գերակեան Մկրտիչ 120.
Գերակեան Օհանջան Յակոբ աղայ 118 128.
Գերաքեան Օհանջան 165—8 182 184.
ս. Գեղարդ 321.
Գեոքկի արքայ վրաց 254 305 310.
Գերմանացիք 111.
Գիլան 23 125—6 251 357 363—4.
Գերաքեան 240.
Գիօրկի կամ Ղիօրղի 8 43.
Գիւրկինեան Արր. գանձապետ Բագուայ 259.
Գուգարք 402.
Գուրիով Սիմէօն Գրիգորիչ 39.
Գուրելի 456.
Գրիգոր 65 85—6 97 106 412 424 431 443.
Գրիգոր աղայ 323.
Գրիգոր աղայ Հնդկաց 388.
Գրիգոր եղբ. Գաւթեան Յովհաննիսի 76.
Գրիգոր արքեպ. 406 414 419 422 429 431 384 436 438 441 446 449 450 454—5 457—8 461 464—5 467 470 472—4 476.
Գրիգոր եպիսկ. լուսարար 306.
Գրիգոր լուսաւորիչ 103 145 155 185 218 283 288 321 329 377 415 426 434 438 468.
Գրիգոր Ծարգալեան 62.
Գրիգոր Ծօջամարով Երգալեանց 14.
Գրիգոր մհտ. 76—8.
Գրիգոր պատր. 413.
Գրիգոր սարկ. 14 98 114 263.
Գրիգոր Սախագատայ 319.
Գրիգոր մահտ. Ղզլարցի 84.
Գրիգոր Պետրոս 212.
—Սախկագատէ 333.
Գրիգոր վրդ. 135 146 162—4 183 185 263 275 335 339.
Գրիգորականք 422.
Գրիգոր տիր. 79 263.
Գրիգոր փեսայ Մամուկեան Նազարի 259.
Գրիգորուպօլ քղ. 152 159 168 176 181 184 185 208 258 409—10 424 426 428 441 446 450 454—5 457 461 465 467 470 472—3 476.
Գրիգորիուպօլցիք 425.

Դրօբէր Նաւապետ 171.
Դօզլով 2 14.
Դօրգի 45—6.
Գօրի 58.
Դօրեցիք 62.
Դօրիչ Իվան Պետրովիչ 24 28—9 72.

Դաթօ Իմքայեաբայեան 19.
Դանիէլ 369—70.
Դաթօ քնեազ 167.
Դանիէլ արքեպ. 347.
Դանիէլ վարդ. 343.
Դանիէլ կաթողիկոս 352 356 415 418 420 —2 424 426 428 429 430—1 434 435—6 444 445 447 470 473 475.
Դան Դգֆիլդ որդի պ. Սարգսի 172.
Դանիա 242.
Դանիէլ 3 405—7.
Դանիէլ պատր. Կ. Պօլսոյ 297—8 304 306 —7 310 315 317 321 324 327—8 330 333 334.
Դանցֆէլգ հօպնհագու 252.
Դանիէլեանք 415.
Դաւթեանց Տէր Սահակեան Ստեփան 97.
Դաւիթ 58 125 192 243 408 494.
Դաւիթ աղայ 364—6.
Դաւիթ աղայ Գիլանու 386.
Դաւիթ արքեպիսկոպոս 327 329 349 428 441.
Դաւիթ արքայորդի 193—4.
Դաւիթ եներալ 243.
Դաւիթ եպիսկ. 305—318 342.
Դաւիթ բէկ 25 119.
Դաւիթ Շկօլ ի Լօնտօն 242.
—Շկօթ 252
Դաւութ բէգ 79.
Դաւիթ կաթողիկոս 356—434 460 464 475.
Դաւիթ Ըշգօթ 246.
Դաւիթ եպիսկ. 291—2.
Դաւիթ կաթ. 410—1 435.
Դաւիթ Միրզայ, Վրաց արքայորդի 296—7 310.
Դաւիթ վարդ. 317 319 321—2 324.
Դաւբէժ 141
Դաւիթ, որդի Տէր-Ներսէսի 488
Դարասով Նիկալօ Ֆէօդրովիչ 37
Դաւիթ քնեազ 409 422 442.
Դարբանդ 23 180 221 223—4 226 281 309.
Դարեջան պօլկօվնիցա 383.
Դաքա ք. 165 182 196 205 488.
Դէվիթ Ըսկար 172.
Դերժօիլ ք. 36.
Դերջանենց Կարապետ 333.
Դիմիտր 4.
ս. Դիմիտր Ռոստովսկի 36.
Դիոնեսիոս Հայրապետ 204.
Դուբնասար 111 146 431.
Դուպասար 448.
Դօլսաան գնդապետ 22.
Դօն գետ 4 19 40.

Եագունտ 383.
Եակօր Իւանիչ Մետիկ, Շահբանդար Դիլանու 366.
Եալանովսկի Ալէքսէյ Իւանիչ 39.
Եակօբի Իւան Վարֆօլեմեեիչ 357.
Եաշ 76 96 99 104 111 118 120—135 274 309.
Եգիմ (Յովակիմ) Լազրիչ 392.
Եգիպտոս 177 251.
Եդեսիա 5.
Եիլեր Իւան Ալբրեխտ 149—50.
Եկատերինէ Ալէքսանդրօֆնա Կայսրուհի ամ. Ռուսաց 1 49 148.
Եկատերինա Բ. Կայսրուհի ամ. Ռուսաց 10 35.
Եկատերինէղրատ 402.
Եկատերինէսլաւ 407.
Եղիա 64 353 368.
Եղիազար աղայ 370—1 385.
Եղիազար որդի Շամիր աղայի 192.
Եղիազար տեղակալ 353.
Եղիազար ք. 48.
Եղիազար կաթող. 488.
Եղիազարեանք 411 430.
Եղիազարեան Եղիազար Ջուղայու Դաշտցի 3 15 21 44.
Եղիազարեան Մինաս Լազրիչ 413
Եղիազարեան Սաեփան մահտ. 323 333.
Եղիազարեան Յովհաննէս 81 101 226 - 7 288.
Եղիազարեան Ստեվան ամիրայ 319.
Եզիշէ 486—7.
Եղիսաբէթ, կին Աստապատցի Մատթէոսի 92.
Եղիսաբէթ Ալէքսիօֆնա, կին թագաժառանգ Ալէքսանդր Պաւլովիչի 283.
Եղիսաբէթ Պետրօֆնա կայսրուհի 27.
Եղիսէոս 353.

Եղորի իգումէն 9 44.
Եսայի 58 61—2 65 74 80 88 105 119 136 194 247 254 276—7 357 364—5 370—1 383—4.
Եսայի Թիֆլիզեցի 366—7.
Եսայի մարգարէ 284.
Երեմիա մարգարէ 347.
Երևան 23—4 105 141 224 226 281 364 372 387 395.
Երևանցիք 93.
Երկայնաբազուկ 396.
Երնջակ 124.
Երուսաղէմ 57 142 176 187 190 203 273 276 281 326 375 433.
Երօնիա իգումէն 9.
Երօշ 177.
Եփրեմ արքեպիսկ. 265 303 310 313 319 325—8 336.
Եփրեմ արքիմանդրիտ 26.
Եփրեմ եպիսկ. 288.
Եփրեմ կաթող. 161 29' 405—6 408 40—11 413 415—8 420—2 425 429 430—1 433—4 436 437—9 443 445 447 452 455 458—60 462 464—5 469—70 472 473 477.
Եփրեմ վ. 138 262 276 279—80 282 316 322.
Եփրեմեանք 405 413.
Եւրոպիա 129 166—7 181 209 236 242 244 255.
Եւրոպացիք 134 172.

Զանազան, դուստր Տէր Յովհաննիսեան Սարգիս Աղայի 270.
Զանազան խաթուն, մայր Տէր-Յովհաննի-սեան Սարգսի կնոջ 270.
Զարբանալեան 486 488.
Զարիպխան 92.
Զաքարիա իշխան 395.
Զաքարեան Մարդար Իզմիրցի 119.
Զաքարիա մարգարէ 350.
Զաքարիա պատրիարգ 302 313 316 330.
Զաքարիա Պուլիչ 367.
Զաքարիա սպասաւոր 155.
Զաքարիա վարդապետ 215—6.
Զուրով գրաֆ 399.
Զուրով Վալերիան Ալէքսանդրիչ գրաֆ 309.
Զմիւռին 58 70 121 355 466.
Զօսիմէ արքիմանդրիտ 7 8 42—3.

Էլիազ 370 375.
Էմին աղայ 24 120.
Էճիազ Մկրտիչ աղայ 128.
Էստատեան Գէօրգի 368.
Էջմիածին 1 4 6 11 24—5 41 87 90 94 109 114 116 127—8 133 137 141 143 148 152 161 187 190 222 229 251 262 265—6 270 282—3 290 292 295 299 301 305—6 311 325—5 330 334—5 338 341—2 347 350—2 354—6 405 407—9 413 418—9 422 436 438 441 446—7 449—50 465 473 485 487.

Ընկլիզ 119—235.

Թամար Թագուհի 395.
Թագանրով 60 65.
Թագուհի, դուստր Տէր-Յովհաննիսեան Սար-գիս աղայի 270.
Թադէոս 473.
Թադէոս առաքեալ 5 283.
Թադէոս արքեպիսկ. 349.
Թադէոս եպիսկ. 306.
Թադէոս կաթող. Կիլիկիոյ 140.
Թադէոս վրդ. 73 80 101—2 120 185 249 278 429.
Թադէոս վրդ. Մարուգեան ստամբօլցի 14.
Թադիրէկ պօլկօվնիկ 373.
Թաթար 10.
Թաղի 243 271.
Թամարով Վասիլ Ստեպանիչ դեսպան 328 332 334 355 407 440.
Թամարօ 459 463.
Թամրազեան Յովհաննէս 336.
Թանիրով 36.
Թարվէզ 23 136 147 225 241 254 276 281.
Թէլամաք 119 168 176 185.
Թէկղի, կին պարոն Մանուկի 192.
Թէհրան 136 147 224.
Թէոդոսիա 490.
Թէոգորոս 140.
Թէքէլէն Պետր Գաբրիէլիչ 72.
Թիլֆիզ տես Թիֆլիզ.
Թինաթին 254 274.
Թինաթին ի Մօզդօկ 271.
Թիֆլիս 58 65 69 74 80—1 91 97 104—5 113 121 126 132 136 140 161 192 206 212 222 225 228 231 243 247

257 262—3 268 274 276—8 293—5 297 307 310 315 821 328 342—344 347 349 352—3 371 373 375 383—7 388.
ս. Թորոս եկ. 10 13 57.
Թովմա առաքեալ 124 148.
Թովմա վ. 124.
Թորոսեան Տիւրիկեցի դպիր 488.
Թումանով Յովսէփ 183.
Թուէր. քաղ. 37.
Թումանի որդիք 216.
Թումանեան Մանուչար քնհազ 217.
Թումանեան Սուրխան Դիւան 98.
Թումանով Բարսեղ 441.
Թումանով Պօղոս 460.
Թուշ ազգ 25.
Թուրքաց աթոռանիստ 51.
Թուրքք 52 98 102.
Թօխաթ 76 347 354.
Թօնայ 95 102 104.

Ժուկով գուբեռնաթ Հաշտարխանու 46.
Ժուռիկենց Գասպար 120.

Իբրահիմ 93.
Իբրահիմ աֆանդի 366.
Իբրահիմ իշխող Արցախի 141.
Իբրահիմ խան Շուշուայ 136 399 401.
Իգիրմիդորդ 25. 404.
Իզմիր 411 413 466.
Ինգլիզ 82 97—8 175 187 246 388 421.
Ինօքենտի 24.
Ինոքենտի Պսկովսկու առաջն. 36.
Իսակի եկեղ. 34.
Իսահակ վ. 59 62—3 72 81 113 121.
Իսկելէն 335.
Իսմայէլ ք. 96 104 118 126 309 448.
Իսրայէլ 325.
Իսրայէլ կաթող. Աղուանից 114—5.
Իսրայէլացիք 6.
Իւան Աբրահամիչ 282 336.
Իւան Գուգօվիչ զօրապետ 250.
Իւան Իւանիչ խոստովանահայր 34.
Իւան Պետրովիչ Ղափանցի 367.
Իւան Ֆետօրիչ պլաց-մայեօր 9 44.
Իւերիայ 395.
Իւչքիլիսէ 415.
Իտալացիք 119.
Իրօֆիոս արքիմանդրիտ 22.
Իքնատիէ Անտօնիչ 26.

Լազրե Յովհաննէս Ազասարեան դէյստուի-տելնի ստատսկի սովետնիկ 326.
Լազրով 422 470—1.
Լազրով Աննա 106.
Լազրեանք 405 407 421 429 431 438.
Լազրով Մինաս 447.
Լակզի 25.
Լանկթամուր 25.
Լաշկարով 193 433 437.
Լաշկարով Սերգէյ Լազրիչ 334
Լատինացւոց պատրիարք 45.
Լաւրենտի արքիմանդրիտ 38.
Լեզգիք 71 78.
Լեկաց իշխանութիւն 20.
Լէօպօլ թագ. 139 145.
Լէօպօլ 123.
Լիբանան 275.
Լիմ անապատ 161—2 225 334.
Լիով 275.
ս. Լուսաւորիչ 21.
ս. Լուսաւորչի աջ 733.
ս. Լուսաւորչի եկեղ. 10 12 19.
Լօթրանաց փաստօրք 45.
Լոնդոն 182 242 247 253—4 486.
Լօռի 402.

Խաթիսենց Գաբրիէլ 414 466.
Խաթիսով 409.
Խալդարեան Գրիգոր Ջուղայեցի 486—7.
Խանզադա, կին Գրիգոր Պետրոսի 212.
Խանփերի խանում 112.
Խաչատուր 57.
Խաչատուր սարկ. 166 121.
Խաչէն 25.
ս. Խաչ վանք 14 487—8.
Խաչիկ աղայ 21 59.
Խաչիկ առաքեալ 129.
Խաչիկ մահտեսի 60—1.
Խաչիկ Մովսէս 165 173.
Խաչխաթուն, դուստր Տէր-Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
Խաչխաթուն հարս Մինաս Չլիպիի 204.
Խարզալեան Մարդար աղայ 168.
Խարքով քաղ. 38.
Խերսօն քաղ. 22.
Խորվիրապ 86.
Խօջամալ Յովհաննէս 31.
Խօջա Մինասեանց աղայ Ճիրաղ 205.
Խօջամինասեանց Յովհաննէս 120 165 234.

Խօջամինասեանց Յօհանջան աղայ 234.
Խօյ քաղ. 74 126 141 248 379 281 303 314.
Խօյա բերդ 281.
Խօյու իշխողք 224.
Խօյու խան 110.

Ծաղիկ, դուստր Մանկասար սարդարի 262.
Ծաղիկ կին պարոն Վարդանի 358.
Ծատուրեան Կարապետ 239 246
Ծատուրեան Յովհաննէս սարկ. 106.

Կազանու ս. Աստծն. եկ. 30.
Կազարաթ 491.
Կալկաթա 165 168 175 178 196 198 203 205 247 252 254 266.
Կալուղայ 389.
Կախէթ 217 395.
Կախօվսկի Վասիլ Վասիլիչ 13.
Կակ 395.
Կապտան փաշա 105.
Կասպարով Յովհաննէս 474.
Կասեան վ. 9 44.
Կատարինէ 461 464.
Կատարինէ խաթուն Իւանոֆնա 229 299.
Կատարինէ կայսրուհի 27 218—20.
Կատարինէ դուստր Խօջայ Մինասի, թոռ Խօջայ Մինասեան Էլիազ աղայի, կին Խօջամալ Սափար Կումպանովի 203.
Կատարինէ Զաքարոֆնա, կին Խալդար Գրիգորի 101.
Կատարինէ կոյսի եկ. 4 10 26 47 331.
Կատարինէ Պետրոֆնա 14.
Կատարինէ սուրբ. 185.
Կատարինէսլաւ 3 4 6 11 40—2.
Կարապետ 138 150 169 431.
Կարապետ առաջնորդ Գիլանու 367.
Կարապետ եպ. Կարրեցի 147.
Կարապետ Ծատուր 176 196 205 242.
Կարապետ սրբազան 406.
Կարապետ մհտ. 19.
ս. Կարապետ Մշու 78.
Կարապետ, որդի Տէր-Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
ս. Կարապետ եկեղ. 422.
Կարապետ վարդ. Կարնեցի 365.
Կարապետ վ. 58 64—5 97 120 142 167 185 329 332 335 344—5 357 363 366.
Կարապետ վ. Շահնազարեան 292.
Կարապետ Տէֆուլթաթ 9.
Կարապետ Մսրօղլի 470.
Կարապետ տիրացու 89.
Կարապետ որդի Զիպուխլուեցի Յարութիւնի 368.
Կարապետ, Փառակեցի Տէր-Ոսկանի որդի 3:
Կարս տես Ղարս
Կարին ք. 163 319 363 366.
Կաւալինցկի դեսպան 328.
Կաւալիցկի Պետր Իւանիչ 295 322 324.
Կաֆայ 2 116—7 335 337 488—90 493.
Կաֆայեցիք 337.
Կէտիկ Ահմէտ փաշայ 489 492.
Կիև տես Քիով.
Կիւրեղ Ալէքսանդրացի 377.
Կիւրեղ եպս. Ավերսկու 9 44.
Կոստանդին Պաւլովիչ 11 220 228 283 290.
Կոստանդնուպօլիս 49 57—60 64 71 73 80 84 89 91 97 125 139 142 159 166—9 173 176 186 195 198 205 211—2 225 236 245 249 252—3 274—5 282 301 304 307 309 311 315—8 319 321—34 327 332 333 340 342—3 348 354 356—7 375 410 414 447—8 455—6 471 486 488 493:
Կովկաս 73 141 147 344 466 474.
Կովկասու լեառն 14.
Կորպնակ 245.
Կուկիսով Իւան Ստեպանիչ կամենդանտ 7.
Կումպանի 187.
Կուրակին Ալէքսէյ Վարլամիչ 32—3 420.
Կուրսկ քաղ. 38.
Կրմէնչուկ տ. Քրմէնչուկ
Կօպնհակ քաղ. 172 3 186 195 205 212 244 252.
Կօրաին 254.

Հազարացիք 73 145.
Հազայաղ խան Գիլանու 366.
Հալապ 79 177 195;
Հաղբատ 215—7 243.
Հաճի Իբրահիմ խան 344.
ս. Համբարձման եկ. 6 10 12 41.
Հայաստան աշխարհ 135 309 390 395 415.
Հայաստանեայց գաւառք 24.
Հայաստանեայց եկեղեցի 354.
Հայաստան մեծ 24.
Հայաստան փոքր 402.
Հայկազուն ժողովուրդ 311.

Հայկակ 390.
Հայոց ազգ 33 49 302 410.
Հայոց եկեղեցի 355.
Հայոց թագաւորութիւն 185 194.
Հայք 19.
Հաշտարխան 3 10 11 14—7 24 45—7 50 53 58 65 66 76 81—6 91 94 112 115 124 131—6 146 155—8 163—7 181 184 222 236 240 248 250 255—6 258 261 261 268 274 278 282 288 303 313 342 357—8 364 367 370 374—5 379—80 383—5 387 426 450 487 477—8 491.
Հաշտարխանցիք 83 437.
Հաջիխան 335.
Հասանխան 226.
Հեղինէ Պաւլովնա, մեծ իշխանուհի 283 286.
Հերակլ արքայ 25 138 215 366 373 395.
Հնդկաստան, Հնդիկք 55 56 59 61 73 80 115 118 627 161 180 196 181 184 194 240 254 256 266 269 403 413 417 448 488
Հռիփսիմէ խաթուն 99 107.
ս. Հռիփսիմէ կոյս 218 283.
Հռոմ 104 105.
Հօթին բերդ 96.
Հօռոմք 19.

Ղազախ երկիր 217 395 402.
Ղազախ քաղ. 491.
Ղազան 488.
Ղազար կաթողիկոս 243 260 262-3.
Ղազար քահ. դատաւոր 41.
Ղազար վարդ. 334 422.
Ղազարոս 439.
Ղազիքերման 12.
Ղալօեանց Փարսադան 466.
Ղայթմազ 274.
Ղայթմազեան Տէր-Դաւիթ, Տէր-Փիլիպոս 188—9.
Ղարաբաղ 23—6 93 243 404.
Ղարաբաղու աւան 401.
Ղարաղաշով Յովհաննէս 336.
Ղարապազար քաղ. 491.
Ղարասու 2 11.
Ղարս 300 306 341 366.
Ղսաամ, դուստր Տէր-Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
Ղաւզան 12.
Ղափան 26.
Ղրչաղ ազգ 490—1.
Ղեոնգ 115.
Ղևոնգ աղայ 372 387.
Ղեոնդ երէց 487.
Ղզլար 10 14 50—1 76—7 162 248—50 258—9 362—3 367—70 373 375.
Ղզլարցիք 248.
Ղուզանով Դարեջան պօլկովնիգայ 47.
Ղուկաս կաթ. 5 11 159 218 222 226 230 248 255 257 262 265—6 276 283 287—8 295 297 302 307 312 325 348 445 487.
Ղունկիանոս բարեբարոյ 262.
Ղունկիանոս վարդ. 113.
Ղրխպուլախ 83.
Ղրիմ 1 3 10 11 13 19 24 50 54 58 72 80 166 168 176 214 258 274 281 336—7 429 473 488—91 493—4.
Ղօշավանք 305.
Ղօրդան 194.

Ճուայ 72.

Մագիստրատ 4 336.
Մադաթով Պետրոս ուզբաշի 404.
Մադաթով Սիմօն, քեռորդի Յովսէփ արքեպիսկ. Արղութեանի 244 422 426
Մադրաս 58 63 99 100 115 119`120 126 127 165 177 128 137 165 177 201 203.
Մաթոս 201 203.
Մալալուշկի դուստր Գրիգոր աղայի 65.
Մալգաւա 99 104 107 428.
Մալդաւան ջ. 102.
Մալխաս 479.
Մակար 92.
Մակար Վասիլիչ, որդի Ներսէս աղայի 368.
Մակու սուլթան 224.
Մահմատ խան 126.
—Նախիջևանու 14.
—Հասան խան 126.
Մաղաքիա Սարգիս 174.
Մաղաքիա պարոն 183.
Մամուկեան Ղազար 259.
Մայեր 172.
Մայլեան Առաքել 108.
Մանասէ տիրացու 275 301 303 312—3 317 319 330 333.
Մանզարեան Փիլիպպոս 98 119 182.
Մանէիջի տուն 184.

Մանիէլ արեղայ 407 433—4 437.
Մանիչարենց 101.
Մանիչարեանց Մարգար 486.
Մանկասար սարդար 259.
Մանուէլ 78 431 473—5 478.
Մանուկ 60 191.
—Տիրացու 166.
Մանուչար 209—10.
Մանուչար դիւան 140.
Մանուչար որդի Չիպուխլուեցի Բայրամի 373—4.
Մանուչար Թումանեան կնեազ 217.
Մանուչարեան Մարգար 28 29 130 222 230.
Մանուչարեան Փիլիպպոս 28 20 31 4—6 169 170 222 230 242 255.
Մասեաց ոտ 83.
Մասեհ 62 64 201.
Մաաթէոս 67 68 187 196—7.
—տիրացու 67.
—ապադիր 72.
Մաաթէոս ի Ջին·հանգուցեալ 237.
Մաաթէոս Յովհաննէս 186 195 200.
Մաալէն խաթուն, դուստր Էլիազ Մինասի 204.
Մարգար 94.
Մարգար աղայ 57 69 86 88 91.
Մարգար վարդ. 375.
Մարգարեանց 34.
Մարտիրոս վ. 411.
Մարտիրոսեան Պետրոս 317 323 333.
Մարիա Կրօնպրինցես 171.
—Գաւլոֆնա 32.
—Ստեպանոֆնա կին Տալիզինի 32.
—Վասիլոֆնա 29.
—Ֆէոդորոֆնա դշխոյ 10 26 28 33 38.
—Ֆէոդորոֆնա Կայսրուհի կին Պաւել Պետրովիչի 4 283 286 289.
Մարիամջան տիկին Տէր-Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
Մարիամ, կին գզլարցի Պօղոսի որդի Խախանի 369.
Մարիամջան, դուստր Դարեջան Պօլկովնիցայի 383.
Մարկոս Աւրելիոս 415.
Մարտին Մասէհ 245 247.
Մարտին Թորոսեան 11.
Մարտիրոս, փեսայ Յովհաննէս աղայի 453.
Մարտիրոս 165 166 184 196 239 432.
Մարտիրոս արհի 422 438 441—2 445 449 —50 455 466.
Մարտիրոս, արքեպ. Զմիռնիոյ 355.
Մարտիրոս, որդի Տէր-Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
—Աղայ 39.
Մարտիրոս, րապունի Զմիւռնիոյ 455.
Մարտիրոս Մասեհ 195.
Մարտիրոս, Մասեհ (որյանգլիացւոց Մարտին Մասեհ կոչի) 204.
—ք. 6 41.
Մարտիրոս վարդ. 466.
Մաքայ 188 200—1.
Մաքացիք 200 205.
Մելիք Աբրահամ իշխան 345.
—Ադամ 25.
—Ապով 93 97 243 399.
—Բախտամ 399.
—Մէճլում 93 97 399.
—Ալահվերդի 25.
—Դարչին դատաւոր 215.
—Եսայի 25.
—Ջիմշիդ 243 399 401.
—Միրզախան 25.
—Յովսէփ 25.
—Շահնազար 25.
—Շահնազարով Մելիք Ջիմշիդ 404.
—Շաքարօ Բամրակաձորու 255 257.
—Գեղլերով Մելիք Ֆրիտօն 404.
—Ֆրիդօն 399 401.
Մեհրապ 276.
Մեսրոպ 460.
Մելքիսէթ արքիմանդրիտ 9 44.
Մէլիքսէդ կաթողիկոս 322 324.
Մերջանով Եագոր Վասիլիչ 39.
Միեսեր մահտ. 408—9 418 424 429 431 441 —2 446 449—50 454—5 458 461 465 467—8 470 473—8.
Միխայիլ Պաւլովիչ մեծ իշխան 283 286 290.
Միխայլօվսկի մօնաստիր 44.
Մինաս 322 369 447 477.
Մինաս Ղազրիչ 392.
Մինաս աղայ 89 90 370.
Մինաս աղայ Էլիազ 204.
Մինաս արքեպիսկոպոս 194 315 324 338—9 345.
Մինաս արքիմանդրիտ 180.
Մինաս, որդի Եղիազար աղայի 385.

Մինաս Եղիազարեան 3 18—22 38 94.
Մինաս եպիսկ. 306.
Մինաս Խօջայ 202.
Մինաս վարդ 71 84—5 89 92 112 125 282 364 380.
Մինաս քահ. 48.
Միրիշքեար պարոն 318.
Մինասեան Անդրէաս 274 418 453 474.
Միրիմանեան Զորար 207.
Միար Ազամիչ 29.
Միքայէլեան Յարութիւն, Թոռ Դաքուի Տէր Սահփանեան Մարտիրոսի եղբօր 196 205.
Մկրտիչ 65 162 282.
Մկրտիչ ամիրայ 166.
Մկրտիչ գործակալ 131.
Մկրտիչ Նախիջեանցի 98.
Մկրտիչ, որդի Յովհաննիսեան Սարգիս ա-գայի 270.
Մկրտիչ Պետրոսեան 19.
Մկրտիչ սպասաւոր 61.
Մկրտիչ վ. 58 81.
Մկրտիչ վարդ. տեղապահ 318.
Մկրտիչ վէքիլ 3.
Մկրտիչ տէր. 78.
Մկրտում 58 65 124 134 163 250 271 487.
Մկրտում, որդի Թադօի 216.
Մկրտում Զուղայեցի 362.
Մկրտիչ Գալստեան Զուղայեցի 48.
Մնացական 368.
Մողնի եկեղեցի Թիֆլիսի 321.
Մուշլիբանդար 138 182.
Մուսին Փուշկին Ալէքսէյ Իւանիչ 179 180.
Մուրադ աղայ, որդի Կատարինէի եղբայր աղայ Էլիազի 203.
Մովսէս 107 367 375.
Մովսէս աղայ 269.
Մովսէս Խաչիկ 169 182 234 242 245—6 252.
Մովսէս Խաչիկ Սուրաթու 209.
Մովսէս Խորենացի 353.
Մովսէս մարդ. 6.
Մովսէս որդի Դաւիթ աղայի 386.
Մովսէս որդի Եգունտի 373.
Մովսէս վարդ. 376.
Մցխէթ գիւղ 395.
Մօզդօք 4 45—6 63 76 162 241 247 254 258 273 346 367 373 414 459 466.
Մօլիս 445.
Մոսկովցիք 376 382—3.
Մոսկով 3 7 9 17—9 21 37—42 61 80—1 98 101 106 131 133 152—3 167 242 246 258 272 274 342—3 349 367 370—1 377 385—6 391 394 412 438 465.

Յախքար (Ախքար) 14.
ս. Յակոբ 83.
Յակոբ 106 318.
Յակոբ առաջնորդ 279.
Յակոբ Բուխարացի 88.
Յակոբ եպ. 58 262 269.
Յակոբ Հայրապետ 137 372.
Յակոբ վ. 422 489.
Յակոբ քահ. Աստապատցի 48.
Յակոբոս 61.
Յակոբջան 384.
Յակոբջան Զաքարիա 190.
Յակոբջան Մանուկ 190 204.
ս. Յարութեան եկեղեցի 331.
Յարութիւն 120 413 461 466.
Յարութիւն Աղամ 187.
Յարութիւն աղայ 90 133 373 454.
Յարութիւն աղայ որդի Պետրոսի 65 128.
Յարութիւն ամիրայ 55.
Յարութիւն Դաւիթով 26 36.
Յարութիւն Թիֆլիսեցի 138.
Յարութիւն Իսախանեան 21.
Յարութիւն ղզլարցի 63.
Յարութիւն մհ. 19.
Յարութիւն մհ. Շամախեցի 115.
Յարութիւն Յուսիկ 367.
Յարութիւն փառակեցի Իգնատիոսի որդի 3.
Յարութիւնեան Նիկողոս, Սէտապատցի 205.
Յեսու 353.
Յունաստան 251.
Յոյնք 104.
Յովակիմ 96.
Յովակիմ աղայ 370.
Յովակիմ առաջն. Տաթեւ 116.
Յովակիմ Եղիազարեան 3 17 20—1 24 37 44.
Յովակիմ որդի Եղիազար աղայի 385.
Յովակիմ պատրիարգ 142.
Յովակիմ վ. 142.
Յովակիմ վ. պատրիարգ Երուսաղէմի 147.
Յովհան առաքեալ 284.
Յովհան Ոսկեբերան 66.

Յովհան պաար. 442 445.
Յովհաննէս 57 124 133 282 368 415 423 432.
Յովհաննէս Աբրահամեան, փառակեցի կապիտան Պետրոսի որդի 3 19 45.
Յովհաննէս արքեպ. 296—8 322 327.
Յովհաննէս աղայ 14 72 86 89—91 95 144 —6 162 222—3 370 385 453.
Յովհաննէս աղայ ենարալ 288.
Յովհաննէս Բէթղէհէմեան 59 79.
Յովհաննէս երէց 439.
Յովհաննէս Եղիազարեան 331.
Յովհաննէս Եղիազարեան Ջուղայեցի 3 5 16 --7 20 21 25—9 31—6 44.
Յովհաննէս եպիսկ. 317—8.
Յովհաննէս իշխան 249—50.
Յովհաննէս Խօջամինասեանց 120.
Յովհաննէս Թզուկ 464.
Յովհաննէս կաթողիկոս 387.
Յովհաննէս կաթ. Աղուանից 25 140 399.
Յովհաննէս կապիտան 9.
Յովհաննէս մհտ. 65 254.
Յովհաննէս մահա. Թաւրիզու 276.
Յովհաննէս մհտ. Համադանցի 241 273.
Յովհաննէս Նօնի 271.
Յովհաննէս, որդի Տէր-Յովհաննիսեան Սարգսի 270.
Յովհաննէս Ջերքէզ 106.
Յովհաննէս պտտր. 408 422 431 476.
Յովհաննէս պոլկովնիկ 87.
Յովհաննէս սարկ. 98 120 130.
Յովհաննէս վարդ. 185 295 250 319 321 323 355 380 494.
Յովհաննէս վարդ. գեղարդակիր 317.
Յովհաննէս վ. Ջուղայեցի 135 163.
Յովհաննէս Քփրենց 131 135.
Յովհաննէսեան Ներսէս 274.
Յովհանջան որդի Էլիազ Մինասի 204.
Յոֆսաթան 87.
Յովսէփ ագուլեցի 372.
Յովսէփ աղայ մերիչքարբաշի 294 310.
Յովսէփ արքեպ. իշխան Արղութեան, Սանահնեցի, առաջն. Հաշտարխանի և ռուսաց երկրի, կաթողիկոս, 1 11 50 53 55 69 82—3 87 92—5 108 —9 115 121 131 133 139 142 144 148—52 159 186 192 195 199 206 208 215 220 226—9 231—3 243—8 252 255 257 261—2 269—70 273 —8 285 301 304—7 311 315 318 —9 322—7 332—4 337 357—8 368 370—1 373—7 379 381 383 387 434.
Յովսէփ Թիֆլիսի միրիշքարբաշի 305.
Յովսէփ կայսր 73 123 145.
Յովսէփ սարկ. 274.
Յովսէփոս 71.
Յովսէփոս կայսր Հռոմայ 35.
Յովսէփոս պատմագիր 86 88 90—1.
Յօր 183 365.
Յօհան պարոն 268.
Յօհանջան 76 120 136 183 209 368.
Յօհանջան Յակոբ 174 177.
Յօհաննէս 187 436.
Յոհաննէս Աթաբէկ 325.
Յօհաննէս երէց 472.
Յօհաննէս Ներսէս 191.
Յօհաննէս Հաջի 472.

Նազարով Դաւիթ 106.
Նախիջեան Նոր 1 4 6 9—13 15 19 37—41 45 57 61 69 76—79 81 93 96 100 110 115 118 120 135—8 152 163 167—8 171 176 187 203 264 270 274 335 336 375 407 416 424 426 442 445 447 452—4 456 454 459 460 465-6 485 487—8 494.
Նախիջեանցիք 102 120 124 412 416 437 438 454.
Նոր Նախիջեանցիք 111 268.
Նախիջեանի խան 26.
Նամցայ 69 145.
Նանաջան խաթուն, դուստր Էլիազ Մինասի 204.
Նանի 119.
Նատիր շահ 26.
Նարդով Անդրէյ 140 150.
Նաւասարդեան Հայրապետ 276.
Ներսէս 245 247 431.
Ներսէս աղայ 37 367.
Ներսէս եպ. 262.
Ներսէս մեծ 66.
Ներսէս Յովհաննէս 204.
Ներսէս վարդ. 350.
Ներսէս վ. ժողովարար Լիմ անապատու 161—2 225.
Ներսիսեան Աննա 96.

Նէսօվիտօ գիւղ 488.
Նիկողայոս ամիրայ 478.
Նիկիոււ ս. ժողով 10.
Նիկիփօր արքեպ. առաջն. Քերսօնու և Նոր ռուսաց 7 22 42.
Նիկոգիմոս արքեպ. յունաց 9.
Նիկողոս 165—6 176 239.
ս. Նիկողոսի եկեղ. 6 10 12 41.
Նիկողոս Ցարութիւն 176 196.
Նիկողոս Պապօյի որդի 36.
Նիկօլ 124.
Նիկօլ Ալէքսէիչ ենարալ մայիօր 41.
Նիկօլ աւագ որդի Ցովհաննէս աղայի 146.
Նիկօլա Պաւլովիչ մեծ իշխան 283 286 290.
Նիկօլսկի մօնաստիր 9 44.
Նիսվիտա գիւղ 38 488.
Նովորուս 22.
Նոր Երուսաղէմ 21.
Նուխի 384.
Նուրիջան 362 369.
Նօնի Ցովհաննէս տես Ցովհաննէս Նօնի

Շահամիր աղայ 25 73 137 247 261.
Շահգագա 281.
Շահինով Մարտին 13.
Շահմիր 247.
Շահնազարեան Կարապետ վարգ. 292.
Շահջհանապատ 385.
Շամախի 125 225 309.
Շամաթիլ 395.
Շամիրամ աղայ 58 61 63 65 82 96—7 99 100 105 107 115—7 119—20 127 8 190—2.
Շամիր սուլթան 209.
Շամիրամեան Շամիր աղայ 128.
Շամքօր 243.
Շարայեան տուն 490.
Շարուր գաւառ 110.
Շաքրօ 222.
Շաքու 395.
Շիօշ 81.
Շիրին 491—2.
Շիրազ 141 147.
Շիրակաւան գաւառ 490.
Շնորհք 333.
Շիրուվան 2 3.
Շուշան ի Փարապատէ 247.
Շուշի 75 81 97 125—6 137 141 224 243 404.
Շուշու խան 25.
Շուէթք 81 96 125.
Շուլաւեր 255 257.
Շուլաւերցիք 278.
Շուշան, մայր Գասպար աղայի 383.
Շրուան 395.

Որոտն գ. 494.
Որոտնայ գաւառ 494.
Ովսաննա, զոքանչ Խօջա Մինասեանց Էմիրազ աղայի 205.
Ութրութ 222.
Ուլահ ք. 111.
Ուլիանոս 438.
Ումանխան 75 141.
Ուռումէլ 119 428 464.
Ուսպենսկի սօպօռ 19.
Ուրհայ 5.

Ջարարերգ 25.
Ջամչեան 463.
Ջիրուխլու 386.
Ջերթկով Վասիլ Ալէքսէիչ գուբէռնաթ 5 7.
Ջէլէպի Ստեփան մահտեսի 317.
Ջէրքէզ 25.
Ջինացիք 175 186.
Ջինու երկիր 195—6 200 203.
Ջօպան Ամիրայ 319 323.
Ջօրնիշով Անդրէ Գաբրիէլիչ 28.
Ջօրնիշօվ Իվան Գրիգորիչ 23.
Ջուկիսով Իվան Սաեփանիչ կամենդաթ 42.

Պահլաւունեաց սերունդ 490 494.
Պաղեստինացիք 251.
Պաղտասար 456 462.
Պանին գրաֆ 37.
Պանին Նիկիտա Իւանիչ գրաֆ 27 31—2 219.
Պարսից երկիր 309 385.
Պարսից իշխանութիւն 309 385.
Պարսիկք 275 309 318 435.
Պարսից խան 302 312.
Պաւլ հայր 20.
Պաւլ Պետրովիչ, այսինքն Պօղոս Պետրոսեան 283.
Պաւլ Պետրովիչ իշխան 5 10 26 28 33.

Պաւլ Պետրովիչ մեծ կայսր 218 220—1 228 230 283 286—90.
Պարսիկք 105 192 399 477.
Պետր Ալէքսէիչ Ռումենցով ֆրթմաշալ 7.
Պետրհօֆ 36.
Պետրոս 157 400 493.
Պետրոս ամիրայ 319.
Պետրոս ա. քահ. 179.
Պետրոս ղալմուխ 37.
Պետրոս մեծ կայսր 27—8 34—5 179—80. 397.
Պետրոս սարկ. 106.
Պետրոս վ. 71 365.
Պետրոս վ. առաջնորդ Պուրսայեցի 3.
Պետրոս Պօղոս սորոր 27 46.
Պետրոսեան Ստեփաննոս Ակնեցի 487.
Պետրովսկի մանաստիր 9 44.
Պետրպօլք 3 4 9 13 16—7 19 22 29 30 36 39 41 45 69 73 80 82 98 115 118 129 133 139 145 149—50 163 167 181 226 230 242—4 248 254 258 261 273 276 305 315 319 322 324 326 332 333 342 370—1 379 385 392 411 414 438 441—2 444 446—7 449 459 464 470 486 488.
Պէին 431 438 442 456 478.
Պէչէրսկի վանք 7 9 42 44.
Պէյիւկտերէ 334.
Պէրթի եկեղեցի 413.
Պէքլեշով կուբերնաթ 455.
Պլատօն արքեպ. 18—21 222.
Պլատօն արքպ. Մօսկովու և Կալուղու 389 391.
Պռուսաց թագաւոր 30.
Պսկովսկ քաղաք 22.
Պօղոս 186 237 378 400 423.
Պօղոս աղայ 449—50.
Պօղոս առաքեալ 158 185 285 347.
Պօղոս սրբազ. 451.
Պօղոս հրաշալի 153.
Պօղոս պարոն 65.
Պօղոս տպագիր 72.
Պօղոսեան Մայխաս 468.
Պօպօվ Վասիլ 151.
Պօտէօմկին 177 398.
Պօտէօմկին Գրիգոր Ալէքսանդրիչ 3 4 13 22—7 52 102 309 392.
Պտօէօմկին Պաւել Սերգէիչ 108.
Ջարմաղան խան 490.
Ջաֆարբէկ 366.
Ջաֆարխան 79.
Ջաֆարղուլի խան 93 281.
Ջելալ 494.
Ջուղայ 3 24 58 60 61 74 79 80 82 106 187 190 491.
Ջումենց իշխ. Շիօշբէգի որդի Յովսէփ արքեպիսկ. Արղութեան երկայնաբազուկ 11.

Ռաստով 4 10 19 40.
Ռէշտ 365.
Ռէզնի կնեազ 37.
Ռումենցով Պետր Ալէքսանդրիչ գրաֆ ֆրթմարշալ 38 42 44.
Ռումեանցով գրաֆ Գօնայու 152.
Ռուսաստան 428 434 447.
Ռուսէթ 159.
Ռուսիայ 413.
Ռուսուգան թագուհի 395.
Ռուստաց ազգ 6 139 478.
—աթոռ 397 399 400 403.
—բալբառ 4 342.
—դեսպան 330.
—ղուռ 372.
—երկիր 5 10 131 140 148 152 169 218 236 243 257 265 304 321 328 331.
—զօրք 399 402.
—լեզու 265.
—կայսրութիւն 265.
—մեծամեծք 7.
—կայսր 355 389 396.
—տէրութիւն 398 404.
—քահանայք 45.
—սահման 413.
Ռստակէսեան Գրիգոր 333.
Ռօմանք. 104 123.

Սագի 494.
Սադըրդ խան 225.
Սաթով Յովհաննէս 471.
Սալա գիւղ 34.
Սալմա 281.
Սալմաստ 77 279.
Սահակ 56.
Սահակահագին 321 324 330 333.
Սահակ ծերունի ամիրայ 319.
Սահակ Պարթև 66.

Սահակ Պոլսեցի 113.
Սահակ վարդ. 65.
Սաղիմ 83 85 147 372 375 427 430 427.
Սաղիմացիք 83.
Սամար 3 11.
Սամուէլ 464.
Սամուէլ արքեպ. Ռաստովու 18 391 393—4.
Սամուելով կաւալեր 28.
Սամփսոն քարոզիչ Սօփիայի 9 44.
Սանահին 9 155 243.
Սանկթպետերբուրգ տես Պետրպօլք.
Սառակինացիք 93.
Սարաֆայ դաւ. 16.
Սիմէօն Սերկէիչ 450.
Սիս 491.
ս. Սարգիս զօրավար 489.
Սարգիս 18 57 72 184 189 253—4 271 373.
Սարգիս աղայ 364 372.
Սարգիս աղայ շամախեցի 370.
Սարգիս Թիֆլիզեցի 373.
Սարգիս Թուանկչի 88.
Սարգիս Կիրակոս 174.
ս. Սարգսի վանք 389.
Սարգիս տէր Յովհաննէս 242.
Սարգիս տիրացու 56—7 61 84 147.
Սարգիս վարդ. եղբ. Յովհ. կաթողիկոսի 116.
Սարգիս վարդ. հաջնցի 375.
Սարգիս փեսայ Յուսիկ Յարութիւնի 386.
Սարգսեան Կիրակոս 166 182—4.
Սեղրակ 494.
Սևան 384.
Սևաստապօլիս 14.
Սէթ Առասի 212.
Սէյտապատ քաղ. 165 182 205—5.
Սերգէ Ադամիչ 29.
Սերկէ Լազրիչ 407 417.
Սիմէօն աղայ որդի Խանփերի խանումի 112.
Սիմէօն եպիսկ. աթոռակալ 306 349.
Սիմէօն կաթողիկոս 1 4—5 11 29 219 223 228 320 324 357 389 445 487.
Սիմէօն Սերկէիչ 421 426 429.
Սիմէօն վարդ. Գեանջեցի 11.
Սիմէօն վարդ. դատաւոր 41.
Սինհոդոս 305.
Սիչով տես Սչով.
Սիւնեաց տէր 464.
Սողոմոն, որդի Տէր Շմաւոնեան Ստեփաննոսի 268.
Սիսիան 26.
Սղնախ 24.
Սողոմոն, եղբօրորդի Յովսէփ վարդ. 155.
Սողոմոնի տուն 369.
Սուլբաշեան Եսայի 241.
Սումպատով Իւան Գրիգորիչ 22.
Սուվօրով գրաֆ 273.
Սուվօրով Ալէքսէյ Վասիլիչ ենարալ պօռճիկ 3 19 22—4.
Սուտախ 14 335.
Սուրաթ 59—60 82 106 120 127—8 169 177. 184 190 493.
Սուրբ Աստուածածին Կաֆայի 335.
Սուրբ Աստուածածին Սանահնի 155.
Սուրբ խաչ վանք Ղրիմու 152 154—7 166 176 274 334.
Սուրխաթ 491.
Սուրխանդեան 140.
Սչով 104 111—2 123—4 139 145 309.
Ստամբօլ 195 212 235.
Սպանդով Պօղոս 12 198.
Ստախիեվ սթաթսկի սովէթնիկ 49.
Ստեփան 98 178 473.
Ստեփան աղայ 63.
Ստեփան ագուլեցի 384.
Ստեփան Աղարար 129 272.
Ստեփան ամիրայ 478.
Ստեփան արհի եպ. 408 417 422 427.
Ստեփան Թիֆլիզեցի երէց 256 266 268.
Ստեփան Ջաղարանեց 387.
Ստեփան Սրապիոնենց 59—60.
Ստեփան որդի Տէր Յովհաննէսի 386.
Ստեփանէ պարոն 70.
Ստեփաննոս 203.
Ստեփաննոս եպ. 275 432.
Ստեփաննոս քահ. 27 59 169 261 438—30.
Ստեփաննոս քահ. Տէր Յարութիւնեան 55 196.
Ստեփաննոս վարդ. 320.
Ստեփաննոս վարդ. Թիֆլիզեցի 83.
Ստեփաննոս փեսայ Տէր Յովհաննիսեան Սարգիս աղայի 270.
Սրապիոնեան Ստեփան, որդի Յովսէփի 82.
Սօլօմօն 257.
Սօլօմօն քնեազ 192.
ս. Սօփիոյի վանք 8.
Սօմխէթ 395.

Վալանդիղաց պաւանութիւն 191.
Վաղարշապատ քաղ. 283.
Վան քաղ. 162 491 494.
Վանայ իշխանք 225.
Վանանդ քաղ. 445 494.
Վանեցիք 225 328.
Վասակ 336.
Վասիլ Ալէքսէիչ ղուբէրնաթ 41.
Վասիլիյ Թոմարայ 334 355—6.
Վարանդա 404.
Վարղան 252 358.
Վարդան Սարգիս 203 213.
Վարդան սարկ. Ղրիմու 489.
Վարդան վարդ. 48 74 88 131 133 136 376 —7 382.
Վարլիզ վարպետ 388.
Վարվառէ կոյս 9.
Վդուպովսկի մանաստիր 9 44.
Վենետիկ 236 408.
Վիշինկա կամ Վինշիկայ գիւղ 7 42.
Վոռօնցով 407 420.
Վրաստան 112 194 316 321 326 395 404.
Վրաց արքայ 24 224 296 301 312 316 320 —1 327—9 403.
Վրաց դեսպան 319.
Վրաց երկիր 3 52 402.
Վրաց զօրք 5.
Վրացիք 87 97 167 243 249—50 321 404 425.
Վրաց սահման 344.
Վրաց տուն տես Վրաստուն.
Վօլկով միար. Վասիլիչ 30.
Վարդան Գասպար 190—1.
Տաթև 274.
Տաղստան 371.
Տաճիկներ 25.
Տայք 87.
Տարասիա Պեչերսկի արքիմանդրիտ 9 44.
Տուրրանդ տես Դուրրանդ.
Տենեգոս 334.
Տէր Աբրահամ 364—5.
Տէր Առաքել 247 299 305 310 318—9.
Տէր Առաքել գործակալ 241.
Տէր Առաքել աւ. քահ. կաթողիկէ եկեղեցւոյ 207.
Տէր Առաքել վարդ. 155.
Տէր Աստուածատուր 376.
Տէր Աւետիք 448.
Տէր Մարդար 369.
Տէր Մարտիրոս քահ. 192.
Տէր Մեսրոպ 408 436 446.
Տէր Մելիքսէթ, որդի Տէր Առաքելի 413 420.
Տէր Մինաս ա. քահ. 259.
Տէր Մինաս Հաշտարխանու 408.
Տէր Յակոբ 106.
Տէր Բաղդասար 130.
Տէր Խաղդասար Հաշտարխանցի 81.
Տէր Գրիգոր 130 337 442.
Տէր Գրիգոր ա. քահ. 437 446.
Տէր Գրիգոր արեղայ 120.
Տէր Դաւիթ 194 246 253—5 272.
Տէր Դաւիթ Տէր Փիլիպպոս 212.
Տէր Դաւթեան Տէր Յօհան 208.
Տէր Զաքար 58 184.
Տէր Յակոբ 334.
Տէր Յովհաննէս գործակալ Թիֆլիսի Վանքի եկեղեց. 263.
Տէր Ղազար 113 136 375—6 388.
Տէր Ղազար Թիֆլիսի 387.
Տէր Ղազարեանց Շաքարոյի որդի Աղալօ, Թիֆլիսեցի 36—7.
Տէր Ղազարեանց Եսայի 37.
Տէր Մաղաքիա աւագ երէց 493—4.
Տէր Յարութիւնեան Թիֆլիզեցի գործակալ 275.
Տէր Յարութիւն 58—9 61 63 79 256 268.
Տէր Յարութիւնեան Ստեփաննոս քահ. 213.
Տէր Յովհաննէս Պետրրօոքու 380.
Տէր Յովհաննիսեան Ստեփաննոս Ջուղայեցի 140.
Տէր Յովհաննիսեան Ստեփաննոս 269—70.
Տէր Յօհաննիսեան Սարգիս 195 200.
Տէր Յօհանեան Սարգիս 171—2 186.
Տէր Յօհանեան Տէր Դաւիթ 207.
Տէր Շմաւոնեան Ստեփան 88 91 266 268.
Տէր Ոսկանեան Կարապետ գէրութաթ 45.
Տէր Պետրոս Թիֆլիզեցի 118 388.
Տէր Սահակ 263.
Տէր Սահակեան Դաւթեանց Ստեփան 97.
Տէր Սահակեան Ստեփան Երեանցի 81.
Տէր Ստեփան 58 60 73 79 96 99 117 121 131 135 161 163 165 176 186 194 195 199 208 233 239 243—5 252 270 273 275 276 294 409 412—4 419 423 430 432 438 449 446 449—50 454—5 458 461 465 467 473—8.

Տէր Ստեփանեան Մարտ. 166 182 196 246.
Տէր Ստեփանեան Մարտիրոս Դաքայից 205.
Տէր Ստեփանեան Նիկողոս 246.
Տէր Ստեփան որդի Տէր Յարութիւնի 64.
Տէր Ստեփանոսեան Մարտիրոս 488.
Տէր Փիլիպպոսեան Տէր Դաւիթ 236.
Տէրունեան 88.
Տիգրան 390
Տիգրանակերտ 132.
Տինամարգի տէրութիւն 172.
Տուպասար 407 431.
Տուլ քաղաք 38.
Տրդատ 390.
Տրդատ արքայ 415.
Տրիջանով 336.
Տփխիս տես Թիֆլիս.

Ցարսկի սելօ 5 28—9 33.
Ցիցիանով 477.

Փափ (պապ) 135.
Փափազ օղլի Սիմօն մհտ. 334.
Փանախան 25.
Փանոսի տուն 369.
Փիլիպպոս 106 178 239 460 464 466 467 472.
Փիլիպպոս աղայ 69 86 88 91 478.
Փիլիպպոս ամիրայ 421-2.
Փիլիպպոս առաքեալ 185.
Փիլիպպոս դպիր 120.
Փիլիպոս Ջուղայեցի երէց 386.
Փիլիպպոս սարկ. 159.
Փիլիպոս վարդ. 122.
Փշաւ ազգ 25.
Փորթուքալաց տէրութիւն 188.
Փօքիշան 104 123.

Քալանթար 157.
Քալանթարեան 81.
Քալանթարեան Վարդան 63-4 79 165—6 181 242 245.
Քարթլ երկ. 217.
Քէֆէ 14.
Քեապուլ 73.
Քեթխուտով Յովհաննէս 466.
Քերիմխան 80.
Քերսոն 7.
Քիլ 104 126.
Քիշնով քաղ. 162—3 111.
Քիով քաղ. 7 13 42 44 50 53.
Քիւթիւր 320.
Քիրմանու քաղաք չէրքէզ 19.
Քիստ ազգ 25.
Քնորին 424.
Քուչուպէյ պ. 408 420 424 433—4 462.
Քովշան քաղ. 102—3 148.
Քոքպեկացիք 241.
Քրմենչուկ 13—4 96 98.
Քուրակին տ. Կուրակին.
Քփրեանց Յովհաննէս աղայ 144.

Օղսհնտի վանք 146.
Օհանէս երէց 469.
Օհանէս երէց Ախքերմանու 471.
Օղու 86.
Օթուզ 335.
Օտես 466.
Օս ազգ 25.
Օսեթինու կամուրջ 401.
Օսման մանուկ 493.
Օսմանցիք 7 12 34 38 51 328 342 381 410.
Օսմանցոց երկիր 112 224.
Օսմանցոց թագաւորութիւն 344 386 407.
Օսմանցոց սուլթան 2.
Օսմանցոց տէրութիւն 309.
Օսմանցոց ֆէրման 318.

Ֆաթալի խան 93.
Ֆահրապատ 254.
Ֆառարադէ 241.
Ֆէօտօսիայ 941.
Ֆէօֆան վիրակացու Պէչէրսկու տպագրատան 9 44.
Ֆրանկստան տես Ֆրանսիա.
Ֆրանսիա 135 384 386.
Ֆրանսիացիք 119 169 263.
Ֆռանսուզք տես ֆրանսիացիք.
Ֆռանկստան տես Ֆրանսիա.
Ֆօրթուքէղնիր 196.
Ֆօրցման կօնսուլ 355.

1949 г.

74 Լումայ ամսագիր 1908 տար. . . 6 —
75 Լումայ ամսագիր 1909 տար. . . 6 —
76 » 1910 տ. . . . 6 —
77 » 1911 տ. . . , 1 —
78 Ց. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899 . 1 25
79 » Արևել. ատամնաբոյժ կատակ. 1901. —50
80 » Քաղաքավար. մնանները, 1901 . —75
81 Սաեփանոս Պալասանեան . . . —25
82 Խաչատուր Աբովեան (սպառ.) . . —60
83 Աշակերտի յուշատետր . . . . —30
84 Զգացմունքների աշխարհ. . . . —30
85 Մելիք-Իւսուփ . . . . . —25
86 Մ. Եօկայի, Ուրացողը, . . . —25
87 1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը. . —20
88 Մկրտիչ Էմին . . . . . —60
89 Կարալենկօ, Կոյր երաժիշտը. . . —60
90 Չորրորդ դարու հայ եկեղեցին . . —20
91 Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը . . —40
92 Իմ օրագիրը . . . . . —20
93 Մեծ Ներսէս . . . . . —25
94 Հայոց կրօն. բանաստեղծութիւնը . . —60
95 Կին վիպագիր Ե. Օպիրի . . . —10
96 Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր. բ. տ. — 5
97 Կարալէնկօ, Դատաստանի օրը. Թարգմ. Մուշէ վարդ. . . . . . —40
98 Կ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902 . . . . . —20
99 Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902. . . . . . . —
100 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 . . —25
101 Մ. Գօրկի, Չէլկաշ. . . . . —20
102 Քուչակ Նահապետի երգերը . , . —15
103 Սահակ Պարթև . . . . . —25
104 Ապուշը, Ժօրժ Էսպարրի, թարգ. օր. Ն. Աղանեանց, բ. տ. . . . . — 5
105 Վարժապետը. . . . . . — 5
106 Հազարան բլբուլ. . . . . —30
107 Պատմական պատկերներ, Եր. Շահազիզ 1903 —50
108 Ժ. Ժ. Ռուսօ. Էմիլ. 1. 1904. . . —50
109 Խորէն արք. Գալֆայեան և Նալբ. Աղցմիքը, Եր. Շահ. 1904 . . . . —60
110 Հերոստրատ. Լ. Ֆուլդայի, թարգմ. Տ. Վ. 1904 . . . . . . —50
111 Կանոնք ժողովոց. մ. Ա. 1904. . . —50
112 Ուղեղի նորոգումը. Ֆ. Գիկմելի թ. Օր. Ն. Աղանեանց. 1904 . . . . —20
113 Գթութիւն. թ. օր. Ն. Աղան. 1904. . — 5
114 Գ. Ե. Սրուանձտեանի երկերը 1 Համով-հոտով 1904 . . : . . 1 25
115 Ալէմգիր. վէպ Վ. Փափազեանի. 1904 . —50
116 Առուտի հոգեբանութիւն, Գար. Ենգ. 1904 . —10
117 Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. 1904 . —75
118 Կօնան Դօյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թ. Տ. Վ. 1904. . . . . —15
119 Ազէրֆէզա. վէպ Վ. Փափազեանի, 1904. . —50
120 Ֆր. Գըկփւրէլ. Նոր կուռք. Թարգմ. Տ. Վ. 1905 . . . . . . —30
121 Կար. Եզեան. Ս. Էջմ. Մ. Աթ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծագում.1905. —40
122 Չ. Ռիչարդսօն. Գրքերի ընտրութիւնը 1905 —60
123 Իսլամ. տաճկ. Թարգմ. 1905 . . . —20
124 Հոգեկան վարակումն և նրա նշանակութիւնը. բժշկ. Կ. Աղաջ. 1905 . . . —15
125 Խանզադէ, մեր արիւնոտ անցեալից 1907. —20
126 Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. II 1906 . . . —50
127 Հայրենիք, շաբաթաթերթ 1908 տարեկան (սակաւ.) . . . . . . 3 —
128 Գ. Վ. Ցովս. Օրմանեան արք. և կաթող. ընտրութիւն . . . . . — 5
129 Ջօն. Ց. Ցովհաննիսեան և քննադատներ 1907 — 5
130 Տ. Գաբրիէլ Պատկանեան. 1909 . . —40
131 Բօկլ. Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը. Թարգմ. Վարդգէս Աղանեանց 1909. . . . . . . —75
132 Ինչ է հասարակութիւնը 1909. . . —20
133 Խելքի տօպրակներ, կատակ. 1910 . . —30
134 Բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածների, լատին քերականութիւնով Վ. Ա. 1910. . . . . . —75
135 Ռօլէգէր Օնանականութիւն 1910 . . —30
136 Համմոնդ, Երիտասարդութեան մեղքեր, 1901 1 —
137 Նոր եղանակ ռուս լեզուն գործնականապէս սովորելու առանց ուսուցչի. 1911 . —60
138 Կ. Կոս. Կար. Վ. Շահնազարեանց. . . —25
139 Մ. Տվէն. վիճակ. Թարգ. օր. Ն. Աղանեանց 1912 . . . . . . —10

պատկերներ

140 Ս. Լուսաւորչի իւղաներկ մեծադիր պատկեր 1 50
141 Նոյնը կտաւի վերայ . . . . 5 —
142 Պետրոս Շանշեան . . . . —10
143 Ցակովբ Պարոնեան . . . . —10
144 Արդար Ցովհաննիսեան. . . . —10
145 Աւետիք Լուկասեան. . . . . —10
146 Գարեգին եպս. Սրուանձտեանց . . —10
147 Լումայի պոստկարտ. . . . . — 5
148 Տ. Մատթէոս կաթ. Իզմիրլեան . . — 5
149 Մուրացան . . . . . . — 5
150 Կ. Վ. Շահնազարեանց . . . . — 5
151 Անաօն Լանդ . . . . . — 5

ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԾ ԶԵՂՋ։

Դիմել. [illegible], [illegible] Ն. Աղանեանցի կամ խմբագրութիւն «Լումայ» ամսագրի։

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՒԵՐԱԳՐԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԻՒՏ Ա. ՔՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Սկսուած է հրատարակուիլ 1893 Թուից)

Մինչեւ այժմ լոյս են տեսել հետեւեալ հատորները

Գիրք Ա.—Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ 1780—1834 ԵՒ ԾԱԳՄԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։

« Գ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն I. Սիմէոն կ. ընդարձակ կենսագրութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

« Դ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. մասն I. 1780—1800 կենսագրական յօդուածով, յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

« Ե. ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1800—1808. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

« Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ. մասն I 1801—2. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

« Է. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ, մասն II. 1803—4. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

« Ը. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն II. 1767—1776։

« Թ. ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ. մասն I. 1778—1800. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։

Բոլոր հատորներին կից՝ լուսանկար պատկերներ, վիմատիպ կոնդակներ կամ ֆիրմաններ, նկարներ եւայլն։

Պատրաստ են տպագրութեան համար եւ սպասում են բաժանորդների նպաստին

Գիրք Ժ. ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

1. Թովմայ Մինասեանց։—2. Յովհաննէս Արճիշեցի։—3. Գրիգոր Վարագեցի։—4. Դաւիթ Բաղիշեցի։—5. Բարսեղ Վարդեցի։—6. Բարդուղիմէոս Շուշանոն։—7. Մեծն Վարդան Բաղիշեցի։—8. Անցք Վասպուրական աշխարհի։—9. Պատմութիւն մեծ սովոյն Տիգրանակերտի։—10. Ինչ ինչ ժամանակագրութիւնք։—11. Իսահակ Սահրաբեանի։—12. Յովհաննէսի Շահխաթունեանի։—13. Պատմութիւն աւերման Տփխիս քաղաքի։—14. Սիմէոն Ռշտունցի։—15. Ղեւոնդ Տոսպեցի։—16. Վէպ զպարսից։—17. Պօղոս Կաղզուանցի։—18. Յաջորդութիւնք Վանայ բդեշխից։—19. Յարութիւն Խալֆայեանի։—20. Յովհաննէս Սեբաստացի։—21. Ղազար Արճէլցի։—22. Յաջորդութիւնք կաթողիկոսաց Հայոց։—23. Հաւաքածք յանծանօթ ժամանակագրութենէ։—24. Վարք Յովհաննէս Աղար Մոկացւոյ։—25. Յակոբ դպիր։—26. Գաղթ Սենեքերիմայ Արծրունւոյ 'ի Սեբաստիա։

Գիրք ԺԱ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն III եւ վերջին։

« ԺԲ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ մասն II

« ԺԳ. « « « III

« ԺԴ. « « « IV

« ԺԵ. ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ մ. II

« ԺԶ. ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ « I

« ԺԷ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՄԻՒՇԽԱՆԵՑԻ։

« ԺԸ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԴ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

« ԺԹ. ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐ։

Այս 10 հատորներից իւրաքանչիւրը բաղկացած կլինի 500—700 էջերից «Դիւան»-ների դիրքով։